A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark www.a-pdf.com

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐՈՒՄՆ ՈՒՆԵԼԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԻ
ԼՈՒՍԱՊԱՏԱՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ

www.freebooks.do.am

ԵՆՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

2

www.a-pdf.com

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐ
4 ՀԱՏՈՐՈՎ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1984

www.a-pdf.com

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՏՈՐ

2

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1984

www.a-pdf.com

ԳՄԴ 8427
Ա 573

8427
ԲՏ Ա 573

Կազմեց
ՆԵԼԼԻ ԱՆԱՆՅԱՆԸ

Անանյան, Վ. Ս.
Ա 573 Երկեր։ 4 հատորով. Դպր. բարձր տարիքի համար (Կազմեց Ն. Անանյանը.— Եր.։ Սովետ. գրող. Հ. 2. 1984. 416 էջ։

Հատորում զետեղված են անվանի արձակագրի «Անլեղու ընկերներ», «Մարտի դաշտերում», «Անցած գնացած բաներից», «Ինչպես որ կան», «Ուրախ պատմություններ», «Մանրապատում» պատմվածաշարերը։

Ա $\frac{4803010000\ (43)}{705\ (01)\ 83}$ 84 «Տ»

ԳՄԴ 8427
Ար 2

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1984

www.a-pdf.com

ԱՆԼԵԶՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ

www.a-pdf.com

ԲՈՂԱՐԻ, ՉԱԼԱՆԿԻ ՈՒ «ԱՍԵՂ ՄԱՇԿՈՂ» ԵՂՈՅԻ ՄԱՍԻՆ

1

Մենք մի ծեր շուն ունեինք, Բողար անունով։ Երբ ես անասունները քշում էի հանդ, նա պոչը ոլորած, մեջքին դրած հպարտ-հպարտ քայլում էր իմ հետևից։ Վիզը հաստ, բրդոտ, ոտքերը հզոր մի իսկական գայլախեղդ էր նա։ Փոքր ժամանակ հայրս ականջները կտրել էր, որ անցքերը միշտ բաց մնան և լավ լսի։

Սարում, ակնակիր գիշերներին մեկ էլ տեսար Բողարը վեր կացավ վրանի շեմքից ու ձորերը դմբդմբացնելով կորավ խավարում. գնում էր գայլերին հալածելու։

Շատ տարիներ են անցել, մինչև այժմ էլ երազում տեսնում եմ մեր Բողարին, միշտ ահարկու գողերի ու գայլերի համար, և մեղմ ու բարի՝ երեխաների, կանանց ու անօգնական արարածների հանդեպ։

Բողարը շատ մտերիմ էր մեր հարևանի շանը՝ Չալանկին։ Սա մի ջահել շալ շուն էր, միշտ կայտառ, միշտ չարաճճի։ Գուցե դա նրանից էր, որ Չալանկը դեռ ձագեր չուներ և հոգսի տակ չէր ընկել։

Մեր Բողարը, թեև ծեր էր, բայց իր նախկին վեհությունն ու հպարտությունը դեռ պահպանում էր։ Միշտ լուրջ էր ու գլուխը բարձր պահած, կատակներին չէր արձագանքում, պոչով գետինն ավլել չգիտեր ուրիշ շների նման։ Արժանապատվություն ուներ մեր Բողարը։

Բայց առանձին քնքշանքով էր վերաբերվում ջահել Չալանկին և ինչքան էլ վրդովված լիներ, նրան տեսնելուն պես մեղմանում էր, յուրովի «ժպտում»։

Հանդում, կանաչ մարգագետիններում, Չալանկը պտտվում

www.a-pdf.com

էր Բողարի շուրջը, թռչում էր նրա վրայով, բկից բռնում էր դնում տակն ու «խեղդում», և հազար ու մի չարաճճիություններով չարչարում էր ծերուկին։ Իսկ սա համբերությամբ տանում էր ու ներողամիտ նայում իր ջահել հարևանուհուն։

Նրանց խաղերի արդյունքն այն եղավ, որ Զալանկն ամառնամուտին ձագեր բերեց և մնաց տանը նրանց խնամելու։

Այդ օրից սկսած մեր Բողարին դժվարությամբ էինք պահում հանդում. շարունակ ձգտում էր դեպի վրանները, ուր ձագերն էին և նրանց մայրը։

2

Տարին վատ էր, մեր գյուղում սով էր, մարդիկ քաղցից կանաչ էին ուտում և ուռչում. ո՞վ շանը հաց կտար... Քանի հանդ էր գալիս Զալանկը, քաղցած չէր մնում, մի բան մե՛նք էինք տալիս, մի բան Բողարն էր իր բաժնից մաս հանում։ Այժմ տանը խեղճ Զալանկը ինչպե՞ս կերակրի և՛ իրեն, և՛ ձագերին։

Գուցե դրանի՞ց էր այնպես տխուր մեր Բողարը։

— Զալանկը չի ապրի...— մի օր ասաց տերը՝ մեր ընկեր Պետրոսի հայրը։

Մեր գյուղում մի հարուստ մարդ կար՝ «ասեղ մաշկող Եղոն»։ Ասում էին երկու տարվա ցորեն կա նրա հորերում։ Մախում էր Եղոն այդ ցորենը առասպելական գներով։ Մի եզին երկու փութ էր տալիս, մի գորգին՝ մեկ փութ, ոչխարին՝ կես փութ, իսկ փոխ տալիս էր՝ աշնանը մեկին հինգ վերադարձնելու պայմանով։

Պետրոսի հայրը Եղոյից փոխարինաբար ալյուր էր խնդրել, բայց վաշխառուն մերժել էր։

— Թե քո արտին եմ մտիկ անո՞ւմ, նրանից ուրիշ բաներ դուրս կգան, համա ցորեն չի դուրս գալ, քեզ ի՞նչ հույսով պարաք տամ,— պատճառաբանել էր նա։

— Ախր էն անլեզու կենդանին սատկում է, ճուտերը մեղք են, գոնե մի գրվանքա գարու ալյուր տուր,— խնդրել էր Պետրոսի հայրը։

— Ո՞ր կենդանին, շո՞ւնը,— գլխի էր ընկել Եղոն ու փառփառ ծիծաղել, ինչպես առաջ կուշտ մարդիկ էին սովոր ծիծաղելու։

Ու ասեղ մաշկող Եղոն, դրանից հետո, բինայում կանգնում

www.a-pdf.com

էր, բութ մատները խրում արծաթե գոտու տակ, պատմում էր այդ դեպքը սարվորներին, ու ծիծաղելուց ցնցվում էր նրա պարարտ փորը։

— Աղքատի խելք է, է՞, ինքը հացը երազում է տեսնում, շանը ուզում է գարի ալրով լակ տա...

Պետրոսի հայրը ճարահատյալ որոշել էր Զալանկի ձագերին ոչնչացնել, բայց կինը դեմ էր կանգնել, թե՝ «Մեղք են, անխիղճ բան մի անի»։

Դե նա էլ էր մայր, ինչպե՞ս կարող էր այդպիսի դաժանություն թույլ տալ իր հարկի տակ։

3

Մի օր մենք՝ տավարածներով մի ծառի տակ նստած, խոսում էինք Զալանկի անհուսալի վիճակի մասին, իսկ Բողարը ուշադիր լսում էր ու իր թախիծով լի աչքերով նայում մեզ։

Այդ պահին հարևան ծառից մի սկյուռ վար ցատկեց, բայց դեռ հաջորդ ծառին չհասած, Բողարը վրա հասավ, հափշտակեց գաղանիկին և ձորակն ի վեր վազեց դեպի վրանները։ Այն ժամանակ մենք գլխի չընկանք, թե ո՞ւր է շտապում նա, բայց երեկոյան Պետրոսը մտավ մեր վրանը՝ սկյուռի պոչը ձեռքին։

— Որտեղի՞ց,— հետաքրքրվեցի ես։

— Զալանկի բնում գտա,— ու նշանակալից ժպտաց։

Հաջորդ օրը ես պարսատիկով մի ագռավ սպանեցի ու գցեցի Բողարի առաջ։ Շունը որսը վերցրեց և գողեգող, չորս կողմը նայելով իջավ ձորակն ու այնուհետև ամբողջ օրը չերևաց։

Երեկոյան Պետրոսը նորից մտավ մեր վրանը. նրա լայն դեմքը փայլում էր բավականությունից։

— Հը՞, չլինի՞ Զալանկի պառավ փեսացուն էլի որս է բերել,— հարցրի ես ծիծաղելով։

— Հա՛, Զալանկի բունը լիքն է ագռավի փետուրներով...

Մեր Բողարը գնալով նիհարում էր, իսկ Զալանկի դրությունը վատ չէր, չնայած ձագեր էր կերակրում։

— Էս շանը լավ չեք մտիկ անում,— մի օր մորս վրա նեղացավ հայրս։

— Ամեն ժամանակվա չափ ուտելիք ենք տալիս, բայց դե, պառավել է, լղարելու է, հո չի չաղանալու,— արդարացավ մայրս։

www.a-pdf.com

Ես գլխի ընկա, թե ինչ է կատարվում, և այնպես ուրախացա, որ վազեցի իմ ընկեր Պետրոսի մոտ, նրան վրանից դուրս կանչեցի ու հարցրի.

— Պետրո՛ս, էսօր մեր սարում անասուն չի՞ փչացել։

— Ոնց չէ, Մարկոսենց մոզուն գելը կերել է։

— Բոլո՞ը։

— Չէ՛, ոչխիցը խլել են բերել... Հրե կշեռքը դրած միսը ծախում են։

— Դե գնանք առնենք։

— Մեզ փող որտեղի՞ց,— տատանվեց Պետրոսը։

— Փող պետք չի, գնա՛նք։

Մտանք Մարկոսենց վրանը։

— Քեռի՛,— դիմեցի ես ծեր հովվին,— մեր Բեղարի համար մի քանի ոսկոր տուր, էգուց քեզ համար անտառում մի լավ շոմբախ կշինեմ։

— Տա՛ր, բալա՛, որ շոմբախ չբերես չե՞մ տա։ Ամոթ չի՞, հարևան մարդիկ ենք,— նեղացավ ծերունին և մոզու վերջավորությունները մսալի կտրեց ու հանձնեց ինձ։

— Բայց դե հարամ ուտի Բողարը, որ առաջվա Բողարը լիներ, իմ մոզին գելերո՞ց կլիներ,— ավելացրեց ծեր հովիվը։

— Դե նա մեր Զալանկով էնքան է տարվել, որ արար-աշխարհը մոռացել է։ Վերջին սերն է, մեղադրելու չի,— ծիծաղելով պատասխանեց Պետրոսն ու դուրս եկանք վրանից։

Ամառվա լուսնյակ ու մեղմ գիշեր էր։ Գնացինք մեր Բողարի բնի մոտ, ոսկորները դրինք առաջն ու թաքնվեցինք մեր վրանի հետևում։ Այդտեղ լուսինը չէր ընկել, մութ էր, իսկ շան բույնը ցերեկվա նման լուսավոր էր։ Մեր թաքստոցից գաղտագողի դիտում էինք։

Բողարը դուրս եկավ բնից, շուրջը նայեց։ Համոզվեց, որ ոչ ոք չի տեսնում իրեն, մի կտոր մսոտ ոսկոր վերցրեց ու վազեց դեպի Պետրոսենց վրանը։ Քիչ անց, եկավ մի կտոր էլ տարավ, ապա երրորդը, չորրորդը և վերադարձավ իր բույնը։ Մենք գնացինք Զալանկի մոտ և նրան տեսանք ճոխ ընթրիքի նստած...

Լուսնի լույսով նրա աչքերը երջանկությունից պսպղում էին, իսկ ձագերը ստինքներից կախված՝ մուշ-մուշ անուշ էին անում մայրական քաղցր կաթը։

www.a-pdf.com

Մենք նստել էինք աղաքարին, իսկ շունը և՛ ուտում, և՛ բարեկամաբար շարժում էր պոչը։

— Մի կտոր էլ Բողարին տանենք,— առաջարկեց Պետրոսը։

— Չի վերցնի... նրան հո գիտես...

— Մարդ Եղոյի ականջիցը բռնած բերի ցույց տա, որ գոնե էս շներից ամաչի,— դառնությամբ ասաց Պետրոսը։

Բինան մուշ-մուշ նիրհում էր ամառվա ջինջ երկնքի տակ, անասունները մեղմ որոճում էին, իսկ ես ընկել էի մտքերիս ծովը. «Ինչո՞ւ է մեռել մարդկանց խիղճը... Ինչո՞ւ գոնե էն անլեզու կենդանու չափ չեն օգնում իրենց սոված հարևաններին»,— մտածում էի ես, մտածում, մանուկ հոգիս փոթոթվում էր, բայց պատասխանը չէի գտնում...

1939

ՏԻՐՈՋ ՀԻՇԱՏԱԿԸ

1

Մեր հարևան Պապանի որդի Ասատուրին սարից տուն բերին։ Ծառի ճյուղերից կոպիտ պատգարակ էին շինել, մի ջեջիմ փռել մեջը, հովիվ Ասատուրին պառկեցրել էին վրան։ Փշրված ոտքը թմրել էր, բայց վիրավորը շարունակում էր խուլ տնքալ։

Մեր սարերում ամառը երբեմն այնպիսի մառախուղ է շոքում, որ նրա միջի ժայռերը՝ ոնց որ խումբերը՝ փրփրած ծովի մեջ։ Անդունդները լցվում են մուժով ու այնպես հավասարվում, որ վերևում՝ մառախուղից դուրս կանգնած մարդը ուզում է իրեն նետի այդ կաթնագույն ծովի մեջ ու լող տա... Ու հովիվ Ասատուրը, իսկապես, նետվել էր իր ոտքերի տակ փռված ծովի մեջ, բայց ոչ թե լող տալու մտադրությամբ, այլ վազել էր անհետացող այծերին ետ տալու նպատակով։ Ախր այծը ո՞ր կողմ վազի՝ հոտը ետևից գնալու է։ Իսկ մառախուղի մեջ գայլերն են թաքնված։ Այդ բանը գիտեր հովիվ Ասատուրը, դրա համար էլ շտապելուց մոռացավ ամեն զգուշություն ու գլորվեց այն անդունդը, որ դրսից երևում էր այնպես հավասա՞ր, ճերմա՞կ, փափո՞ւկ, փրփուրի դեզի նման...

Պատգարակը շրջապատած սարվորների թափորը գյուղ մտավ, հովվի Ալաշ շունն էլ ետևից։

www.a-pdf.com

Մայրը մազերը փետելով ընդառաջ գնաց թափորին, պատգարակի առաջ չոքեց ու բազուկներն առաջ մեկնեց...

— Էս ինչ զուլում բերիր մեր գլխին, բալա ջան,— մրմնջում էր նա կաղնու ճյուղերը գրկած։

— Յազդյուլ մոքիր, բան չկա, սնդչի կբերենք, կլավացնի։ Ադա՛, մի թևիցը վեր քաշեցեք...

Սարվորներից երկուսը մզկտացող մոր թևերն ընկան մի կողմ քաշեցին, թափորն առաջ գնաց ու կանգ առավ Պապանի դռանը։ Պատգարակը ցած դրին, մեկը ձայն տվեց վիրավորի եղբորը.

— Մաթո՜ս, ա՛յ տղա, մի վազ տուր Ավետ ամնին կանչի։

Ավետ ամին իմ հորեղբայրն էր, որ վարպետ էր անասունների ջարդված ոսկորները կապելու մեջ։

Ամառվա օրը, հնձի տաք օրերին ո՞վ է տանը մնում, որ Ավետը մնար. շուտով տեղեկություն եկավ, որ Ավետը Կարճաբաշում խոտ է հնձում։ Մինչև հասան Կարճաբաշ, մինչև հոգնած հնձվորին գյուղ բերին, բանը բանից անցավ. ջարդված ոտքը ուռավ, սևացավ ու հովիվն սկսեց տաքության մեջ զառանցել։

Իսկ նրա շունը փորի վրա պառկել էր գետնին, գլուխը դրել էր թաթերին ու աչքը տիրոջ դեմքին գցած՝ տխո՜ւր նայում էր։ Ոչ ոք փորձ չարավ կենդանուն տնից դուրս հանել, անհարմար էր այդ մասին նույնիսկ մտածելը. դե՛, մտերիմ ընկերոջը ինչպե՞ս կարելի է տնից դուրս անել։

— Ոսկորներն իրար կանենք, յախու կգցենք կկպչի-կգընա.— սիրա էր տալիս սնդչի Ավետը ու հետն էլ կարգադրություններ անում.

— Պղնձով ջուր դրեք կրակի վրա... Ադա՛, վազ տուր մեր տանից մի բուռը խունկ բեր, Գևոյի դուքանից էլ հինգ պոբցի ծամտաք... Դո՛ւրա եկեք, թամաշ է՞, տո՞...

Հավաքվածներին դուրս արին, մարդիկ սկսեցին ցրվել՝ ճանապարհին զանազան դատողություններ անելով.

— Ջահել ա՛, կկպչի-կգնա...

— Ոսկոր ա մնացե՞լ, որ կպչի... փշրվել ալյուր ա դառել... ո՞նց ա հավաքելու, ո՞նց ա իմանալու, թե ո՛րը որի՛ կտորն ա...

— Կիմանա՛, նրան սնդչի Ավետ կասեն...

Ես քնում էի մեր դռանը կանգնած հին սայլի մեջ։ Մեջքիս վրա պառկած, հայացքս աստղերին։ Յարաբ նրանցից ո՞րն է

www.a-pdf.com

Պապանի տղա Ասատուրի աստղը։ Իսկ ի՞մը, իմ նանի՞նը... Նրանցից մեկը պոկ եկավ տեղից, աղեղ գծեց երկնքում ու գնաց փշրվեց մեր Ղափար սարի վերևում։

«Էն ո՞ւմ աստղը վեր ընկավ, Ասատուրի՞...»։ Այդ մտքին էի, երբ Պապանենց դռնից Ալաշ շունը ոռնաց աղիողորմ և գիշերվա անդորրը պատռեց մեր հարևան Յազգյուլի ծղրտոցը.

— Բալե՛ս, բալե՛ս... Մերդ խավարի, Ասատո՛ւր...

Ճրագներ վառվեցին տներում, հարևանները դուրս թափվեցին քնաթաթախ...

2

Հովիվ Ասատուրի մահվան «յոթն» էլ անցավ, «քառասունքն» էլ՝ Ալաշը սար չգնաց։

— Ախր էն ոչխարը գելերոց կլի, Ալաշ ջան, ախր ի՞նչ ես ասում, որ տեր չես կանգնում էն անասուններին։

Պապանն այնպես լուրջ էր խոսում շան հետ, կարծես սա հասկանում էր ոչ միայն տիրոջ վիշտը, այլև ասածը։ Հաց էին գցում, խաբելով տանում մինչև գյուղի թիկունքի բլուրները։ Այնտեղ, Բաղալանց բլրի գագաթին կանգնում էր Ալաշը, տրխո՛ւր նայում էր վերևում՝ ամպերի մեջ կորած սարերին, ուր վրաններն էին խփված և ուր այն հոտն էր, որին պահպանում էին ինքն ու Ասատուրը։ Անձրև ժամանակ միասին կուչ էին գալիս քարանձավում, արև ժամանակ խաղում էին գոլ ու ծաղկոտ լանջերին, ակնակիր գիշերներին գոչյունով ու հաչոցով դմբդմբացնում էին ձորերն ու միասին հալածում գայլերին։ Իսկ խաղաղ գիշերները, երբ հոտը մակաղում էր արխաջում, ինքը կրակի մոտ պառկած լսում էր Ասատուրի սրնգի անուշ նվագը ու նրա կենդանական հոգին լցվում էր քնքշանքով ու բարությամբ...

Հիմի Ասատուրը չկա, էլ սարում չի։ Է՛հ, որ նա սարում չի, ինքն ի՞նչ գործ ունի այնտեղ...

Եվ Ալաշը, կոտրված սրտով շուռ էր գալիս ու թույլ-թույլ քայլում դեպի գյուղ, այնտեղից էլ գերեզմանատուն...

— Ալաշ ջան, գոնյա մի բան կեր,— մղկտում էր Ասատուրի մայրը վշտահար։

Գնալով թուլացավ Ալաշը։ Ծույլ-ծույլ պառկում էր դեզի հովում ու շրջապատին անտարբեր՝ ննջում էր։ Մաթոսը նստում էր մոտը, գրկում գլուխը և այդպես լուռ մնում էին։ Սիրելի

www.a-pdf.com

տիրոջը կորցնելուց հետո, Ալաշը աստիճանաբար սկսեց կապվել Մաթոսի հետ, թե որ մի կտոր բան էր ուտում, միայն նրա՛ ձեռքից էր վերցնում։

Բայց եկավ մի ժամանակ, երբ միանգամից խախտվեց նրանց մտերմությունն ու Ալաշն իր նոր տիրոջը սկսեց նույնիսկ թշնամանքով նայել։

Ոչ ոք չհասկացավ, թե ե՛րբ և ինչի՛ց սկսվեց այդ գժտությունը։

3

Պառավ Յազգյուլն ամեն օր սրահի թախտին ծալապատիկ նստած՝ լաց էր լինում որդու շորերի վրա։ Ոչխարի կոշտ բրդի կոշտ թելից «տափագործ» չուխան էր, «գեջալրդ» փափախը, որ կարված էր շալ գառան մորթուց, հանդերով փախչող մի դասալիք զինվորից հացով գնած զինվորական մի հին բլուզ և «չորսասպանի» գործած շալվարը, որի միայն մի՛ ծունկն էր կարկատած։

Հենց որ Յազգյուլը մեռած որդու հագուստը հանում էր փայտե հին «ղութուց», դեռ տնից դուրս չբերած՝ Ալաշը հեռվից առնում էր տիրոջ ծանոթ հոտը, դեզի տակից դուրս էր գալիս և ծույլ-ծույլ քայլում դեպի սրահը։ Ապա մղկտացող մոր դիմաց նստած՝ ինքն էլ էր նրա հետ մղկտում, բայց առանց ձայնի ու առանց արցունքի։

Մի անգամ էլ, երբ անբախտ կինը որդու շորերը գոգին դրած տխուր բայաթի էր կանչում, Մաթոսը սրահը մտավ՝ ցախի կապոցը շալակին։

— Էլի քրքրել ես շալվա՞րդ, այ քրքրվես դու... Ախր գիշերն եմ բուխարու առաջ աչքիս լիսը խավարեցնելով կարկատել,— հանդիմանեց մայրը։

— Ի՞նչ անեմ, ա՛յ մեր, բա ծառը բարձրացողին, չորուկ կտրողին շալվար կդիմանա՞... Կարտոփ չես խաշե՞լ, սոված նեխտս կտրվել ա...

Յազգյուլն ուտելիք դրեց որդու առաջ։

— Հանի, դեսը տուր էլի կարկատեմ էդ անտեր մնացածը։

— Բա որ հանեմ, տեղն ի՞նչ հագնեմ։

Մնացին մոլորված։ Յազգյուլը միշտ երեկոներն էր շոր կարկատում և դա ուներ իր հիմնավոր պատճառը. շորերն իրեն

www.a-pdf.com

էին հանձնում, իրենք մտնում հնամաշ վերմակի տակ, առավոտյան վեր էին կենում տեսնում կարկատած, թախտի ծայրին դրած։ Հիմա դեռ կեսօր է, պատված շալվարով, միտը բաց ո՞ւր գնա, ո՞նց երևա մարդկանց։

Մայրը ձեռքն առավ մեռած որդու շալվարը, որ ինքն էր գործել ու ինքն էլ ներկել սարի ծաղիկների հյութով, ու լալով-մղկտալով սկսեց կտրել փողքերի մաշված ծայրերը։ Կտրեց, կարճացրեց, գոտկատեղն էլ նեղացրեց ու տվեց Մաթոսին։

— Առ մի քանի օր հագի, մինչև տենանք ինչ ճար ենք գտնում...

Մաթոսը հագավ եղբոր շորը, բայց սիրտը լցվեց, արցունքը դեմ առավ կոկորդին։

Այդ ամբողջ արարողությանը շունը հետևում էր իր խուզարկու և խելացի աչքերով։ Չգիտես ինչու նա դժգոհ ծմրաց, անհանգիստ շարժումներ արավ ու վերջում էլ սկսեց հաչել Մաթոսի վրա։

— Շաշվեցի՞ր, ա՛յ շուն,— բարկացավ Ցազգյուլը։

Շունը մոթմոթալով, իրեն-իրեն ինչ-որ բան ասելով՝ քաշվեց գնաց իր սովորական տեղը՝ խոտի դեզի տակ։

Այդ օրվանից վատացան նրա ու իր պատանի տիրոջ հարաբերությունները։ Մաթոսի կանչին չէր արձագանքում, նրան տեսնելիս առաջվա նման չէր ժպտում և պոչը չէր շարժում։ Նույնիսկ նրա տվածը չէր ուտում։ Մաթոսն ամեն առավոտ տնից դուրս գալիս, առանց դեզի կողմը նայելու էլ զգում էր, որ շունը նստած տեղից իրեն ճանապարհ է գցում անբարյացակամ հայացքով։

Մի օր էլ պառավ Ցազգյուլը եկավ մեր տուն ու հորս գանգատվեց, թե՝

— Ստեփան ապի, արի տես հո մեր շունը չի՞ կատաղել... առավոտն էն երեխուն քրքրեց։

Հայրս նշաններից հասկանում էր կենդանիների «կատաղություն» կոչված հիվանդությունը, որից մեզ մոտ նույնիսկ մարդ էր մեռնում։ Գնաց հարևան Պապանի տուն՝ ես էլ ետևից։

Նայեց դեզի տակ պառկած շանը, հայացքով զննեց, «խոսեցրեց» ու տվեց իր վճիռը.

— Էս շունը կատաղած չի, քանի որ ո՛չ աչքերն են գազանի, ո՛չ էլ բերանը փրփրած աւ Մենակ տխուր աւ Դե, դրա պատճառն էլ գիտեք, Ալա՞շ...

www.a-pdf.com

Շան տխուր աչքերի մեջ բարեկամության հաղիվ նկատելի փայլ երևաց ու պոչը թույլ շարժեց։ Բայց հենց որ հորս պատվերով Մաթոսն անցավ առաջից, վայրկենապես զայրացավ, տեղից վեր թռավ, հասավ փախչող տղայի ետևից ու ատամները գցեց նրա շալվարի փողքը։

— Լա՛վ, Յազգյո՛ւլ, պարզ ա... Ադա՛, գնա տուն, էդ շալվարդ հանի ու էլի դուրս արի։

Տղան մոլորվեց։

— Հանեմ տեղն ի՞նչ հագնեմ,— փնթփնթաց նա։

— Քու պատռված շալվարը հագի... Էդ ախպորդ շալվարն ա, չէ՞։ Պատռվա՜ծ ա... քեզ հո մարդի չե՞նք տալիս... Գնա հագի։

Մաթոսը պատվերը կատարեց ու եկավ կանգնեց դեզի մոտ։ Շունը տեղից վեր կացավ, առաջ եկավ, հոտոտեց տիրոջը և, որպես զղջումի ու հնազանդության նշան՝ պառկեց նրա ոտքերի առաջ ու գլուխը թաթերին դրած տխուր նայեց տղայի աչքերին. նրա հայացքը ներում էր հայցում...

— Հասկացա՞ք,— որոտաց իմ ածդահա հայրը, և այս անգամ նրա հարցը միայն Յազգյուլին ու իր տղային չէր ուղղված, այլ մոտիկ հարևաններին, որ հետաքրքրությունից դրդված հավաքվել էին Պապանի կալում։

Եվ քանի որ բոլորը չէին հասկացել հորս միտքը, փորձը կրկնեց.

— Դե հիմի գնա էլի՛ ախպորդ շալվարը հագի։

Եվ երբ Մաթոսը տնից դուրս եկավ մեռած եղբոր կարճացրած շալվարը հագին, շան աչքերում շարության կայծեր երևացին, մոռաց զայրագին ու բացվեցին պատառ-պատառ անելու պատրաստ նրա ժանիքները...

Այդտեղ բոլորը հասկացան, և կանայք սկսեցին բարձրաձայն լաց լինել։

— Վի՛ի՛, մարդ ա, մա՛րդ,—քրթմնջաց նրանցից մեկը՝ գոգնոցով աչքերը սրբելով։

— Մարդ չի, համա մարդու սիրտ ունի,— շտկեց հայրս...— Սիրտը չի վերցնում, որ մեռած հարազատի շորը ուրիշը հագնի... Հասկացա՞ք։

Ապա չգիտես ում դեմ բարկացած, նորից որոտաց իր բամբ ձայնով.

www.a-pdf.com

— Բա որ էս անլեզու հայվանը էսքա՞ն թասիբ ունի՞, մարդը ինչքա՞ն պիտի ունենա...

Ու շուռ եկավ գնաց. նա էլ էր հուզված։

Պառավ Ցազգյուլը, շան արարքից ցնցված, չոքել էր կալի մեջտեղը, ձեռքերը պարզել էր երկնքին ու նրա դալկահար շրթունքները մրմնջում էին։

— Մեղա՜... մեղա՜...

Իսկ Ալա՞շը։ Ինձ թվում էր, թե նա էլ է դառնացած։ Քաշվել էր դեզի տակ, փորի վրա պառկել ու երևի մտածում էր իր հանգի. «Բա հարազատի հիշատակն էդպե՞ս կհարգեն...»։

ԴԱԴԱՐԻ ԺԱՄԻՆ

Պրոֆեսոր Արսեն Սիմոնյանի հետ լոր էինք որսում Վերին Խաթունարխի դաշտում։ Արևը զենիթից այնպես էր այրում, որ լորերը ոչ մի գնով չէին ուզում դուրս գալ իրենց զով թաքստոցներից։ Իսկ մենք հոգնած էինք ու քրտնած։

Բաց դաշտում մի գորշ հոլիկ է երևում։ Գնանք այն կողմ, նշաններից երևում է, որ կոլտնտեսության բոստանը պիտի լինի։

Դուրս եկանք առվույտի արտից, և հաճելի տեսարան բացվեց մեր առաջ. թփերի մեջ կանաչին էին տալիս հյութեղ ձմերուկները, իսկ քաղցր սեխերը մեզ խելքամաղ էին անում իրենց նարնջագույն տեսքով։ Նրանց անուշ բույրը բռնել էր ողջ դաշտը։

Խաթունարխի սե՛խը... Դե, թե որ կամք ունես, շուռ արի և նորից առվույտը մտիր։ Իսկի կարո՞ղ ես...

Բոստանի «շեմքին» տատանվում էինք, երբ հոլիկի կտուրից մի մարդ իջավ, ձմերուկների միջով քայլեց դեպի մեզ, ինչպես հովիվն է քայլում ճաշվա շոգին մակաղած հոտի միջով։ Մոտեցավ՝ սև գույնի մի շուն հետևից։

— Համեցե՛ք, հովում հանգստացեք,— դիմեց մեզ մարդը։—Եկե՛ք, որսորդը որսորդի ղադրը կիմանա։

Հա՛, իսկապես որ, սրա շունը որսորդական է՝ «պոյնտերի» խառնուրդ։ Է՛հ, որ ինքն էլ է որսորդ, համարձակ մտնենք։

Քիչ անց, մենք հոլիկի հովում նստած զրույց էինք անում պահակ Կոլյայի հետ (այդպես էին անվանում նրան), բայց ուշքներս ձմերուկի կողմն էր. այնպես էինք ծարավ, ինչպես

www.a-pdf.com

միայն որսորդը կարող է ծարավել օգոստոսի շոգին դաշտում շրջելիս։

Կոլյան հասկացավ ու դարձավ իր շանը.

— Ֆիտո՛, առուն անց կաց, գնա էն մեծ ձմերուկը բեր... Կատա՞կ է անում, ինչ է։

Ի՞նչ կատակ, շունն իրոք լողալով անցավ լայն ու խոր առուն, թփից պոկեց տիրոջ ցույց տված ձմերուկն ու բերեց դրեց մեր առաջ։

— Դե հիմի էլ գնա մի լավ եմիշ ջոկիր։ Քաղցր լինի, հա՞,— պատվիրեց Կոլյան։

Նրա շիկավուն դեմքին հազիվ նկատելի ժպիտ էր խաղում. երևի զգում էր, որ զարմացած ենք իր շան արարքից։

Շունն իր խելացի հայացքով հավանություն տվեց տիրոջ առաջարկին ու շտապեց հրամանը կատարելու։ Վազվզեց թփերի մեջ, հոտոտելով սեխից սեխ անցավ (երևի լավն էր փընտրում) և քիչ անց նրանցից մեկը բերանն առած ետ եկավ։

Ֆիտոյի բերած սեխն իրոք շատ քաղցր դուրս եկավ։

Արսեն Սիմոնյանի շունը զարմացած մեկ իր ցեղակցին էր նայում, մեկ՝ տիրոջը։ Պակաս զարմացած չէինք նաև մենք։ Բայց, ինչպես երևում էր, պահակ Կոլյան որոշել էր այդ օրը մեզ ցուցադրել իր շան բոլոր շնորհքները, ուստի մի նոր կարգադրություն արավ.

— Ֆիտո ջան, դե հիմի էլ գնա կոշիկներս բեր հագնեմ։

Ֆիտոն վազեց առվի ափը, ուր ընկած էին տիրոջ կոշիկները, մեկ-մեկ բերեց դրեց առաջը։

«Հը՞, է՞լ ինչ ես հրամայում»,— հարցնում էր նրա հայացքը։

— Մա՛րդ է, անլեզու մարդ,— զարմացած արտասանեց պրոֆեսորը կարծես ինքն իրեն։— Բայց, Կոլյա՛, որսորդական շունն այսպիսի բաներ չպիտի իմանա, այդ բաները նրա բնազդի մեջ չպիտի լինեն։

— Չկա՞, մտցրո՛ւ։ Սովորելու բան չի՞։ Շունը որ տիրոջը շատ սիրեց, նրա խաթրու ամեն բան կանի, ամեն բան կսովորի,— դիտեց Կոլյան։ Ապա շարունակեց։— Լսեցեք մի բան պատմեմ։ Պատերազմից առաջ Ջիլդա անունով մի շուն ունեի, ախպոր նման ամեն նեղ օրիս հասնում էր։ Մի ձմեռ ես ու ընկ-

www.a-pdf.com

կերա՛ շատ բաղեր որսացինք, էնքան շատ, որ չէինք կարողանում հետներս մաև ածել։ Ընկերոջս ասացի՝ արի տանք Ջիլդային տուն տանի։ Վրաս ծիծաղեց։ Բաղերի վզերն իրար կապեցի, տվի շանս ու պատվիրեցի, որ տանի մեր տուն։ Բերանով վերցրեց գնաց։

Բեռից թեթևացած, մենք շարունակեցինք մեր որսը։ Մի քիչ հետո Ջիլդան ետ եկավ հևալով։

— Մեր սպանած բաղերը թռա՞ն, Կոլյա՛։ Ով գիտի որտեղ վեր գցեց ետ եկավ,— նախատում էր ինձ ընկերս։

Ասի՝

— Իրիկունը կգնանք տուն, էն բաղերն արդեն փետրահան արած կլինեն։

Իսկապես, իրիկունը գնացինք տեսանք, բաղերը բոլորն էլ մեր տանն են՝ ո՛րը պղնձի մեջ, ո՛րը պատից կախված։

Մյուս օրը էլի որս էինք անում Սև ջրի ափին։ Մի ժամանակ շունս կսրավ. երևի փախչող կենդանու հետևից էր ընկել։ Մի բաղ խփեցի օդում, ընկավ գետի մյուս ափը։ Մնացի մոլորված. ի՞նչ անեմ, շունս մոտս չի, որ գնա բերի։ Հորթեր արածացնող երեխաներ կային մյուս ափին, դրանցից մեկը վերցրեց բաղն ու փախավ դեպի իրենց գյուղը։

— Կկրակե՛մ, ա՛յ լակոտ, մի՛ տանի, կկրակե՛մ,— հրացանս հետևից բռնած գոռում եմ ես։

Է՛, նա չգիտի՞, որ մի բաղի համար իրեն չեն սպանի։

Տարա՛վ... Դե դուք, որսորդ մարդ, կիմանաք, թե ինչքան ծանր բան է, երբ քո խփած որսը ուրիշը փախցնում է։ Հե՛յ գիդի Ջիլդա, որտե՞ղ ես։ Էդ մտքիս վրա Ջիլդան կանգնեց առաջս, նայում է դեմքիս, ուզում է հասկանալ, թե ինչ է պատահել, որ բարկացած եմ։ Դե ես նրան ինչ ասեմ, արդեն բանը բանից անցել է, տղան էնքան է հեռացել, որ հազիվ է երևում։

Ասի՝

— Ջիլդա՛, է՞ն գնացող տղին տեսնո՞ւմ ես, բաղս տարավ... Կարո՞ղ ես հասիր, ձեռքիցը խլիր...

Հենց էնպես էի ասում՝ ցավս էի պատմում ընկերոջս։ Մեկ էլ դա տեղից պոկ եկավ, կտրեց-անցկացավ գետն ու գնդակի նման սլացավ փախչող տղի հետևից։ Տների մոտ հասավ. գրեց

www.a-pdf.com

տակը, քոլոլեց, բադը ձեռքից խլեց ու հպարտ-հպարտ բերեց դրեց ոտքերիս առաջ...

Զարմանում եք, չէ՞։ Ավելի զարմանալի բան ասեմ։

Տանը քսանմեկ տարեկան մի աղջիկ ունեմ, հյուր գաք իմ տուն՝ կտեսնեք։ Դա որ ծծկեր երեխա էր, մայրը առավոտը շուտ գնում էր դաշտ աշխատանքի, իսկ մենք երեխային մանկամսուր էինք տանում։ Էս բարի լիսը վկա, հավատացեք, Ջիլդան էր երեխային մսուր տանում։ Ինչպե՞ս։ Շատ հասարակ։ Ատամներով բռնում էր բարուրից, բարձրացնում ու հպարտ-հպարտ տանում։

Հիմի կասեք՝ երեխայի բարուրը դուք ո՞նց էիք կենդանու բերանը տալիս։ Նախ՝ նա կենդանի չէր, այլ իմ հավատարիմ ընկերը։ Հետո, որ օրը չէինք թողնում երեխային մոտենա, նեզանում էր։ Էնքան էր սիրում երեխային, որ ամբողջ օրը շուրջը պտույտ էր գալիս։ Ու հենց բարուրը գրկում էինք, որ տանենք, առաջներս կտրում էր, պոչը շարժում, առանց խոսքի խնդրում էր, աղաչում, մինչև որ իրեն էինք հանձնում։ Էնքան էինք վստահում էդ կենդանուն, ոնց որ կվստահես ընտանիքի մի հասկացող անդամի։

Երեխան մսուրում մի քանի ժամ մնալուց հետո, ասում էի.

— Դե, Ջիլդա՞, երեխի ծիծ ուտելու ժամանակն է։

Էս բանը լսեր թե չէ՝ վազում էր գյուղ, մսուրից երեխային վերցնում տանում էր դաշտ, մոր մոտ։ Կինս կերակրում էր երեխային, փաթաթում բարուրի մեջ, կապում ու շանը պատվիրում՝ «Տա՛ր, Ջիլդա՛»։ Հավատալու բան չի, չէ՞, բայց դե հարցրեք մեր նախագահ Ռեբեկային, կպատմի։ Ասենք, ինչի՞ միայն Ռեբեկային, ամբողջ խաթունարիը կհաստատի իմ խոսքը։ Այո՛, մի՛ զարմանաք, որ երեխային վստահում էինք շանը։ Ախպորը չե՞ն վստահի, ախպոր պես բան էր նա ինձ համար։

Եվ ի՜նչ օգնական էր աշխատանքի մեջ։ Հնձի ժամանակ կպատահեր գերանդին կկոտրվեր, գե էն շոգին ահագին ճամփա կտրիր, գյուղ գնա, որ գերանդի բերես։ Ոչի՜նչ, մոլորվելու կարիք չկա, անլեզու ախպերս պատրաստ կանգնած է։ Ուղարկում էի, գնում էր տնից գերանդի բերում։ Կուլան էի մոռացել՝ կուլան էր բերում, սրոցն էր բերում։ Սովորեցրել էի, անուն-անուն ճանաչում էր իմ գործիքները։

Եվ սովորել էր, որովհետև կապված էր հետս, էնքան էինք իրար սիրում, որ իրար համար հոգի կտայինք։

www.a-pdf.com

Ի՜նչ հրաշք ասես, որ չի գործում սերը, հավատարմությունը...

Կոլյան վերջերս հյուր եկավ ինձ՝ հետն էլ իր ավագ դուստրը՝ Արփիկը։

— Ֆիտոյի մասին գրել եմ՝ խմբագիրներս չեն հավատում,— ասացի նրան ծիծաղելով։

— Ոնց թե չեն հավատում։ Խմբագիրները, իմ հաշվով, հասկացող մարդիկ պիտի լինեն...

— Հասկացող են, էլի՛, դրա համար էլ մեկը նյութի վրա ուղղակի գրել է՝ «Կլասիկ փչոց»։

Զարմացած նայեց։

— Կլասիկը չեմ հասկանում, բայց փչոցը՝ պարզ է,— դանդաղ արտասանեց նա։ Ապա հետզհետե վրդովվելով, վեր կացավ։

— Ո՞նց թե փչոց։ Ո՞ւմ պատվի հետ են խաղում... Մաշինեդ լծիր, գնում ենք մեր գյուղը...

Ես ժպտում եմ, իսկ նա կրակ է կտրել։

— Գնում ենք գյուղացիներին հավաքենք, որ քեզ պատմեն Ֆիտոյի մասին։

— Ֆիտոյի արարքները ես աչքովս եմ տեսել,— առարկեցի ես։

— Իսկ երեխայի բարուրը դաշտ տանե՞լը։ Գիտե՞ս, որ էս աղջիկս հենց էն երեխան է, որին Ջիլդան բերանն առած դաշտ էր տանում։ Գնա՛նք, գյուղացիները կհաստատեն...

Արփիկի ցորնագույն թշերը վառվում էին անհարմարությունից, արևառ ճակատին քրտինքի հատիկներ էին շարվել։ Երևի ամաչում էր այն բանից, որ Ջիլդան մի ժամանակ իրեն «դայակություն» է արել...

— Լա՛վ, Կոլյա՛, հանգստացի՛ր։ Գնալու կարիք չկա։ Կտրպեն, ով չհավատա, թող գնա Վերին Խաթունարխ։ Ազգանունդ Սողոմոնյան է, չէ՞, Կոլյա Սողոմոնյան, կոլտնտեսության պահակ...

— Եվ որսո՛րդ,— արժանապատվությամբ ավելացրեց իմ հյուրը։

1956

www.a-pdf.com

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1

Բասարգեչարից վերադառնալիս ճամփից ոչ հեռու մի զույգ կարմիր բադ հանդիպեց։ Ընկերնե՞ր էին, թե ամուսիններ, խաղաղ սերմ էին հավաքում գարնանամուտի այդ մեղմ օրը։ Մեզ հետ որսորդ կար, որ բադերին տեսնելուն պես սկսեց վերևից թմբկահարել մեքենայի «կաբինը»։ Շոֆերը հասկացավ, արգելակեց մեքենան, և այդ պահին ականջիս տակ որոտաց հրացանը։ Բադերից մեկը թպրտաց սև հողին, իսկ մյուսը թռավ սարսափահար։

— Կրակի՛ր, երկրորդ փողից կրակիր,— ալեկոծված կանչեց ուղևորներից մեկը։ Իսկ որսորդը հանգիստ էր, կարծես որսը չէր փախչում իր ձեռքից։

— Կգա՛, ետ կգա...,— չարախնդորեն արտասանեց նա՝ նորից կրակելու պատրաստվելով։

Իրոք, փախած բադը ետ եկավ։ Եկավ սրտակոտոր կռնչոցով, եկավ և, արհամարհելով իր դահճի ներկայությունը, իջավ մեռնող ընկերոջ մոտ։

— Բա որ ասում էի՛...

Ու կրակեց երկրորդ փողից...

— Դրանք էդպես են՝ կարմիր բադերը։ Եթե զույգ են, մեկին սպանեցի՞ր, մյուսն էլ է քոնը։ Ետ է գալու,— բացատրում էր որսորդն՝ իր ավարը տեղավորելով։ Եվ երբ մեքենան շարժվեց, կրկնեց իր միտքը.

— Էդպես է, դրանք ետ են գալիս...

Ապա դառնությամբ ավելացրեց.

— Միայն վատ ընկերն է, որ հենց սայթաքեցիր՝ ոտքիցդ քաշում է, որ շուտ վեր ընկնես...

Ցանկացա առարկել որսորդի հակամարդկային «փիլիսոփայությանը», բայց կարկամել էի։

Ինչպե՞ս առարկեի, երբ ինձ ընկերս այնպես էր տապալել, որ մի ամբողջ տասնամյակ պահանջվեց, մինչև որ հաղիվ ոտքի կանգնեցի...

2

Թալինի հանդում կաքավ որսալիս ձյան վրա վազող հինգվեց կենդանի տեսա։ Նրանք բարակ ու երկար մարմին ունեին

www.a-pdf.com

և դարչնի գույն։ Շտապում էին դեպի այն քարակույտը, որ բլրակ էր կազմել արտի ծայրին. փրկությունն այդ քարերի մեջ էր, ուր և աճապարում էին թաքնվել։

Կրակեցի խմբի մեջ՝ մեկը մնաց ձյան վրա։ Մյուսները փախան, հասան քարերի կույտին և անհետացան։

Դանդաղ մոտեցա սպանվածին. մի փոքրիկ աքիս էր, որ ինձանից տասը-տասներկու քայլ հեռու ընկած ցնցվում էր։ Կանգ առա և զղջումի զգացումը սկսեց գլուխ բարձրացնել իմ մեջ. դրա ոչ միսը, ոչ մորթին հարկավոր չէ ինձ, ինչո՞ւ կյանքից զրկեցի այդ կենդանուն։

Այդ պահին քարակույտերի միջից մի փոքրիկ գլուխ երևաց, մանր աչքեր պսպղացին, և մի կենդանի դուրս պրծավ այնտեղից ու զույգ-զույգ ցատկելով վազեց դեպի սպանվածը։ Հասավ, ատամները խրեց մեջքը, բարձրացրեց գլխից վեր և իր փոքրիկ ուժերը լարելով՝ շտապեց դեպի ընկերները։

Ես քարացած նայում էի այդ փոքրիկ արարածին ու մտածում. «Ախր նոր կրակեցի, մի՞թե վախ չունի...»։

Մեկ էլ մտածեցի, որ գուցե վախ էլ ունի, բայց չի ուզում իր ընկերոջ դիակը թողնել ինձ նման «հարամու» ձեռքին...

3

Երբ փոքր էի, մեր անտառում վայրի աղավնիներ շատ կային։ Աշնանամուտին ցանք էինք անում թե չէ՝ երամ առ երամ գալիս էին անտառից, փռվում նոր փոցխած ցելերում ու սերմ հավաքում։

Մոտենում էի կուզեկուզ, կրակում երամի վրա և երբ մեկնումեկը թպրտում էր տեղում, ճչում էի ուրախությունից։

Իսկ աղավնինե՞րը։ Նրանք թռչում էին սարսափահար, բայց պտույտ գործելով վերադառնում էին, կտուցները կախ վերևից նայում իրենց զարնված ընկերոջն ու նոր միայն հեռանում։ Այդ ժամանակ ես նորից էի կրակում նրանց վրա, և երամը նոր զոհեր էր տալիս։ Այդպիսով թանկ էր նստում նրանց վերադարձը և այդ բանը փորձով գիտեին աղավնիները։ Գիտեին, բայց անպայման վերադառնում էին դեպի կրակոցի վայրը։

Այդպես են աղավնիները։

Այն ժամանակ իմ խակ ուղեղում ծնվեց հետևյալ հարցը.

www.a-pdf.com

ինչո՞ւ են վերադառնում աղավնիներն այն սարսափելի վայրը... Այդ ի՞նչ հզոր զգացում է նրանց նորից մղում դեպի հրացանի մահաբեր փողը...

Ցանկանում են տեսնել, թե ուր մնաց իրենց ընկե՞րը, վերադառնում են նրան փրկելո՞ւ։

Թե՞ գալիս են վերջին հրաժեշտը տալու իրենց մեռնող հարազատին...

1946—52

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՊԱՀԱՊԱՆԸ

Ես հաճախ էի այցի գնում իմ ընկեր Սարգիս Կակոյանին։ Այն ժամանակ նա ապրում էր Ամիրյան փողոցի համար 18 շենքում։

Գիշերը ձյուն էր եկել, և արևոտ ու հաճելի առավոտ էր բացվել։ Սարգսի հետ որսի պիտի գնայինք։

Բակում երեխաներն ուրախ կանչերով ձնագնդի էին խաղում, իսկ շունը պատշգամբում պառկած՝ անտարբեր հայացքով հետևում էր նրանց խաղին։ Այդ պահին տնից դուրս եկավ Սարգսի հինգ տարեկան որդին՝ Արայիկը, և վազեց բակ՝ խաղին մասնակցելու։

Հենց որ տղան բակ մտավ՝ շունը սրեց ականջները։ Քանի Արայիկն էր ձնագնդի սարքում և նետում մյուս երեխաներին, շունը դեռ անտարբեր էր։ Բայց հենց որ տղայի «հակառակորդներն» սկսեցին հարվածին հարվածով պատասխանել, շունը վեր թռավ տեղից, պատշգամբից ցատկեց բակ, պպզեց իր փոքրիկ տիրոջ առաջ և սպառնագին մռռացրեց, այսինքն՝ «Դե հիմա փորձեցեք...»։

Խոշոր շուն էր դա՝ Ջուլբարս անունով։ Նա իր ահագին հասակով պատնեշել էր երեխայի առաջը, և ոչ մի ձնագնդի այլևս տղային դիպչել չէր կարող։

Մի անկյուն քաշված հետաքրքրությամբ դիտում էի։

Շան պաշտպանությունից խրախուսված՝ տղան իր նպաստավոր դիրքից սկսեց «գնդակոծել» հակառակորդներին։ Սրանք կռացած՝ ձնագնդեր էին պատրաստում և այդ ժամանակ նկատելի էր, թե ինչպես շունը լարված ու տենդագին հայացքով հե-

www.a-pdf.com

տեսում է «հակառակորդ բանակի» մարդկանց շարժումներին։ Այդպես «զինամթերք» կուտակեցին ու սկսեցին հարձակումը Սարգսի որդու վրա։ Այդ ժամանակ շունը առաջ ցատկեց և այնպես ուժգին գրոհեց, որ տղաները իրենց «զենքերը» թողած՝ ցրիվ եկան։

Տնից դուրս եկավ Սարգիսը, տեսավ շան արարքը ու լայն ժպտաց։

— Գիտե՞ս ինչ պաշտպան է. մի՛ փորձիր հանաքով երեխային կպչե՞լ։

Փորձենք։

Ես խիստ դեմք ընդունեցի և մատով սպառնացի Արայիկին։

Շունը, որ մինչ այդ իմ առաջ բարեկամաբար շարժում էր պոչը (դե մենք նրա հետ շատ անգամ ենք որսի գնացել), հանկարծ կերպարանափոխվեց, աչքերում զայրույթ երևաց և իմ ու տղայի մեջտեղ նստելով՝ սպառնագին մռռացրեց իմ հասցեին։

Հետագայում, երբ Սարգիսը Գետառի մյուս ափին, այգիների մեջ տուն գնեց, իրերը տեղափոխելիս Ջուլբարսը շատ օգնեց նրանց. երբ մի մասը տարան, նա հսկում էր մնացածին։ Հետո Ջուլբարսը գնաց նոր տունը, պահակ կանգնեց այնտեղ կուտակված իրերին, իսկ Սարգիսը կնոջ ու երեխաների հետ վերադարձավ մնացածը բերելու։

Այդ օրը ես գնացի Սարգսի նոր գնած տունը տեսնելու։ Ոչ ոք չկար, միայն շունն էր թափառում տան շուրջը։ Հեռվից ինձ ճանաչեց և ուրախության ցույցեր արավ. երևի հիշեց, թե ինչպես Մուղանի դաշտը որսի գնացած ժամանակ վարազի մսից պատառներ տվի իրեն։ Բայց հենց մոտեցա իրերին, անմիջապես լրջացավ և կասկածանքով նայեց ինձ։

— Ի՞նչ է, չե՞ս վստահում ինձ, Ջուլբա՛րս,— փաղաքշական տոնով հարցրի ես և մի քայլ արի դեպի նա։

Աչքերի խիստ հայացքով ինձ կանգնեցրեց։ Գրպանիցս մի կոնֆետ հանեցի, գցեցի իրեն։

Մռռացրեց խստությամբ և կոնֆետին նույնիսկ չնայեց, թեև գիտեի, որ քաղցրեղեն շատ է սիրում։ Ես զգացի, որ իմ այդ արտակարգ սիրալիրությունը նույնիսկ ավելացրեց նրա կասկածը։

— Դրան ոչ մի բանով չես կաշառի,— ետևիցս լսվեց Սարգսի ձայնը։— Գիտե՞ս ինչ ցեղից է. ծնողները Արաքսի ափին հսկում են մեր սահմանները...

www.a-pdf.com

Տիրոջը տեսնելով, շունը բոլորովին կերպարանափոխվեց և նորից դարձավ իմ հին բարեկամը։ Նա պոչով ավլում էր գետինը, փաթաթվում ոտքերիս և կարծես ներողություն էր խնդրում իր խստության համար, ու նրա խելոք աչքերը կարծես ասում էին՝ «Մի՛ նեղանա, տիրոջս գույքն էի պաշտպանում...»։

1947

ՈՐՍԸ

1

Ժողովրդական նկարչի համար կառվարությունը տուն կառուցեց և հողամասը ցանկապատեց։ Արևելյան գույների մեծ վարպետը, երբ հոգնում էր իր արվեստանոցում, բահով առուներ էր փորում, ջրում էր մատաղ տունկերը, մշակում էր բանջարանոցը և միտքը թարմացած վերցնում էր վրձինը։

Տունկերը մեծացան, փարթամ ծաղկեցին, ապա բեռնավորվեցին Արարատյան երկրի շողշողուն պտուղներով։ Այդ ջահել դեղձենիները... որքա՜ն շքեղ գույներ են տվել ալեհեր նկարչի վրձնին. գարնանը՝ երփներանգ ծաղիկները, ամռանը՝ կարմրաթուշ ու ծիրանագույն դեղձերը խառնված կանաչ սաղարթներին, աշնանը ծառերից թափվող նարնջագույն սաղարթները...

Այդ ծառերը պաշտպանելու համար բակում շուն պահելու անհրաժեշտություն առաջացավ։ Բարեկամները մի շուն բերեցին նկարչի համար։ Իր տիրոջ մոտ լավ չէր ապրել այդ կենդանին, դա երևում էր նրա նիհար կողերից և գզգզված մազերից։ Բայց աչքերը խելացի էին, բնավորությունը մեղմ, հանդարտ։ Նրան բերել էին Երևան քաղաքի մյուս ծայրից, Գետառից ոչ հեռու մի բակից։

Լավ էր կյանքը նկարչի բակում, և շունը արագ կազդուրվեց. մազը փայլ ստացավ, աչքերը դարձան ավելի աշխույժ։ Կենդանին զգում էր, թե ինչպես օր օրի ավելանում են իր ուժերը։ Ավելանում էր և տիրոջը ծառայելու, նրան երախտահատույց լինելու այն բնազդը, որ կա և տիրապետող է շների մեջ։

Միայն երբեմն տնեցիք նկատում էին, որ գլուխը դնում է

www.a-pdf.com

առաջի թաթերի վրա և լուռ ու շրջապատին անտարբեր նայում է մի կետի։ Այդ պահերին նրա հայացքում մեղմ տխրություն կարելի էր կարդալ։

— Լուսիկ, տե՞ս, տիրոջն է հիշում,— թաց վրձինը շան դողմը մեկնելով, կնոջն ասում էր ծեր նկարիչը։

— Չեմ կարծում... Վատ է ապրել այնտեղ, լսել եմ, որ տերը նույնիսկ ծեծելիս է եղել,— թույլ առարկում էր կինը՝ ավելի շուտ իր ներսում բարձրացող խղճի ձայնը լռեցնելու համար։

— Կտեսնես... Շունը իր տիրոջ միայն լա՛վն է հիշում...

Մի օր էլ նկարիչը կնոջն ասաց.

— Կուզե՞ս փորձի համար բաց թողնենք...

— Կգնա՞ նախկին տիրոջ մոտ։

— Անպայման կգնա։

— Իսկ մեր վարմո՞ւնքը, մեր արած լավությունները։ Չէ՞ որ շունը երախտիքը չի մոռանում։

— Այդ էլ կա։ Կա մեր երախտիքը և նախկին տիրոջ կարոտը։ Բաց թողնենք, տեսնենք ինչպես կլուծի այդ բարդ հարցը այս պարզամիտ կենդանին։

Շան կապն արձակեցին, բաց արին դարպասը և մատով ցույց տվին փողոցը։

Ազատությո՞ւն, հո չե՞ն խաբում։ Ինչքան էլ լավ խնամեին իրեն, կա՞ ավելի քաղցր բան, քան ազատ շրջելն է Գետառի ափին, իր ցեղակիցների հետ, որոնց նա անշուշտ կարոտում է։

Շունը հարցական նայեց իր տերերին և համոզվելով, որ իրեն իրոք ազատություն են շնորհում, ուրախությունից ծմբրտաց, պոչով ավլեց թափված տերևները, լիզեց իր տերերի ձեռքերն ու դուրս սլացավ։

Նկարիչը կնոջ հետ փողոց դուրս եկավ և հայացքով հետևեց շանը։ Իսկ սա օդը հոտոտելով գտավ ուղղությունը և թեքվելով դեպի Գետառ՝ փողոցի ժխորի միջով առաջ սլացավ։

Նկարիչն ու իր կինը նշանակալից հայացքներ փոխանակեցին։

Երկուսն էլ թեթևություն էին զգում, որ ազատություն են տվել մի շղթայակապ արարածի։ Բայց և մի անծանոթ թախիծ համակում էր երկուսին էլ. նրանք էլ էին կապվել այդ խելացի և նվիրված պահապանի հետ։

— Կվերադառնա՞,— հարցրեց կինը։

www.a-pdf.com

— Տեսնենք,— մոածկոտ պատասխանեց նկարիչն ու մտավ բակ, և բակը նրան տխուր ու դատարկված թվաց...

Անցավ կես ժամ, մի ժամ և թվաց, թե արդեն շատ ժամեր են անցել։ Տանը ոչ ոք չէր ծիծաղում, դադարել էին աշխույժ խոսակցությունները, բնակիչները մտազբաղ էին։ Նկարիչը վրձինը ձեռքին կտավի առաջ կանգնած մտացրիվ ականջ էր դնում դրսի ձայներին։

Հանկարծ դարպասի դռան սողնակը շրխկաց։

Վրձինը ձեռքին նա դուրս եկավ բակ և զգաց, որ դարպասը հրում են դրսից ու չանգռում։ Մի լայն ժպիտ դեմքին, բաց արավ դուռը և այդ պահին իր ուսերին զգաց կենդանու թաթերը, իսկ դեմքին՝ թաց դունչը։

— Դե լա՜վ, իշի՜ր, հերի՜ք է։

Տնից դուրս եկավ տիկին Լուսիկը, և շունը նկարչի օձիքը թողնելով, փռվեց նրա ոտքերի տակ ու սկսեց պոչը բարեկամաբար շարժել։ Ի՞նչ հախուռն է արտահայտում այդ կենդանին իր ուրախությունը։

— Շնորհակալություն է հայտնում... այո՜, այո՜, շնորհակալություն այն բանի համար, որ թողել ենք գնացել է իր տիրոջից կարոտն առել,— ասում էր նկարիչը զգացված։

— Համոզվա՞ծ ես, որ տիրոջն այցելության է գնացել։

— Լիովի՜ն։

— Ինչի՞ց ես եզրակացնում։

— Դրա մեծ ուրախությունից։ Ուրախություն ոչ այնքան մեզ տեսնելու (մեզ ամեն օր է տեսնում), այլ իր տիրոջը տեսնելու համար...

Կարծես նրա խոսքը հաստատելու համար դարպասի բաց դռների մեջ կլոր դեմքով, միջահասակ մի մարդ երևաց։

— Եկե՞լ է... դե լավ է, ես էլ կարծեցի հարևանի շան հետ այդի գնաց...

Մարդուն ներս հրավիրեցին, բայց սա, պատճառաբանելով, որ շտապում է, վերադարձավ։

Շունը մեկ վեր կացավ, որ հեռևի իր նախկին տիրոջը, մեկ էլ երկմտանքով նայեց նկարչին, կնոջը, նրանց ձեռքերից քաղցրավենիք վերցրեց, պոչը նորից շարժեց բարեկամաբար և թույլ-թույլ գնաց պառկեց իր տեղը։

Նրա աչքերը նորից թախիծ էին արտահայտում...

www.a-pdf.com

2

Գարնան մի ակնակիր գիշեր շատ անձրև տեղաց։ Ամպերը որոտում էին ահարկու ձայնով և կայծակները հրեղեն ցոլքերով ծվատում էին երկինքը։

Շունը ոռնաց աղեկտուր և թափ տվեց, որ կտրի իր վիզն օղակող կապը։ Նա ծառս էր լինում ու ամբողջ ուժով զարնվում սյունին, որից կապված էր։

— Ի՞նչ է պատահել այս կենդանուն,— տարակուսած հարցնում էր նկարչի կինը։

— Վտանգ է զգում... Շներն այդպես անհանգստանում են մեծ վտանգից առաջ, երբ սիրած տերը պատուհասի է հանդիպում։

— Ի՞նչ պատուհաս, արդեն անձրևն ու կայծակն էլ դադարեցին, տե՞ս, երկինքը պարզում է։

Երբ նկարիչը փաղաքշական խոսքերով մոտեցավ շանը, որ մեղմի նրան, այդ պահին կենդանին թափ տվեց, կտրեց պարանը, թռավ անցավ պատն ու անհետացավ խավարում։

Նկարիչն ու կինը մնացին տարակուսած։

— Գնանք ներս, կմրսես... Սպասիր, հեռվից խուլ գոռոց եմ լսում։

Նրանք սկսեցին ականջ դնել։

Անցավ մի քանի րոպե, հանկարծ փողոցից տագնապալի ձայներ լսվեցին.

— Հեղե՜ղը, հեղե՜ղը... Գետառը ափերից դուրս է եկել լցվել քաղա՜քը...

Սկսվեց Երևանի 1946 թվականի մայիսի 26-ի գիշերվա մեծ հեղեղը...

3

Պղտոր հեղեղն իջավ Հաղիսի մերկ լանջերից, Ավանի քարքարոտ ձորերով ցած հոսեց, վիթխարի քարեր գլորելով, կենդանաբանական այգու սարսափած կենդանիներին իր ալիքների մեջ առնելով, ահռելի ուժով խուժեց քաղաք ու առաջ վազեց նրա ասֆալտապատ փողոցներով։ Նա զարնվում էր նորակերտ, ամուր շենքերին ու ետ նահանջում, բայց ուր հանդիպում էր հին Երևանի մնացորդներին՝ մի խարխուլ տնակի, իր գիրկն էր

առնում և գերաններն ու տնային իրերը ալիքների բաշին գտ-
ռում-գոշյունով առաջ էր գնում։

Այդ պահին մի գորշ կենդանի պղտոր ջրերի դեմ կռվելով լողում էր դեպի Գետառ, դեպի այն ցածլիկ, կավաշեն տունը, որի բակի մի անշուք անկյունում ծնվել ու մեծացել էր ինքը։

Այդ բակում լճացած ջուրն էր ծփում էլեկտրական լույսի թույլ ցոլքերից, նկուղը հեղեղված էր, և եկող նոր ալիքները զարնվում էին խարխուլ պատշգամբին։ Տանտիրուհին ճչալով, ջրերի մեջ չփշփացնելով իրերը կրում էր հարևան ամուր շենքի երկրորդ հարկը, իսկ ամուսինը երեխաներին շալակած շտապում էր դեպի բարձրադիր մի հողաթումբ, ուր ջուրը չէր հասել։

Այդ պահին հոր վզից կախված տղան ձայն տվեց.

— Ուրսը, մեր Ուրսը...

Բակում լճացած ջրերը պատռելով, ցեխոտ ու թուլացած տեղ հասավ շունը և փռվեց հողաթմբի գլխին, տիրոջ երեխաների ու իրերի մոտ։

Աղետի այդ ծանր պահին մարդու սիրտը թեթևացավ, իսկ երեխաները իսկույն մոռացան քիչ առաջ իրենց կրած սարսափը և շանը գրկած փաղաքշում էին նրա սառած մարմինը։ Իսկ նրանց հայրը զգացված ասում էր.

— Իմ նեղ օրին հասա՞ր, Ուրս ջան, բա ո՞նց գտար մեզ...

Ապա սթափվեց և խրոխտ պատվիրեց.

— Դե՛, Ո՞ւրս, երեխաներին ու իրերին նայիր, ես գնացի։

Ու ջուրը մտնելով՝ գնաց տանը մնացած մյուս իրերը բերելու։

Ափերից դուրս եկած Գետառը գոռգոռում էր ահարկու, փլվում էին նրա երախն ընկնող այն խարխուլ պատերը, որոնք վաղ թե ուշ պիտի փլվեին նոր, հոյակապ շենքերին տեղ բացելու համար։ Բայց ոչ այդ գոռոցները, ոչ տագնապալի գիշերը ահ չբերին իրենց կղզուն ապաստանած երեխաներին. նրանք խաղում էին իրենց մանկության ընկեր Ուրսի հետ։

Հաջորդ օրը պայծառ էր, օդը մաքուր, երկինքը պարզ։ Հեղեղված քաղաքում արտակարգ եռուզեռ էր տիրում. ջրհան մեքենաները նկուղներից ջուր էին քաշում, բեռնատար ավտոները փողոցների տիղմն էին կրում, մարդիկ պայթեցնում ու մեքենաներին էին բարձում հեղեղի բերած հսկայական քարա-

www.a-pdf.com

կտորները, ամբողջ բնակչությունը, գործիքներ առած, մաքրում, վերականգնում էր քաղաքի վնասված թաղերը։

— Տեսնես ի՞նչ եղավ մեր Ուրսը... Երևի զոհ գնաց հեղեղին,— ասում էր տիկին Լուսիկը։

Իսկ ալեզարդ նկարիչը դեղձենու առաջ կանգնած մտածում էր. «Եվ ինչպե՞ս էլ զդաց վտանգը...»։

Կեսօրին դարպասի դուռը հանդարտիկ բացվեց և ներս մտավ Ուրսը։ Ցեխոտ մազը կպած էր մարմնին, հոգնած էր, բայց հայացքը հանդարտ էր, խաղաղված։ Առաջ եկավ փորը գետնին քսելով, լիզեց աթոռի ոտքերը, և նրա խելոք աչքերը նեռում էին հայացում...

Տուֆաշեն շենքեր են կանգնած այժմ Գետառի ափին՝ այն վայրում, ուր կավաշեն տնակներ էին՝ արևելյան կեզտոտ բակերով։ Ուրսի նախկին տերերն այժմ ապրում են այդ շենքերից մեկում։ Ամեն գարնան նրանք իրենց ապահով պատշգամբից դիտում են վարարած Գետառը, որ վիշապի նման փնչալով ու գոռալով գրոհում է իր բազալտե պատերը։ Զո՜ւր ջանքեր. ափերով ամրակուռ ամբարտակներ են ձգվում դեպի ցած, իսկ նրանց ղուգահեռ՝ ծաղկապատ գաղոններ։

Նայում են Ուրսի տերերը սանձահարված, կերպարանափոխված, մեղմացած գետին և այլևս ահ չունեն նրանից։ Միայն գարնան պղտոր ջրերը նրանց հիշեցնում են իրենց ընտանիքի հավատարիմ բարեկամին, նրան, որ այն ահարկու գիշերը մահն արհամարհելով պատռում էր հեղեղը, որ օգնության հասնի իրենց։

Իսկ Ո՞ւրսը։ Նա ծերացել է և այլևս չի կարողանում տեսության գալ իր նախկին տերերին։

Եվ եթե գա էլ, կճանաչի՞ արդյոք իր մանկության վայրերը...

1951

ՀԱՅԱԴՈՒԿ

Որսորդ Խոսիկի տնեցիք իմացան իր հետ պատահած դժբախտության մասին։ Այսպես, ուրեմն, ձեռքը վիրավոր պատկած է հիվանդանոցում և բուժողն էլ իր որսորդ ընկերն է՝ պրոֆ. Արսեն Սիմոնյանը։

www.a-pdf.com

Կինը՝ Գոհարը, սկզբում հուզվեց, լաց եղավ, ապա հետզհետե հաշտվեց կատարվածի հետ. է՛հ, վնասը ձախ ձեռքին է հասել, հո՞ աջն առողջ է։

Մի քանի անգամ հիվանդին այցելելուց և նրա սրտապընդիչ խոսքերը լսելուց հետո հարազատները վերջապես հանդարտվեցին։ Բայց, դե եկ հանդարտեցրու նրա որսորդական կյանքի ընկերուհին՝ Մարսին։ Սկսած այն պահից, երբ հանդում տիրոջը դժբախտություն հասավ, այդ կենդանին ոչ մի վայրկյան չէր հանգստանում։ Իր բնազդով նա անհանգիստ զգում էր, որ ինչ-որ տեղ տիրոջը ծանր բան է պատահել... Մարսը ճգնում էր հասկանալ տիկին Գոհարի լեզուն, մի բան միայն հասկանալ. տերը կենդանի՞ է, թե ոչ։ Բայց ինչպե՞ս հասկանար, քանի որ այդ ունակությունը նրան չէր տրված բնության կողմից։

Տագնապալի ժամեր անցան՝ տերը չկա ու չկա։ Դեպի փողոց դուրս թռչելու փորձեր արավ և զանազան նշաններով հասկացրեց տիկին Գոհարին, որ իրեն տանեն վիրավոր տիրոջ մոտ, բայց ո՞վ սիրտ ուներ շնով զբաղվելու։

Այդ ժամանակ կենդանին «հացադուլ» հայտարարեց. ուղղակի հրաժարվեց սնունդ ընդունել։ Երեք օր թաթերի վրա պառկած նվում էր։ Տիկին Գոհարը ամենահամեղ պատառներ էր գնում Մարսի առաջ, բայց սա զարմանալի ուժեղ կամք ցուցաբերեց և դիմացավ ամեն գայթակղության։

— Աբսեն Տիգրանիչ, թույլ տվեք բերենք նոսիկի մոտ, աչքովը տեսնի, հանգստանա,— խնդրում էր տիկին Գոհարը ամուսնուն բուժող պրոֆեսորին։ Պրոֆեսորը կատակի տվեց.

— Առանց խալաթի չի կարելի...

Ապա, երբ լսեց շան տանջանքների մասին, լրջացավ, կարեկցություն երևաց նրա խաժ աչքերում (ախր նա էլ է որսորդ...)։

— Չէ՛, հիվանդանոց բերելը հարմար չի, բայց ես ուրիշ միջոց կառաջարկեմ. տիրոջ շորերը դրեք առաջը, թող կարոտն առնի։

Այդպես էլ արին, շան առաջ դրին նոսիկի որսորդական պայուսակը, փամփուշտակալն ու հրացանը։ Կենդանին հոտոտեց իրերը, կարոտալի վնգստաց, լիզեց և երբ թույլ ժպիտ նկատեց տանտիրուհու դեմքին, հասկացավ, որ իր տերը կենդանի է։ Հասկացավ և առջևի թաթերով իրերը գրկեց ու քուն մտավ՝ առաջին քունը երեք օրվա մեջ։

www.a-pdf.com

Տիկին Գոհարը սրբում էր կենդանու դեմքին սառած արցունքներն ու բարեկամաբար հանդիմանում.

— Սատկես դու, մեզնից շատ է դարդ անում...

Շունն արթնացավ, խաղաղ հայացքով նայեց իր տանտիրուհու հանդարտված դեմքին ու վերջ տվեց «հացադուլին»։

Իսկ երբ Խոսիկը հիվանդանոցից տուն եկավ, Մարսը սրբոտապատառ դիմավորեց տիրոջը, յուրովի լիզեց-համբուրեց նրան և դարձյալ արտասվեց։

Բայց այս անգամ դրանք ուրախության արցունքներ էին, այնպիսի ուրախության, որպիսին ունենում է միայն շունը՝ կորած տիրոջը գտնելու ժամանակ։

1955

ԱՆԼԵԶՈՒ ՊԱՀԱԿԸ

Մի ժամանակ ես հաճախ էի գնում Որսորդական վարչություն, որը տեղավորված էր Նալբանդյան փողոցի 44-րդ շենքի երրորդ հարկում։

Մի անգամ էլ այդ շենքի բակը մտնելիս, ակամայից ուշադրություն գրավեց երեք-չորս տարեկան մի երեխա, որ հեծանիվ էր քշում փողոցի եզրին։ Դեռ անվարժ էր, և հեծանիվը երբեմն ծռվում էր ու հեծյալին տանում դեպի փողոցի կենտրոնը։

«Հիմա ավտոյի տակ կընկնի»,— ահով մտածեցի ես և հենց ուզում էի քայլել դեպի երեխան, երբ փողոցի մյուս եզրի տան բակից դուրս թռավ մի գորշ շուն, նայեց դես-դեն և երեխային նկատելով՝ վազեց ու իր մարմնով փակեց նրա հեծանվի առաջը։

— Ճանապա՛րհ տուր,— բարկացած գոչեց տղան։

Շունը տեղից չշարժվեց։ Նա կանգնել էր փողոցի կողմը, իր փոքրիկ տիրոջ ու երթևեկող ավտոմեքենաների միջև։

Երբ տեսավ, որ համառ տղան մտադիր չէ հեռանալ փողոցից, շունը ատամներով բռնեց նրա թևից և հեծանիվի հետ միասին քաշեց դեպի դիմացի բակը։

Տղան դիմադրում էր։

— Բա՛ց թող... բա՛ց թող...

Բայց շունը հաստատ որոշել էր տուն տանել տղային, քա-

www.a-pdf.com

շում էր նրա թևից և պոչով հարվածում քշում, որ հեռանի իրենց։ Այդպես, տղային հապճեպ անցկացրեց փողոցը և մտավ այն շենքի բակը, ուր այժմ Անտառտնտեսության մինիստրությունն է։

Հաջորդ օրը ես դարձյալ հանդիպեցի այն երեխային և իր շանը։

Տղան խաղում էր շենքի արտաքին բակում՝ մայթից ոչ հեռու, իսկ շունը մայթի եզրին պպզած և ականջները սրած՝ զգոն պահակություն էր անում. չլինի՞ թե չարաճճին իր խաղով տարված՝ հանկարծ մտնի փողոց։

Մոտեցա տղային, որ հարցուփորձ անեմ այդ խելացի շան մասին։ Կենդանուն դուր չեկավ իմ վարմունքը։ Նա վեր թռավ տեղից, պպզեց իմ և տղայի միջև ու սպառնագին մռռացրեց վրաս։

Հեռացա։

Քիչ անց, երբ դուրս էի եկել Որսորդական վարչությունից, նկատեցի մի կնոջ, որ զամբյուղը ձեռքին կանգնած՝ ինչ-որ պատվերներ է տալիս իմ ծանոթ շանը։ Պատվիրեց, գլուխը շոյեց, մի կտոր շաքար գցեց բերանն ու գնաց։

Մայթով անցնելիս հարցրի տղային.

— Ի՞նչ էր պատվիրում մայրդ ձեր շանը։

— Ասում էր՝ լավ կպահես մեր Սուրիկին,— ճերմակ, մանրիկ ատամները ցույց տալով պատասխանեց երեխան և շարունակեց իր անվարժ երթևեկությունը եռանիվ հեծանիվով։ Իսկ շունը հայացքով հետևում էր նրա շարժումներին և մեկ-մեկ էլ կասկածանքով ինձ էր նայում։ Երբ տղան անցնում էր իմ մոտով, ասացի.

— Բալիկ ջան, մի րոպե կանգնիր, բան եմ հարցնելու։

Կանգնեցրեց հեծանիվը թե չէ, շունը տնկվեց իմ առաջ։ Նայում է ինձ սպառնագին։ Նրան չգրգռելու համար մի քայլ ետ գնացի և շատ մեղմ տոնով հարցրի տղային.

— Երեկ, որ ատամներով բռնել էր թևիցդ, չցավեցրե՞ց...

— Չէ... Շատ սուր ատամներ ունի, բայց թույլ է բռնում, որ չցավի,— պատասխանեց տղան և գործի դնելով զույգ ոտքերը՝ սլացավ բակի երկայնքով։

Իսկ շունը մայթի եզրին նստած, աչալուրջ հետևում էր իր

փոքրիկ տիրոջը՝ չլինի՞ թե խաղով տարված մտնի փողոց և ընկնի մեքենայի տակ, չլինի՞ թե մեկնումեկը չար դիտավորությամբ մոտենա նրան...

1947

ԱՎԵԼՈՐԴԸ

Զոբան Արտեմը Բողար անունով մի շուն ուներ։ Խոշոր էր ու բարի այդ շունը, այնքան բարի, որ երբ երեխա ժամանակ հեծնում էի նրան՝ համբերությամբ տանում էր։

Քանի դեռ ուժը տեղն էր ու կարողանում էր կռվել գայլերի դեմ՝ լավ էին կերակրում Բողարին։ Բայց երբ ծերացավ, այլևս լակ չէին տալիս, ապրում էր տերերի դեն նետած մնացորդներով։ Երբ քաղցած կենդանին աչքը գցում էր Արտեմի աչքին ու հայացքով ակնարկում էր, որ իրեն էլ բաժին տա, Արտեմը նեղվում էր այդ հայացքից։

— Դենը կորիր, քավթա՛ռ, թող հալալ հաց ուտենք,— գոռում էր նա ու ոտքով հրում։

Դրանից շատ էր վշտանում Արտեմի պառավ մայրը՝ Մարթան։ Գուցե այն պատճառով, որ ինքն էլ Բողարի նման բեռ էր դարձել ընտանիքի համար...

Այն ժամանակ նա տնքալով վեր էր կենում իր անկյունից, շալիկին հենվելով հասնում էր շեմքին ու մի կտոր ուտելիք գցում Բողարին, բայց այնպես, որ հարսը չտեսնի...

Ծերանում ու նիհարում էր Բողարը և լուռ ու մունջ սպասում իր վախճանին։ Բայց սիրտը չէր կտրվում իր սիրած հանդերից. ոտքերը քարշ տալով գնում էր հոտի հետևից։

Մի օր շատ անձրև եկավ, այնքան շատ, որ տվեց-անցավ Արտեմի հին յափնջին։ Ծանրացավ յափնջին ու նեղություն էր տալիս տիրոջը, սա էլ փռեց մի քարի ու հոտը քշեց տուն։ «Թող մնա ցամաքի, էգուց ետ կգամ կվերցնեմ»,— վճռեց նա։

Երբ տուն հասավ, ետ նայեց տեսավ շունը չկա։ Բարձրացավ տափակ կտուրին, գոռաց դեպի հանդը.

— Բողար հե՛յ...

Բողարը չկար ու չկար։

Շատ վշտացավ պառավ մայրը, իրեն-իրեն թոնթորաց, թե.

— Խեղճը գելերոց կլի, գնա՛, ա՛յ բալա, գնա տես ուր մնաց...

— Ես հենց ուզում էի նրանից մի կերպ պրծնել, ձեռս չէր բռնում։

— Վի՜ի՜, քոռանամ ես, էդ ինչեր է մտքովդ անց կենում, Արտե՜մ,— նախատեց մայրը։

Արտեմը քմծիծաղ տվեց բեղի տակ։

— Դե որ հալ չկա վրեն... Ա՜յ մեր, ինչ ես նեղանում, աշխարհի բանն էտենց է...

Կերավ ապուրը, բեղերը սրբեց ու կարծես մորը մխիթարելու համար ավելացրեց.

— Էդ լավ էլավ, որ իրեն կամքովը կորավ... Ջարխեշից մի ջուխտ լավ թուլա եմ առել, էգուց կբերեմ։

Տղայի անխիղճ վարմունքը շատ կպավ պառավ Մարթայի սրտին, բայց ինչ աներ, ոտ ունե՞ր, որ գնար կորած Բողարին փնտրելու։

Իսկ Բողարը ոչ կորել էր, ոչ էլ գայլերի բաժին դառել. ուղղակի պահակ էր մնացել տիրոջ կորստին. իր կարճ խելքով կարծել էր, թե տերը մոռացել է յափնջին։

Հաջորդ օրը Արտեմը ոչխարի հոտը քշեց դեպի Ջարխեշ գյուղի հանդը և այնտեղ նրան հանձնեցին շան ձագերը։ Դրանք արջի քոթոթների նման տռուզ և ուրախ արարածներ էին։

Մի քանի շաբաթ Արտեմը չգնաց այն հանդը, ուր թողել էր հին յափնջին. «Է՜հ, վրան հալ չէր մնացել, թող Բողարի նման նրանից էլ պրծնենք...» Ու գնաց Դիլիջան, մի նոր յափընջի գնեց։

Լավն էր, կյանքը փոխվեց Արտեմի համար՝ շները նոր, յափնջին նոր...

Իսկ հին շունը դեռ ընկած նվում էր յափնջու մոտ... Ինչ իմանար խեղճ կենդանին, որ տերը ձեռք է վերցրել իր հագուստից։ Աչքը բացել տեսել էր, որ այդ յափնջին միշտ իր տիրոջ ուսերին է, ուրեմն պիտի պահպաներ, թեկուզ մեռնելու էլ լիներ։

— Լա՜վ, դա ինչ նորություն է, որ,— կասի ընթերցողը։— Դրա նման մի դեպք էլ Տուրգենևն է նկարագրել, հենց քո գրքվածքներում էլ կան այդպիսի դեպքեր։

Համբերություն, շարունակությունը լսեցեք։

Մի օր էլ, Արտեմը հոտը տարավ այն հանդը, ուր այն անձրևոտ օրը թողել էր իր յափնջին, տեսավ Բողարին ու մնաց զարմացած։ Խե՜ղճ կենդանի, կաշին ու ոսկորներն էին մնա-

www.a-pdf.com

ցել։ Յափնջու շրջապատում ինչքան խոտ ու արմտիք կար կրծել էր, շրջապատը սևացրել և այժմ մեկնված նվում էր.

— Բողա՞ր...

Աչքերը բացեց, վրա նստեց և այնպես նախատինքով նայեց տիրոջը, որ սա սարսռեց։

— Ամո՛թ քեզ, ամո՛թ,— ասում էր այդ հայացքը։— Ես քո քուրջը չեմ մոռացել, իսկ դու ինձ մոռացար... Ետ չեկար տեսնես ո՞ւր մնաց քո ընկերը...

Ամաչեց Արտեմն իր արածից, հաց հանեց տոպրակից, դրեց շան առաջ։

Շունը զայրագին նայեց տիրոջը, վեր կացավ և խռոված քարշ եկավ դեպի մոտիկ ձորը։

— Բողա՞ր, Բողա՞ր,— հետևից ձայն էր տալիս Արտեմը։

Կանգ չառավ, նույնիսկ ետ էլ չնայեց. շա՞տ էր դառնացած իր տիրոջ տմարդի արարքից։

Գնաց պառկեց մի փոսում և այնտեղ էլ գտավ իր վախճանը...

1961

ԲԱՐԻ ԴՐԱՑԻՆԵՐ

Ամառնամուտին գիշերն այնքան տաք էր, որ ես քնում էի մեր բակի մեծ տանձենու տակ, որի վրա մի ճնճղուկի բույն կար։ Զվարճալի էր տեսնել, թե ինչպես ձագերը գլուխները դուրս էին հանում բնից, ծվծվոցով կտուցները բացում ու հափշտակում ծնողների բերած պատառները։

Տարին հաջող էր, կարկուտ չկար, փոթորիկ չկար, կերը շատ էր, և ծիտիկ ծնողները երջանիկ էին իրենց ձագերով։

Բայց մի օր մեծ աղետ պատահեց։ Երեկոյան դեմ սաստիկ փոթորիկ բարձրացավ, պտուտահողմ անցավ գյուղի վրայով, արմատահան արավ ծառերն ու շուռ տվեց հարևան տան թիթեղյա տանիքը։ Մեր բակի տանձենին գլուխը խոնարհում էր ուժգին հողմի առաջ և ցավից տնքում, հեծեծում։ Ճնճղուկները սարսափով տեսնում էին, թե ինչպես բույնը ճյուղի հետ գնում գալիս է, և նրա մեջ ձագերը ծվծվում են անօգնական։

Երբ փոթորիկը դադարեց, բույնը խիստ ծռվել էր։ Մայր

www.a-pdf.com

ճնճղուկը կանգնել էր ճյուղին և կտուցով դեպի ներս էր հրում ձագերին, որ չընկնեն։ Հայր ճնճղուկն էլ եկավ, երկուսով կտուցներով բռնեցին բնի եզրից և վեր քաշեցին, որ ուղղեն, բայց բնի հյուսվածքը դեմ էր առել մի կեռ ճյուղի, և նրանք իրենց փոքրիկ ուժով անկարող էին ուղղել։

Ես տնից վերցրի իմ շինած արհեստական բույնը և մաքրեցի ծառը, որպեսզի ճուտերին տեղավորեմ նրա մեջ։ Ճընճղուկները կարծելով, թե իրենց ձագերին վտանգ է սպառնում, աղմուկ բարձրացրին։ Շփոթված ցած իջա, պառկեցի թախտին և նայում եմ, տեսնեմ վերջն ի՞նչ է լինելու, ի՞նչ հնարք են գտնելու այդ փոքրիկ արարածներն իրենց ձագերին փրկելու համար։

Խաղաղ երեկոն իջավ գյուղի վրա, և լիալուսինը դուրս եկավ սարի հետևից։ Բոլոր թռչուններն էլ սվսվոցով քուն էին մտել, միայն տանձենու վրայի բնակիչներն էին անքուն. ճյուղին կանգնած՝ կտուցներով պահում էին իրենց ձագերին, որ վայր չընկնեն։

Ես երկար նայելուց ձանձրացա և սկսեցի ննջել։ Հանկարծ անկողնուս վրա փափուկ թրմփոց լսեցի, ճնճղուկների աղմուկ և մի բան թևով դիպավ երեսիս։ Շփոթված վեր թռա և տեսա, որ ձագերից մեկն ընկել է վերմակիս վրա, իսկ ծնողները տագնապով թռչում-պտտվում են նրա գլխավերևը։ Շինած տախտակե բույնն ամրացրի ծառին և ձագը դրի նրա մեջ։ Ծնողները նկզբում շատ ճվճվացին, ապա տեսնելով, որ իրենց ձագն ապահով տեղ է՝ հանգստացան և շտապեցին իրենց բույնը՝ մյուս ձագերին հսկելու։

Ես այս անգամ կանոնավոր քուն մտա։ Երազումս անհամար ճնճղուկներ հավաքվել էին ծառի վրա և աղմկում էին։ Արթնացա՝ երազ չէր, իսկապես մեր տանձենու վրա շատ ճընճղուկներ էին հավաքվել։ «Ի՞նչ բանի վրա են դեռ լույսը կարդին չբացված»,— մտածեցի ես ու անկողնումս նստեցի։ Լուսնի լույսով տեսա, որ մեր թաղի ճնճղուկները հավաքված նոր բույն են շինում աղետի ենթարկված հարևանի համար։ Մի խումբ խոտ էր կրում մեր կտուրի դեզից, մի ուրիշ խումբ մանր ճյուղեր էր բերում, մի քանիսը փափուկ մազեր ու բրդի կտորներ էին հավաքում, վարպետ ճնճղուկները բույնն էին հյուսում։ Իսկ տագնապահար ծնողները ամբողջ իրանով դեռ հենված էին թեքված բնի ներքին եզրին, որ ձագերը վայր չընկնեն։

www.a-pdf.com

Ժպտացի, գլուխս օրորեցի զարմանքից ու նորից քուն մտա։

Առավոտյան երբ արթնացա, նոր բույնը պատրաստ էր հարևան սալորենու վրա, որն ավելի ցած էր և ավելի լավ էր պաշտպանված քամիներից։

Ես ուշադիր հետևում էի, երբ ճնճղուկները թռան իջան ծռված բնի մոտ։ Ծնողները առանձնացրին ձագերից մեկին, ամեն մեկը մի թևից կտուցով բռնեց և նրան թոցրին տարան նոր բույնը։ Ճանապարհին հարևաններն ուղեկցում էին նրանց։ Ապա վերադարձան և հերթով տեղափոխեցին հին բնի մեջ քնած ձագերին։

Այդ օրը, երբ գյուղը զարթնում էր, մեր թաղի ճնճղուկները հոգնած ու դադրած նոր միայն քուն մտան։ Ես նույնպես ուրախ սրտով սկսեցի ննջել, և կես քուն, կես արթուն դեռ լսում էի փրկված ձագերի և նրանց այնքա՜ն սարսափ ապրած ծնողների երջանիկ սվսվոցը։

1940

ԱՋԱՏԱՐԱՐԸ

Այդ արտասովոր դեպքը տեղի ունեցավ 1953 թվականի մայիսի տասնչորսին, Քասախ գետի ափին։ Նախորդ գիշերը սարերում հորդ անձրև տեղաց, ձմեռվա ընթացքում Արագածի բարձունքներում կուտակված ձյունը արագ հալվեց և խշշոցով ցած եկավ։ Հարյուրավոր պղտոր վտակներ իջան, միացան իրար, դարձան ահարկու հեղեղ, որ Համբերդի և Աշտարակի ձորերով խուժեց Արարատյան դաշտը։ Քասախ գետը ուռցրեց իր մեջքը, դուրս եկավ ափերից և պղտոր հորձանքներով գրոհեց դաշտերն ու այգիները։

Սանձարձակ տարերքը դեռ իր ավերմունքը չէր գործել, երբ ողջ էջմիածնի շրջանը ոտքի կանգնեց։ Բեռնատար, փորող, ինքնաթափ մեքենաներ արշավեցին դեպի Քասախ և սկսվեց կռիվը հեղեղի դեմ։

Երբ կարկատեցին Քասախի «պատռվածքները», ամբարտակները և գետին հարկադրեցին հոսել իր նախկին հունով, մարդիկ հանգիստ շունչ առան և յուրաքանչյուրն իր ձեռքի

www.a-pdf.com

գործիքին հենված, դիտում էր դաշտը, որ տեղ-տեղ ծածկված էր պղտոր ջրով։

— Լա՛վ պարարտացրեց Քասախը մեր ցանքը,— ձեռքն արևահար դեմքին հով արած՝ դաշտին նայում և ասում էր քեռի Ավագը։ Ի՞նչ մտքով եկավ, ի՞նչ ստացվեց...

— Հա՛, թալանի եկավ, բայց իր ունեցածն էլ մեզ թողեց,— հաստատեց կողքին կանգնած մարդը։

Իսկապես, ի՞նչ տիղմ էր սարերից բերել Քասախը, ի՞նչ արգավանդ տիղմ...

Հեղեղը շարիք է։ Բայց հզոր տեխնիկայով զինված մարդը այդ շարիքը վերածեց բարիքի։

Դրանից էլ գոհ էին ցեխոտ ու դաղրած հողագործները և դա երևում էր նրանց խաղաղված դեմքերից։ Միայն մի արածած, փոքրիկ մի թռչուն, տագնապով թևածում էր պղտոր ջրերի վրա, ճչում, ծղրտում, սրտակոտոր կանչերով նետվում դեպի առափնյա այն թուփը, որին հեղեղն իր մեջ էր առել և ուժգին սասանելով՝ սպառնում էր հիմքից պոկել ու տանել իր հետ։

Մարդկանց ուշադրությունը կենտրոնացավ այդ թռչնակի վրա։ Ի՞նչ է ուզում, ինչո՞ւ է ողբում գարնանային այս պայծառ օրը։

— Տղե՛րք, թփի վրա բուն կունենա, աչքներդ սուր է, մի լավ նայեցեք,— ձայն տվեց քեռի Ավագը և ջրվորի նման փոխքերը վեր քաշելով և ձեռքի բահին հենվելով՝ դնաց դեպի թուփը։ Ջուրը ծնկներին հասավ, կանգ առավ։ Թռչնիկը պտտվում էր թփի շուրջը և իր թռչնային ձայնով կարծես օգնություն էր աղերսում մարդկանցից։

— Դե լա՛վ, քիչ հետո գետը կիջնի, ինչ ես ձենդ գլուխդ ցցել,— չգիտես թռչունի՞ն, թե իրեն հանդստացնելու համար ասում էր քեռի Ավագն ու հետն էլ մտածում. «Այ մի նավակ լինե՞ր։ Ջուրն, իհարկե, կիջներ, բայց հեղեղն իր հետ ինչ ասես, որ չէր բերում. է՛լ ճյուղեր, է՛լ փայտի կտորներ, է՛լ խոիլ ու արմատ։

Գալիս էին դրանք ջրի բաշին թառած, սրընթաց անցնում թփի մոտով. դե, բնի տերն ինչպե՞ս հանգիստ մնար։ Ահա մի կտոր տախտակ զարնվեց թփին ու դեմ առավ նրան, բարակ ճյուղերը ցնցվեցին, կռացան, նորից շտկվեցին։ Ինչ իմանա, գուցե այդ հարվածից ձագերը բնից դուրս թափվեցին ու գոհ փնացին հեղեղին։

www.a-pdf.com

Մինչ թռչնակը տագնապահար պտտվում էր թփի վրա, մի ճերմակ արագիլ անվրդով կանգնել էր նոսր ջրով ծածկված հողում ու խաղաղ հայացքով իր շրջակայքն էր դիտում։ Սովոր է մարդկանց ներկայությանը. երբ նրանք վար ու ցանք են կատարում դաշտում, ինքը իր կարմիր ու երկար ոտքերով շրջում է նրանց հետևից։ Վարժվել է անգամ մեքենաների աղմուկին. երբ տրակտորները լաս առ լաս շուռ են տալիս շագանակագույն հողը, նրանց հետևից վազող սերմնագռավների հետ նա ևս ճաշակում է հողի ընդերքից դուրս հանված թրթուրները։ Վազուց է բարեկամ նա մարդուն, և հիմա երբեմն վստահ, երբեմն վարանոտ քայլում է դեպի գետը և կանգ առնելով՝ ականջ է դնում թռչնակի կանչերին։ Մեկ ոտքը բարձրացրեց, ուշադրությունը լարեց և կարծես մի բան գլխի ընկնելով՝ ծանր-ծանր օդ բարձրացավ։ Մի զույգ կարմիր, երկար ոտքեր կախվեցին բազմության վրա, և արագիլն շտապեց դեպի ջրի հորձանքներից երերող թուփը։ Քեռի Ավագը ետ-ետ գնաց և ձեռքով նշան արավ, որ թփին՝ ոչ ոք չմոտենա։

— Օգնության է եկել, չխրտնեցնե՛ք,— կարգադրեց նա։

— Ի՞նչ օգնություն, հիմի ճուտերին անուշ կանի։

— Իսկապես, կուտի՞ որ։

— Մի տեսեք, ծիտը իջավ թփին, երևի իր բնի տեղն է ցույց տալիս։

Այսպես մարդիկ դատողություններ էին անում. բոլորի ուշադրությունն էլ թուփն էր, տագնապահար մայրը և վերևում դանդաղ պտույտներ գործող ահագին թռչունը։ Արագիլը գլուխը կախած՝ ուշադիր զննում էր թուփը։ Վերջապես նկատեց իր փնտրածը, ցած խոյացավ, կանաչ սաղարթների միջից կտուցով մի գորշ բույն հանեց և ծանր-ծանր թևածեց դեպի մոտակա այգիները։ Մայր թռչնակը ճչալով հետևում էր նրան։

Ով ջահել էր կամ ոտքից թեթև՝ վազեց այգիների կողմը, նրանց հետևից էլ՝ ծեր Ավագը՝ թաց բահն ուսին։

Հասավ այգին, կանգ առավ, լայն ժպտաց և նրա դեմքի կնճիռները հարթվեցին. դեղձենու կարմիր ծաղիկների մեջ խնամքով դրված էր թռչնի բույնը և աղվամազով պատած մի խումբ թռչնիկներ նրա միջից դեղին կտուցները դուրս մեկնած՝ ուտելիք էին խնդրում իրենց մորից։ Քիչ առաջ մեծ սարսափ ապրած թռչնակը խաղաղվել ու կտուցով հարդարում էր իր

ձագերի թրջված թևերը, և մարդիկ գոհ էին, որ երջանիկ է այդ փոքրիկ մայրը։

Իսկ Արագի՞լը։ Քիչ հեռու, ծաղկած ծիրանիների տակ արժանապատվությամբ քայլում է ետ ու առաջ։

— Է՛ս էր մեր վիճակը, երբ դուք չկայիք,— ջահելներին շուրջը հավաքած խոսում էր քեռի Ավագը։— Թշնամին հեղեղել էր մեր երկիրը էս հեղեղի նման, ու մեր բունը էն ճնճղուկի բնի նման կպոկեր-կտաներ, եթե էն բարի, էն փրկարար արագիլի պես վրա չհասներ ոտաը ու մեզ չաղատեր հեղեղի բերանից...

1953

ՄԵՂՎԻ ՊԱՀԱԿՆԵՐԸ

Մայիսի մի արև օր ես նայում էի մեղուների աշխատանքը և լսում գիտնական մեղվաբույծի բացատրություններն իր նոր մեթոդի մասին, այն մասին, թե ինչպես նա մեղվի յուրաքանչյուր ընտանիքից 3—4 հարյուր կիլոգրամ մեղր է ստանում։ Այդ, իհարկե, շշմեցուցիչ նորություն է մեղվաբուծության մեջ, բայց ես այդ օրն այնպիսի խելացի արարքներ նկատեցի այդ միջատների կողմից, որ ցրված էի լսում գիտնականին։

Ահա փեթակի մուտքի մոտ երկու մեղու իրենց առաջին ոտքերին հենված, հետույքները ցցել են օդում ու իրենց մահացու խայթը սվինի պես պատրաստ պահած՝ դղզում են սպառնագին։

Փեթակի պահակներն են։ Ես տեսել եմ վայրի ոչխարի, քարայծի, վայրի սագերի ու կռունկների պահակներին, բայց նրանցից ոչ մեկն այսքան զգոն, այսքան լարված վիճակում չէ։ Պատկերացրեք, դաշտից մեղրով ու ծաղկափոշով ծանրաբեռնված տուն են վերադառնում յուրաքանչյուր րոպեի ընթացքում մի քանի հարյուր մեղու, և այդ պահակները բոլորին էլ ստուգում են մեկ-մեկ, ապա թույլ տալիս ներս մտնելու։ Բայց ինչպե՞ս են ճանաչում յուրայիններին կամ օտարներին։

Հոտո՛վ։ Այն առանձնահատուկ հոտով, որ ունեն յուրաքանչյուր ընտանիքի պատկանող մեղուները։ Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի նրբին հոտառություն պիտի ունենալ, մի ր-

www.a-pdf.com

պեում մի քանի հարյուր՝ արտաքնապես բոլորովին իրար նման միջատներ ստուգելու համար...

Եվ վա՜յ նրան, ով իրենց հոտը չի ունենա և եկած կլինի կողոպտելու այդ միջատների հանրային սեփականությունը...

Բայց ահա գտնվեց այդպիսի մեկը, որ գերադասում է հարևան փեթակից պատրաստի մեղր գողանալ, քան վտանգավոր ճամփորդություն կատարել դեպի հեռավոր դաշտերը մեղր փնտրելու։ Հավանաբար այդ միջատը հանդից մեղր բերելիս հազիվ ազատվել է «մեղվակեր» կոչվող թռչունի որկորից կամ ահաբեկվել է փոթորկից, կամ անձրևի կաթիլն է հարվածել նրան, մի հարված, որ նրա համար ավելի ուժգին է, քան եթե մարդ մայթով անցնելիս չորրորդ հարկից դույլով ջուր թափեն գլխին։

Ահա այդպիսի ահաբեկվածի մեկը վախենում է հանդ գնալ, բայց ընտանիքում ստիպում են աշխատել, որովհետև այնտեղ գործում է «ով աշխատի, նա կուտի» բնաղդը։ Գուցե նրան չեն էլ ստիպում աշխատել, բայց մեղր ու ծաղկեփոշի ճաբել-բերելը նրա հիմնական բնաղդն է։

Հիմի պահակը նրան բռնել է ետևի ոտքից՝ իր շտեմարանի մուտքի մոտ, և նա այժմ ձգտում է պոկ գալ փախչել։ Վրա հասած մյուս պահակը ևս բռնեց գողի թևից։ Մուտքի մոտ սկսվեց քաշքշուկ, որից մի պահ խանգարվեց մեղուների ել ու մուտը։ Հանդից եկողները կուտակվեցին արկանոցի մոտ և հավանաբար իրենց լեզվով սկսեցին գոռգոռալ պահակների վրա, թե՝

— Ճանապարհ տվեք, ի՞նչ եք մուտքը փակել...

Նրանք շատ էին շտապում, հարկավոր էր բեռը շտապ հանձնել մեղրն ընդունողներին և շտապ վերադառնալ ծաղկած փշատենու մոտ, քանի արևը դեռ չէր մտել ամպի տակ։

Եվ ահա նրանց աշխատանքը չխանգարելու համար պահակները շտապով քարշ տվին գողին և իրենք էլ նրա հետ միասին գլորվեցին կանաչների մեջ։

Պահակներից մեկը նորից վերադարձավ մուտքի մոտ կարգ պահպանելու, և ես տրամադիր եմ կարծելու, թե գնալուց առաջ իր ընկերոջը պատվիրեց.

— Էդ սրիկայի դատաստանը տես ու շուտ եկ...

Բայց «սրիկան» մի հասակավոր, խոշոր և ուժեղ մեղու էր։ Խոտերի վրա նա քարշ էր տալիս պահակին, որը տասն օրա-

կան, դեռևս չհասունացած մի ձագ էր։ Ես ուշադիր հետևում էի, թե ինչ կլինի։

Ինձ խիստ զարմացրեց այն հանգամանքը, որ այդ անհավասար մենամարտի ընթացքում գողը շարունակ պաշտպանվում էր, իսկ փոքրիկ, վտիտ մարմնով պահակը տանտիրոջ իրավունքով ծեծում էր նրան,— բարձրանում էր շալակն ու անխնա հարվածում գլխին։ Իսկ գողը, որ ուժեղ էր նրանից և կարող էր խայթել ու անմիջապես սպանել նրան, մեղավորի պես անմռունչ տանում էր այդ թույլ ձագի հարվածները, որի աշխատանքը կողոպտելու էր եկել ինքը, ու միայն մի ձգտում ուներ,— գոգության վայրում բռնված արարածի բնական ձրգտում,— մի կերպ պոկ գալ և ճողոպրել արդար դատաստանից։

Եվ նա իր խայթն ու իր գերազանց ուժը գործադրելու ոչ մի փորձ չարավ։ Բավական ժամանակ հարվածներ ուտելուց հետո ազատվեց զայրացած պահակից ու փախավ, առանց այդ թույլ արարածի հետ կռվի բռնվելու։

Իսկական գողի հոգեբանություն...

1947

ԻՄ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Շատ էի հոգնած. ամբողջ օրը վազել էի կաքավների ետևից։ Ասի՝ ծայրի շվաքում մի քիչ հանգստանամ, հետո կշարունակեմ որսը։ Թեք ընկա մի սալ քարի, պայուսակս դրի գլխիս տակ և... աչքերս կուլ գնացին։

Շունս պպզել և ուշադիր նայում է դեմքիս։ Գիտեմ, ասում է՝ «Թո՛ւհ, էլի քնեց...»։ Նա էլ գիտի, որ հայտնի քնող եմ... Մոր կողքին պպզել է ձագը. սրան առաջին անգամ եմ որսի բերում ու հիմա խիղճս տանջում է, շատ է հոգնել փոքրիկը։ Ասենք, ես հիմա ոչ նրան եմ տեսնում, ոչ մորը, աչքերս խփած հանգիստ լողում եմ դեպի երազների աշխարհը. գիտեմ, շներս չեն թողնի, որ կաքավներս ու հրացանս գողանան։

Լողացի՜, լողացի՜ ու կուլ գնացի անուշ քնին։

Շատ էի քնել թե քիչ՝ չգիտեմ, մեկ էլ հաչոց եմ լսում ու մեկը կարծես շշնջում է ականջիս. «Վե՜ր կաց, Արմենա՜կ, վե՜ր կաց...»։

www.a-pdf.com

Շարժվեցի, ձգվեցի, արթնանալու փորձ արի, բայց վեր կենալու փոխարեն շուռ եկա մյուս կողքիս ու շարունակեցի քնել որսորդի քաղցր քնով։ Իսկ շներս շարունակում են հաչել ու նույն ձայնը կրկնում է ականջիս. «Արմենա՜կ, վե՜ր կաց, վըտանգի մեջ ես...»։

Է, հոգնած որսո՜րդ, էն էլ «մողամեր» շվաք, ինչպես լոռեցիք են ասում, իսկի վե՞ր կկենամ որ...

Հաչոցը սաստկանում է, իսկ ես համ լսում եմ, համ քնում։ Բայց երբ թուլան կլանչեց, վեր թռա. ուրեմն խփող եղավ կենդանուն։

Նստեցի, աչքերս տրորեցի՝ մարդ չկա, ոչ էլ գազան, էս ինչի՞ վրա են էսպես եռանդով հաչում մայր ու զավակ։ Ուշադիր նայեմ տեսնեմ ի՞նչ... ինձանից ընդամենը երկու քայլ հեռու, գետնին օղակներ են դարսված ու էդ օղակների միջից մի տափակ գլուխ վեր տնկված ֆշշացնում է մեկ սրա՜, մեկ նրա վրա։ Շներս էլ երկուսով շղթա են կազմել և վիշապից պաշտպանում են ինձ։

Օձի տեսքից, զայրույթից կարմրած նրա աչքերից արյունս սառավ երակներիս մեջ։ Էնպես սառավ, որ ձեռքս փայտացել է, չի գնում դեպի հրացանս...

Ուրեմն էդ հարամին եկել է հոգիս առնելո՞ւ։ Ասենք թե շներս մոտս չլինեի՜ն, ի՞նչ էր լինելու իմ ճարը։ Երևի էլ երբեք չզարթնեի...

Մինչ էս սարսափելի մտքերով եմ տարված, շներս վրա են քշում օձին, մեկը կոշտ ձայնով, մյուս բարակ ճվճվոցով սպառնում նրան։ Բայց հենց սողունը իր կոպալ գլուխը առաջ է նետում որ խայթի, ետ են ցատկում։

Թուլան զգաց, որ արթնացել եմ, ետ նայեց և հրճվալից հայացք գցեց ինձ, թե՝ «Մի տես ինչ եմ անում, է՜...»։

Կյանքում առաջին անգամ էր «կռիվ տալիս» տիրոջ համար, դե, իհարկե, կուրախանար։ Բայց նրա տեսքը ինձ տարօրինակ թվաց. դունչը ուռած էր...

«Խայթել է սրիկան... վա՜յ, թուլաս կորավ...»։ Էդ մտքից արյունս եռաց, փայտացած ձեռքս շարժվեց, հրացանը վերցրի, վեր թռա տեղիցս ու շների արանքով նշան բռնեցի էն զազրելի տափակ գլխին...

Երբ սողունը արյունաթաթախ գալարվում էր, շունս առաջինը դադարեցրեց աղմուկը և շուռ գալով, իր արտահայտիչ հայաց-

www.a-pdf.com

քով նախատեց ինձ. «Գոնե սա խրա՞տ կլինի քեզ, որ էլ հանդում չմրափես...»։

Ես չվիրավորվեցի նրա էդ կոպիտ հանդիմանությունից. մայր էր, է՛, մղկտալով տեսնում էր. թե ինչպես արագ ուռչում է իր զավակի դունչը...

— Հիմի դրա ճարն էլ կանենք, կա՛ց,— հանգստացրի ես տագնապահար մորը և արագ արի այն, ինչ պիտի անի որսորդն այդպիսի դեպքերում. ուռածը կտրեցի մի քանի տեղից, մզեցի-քամեցի թույն ու արյուն և թուղթ վառելով դաղեցի վերքը։

— Պրծա՛վ, էլ չվախենա՛ս,— հայտարարեցի ես, գրկիցս բաց թողնելով ցավից ճվճվացող ձագին։

Մայրը հասկացավ, ձեռքս լիզեց, սիրալիր նայեց ու սկսեց պոչով ավլել գետինը. իր խելքով շնորհակալություն էր հայտնում։

Իսկ ես բռնել եմ սողունի պոչից, վեր բարձրացրել, նայում եմ նրա ահռելի հասակին, թույն ու մահ արտադրող նրա կեռ ատամներին և ահով նորից ու նորից մտածում եմ.

«Բա որ իմ հավատարիմ ընկերները չլինեին, ի՞նչ էր լինելու իմ ճարը...»։

1956

ՆԵՐՈՆԻ ՄԱՀԸ

Անունով էր միայն Ներոն, իսկ բնավորությամբ ճիշտ հակառակն էր՝ միշտ սիրալիր, միշտ բարի և պատրաստակամ։ Տասնհինգ տարի տիրոջը հավատարիմ ծառայելուց հետո, ուժասպառ եղավ, մազը խամրեց, աչքերը պղտորվեցին։

Երբ տերը հրացանը ձեռքին տնից դուրս էր գալիս որսի մեկնելու, կենդանուն այլևս չէր համակում որսորդական տենդը։ Իր անկյունից նա միայն հայացքով հետևում էր տիրոջը մինչև մեքենա նստելը և նորից ընկնում այն մռայլ անտարբերության մեջ, որ հատուկ է զառամյալ արարածներին։

Վերջապես լուր առա, որ Ներոնը մերձիմահ է։ Տերը՝ խաչիկ Աբրահամյանը, երկարատև գործուղման մեջ էր, ուստի Ներոնի տանջանքներին կինն էր ներկա և թոռը՝ Գագիկը։ Նրանք

www.a-pdf.com

տխուր և գլխահակ նայում էին միջանցքում մեկնված կենդանուն։

— Հինգ օր է տանջվում է, հոգին չի տալիս,— վշտահար գանգատվում էր որսորդի կինը։— Աչքը շարունակ ճամփին է...

— Խաչիկը ե՞րբ է շրջանից վերադառնալու։

— Դեռ մի շաբաթ էլ կա... Էսպես, մահվան հետ կռիվ է տալիս. մինչև որ տերը գա... Շարունակ աչքը շեմքին է, տե՞ս...

Տիրոջ կարոտը...

Այն ժամանակ ես խորհուրդ տվի տիրոջ որսորդական հագուստը շան առաջ դնել։

— Թող տեսնի, կարոտն առնի, հանգստանա...

Դուրս բերին հրացանը, փամփուշտակալը և արյունը վրան չորացած գորշ բլուզը։

Կենդանին ճիգ գործադրեց, վեր բարձրացավ, հոտոտեց ծանոթ, հարազատ իրերը, նրանցից իր տիրոջ հոտն առավ և արցունքները գլոր-գլոր թափվեցին նրա խամրող աչքերից։

Ապա մեկնվեց, խոր հոգոց հանեց և հավիտենապես փակեց թաց աչքերը։

Արդյոք ի՞նչը հիշեց Ներոնը այս կյանքին հրաժեշտ տալիս։ Իր անցած-գնացած երիտասարդությո՞ւնը, թե՞ մեր անմման լեռները, որոնց ծերպերում հետապնդում էր որսին...

1956

ԱՐԾԻՎՆԵՐԸ

Վերադառնում էինք որսից։ Ժայռերի սուր կատարներին անշարժ նստած արծիվները մռայլ հայացքով ճանապարհ էին դնում մեզ։

— Ես դրանց փետուրները քամուն պիտի տամ, գիտե՞ս ինչքան վայրի ոգ են ուտում,— ասաց ընկերս, հրացանը ուսից իջեցնելով։

Իրոք, գայլերից է՛լ ավելի արծիվներն են վնաս տալիս մատղաշ քարայծերին։ Այսպես մռայլ, մտախոհ ու համբերատար կանգնած իրենց բարձր դիրքին, նրանք հսկում են շրջապատը։ Եվ վա՜յ այն ուլին, որ առանց մոր դուրս եկավ քարանձավից կամ փախուստի ժամանակ հետ մնաց հոտից...

www.a-pdf.com

Այդ է պատճառը, որ ես առանց խղճի խայթի ասացի.

— Կրակի՛ր։

Մինասը շոքեց և հրացանի փողը ուղղեց մեր դիմացի բլրի գագաթին, պահակների նման դիք կանգնած զույգ արծիվներին։

Կրակոցին հետևեց թռչուններից մեկի թպրտոցը, իսկ մյուսն առանց շտապելու թափահարեց լայն թևերը։

Մենք բարձրացանք բլուրը և տեսանք ճերմակապոչ գիշակերին, ահագին թուխ թևերը փռած, արյունոտ կտուցը խոտերին քսելիս։

— Էլի ուլ կուտե՞ս... դե հիմի՛ կեր,— սիրտը հովացած բացականչեց ընկերս։ Բայց երբ նայեցի աչքերին, ափսոսանք կարդացի նրանց մեջ։

Արծիվը գետ շնչում էր ու ցամաք նետված ձկան նման բերանը բաց ու խուփ անում. կարծես խեղդվում էր օդի պակասությունից։

— Գնա՛նք,— ասաց ընկերս, չգիտես ումից դժգոհ։ Ապա ձայնը բարձրացնելով ավելացրեց.

— Մարդ դրան կխղճա՞...

Երևի խղճալուց էր ասում. ծանր էր տեսնել այդ փառահեղ թռչունի մահը...

Մենք լուռ իջանք ձորը։

Հանկարծ մեր գլխի վերև շափշափյուն լսվեց, և մի լայն ստվեր սուրաց բլուրն ի վեր։ Վեր նայեցինք. արծվի ընկերն էր վերադառնում։ Նա պտույտներ գործեց և իջավ վիրավորի կողքին։

— Հիմի ընկերոջ լեշը կուտի,— ասաց Մինասը շարախինդ տոնով։

Բայց նա սխալվեց. արծիվը աղիողորմ ծվոցներով պտտվում էր ընկերոջ դիակի շուրջը, կտուցով վեր էր բարձրացնում նրան, փորձում ոտքի կանգնեցնել ու թռցնել իր հետ...

Մենք քարացած նայում էինք, իսկ թռչունը շարունակում էր ողբը։

— Դե լա՛վ, ինչ քնքշությունների ժամանակ է, գնա՛նք,— խրոխտ ասաց իմ ընկերը, և ես նորից զգացի, որ իր խղճի ձայնն է լռեցնում...

1945

www.a-pdf.com

ԿԵՆԴԱՆԻ ՍԱՎԱՌՆԱԿՆԵՐ

Նոյեմբերին հանգստանում էի Ղրիմի ծովափնյա ամառանոցներից մեկում։ Թեև այստեղ, ծովափին, դեռ տաք էր, բայց հյուսիսից եկող թռչունների երամները բերում էին վերահաս ձմռան բոթը։ Ձմեռը իր սառնամանիքներով, իր ցրտաշունչ քամիներով ու բորաններով Սառուցյալ օվկիանոսի ափերից լայն ճակատով իջնում էր դեպի ցած, դեպի ռուսական տափարակները։ Եվ նրանից հալածված դեպի հարավ էին չվում անթիվ-անհամար թռչուններ։

Նրանցից ուժեղները՝ կռունկները, սագերը, արագիլները, տեղ հասան բոլորից շուտ։ Սև ծովի ափը նրանց գլխավոր կայարաններից է. այդտեղ նրանք վերականգնում են իրենց կորցրած ուժերը, հանգստանում են, լավ սնվում, որպեսզի լայնքին կտրեն-անցնեն Սև ծովը, ապա ձմռան մոտենալու հետ չվեն ավելի ու ավելի հարավ՝ մինչև Հնդկական օվկիանոսի տաք ափերը, մինչև Եգիպտոս կամ Արաբիայի հարավային եզրերը։

Իջնում եմ ծովափ, բնակելի վայրերից հեռանում ու ամայի, ժայռոտ ափերին սագերի պահակներին եմ պատահում, որոնք որևէ քարի կանգնած՝ արթուն հսկում են շրջակայքին։

— Ո՞վ է այստեղի ամենալավ որսորդը,— հարցրեցի տեղական ռուսներից մեկին.— սագերի երամներն ինձ հանգիստ չէին տալիս։

— Ամենահայտնի՞ն... Կուզման է։

— Ծանոթացրեք այդ Կուզմայի հետ,— խնդրեցի ես։

Ռուսը ինձ տարավ ծովափնյա խուտորի կոլտնտեսության կալերը։ Որսորդական մի փողանի հնացած հրացանն ուսին, երկար հասակով, թուխ դեմքով, հայկական քթով մի մարդ այնտեղ հսկում էր հարդի թրջված դեզերը։

— Ահա Կուզման,— ներկայացրեց ինձ։— Ձկնորսը ձկնորսին հեռվից կնկատի, սա էլ է որսորդ երևում, Կուզմա՛, տես ի՞նչ է ուզում։

Ասաց ու գնաց։

— Այդ ինչպե՞ս է, որ ձեր անունը Կուզմա է,— հետաքրքրվեցի ես։

— Իմ անունը Հայկազ է, ռուսները Կուզմա կկանչեն,— սիրալիր բացատրեց մարդը։

Որսորդները շատ անմիջական մարդիկ են, և մի քանի ր-

www.a-pdf.com

պե անց մենք մեջքներս դեզին հենած, հին մտերիմների նման զրուցում էինք։

Անշուշտ մեզ իրար անմիջապես մտերմացնողը որսն ու որսորդությունն է, որի շուրջը և տեղի էր ունենում մեր զրույցը։

Հայկազը երեսուն տարի առաջ գաղթել-եկել է ծովի հանգիպակաց ափից, իր արտահայտությամբ «զուլումի աշխարհից»։ Տրապիզոնի գյուղերում նա ծխախոտ է մշակել և հայթհայթել տարվա պարենը, մինչև որ սուլթանի ոհմակները ավերեցին նրա բույնը։ Այժմ իրենց խուտորի ծխախոտագործական բրիգադի ղեկավարն է, իսկ ուշ աշնանից պահակություն է անում, որի ընթացքում և բավարարում է իր որսորդական կրքերը. խրփում է կոլխոզի հավանոցին հյուր եկող աղվեսներին, թռչուններ է որսում՝ նրանց չվի ժամանակ, իսկ ծովում ձկնորսական կողովներ ունի դրած։

Ես ընկերացա «Կուզմային», ամեն օր նրա հետ որսի էի գնում և նոր իմաստ ստացավ իմ կյանքն այդ առողջարանում։

Կռունկների, սագերի, արագիլների, թզուկ արոսների ու հսկա արոսների երամները գալիս էին և խռնվում Ղրիմից արևելք, ծովափի երկարությամբ՝ մինչև Օդեսայի «լիմանները»։

Եվ ինձ ու «Կուզմայի» նման որսորդները ծովափնյա քարերի արանքներով կուզեկուզ կամ փորսող տալով մոտենում էին երամներին ու կրակ բացում սարսափահար թռչունների վրա՝ կոտորակացան հրացաններից։

Թռչունների չվի ժամանակ անթիվ որսորդներ են վխտում այդ ափերին։

Ու այդտեղ երամները երկու շաբաթվա մեջ ավելի զոհեր են տալիս, քան Հնդկական ու Սառուցյալ օվկիանոսների ափերին անց կացրած ութ-ինը ամիսներին և տաս հազար կիլոմետրանոց իրենց ճանապարհի տասնյակ կայարաններում։

Իմ ուշադրությունը գրավեց մի երևույթ. չնայած ամեն քարի, ամեն թփի տակից մահացու արճիճ է տեղում իրենց վրա, վայրի սագերը ահա երկու շաբաթ է այդտեղ են և փորձ չեն անում ծովն անցել ավելի ապահով վայրեր։

— Իրենց փոքրիկ բարեկամներին կսպասեն,—գիտակ մարդու տոնով բացատրեց որսորդ Հայկազը։—Կսպասեն մանր, անզոր թռչուններին, որ առնեն իրենց մեջքին և ծովն անցուցեն...

Որսորդ Հայկազի կարծիքով կան մանր թռչուններ, որոնց ուժերից վեր է կտրել-անցնել ծովը։ Եվ ահա այդ անճար թռչ-

www.a-pdf.com

չունների համար վայրի սագերը ձրի սավառնակի դեր են կատարում։

— Բայց դուք տեսե՞լ եք ձեր աչքով... Այդ անկարելի բան է,— խոսեցրի ես։

— Այդ հեծնելը ոչ ոք չի տեսել։ Նրանք երամները կկազմեն ու կթռչեն լուսադեմին, դեռ մութը լուսից չբաժանված։ Բայց փորձված է, որ հենց ճնճղուկները տեղ հասան, սագերը կշվեն։ Այսօր տեսա՞ք մանր թռչունների երամները։ Այս գիշերվանից կսկսվի նրանց փոխադրությունը ծովի վրայեն...

Այդ բացատրությունը ինձ որսորդական սովորական ցնորք թվաց, մեզ՝ որսորդներիս հատուկ պարծենկոտություն, որով ուզում ենք ամենաանսովոր երևույթներ գտնել բնության մեջ ու նրանց բացատրությունը միայն մեզ վերագրել։

Բայց հաջորդ օրվանից վայրի սագերը իրոք սկսեցին շարունակել իրենց ընդհատված ուղևորությունը։

Ես գնացի գտա որսորդ «Կուզմային» և հետաքրքրությունից այրվելով, պահանջեցի հիմնավորել իր երեկվա ենթադրությունները.— իրոք մեծ թռչունները ահագին զոհեր տալով սպասո՞ւմ են թույլերին, որպեսզի նրանց փոխադրեն իրենց մեջքերի վրա...

— Այո՛, աչքովս եմ տեսած... Տրապիզոնին մոտ, երբ Ղրիմեն եկած սագերու երամը իջավ, նրանց վրայեն մանր թռչունների մի ամպ վեր բարձրացավ... Ուրեմն սագերու մեջքերուն վրա եկած էին։

Ապա քիչ լռելուց հետո անվանի որսորդը մտածկոտ ավելացրեց.

— Զարմանալու չէ, ինչպես մարդիկ, այնպես էլ թռչունները իրար կօգնեն...

Ես կենդանիների փոխադարձ օգնության մասին գիտեի։ Երբ ես տավարած էի, տեսնում էի, թե ինչպես մեր գոմեշը պոչը տնկում էր, խելոք կանգնում ու իր մեջքը տրամադրում ծեր ագռավին։ Նա այնտեղ իր կտուցով ինչ-որ պեղումներ էր կատարում և ես հասկացա այդ ծեր ագռավի և մեր գոմեշի բարեկամության «տնտեսական աստառը», գոմեշը նրան սնում էր իր փափլիկ միջատներով ու տզերով, իսկ ագռավը սնվելով հանդերձ, դրանով իսկ ակամայից «ախտահանում-մաքրում» էր գոմեշին։ Ամեն գարնանամտի ես տեսնում էի, թե ինչպես այդ նույն ագռավը իր կտուցով ձգում-քաշում է ոչխարների մեջքի բուրդը, իսկ սրանք ոչ միայն չէին բողոքում, որ գզբգ-

www.a-pdf.com

վում է իրենց «մուշտակը», այլև սիրով թույլ էին տալիս, որ ագռավները ավերածություններ կատարեն իրենց մեջքին։ Այդ բարեկամությունն էլ իմաստ ունի, բուրդն ագռավին հարկավոր է իր ձվերին ու ապագա ձագերին փափուկ անկողին պատրաստելու համար, իսկ ոչխարը գարնանային արևոտ օրերին նեզվում է իր ձմռան տաք մուշտակից և ուզում է ազատվել նրանից։ Ու այդ նպատակով հաճախ անցնում է թփուտներով և իր բուրդը թողնում փշերի բերանում։

Որ կարճաթև, փոքրիկ, անզոր թռչունները շտապում են կտրել-անցնել Ռուսական հարթությունը՝ սագերի երամներին հասնելու. այդ էլ հասկանալի է։ Ուշացած ճամփորդների նման նրանք դեպի «սավառնակներն» են շտապում։ Իսկ այդ «սավառնակներն» ի՞նչ շահ ունեն, որ մնում են «ռումբերի տարափի տակ» և իրենց փրկելու ոչ մի փորձ չեն անում։

Այդ հանելուկը ինձ երկար ժամանակ տանջում էր։ Ես այնքան իդեալիստ չէի, որ կարծեի, թե այդ մեծ զոհողությունը վայրի սագերն անում են ելնելով իրենց մեծահոգությունից, ընկերասիրությունից, այլ տեսակների երամներին օգնելու բնազդից։ Այդպիսի բնազդներ իրոք կան կենդանիների մեջ, սակայն դրանք միշտ խարխված են լինում փոխադարձ շահի վրա։

Տարիներ անց ինձ տանջող այդ հանգույցը լուծվեց մի սովորական դիպվածով։ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, ամպամած ու շատ ցուրտ մի ձմեռային օր ետ չեկավ մեր սավառնակներից մեկը, որ գնացել էր թշնամու՝ Կրասնոդարի երկբամասի կայարաններից մեկը ռմբակոծելու։ Հաջորդ օրը լուր ստացանք, որ սավառնակի թևերը սառցակալել են և նա հարկադրված վայրէջք է կատարել մեզնից բավական հեռու, մի ամայի դաշտում...

Թևերը սառցակալել են... Եվ ես անմիջապես հիշեցի «Կուզմայի սագերին»։ Մի՞թե ծովի ամպամած ու խոնավ երկնքով անցնելիս չեն սառցակալում նրանց թևերը։ Իսկ եթե թևերը սառցակալում են, հապա որքա՞ն է մրսում այդ թռչունների մեջքը։ Մեջքը թռչունի ամենախոցելի տեղն է։ Նրա հետույքը ճարպոտ է, կուրծքը զրահավորված է երկու գունդ ամուր մկաններով և նավականման կրծքոսկրով։ Այդ տեղերից վտանգ չկա թռչերին։ Վտանգը թիկունքից է։ Հենց կրակելիս էլ մենք աշխատում ենք թիկունքից խփել թռչունին, որովհետև թիկունքը զուրկ է ասածս «զրահներից» և կոտորակը հեշտությամբ խո-

www.a-pdf.com

ցում է թոքերը հենց թիկունքից։ Մենք, մարդիկս, նույնպես ամենից շատ ու ամենից վտանգավոր կերպով թիկունքից ենք մրսում և թոքերի բորբոքում ստանում։ Եվ ինչ զարմանք, որ սագերը իրենց մեջքին այլ մանր փետրավորներ են կրում. չէ՞ որ սրանք այդ երկար ճամփորդության ընթացքում և՛ իրենց փոքրիկ կտուցներով ախտահանում են իրենց բարերարների մեջքը զանազան միջատներից, ըստ որում ոչ թե երախտագիտության զգացումներից դրդված, այլ իրենց քաղցը հագեցնելու մղումից, և՛ որ գլխավորն է՝ թաղվելով սագերի փետուրների մեջ, իրենց տաք մարմնով ջերմացնում են նրանց թիկունքը և փրկում են նրանց «թոքերի բորբոքումից»։

Ես համոզված եմ, որ անվանի որսորդ «Կուզման» հավանություն կտա իմ այս բացատրությանը։

ՁԱՎԱԿՆԵՐԸ

Ներացել էր Երևանի կենդանաբանական այգու Գորշ արջը։ Նստում էր արևկող լանջին, պզտոր ու անտարբեր հայացքով նայում այգու հաճախորդներին կամ ծույլ-ծույլ մեկնվում էր ու ննջում։ Նրա մոտ առավոտից մինչև երեկո խաղում, իրար գզվռտում էին նրա չարաճճի ձագերը՝ երկու գորշ քոթոթներ։

Տարված խաղով, նրանք երբեմն ընկնում էին իրենց հոր վրա, գլուխկոնծի տալիս նրա փորին։

Այդպիսի դեպքերում սթափվում էր «ծերունին» քնից, բայց չէր բարկանում. սիրով ու ներողամտությամբ նայում էր իր անխոհեմ քոթոթներին. երևի իր ջահելությունն էր հիշում, իր չարաճճիությունները, երբ սիրասուն մոր հետ շրջում էր խոսրովի անտառի կաղնիների տակ...

Նրանց մոտ ուրիշ մի արջ էլ կա. սև, խոշոր, ուժեղ, բայց չար։ Այցելուները նրան ոչինչ չեն տալիս, անցորդը ձեռքի ուտելիքը նետում է քոթոթներին կամ նրանց ծերունի հորը։ Նրա՛նք են համակրանք առաջ բերում այցելուների մեջ։

Եվ այն ուժեղ արջը խանդով ու չարությամբ է նայում, թե ինչպես իր հարևանները հափշտակում ու վայելում են մարդկանց գցած կոնֆետները։

Քանի քոթոթները փոքր էին, նա վրա էր հասնում և խլում քաղցրավենիքը նրանցից էլ, նրանց ծեր հորից էլ։ Խժռում էր

www.apdf.com

իր հափշտակածը հզորի իրավունքով, իսկ քոթոթները ահից մի կողմ քաշված՝ խեղճ-խեղճ նայում էին՝ թուքները կուլ տալով։ Այդ պահերին նրանք հավանաբար մտածում էին. «Սպասի՛ր, ագա՛հ, թե մի կմեծանա՛նք...»։ Իսկ նրանց կողոպտված հայրը լցվում էր դառնությամբ և անիծում իր ծերությունը, որ եկավ թուլացրեց իր երկաթյա մկանները, տարավ իր եռանդն ու կրակը... Իր անզորությունն զգալով, նայում էր նա իրենից հզորին՝ թախիծով, վիրավորված։

Բայց հիմա իր քոթոթներն արդեն մեծացել են, արագ ուժեր են կուտակվում նրանց մեջ և արդեն ըմբոստանում են իրենց չար ու հզոր հարևանի դեմ։

Մի օր էլ մոր ձեռքից բռնած մի փոքրիկ աղջիկ հարցրեց.

— Մամա, հիվա՞նդ է այն արջը, տե՞ս, ինչպես է դողում։

— Ո՛չ, ծեր է, աղջիկս,— բացատրեց այգու պահակը։

— Խե՞ղճ,— ասաց երեխան, երևի իր ծերունի պապին հիշելով։— Մա՛մ, այս բուլկին տա՞մ իրեն։

Եվ աղջիկը ձեռքի թխվածքը նետեց արջի գիրկը։ Բայց այդ պահին Չար արջը վրա հասավ, հափշտակեց համեղ պատառը և դեռ մի ապտակ էլ հասցրեց իր ծեր հարևանին։

Այդ ժամանակ մի զարմանալի բան կատարվեց. ուրախ խաղացող քոթոթները իսկույն լրջացան, լցվեցին զայրույթով և լուռ համաձայնության գալով՝ հարձակվեցին իրենց հորը վիրավորողի վրա։ Մեկը թռավ շալակը և բռնեց բաշից, իսկ մյուսը ոտքից սկսեց քաշքշել։

Գազանն սկզբում զարմացավ. «Մի այս կաթնակերներին նայեցեք»,— ասում էր նրա հայացքը։ Բայց երբ տեսավ «կաթնակերները» կատակ չեն անում և իրենց փոքրիկ ժանիքներով արդեն արյուն են հանում իր մարմնից, վրդովվեց, դես-դեն շպրտեց նրանց, բայց էլ ո՞ւր, գազազած քոթոթներից էլ ազատվե՞լ կլիներ։ Վրա էին տալիս երկու կողմից, մեկը փորին էր շուլալվում, մյուսը թաթերով խփում էր գլխին, ձգձգում էին, ծվատում, ցավեցնում այնպիսի եռանդով ու կատաղությամբ, որից դժվար չէր հասկանալ, որ այդ քոթոթները վաղուց վրեժով են լցված իրենց անխիղճ ու բռնակալ հարևանի դեմ։

Աղջիկը, որ այդ կռվի պատճառն էր, երկյուղով հպվել էր մորը։

— Մամա, մի տես ինչ են անում...

— Կանեն բա՞, վիրավորել է իրենց ծերունի հորը...

Մեր արջն անհանգստացած վեր կացավ տեղից, բրթբրթացնելով մոտեցավ կովողներին և մի քնքուշ ապտակ հասցրեց իր ձագերից մեկին. երևի խրատում էր, թե՝ գործ չունեք, հեռացեք այդ սրիկայից, դա խիղճ չունի, ձեզ կվնասի։ Բայց քոթոթները այնպես էին կպել, որ պո՞կ գան. «Սպասի՛ր, ախր սա մեզ վառել է... Սպասի՛ր...»։

Տեսնելով, որ գործը բարդանում է, Զար արջը խոհեմություն ունեցավ ավարը բաց թողնել և հեռանալ իր անկյունը։

Լիզում էր վերքերն այնտեղ ու դժգոհ մոթմոթում։

«Ե՞րբ մեծացան էդ ղակոտները... Չէ՞, գործս դժվարացավ, էլ դրանցից բան խլել չի լինի...»,— հավանաբար մտածում էր նա։

Իսկ քոթոթները հաղթական վերադարձել էին իրենց ծեր հոր մոտ, մեկը նրա գիրկն էր մտել, մյուսը՝ շարաճճիորեն բարձրացել շալակը և այնտեղից հայացքավ մարտահրավեր էր ուղարկում հակառակորդին. «Հապա մի փորձիր դիպչել իմ հո՞ր...»։

Եվ այդ պահին խաղաղ ու մխիթարված էր ծերունի արջը, և սիրտը լիքը երջանկությամբ.

«Չէ՞, իզուր չեմ զավակներ մեծացրել...»։

1957

ՈՍԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՆԵՐ

Իմ Ինգա շունը հավերի թշնամին է։ Որսից վերադառնալիս հենց բակ եմ մտնում, հաշելով ընկնում է հետևներից. անասելի ճղճղոցն ու փետուրները բակը բռնում են։ Չգիտեմ ինչ պատճառով այդ կենդանին հատուկ թշնամություն ունի Զալիկ անունով մեր հավի հետ։ Կարծեմ նրանից է, որ Զալիկը մի անգամ, թխսամեր ժամանակ, վեր էր թռել, ծառս եղել ու իր սուր կտուցով հարվածել շան աչքին։

Այդ դեպքից հետո հավի հենց միայն չալ փետուրների երևալը կատաղեցնում էր Ինգային։

Կինս մոլորվել էր, բայց ես վճռել էի, որ հյուր գալիս պիտի զոհեի Զալիկին. հո մի հավի պատճառով իմ որսորդական կյանքի ընկերոջ «խաթրին» չէի կպչելու։

www.a-pdf.com

Բայց և ափսոսում էինք Զալիկին. լա՜վ հալ էր, մեծ-մեծ ձվեր էր ածում, ցեղական էր։

Մեր ընտանիքը հետզհետե երկու բանակի բաժանվեց. կինս և աղջիկս Զալիկի կողմն անցան, ես ու տղաս՝ Ինգայի։

Մեր բանակների միջև մի քանի ընդհարումներ տեղի ունեցան, ու մի օր էլ կինս ափերից դուրս եկավ, թե.

— Չի լինի՞, որ շունդ ծախես...

Արյունս գլուխս խփեց։

— Նա իմ որսորդ ընկերն է։ Մարդ իր ընկերոջը փողով կծախի՞,— վրդովված գոռացի ես։

Կինս լռեց, երևի հաշտվում էր Զալիկին զոհելու մտքի հետ։

Մի օր էլ երբ որսից վերադարձա, կինս ուրախ ասաց.

— Արտա՛, գիտե՞ս, Զալիկին թուխս եմ դրել... Հիմի՞ ինչ կասես։

— Ինչ պիտի ասեմ, թխսամորը հա չե՞նք մորթելու։

Սիրուս թեթևացավ. է՛հ, գոնե քսանմեկ օր ազատ կլինենք քնդհարումից։

Վերջին ժամանակներն Ինգան էլ էր ծանրացել, այլևս այն եռանդով չէր հաբձակվում բակի փետրավորների վրա. նա ևս պատրաստվում էր մայր դառնալու։

Իմ ու կնոջս միջև տեղի ունեցող վեճերը միաժամանակ դադարեցին։ Թող ձագեր հանեն, տեսնենք վերջը ոնց կլինի։

Զալիկին թուխս էին գրել շան աչքից հեռու՝ նախասենյակում, փայտե հին թախտի տակ։

Ահից Ինգային նախասենյակ չէինք թողնում, նա գիշերում էր բակի մի անկյունի իր բնում։

Մարտի վերջերին էր, մի գիշեր էլ անակնկալ կերպով ձյուն է գալիս, սառնամանիք անում, իսկ ես անտեղյակ քնած եմ։ Մեկ էլ լսեցի տղայիս կանչը.

— Հայրիկ, վեր կաց, Ինգան ծնել է...

— Վա՜հ, հիմի ճուտերին ցուրտը տարավ, վերարկուս դեսը տուր,— գոչեցի ես արագ հագնվելով։

— Ի՜նչ ցուրտ, Ինգան նախասենյակում է,— պատասխանեց տղաս։— Դուռը բացել էր ներս մտել ու թաց-թաց ճուտը բերանին տեղ էր ման գալիս, որ պահի։

Դուռը բաց արի, շունս պպզել, հանդարտված նայում է ինձ։

www.a-pdf.com

— Բա ճուտն ո՞ւր է, այ տղա...

Փնտրում ենք դես-դեն՝ ճուտ չկա։ Թախտի տակը նայեցինք՝ Զալիկը հանգիստ նստած է ձվերի վրա։ Շունը մոտեցավ հավին, սիրալիր հոտոտեց, մեջքի փետուրները լիզեց։ Իսկ սա՝ հե՛չ, ոչ վեր թռավ, ոչ ճչաց, ոչ կոցահարեց։ Ա՜յ քեզ հրաշք, այս ո՞նց, ե՞րբ են հաշտվել։ Կինս էլ եկավ, նայեց այդ տեսարանին, զարմացավ։

— Ա՜յ տղա, բա ճուտն ո՞ւր է, չլինի թե բերանին ուրիշ բան է եղել,— բարկացած հարցնում եմ ես։

— Չէ, հայրիկ, աչքովս տեսա։

— Կերած կլինի,— շանս հասցեին չարախոսեց կինս, բայց ես աչքերովս շանթեցի նրան. մի տես ի՞նչ շառով են տալիս իմ սիրած կենդանուն...

Բայց ես գիտեի, որ այդպիսի դեպքեր երբեմն պատահում են շների կյանքում, ուստի սիրտս կոտրված մտածում էի. «Ո՞նց թե Ինգան էլ է է՛ն մայրերի՞ց...»։ Այդ դառն մտքին էի, երբ ինչ-որ տեղից նվվոց լսվեց։ Դես-դեն ընկանք, թախտի տակը, անկյունները նայեցինք՝ չկա։ Չգիտեմ խելքս ինչ փչեց, Զալիկին վեր քաշեցի ու...

Ահա շան կույր ձագը գոլ ձվերի մեջ խլրտում է ու մերկ դնչիկը դես-դեն մեկնում. տաքացել է, ծծել է ուզում։

Ես ու կինս իրար երես նայեցինք և աչքերով ամեն ինչ ասացինք իրար։ Մի տես ի՞նչ սիրտ ունի, է՜, մայր արարածը, որ իր թշնամու ձագին պատսպարել է թևերի տակ։ Բա Ինգան։ Բա նա ո՞նց է սիրած բալին վստահել իր ոխերիմ թշնամուն...

Կինս գլուխն օրորում էր լուռ ու արցունքներ էին լճացել նրա աչքերում...

1960

ԽՈՒՍՏՈՒՓ ՍԱՐԻ ԱՐՋԵՐԸ

1

Փարթամ, անտառոտ փեշերը փռած, ծերացած գլուխն ամպերի մեջ՝ մռայլ նստած է Խուստուփ սարն ու հոնքերը կիտած նայում է ցած՝ մարդու, մրջյունի չափ այդ կենդանու, խիզախ

www.a-pdf.com

արարքներին. մարդը քրքրել է նրա փեշերը, պայթեցրել քարափները և խոր թունելներ բացել նրա մարմնի մեջ։

* * *

Դարեր շարունակ անվրդով նստած էր Խուստուփ սարը՝ գլուխն ամպերի մեջ։ Նրա լանջերի մթին ծմակներում հանգիստ կյանք էին վարում եղնիկները, նրա բա՜րձր-բարձր ժայռերի մթին անձավներում քուն էր մտնում արջն իր ձագերով։ Նրա անտառներն անարատ էին ու կուսական։ Ընկույզի, տխիլի, տանձ ու խնձորի ծառերն ամեն աշնան տնքում էին իրենց պըտուղների ծանրության տակ։ Սկսվում էր անտառի բնակիչների տոնը։ Սկյուռն ու ոզնին բնության բարիքները հավաքում էին իրենց բները, եղնիկները ականջները սրած հաճար էին ճարում նոր թափվող տերևների տակից, փորսուղը թաթերով ետ էր տալիս խաշամը։

Այդ ժամանակ Խուստուփի քարափներից ցած էին իջնում արջերը, մտնում էին Ջրախոր գետի ձորն ու լիանում համեղ ու յուղալի ընկույզով։ Ո՞վ կարող էր արգելք հանդիսանալ նրանց։

Առափնյա քարերին արևկող արած ջրշունը գետն էր նետվում, եղնիկները խրտնած անհետանում էին թփուտների մեջ։

Այդ անտառի տիրակալն էին նրանք, և ոչ ոք չէր խռովում նրանց հանգիստը։

2

Մարդը հազար տեղից ծակեց Խուստուփ լեռը, նրա սրտին հասավ ու պողպատե մեքենաներ դրեց նրա ընդերքում։ Ու մտածեց մարդը այդ մեքենաներն աշխատեցնելու համար լծել կատաղի ու փրփրադեզ Ջրախորը, Խուստուփ սարի այդ ազատասեր զավակին, որ խելակորույս աղմկելով ու իր կարմրախայտ ձկների հետ խաղ անելով, ցուրտ սարերից, մթին կիրճերից ցած էր վազում, որ դաշտ դուրս գա ու խաղա Մուղանի դուրեկան արևի տակ։

Ու քարանձավներում մրափող արջերը մի օր տեսան, որ անհամար մարդիկ, անհամար զոմեշներ ու եզներ լծած, հաստ ու երկար խողովակներ են քարշ տալիս սարն ի վեր։

Օրեր, շաբաթներ մրջյունի համառությամբ քաշեցին ու սարը հանեցին ծառերից էլ մեծ խողովակներ, հսկա թափանիվ-

www.a-pdf.com

ներ, ատամնավոր մեքենաներ ու դրանց հետ էլ հազար ու մի բաներ։ Ջրախորի ձորում պայթյուններ լսվեցին, ու արջերի սիրտն ահ ընկավ. նրանք դժգոհ մոթմոթացին ու քաշվեցին խուստուփի անմատչելի ծերպերը։

Մի օր էլ տեսան, որ Ջրախորի ափին կարմիր տանիքով մի շենք է կանգնած։ Այնուհետև տեսան, որ անտառի միջով, լեռան լանջով գոտի է կապել Ջրախորի ջուրն ու վազում է իր նոր՝ ցեմենտյա հունով՝ սանձված ու խելոք, առանց աղմուկի, առանց փրփուրի։

Կարմիր տանիքով շենքի վերև մի սիրուն ավազան կար։ Ջուրը հասնում էր ավազանին, պտույտներ գործում նրա մեջ ու լայնաբերան խողովակներով գահավիժում ցած։

Կարմիր տանիքով շենքը ցնցվում ու դողդողում էր նրա թափից, իր ներսում դժոխային աղմուկով աշխատող մեքենաների թափից։

3

Անտառը ծանրաբեռնված էր անուշահամ և դույնզգույն պտուղներով։

Մի օր էլ արջերը դուրս եկան իրենց թաքստոցից և ցած իջան ամեն բարիքով լի վայրի այգին, որ բնությունը տվել էր նրանց և որը ժառանգություն էին ստացել իրենց բրդոտ պապերից։

Իջան վախվխելով ու ահով և դեմ առան ցեմենտյա ջրանցքին։

Եղնիկները խլուշ-խլուշ անելով վազվզեցին ջրանցքի ափերով և, նրա ծայրը չգտնելով, թեթև ցատկեցին, անցան ջուրն ու մրգառատ անտառը մտան։

Ծանրաշարժ արջերը մոթմոթալով ետ ու առաջ գնացին, տեղ չգտան անցնելու, վրդովվեցին, ու նրանցից մեկն այլևս չհամբերեց և ջուրը նետվեց։ Ջրանցքի ափերը սվաղած էին ու կոկ՝ «սատանի երեսի պես»։ Արջը թաթերը գցեց պռնկին, բայց բռնելու տեղ չկար, ու ջրի հոսանքը կրկին տարավ նրան։ Լողալով անցավ մյուս ափը, նորից թաթերով կախվեց ջրանցքի ողորկ պռնկին, և նորից հոսանքը նրան ափից պոկեց ու հրեց առաջ։

Ընկերները, մարդու սատանայական արարքներից դժգոհ,

www.a-pdf.com

գոռգոռալով, մռթմռթալով գնացին իրենց խեղդվող հարազատի ետևից։

Երևաց ավազանը։ Նրա ափին հրացանը ձեռքին կանգնած էր հիդրոկայանի պահակը։ Մռթմռթոց լսեց, տեսավ ջրանցքի ափով վազող գազաններին և անակնկալի եկած՝ հրացանը վայր բերեց, պատրաստվեց կրակելու։ Արջերը վտանգն զգացին. նրանք ճանաչում էին այդ մահաբեր գործիքը։ Քանի՞-քանի անգամ նա, ձեռնափայտի նման այդ գործիքը, որոտացել էր իրենց վրա, կրակ էր ժայթքել ու շամփրել, փշրել ու արյունլվա արել իրենց ընկերներին... Չէ՞, մարդու հետ գործ ունենալը դժվար բան է...

Եվ ահով ետ դարձան ու անհետացան թփուտներում։ Միայն մեկը մի պահ կանգնեց, նայեց հրացանավոր մարդու կողմը, տատանվեց, ուզեց ետ դառնալ, բայց ջրի հետ կռվող ընկերոջ աղեկտուր ձայնը լսելով, ջրանցքի ափով առաջ վազեց։

Պահակը զարմանքով տեսավ, որ այդ կենդանին թաթը ներքև է մեկնում, աշխատում է ընկերոջը հանել ջրից, ապա անհաջող փորձից հետո նորից է առաջ վազում, տագնապով բրթբրթացնում, կարծես հարայ է կանչում, օգնություն խնդրում։

Մի տեղ նա հաջողեցրեց իր մի թաթով բռնել ընկերոջ վիզը, բայց գե արջը հո շոր չունի, որ ծայրից ամուր բռնես. ջուրը թափ տվեց, իր զոհին խլեց նրա ձեռքից և ցեմենտյա հունով քշեց տարավ դեպի ավազանը։ Ապա տեսնելով, որ ափից չի կարողանում ազատել իր ընկերոջը, արջը հուսահատ գոռոց արձակեց և նետվեց ջուրը։ Հասավ ընկերոջը, մարդու նման գրկեց նրան, որ ափ հանի, բայց այստեղ ևս բռնելու տեղ չկար. ջրանցքի պռունկը ողորկ էր ու սահուն։

Ջուրն արջերին հասցրեց ավազանն ու սկսեց պտտեցնել։ Աղետյալ կենդանին թուլացել էր. նա մերթ սուզվում էր, մերթ ճիգ թափելով ջրի երեսը դուրս գալիս, ղլղլացնում, խեղդվում ջրապտույտի մեջ։

Ընկերը մի վերջին անգամ ջանք գործադրեց նրան ազատելու. թաթով բռնեց խեղդվողի վզից, իսկ մյուս թաթով կախվեց շլյուզի ճաղից։ Խեղդվող արջն սկսեց արագ-արագ շունչ քաշել։ Այդպես լավ էր. երկաթներից կախվելով կարելի էր ափ դուրս գալ։ Միայն հարկավոր է մի փոքր շունչ առնել, ուժ հավաքել...

www.a-pdf.com

4

Այդ ամբողջ ժամանակ հրացանավոր մարդու մեջ պայքար էր գնում։ Արջերին տեսնելուն պես նրա սիրտը թնդաց ուրախությունից. «Ջա՜ն, որսն իր ոտով է գալիս...»։ Եվ երբ նշան բռնեց, նկատեց, որ արջերից մեկը խեղդվում է, իսկ մյուսը ջանում է ազատել նրան։ Ջարմացավ մարդն անլեզու կենդանու այդ արարքից, և նրա մեջ սկսեց խոսել մի այլ ձայն, ու այդ ձայնը թույլ չտվեց նրան կրակել...

Այժմ խեղդվող գազանը իրենից ընդամենը տասը քայլ հեռու, շլյուզի ճաղերից կախված վերադառնում էր դեպի կյանք։ Ա՜յ պատրաստի որս... Բայց այնպե՜ս խղճալի տեսք ուներ նա... Ի՜նչ մեծ հաճույքով կկրակեր այդ գազանի վրա, եթե հանդիպեր լեռան ծերպերում, ուր նա իր գազանային տարերքի մեջ հզոր է և երբեմն նույնիսկ արյունարբու։ Իսկ այժմ, ճաղերից կախված, իր կենդանական հայացքով կյանք է աղերսում...

Ընկերը, մարդու ներկայությունից սարսափած, հապճեպ լողաց-անցավ ավազանի մյուս ծայրն ու այնտեղից՝ աչքը մարդու հրացանին, գոռում էր ահից։ «Ա՜յ սրան կարելի է խրփել...»,— մտածեց պահակը։ Բայց այնքան օրինակելի ու հուզող էր այդ կենդանու արարքը, որ մարդը հեռացավ ամբարտակից՝ առաջին անգամ նահանջեց իր պոստից, որպեսզի նրանց ազատի իր ահավոր ներկայությունից։

...Քիչ անց մահից ճողոպրած արջն իր ազատարարի հետ բարձրանում էր դեպի ծեր խուստուփի ծերպերը, իսկ մարդը գոհ իր արարքից՝ ուրախ հայացքով ճանապահ էր դնում նրանց։

Ստեպ-ստեպ ետ էին նայում փախչող կենդանիները, և եթե մարդը մոտ լիներ, գուցե նրանց հայացքում կարդար ոչ միայն բնազդական ահը մարդուց, այլև գոհունակություն՝ նրա մեծահոգի արարքի համար...

Մարդու ստեղծած տեխնիկան հասել է խուստուփի լեռան արջաբները։ Երբեմնի կուսական ու ամայի այդ վայրերում այժմ ստեղծագործական շռինդ է տիրում, որոտներ են լսվում. կառուցվում է Քաջարան տանող խճուղին։ Եվ խուստուփ սարի բրդոտ բնակիչները, իրենց հյուրընկալ ու մրգառատ անտառ-

www.a-pdf.com

ներից քշված, ահը սրտներում՝ թավուտների մեջ կուլ գնացած ժայռերից ցած են նայում դեղնող անտառին։

Ու հիշում են նրանք այն օրերը, երբ դեռ մարդու ոտքն այդտեղ չէր հասել, երբ իրենք վայելում էին անտառի շողշողուն մրգերը...

Իսկ ներքևում գիշեր-ցերեկ դղրդում են մեքենաներն ու ազդարարում մարդու ուժը, և մշտական մտահոգություն պատճառում ծեր խուստուփի բրդոտ բնակիչներին...

1935—41

ԹՌՉՆԱՅԻՆ ԲԱՐՔԵՐ

Դե եկ համոզիր գյուղատնտես Գրիգոր Աղամալյանին, որ կենդանին զգացմունք չունի։ Ինձնից լավ բնասեր, ինձնից շատ հետաքրքրվող կենդանիների կյանքով,— ես նրան ինչպե՞ս համոզեմ։ Մեկ էլ տեսար փաստերն ու օրինակները շարեց առաջդ, դե տղա ես հերքիր։ Ո՞նց հերքես, փաստը հերքե՞լ կլինի։

Որ շատ վիճեցինք, ձեռքիցս բռնած տարավ բակը։ Այնտեղ ցրված կեր էին փնտրում իր հավերը և նրանց մեջ գլուխը հպարտորեն բարձր պահած ու հանդիսավոր շրջում էր մի ծեր աքլոր։ Ինձ տեսնելուն պես դա կանգ առավ մի չալ վառեկի մոտ և կովարար դիրքով նայեց երեսիս։ Ապա, երբ համոզվեց, որ վատ դիտավորությամբ չեմ մտել իր իշխանության սահմանները, գնաց աղբի արկղից ուտելիք գտավ և կըտ, կըտ, կըտ, սկսեց կանչել։ Հավերը իրար առաջ կտրելով վազեցին ուտելիքն ստանալու, սակայն ջահել, չալ վառեկը, չգիտես ինչու, չէր շտապում. նա գնում էր դանդաղ, շորորալով, բայց՝ վստահ։

Ծեր գյուղատնտեսը աչքերը կկոցած ժպտում էր խորամանկորեն։

— Գիտե՞ս ինչու չի շտապում... Հիմա կտեսնես...

Հավերը շրջապատեցին աքլորին և ամեն մեկը կտուցը մեկնած խնդրում էր իրեն տալ գտած պատառը։ Բայց սա հարվածեց-քշեց բոլորին և, երբ տեղ հասավ իր սիրելի Զալիկը, քընքշությամբ կո՛ւ, կո՛ւ, կո՛ւ արավ, քչփչաց հետը, կտուց-կտցի տվին և այդ ժամանակ պատառը դրեց բերանը։ Դրեց, հպարտ-հպարտ վեր քաշեց կարմիր ատլասե վիզը և մի թևը բացեց ու

www.a-pdf.com

գետին քսելով պատույտ գործեց նրա շուրջը։ Կարծես սահման էր քաշում իր սիրելի արարածի շուրջը և դրանով հասկացնում, որ ոչ ոք այդ սահմանն անցնելու իրավունք չունի...

— Տեսա՞ր,— դիմեց ինձ գյուղատնտեսը։— Միշտ էդպես է. գտածը նրա՛ն է տալիս, իսկ ինքը մնում քաղցած։ Տես ինչ օրն է ընկել... Դե հիմի արի մի ուրիշ փորձ անենք։

Նա կուտ գցեց և, երբ հավերը հավաքվեցին, բռնեց նրանցից մեկին՝ մի ճերմակ «Լեգգորնի»։ Հավը թպրտում էր մարդու ձեռքերի մեջ և ջանում էր դուրս պրծնել, իսկ աքլորը ներքևից նայում էր անտարբեր։ Մի այլ հավի բռնեց, դարձյալ նույն ծերունական անտարբերությունը։ Բայց երբ բռնեց Զալիկին, աքլորը թռավ—չանգռեց գյուղատնտեսի երեսը։ Ինչպիսի՜ տագնապ, ինչպիսի՜ զայրույթ կար նրա աչքերում...

Ծղրտում էր, պտտվում մարդու շուրջը, հարձակվում, մինչև որ «աղաչեց» Զալիկին և իր վզի տակ պատսպարելով նրան, մի վրդովված հայացք ձգեց դեպի տերը, որով կարծես ասում էր. «Ձեռք չտա՛ս, թե չէ աչքե՛րդ կհանեմ...»։

Իսկ տերը, գոհ իր փորձի հետևանքից, նայում էր ինձ ու հարցնում.

— Հիմի՞ ինչ կասես...

Հաջորդ օրը գյուղատնտեսը մտավ խմբագրություն և նույն խորամանկ փայլն աչքերում ասաց՝ ցածր ու դավադիր.

— Ճաշից հետո մոտս արի... հանգամանք կա...

Էլ ինչ «հանգամանք», երևի էլի ծեր աքլորին տանջելու փորձեր է անում։ Գնացի և բակում ներկա եղա հետևյալ տեսարանին. հավերը խաղաղ կեր են որոնում, իսկ աքլորը անհանգիստ դես-դեն ընկած որոնում է մեկին, ո՞նց է որոնում։

— Իսկ ո՞ւր է դրա սիրելին,— հարցրի ես գյուղատնտեսին, որ մի անկյունում կանգնած դիտում էր այդ տեսարանը և գոհ շոյում շատ ծխելուց դեղնած երկար բեղերը

Աչքով արավ։

— Փակել եմ մի թաքուն տեղ... Երեկվանից սոված-ծարավ ման է գալիս, մի հատիկ չի դրել բերանը...

— Դե լա՛վ, հերիք է չարչարես...

— Չէ՛, մինչև չհամոզվես, որ թռչունների մեջ էլ սեր ու զգացմունք կա, Զալիկի տեղը սրան չեմ ասելու, թող տանջվի...

— Արդեն համոզվել եմ,— ծիծաղելով պատասխանեցի ես։

Այն ժամանակ նա բարձրացավ երկրորդ հարկի պատշգամ-

բը և այնտեղ ինչ ապավ, ինչ չարավ՝ չհասկացա. հավի կրոթոց լսվեց և այդ ձայնը հերիք էր, որ ծեր աքլորը ափալ-թափալ վազեր սանգուղքն ի վեր։ Շնչակտուր հասավ երկրորդ հարկը և թևերը չռած առաջ վազեց, ես էլ հետևից։

Պատշգամբի ծայրին մի արկղ էր դրված, որի միջից լսվում էր ջահել բանտարկյալի բոզոքի ձայնը։ Իսկ նրա ծեր «կավալերը» տագնապով պտտվում էր արկղի շուրջը. թեք քսում հատակին ու սիրակարոտ կանչում ընկերուհուն. կո՛ւրթ, կո՛ւրթ, կո՛ւրթ, կարծես ասում էր. «Որտե՞ղ ես, անուշ ջան, ախր կարոտել եմ, դուրս արի մի շարմաղ երեսդ տեսնեմ...»։

Երբ տեսավ հնար չկա իր Ջալիկին ազատելու, կտուցը դեմ արավ արկղի ճեղքին ու մեղմ ձայնով սկսեց քչփչալ, կո՛ւր, կո՛ւր, կո՛ւր... Որպես պատասխան ներսից հավալին քրթմնջոց լսվեց և դրանից քիչ էր մնում, որ ծեր ամուսինը նվաղի երջանկությունից. ուրեմն իսկապե՞ս գտնվեց իր սիրելին, իսկ ինքը հույս չուներ, թե նա կենդանի է...

— Է՛հ, հանգստացավ, ուտելիք տամ, խեղճը երեկվանից քաղցած է,— ասաց գյուղատնտեսը հաց փշրելով։

Աքլորն իհարկե ագահությամբ վրա ընկավ ուտելիքին, բայց առաջին պատառը արկղի ճեղքով մեկնեց իր բանտարկված ընկերուհուն...

— Տեսա՞ր,— կրկնեց իր հարցը ծեր գյուղատնտեսը,— դե գնա գրի՛ր...

Եվ լրջանալով, մտախոհ ավելացրեց.

— Ասա՛ աշխարհին, որ էն անլեզու թռչունն անգամ անհանգստանում է, ցավում է, հոգ է տանում իր ընկերոջ համար... էն անգիտակից թռչունը...

1955

ՊՈԼՍԵՑԻ ԱՀԱՐՈՆԻ ԲԱԿՈՒՄ

1. ՉԱԼՈՆ

Ահարոնի բարեկամը ռազմաճակատից հետո մի երբակազմ շուն բերեց։ Անունը Ֆրիցուհի դրին։ Ահարոնի շունը՝ Ջալոն, մի անգամ, չգիտես որտեղից, խոզի մի չաղլիկ ոտք բերեց դրեց Ահարոնի կնոջ գոգը, որով հասկացրեց, թե կուզեր իր որոը

www.apdf.com

եփած տեսնել։ Տիկին Սիրանը ոտքը մաքրեց, եփեց և դրեց շան առաջ։ Այդ պահին Ֆրիցուհին մոտեցավ, մեղմ քսվեց Ջալոյին, «կոկետություն» արավ և ըստ երևույթին իր քնքշությունով բոլորովին գրավեց նրան։ Եվ ահա հապճեպ սիրահարված «կավալերը» իր այնքան համեղ կերակուրը դրեց Ֆրիցուհու առաջ, հեռացավ և բավականությամբ նայում էր, թե ինչպես ընկերուհին վայելում է իր բաժինը։

Ահարոնի շան այդ «ասպետական» բնազդը հատուկ է բոլոր արու շներին. իրենց ընկերուհիների նկատմամբ նրանք մեծահոգի են և զիջող...

2. ՓԻՍԻԿԻ ԶԱՐՄԱՆՔԸ

Որսորդ Ահարոնի տանը մի խանում-խաթուն կատու կա։ Տիրոջ ազդեցությունի՞ց է, թե՞ բնածին ընդունակություն, այդ կատուն ճարպիկ որսկան է, սարյակ, ճնճղուկ, մուկ չեն ազատվում նրա ճանկերից։ Ուղղակի առանց զենքի որսորդ։

Բայց այդ ամառ փիսիկ Նոնոն որոշեց, որ ավելի հեշտ է հավի նորելուկ ճուտերին ուտել, քան ժամերով դարան մտնել ճնճղուկ որսալու համար։ Ու այդ կարգի մատչելի «որս» սկսեց բակում։

Առաջին զոհերից հետո տիկին Սիրանը կուտ գցեց, ճուտերին հավաքեց և մատով նրանց ցույց տալով ամուր պատվիրեց կատվին.

— Նո՛նո, լավ նայիր, սրանք մե՛րն են, շուտես...

Նոնոյին դուր չեկավ այդ նախազգուշացումը, բայց կեղծավորաբար պոչը շարժեց և քսվեց տիկնոջ փեշերին, այսինքն՝ հանգիստ կաց, չեմ ուտի։

Եվ իրոք, նա իր «խոսքը» կատարեց։ Բայց շար լեզուներն սկսեցին բամբասել, թե իբր Նոնոն թաքուն վայելում է հարևանի ճուտերը...

Սիրանի բադն էլ ճուտեր հանեց։ Նոնոն տեսավ տափակ կտուցներով, անճոռնի քայլվածքով արարածներին ու զարմացավ։ Այս ի՞նչ կենդանիներ են։ Բայց ի՞նչ փամփլիկն ե՞ն... Քանի որ տիկին Սիրանը չէր զգուշացրել այս կարգի ճուտերի մասին, Նոնոն շատ «հանգիստ խղճով» վերցրեց նրանցից մեկը, գոմը մտավ և քիչ անց բեղերը լիզելով դուրս եկավ։ Տիկին Սիրանը նրան լավ ծեծեց իր այս ավազակային արարքի հա-

www.a-pdf.com

մար։ Եվ երբ հանդարտվեց, հավաքեց բադի ճուտերին և ամուր ասաց.

— Նոնո՛, սրանք էլ են մերը, սրանց չուտե՛ս...

Նոնոն հասկացավ և սրբությամբ կատարեց այդ պատվերը։

Բայց Ահարոնը իսկի ձեռք վերցրե՞լ է որսորդությունից, որ նրա որսորդ կատուն ձեռք վերցնի։ Փիսիկ Նոնոն նոր միջոցներ էր մտածում իր որսորդական կրքին հագուրդ տալու։

Նա սկսեց ճնճղուկներ բռնել։ Բայց զարմանալի հպարտ և ցուցամոլ կենդանի է Նոնոն։ Բոլոր որսորդների նման նա միայն մի տենչ ունի՝ հասարակությանը ցույց տալ իր որսը, պարծենալ իր շնորհքով։ Եվ այդ կենդանին փոխանակ ուտելու իր բռնած ճնճղուկները, բերում դնում էր տիկին Սիրանի գոգը և հպարտ նայում տնեցիներին։ Եվ երբ իր բերած թռչունները մաքրում-խորովում էին, նա, բոլոր անվանի որսորդների նման, ներքին հրճվանքով ու հպարտությամբ էր դիտում, թե ինչպես են վայելում իր որսը։

Մի անգամ էլ Նոնոն մի շաղլիկ մուկ բերեց-դրեց տիկին Սիրանի գոգն ու այնպիսի հպարտությամբ նայեց ներկա եղողներին, որ թվում էր, թե ասում էր՝ «Իսկի կյանքներումդ տեսե՞լ եք այսպիսի շաղլիկ որս»։

Նոնոյի աչքերի ուրախ փայլից երևում էր, որ շատ է գոհ իր սարքած սյուրպրիզից և ցնծագին բացականչությունների է սպասում։ Բայց անչափ մեծ եղավ նրա հիասթափությունը, երբ տիկին Սիրանը զզվանքով ու վրդովված դեն շպրտեց իր որսը և իրեն վրա էլ բարկացած գոռաց։

Ու մինչև օրս էլ փիսիկ Նոնոն չի կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ իր տերերը վերցնում են այն լղարիկ, ծուտոտ ճնճղուկները, իսկ փամփլիկ մուկը կոպտաբար մերժեցին։

3. ՁԱԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Օր չէր անցնում, որ տիկին Սիրանի իրերից չկորչեր։ Իրար ետևից անհետացան նրա գուլպաները, երեխաների տրուսիկները և էլի ուրիշ շատ մանր շորեր ու լաթեր։

Ժամանակ անցավ։ Մի անգամ, երբ երեխան մահճակալի տակ էր մտել կորած գնդակը փնտրելու, այնտեղից գոչեց.

— Կորած շորերը գտել եմ։

www.a-pdf.com

Սիրանը մութ անկյունից քաշեց-դուրս հանեց ողջ կույտը և մնաց զարմացած. ճագարը գողացած շորերից բույն էր շինել, իր փորի տակի մազերից պոկել փափուկ ներքնակ էր պատրաստել և նրա վրա տեղավորել էր իր նորածին ձագերին...

Մայր ճագարի այս արարքի վրա այնպես զգացվեց տիկին Սիրանը, որ շորերի կույտը նորից խնամքով հրեց մահճակալի տակ և տնեցոց պատվիրեց.

— Ձեռք չտաք, չանհանգստացնեք նրան... Ախր նա էլ մայր է...

4. ՄԱՅՐ ԾԻԾԵՌՆԱԿԸ

Ահարոնի տան սրահի առաստաղին ամեն գարնան իրենց բները նորոգում և ձագ են հանում գարնան հետ հարավից վերադարձած ծիծեռնակները։

Այդ տարի էլ եկան նրանք և գարնան բերկրանքով լցրին ծեր որսորդի տունը։ Ի՞նչ աշխատասեր ու մշտաշարժուն արարածներ են այդ ծիծեռնակները։ Առանց մի վայրկյան հանգիստ առնելու, նրանք ցեխ ու շյուղեր են կրում ու բույն հյուսում։ Վարպետ որմնադիրի նման մի շարք ցեխ էին դնում, մի շարք ավազ, մի շարք ճյուղեր՝ բնին ամրություն տալու համար։

Վերջապես ավարտեցին իրենց բույնը, էգը ձու դրեց և վրան թուխս նստեց։ Վարուժանը (արուն) երբեմն համեղ պատառներ էր բերում-դնում մարիի բերանը ու նորից սլանում դեպի արևի շողերով ողողված լազուրը։ Ապա վերադառնում էր, նստում ձվերին և այս անգամ էլ ընկերուհուն ուղարկում զբոսանքի ու կեր փնտրելու։

Այդպես փոխեփոխ ձվերը տաքացնելով, ձագեր ունեցան, և նրանց կյանքի իմաստը միանգամից փոխվեց. այժմ միայն և միայն զբաղված էին փոքրիկների հոգսով։

Իսկ այդ հոգսը քիչ չէ։ Նախ պետք է շարունակ կերակրել նրանց, այնքա՜ն բկլատն են այդ մեծափոր ու տկլոր արարածները։ Ապա պետք է հենց փոքրուց վարժեցնել կարգուկանոնի, մաքրասիրության։ Այսպես, օրինակ, պետք է հասկացնել, որ բնի մեջ կեղտոտել չի կարելի։ Եվ տիկին Սիրանը զարմանքով տեսնում էր, թե ինչպես ծիծեռնակի ձագերը, որ միշտ կտուցները բաց և առաջ մեկնած կերակրի են սպասում, երբեմն շուտ են գալիս, պոչը բնի պռնկից դուրս հանում ու ծրտում դեպի ցած։

www.a-pdf.com

Ահա մայրը մի մժեղ բերեց, դրեց մեկի բերանը և նորից որսի գնաց։ Տիկին Սիրանն սկսեց դիտել. հետաքրքիր է, հաջորդ անգամ ո՞ւմ համար կբերի։ Նորից եկավ մայրը՝ մի որդ կոցին։ Առաջին ձագը, որ բոլորից ուժեղ էր երևում, առաջ մեկնվեց, որ խլի որդը, բայց մայրը ետ հրեց նրան և որսը դրեց երկրորդ ձագի բերանը։ Քիչ անց բերեց երրորդի բաժինը, ապա՝ չորրորդի։ Նա չէր մոռանում հերթականությունը և իր մայրական խղճով հավասար բաժին էր հանում իր ձագերին։

Բայց ամենից զարմանալին ահա թե ինչն է։ Ծնողները միշտ ահի մեջ են, որ իրենց ձագերը կերակուր ստանալու համար առաջ մեկնվելիս վայր կընկնեն ահագին բարձրությունից։ Եվ ահա նրանք իրենց ձագերի ոտքերը մազով կապում են բնի պատի շյուղերից։

Այդ մասին ինձ պատմեց արմաշեցի որսորդ Պետրոսը, տիկին Սիրանը նույնը պնդեց, և ես գարնանը հաստատեցի այդ զարմանալի դյուտն իր փորձով. մի ծիծեռնակի բույն գտա, զգուշությամբ վերցրի ձագերից մեկին և տեսա ոտքը մազով փաթաթված է բնին։ Տեսա այդ զարմանալի երևույթը և մտածեցի, թե որքա՞ն հնարագետ է դարձնում կենդանուն իր ձագերի կյանքը պահպանելու բնազդը...

Իսկ ինչպե՞ս մեծացրին այդ ծիծեռնակներն իրենց ձագերին։ Նրանց մեծ դժբախտություն պատահեց. մայր ծիծեռնակը տուն վերադառնալիս ճամփին բազեի ճանկն ընկավ։

Ձագերը մնացին քաղցած, կտուցներն անձկությամբ առաջ մեկնած, որովհետև վարուժանը բերած որսը կտոր-կտոր անելու և բաժանելու ընդունակությունից զուրկ է. այդ բնազդը միայն մարին ունի։

Որբացած ձագերի սրտամորմոք ու նվաղուն ճվճվոցը ըստ երևույթին ազդեց հարևան բնի տերերի վրա։ Սրանք սկսեցին հերթով կերակրել իրենց զոհված հարևանի որբերին և հետզհետե կապվեցին նրանց հետ։ Իսկ ես սնունդ էի մատակարարում այդ թռչուններին և ուրախ էի այն մտքից, որ մասնակից եմ նրանց այդ «բարեգործությանը»։

Այդպես իրենց ձագերի հետ միասին նրանք մեծացրին այդ որբուկներին ևս, ապա համառ համբերատարությամբ նրանց սովորեցրին թռչել և զինեցին գոյության կռվի համար։

www.a-pdf.com

ՄՈՒՇԿԱ

Բուժվում էի Սսենտուկիում։ Այնտեղ ինձ համար ամեն ինչ լավ էր. և՛ քաղաքի թիկունքի կանաչ բլուրները, և՛ ընդարձակ պրոսպեկտին իր սքանչելի ծառուղիներով, և՛ ընտիր բուժարանները։ Ա՜յ հանգստանալու վայր։ Մի բան միայն վատ էր, որ դեռ լույսը չբացված տանտիրուհուս Մուրզիկ կատուն և Մուշկա շունը ամեն դատարկ առիթով աղմկում էին իրենց կենդանական լեզվով, առանց հասկանալու, որ խորքի սենյակում մարդ կա քնած։

Տանտիրուհիս, հարյուր կիլոգրամ կշիռ ունեցող մի հաղթանդամ և բարի կին, ամեն հարմարություն ստեղծել էր իմ հանգստի համար։ Ո՞վ կհամարձակվեր բակում բարձր խոսել։ «Կամա՜ց, հանգստանում է...»,— հաճախ էի ես լսում նրա սաստող շշուկը։

Եվ այդ կինը, որ իմ հանգիստը պահպանելու համար պատրաստ էր գժտվելու հարևանուհիների հետ, նախատինքի խոսք անգամ չէր ասում ամեն առավոտ իմ քունը խանգարող Մուշկա շանը։

— Հիմա՜, հիմա՜, սիրելի՜ս, տե՞ղդ է կոշտ, թե ուտել ես ուզում,— միչանցքից լսվում էր նրա փաղաքուշ շշուկը։

Նա առանձին քնքշանքով էր վերաբերում ճերմակ, խուճուճ մազերով, դեղին ականջներով և շատ բրդոտ պոչով այն կենդանուն։

Տանտիրուհիս՝ Ելենա Նիկոլաևնան, ամեն առավոտ գնում էր շուկա՝ իր կենդանիների համար թարմ միս գնելու։

— Իմ վարմունքը թող ձեզ զարմանալի չթվա,— կարծես արդարանալու համար մի օր դիմեց ինձ,— մարդ իր զգացմունքները որևէ մեկին պե՞տք է տա, թե ոչ. չէ՞ որ ես, բացի սրանից, աշխարհում ոչ ոք չունեմ...

Այո՜, պատերազմից հետո բոլորովին մենակ մնաց Ելենա Նիկոլաևնան։ Կար ժամանակ, երբ նրա ամուսինը երկրամասի գլխավոր գյուղատնտեսն էր, իսկ որդին ուսանում էր ինստիտուտում։ Պատերազմն իր արյունոտ ու բիրտ ձեռքերով խլեց այդ կնոջից իր հարազատներին. ամուսինը, որ գնդի կոմիսար էր, զոհվեց պատերազմի երկրորդ տարում, իսկ որդին անհետ կորավ ռազմաճակատում։

Այժմ Ելենա Նիկոլաևնան աշխատում է Սսենտուկիի ջրի

www.a-pdf.com

գործարանում և Միության ամենահեռավոր ծայրերն անգամ հանքային ջրեր է ուղարկում։

— Էնքա՜ն մարդ է բուժվում մեր ուղարկած ջրերո՜վ,— ասում է նա առանձին հպարտությամբ։

Այդ է իր սփոփանքը հիմա, և այս երկու կենդանիները, որոնք տարիների ընթացքում այնպես են մերվել իրենց խնամակալուհուն, որ կարծես դարձել են նրա ընտանիքի անդամները։

Զարմանալի բան, շան և կատվի միջև եղած դարավոր թշնամության հետքն անգամ չի զգացվում Մուշկայի և Մուրզիկի հարաբերությունների մեջ։ Շունը մի առանձին քնքշանքով իր պատառը զիջում է կատվին, և երբ սա կշտանում է, խաղում է հետը, գզվռտվում։ Իսկ երբ մթնում է, Ելենա Նիկոլաևնան նրանց անկողինը փռում է նախասենյակում, դնում է փափուկ բարձը և սիրալիր ասում.

— Դե՛հ, ժամանակն է քնելու։

Մուշկան առաջինն է մտնում անկողին, ուսի մի քանի ցընցումներով ադյալը քաշում վրան՝ մինչև վիզը, իսկ կատուն, սենյակում մի քանի պտույտ անելուց հետո, բարձրացնում է վերմակի ծայրը և մտնում է Մուշկայի ծոցը։

— Գիտե՞ք ինչու են այդքան սիրում իրար,— մի օր դարձավ ինձ տանտիրուհիս,— ասում են կենդանիների կյանքը հետաքրքրում է ձեզ, պատմեմ լսեցեք։

Մուրզիկը անօգնական մի ձագ էր, որ տուն բերին։ Ինչ տալիս էինք՝ չէր ուտում, միայն նվվում էր։ Կատվի ձագը ցույց տալով, ասացի՝ Մուշկա՛, մայր չունի, մեռնում է, ի՞նչ կլինի թողնես քեզ ծծի։ Խեթ-խեթ նայեց ու մոռացրեց։ Ձագի բերանը մի պտուկ դրի ու շարունակեցի փաղաքշել շանը՝ Մուշկա, հա՞, բա մեղք չէ՞, ախր չի ապրի առանց կաթի։ Մուշկան խելացի շուն է, հասկացավ, Մուրզիկին իր ձագերի հետ կերակրեց, մեծացրեց և սրտով այնպես կապվեց հետը, որ այլևս իր ձագերից չէր ջոկում։

Այդպիսի սիրտ ունի մեր Մուշկան։ Բայց միայն դրա՛ համար չէ, որ ես կապված եմ նրան. հարևաններս գիտեն, բայց դուք տեղյակ չեք, որ Մուշկան է փրկել իմ կյանքը։ Բայց այդ մասին հետո։

«Էլի մեր սարերի գամփռների մասին ասեն՝ հասկանալի է, թե չէ ինչո՞վ կարող է մարդու կյանք փրկել կատվից քիչ մեծ

այս սենյակային շնիկը»,— մտածում էի ես։ Իսկ Ելենա Նիկոլաևնան երևի իմ հետաքրքրությունը բորբոքելու համար, խորհրդավոր կերպով լռում էր։

Վերջապես մի երեկո, երբ պատշգամբում թեյ էինք խմում, նա սկսեց իր պատմությունը.

— Դեպքը, որ հիմա ձեզ պատմելու եմ, կատարվեց այն սև տարին, երբ ֆաշիստները մտան Սևենտուկի։ Շատ չմնացին նրանք մեր քաղաքում, բայց այնպես քանդեցին, այնպես ապականեցին մեր սիրուն առողջարանը, այնպիսի սև գործեր կատարեցին, որ հիմա էլ անեծքով ենք հիշում նրանց։

Շատ մարդիկ գնդակահարվեցին այդ ամիսներին, շատ մայրեր ու երեխաներ լաց եղան, սոսկումով եմ հիշում այդ սև ժամանակները։ Բայց այդ դժոխքում անգամ մեր մարդիկ գործում էին թշնամու դեմ, ով ինչով կարող էր. ոմանք սարերն էին բարձրացել, ոմանք մեր վիրավոր զինվորներին թաքցրած՝ խնամում ու բուժում էին։ Շատ բաներում էր արտահայտվում մեր մարդկանց հայրենասիրությունը՝ և՛ մեծ, և՛ փոքր գործերում։ Ճանաչում եք չէ՞, բժիշկ Վարդան Վիրաբովին, նա, օրինակ, փրկեց կլինիկայի թանկ ապարատուրան։

Ուզում էի մի բանով էլ ես հարկավոր գալ հայրենիքին։ Երբ թշնամին քաղաք մտավ, հոսպիտալում մնացած մեր վիրավոր մարտիկներից շատերը, չնայած իրենց ծանր վերքերին, ցրիվ եկան, թաքնվեցին այստեղ-այնտեղ։ Նրանցից երեք հոգու տանս նկուղում ապաստան տվի, կողպեքը դրի վրան և այս մեր Մուշկային կապեցի շեմքում։ Իսկ ինքս այլևս գործարան չէի գնում և գաղտնի համոզում էի իմ բրիգադի կանանց ևս՝ շաշխատել զավթիչների համար։

Դժվար էր առանց աշխատելու կերակրել և՛ ինձ, և՛ երեք վիրավորի։ Տանս եղած կահկարասին շուկա հանեցի՝ մի քանի շաբաթ դրանով ապրեցինք։ Այնուհետև ստիպված եղա գնալ հարևան գյուղերը, դաշտում աշխատել օրավարձով։ Հետս շատ բան չէի բերում, բայց կարտոֆիլ, ճակնդեղ, կաղամբ միշտ էլ ճարում էի վիրավորների համար, եփում էի և գիշերը գաղտնի կերակրում նրանց։ Հագուստներն էլ էի գաղտնի լվանում, գիշերները սենյակի ներսում վառարանի դիմաց չորացնում, արդուկում։ Ոչ ոք չգիտեր, որ ինձ մոտ մարդիկ կան թաքնված, անգամ իմ ամենամոտ ու սրտակից հարևանուհի Գալինա Իվա-

www.a-pdf.com

նովնան։ Իմ գաղտնիքը միայն Մուշկան գիտեր, նա էլ լեզու չուներ, որ պատմեր մարդկանց։

Բայց որ լեզու էլ ունենար, կպատմե՞ր որ...

Այդպես, վիրավորներս հետզհետե առողջացան և գաղտնի գնացին սարերը, պարտիզաններին միանալու։ Մնաց վերջին գինվորը՝ մի նիհար հայ տղա, հոնքերը խիտ, աչքերը սև, ոտքը ջարդված և նորից անհաջող կպած։ Ասում էր՝ Արարատյան գաշտումն է իրենց գյուղը։ Նստում էր կողքիս ու վառ հեքիաթի նման պատմում իրենց գյուղի մասին, ուր երկնասլաց բարդիներ կան՝ արագիլները վրանները թառած և ուր, իբր թե, հրնձվորները ջրի տեղ գինի են խմում կավե կուպաներից. այնքան առատ է գինին այդ երկրում։ Պատմում էր, որ ծեր մայր ունի՝ աչքը ճամփին և իր նման մի թուխ նշանած...

— Կգնամ սարերում մի ճեղքով կսողամ, գիծն անց կկենամ, կհասնեմ մերոնց, ջարդված ոտով էլ կարելի է տուն հասնել,— ասաց նա մի գիշեր. պատրաստվել էր ինձ հրաժեշտ տալու։ Պնդեց նա իրենը, ձեռքս համբուրեց, իսկ ես՝ նրա ճակատը, և դուրս եկավ տնից։

Գիշերվա կեսն անցել էր։ Ցանկապատից հենց դուրս եկավ, մթնում ավտոմատներ ճարճատեցին և քիչ անց՝ քարշ տալով արյունաթաթախ բակ բերին իմ խնամած այն հայ տղային։ Նրա թարմ վերքերից արյուն էր ծորում։ Սիրտս մղկտաց, երեքացի, հենվեցի պատին։

— Թաքստոցդ ցույց տուր,— ավտոմատի փողը վիրավորի ճակատին դեմ արած որոտում էր սվաստիկան թևին գեստապոյականը։

— Սարերից եմ գալիս...— հազիվ ասաց տղան։

— Բայց դու այս տնից դուրս եկար, շո՛ւն,— կրունկներով վիրավորի գլխին խփում ու հետն էլ հայհոյում էր գերմանացին։

Կարծես սիրտս էին տրորում կրունկներով... Ուզում էի ճչալ, լեզուս կապ էր ընկել։

— Եկել էի ուտելիք խնդրելու,— թույլ ձայնով պատասխանեց մեռնողը։

Գունատ ու դողահար կպել էի պատին, իսկ Մուշկան վրնդրտում էր ներսում։

Տանջեցին այն տղային իմ աչքի առաջ, սվիններով ծակծկեցին մարմինը, բայց անունս չտվեց, ձևացրեց, որ չի ճա-

www.a-pdf.com

նայում ինձ։ Այդպես էլ աչքիս առաջ մեռավ այն վոտիտ ու թուխ տղան և իր մահով վերք բացեց սրտիս մեջ...

Երբ այլևս անօգուտ էր անշնչացած մարդուն հարցաքննելը, հերթը հասավ ինձ։ Սվաստիկայով մարդը ինձ ներս հրավիրեց, լույսերը վառել տվեց և հանգիստ հարցրեց.

— Ելենա Նիկոլաևնա, ինչո՞վ բացատրել, որ դուք չեք աշխատում։

Հարցրեց ու նենգորեն ժպտաց։ Ես սոսկացի այդ ժպիտից և նրա նոսր ու խոշոր ատամներից, իսկ կանաչ ակնոցների տակից կարծես իժ էր նայում ինձ։ Նիհար, շատ երկար մարդ էր այդ գերմանացին, կոկորդին խոշոր ադամախնձոր, որ խոսելիս մերթ իջնում, մերթ վեր էր բարձրանում։

— Ուժ չունեմ, ոտքերս ոսկրացավից ուռել են, տեսե՞ք,— արդարացա ես։

Մարդը նորից ժպտաց, և արյունս կարծես սառեց այդ ժպիտից։

— Բայց, Ելենա Նիկոլաևնա, համաձայնեցեք, որ «Ռեստորանի № 20» ջուրը հիանալի մարսեցնում է սննդարար ուտելիքները,— ուրախ և հեգնական շարունակում էր շաղակրատել գերմանացին։— Ռուսաստանն իր հավերն ու խոզերը տրամադրել է մեզ, բայց հանքային ջուր չի տալիս, որ մարսենք...

Ըստ երևույթին գեստապոյականին իր սրամտությունը շատ դուր եկավ. նա սառը քրքջաց և, դառնալով իր ստորադրյալներին, կարգադրեց.

— Մասաժ արեք Ելենա Նիկոլաևնային...

Մինչ ես կհասկանայի, թե «մասաժ» բառը ինչ իմաստ ունի, մի ծանր հարված ստացա վզիս, վայր ընկա և զգացի, որ մի քանի զինվորականի կոպիտ ու ցեխոտ կոշիկներ տրորում են ինձ...

Երբ ուշքի եկա, արդեն լուսանում էր. իմ հարևանուհի Գալինա Իվանովնան թրջոցներ էր դնում մարմնիս կապտած մասերին ու հետն էլ վշտոտ քրթմնջում.

— Գազանն է՞ր, գազանն է՞ր, ինչ է արել ձեզ այս անմեղ կինը...

Շան ծմրոց լսեցի։ Ցավերս զսպելով դժվարությամբ թեքվեցի և մահճակալից ցած նայեցի. Մուշկան առաջին թաթերը վեր բարձրացրած, խղճալի հայացքով նայում էր ինձ, և նրա աչքերից արցունքները ցած էին թափվում...

www.a-pdf.com

Բարի հրեշտակ էր պառավ Գալինա Իվանովնան, երկար ժամանակ խնամեց ինձ։ Աղքատ, օրվա հացի կարոտ, նա սիրով ինձ հետ կիսում էր իր ձեռք բերած խղճուկ պատառները և դեռ Մուշկային էլ էր բաժին հանում։

Մի անգամ (այդ դեպքը չեմ մոռանա) Գալինա Իվանովնան Մուշկայի համար սպանդանոցից ոսկորներ էր բերել։ Մեջքիս վրա պառկած, աչքերս հառել էի առաստաղին (վերքերս շատ էին ցավում, շա՜տ), մեկ էլ մոտս դրած ափսեն չրխկաց։ Դժվարությամբ թեքեցի գլուխս՝ տեսնեմ Մուշկան իր բաժին ոսկորները բերել-դրել է ափսեի մեջ և, իր արածից երջանիկ, նայում է ինձ ու պոչը շարժում...

Այնպես հուզվեցի այդ դեպքից, որ արտասվեցի։ Նայում էր աչքերիս, տեսնում էր արցունքներս ու ծմրում էր տխրալիր։

Դե, եկ, Ելենա Նիկոլաևնա, համեմատություն մի անի. սա անասուն է, իսկ նա՝ մարդ, այն էլ եվրոպացի մարդ...

Պառավ Գալինա Իվանովնայի ջանքերով ես դանդաղ ապաքինվում էի, երբ մի օր էլ դուռս քաղաքավարի ծեծելուց հետո, ներս մտավ իմ հոգեառը։

— Առողջանո՞ւմ եք, Ելենա Նիկոլաևնա, շատ ուրախ եմ,— ասաց նա և այնպես ժպտաց, որ փշաքաղվեցի։

Կյանքումս ես ոչ մի բանից այնպես չեմ սարսռել, որքան այդ մարդու ժպիտից։ Այդ ժպիտը ես ուսումնասիրել էի իր բոլոր ժանտ երանգներով և դառն փորձից հասկացա, որ նոր տանջանքներ է նյութում ինձ համար այդ դժոխքի ծնունդը, ուստի խեղճացած հարցրի.

— Ի՞նչ եք ուզում ինձնից, պարոն սպա, արդեն մեռնում եմ, թողեք գոնե հանգիստ մեռնեմ...

— Ինչ ենք ուզո՞ւմ... ձեր առողջությունը։

— Իմ առողջությո՞ւնը,— զարմացա ես ու մի պահ սկսեցի մտածել՝ դուցե՞ ես հարկավոր եմ, չէ՞ որ մինչև սրանց գալը ես անվանի բրիգադիր էի գործարանում։ Ուզում են առողջանամ, որ աշխատեմ։

— Այո՛, ձեր առողջանալով մենք շահագրգռված ենք, ուզում ենք, որքան հնարավոր է շուտ առողջանաք,— իր միտքը կրկնեց սվաստիկայով մարդը։

Սրտումս ապրելու հույսեր ծագեցին. մի ոտքի կանգնե՞մ, հետո հեշտ է, իսկի չլինի՝ կփախչեմ հեռավոր գյուղերը։

Քաղցրությամբ հարցրի.

www.a-pdf.com

— Պարոն սպա, որ առողջանամ, ի՞նչ եք անելու ինձ։

— Տարօրինակ հարց, կախաղան ենք բարձրացնելու, ի՞նչ ենք անելու,— ժպտալով պատասխանեց նա։

Այդ սոսկալի ժպի՜տը... Գոնե չար դեմք ընդունի, գոնե հայհոյի։

Նրա պատասխանից սիրտս կարծես կանգ առավ։ Կանեն, ի՞նչ մեծ բան է մի ռուս կին կախելը...

— Բայց ես մեղք չունեմ։

— Մեղք ունեք, Ելենա Նիկոլաևնա,— մեղմությամբ առարկեց սպան։— Ձեր առաջին մեղքն է, որ կոմունիստի կին եք, ամեն օր ուտելիք եք դրել ձեր կոմունիստ ամուսնու առաջ... Կերել է ձեր տված սնունդն ու գնացել կռվելու ֆյուրերի զորքի դեմ։ Այդ մեկ...

— Բայց նա չկա, սպանվել է, ահա սև թուղթը,— ասացի ես բարձի տակից ծանուցագիրը հանելով։

— Դա, իհարկե, մի փոքր մեղմացնում է ձեր հանցանքը։ Ուրեմն հիմա նա չկա և չի կռվում մեր դեմ... լա՜վ...

Այդ խոսքերն արտասանելիս նրա կոկորդի խնձորը վեր էր թռել, երևի դա բավականության նշան էր, իսկ աչքերի նենդ փայլին խառնվել էր հրճվանքը։

— Բայց,— շարունակեց նա,— այս ծանուցագիրը ձեզ կախաղանից չի փրկի։ Ձեզ պիտի հրապարակով կախենք, որ գործարանի ձեր ընկերուհիները ուշքի գան և վերադառնան աշխատանքի. թե չէ ինչի նման է՝ ցրվել գյուղերով մեկ...

Ներս մտավ Գալինան զամբյուղը ձեռքին և մնաց շեմքում սառած.

— Ա՜, դո՞ւք եք խնամում այս տիկնոջը,— ուրախ գոչեց գերմանացին և ոտքի կանգնելով գերմաներեն գոչեց.— Հա՜նս, մի շնորհակալություն հայտնեցեք այս պառավին...

Վտիտ, հյուծված Գալինա Իվանովնային քարշ տվին բակ։ Հարվածների ձայն լսվեց, ճիչ և ամեն ինչ լռեց...

Այնուհետև կանաչ ակնոցներով սպան երեք-չորս օրը մեկ անգամ այցելում էր ինձ, հարցնում առողջությունս, հետաքրքրվում էր, թե ովքեր կապ ունեն պարտիզանների հետ, ովքեր են սովետական վիրավոր զինվորներ թաքցրել, մեր գործարանի մարդկանցից ով ինչ է, և բավարար պատասխաններ չստանալով, վերջում սիրալիր հարցնում էր.

— Ե՞րբ եք ոտքի կանգնելու, Ելենա Նիկոլաևնա։

www.a-pdf.com

— Իսկ ձեր ինչի՞ն է պետք իմ տոքի կանգնելը։

— Որ գնաք հրապարակ կախվելու... Ախր այդ դատարկ գործը անտեղի ձգձգվում է։

— Որ այդպես է, ես առողջ եմ, հենց հիմա էլ կախեցե՛ք. բավական է տանջեք ինձ,— գոչեցի ես և վրա նստեցի։

Արդեն զզվել էի կյանքից. այդ դևի պատճառած սիստեմատիկ տանջանքներն այլևս տանել չէի կարող։

— Հերի՞ք է, ես պատրաստ եմ մեռնելու...— գոռում էի ես։

Որտեղի՞ց այդպիսի ուժ առաջացավ իմ մեջ։

— Այդպես չի կարելի, Ելենա Նիկոլաևնա,— բարեկամական նախատինքով դիմեց ինձ սպան։— Դուք ուզում եք, որ մենք մարդասիրության կանոններին դե՞մ գործ բռնենք։ Հիվանդին նախ կառողջացնեն, հետո կկախեն, դա կուլտուրական աշխարհում ընդունված կարգ է...

Եվ քիչ լռելուց հետո, ժպտալով ավելացրեց.

— Իսկ իմ հիշեցումները կախաղանի մասին, թող ձեզ չթվա, թե հակասում է մարդասիրության ասածս կանոններին։ Մենք կուզենայինք, որ ոուս մարդը զուրկ չլինի կախաղան բարձրանալու հեռանկարից...

Եվ դոհ իր սրամտությունից՝ դնաց։

Այդ հրեշը հալածում էր ինձ երազում, արթուն, իմ մտքերի, իմ ցնորքների մեջ։ Գիշերները աչքիս ճիվաղներ էին երևվում, տեսնում էի կանաչ ակնոցներ, օձի սառը, սուր հայացք, երկար վզի երկարությամբ վեր ու վար անող մի անճոռնի ադամախնձոր։ Զգում էի, որ նյարդերս խանգարված են, դեպի խելագարություն եմ գնում։ Ամեն չխկոցից վեր էի թռչում ու լարված ականջ դնում։

Ինձ հետ շարունակ տագնապի մեջ էր և իմ շնիկը։ Գեստապոյականին նա լավ էր ճանաչում, գիտեր, որ ինձ տանջողը նա է։ Ատում էր, հաչում վրան, բայց այնքան թույլ արարած էր նա, մի անճարակ էակ, որ վրեժ հանել իր թշնամուց չէր կարող։ Միայն ականջը դռան ձայներին՝ անսխալ որսում էր, թե ով է եկողը՝ գաղտնի ինձ այցի եկող բարեկա՞մ, թե՞ այն սպան։ Կենդանին իր բնազդով, իր հոտոտելիքով և սուր լսողությամբ զգում էր ժպիտը դեմքին այդ ահավոր մարդու մոտենալը և սկսում էր անհանգիստ հաչել։

Այլևս ուժ չունեի այդ վիճակը տանելու։ Ամուսինս ու որդիս կորցրած, զուրկ հարազատներից, փշրված սրտով, հիվանդ

www.a-pdf.com

ու անօգնական, ո՞ւմ էր հարկավոր իմ կյանքը, ինչի՞ համար էի ապրում, նրա համա՞ր, որ ամեն օր անարգանքի ենթարկվեմ, նրա համա՞ր, որ ամեն օր տեսնեմ օտարի կոշիկը մեր սուրբ հողը տրորելիս, նրա համա՞ր, որ տեսնեմ ինչպես են մեռնում Գալինա Իվանովնայի որբացած թոռները... Չէ՛, իմ ապրելն այլևս իզուր է։ Միևնույն է, առողջանամ էլ, կախաղան են բարձրացնելու, նման խոստումները գեստապոյականը ճշտությամբ կատարում է։

Կեսգիշեր էր, որ այս մռայլ մտքերը պատել էին ինձ։ Վեր կացա, հրաժեշտ տվի աշխարհին ու թույնով լի սրվակը դատարկեցի մինչև հատակը...

Սառը քրտինքը պատեց ինձ, սկսվեցին ջղաձգումները։ Մռընչում էի ցավից, գալարվում։ Հանկարծ ներս ընկավ Մուշկան, հարցական նայեց ինձ։ Մոտ կանչեցի, գլուխը շոյեցի ու լալով ասացի.

— Մնաս բարով, իմ խե՜ղճ Մուշկա, ո՞վ պիտի կերակրի քեզ։ Կարծես հասկացավ։ Թաթերը վեր բարձրացրեց, լիզեց ձեռքերս ու այնպես է ծմրում, այնպես է տնքում, կարծես սուր են խրել սիրտը։ Ապա, երբ տեսավ ցավերս սաստկանում են, վազեց միջանցք, դուռը չանգռեց-չկարողացավ բացել։ Ետ եկավ, վազվզեց սենյակում, թռավ լուսամուտի գոգը և բաց օդանցքից ցատկեց, անհետացավ գիշերվա խավարի մեջ։

Մի քանի վայրկյան անց, լսվեց նրա աղմկալի հաչոցը հարևան բակում։ Այնպես էր ոռնում, այնպես հարայ կանչում, այնպես չանգռում փակ դռները, կարծես գիտեր, որ օգնությունն ուշացնել չի կարելի։

Դռներ ճռնչացին, լույսեր երևացին, ոտնաձայներ լսվեցին, և Մուշկան ուրախ հաչոցով ներս ընկավ. կարծես ավետում էր, թե օգնության է գալիս, կարծես ասում էր՝ դիմացի՛ր, Ելենա Նիկոլաևնա, արդեն հարևանները հասան։

Հասան իմ բարի հարևանները, լավ ժամանակին հասան։ Ուժով բացեցին սառչող ծնոտներս, երեք-չորս լիտր կաթ լցրին ստամոքսս, թույնը չեզոքացավ, կյանքս փրկվեց։

Սկզբնական շրջանում խոր անտարբերություն էր եկել վրաս, ափսոսում էի, որ չեմ մեռել։ Հետո գիտակցությունս հաղթեց, միտքս պարզվեց. չէ՛, պիտի ապրել, ապրել վրեժ լու-

www.a-pdf.com

ծելու համար, պիտի ապրել՝ տեսնելու համար մեր սուրբ հողը ազատ։

Եվ իսկապես, շուտով սև օրերն անցան, մեր զորքերը քշեցին զավթիչներին, որոնք այնպես էլ ժամանակ չգտան ինձ կախելու՝ շատ էին շտապում... Ես հավաքեցի իմ ցրված բրիգադը, գործի անցա և գործի մեջ հետզհետե սպիացան իմ հոգու վերքերը...

Ու հիմա մեկ-մեկ հիշում եմ իմ այն ժամանակվա մռայլ մտքերը, իմ փոքրոգի քայլն ու ասում եմ՝ ի՞նչ լավ էր, որ Մուշկան իմաց տվեց հարևաններիս...

Հիմա ձեզ հասկանալի՞ է, թե ինչու եմ այսպես կապված Մուշկային՝ իմ նեղ օրերի հավատարիմ ընկերոջը,— իր պատմությունը վերջացրեց Ելենա Նիկոլաևնան։

1953

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԱՐԱԳԻԼՆԵՐԸ

Երկնասլաց, վառվող մոմերի նման բարդիներ կան Արարատյան դաշտում՝ առուների ու ճամփաների եզրերին, գյուղերի շրջակայքում, յուրաքանչյուր բակում։

Նրանց վրա դեռ հեռվից երևում են արագիլների վիթխարի բները։

Արագածի բարձունքին դեռ ձմեռն է թագավորում, երբ Արարատյան դաշտն են մտնում վերահաս գարնան առաջին համբավաբերները՝ ճերմակ արագիլները։ Գալիս են հեռավոր հարավից, յուրաքանչյուրն անսխալ կերպով իջնում է իր հին բնի վրա ու սկսում նորոգել իր օրրանը։

— Բարի գալո՞ւստ, բարի գալո՞ւստ,— ուրախ ձայն են տալիս հովտի բնակիչները և երկար ճամփին դադրած թռչուններին հյուրասիրում են համեղ պատառներով։

Է՛հ, որ եկավ արագիլը, ուրեմն նրա ետևից էլ գարունը կգա՝ իր ալ ու ալվան ծաղիկներով։ Կգա, նոր հույսեր կբերի իր հետ։ Բնությունը նորից կյանք կառնի, հողը կբեղմնավորվի քրտինքով և նորից առատություն կլինի Արարատյան դաշտում։

Եկա՞վ հին բարեկամը, ուրեմն կլինի երջանկություն և լիություն. արագիլն ուրախություն է բերում իր հետ։

Դարերի խորքն է գնում այն սերտ մտերմությունը, որ

գոյություն ունի Արարատյան աշխարհի հողագործի և այդ թռչունների միջև։ Տրտմում է այն գյուղացին, որի բակը արագիլ չի գալիս. վատ նշան է նրա չգալը, չարագուշակ բան է, երբ նրա բույնը մնում է թափուր, ծեր բարդու վրա։ Ուրեմն, բախտը երես է դարձրել այդ օջախից...

1

Երևանից ոչ հեռու, ուր վերջանում են Դալմայի այգիները, արգավանդ մի տափարակում փռված է Արգավանդ գյուղը՝ նախկին Ջաֆարաբադը։ Այդտեղ ևս սլացիկ ու բարակիրան բարդիներ կան, որոնց վրա բույն են շինում ու ձագ հանում արագիլները։

Հին ժամանակ այդ գյուղում էր, որ տեղի ունեցավ այն զարմանալի, այն հրաշք դեպքը։

...Պառավ Մարանի բակում, բարդու կատարին, իրենց հին բնի վրա նոր-նոր թռչելու վարժություններ էին կատարում արագիլի ճուտերը։ Պառավ Մարանը սրահում, թեժ թոնրի մոտ գրդնակում էր խմորը ու երբեմն էլ խանդաղատանքով նայում մայր արագիլին, որ ծնողի համբերությամբ շարունակում էր ձագերին թռիչք սովորեցնել։

— Աշունքանում է, շուտով կքոչեն,— շշնջում էր ինքն իրեն պառավը։— Ա՛յ տղա, Սուրե՛ն, էս հացիցը տար թող ուտեն...

Եվ կողն այրված մի լավաշ հանելով թոնրից՝ նետեց կատվի հետ խաղացող թոռանը։

— Վայ, քո հոգուն մատաղ, տատ ջան,— կանչեց Սուրիկը և տաք լավաշը ձեռին վազեց դեպի բարդին, կատուն ետևից։ Սուրիկի համար արագիլներին կերակրելուց բարձր հաճույք չկար, ամբողջ գարունն ու ամառը նա իր ամենահամեղ պատառները նրանց էր նվիրել։ Բաց գանգուրները քամուն տալով, ոտաբոբիկ հասավ բարդուն և «ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ» անելով՝ լավաշը կտոր-կտոր արավ, ցրիվ տվեց ծառի տակ. իսկ ինքը հեռու կանգնած մատով սպառնում էր կատվին.

— Ջմոտենաս, թե չէ պոչդ կկտրեմ...

Մայր արագիլը ծառի կատարից ցած իջավ և սկսեց լավաշի կտորներ կրել իր ճուտերի համար։ Այդ ժամանակ հարևանի շունը գողեգող մոտեցավ, որ մի կտոր էլ ինքը փախցնի։ Արագիլը հարվածեց ծեր շանը, թե՝ «Ինչ ես աչքդ տնկել

www.epdf.com

ճուտերին բաժնին»։ Բայց կենդանին այնքան էր զայրակղված թարմ լավաշի հոտով, որ ուշադրություն չդարձրեց, առաջ եկավ և սկսեց հավաքել հացի կտորները։

— Կորի՛ր,— գոչեց Սուրիկը և նետեց ձեռքն ընկած քարը։ Բայց այդ վայրկյանին մայր արագիլը թևերը տարածած վրա հասավ և քարը փոխանակ շանը կպչելու, ջարդեց նրա թևը։ Թռչունը վայր ընկավ և երբ նորից վեր կացավ, աջ թևը քարշ էր գալիս գետնին...

— Վա՜յ, քոռանամ ես, էդ ինչ արիր, այ բեմուրազ,— ճչաց պառավ Մարանը և, լավաշները թողնելով թեժ թոնրի պատերին կպած, խուճապահար հասավ «դեպքի վայրը»։ Իր արածից շշմած տղան դեռ մեխված էր տեղում, իսկ տատը բռնել էր թռչունին և սվսվալով, թոնթոթալով նրա վերքն էր տնտղում։

— Քոռանամ ես, քոռանա՛մ, էս թևով սա ո՞նց է ճամփա գնալու... էս ի՞նչ զուլում էր, որ եկավ իմ օջախի գլխին,— ծնկներին խփելով գանգատվում էր սնահավատ կինը։ Անտեղի չէր նրա ահը. հին ժամանակ մեզ մոտ արագիլի վրա ձեռք բարձրացնելը սրբապղծություն էր համարվում։ «Էն ձեռքը չորանա, որ քար կգցի արագիլի վրա»,— պապերից ու տատերից այդ խոսքն էր լսել Մարանը, դե հիմա ինչպե՞ս աղետ չհամարեր այդ դեպքը։ Եվ Մարանը որոշեց, որ երկնքից պատիժ կգա իր թոռանը, նրա գործած անխղճության համար։

— Ի՞նչ ես փետացել, մի՛ շոր վառիր բեր...

Սուրիկն արագ պատռեց իր հին բլուզի փեշը, վառեց թոնրի կրակով ու վազեց տատի մոտ։

— Հացերը այրվում են,— փնթփնթաց նա։

— Ջհանդամին են վառվում... Վզիցը բռնիր... Դեսը տուր...

Արագիլի ճերմակ թևը կարմրել էր։ Պառավն այրված շորի սև մրճեղը դրեց ջարդվածքի վրա, խմորով պատեց վերքն ու խնամքով փաթաթեց։ Մինչ նա դրաղված էր վիրավորով, այրվող հացերի ծուխը բարձրանում էր թոնրից, լցնում սրահը, իսկ այնտեղից էլ տարածվում բակում, շրջակայքում...

2

Դե եկ մի՛ մորմոքվիր, պառավ Մարան. թևը կապած արագիլը տխուր կանգնած է բակում, իսկ ամուսինը թողել է

ձագերին, ցած իջել և սրտակեղեք կափկափոցով պտտվում է նրա շուրջը, հարդարում նրա փետուրները, կտուցը քսում է կոցին և թվում է սիրո քնքուշ խոսքեր է ասում նրան...

Գնաց պարտեզ, առուն փորփրեց, մի գորտ ճարեց ու բերեց դրեց ընկերուհու բերանը։ Հետո լավաշի կտորներ հավաքեց և դարձյալ մեկ-մեկ նրան հանձնեց։ Իսկ վերևից ճուտերը ցած էին նայում և գործից անտեղյակ աղմկում էին, թե՝ «Ինչ բանի եք, դե ուտելիք բերեք, է՞...»։

Ուտում էր մայր արագիլը իրեն մատուցված պատառները, գոհ էր ամուսնու հոգատարության համար, բայց սրտովը սև արյուն էր գնում. ի՞նչ անի հիմա, ո՞չ ինքը կարող է բարձրանալ իր սիրասուն բալիկների մոտ, ո՞չ էլ նրանք այնքան ամուր թևեր ունեն, որ իջնեն բակ։ Կտուցը վեր տնկած նայում էր բարդու կատարին, ճերմակ թևիկներ էր տեսնում կանաչ սաղարթների միջից ու լուռ մղկտում։

— Ձեռքդ կոտրվի, Սուրի՛կ,— մրմնջում էր պառավ Մարանը։ Ինքն էլ մայր էր, ինքն էլ բալիկներ էր մեծացրել և մորմոքվել նրանց կորստով և այժմ իր մայրական սրտով հասկանում էր մայր թռչունի վիշտը։

Ամուսին արագիլը շատ պտտվեց վիրավորի շուրջը, շատ անգամ նրան խրախուսեց իր հետ բարձրանալ վեր, իրենց ձագերի մոտ, բայց երբ իջավ երեկոն և համոզվեց, որ իր ընկերուհին թռչել չի կարող, ստիպված թռավ բույնը։

Մարանը վիրավոր թռչունին տարավ տուն և մի աման կաթ դրեց նրա առաջ։

Իսկ Սուրիկը վատ քնեց այդ գիշեր. նրա խիղճը տանջում էր։

Այդ դեռ ոչինչ, տղայի իսկական տանջանքներն սկսվեցին հաջորդ օրվանից, երբ նկատեց, որ իր խաղընկերները խուսափում են իրենից։ «Ուղեցել է իրենց արագիլին սպանի»,— ասում էին տղաները՝ մատով Սուրիկին ցույց տալով։ Գյուղի տատերը ներշնչել էին իրենց թոռներին, որ արագիլը սուրբ թռչուն է և նրան խփողը սատանայի սև գործն է կատարում...

www.a-pdf.com

Վիրավոր արագիլը հետզհետե ընտելացավ իր նոր վիճակին. նա հավերի հետ ծանր-ծանր քայլում էր բակում, խլում էր նրանց բաժինը, բայց ուշքը-միտքը բարդու կատարին էր։

...Երկու օր անընդհատ անձրև տեղաց, վիրավորին տնից դուրս չթողեցին։ Եվ նա երկու օր չտեսավ ձագերին։ Երրորդ օրն առավոտյան ծեգին դուռը ծեծեցին։

Պառավ Մարանը քնաթաթախ վեր կացավ և դուռը բացելուց առաջ հարցրեց...

— Սոնա, դո՞ւ ես...

Հարևանուհի Սոնան պատասխանելու փոխարեն նորից թակեց դուռը։

Մարանը բաց արավ և մնաց կարկամած. շեմքին կանգնած էր հայր արագիլը...

— Սրտամե՛ռ, վախեցրի՛ր... Հա՛, տանն է, ներս արի...

Թռչունը ահով ետ-ետ գնաց, բայց մնաց սրահում, մինչև որ Մարանի փեշերի տակով վիրավոր արագիլը դուրս վազեց սրտապատառ...

— Ի՜հ, սատկեք դուք, տես ո՞նց են իրար սիրում,—զգացված ասում էր պառավ Մարանը։

Արագիլ ամուսինները դուրս եկան բակ և իրար հետ քայլում էին լուրջ ու հանդիսավոր,— երևի խորհրդակցում էին ինչ-որ կարևոր բանի մասին։ Իսկ ձագերը բարդու կատարից կախել էին իրենց երկար կտուցներն ու աղմկում էին. երևի բողոքում էին, թե՝ «Սա ինչ բան է, մենք սոված զկոտում ենք, իսկ նրանք իրենց համար հանգիստ զբոսնում են...»։

Ա՜խ, այդ բկլատները, որ տա՜ս-չտաս՝ շարունակ պահանջում են։

Այդպես անցնում էին օրերը դանդաղ ու սրտամաշ։ Թռչունների սովորության համաձայն վիրավոր արագիլը մթնելուն պես խրճիթի մի անկյունում քուն էր մտնում, բայց արթնանում էր շատ վաղ, կտուցով քաշքշում էր պառավի վերմակից և անխոս խնդրում էր իրեն դուրս թողնել։ Դուրս էր գալիս տնից և անձկությամբ ու կարոտով նայում իր բնին...

Այնտեղից, դեռ լույսը նոր բացված, ձագերը խառնիխուռն կափկափյունով ողջունում էին իրենց մորը և հավանաբար իրենց լեզվով խնդրում, որ վեր բարձրանա։ Իսկ ամուսի՞նը։ Խեղճը ամբողջ օրը դես-դեն էր ընկնում ձագերին կեր հասցնե-

www.a-pdf.com

լու համար։ Նրա հոգսը կրկնապատկվել էր, մեն-մենակ այդքանին կերակրե՞լ կլինի... Իսկ սրա՞նց ինչ, պահանջում էին, հա՛ պահանջում։

Ամուսինը երբեմն իջնում էր բակ, ողջագուրում ընկերուհուն, կտուցը կոցին քսում և երևի մխիթարում էր, թե՝ «Ոչի՛նչ, կնիկ ջան, շուտով թեդ կլավանա, մեր բալեքի առաջն ընկած կթռչենք-կգնանք հարավ... Էնքան գորտ կա էնտե՛ղ...»։ Բայց ընկերուհու թախիծը չէր փարատվում. նրան մաշում էր իր ձագերի կարոտը և այն, որ ինքը չի կերակրում նրանց. չէ՞ որ ձագին անձամբ կերակրելը յուրաքանչյուր մայր արարածի հիմնական բնազդն է։ Սրտնեղում էր նա իր վիճակից, ոստնում էր, թափահարում իրեն, որ վեր բարձրանա, բայց վիրավոր թևը չէր օգնում, և շարունակում էր մելամաղձոտ ու մտամոլոր դեգերել ծառի տակ, ձագերի կարոտը սրտում։

...Բարդու կանաչ տերևների վրա դեղին խալեր երևացին, գիշերներն սկսեց ցրտել։ Մայր արագիլը դրանից ավելի մռայլվեց. իր բնազդով նա զգում էր աշնան մոտենալը։ Ինչ պիտի անի ինքը, ջարդված թևով ինչպե՞ս պիտի չվի հարավ։ Թե՞ մնալու է մեն-մենակ, օտարության մեջ, իր բալիկներից հեռու... Երևի այդ բնազդն էր, որ հանգիստ չէր տալիս թռչունին. նա դժկամությամբ էր ընդունում սնունդը, քուն ու դադար չուներ։

Բայց այդ օրերին ուրախությունը հանկարծ այցի եկավ նրան. մի առավոտ հայր արագիլը իր ձագերի գլուխն անցած պտույտ գործեց գյուղի վրա և իջավ բակը։ Իրենց հոր հետ իջան և ձագերը, արդեն հասուն, խոշոր, գեղեցիկ, ամրացած ու երկար թևերով...

Ի՜նչ սրտաճմլիկ տեսարան էր. ձագերը շրջապատել էին իրենց մորը, կտուցները քսում էին նրա փետուրներին ու մեղմ կափկափելով իրենց սերն արտահայտում։ Պառավ Մարանը սրահում կանգնած, գոգնոցով սրբում էր թոնրի ծխից կարմրած աչքերն ու ինքն իրեն քրթմնջում.

— Ի՜հ, սատկեք դուք, տես ո՞նց են շուլալվում իրենց մորը...

Եվ այն, որ այդ թռչունի ձագերը սիրում էին իրենց մորը, պառավ Մարանի սիրտը լցնում էր գոհունակությամբ, այո՛, աՀեն ձագ պետք է սիրի ու խնամի իր ծնողին։

Ձագերն իրենց մեծ-մեծ կտուցները մեկնած, սովորության

www.a-pdf.com

համաձայն, ուտելիք էին խնդրում մորից. երևի գլխի չէին, որ հիվանդ է, մոռացել էին, որ այսուհետև իրենք պետք է իրենց համար կեր հայթայթեն, հո առաջվա պես փոքր չեն։ Մարանը մի տաշտ լիքը հացի կտորտանքներ և «կուտ արած» բոքոններ դրեց բակի մեջտեղը։

— Թող բարեկենդան անեն... Թող վերջին անգամ հաց ուտեն իրենց մոր հետ,— զգացված մրմնջում էր բարի պառավը։

Իրոք վերջին անգամ... Մի քանի օրից հետո սկսվեց արագիլների չուն դեպի տաք երկրներ։ Հայր արագիլը ամբողջ օրն զբաղված էր ձագերի վարժություններով և այլևս ժամանակ չէր գտնում ընկերուհուն այցելելու։

Միայն չվելու օրը ձագերի հետ նա իջավ ծառի տակ, պտտվեց ընկերուհու շուրջը, ինչ-որ բաներ ասաց նրան։ Սա վեր ցատկեց, թրթռաց օդում և վայր ընկավ հուսահատ։ Թերը գեռ չէր առողջացել և պարզ էր, որ պիտի բաժանվեր իր հարազատներից։

Եվ նրանք բաժանվեցին։ Հոր հրամանով ձագերը օդ բարձրացան և կանոնավոր շարք կազմեցին նրա ետևից։ Մայր արագիլը սրտակոտոր ճիչերով վազեց, ոստոստնեց, թռչելու ապարդյուն փորձեր արավ։

Հարազատները հեռացան դեպի երկնի լազուրը, ապա ետ եկան, պտույտ տվին բակի վրա ու ձգվեցին դեպի Արարատի առկայծող ձյունները, այնտեղից էլ թեքվեցին ձախ և Արաքսի ջրերն իրենց ուղեցույց արած, նրա հոսանքով չվեցին դեպի Իրան։ Գնացին և իրենց հետ տարան վիրավոր թռչունի սիրտը...

Հաջորդ գարնանը ամուսինը երևի ետ կգա, այո կգա, եթե կենդանի մնա, բայց ձագերին այլևս չի տեսնելու։ Նրանք գարնանը զույգեր կկազմեն ուրիշ ջահելների հետ և յուրաքանչյուրն իր բույնը կկառուցի հեռու, մի ա՛յլ գյուղում, ա՛յլ ծառի վրա և կապրի ծնողներից անկախ, ինքնուրույն կյանքով։

Երանի՜ ամուսնուն, որ տաք ծովի տաք ափերին մինչև գարուն անց է կացնելու իր բալիկների հետ։ Երանի՜ նրա աչքերին...

4

Զրկված ամուսնուց, զրկված ձագերից, մայր արագիլը միայնակ ու տխուր շրջում էր բակում։ Դեղին տերևները բար-

www.a-pdf.com

դու կատարից սվսվալով թափվում էին նրա վրա ու բույնը մերկանում էր...

Ո՞ւր գնացին, նորից ետ կգա՞ն, նորից կտեսնի՞ իր հարազատներին...

Երկար տևեց Արարատյան դաշտի աշունը, անվերջանալի երկար։ Գոնե շուտ գար ձմեռը, չէ՞ որ ձմռանը գարունն է հաջորդում։ Իսկ գարնանը կգա նա, իր ամուսինը... Ձագերը գուցե իրեն տեսության չգան, բայց նա անպայման կգա։ Հո չի՞ լքի իրեն... Ինչո՞ւ պիտի լքի, քանի՞-քանի անգամ նրանք միասին հարավից եկել-իջել են իրենց բնում, քանի՞-քանի անգամ ձագ են հանել միասին, կերակրել-մեծացրել, ինչու չպիտի գա որ։ Հո ուրիշ ամուսին չի՞ վերցնի իրեն... Չէ՞, այդ բանը արագիլների մեջ ընդունված չէ...

Ձմեռը վիրավորին տանը պահեցին։ Սուրիկն իր մեղքը քավելու համար այնպիսի հոգատարությամբ էր խնամում վիրավոր թռչունին, որ սա շուտով կապվեց հետը և ուր գնար իր անճոռնի քայլվածքով հետևում էր տղային. մոռացել էր, որ նա է իր բոլոր դժբախտությունների պատճառը։

Իսկ պառավ Մարանը ամեն առավոտ հարցնում էր թռչունին.

— Այ թևակոտոր սևավոր, բա ե՞րբ է թևդ լավանալու։

Այդպես էլ արագիլի անունը Թևակոտոր մնաց։ Մարանը խունկի, մոմի և չորացրած ծաղիկների խառնուրդից բուժիչ սպեղանի էր պատրաստում, կամ հեքիմներից բալզամ էր բերում, դնում թռչունի վերքին, փաթաթում, կերակրում ու խնամում իր թոռանը հավասար։ Դրա շնորհիվ թևը բոլորովին առողջացավ և փետրվարի վերջերին, մի արևոտ օր արագիլը թռավ-բարձրացավ իր բույնը և մեկ ոտքի վրա երկար ու մտախոհ կանգնեց այնտեղ։ Պետք է կարծել, որ երջանիկ պահ էր դա իր կյանքում. հիմա կարող էր նա թռչել-գնալ կեր փնտրելու, իսկ աշունը երամների հետ նույնիսկ չվել դեպի հարավ։ Այո՛, երջանիկ էր, բայց և տխուր. կարոտած սրտով ամուսնուն էր սպասում, գարնան մոտիկությունը առաջ էր բերել նրա մեջ քնքուշ զգացմունքներ...

Սուրիկն էլի գլխարաց ու ոտաբոբիկ վազվզում էր բակում, կամ ջրաղաց կառուցում հալոցքից պղտորված առվի վրա, նրա մանկական հոգին այժմ թեթևացել էր։

Մի օր էլ նա ճչալով տուն ընկավ.

www.a-pdf.com

— Տատի, եկա՞ն, եկա՞ն...

— Ո՞վ եկավ, այ տղա...

— Արագիլնե՛րը...

Պառավը տնից դուրս եկավ այն պահին, երբ երկու արագիլ՝ մեկը շատ խոշոր, մյուսը՝ փոքր ու գողտրիկ, իջան ծեր բարդենու կատարին, Թևակոտորի մոտ։ Այն մեկը ամուսինն է, պարզ է, ահա գլխի ծանոթ նշանը, իսկ այն ջահե՞լը...

Պառավը գլխի ընկավ և շանգռեց իր դեմքը.

— Վո՛ւյ, սև կապես դու, թաղա կնիկ է բերել հետը...

Սուրիկը զարմացած նայում էր իր տատի կերպարանափոխությանն ու երեխավարի մտածում էր. «Է՛հ, ավելի լավ չի՞, հիմի երեք արագիլ կունենանք...»։

Իսկ ինչպե՞ս ընդունեց Թևակոտորը իր հյուրերին։ Պիտի կարծել, որ զարնվեց սրտից։ Մի պահ շշմեց ու լուռ մտածեց, ապա առանց դավաճան ամուսնու դեմքին նայելու, սկսեց կոցահարել քշել իր ջահել ախոյանին։

Հարվածում էր նա անկոչ հյուրի գլխին և կարծես ասում էր ցասկոտ.

— Կորի՛ր, անզգա՛մ, կորի՛ր իմ բնից, թե չէ հիմա աչքերդ կհանեմ...

Բայց «անզգամը» բոլորովին միտք չուներ զիջելու իր իրավունքները. նա պաշտպանվում էր, հարվածին պատասխանում նույնպիսի հարվածով և հավանաբար, ասում էր վրդովված.

— Ես իմ ամուսնու հետ իր տունն եմ եկել, դո՞ւ ով ես, քեզ չեմ ճանաչում...

Երևի ամուսինը խորամանկորեն լռել էր այն մասին, թե հեռո՞ւ, Արարատյան աշխարհի մի գյուղում թևից վիրավորված կին ունի... Չէր ասել այդ մասին. երևի կարծել էր, որ ընկերուհին մեռած կլինի ստացած վերքից կամ չի դիմանա մեր լեռնային երկրի դաժան ձմռանը։ Այլապես կյանքը չէր կապի ուրիշի հետ, որքան էլ սա ջահել լիներ և հմայիչ։

Եվ հիմա անակնկալի եկած մնացել էր շիվար։ Ո՞նց թե իր «պառավը» կենդանի՞ է... Ի՞նչ անի հիմա, ո՞ւմ կողմն անցնի, իր հին ընկերուհո՞ւ, իր ձագերի մո՞ր, թե ջահել սիրուհու կողմը...

Մինչ նա մնացել էր մոլորված, կռվողները ցած թռան ծառից և շարունակեցին իրենց «պատերազմը» բակում։ Այստեղ ընդարձակ էր, կարելի էր և՛ զրոհել, և՛ պաշտպանվել։

Ծառից իջավ և շշմած ու «անհարմարությունից քրտնած»

www.a-pdf.com

ամուսինը.— ի՞նչ հիմար բան ստացվեց,— մտածում էր նա։ Մի կողմ կանգնած չէր խառնվում կռվին։ Չէին խառնվում և տեղերում զարմանքից քարացած տատն ու թոռը։ Բայց պառավ Մարանի համակրանքը, իհարկե, Թևակոտորի կողմն էր։ Նա դաղված էր ծեր արագիլի արարքից։ Ուստի հետզհետե դուրս եկավ շղմած վիճակից ու, ոսկրոտ ձեռքերն օդում շարժելով, սկսեց.— կարծես կռիվ էր անում հարևանուհու հետ.

— Տո՛ւր, տուր էդ լրբին... Ո՞նց էլ անամոթը եկել է ուրիշի մարդին տիրացել, է...

Եվ կարծես նրա համակրանքից ու խրախուսանքից քաջալերված, Թևակոտորն սկսեց հաղթել իր ջահել հակառակորդին։ Խանդից ու վրդովմունքից կուրացած, նա պոկոտում էր իր ախոյանի փետուրներն ու ցրում բակով մեկ։

Այդ որ տեսավ ծեր «կավալերը», առաջ եկավ, մոտեցավ կռվողներին։ Թևակոտորը ամուսնու ներկայությունից թև առավ. այո՛, ինքն է տերը իր հին օջախի, օրինավոր ամուսինն ինքն է և ոչ թե այն աներեսը... Ինքը թիկունք ունի սարի նման...

Արհամարհանքով նայեց իր ամուսնու գզգզված սիրուհուն, նայեց հաղթողի գոհունակությամբ։ Սիրտը հովացավ ու գոհ էր և պառավ Մարանը։

— Աչքդ հանե՞ց, դե գնա՛,— ասում էր նա հանգստացած։ Իսկ այն ջահել թռչունը կծկված ու անարգված քաշվել էր բակի անկյունը, այնտեղից խեղճ-խեղճ նայում էր ամուսնուն և հավանաբար ասում էր լալով.

— Սրա՞ համար բերիր ինձ... Սրա՞ համար էիր մեծ-մեծ խոստումներ անում...

Բայց այդ ժամանակ կատարվեց անսպասելին. ամուսինը մոտեցավ Թևակոտորին և գուրգուրելու փոխարեն, կտուցով ծանր հարվածներ հասցրեց նրա գլխին...

Սա անակնկալի եկավ, զարմացավ՝ «Ո՞նց թե, ի՞նձ... Քո որդիների մո՞րը... Քո դառն օրերի ընկերուհո՞ւն...»։ Ապա հուսահատ ճիչ արձակեց և ցամուսով բռնված վազեց դեպի սրահի կենտրոնում բոցավառվող թոնիրը։ Այնպես վազեց, որ այլևս ոչ մի ուժ չէր կարող կանգնեցնել նրան։ Հասավ և առանց վարանելու նետվեց շեկ բոցերի մեջ...

— Ամա՜ն, էս ինչ զուլում էր, ամա՜ն...— մազերը պոկելով առաջ վազեց ծեր Մարանը, բայց արդեն ուշ էր. այրվող թռչունի փետուրները ճախրում էին մրոտ առաստաղի տակ...

1955

www.a-pdf.com

ՄԱՐՏԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

www.a-pdf.com

ԱՆՁՆՈՒՐԱՑ ՄԱՐԴԻԿ

Ես նստած եմ վիրավոր մայորի մահճակալի մոտ։ Գունատ և լայն ճակատով, խորունկ ու կապույտ աչքերով մի զինվորական է նա։

Պատերազմից առաջ միասին վարագի որսի ենք գնացել Արաքսի եղեգնուտները։ Իր անմիջական բնավորության շնորհիվ մենք շուտ մտերմացանք և որոշել էինք միասին Մուղանի դաշտը ջեյրանի որսի գնալ, բայց անիծված պատերազմը վրա հասավ, և ամեն ինչ շուռ եկավ։

Այժմ նա պառկած է խոնավ գետնատնակում. ռումբի բեկորը ջարդել է աջ ազդրը։

Ցուրտ հյուսիսում մենք երազում էինք հարավի արևը, Արաքսի բարեհամբույր ափերը, Արարատյան դաշտի նարնջագույն աշունն էինք երազում...

— Ա՜խ, մի շուտ վերջանար այս անիծված պատերազմը, նորից որսի գնայի՜նք,— աչքերը հառած առաստաղին՝ ինքնամոռացության մեջ խոսում էր վիրավորը։— Ի՜նչ արև է հիմա Մուղանո՜ւմ... Հիմի նորածին գառները խաղում են վրաններերի մոտ...

Ու մենք՝ երկու որսորդներ, գետնատնակում նստած խոսում էինք աշխարհի բոլոր որսորդների ամենասիրելի նյութից՝ որսորդությունից ու քաջությունից։

Ինչ վերաբերում է որսին, ես հասկանում եմ մայորին, նա իմ սրտից է խոսում։ Բայց ահա, իմ կարծիքով, մայոր Կոնդրատևը տարօրինակ հասկացողություններ ունի քաջության մասին։ Նրա գնդի հետախույզներից մեկը հանկարծ պատահում է թշնամու մեծ խմբի։ Թիկունքում բաց դաշտն է, առջևը՝ ավին-

www.a-pdf.com

ների անտառը։ Նահանջելու, թաքնվելու տեղ չկա։ Ու զինվորը գործի է դնում իր ավտոմատը։

— Մի քանի րոպեում այդ տղան մի քանի տասնյակ դիակ փռեց,— ասաց մայորը։— Բայց, այնուամենայնիվ, ես դա մեծ քաջություն չեմ համարում։ Նու, թերևս դա քաջություն է, բայց դեռ անձնազոհություն չէ, լիակատար, իմ հասկացած իմաստով անձնազոհություն,— ավելացրեց նա՝ հարցական նայելով իմ զարմացած դեմքին։— Ես իսկական հերոսություն ա՛յն եմ համարում, երբ կարող ես քեզ փրկել, բայց գիտակցաբար դեպի մահ ես գնում՝ ընկերներիդ կյանքը փրկելու համար։ Իսկ Անատոլի Մակարովը՝ իմ մանկության ընկերը, տվեց հենց այդպիսի՛ հերոսության, ես կասեի ամենաբարձր օրինակը. նա խընդրեց իրեն ոչնչացնել թնդանոթի արկով։

Այո՛, եղավ մի պահ, երբ ծանր դրությունից դուրս գալու համար մենք մեր ձեռքով պիտի խփենք մեր ընկերոջը և այն էլ իր խնդրանքով,— ահա որն է իմ հասկացած անձնազոհությունը։

Ես տարակուսանքով ուսերս թոթվեցի։

— Դե, դուք ծանոթ չեք այդ մարտում ստեղծված անակընկալներին։ Լսեցե՛ք պատմեմ։

Եվ հրետանային դիվիզիոնի հրամանատար մայոր Կոնդրատևը հետևյալ դեպքը պատմեց.

— Թշնամին մի տեղ խիստ ամրացել էր, և երկու օր էր չէինք կարողանում դուրս քշել դիրքերից։ Թարմ ուժեր ստանալով, նա սկսեց կատաղի գրոհները։ Մենք թնդանոթներից կրակ բաց արինք, ջարդեցինք-վառեցինք տանկերը և նրանցով փակեցինք թշնամու տանկային ջոկատի առաջխաղացումը։ Բայց հակառակորդի ավտոմատավորները շարունակեցին առաջանալ։

Իմ ընկեր Անատոլին այդ պահին մի խումբ մարտիկների հետ մեր և թշնամու միջև ընկած բլրի գագաթին քողարկված՝ դիտումներ էր կատարում և նշաններով ու հեռախոսով ուղղություն էր տալիս մեր հրետանու կրակին։

Հակառակորդի մի բազմություն մոտակա ձորակից դուրս եկավ և գրոհեց այդ բլուրը։ Սկսվեց անհավասար կռիվը մի բուռ շրջապատված մարդկանց և մի ամբողջ հորդայի միջև։ Նայում եմ հեռադիտակով ու հիանում այդ խիզախների կռվով։ Բայց և սիրտս ճմլվում է, գիտեմ, որ կոշնչանան մինչև վերջին մարդը։

www.a-pdf.com

Վերջին պահն է, ահա Անատոլին դրոշակներով ինձ նշան տվեց հրետանային կրակ բացել այն բլրի վրա, ուր ինքն է... Այո՛, մի՛ զարմանաք, նա խնդրեց գնդակոծել բլուրը։

Ես շշմած էի և մի պահ չէի կարողանում կողմնորոշվել։ Դիտակետից նա ինձ հեռախոսի մոտ կանչեց։ «Լսի՛ր, Սեմյո՛ն, անմիջապես կրակ բաց արա, հասկանում ե՞ս, թող նշան բռնեն բլրի բարձունքին...»,— լսեցի նրա տագնապալի ձայնը։

«— Դու խելագարվե՞լ ես, Անատոլի՛»,— գոչեցի ես փողի մեջ։

«— Հասկացի՛ր, որ բլուրը տալ չի կարելի... Ճակատամասը պատռվում է... Ճակատամասը պատռվում է... Բլուրը տալ չի կարելի... Բլրի լանջին զորքը պիտի բնաջնջես քո արկերով, հասկանո՞ւմ ես»,— գոռում է նա, և ես հեռախոսով լսում եմ նրա մոտ պայթող նռնակների ձայնը։

«— Կբնաջնջեմ, Անատոլի՛, իսկ դո՞ւ...»։

«— Ե՞ս, ե՞ս... ես էլ հետները...»,— եղավ անհողդողդ պատասխանը։

Լսափողը դողաց ափիս մեջ, ականջներս խշշացին։ Ախր Անատոլի՛ն, իմ մանկության ընկեր Անատոլի՛ն... Ես ինչպե՞ս կրակեմ նրա վրա, ախր դրա համար երկաթե սիրտ պետք է ունենալ։

Նայում եմ հեռադիտակով։ Թեժ կռիվը շարունակվում է ողջ գումարտակի և մի բուռ խիզախների միջև։ Անատոլին նետում է նռնակները ու ատեպ-ատեպ մեր հրետանու կողմն է նայում։

Բլուրը իշխում է շրջակայքին, բլուրը տալ չի կարելի... Անատոլին իրավացի է... Բայց ինչպե՞ս սպանեմ ես նրան...

Ահա նա նորից պառկեց ու վերցրեց հեռախոսի փողը։ Ջանգահարում է.

«— Լսի՛ր, թուլամո՛րթ, ի՞նչ քնքշությունների ժամանակ է,— գոռաց նա լսափողի մեջ։— Քեզ համար ո՞րն է թանկ, ե՞ս, թե՞ հայրենիքը...»։

Նրա հարցը մուրճի նման իջավ սրտիս։ Ես սթափվեցի։

«— Հայրենի՛քը, Անատոլի՛, հայրենի՛քը»,— գոչեցի ես, և առանց լսափողը ցած դնելու հրամայեցի իմ զորքին։

«Հանուն հայրենիքի՛, բոլոր հրանոթներից գնդակոծել բլուրը»։

www.a-pdf.com

Եվ իմ դիվիզիոնի հրանոթները իրենց երախները բլրի կողմն ուղղեցին։

«Շնորհակա՛լ եմ, Սեմյոն»,— լսվեց Անատոլիի ձայնը։

— «Գնաս բարի... համբուրում եմ քեզ, հարազա՛տս, ներ-քի՛ր...»,— հազիվ ասացի ես արցունքի միջից ու ցած դնելով հեռախոսի փողը՝ սկսեցի վարել կրակը։

Թնդանոթները որոտացին ահագնորեն, առաջին արկերը ձյան ու հողի ամպեր բարձրացրին բլրի վրա։ Իմ ընկեր Անատոլի Մակարովը ծածկվեց աչքիցս...

Սիրտս կտրտվում է ներքին պայքարից. իմ թնդանոթների ուժգին հարվածներից քարս ու խուճապ է սկսվել թշնամու գումարտակի շարքերում, բլրի վրա թուփ, քար, հող, մարդ իրար են խառնվել արկերի պայթյուններից։

Պաշտպանության գծի ճեղքումը կանխվեց։ Բայց... Անատոլի՞ն, իմ սիրելի, իմ սրտակից ընկեր Անատոլին... Ի՞նչ պատասխան տամ նրա երեխաներին, ի՞նչ ասեմ նրա դեռատի կնոջը՝ Լյուբային։ Ի՞նչ պատասխան տամ ծերացած մորը, որ գընացք նստելիս ճակատս համբուրեց ու արցունքներն աչքերին պատվիրեց՝ «Սեմյո՛ն, թանկագինս, լավ նայիր իմ մինուճարին»։ Լա՛վ եմ նայում, խոսք չկա, սատանան տանի ինձ...

Թնդանոթային համազարկերից երկիրը ցնցվում է, բլուրը կորել է ծխի ու ձյան փոշու մեջ։ Ի՞նչ է կատարվում այնտեղ...

Այլևս ոչինչ չեմ տեսնում, ոչինչ չեմ զգում։ Գլուխս, ղրժժացող գլուխս առել եմ ափերիս մեջ ու նստել կոճղի վրա։ Աչքերս փակ են, աչքիս առաջ Անատոլին է համբուրվում Լյուբայի հետ, երեխաների հետ։ Հիմա գնացքը կշարժվի... Փոքրիկ, երկնագույն աչքերով աղջիկը հոր վզից կախված աղերսում է. «Պապա՛, շուտ կգաս, չէ՞... Շո՛ւտ եկ, թե չէ կխռովեմ քեզանից, ա՞յ...»։ Ո՛հ, ինչ ծանր է, սատանան տանի, ինչո՞ւ հատկապես բաժանման այդ պահն է մնացել հիշողության մեջ...

Թնդանոթների որոտը դադարեց։ Մեկը առաջս կանգնած զեկուցում է.

— Ընկեր մայոր, ձեր հրամանը կատարված է, թշնամու գումարտակը ոչնչացված է։

Ես սթափվեցի։

— Ոչ ոք կենդանի չմնա՞ց բլրի վրա,— հարցրի ես վերդովված։

www.a-pdf.com

— Ոչ, ընկեր մայոր...

Եվ զարմանում է, որ ես ալեկոծված եմ, չեմ գովում։

Մշուշն անցավ, ես նայեցի հեռադիտակով՝ իրոք բլրի վրա կենդանություն չկա...

Մեր զորամասը գրոհի անցավ։ Հրետանին հետևեց առաջխաղացող զորքին։ Բլրի մոտով անցնելիս, ես տեսա այն մեծ ավերմունքը, որ կատարել էին իմ թնդանոթները։

Ե՛վ հաղթական, և՛ փշրված սրտով անցնում եմ ստորոտով։ Չէ, պետք է Անատոլիին հրաժեշտ տալ։

Բարձրացա բլուրը։ Այնտեղ, ուր քիչ առաջ դիտակետն էր, այժմ արկերի քանդած փոսեր են, թմբեր, հող, ձյուն, արմատահան եղած մացառներ, մարդկանց մարմնի մասեր...

Ես գլխարկս հանեցի իմ մանկության ընկեր Անատոլիի պատվին։ Սիրտս լիքն էր, բայց արցունք չկար։

Այդ պահին կարծես երկրի խորքից թույլ նվվոց լսեցի։ Քիչ առաջ գնացի՝ ահա հողով ծածկված մի մարմին, միայն ոտքերն են երևում։ Շարժում է ոտքերը ու խուլ տնքոցներ արձակում։

Ջինվորներս հողը ետ տվին։ Ես մի պահ քարացա, ապա սիրտս թնդաց ուրախությունից։ Իմ ընկեր Անատոլի՞ն, իսկ և իսկ նա, հրաշքով կենդանի է մնացել...

Նախապաշարմունք չհամարեք. ինձ թվում է, որ այդ անհման մարդուն իր մեծ սիրտը փրկեց, հայրենիքի սիրով լցված սիրտը...

— Ահա, բարեկա՛մս, ահա թե ո՞րն է իսկական հերոսությունը,— վերջացրեց իր պատմությունը մայորը ու սկսեց ծխել։ Հուզված էր։

— Բայց դուք ավելի՛ մեծ հերոս եք, մայո՛ր,— ոգևորված բացականչեցի ես ու վեր կացա։

Վիրավորի աչքերը շողում էին հանդարտիկ փայլով։ Ակնարկս հասկացել էր...

Այո՛, մեծ սիրտ պիտի ունենալ մտերիմ ընկերոջ վրա կրակելու համար, հայրենիքի համար տրոփող սիրտ։

1942

Ռազմաճակատ

www.a-pdf.com

ՇԱՌԱՏԸ

1

Մեր զորամասում էր նաև հրամանատար Արամ Մկրտչյանը։ Նա տեղացի էր, իսկ բնակարանը, ուր կինն ու երեխան էին ապրում, հեռու չէր զորանոցից։

Արամի Շառատ ձին տիրոջ ընտանիքի հետ այնպիսի սիրով էր կապված, որ երբ զորքը գնում էր Արագածի լանջերը զորաշարժի, ձին կարոտից տրտմում էր ու հաճախ դունչը մեկնում դեպի դաշտը, ուր քաղաքն էր երևում հեռվից, և խրխնջում էր սրտակտուր։ Արամը գիտեր, որ ձին ամենից շատ կարոտում է որդուն՝ երեք տարեկան Վաշիկին։

Եվ նա շոյում էր կենդանու աչքերն ու մեղմ ասում.

— Շուտով, շուտով պարապմունքը կվերջանա, կգնանք տուն, Վաշիկի մոտ։

Ձին սիրած անունը լսելով, տիրոջն այնպես էր նայում իր խելոք, արտահայտիչ աչքերով, որ թվում էր, թե հիմա կխոսի հետը։

Իսկ երբ զորքը լեռներից դաշտ էր իջնում, Շառատը անհամբերությունից դոփում էր գետինն ու ձգտում բոպե առաջ հասնել տուն։

Ձիերին տանում էին գոմ, տեղավորում, հանգիստ տալիս։ Բայց Շառատի ուշքն ու միտքը դեպի դուռն էր։ Գարին ախորժակով չէր ուտում, խրխնջում էր անհանգիստ։ Այն ժամանակ տերը արձակում էր նրա կապը և առաջնորդում դեպի տուն։

Ի՜նչ հրճվանք էր շողում կենդանու խելոք աչքերում, երբ շեմքին երևում էր փոքրիկ Վաշիկը՝ շաքարի կտորը ձեռքին։ Իր ուրախությունը Շառատն արտահայտում էր աղմկալի խրխնջոցով ու ետևի ոտքերի վրա կանգնելով։ Այդպես, երկու ոտքի վրա կանգնած, նա առաջին աջ ոտքով ծիծաղելի շարժումներ էր անում. իր խելքով, շաքար էր խնդրում։

Ապա անուշ պատառն ուտելուց հետո տղային դեմ էր անում իր աղեղնաձև ու ողորկ վիզը։ Երեխան իր թաթիկներով շոյում էր Շառատին, իսկ Վաշիկի մայրը շեմքում կանգնած նայում էր կենդանու խելոք աչքերին ու սիրտը մղկտում էր։ «Ո՜նց եմ ես սրանց բաժանելու իրարից...»,— մտածում էր

նա. ամուսինը զորամասի հետ շուտով ռազմաճակատ էր մեկնելու։

Աշնանամուտին լեռներից հանկարծ ցուրտ քամիներ խուժեցին դաշտը, և Վաչիկը հիվանդացավ։ Նա այլևս չէր կարողանում շեմք դուրս գալ և դիմավորել իր սիրելի Շառատին։

Ձին ախորժակը կորցրել էր, իր տերերի տխուր դեմքերից ղգում էր, որ ինչ-որ վատ բան է պատահել Վաչիկի հետ։ Դռանը խրխնջում էր աղիողորմ, բայց ոչ ձիուն կարելի էր սենյակ մտցնել, ոչ էլ ջերմության մեջ վառվող երեխային դուրս տանել։

— Տար Շառատի մոտ, մա՛մ,— խնդրում էր երեխան՝ ձիու խրխինջը լսելով։

Մայրը ստիպված եղավ հիվանդին փաթաթել վերմակի մեջ և տանել լուսամուտի մոտ։

Ձին, տեսնելով երեխային, բարձր վրնջաց, իսկ երեխան մոր գրկից բազուկներն էր մեկնում դեպի նա։

Ութ-տասը սրտամաշ օրեր անցան, մինչև որ Վաչիկը առողջացավ և տնից դուրս եկավ։ Նրան բազմեցրել էին Շառատի վրա, և ձին քայլում էր երջանիկ ու հպարտ, թանկագին բեռը մեջքին։

Մի օր մի զարմանալի դեպք կատարվեց։ Վաչիկը հոր հետ մտել էր գոմը և շոյում էր Շառատի վիզը, իսկ ձին գարի էր ուտում։ Հայրը ինչ-որ գործով գնաց։ Այդ պահին գոմի մյուս ծայրից կապը կտրեց Շառատի հակառակորդ Սևուկը և հարձակվեց նրա վրա։ Շառատը իր ետևը հակառակորդի կողմն արավ, որ հարվածի, բայց տեսնելով տղային իր ոտքերի մոտ, իսկույն փոխեց մտադրությունը, իր ատամներով բռնեց երեխայի շորից, բարձրացրեց դրեց մսուրի մեջ, որից հետո միայն սկսեց իր կռիվը հակառակորդի դեմ։

Հայրը, որ այդ պահին դուռը բացել ու դեպի կռվողներն էր շտապում, տեսավ ձիու այդ արարքը և զարմանքից մնաց քարացած։

2

Հազար ինը հարյուր քառասուներկու թվականի դեկտեմբերի երկուսին մեր դիվիզիայի գույքը, զենքը, մարդիկ, ձիերը բարձեցին գնացքները, դիվիզիան մեկնում էր ռազմաճակատ։ Կայարանում մենք ներկա եղանք այսպիսի սրտաշարժ տեսա-

www.a-pdf.com

բանի։ Կանգնած էր Վաշիկը մոր փեշից բռնած, Արամը արտաքուստ հանգիստ սիրտ էր տալիս կնոջը, իսկ ապրանքատար վագոնի բաց պատուհանից Շառատը գլուխը դուրս էր հանել ու խրխնջում էր լալագին...

Շատ ժողովուրդ էր եկել մեզ ճանապարհ դնելու, ամեն մեկս մեր հարազատներն ունեինք, ամեն մեկս ջերմ սիրող սրտեր ուներ։ Բայց բաժանման այդ ծանր պահին էլ ես չկարողացա զսպել իմ հետաքրքրությունը և մոտեցա Շառատին. նրա խելոք աչքերից գլորվում էին ջինջ արցունքները...

Էշելոնը շարժվեց, կառամատույցի վրա անհաշիվ գլխարկներ ու թաշկինակներ թափահարվեցին, և մենք մեկնեցինք ապագաճակատ՝ Շառատն էլ մեզ հետ։

Վաշիկն իր թաթիկն օդում շարժելով բարի ճանապարհ էր ասում հորը, իսկ մյուս ձեռքի ափով արցունքն էր սրբում։

3

Կուվի մեջ մենք կորցրինք Արամ Մկրտչյանին և իր Շառատին։

Ի՞նչ վտանգներ ասես, որ չեն պատահում հետախույզին։ Իմ ընկեր Արամը չէր հաջողեցրել անվնաս անցնել այդ վտանգներից, և ես նրան պատահեցի Կրասնոդարի մարզի Դերբենտակայա փոքրիկ գյուղում։ Պառկած էր դաշտային հոսպիտալում, ապաքինվում էր վերքերից ծանր ու դանդաղ։

— Իսկ ո՞ւր է Շառատը,— հարցրի ես։

Վիրավորի աչքերը լցվեցին ջերմ գգվանքով։

— Շառա՜տը։ Շառա՜տը փրկեց ինձ,— դանդաղ ասաց նա։— Գիշերը թշնամուց «լեզու» փախցրինք, բայց ծուղակն ընկանք։ Երեք կողմից գրոհեցին մեզ վրա, ես կրծքից խփված թամբից ցած ընկա։ Այն ժամանակ զգացի, որ մեկը իմ թիկունքից վեր բարձրացրեց ու գցեց ձիուս մեջքին։ Շառատն էր... Այդպես, մեջքին խուրջինի նման երկու տակ կախված, նա ինձ դուրս է հանում կրակի տակից ու հասցնում մեր սանիտարներին։

Ապա քիչ լռելուց հետո ավելացրեց.

— Գիտե՞ս քանի անգամ է փրկել կյանքս։ Հետախուզության ժամանակ պատահում ես թշնամուն բաց դաշտում, դիրք մտնելու տեղ չկա, իսկ գնդակները վզվզում են։ Մեկ էլ տեսար

www.apdf.com

Շառատը մեկնվեց գեներալին (ես այդպես էի վարժեցրել նրան) և ահա քեզ համար դիրքը պատրաստ է. պառկիր ետևը, ավտոմատդ դիր փորին ու կրակիր... Մի անգամ էլ գնդակը խրվեց նրա մեջքն ու դուրս գալով՝ մտավ իմ լանջի շորերի մեջ. ձին չլիներ, թոքերս ցրիվ էր տալու... Խե՜ղճ Շառատ, իր արյունով փրկեց կյանքս։ Ու ինչքա՜ն տանջվեց, մինչև որ զորամասի անասնաբույժը առողջացրեց նրա վերքը...

Պատահում էր, հոգնած ու ջարդված մի փոսում թաքնվում էի ու ննջում, իսկ Շառատը թփերի մեջ քողարկված հսկում էր ինձ։ Մի կասկածելի խշրտոց, վտանգ գուժող մի հոտ, և նա առանց ձայն հանելու մոտենում էր ինձ, դնչով հրում, արթնացնում, ու մենք փախչում էինք վտանգից... Ինչ ընկեր է՜ր...

— Իսկ ի՞նչ է որ, կենդանի չէ՞,— հարցրի ես։

— Առայժմ կենդանի է... Հրեն ընկած է սրահում... Գնա տես ի՞նչ օրի է...

— Նա է՞լ է վիրավոր։

— Այո՛, ոտքը արմատից ջարդված է։ Երեք ոտքով է փախցրել ինձ։ Ափսո՛ս, չի ապրի, արյուն շատ է կորցրել... Ապրի էլ, երեք ոտնանի ձին ո՞ւմ է հարկավոր։

Ես դուրս եկա հոսպիտալից և գնացի դեպի սրահը։

Այնտեղ՝ նիհար ու գզգզված, պառկած էր Շառատը։ Պառկած էր հանդարտ ու գոհ՝ իր պարտքը կատարած։

Նայեց իր թախծալի, խելոք աչքերով և թվաց, որ ճանաչեց ինձ։ Վիզը երկարեց, այտը քսեց ձեռքիս։ Շոյեցի վիզը, փաղաքշանքի խոսքեր ասացի։ Վաշիկի անունը տվի... խրխնջաց տխուր, և նրա աչքերում արցունքներ երևացին...

Հաջորդ օրը կենդանին շունչը փչեց։

1944

ԱԾԴԱՀԱՆ

Սանիտարական կետը տեղավորված է արկերից խարխլած մի ընդարձակ շենքում։ Ամբողջ գյուղում միայն այդ շենքն է կանգուն մնացել։ Ծխացող ավերակների միջով մենք հասանք այդ շենքին ու ներս մտանք։

— Ահա ասածս տարօրինակ հայը,— ասաց մեզ առաջնորդող զինվորական բժիշկը։

www.a-pdf.com

Մահճակալին մեկնված էր մի իսկական հսկա։ Նրա մաղոտ կուրծքը կարծես կազմված էր բրոնզյա զույգ վահանների միացումից։ Դիմագծերը խոշոր էին, քիթը հայկական, դեմքը կոպիտ, խաշված արևից ու քամուց, մազերը թուխ, խճճված։ Մալովի ճամփորդական մահճակալը շատ փոքր էր նրա համար, ուստի ոտները դուրս էր հանել ճաղերի արանքից և զույգ գերանների նման մեկնել առաջ, մահճակալից դենը։ Հոգատար քույրը մի աթոռակ էր դրել նրա փաթաթված ոտների տակ։

— Որտեղացի՞ ես,— հարցրի հսկային։

— Տեսնում չե՞ս, որ լոռեցի եմ,— պատասխանեց նա դժկամ։

Ծիծաղեցի։

— Ինձ հայրենակից է, ես սրան լավ կհասկանամ... Դուք կարող եք գնալ,— դիմեցի բժշկին։

Բժիշկը ժպտաց և գլուխը օրորելով դուրս գնաց։

— Ինչպես երևում է, շատ ես նեղություն տալիս էստեղի աշխատողներին,— դիտեցի ես հիվանդին։

Չպատասխանեց։ Նայում է խորթ-խորթ, կասկածանքով։

Սպասիր, սրա հոգու դռները բացեմ։ Եվ նրա ահագին ոտներին նայելով՝ խոսք գցեցի։

— Երևում է, որ Ջաթին-Դաղումն ես մեծացել...

— Ջաթին-Դաղը դու ո՞րտեղից գիտես,— հարցրեց նա աշխուժանալով։

— Ո՞նց չգիտեմ, քսան տարի է էն սարերում որս եմ անում։

Հիվանդը վրա նստեց։

— Հաստա՞տ...— և նրա խիստ հայացքը մանկական պարզ արտահայտություն ստացավ։

— Դե, հիմի ասա, ինչի՞ չես յոլա գնում բժշկի ու քույրերի հետ,— հարցրի ես։

— Ասեմ, ախպեր ջան,— ժպտալով սկսեց նա։— Ամենից առաջ էս անտեր ադյալը կարճ է, անջաղ ծնկներիս է հասնում, ոնց որ տեսնում ես ջանս կասես երկու կտոր արած լինեն, մինը թախտի վրա է, մեկելը՝ աթոռի։ Ասա մի քիչ երկար կարեցեք է՛լի էդ զահրումարը,— սրտնեղած շարունակեց նա։— Յարաբ մարդ իմանա, թե էս ադյալ կարող կանանց մարդիկ ի՞նչ տեսակ մարդիկ են... Հալբաթ պուճուր-մուճուր զատեր են, հը՞...

— Դա ի՞նչ նշանակություն ունի ոգ,— միջամտեցի ես ժպտալով։

— Ո՞նց թե չունի, գնենք թե իմ կնկանը տարել են, որ զորքի համար ոգյալ կարի, ո՞նց ոգյալներ կկարի, ինչ ես կարծում։

Նա իրավացի էր իր պարզ դատողության մեջ. իսկապես որ նրա կինը կարճ ոգյալներ չէր կարի։

— Էդ մեկ,— շարունակեց նա,— մեկ էլ ինձ շատ դժար է գալիս, որ ուտելիքը չափով են տալիս։

— Բա որ չափով չլինի, ախր ոչինչ չի դիմանա,— խրատեցի ես։

— Հո չեմ ասում շատ տան. քիչ չեն տալիս, ոչինչ, համա որ կշեռքի վրա են դնում, աչքս սով է ընկնում։ Հետ էլ ինձ էլ են մի շունչ հաշվում, էս դիմացիս կես փթանոց լոպոզին էլ,— բողոքեց հսկան՝ դիմացի մահճակալին պառկած փոքր մարմնով մի զինվորի ցույց տալով։

— Բա գեղացին եզանն ու մոզուն իրար չափ է խոտ տալի՞ս, բա էդքանն էլ չեն գլխի՞...— շարունակեց բողոքել նա։

Ես նրա դժգոհությունը թարգմանեցի սանիտարուհուն։ Սա բարեսրտորեն ժպտաց.

— Կարծում եք շատակե՞ր է այդ հսկան, ամենևի՛ն։ Եվ երեխայի նման ամաչկոտ է ու քաշվող, ինչքան էլ քաղցած լինի, ուտելիք չի ուզի։ Միայն ամեն կարգ ու կանոն խորթ է դրա հոգուն, իսկական լեռների ծնունդ է, մեծացած առանց կոնարոլի, բռի... «առանց նորմայի», ինչպես ինքը մի օր մի կերպ հասկացրեց ինձ։ Բարկանում է, որ հացը դանակով են կտրում։

— Ինչ է բլբլացնո՞ւմ,— հարցրեց հսկան, կասկածանքով աղջկանը նայելով։

— Քեզ բամբասում է։

— Բամբասելը հե՛չ, համա իրան ասա էդ զահրումարը թող ձեռքով մի կտոր կտրի տա, էլ վշռելս ո՞րն է։

— Անչափ, անկարգ մեծացել ես, կարծում ես էստեղ էլ կթողնե՞ն կարգ ու կանոնից դուրս գաս,— խոսեցրի ես։

— Հա՛յ, մերը շմեռնի Որսկանանց Արտեմի, որ կարգի տակ մանի,— խնդաց նա։— Դու հո նամարդ մարդ չես,— հանկարծ տոնը փոխելով հարցրեց նա։

— Չէ, նամարդ չեմ, ի՞նչ կա որ։

www.a-pdf.com

— Մի բան եմ ուզում պատմեմ, համա վախում եմ ասես, պատժեն։

Ես խոսք տվի, որ նրա գաղտնիքը ոչ ոքի չպատմեմ և ահա, ինչպես տեսնում եք, մինչև հիմա սրբությամբ պահել եմ խոսքս։

— Դե որ ըտենց է, կաց ասեմ, թե ինչ եմ դրել դրանց սարքած չափ տ. կշեռքի գլխին,— ինքն իր արածի վրա երեխայի նման հրճվելով, սկսեց նա։

1

Մոսկվայի տակ թունդ կռիվ արինք գերմանացիների հետ։ Էդ շատ որդիքը մտել էին դիրքերն ու մեզ վտառում էին ականանետերով։ Հրամանատարը մի պլուխ գոռում էր՝ «Միրսկանո՛վ. ականն հասցրա...»։ Ես ականն կրող էի վաշտում, դա ինձ համար շատ հարմար գործ էր։ Դե, ասկանն ի՞նչ բան է որ, ամեն թևիս տակը մի արկղ էի դնում ու գնում, հետևս ուրիշները ամեն տրկղը երկու հոգով էին տանում։

Հենց որ ատաց էինք գնում, ականանետը քանդում էին, շորս-հինգ հոգով տանում։ Է՞ն, ինչ-որ ե՛ս էի, գնում էի կլոնատակիս ու լանդշաֆտն գնում։ Բայց հենց որ գալիս էր ուտելու ժամանակը, մեզ ատաքշինեն իրեն միայն կուտեր, ինձ մի գդալ ավելի բան չէր տա, շատ քոռաշաթ մարդ էր։

Մոսկվան վերցրինք։ Ձր Մոսկվան վերցրինք, գերմանացիք փախան։ Ձի՛ն, ցե՛խ, ընկել ենք էդ Ռուսաստանի գզեբը, գնում ենք հա՛ գնում, հան կռվում ենք, հան գնում։

Մի օր էլ ատաքշինեն ասաց՝ «Միրսկանո՛վ, վաշտի մսացու ոշխարներից 12 հատ չվան, դու շորան ես եղել, դրանց լեզուն լավ կիմանաս, գնա գտի բեր»։

Ասի՝ լավ, Սուրենին հետս դրեք, առանց էն էլ խեղճ տղեն էդ անտեր շուգունի տակին կուչ է եկել։ Սուրեն ատածս էլ մի լղար գաղ էր, էդ խեղճը հենց երեխա հատակից նորմի տակ էր ընկել, պոռնուկ մնացել։

Սուրենի հետ գիշերը գնացինք շոլերը ման եկանք, ոչխարները գտանք բոմբի քանդած մի փոսում։

Դե հիմի ո՞ւր գնանք. դո՞ւզ, ինչքան որ աչքդ կտրի, ոչ սար կա, ոչ քար կա, ոչ ձոր կա, ո՞նց նշան անես, ի՞նչ իմանաս թե ուր ես գնում։

www.a-pdf.com

Վաշտը կորցրինք, էնքան ենք տեսնում, որ էդ դդերը լիքը ղորք է, մեր Լոռու ծմակի ծառերին հաշիվ կա, ղորքին հաշիվ չկա... Ու բոլորն էլ հեղեղի պես գնում են, ո՞նց են գնում։ Մենք էլ էդ հեղեղի հետ... Էստեղ-էնտեղ ձեն եմ տալիս, հարցնում մարդկերանց՝ «Այտա, բա մեր վաշտը տեսել չե՞ք...»։ Թե հայ են լինում, հարցնում են, թե ո՞ր վաշտը, այտա՛, էստեղ հազար ու մի վաշտ կա։ Ասում եմ՝ ականանետի վաշտն, է՛լի, ստարշինի անունն էլ Զաքար է, ասեղ մաշկող Զաքար ենք ասում, էնքան որ շատ է ժլատ։ Մի ծաղում են ու գնում, մենք էլ հետևներիցը։

Մյուս օրը համ հալից ընկել ենք, համ էլ գելի պես սովել։ Հա՛յ գիտի ասեղ մաշկող Զաքարի նորմա, ո՞րտեղ ես... «Այտա, բա մեր վաշտը ի՞նչ էլավ, է՞...», մտքումս էլ եմ ասում, բարձր էլ եմ կանչում,— ոչ ոք չգիտի։

Սոված գելի պես աչքս ոչխարների դմակներին է, միտքս ծռվել է, համա Սուրենին չեմ ասում, քանի որ կոմսոմոլ է, կարգ ու կանոնը պինդ է պահում։

Հալ ընկած ձինը համարյա ծնկներս է հասնում։ Ինչ որ Սուրենն է, խեղճը տնկվում է մինչև կռնատակերը։ Ձնից հանում եմ, թափ տալիս, կռնատակիս դնում ու էլի առաջ ենք գնում, դե, նորմով մեծացած մարդի քաշն ի՞նչ կլի...

Իրիկնադեմին մի քանդված գեղ հասանք։ Ասի՝ Սուրեն ջան, օրենքը-բանը ղրաղ եմ դնում, ոչխարներից մինը մորթեմ։ Դա չթողեց։ Ասի՝ ախպեր, էն շոլում պիտի մնար գելն ուտեր, թող մենք ուտենք, էլի՛։

Վերջը, գլուխդ ինչ ցավացնեմ, ծնկանս տակին դրի էդ խեղճ հայվանին մորթեցի, մի թեժ կրակ արի ու շոբանավարի խորովեցի։ Նորման խախտեցինք, մի պինդ կերանք, հլա ուրիշ զինվորների էլ ուտեցրինք։

Ասի՝ Սուրեն ջան, էս մինը մեզ ղուրբան, էլ չենք մորթի։ Բայց դե, մարդիս ձեռը մեկ որ հարամ բանի սովորում է, էլ ինչ անես ձեռ չի քաշիլ։ Համ էլ էս անտեր փորը մարդիս լավությունը շատ շուտ է մոռանում։ Մյուս օրը յախես բռնել է, թե՝ էլի՛ բեր։ Ասում եմ՝ այ աննամուս, ախր երեկ երկու բուդը քեզ ուղարկեցի։ Ասում է՝ խաբար չեմ, էս տարի ե՞րբ ես բան կերել որ։ Ճարն ինչ, մեկն էլ ծնկանս տակին դրի մորթեցի։

Էդ տնաշենի Սուրենն էլ մի երկու կտոր ուտում է ու ղրաղ քաշվում։ Ստիպված, ջանս դուրս գալով, ե՛ս էի ուտում էդ

www.a-pdf.com

սաղ ոչխարը (դե ինչ արած, ընկել էի պիտի քաշեի... հո միսը շալակած հետս չէի տանելու... էնա ամբարումս տեղավորում էի, ճամփա ընկնում)։ Մյուս օրն էլի փորս երդում էր ուտում, թե էս տարի բան չի տեսել։

Վերջը ոչխարները ուտելով հասանք Կուբանի հողը։ Մնաց չորս ոչխար։ Սուրենն ասաց՝ դե որ մեր վաշտը չենք գտնում, արի գնանք ներկայանանք մի ուրիշ զորամասի, նրանց հետ կռիվ գնանք։ Էդ ոչխարներն առաջ արած ներկայացանք մի գնդի հրամանատարի ու պատմեցինք մեր գլխի եկածը։ Նա մեզ ընդունեց...

— Կա՛ց, Արտեմ, արի ձեռդ խղճիդ դիր, ճիշտն ասա, հեչ չվախենաս, ես էլ եմ լռեցի, դու բոլոր ոչխարները կերել ես պրծել, հետո ներկայացել հրամանատարին,— նրա խոսքը կըտրեցի ես, շեշտակի նայելով լեռնցու աչքերի մեջ։

— Այտա, հնգեր հրամանատար, էդ ո՞նց իմացար,— կարմրելով ու ծիծաղելով պատասխանեց Արտեմը։— Ախպեր, աստծուց թաքուն չի, քեզանից ի՞նչ պահեմ, ոչխարները թամուզ մաքրեցինք, մի օր էլ սոված մնացինք ու որ տեսանք շատ ենք նեղվում սովից, նոր ներկայացանք գնդին։

Որոշել էինք, որ մեր արած դալաթը թաքուն պահենք, համա էդ հրամանատարը հենց թարս-թարս հարցեր տվեց, որ բռնվեցինք։ Ամեն ինչ պատմեցի։ Դա թե՝ քեզ դատի եմ տալու։ Ասացի՝ ախպեր, ես համ լավ ուտող եմ, համ լավ կռվող, արի դու ինձ կռիվ ուղարկի, գնամ ամեն ոչխարիդ տեղը մի գերմանացի դնեմ թևիս տակը բերեմ։

Լավ մարդ էր, ծիծաղեց։ Հարցրեց, թե ինչ գործի եմ եղել, ասի՝ համ չոբանություն գիտեմ, համ որսկանություն։ Ասաց՝ չոբանությունդ արդեն տեսանք, վաշտի ոչխարները լավ ես պահել, մալադե՛ց, մնում է որսկանությունդ փորձենք, գնա հետախուզական դասակը, էնտեղ իսկական որս անելու տեղ է։

Ճիշտն ասած, դրա էդ կակուղ խոսքերիցը գետինը մտա։ Գլուխս կախ լսեցի ու մտքումս երդում տվի կերածս ոչխարների տեղը մեկին տասը հանեմ։

Ես ու Սուրենը գնացինք հետախույզ դառանք։

Դե, հետախուզությունն ու որսորդությունը մի բան է, կուչ-կուչ անելով սատանի պես գնա, գլխին բամփի, կռնատակդ դիր բեր։

Մի երկու շաբաթ հետախուզություն արինք, լավ տեղեկու-

www.a-pdf.com

թյուններ բերինք։ Սուրենին շատ սիրեցին. դե պուճուր, մի աղվեսի չափ բան էր, ամեն ծակ ու ծուկ մտնում էր, ամեն ինչ իմանում։ Շատ աշքաբաց տղա էր ու Հրամանատարն էլ շատ սիրում էր նրան, Ճուտիկ էր ասում։

2

Մի անգամ թշնամու թիկունքում երեք օր սոված մնացինք։ Մենք ծմակում տապ ենք արել, մեր դիմաց մի քացատ կա, գերմանացիները էդ թալումը բլինդաժներ են շինել, կերակուր են եփում, հոտը գլուխս պոկում-տանում է։ Որ սովը շատ նեղեց, Ճուտիկը թփերից դուրս եկավ ու փորտող տալով ասաց գնաց։ Ասի՝ ո՞ւր ես գնում, այ տղա։ Թե՝ գնում եմ իմ բաժին կերակուրը ստանամ։ Ու էդ սարսաղն էլ ինձ չլսեց։ Մթնում ամանների շխկշխկոց էր գալիս՝ գերմանացիք կերակուր էին բաժանում զորքին։

Քիչ հետո տեսնեմ Ճուտիկս եկավ մի վեդրո ճաշ ձեռին։ Այ տղա,— ասում եմ,— էդ ո՞նց բերիր։ Ասում է՝ էնտեղ մըթնում շունը տերը չի ճանաչում։ Գնացի մի վեդրո գտա, շարքի հետ խառնվեցի ու դեմ արի՝ լցրին. ո՞ւմ մտքով անց կկենար, թե բալշևիկ է եկել ճաշ տանելու...

Վերջը էդ տեսակ բաների համար գնդի հրամանատար մայոր Տիտովը շատ սիրեց Ճուտիկին։

Մի անգամ էլ մայորն ինձ ասաց. «Որսկանո՛վ, բա ո՞ւր է որսդ, ոչխարները կերար ու տեղը գերմանացի՞ չես բերում»։

Ասի՝ էս գիշեր գնամ բերեմ, ընկեր մայոր։

Ասաց՝ սաղ-սաղ կբերես, հա՞...

Գնացինք։

Ճուտիկին ասացի՝ գոր էդ թալի ապրողների ժամապահին, իսկ ինքս մնացի թփերի մեջ։ Ճուտիկս գնաց թալի չորս կողմը պտտեց ու եկավ, թե՝ հրե՛, էն մեծ շամի ծառի տակին մի մարդ կա։

Սուս արինք, դրանք իրիկնահացը կերան ու քնեցին։ Առաջ գնացինք սողալով, շունչս պահած հասա ծառին, տեսնեմ ժամապահս մրափում է։ Գլխին էր, թե շինքին, միտս չի, բռունցքով տվի ու կոլոլեցի պարկը գցեցի, կռնատակիս դրի ու եւ գնացի։ Ջեն չհանեց, ժամ չեկավ։ Ասի էս ի՞նչ խեղոք գերմանացի է, տո՛...

www.a-pdf.com

Հիմի ես լոք-լոք եմ անում՝ հանդարտ գնում, էս մեր Սուրենը կաշաղակի պես քամակիցս ծուլ-ծուլ ըլելով գալիս է, չի հասնում։

Ճամփու կեսին բեռը վեր դրի, որ Ճուտիկը հասնի։ Հնա-ցավ եկավ։ Տոպրակը շուռ տվի, խոսեցնում եմ՝ «Ֆրից, քեֆդ ա՞նց է, հո ինձանից բեդաստաղ չեմ»։ Սուս է աբել, ժամ չի դա-ցիս։

Սուրենը թե՝ քեռի Արտեմ, վայ թե բռունցքով ավել ես սպանել։ Ասի՝ ջաղ ես, տո՛, ես դրան ի՞նչ եմ աբել, որ մեռնի, մարդ բունցքից կմեռնի՞...

Հասանք մեր զոլքին։ Ոլոս տարա մայրի մատ, ասի՝ տասնմեկը մնա՞ց, ընկեր մայրս։ Ասաց՝ հա՛, կեցցես։ Տոպ-րակը բաց արին՝ ֆրիցս կապտել է, սառել։

Մայրը վրես բարկացավ։ Տո սա՛րի աբջ, ասաց, հենց տուր, որ ջրմի, ոչ թե մեռնի։ Ասի՝ ինչ անեմ, ընկեր մայր, հալբաթ ձեռս ծանր է։

Քեֆս խարաբ գնացի բլինդաժը ու նեղանում եմ հորս վրա, թե չէր ըլի՞, որ ինձ էլ ուրիշների պես մարդավարի պատ-բաստեր...

Էլ ինչ էլ որ ըլի գլխին չեմ տալ, որոշեցի ես ու մյուս գի-շերը նորից որսի գնացի։ Էս անգամ մի օֆիցերի պատահեցի։ Մոտոցիկլետը ճամփու մեջտեղը խափանվել էր, սարքում էր, որ վրեն նստի, վրա հասա, դրա կողքին մի մուշտի տվի։ Տա-րա՝ էլի մեռած դուրս եկավ, կողի ճաղը կոտրել էր մտել սիրտը։ Մնացի մոլորված, թե էս ֆրիցները բոլորն էլ սրանց նման փտած բաներ ե՞ն, ես ոչ մեկին չեմ կարող տեղ հասցնեմ։ Մա-յորն էլ հաճ բարկանում է, համ էլ վերջը չի համբերում՝ ծի-ծաղում է։ Որոշեցի էլ չխփեմ, բերանը շոր կոխեմ-բերեմ։

Մի գիշեր Սուրենին բլրի մի կողմով ուղարկեցի, ես՝ մյու-սով։ Բլուրը պատ տվի տեսա հրես դիմացիս թփերի տակովը մի մարդ է գալիս։ Լիսամի* պես մարաղ մտա, սուս արի։ Հենց եկավ՝ վրա թռա, վիզը ոչխարի պես ոլորեցի, ձեռքս դրի բե-բանին։ Ուզեց գոռալ, բան ասել, ըսկի կթողնե՞մ, որ ծպտուն հանի,— բերանը ոտի փաթաթանով պինդ կապեցի, գցեցի տոպրակս ու գնացի։ Թեթև բան էր, հեշտ էի գնում։ Դա շատ շար ֆրից էր երևում, հա չալի-բալի էր անում, իրեն կտրատում,

* Լիսամ — լուսան։

ուզում էր բան ասի, թե ինչ, չհասկացա։ Դե ասում են, ինչի՞ ես բռունցքով տալիս, նալաթ քեզ չար սատանա։ Մի երկու դրան հասցրի, դինջացավ։ Կռացա, անգամս դեմ արի, չէ՞, շունչ է քաշում։

Հիմի շվշվացնում եմ, գելի պես ոռնում եմ, պատասխան չկա։ Ո՞ւր կորավ Ճուտիկը։ Մինչև լուսադեմ սպասեցի, Ճուտիկ չկա։ Ասի՝ որ լուսացավ, ինձ կբռնեն, գնամ, երևի Ճուտիկն ինձ կորցրեց, գնաց գունդ։

Գնացի։ Ճամփին էլի ոտներով կողքերս թակում է։ Վեր գրի, մի լավ դնգսեցի, հանդարտվեց։ Տարա մայրի մոտ, ասի՝ բնկեր մայոր, էս անգամ սաղ եմ բերել, տե՞ս, շունչ է քաշում։ Ասաց՝ մալադեց, բա ո՞ւր է Ճուտիկը։ Ասի՝ խի՞, չի եկե՞լ որ...

— Ճուտի՜կս...,— գոռաց մայորը՝ ուռը գետնին խփելով։ Մնացի մոլորված։ Վերջը տոպրակն առաջը դրի, բերանը բաց արին, տեսնենք Ճուտիկս հրես ոռխ-մռեխն արնակոլոլ միջից դուրս եկավ։

Հիմի շտաբի հրամանատարները փորները բռնած ծիծաղում են, մայորը փրփրել է, ես էլ կուչ եմ եկել շվարել։

— Այ տղա, Ճուտի՜կ, ասի, բա խի՞ չէիր ձեն հանում։

— Իսկի թողի՞ր, որ ձեն հանեի, ամեն ժամ գալիս փթանոց բռունցքդ վրես էիր փորձում,— լացակումած թոնթորաց Սուրենը։

Խե՜ղճ տղա...

Վերջը տեսան ինձնից «լեզու» բերող չի ելիլ, ասին՝ հետախուզություն արա ու խաբար բեր, մարդ մի բերի։

3

Մի անգամ էլ հետախուզության ժամանակ տեսանք անտառի ճանապարհին մի բեռնատար ավտոմեքենա կանգնած։ Շոֆերը ինչ-որ բան էր սարքում, իսկ պետը, մի լղար օֆիցեր, անհանգիստ շորս կողմն էր նայում, ամեն խշրտոցի ականջները սրում էր ու շոֆերի վրա գոռում, երևի շտապեցնում էր։

Ճուտիկի ականջին ասի՝ էս անգամ որ սաղ-սաղ եմ տանելու։ Դա կասկածանքով երեսիս նայեց ու քիչ մնաց փոթկացնի. հավատալը չէր գալիս։

www.a-pdf.com

Թփերի արանքով մոտեցա ու նռնակը վեր բարձրացնելով գոռացի՝ «Հա՛լթ...»։

Օֆիցերն էն բոպեին ոանգը գցեց ու ձեռները վեր բարձրացրեց, համա շոֆերը ձեռքը տարավ ատրճանակին։ Դա որ ձեռքն ատրճանակին տարավ, ես մոլորվեցի,— իսկույն մտածեցի, դրան որ սպանեմ, բա մաշինեն ո՞վ կտանի,— միտքս էն էր, որ բեռը տեղ հասցնեմ։ Հա՛, դա որ ձեռն ատրճանակին տարավ, էս մեր զոշաղ Ճուտիկը ավտոմատը ճակատին դեմ արավ, զինաթափ արավ։ Էդ շոֆերի ականջից բռնեցի, հորթի պես ետևիցս եկավ։ Դրան դրի ավտոյի ռուլի մոտ ու մատով ցույց տվի դեպի մեր զորքը։ Հասկացավ։ Օֆիցերիս ձեռն ու ոտն էլ կապեցի, գցեցի ավտոն, գոռալով գնացինք մեր գունդը։

Ասի՝ ընկեր մայոր, բերի՞, թե չէ։ Ասաց՝ բերի՛ր, մալադեց Որսկանով, բերիր։ Ասի՝ քսան արկղ կոնսերվա եմ բերել, էդ քեզ տասը ոչխար, էս օֆիցերն ու շոֆերն էլ հո ամեն մեկը մի ոչխար արժեն... Ասաց՝ արժեն, համա օֆիցերը շատ է լղար։ Ծիծաղեցինք։

Իրիկունը մայորը կանչեց իրեն մոտ, թե՝ Որսկանո՛վ, բերածդ օֆիցերի գինը սխալ էիր նշանակել, մի ոչխարից ավելի արժի, շատ կարևոր տեղեկություններ տվեց։

Ասի՝ ընկեր մայոր, հիմի պարտքիցս ազատվեցի՞, թե չէ։

Ասաց՝ մալադեց Որսկանով, պարտքիդ տակից դուրս եկար, հալալ ըլի քո կերած ոչխարները...

Ու էդպես էլ իմ հանցանքը ներեցին-գնաց։

Հա, վերջը հարցրեց, թե՝ Որսկանով, ի՞նչ նվեր ես ուզում տամ։

Ասի՝ ընկեր մայոր, ասա ինձ ուտելիքը չափով ու ժամով չտան։ Ոնց որ քսանհինգ տարի ապրել եմ մեր սարերում, էն կարգով էլ թող ապրեմ։ Դա չհասկացավ, թե՝ ո՞նց կլի։ Ասի՝ էնպե՛ս էլի, ո՛ր վախտը սովեմ, էն վախտն էլ ուտեմ, ինչքան որ ախորժակս տանի։

Ծիծաղեց, թե՝ լավ, թող քո ասածը ըլի։

Ու էդ օրվանից մինչև էս քանդված տեղն ընկնելը քեֆ։ տեղն ապրում էի ինձ համար, ի՞նչ չափ, ինչ բան...

— Բա ո՞նց ընկար էստեղ։ Ոտներդ, ի՞նչի են փաթաթված,— հարցրի ես։

— Էլի հերս է մեղավոր։ Այ տնաշեն, ասա մի մարդավարի ոտ պատրաստեիր, էլի՛։ Ոնց որ կոշտ ու կոպիտ թիակներ

էր տաշում-սարքում, էնպես էլ ոտներս... Դե ոտներս նոմերի հետ գործ չէին ունեցել, տրեխի մեջ ծուտիկ-մուտիկ մեծացել էին, ո՛րի քեֆն ինչքա՞ն որ ուզել էր։ Ո՞ւմ մտքով անց կկենար, որ նոմերով ոտնաման ենք հագնելու։

Որ բանակ եկա, ստարշինա Զաքարը մնաց մոքրված, 48 նոմերանոց ոտնամանները բոբիկ հագիվ էին մտնում։ Վերջը, պլուխդ ինչ ցավացնեմ, ձմեռը դիրքերում բարակ գուլպաներով ոտներս սառչում են, չեմ իմանում։ Որ դարձնքացավ, թաց խրամատում մնացի մի երկու օր, մեկ էլ տեսա ոտներս կակղել են, ոնց որ ցրտաստաբ էաքտոլը դնես տաք տեղը։ Որ ոտներս կակղեցին, նո՞ր-նոր հասկացա, որ ցուրտաք տարել է...

Հիմա գե լավ էլաք, վիրաբույժը մատներիս ծերերը տաշեց-կարգավորեց, հիմի օրինավոր ոտներ են դառել,— կատակով վերջացրեց նա։

4

Վերջին անգամ Արտեմին ես պատահեցի Թամանում, թեժ կռվի մեջ։ Նա գումարտակային ակտանանեսը կոնատակին դրած՝ դեպի կրակադիրք էր գնում փոքր քայլվածքով։

Ձայն տվի, ետ նայեց։ Ճանաչեց և երեխայի նման ուրախացավ։

— Ողջ-առողջ ե՞ս,— զոռացի ես, որպեսզի թնդյունների մեջ ձայնս տեղ հասնի։

— Ողջ եմ, ողջ... Համա էլի կշեռքի տակ են դրել էդ բալեն մեռածները,—մոտենալով ինձ կատակեց նա։—Ա՜խ իմ մայրը ոսկի մարդ էր, կորցրի՝ աստղս մեր մտավ...

Նկատեցի, որ կաղում է, ու քիչ կռացած է գնում։

— Հո, վիրավորված չե՞ս,— հարցրի ես։

— Հա, մին-մին դիպչում է... Բայց դե չդիտեմ գնդակն է շատ պուճո՞ւր, թե ջանս է մեծ. հա՞ դիպած, հա՞ չդիպած, մի հաշիվ է... Դե արջին եթե ճակատին յա սրտին չտվիր, վեր չի ընկնիլ...— կատակով պարծեցավ նա։

Ապա տխրեց ու թախծոտ շարունակեց։— Համա մեր Սուրենի համար թվանքի գնդակը մի արկի չափ էր, խեղճը մի գնդակից վեր ընկավ ու էլ վեր չկացավ...

www.a-pdf.com

Հսկայի աչքերում արցունքներ երևացին։

Գնաց։ Փղի քայլվածքով կրակագիրք էր տանում հսկա անկանանեաը՝ իր ընկերոջ արյան վրեժը հանելու...

1943
Թաման, ռազմանավակատ

ՈՐՍՈՐԴԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մարագի ներսից դուռը ծեծեցին։

— Էն ո՞վ ա,— ձայն տվեց պահակ Ակոփը՝ գոռանը հրացանի կոթով խփելով։

Ներսից մեկն աղաչական ձայնով խոստում էր գերմաներեն։

— Մի պրի տես ի՞նչ ա ասում, գիտնական բռլա,— ձայնեց լուսեցի ռուսկան Ակոփը պահակային գոկատի ամենաերիտասարդ և ամենակրթված մարտիկին՝ Աշոտին։

Աշոտը սովորել էր Լյոբքսեմբուրգի (Վրաստան) գերմանական դպրոցում, տեղական գերմանացիների հետ շփում էր ունեցել և գերմաներեն բավական գիտեր։

«Գիտնական բալան» մթնում խարխափելով առաջ եկավ և գերմաներեն ձայն տվեց.

— Ի՞նչ եք ուզում։

Գերմանացին ինչ-որ բան ասաց։

— Ի՞նչ ա ուզում։

— Ասում է՝ թողեք մի բոպեով դուրս գամ, բնական կարիքի համար,— թարգմանեց Աշոտը։

— Ասա ինչ զալաթ անում ես է՛դտեղ արա,— կտրուկ պատասխանեց Ակոփը։

Տղան թարգմանեց։

Գերմանացին աղաչում էր։

— Ակոփ քեռի, ասում է կողքիս կին կա, անհարմար է, թե ասվածդ կսիրես թույլ տուր դուրս գամ։

Իրոք գերիների հետ մի գերմանացի սանիտարուհի կար։

«Քեռի Ակոփը» մի պահ մտածեց։

— Որ օղլուշազ կա, գժար ա... պետք ա մի բան աննենք։

— Ինչ բան, հո դուրս չենք թողնի։

— Հլա մի ասա, որ դուրս թողնեմ չես փախչի՞։

Աշոտը թարգմանեց։

www.a-pdf.com

Գերմանացին աղաչական տոնով, կերկերուն ձայնով ինչ-որ բաներ ասաց։ Նրա ձայնն այժմ ցածից էր գալիս, ըստ երևույթին չոքել էր։

— Քեռի Ակոփ, ասում է, երդվում եմ մինուճար երեխուս արևով, մորս գերեզմանով, որ դուրս կգամ ու էլի խելոք կգամ, մարադը կմտնեմ։ Բայց դրա օձի լեզվից չխաբվես, քեռի Ակոփ։

— Խի՞, նա մարդ չի՞ որ,— խոսեց որսկանը։

— Մարդ է, բայց թշնամի է։

Որսկանը մտածմունքի մեջ ընկավ։ Նա տատանվում էր։ Նա դեռ թշնամի չէր տեսել, նա խոր հավատ ուներ մարդու նկատմամբ։ Այդ հավատը մշակվել էր նրա մեջ լոռու ձորերում, իրենց պապերի աղնվությամբ օժտված պարզասիրտ, բարի որսորդների ու անասնապահների միջավայրում։

— Բա կաթնատու մոր գերեզմանովը սուտ երդում կո՞ւտի,— հանկարծ հարցրեց որսկանը։ Նրա տոնի մեջ նախատինք կար «թերահավատ ջահելների» նկատմամբ։ «Ասենք իմ գյուղի առաջից ո՞ւր պիտի փախչի»,— մտածեց նա։

Ու դուռը բացեց։

Շեմքում ցցվեց գերմանացու բարակ-երկար կերպարանքը։

— Ասա անմրդ ի՞նչ ա։

Աշոտը թարգմանեց։

— Հանս Հերման։

— Պա՛հ, ադա էդ հո մեր կոլխոզի չոբան Հանեսի անրմն ա։ Հանե՞ս... էդ հո իսկական լոռեցու անուն ա,— պարզասրտորեն ուրախացավ Ակոփը։

— Դե որ ըտենց ա, այ Հանես, գնա էն ծառի տակն ու էլի թեզ ետ արի... համա երդումդ պինդ պահիր, հա՞...

Աշոտը թարգմանեց։

Գերմանացին գնաց ծառի տակը,— Աշոտը հրացանը մեկնած գնաց նրա հետևից։

— Այտա, ամոթ ա, թող էդ մարդը հալալ իրա բանին կենա,— նախատեց որսորդը։

Աշոտը կանգ առավ։ Նա դժգոհ էր որսկանի ծայր աստիճան միամտության ու բարության համար։

Պահակապետն Աշոտին կանչեց և մի տեղ ուղարկեց։ Որսկանը մնաց մենակ։ Մթնում, ծառի կողմից թմփթմփոց լսվեց։

— Հանես պրծա՞ր,— հարցրեց լոռեցին։

Ձայն չկա։

www.a-pdf.com

— Այտա, Հերմա՞ն։

Զայն չկա։

«Էդ բալեն մեռածը չլինի՞ ճղեց»,— ահով մտածեց նա և հրացանն առաջ մեկնած գնաց ծառի կողմը։

— Հանե՞ս... այտա, դե պրծի է՞։

Զայն չկա։

— Հանես հե՞յ,— գոռաց որսկանը լռեցավարի ու ինքն էլ սարսափեց իր ձայնից։

Հանեսը որտեղի՞ց...

Որսկան Ակոփին 5 օր բանտ նստեցրին՝ «կալանավորին բաց թողնելու համար»։ Ճակատում դա շատ մեծ հանցանք է և շատ ծանր պատիժ է ենթադրում։ Բայց դե զորամասում ո՞վ չէր ճանաչում՝ որսկան Ակոփին, ով չգիտեր նրա միամտությունը։

Տարիքոտ որսորդին այս անգամ զիջեցին ու խրատեցին, որ թշնամու նկատմամբ իր բարեսրտությունը մի կողմ դնի։

— Արա՛, գիտնական բա՛լա, ուրեմն էդ անխիղճը խաբեց էլի՞... ուրեմն մոր գերեզմանովը սուտ երդվեց էլի՞...— զարմացած ասում էր որսկանը հաջորդ օրերին։— Բա էդ անօրենը չէր մտածո՞ւմ, որ ես իրեն պատճառով կկորչեմ... էդ էլ իմ լավությունն ա՞...

Եվ դառնացած գլուխը տարուբերում էր ու «ծլթ-ծլթացնում»։

— Աշխարքի բաներին մտիկ է՞, տես մարդիկ ինչքան են փչացել...

Խեղճ մարդը դեռ ծանոթ չէր երկոտանի բորենիների Արյունարբու վարքուբարքին։

Զորամասը կովով առաջ էր գնում։

Ուկրաինական մի գյուղի մոտ շատ դիակներ կային թափթրփված։ Քիչ առաջ այստեղ մեծ կռիվ էր տեղի ունեցել։

Մեկը ձյան մեջ արյուն տալով քարշ էր գալիս դեպի գյուղի ծայրին մեն-մենակ կանգնած տունը ու անծանոթ լեզվով բղավում։

Որսկանը մոտ գնաց։

— Այտա, էս հո Հանեսն ա,— բացականչեց նա զարմացած։ Վիրավորը մարդուն ճանաչելով՝ սարսափեց։ Հավանաբար մտածեց, որ իր վերջը եկել է։

— Աշոտ հե՞յ, ադա Հանեսին գտել եմ, մի գեան արի է,— գոռաց որսկանը ետ նայելով։ Աշոտը մի վիրավոր կարմիրբանակայինի վերքն էր փաթաթում և գուցե նույնիսկ շլսեց էլ։

— Լա՞վ ճանկս ընկար, պարոն Հանես, ես հիմի քեզ տիկ կհանեմ,— փնթփնթաց որսորդը հրացանը լցնելով։

Գերմանացին ձեռքերը վեր տարածած պատառում էր։

— Հը՞, կաշիդ թանգ ա չէ՞... բա, աննամուս, իսկի մտածում էի՞ր, որ քո պատճառով որսկան Ակոփին բերթ ենք նստեցնելու։ Ես քո էդ սուտ երթում ուտող բեղդ պետք է քոքահան անեմ։

Ու վերջացրած որսորդը ավելը մեկնեց։

Հանկարծ հողը լիզում էր ու ինչ-որ բաներ ասում աղաչական ձայնով ու իր թաքամ վերքերն էր ցույց տալիս։

«Ասենք վիրավորին սպանելն էլ մի տղամարդկություն չի, օրենքն էլ է արգելում»,— մտածեց Ակոփը և նրա բարկությունն սկսեց հանգիստ իջնել։

«Հիմի ուրեմն ճանկերիս մեջն է, առաջ անեմ տանեմ»,— մտածեց նա ու հրացանը ետ քաշեց։

— Դե լա՞վ, լավ, դանդանը մի անիր, չեմ սատկացնիլ... դուք որ մարդկություն չունեք, գիտեք թե մենք էլ չունե՞նք...

«Յարալու որսը միշտ ջրի վրա է վազում»,— հիշեց որսկանն ու ջրամանը դեմ արավ գերմանացուն։

— Ինչ դալաթ արել ես արել, առ խմիր։

Գերմանացին վախվխելով վերցրեց ջրամանը, գլխին քաշեց ու միանգամից դատարկեց։ Ապա պատյանից դուրս քաշեց ատրճանակն ու մեկնեց թե չէ, որպեսզի վրա թռավ, խլեց ձեռքից։

— Նամա՛րդ, էդ ի՞նչ բանի ես,— գոռաց նա։

«Չէ, սա անպայման գինաթափի էր ըլում... Ես էլ ախմախավարի կարծեցի, թե ուզում ա սպանի...»— մտածեց որսկանը, մեղմացավ ու իր վիրավոր գերուն օգնելով, առաջ մղելով գնաց դեպի մոտակա կենտ տունը։

«Խի՞, ո՞վ ա տեսել, որ իրան ջուր տվող, իրա սիրտը հովացնող մարդի արինը թափեն... Չէ՞, իմ աչքիս էսպես երևաց... Բա խի՞ էր գաղտագած գելի պես մահիկ անում վրես, հը՞...»,— տարակուսանքով մտածում էր նա ճանապարհին։

Գյուղամիջից դեռ կրակոցներ էին գալիս։ Այս ու այնտեղ պայթում էին արկերը։

www.a-pdf.com

Տանից մի ծեր կին դուրս եկավ։

— Այ մեր, մի սրա վերքը կապի, շտաբը տանեմ,— գիմեց կնոջը որսկանը։

Կինն ուսերը տարակուսանքով թոթվեց, ըստ երևույթին լռվա բարբառը նրա գիտակցությանը չհասավ։ Բայց գերմանացու վերքը տեսնելով՝ նա ճղճղաց ձեռքով-ոտքով նշաններ արավ և տան դռները կրնկի վրա բաց անելով՝ ցույց տվեց տան ներսը։ Բնակարանը տակն ու վրա էր եղված, ամանեղենը ջարդած, անկողինը, բարձերը գետնին թափթփված,— թալանի թարմ հետքեր։

Լոռեցին հասկացավ։

— Այ մեր, հո սա չի արել, սա ի՞նչ անի... յարալու խան ա, մի շոր բեր փաթաթի...

Պառավը հետզհետե հանդարտվեց ու հենց նախասենյակում փաթաթեց զինվորի վերքը։

Որսկանը գոհ սրտով դուրս եկավ տնից և դես ու դեն նայեց։ Բաց դաշտի կողմից մի խումբ գերմանացիներ գրոհում էին գյուղի վրա։ Քարե ցանկապատի տակ կարմիրբանակայինները շարված անընդհատ կրակում էին գրոհի եկող խմբերի վրա։ Որսկան Ակոփը պատի տակով կուզեկուզ առաջ վազեց, մի հարմար դիրք բռնեց ու սկսեց կրակել։

Փամփուշտը վերջացավ։ Նա պայուսակից հանեց Լոռուց հիշատակ մնացած միակ «դում-դում» փամփուշտը։ Լոռում նա ուներ այդ փամփուշտից, ապրի որսի համար։ Այդ փամփուշտը նրա հուշերը թարմ էր պահում, իր որսորդական քաղցր օրերի հուշերը։ Հենց դրա համար էլ Լոռուց բերել էր հետը...

Նա փամփուշտը դրեց փողի մեջ ու նշան բռնեց։

«Չէ՛, ճամարդությունն ա, սրանով մարդի վրա չեն կրակիլ»,— մտածեց նա ետ քաշվելով։

Ինչ-որ տեղից մեր գնդացիրները մի ակնթարթում հնձեցին գյուղի վրա գրոհող խմբերին։ Դաշտում կենդանի մարդ չմնաց։

«Ցարաբ ի՞նչ էլավ Հանեսը»,— մտածեց որսկանը, դեպի ծանոթ տունը քայլելով։ Գնում էր իր գերուն շտաբը տանի։

Գյուղը կովով մեր ձեռքն էր անցնում։ Այս ու այնտեղ ծուխ ու բոց երևաց. նահանջող գերմանացիները հրդեհում էին տները։

Ահա բոց է ժայթքում նաև ծանոթ տան պատուհանից։

www.a-pdf.com

— Պա՜հ, ես ձեր անօրեն...— ու մի ծանր հիշոց արձակելով որսկանն առաջ վազեց։

Մանոթ պառավը լեղապատառ դուրս թռավ տնից ու ճչալով դույլը ձեռքին վազեց դեպի ջրհորը։ Մինչ որսկանը բակը կմտներ— կինը ջրով լիքը դույլը ձեռքին վազեց տուն, որ հրդեհը հանգցնի, բայց հանկարծ շեմքում փռվեց։

— Էս ի՞նչ էր, այտա...

Նույն վայրկյանին շեմքում երևաց վիրավոր գերմանացին՝ ինչ-որ տեղից ճանկած մի հրացան ձեռքին։

Որսկան Ակոփի մեջ կարծես մի բան դղրդոցով փուլ եկավ և իր հետ կործանեց, տակով արավ նրա պապենական բարությունը։ Եվ լոռեցի որսկանը, որ իր կյանքում ոչ մի մարդու վատություն չէր արել, պայթուցիկ դնդակավոր փամփուշտը հանեց պայուսակից, տենդագին լցրեց հրացանը ու ահարկու ձայնով որոտաց.

— Նամա՜րդ...

Եվ նշան բռնելով՝ ձգանը քաշեց։ Գերմանացու դանգի կըտորներն օդը թռան...

— Ձեր բոլորիդ «դում-դում» դյուլլով պետք ա սատկացնել... անհոգի, նամարդ օձեր...,— ասում էր որսկանը հատ-հատ, հուզմունքից դողալով։

ԳԳՎԱՆՔԻ ԿԱՐՈՏ

Մենք կոշտացել էինք կռիվների մեջ ու մոռացել ամեն քնքշանք ու դղվանք։ Կոշտացել էին և նրանք, բամբակե հաստ անդրավարտիք հագած, տղամարդու գլխարկով, ծանր զինվորական կոշիկներով այն աղջիկները։ Նրանք փրկարար հրեշտակների նման հասնում էին տնքոցի վայրը, կանգնեցնում մարտիկների հոսող արյունը, ջուր տալիս նրանց ու շալակով, պատգարակով հանում կրակի տակից։

Ու թրծվում էր նրանց քնքուշ սիրտը, թրծվում ու կոպտանում արյան ու որոտների մեջ։

***

Ուշ երեկոյան մարտի առաջավոր գծից դիվիզիայի թերթի խմբագրության գետնատնակն եմ վերադառնում։ Զմեռային իմ

www.a-pdf.com

բոլոր շորերը հագիս են՝ շինել, տաք պիջակ, երեք անդրավարտիք իրար վրա, վալենկաներ։

Դեկտեմբեր է, կռվում ենք Մոզդոկի տակ։ Ուր մթնի, այնտեղ էլ պիտի քնեմ։ Ձյան վրա, ռումբի փորած փոսում կամ մի լքյալ, խոնավ խրամատում, դրա համար էլ ինչքան շոր ունեմ հագիս եմ մանգալիս։

Այլևս ուժ չունեմ առաջ գնալու. մութ, ակնակիր գիշեր է, հոգնածությունն ու քունը հաղթում են ինձ, գլուխս ծանրացած է օրվա կռիվների թոհ ու բոհից։

Մտա շտաբի բլինդաժ. այստեղ լավ է, խոր է, պայթող ականները չեն վնասի։

Մի անկյունում մոմ է վառվում, և նրա լույսի տակ անքնությունից կարմրած աչքերով մի երիտասարդ մեքենագրում է հրամանները և... օրվա սպանվածների ցուցակը։

Նրա մոտ նստած են չորրորդ բաժնի մարդիկ և լուռ աշխատում են։

Մյուս անկյունում կոպիտ տախտակներից պատրաստված մի լայն ու բարձր թախտ է։ Նրա վրա կողք-կողքի մեկնված են մի տասնյակ մարդիկ և նիրհում են՝ ոմանք անհանգիստ, ոմանք խոմփոցով։

Թախտի տակ մութ է, մոմի լույսն այստեղ չի հասնում։ Դուրս մեկնած ոտնամաններից ու վալենկաներից որոշեցի, որ յոթ-ութ հոգի էլ թախտի տակ են քնած։ Սողոսկեցի ներս ու մեկնվեցի խոտի վրա, անծանոթ այդ մարդկանց կողքին։

Բլինդաժը ցնցվում է որոտներից, և ամեն պայթյունի հետ նրա պատերից ու առաստաղից ավազ է մաղվում։ Մոտս պառկած մարդը պայթյունից ջղաձգվում ու ցնցվում է։ Հանկարծ նա շուռ եկավ դեպի ինձ, և ես կանացի մի քնքուշ ձայն լսեցի.

— Օ՜հ, մա՜մա...

Քնի մեջ է, խե՜ղճ աղջիկ...

Ես ունկնդրում եմ նրա արագ շնչառությունը. երազում հետը ինչ-որ բան է կատարվում։

— Ա՜ռ, առ փաթաթանը... արա՜գ, արյունաքամ եղավ, շո՜ւտ...— հստակ ու տագնապով արտասանեց աղջիկը՝ ձեռքերը խավարում առաջ մեկնելով։

Ես բռնեցի նրա ձեռքը և մեղմ ասացի.

— Քնի՜ր, քնի՜ր, արդեն փաթաթեցի...

Հանգստացավ ու քնեց։ Ափսո՜ս, մութ է և ես չեմ տես-

նում, թե ինչ արտահայտություն առացավ նրա դեմքը,— հավանաբար մանկան խաղաղ ժպիտ է խաղում շրթունքներին,— չէ՞ որ համոզվեց, թե ապրումը կատարվել է և մի կյանք էլ է փրկել։

Բայց երկար չտևեց նրա խաղաղ քունը. ամեն պատճառներից վեր է թռչում ու կրկնվում են ջղաձգությունները։

Խե՜զճ մեր աղջիկներ, բնությունը ձեզ քնքուշ ու գորովագութ մայր է ստեղծել, սակայն գուք, դեռ չճաշակած այդ քաղցրությունը, տանում եք ձեր դաժան լուծը՝ խոնավ խրամատներում...

Սիրտս ճմլվում է կարեկցությունից։ Ես գրկում եմ նրա գլուխը ու շոյում մազերը։ Մատներիս տակ փափո՜ւկ, քնքո՜ւշ մետաքս վարսեր են և ջոջափելով ես զգում եմ անպամ նրանց գույնը՝ անշուշտ բաց շիկավուն են, փայլուն ալիքներով։

Շեմքում պայթող ռումբից գետնատնակի առաջին մասը փուլ եկավ։

Աղջիկը ճչաց ու հազվեց կրծքիս։

— Քնի՛ր, ոչինչ չեղավ, ես ապահով եմ, քնիր հանգիստ...— փաղաքշող ձայնով ասացի ես՝ նրա մազերը համբուրելով։

Եվ կոշտ շորերով, բնավորությամբ կոշտացած այդ էակը ողամարդու իմ հզոր բազուկների մեջ քնքշացավ, հալվեց, այտով հպվեց կրծքիս ու երեխայի նման քուն մտավ՝ հանգիստ ու անվրդով։ Այնուհետև ոչ մի պայթյուն այլևս նրան չարթնացրեց. նա ապահով էր զգում իրեն, ինչպես գտան իր մոր գնչի տակ՝ ջերմությամբ ու անհոգությամբ։

Լուսադեմին ես փորձեցի զգուշությամբ ձեռքս հանել նրա գլխի տակից և վեր կենալ, ժամանակն էր մարտի դաշտ գնալու։ Քնի մեջ կարծես անպարտելի մնալու վտանգն զգալով՝ աղջիկը բնազդորեն հպվեց ինձ ու հենց այդ հպումից էլ արթնացավ, շոշափեց իմ կոշտ արտաքինը, ձեռքս գտավ, սեղմեց բարեկամաբար ու թախանձեց.

— Մի՛ շարժվեք, չորս օր է չեմ քնել... այնպե՞ս ուզում եմ քնե՛լ... Երեկ...

Ու քնեց խոսքը չավարտած։ Եվ ես զգացի, հասկացա, որ այդ պահին նա այլևս ցերեկվա մարտիկը չէր ավտոմատը ձեռքին, այլ կին՝ իր քնքշանքներով, գուրգուրանքի կարոտով և բոլոր կանանց հատուկ այն հոգեբանությամբ, որ ամենաերկ-

www.a-pdf.com

չուտ կնոջն անգամ այնպես ապահով է դարձնում տղամարդու հոգանոց ներքո, նրա թևի տակ։

Իմ անծանոթ քո՛ւյր, խրամատներում տանջված իմ քնքուշ բարեկա՛մ։

Ես շատա՛ քո դեմքը և շիմացա՛ քո անունը։ Լուսադեմին պատերազմի փոքրիկահաչիկ ձայնը մեզ տարբեր ափեր նետեց։ Ես կոքսրի՛ քեզ, բայց աչքաբաց էլ զգում եմ դեմքիս քո անհանգիստ շնչառությունը, մատներիս տակ քնքշությունը մեռած վարսերիդ և լսում եմ երազումդ արձակած խուլ թառանչներդ։

Ես գիտեմ, որ այդ թառանչները դու նրա՛նց համար ես արձակում, և քո քնքուշ սիրտը տրոփում է նրանց համար։ Գիտեմ և այն, որ ռազմաճակատի բիրտ իրականության մեջ դու կրծքիդ տակ գուրգուրանք ունես պահած քո հարազատների համար և կարոտ ես սիրող ամուսնուդ գգվանքին։

Մի՛ շիկնիր ամոթխածությամբ, մի՛ խոնարհիր աչքերդ, որ ես զգացել եմ հոգուդ տրոփյունն այն գիշեր, գիտեմ, որ բլինդաժի խավարում իմ բազուկների մեջ դու նրան էիր պատկերացնում։ Նրան, որ պիտի գա վառոդի հոտը ցրվելուց հետո՝ հաղթանակի պտակը ճակատին։ Դու կարոտ ես նրա՛ գգվանքին, այդ նրա՛ կրծքին էիր սեղմվում դու այն գիշեր։

Մի՛ շիկնիր, քույր իմ...

Գրված խրամատում,
23 դեկտեմբերի, 1942 թ.։
Մոզդոկից արևելք։

ՀԱՅՐԵՆԻ ԹՈՒՓԸ

(Կովկասի պաշտպանության օրերից)

1

Թարի լույս, քնթերցո՛ղ։ Արևելքն արդեն շառագունել է, հետևհետև ցրվում, անէանում է հովտի վաղորդյան մշուշը։ Ի՜նչ հիանալի առավոտ է բացվում։

Ահա իմ փոքրիկ ծանոթը, բլինդաժիս առաջ բուսած գանգրահեր թփին նստած, երգում է արշալույսի մեղեդին։ Ի՜նչ քաղցր, ի՜նչ դուրեկան է ճոպղում նա, մահվան ու արյունի հոտում մնացած այդ միակ թռչնակը։

www.a-pdf.com

Բարձր ամբարտակներ եմ քաշել կարոտիս ափերին, բայց փոքրիկ այս թռչնակն իր վաղորդյան քաղցր դայլայլով հանում է ափերից իմ անհուն կարոտը, Գուգարաց չքնաղ աշխարհի կարոտը։

Հիմի գարունը բարձրանում է մեր ձորերով։ Հիմի քարափների արևոտ ստորոտում իր կապույտ գլխիկն է հանում մանուշակը... Հիմի եղնիկները Զաթին-Դաղի թփուտներում «բուրջ» են ուտում... Եվ աշիկս նայում է մեր պարտեզի ծաղկած ծառերին ու հարցնում մորը.

— Մա՛մ, այս ծառերը պապան է տնկել, չէ՞... Բա ե՞րբ կգա պապաս, մա՛մ։

Ինչե՞ր ասես չի հիշեցնում ինձ փոքրիկ այդ թռչնակն իր ճռվողյունով։

2

Հորիզոնում սև ծխի ամպիկներ երևացին, ընթերցո՛ղ։

Մենք ներս սողացինք բլինդաժները և ունկնդրում էինք չարագուշակ գժժոցը։ Այդ արկերն են գալիս դեպի մեզ։

— Ի զե՞ն...

Որոտում է մեր պատասխան համազարկը, վառոդահոտ մառախուղի մեջ ընկղմվում է և՛ բլինդաժ, և՛ թուփ...

Զմռան քնից նոր արթնացած հովիտը մի պահ միայն զմայլվեց գարնան արեգակի առաջին շողերով։ Սկսվեց այդ հովտի մղձավանջային առօրյան. հողի, փոշու ու ծխի շատրվաններ ժայթքեցին դեպի երկինք, և հովիտը հոշոտվեց՝ գարնան տենչը սրտում։

Գնդացրի դիտանցքից դուրս եմ նայում. իմ թռչնակը չկա, նա թաքնվել է թփի տակ։

3

Երեկոյան դեմ որոտները դադարեցին։ Բլինդաժներում լսվեց կաթսայիկների շխկրտոցը. ճաշ են բաժանում։ Կարմիր խաչի նշանը թևերին կապած կանայք պատգարակներով թիկունք են տեղափոխում վիրավորներին։ Բլինդաժից ոչ հեռու թարմ հողի մի կույտ էլ բարձրացավ...

Թռչնակը նորից դուրս է եկել թփի տակից ու դայլայլում է մեղմ ու տխրագին...

www.a-pdf.com

Արդյոք մեր զոհվածների փա՞ռքն է երգում նա, թե՞ վրեժի կանչում մեզ՝ իր փոքրիկ, իր քնքուշ հոգով...

4

Բարի երեկո, ընթերցո՛ղ։

Աղջամուղջն իջնում է հովտի վրա, հետախույզները փորող են տալիս թփերի տակ։ Իջնում է ռազմաճակատային երեկոն ծանր երազի նման։

Մեր ուված հացի փշրանքները կերել է նա, մեր բարեկամ թռչնակը, ու քուն մտել թփի տակ։ Մենք չենք տեսնում նրան, բայց զգում ենք այդ փոքրիկ էակի ներկայությունը. նա այնտե՛ղ է՝ իր հայրենի թփի տակ։

Մեր ականջները դժժում են պայթյուններից, մի տեսակ հարբածի նման ենք։ Ընթերցո՛ղ, պատկերացնո՞ւմ ես, թե ինչ քաոս է տիրում հիմա այդ ճնճղուկի փոքրիկ ուղեղում։ Ի՞նչ ահարկու պիտի լիներին, հազարապատիկ ահարկու, ականների որոտները այդ թռչնակի համար։

Նա խլացել է երևի. այսօր ցավագին ցնցում էր գլուխը, ցած ընկնում, ապա նորից բարձրանում իր սիրած ճյուղին։

— Կոնտուզիա է ստացել,— կատակեց ընկերս։

— Բայց շարքից դուրս չի գալիս, սանկայան չի գնում,— խորիմաստ նկատեց կոմիսարը։

Նրա խոսքը կծու ակնարկ էր մեկի հասցեին։ Ու այդ մեկը կարմրեց, գլուխը կախ գցեց։ Նա խոշոր մարդ էր, բայց կուչ եկավ, փոքրացավ այդ փոքրիկ ճնճղուկի առաջ։

Եվ իսկապես։ Մենք այդ մասին իսկի չէինք մտածել, չի՞ նահանջում այդ փոքրիկ արարածը, հասկանո՞ւմ ես, ընթերցող։ Չի նահանջում սավառնակներից եկող տոննանոց ռումբերից, չի նահանջում ամեն օր մեզ վրա եկող գերմանական «վագրերի» առաջ։ Ողջ հովտում ոչ մի թռչուն չի մնացել. որոտներից բոլորը փախել են խելակորույս։ Իսկ նա միշտ այստեղ է՝ հայրենի թփի տակ։

Եվ մենք միանգամից գլխի ընկանք, որ փոքրիկ այդ թռչունի արարքի մեջ մե՞ծ ու խոր իմաստ կա։

Երբ կարճատև անդորր է իջնում հովտի վրա և ցրվում է վառոդի ծուխը, նա դուրս է գալիս թփի տակից, թառում ճյուղին ու իր երգով կյանք է ավետում այդ մահվան հովտում,

www.a-pdf.com

ավելանում է վերահաս գարունը։ Ի՞նչ հույսեր ասես որ չեն զարթնում մեր մեջ այդ թռչնակի երգերից։ Կյանքի հավատ կա ասես նրա երգերի մեջ։ Իր արյունոտված սրտից եկող թախծոտ մեղեդիներն անգամ հիշեցնում են մեզ, որ կյանքը փրթթում է, և որ նա կհաղթի մահին։

Եվ երբ երկիրը ցնցվում է համազարկերից, երբ մենք արկերի ու գնդակների հեղեղ ենք ուղարկում թշնամուն, նա անմիջապես ցած է թռչում ու թաքնվում իր բնում։

Բայց նա միշտ այնտեղ է, կապված է իր բնին. նա իր բնազգով, իր փոքրիկ սրտով անքակտելի ձուլված է իր վաթանին...

5

Թուփը բզկտվել է, ընթերցո՛ղ, ինչպես ավերվել են այն շենները ու տվանները, որտեղից խորշակի նման անցել է թշնամին։

Բզկտվել է թշնամու գնդակներից, քանի որ կարծես փոսքներս մեկ արած մենք մեր հրազենի փողերը մեկնում ենք թփի կողքից կամ վերևով։

Եվ թշնամու գնդակներից են անչուշտ թփի տակ ընկել մեր թռչնակի հարազատները,— երկու թռչնիկ, մեկը խաշոր, մուգ գույնի, որ երևի նրա վարուժանն է, իսկ ճյուռը՝ փոքրիկ, բաց գույնի փետուրներով, ձագն է երևի։

Հիմա իր ճյուղակատար թփին կանգնած նորից առաղ է ասում, մերթ թախծոտ ու վշտալի, կարծես հառաչում է իր խաշտանգված վաթանի, իր ապամնված հարազատների համար, մերթ տենչալի ու թռվիչ, և նրա երգի մեջ ասես ցաքնան ու կյանքի գովքն է հնչում։

Այդ օրը ծովից, ցամաքից և օդից մեծ գրոհ էր պատրաստում թշնամին։ Մեր հատվածում մենք փոքրաթիվ էինք ու թույլ։ Բայց մենք, հակատանկային նռնակները ձեռքներիս՝ պատրաստ էինք խոյանալու «վագրերի» ոհմակի դեմ և կյանքի ու մահու կռվի բռնվելու նրանց հետ։

Ահա դիմացի բլրի լանջին երևացին տանկերը։ Երկինքը ծածկվեց սավառնակների երամներով։ Թուփ, հող, քար իրար խառնվեցին հովտում։ Նայում եմ ընկերներիս. նրանց հայացքը լարված է, տագնապալից։ Թռչնակը դեռ երգում է խռովահույզ ու սրտառուչ։

www.a-pdf.com

Դուրս եկավ կոմիսարը խրամատից, ձեռքի նոնակը մեկնեց դեպի թուփը ու խոսեց հուզված, և ես նրա խոսքի մեջ գտա ինձ զբաղեցնող հարցի պատասխանը։

— Նա նորից թփի տակ մտավ,— սկսեց մեր կոմիսարը՝ հուզված ու հանդիսավոր։— Թփի տակ մտավ, բայց, հավատացնում եմ ձեզ, ոչ մի ուժ նրան չի հանի այնտեղից։ Կանաչոտ այդ թուփը նրա հայրենի տունն է, մեր առաջ ձգվող այս սքանչելի հովիտը իր թփուտներով, իր արծաթափայլ գետակով, իր ծաղկավետ մարգագետիններով, նրա հայրենիքը։ Այստեղ է ծնվել նա, այստեղ էլ կորցրել է իր սիրասուն ձագերին։ Այստեղ ճախրել է նա ջինջ օդում, ճոպռել ու խնդացել իր սիրուն ձագերի հետ։

Նրանք չկան, այս հովիտը նրանց գերեզմանն է։ Թող պայթեն արիները, թող երկնքից ռումբ ու հուր թափե թշնամին, նա չի թողնի իր հարազատների գերեզմանը, չի՛ հեռանա իր քաղցը վաթանից, իր հողից, իր ջրից, այդ գանգուր թփից, որի ոստերի վրա ծնվել ու մեծացել է ինքը...

Կոմիսարը մի պահ կանգ առավ, խուզարկու հայացքով ստուգեց իր մարտիկներին և հուժկու ձայնով հարցրեց.

— Իսկ մենք, որ թաղեցինք մեր ընկերներին այս հողում, մենք, որ գարնան առաջին ծիլերը ներկեցինք մեր արյունով, մենք, որ ծնունդ ենք այս հողի և մեր հոգու բոլոր թելերով կապված ենք մեր վաթանին, մի՞թե պիտի թողնենք մեր բույնը, մեր հայրենի թուփը...

Կոմիսարի ձայնը հնչում էր հուզված ու ազդու, կարծես մեր ժողովրդի ոգին ինքն էր խոսում ու մեզ մարտի հրավիրում։

Բորբոքված հայացքով նա զննեց մեզ բոլորիս, ու երբ տանկերն արդեն մոտ էին՝ որոտաց.

— Ի՞նչ...

Ով նոնակն օդում ճոճելով ցատկեց պողպատե հրեշների ընդառաջ։

Մնաս բարի, ընթերցո՛ղ, մենք շնչակտուր վազում ենք մեր կոմիսարի ետևից՝ արկերի պայթյունների տակ... Մնաս բարի՛, ահա բոցավառվեց առաջատար տանկը, մնա՛ս բարի։

— Ուռա՛՛՛ա... հառա՛՛՛ջ...

1942

Ռազմաճակատ

www.a-pdf.com

ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆԻ ԴԵՂԱՏՈՄԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

1

Կարոտով եմ հիշում այն օրերը, երբ Ազատ Վշտունու, Հարություն Մկրտչյանի և Բաբկեն Շահումյանի հետ գնացինք Թամանյան թերակղզին, ուր մեծ ու դժվարին ճակատամարտերից հետո դադար էր առել հայկական 89-րդ դիվիզիան։ Հայ ժողովրդի ողջույնն էինք հղելու մեր քաջարի մարտիկներին և մամուլում նկարագրելու էինք նրանց սխրագործությունները։

Ապրանքատար գնացքով, ապա՝ զինվորական բեռնատար մեքենաները մի քանի անգամ փոխելով՝ վերջապես հասանք թերակղզու կիսավեր գյուղերից մեկը։

Բոլո՛ր էինք հոգնած, իսկ ամենից շատ՝ մեր բանաստեղծը, որ մեզնից թե՛ տարեց էր, թե՛ թուլակազմ։ Յուրաքանչյուրիս շալակին մի զինվորական պայուսակ էր, մեջը՝ իրերը և «սուխոյ պայոկը»՝ չորացրած տառեխ, աղյուսի կարծրության «բուխանկա» հաց, տուփերով «չոր կաշա»։ Մութն է, խարխափելով գնում ենք չգիտենք ուր. գյուղսովետն ենք փնտրում՝ գիշերելու տեղ խնդրելու։ Վշտունին ետ է մնում, նրա երկար, բարակ դոնքիշոտյան ուրվականը երերում է նեղ փողոցը եզերող պատերի միջև։

— Ազա՞տ... Հիմի կհասնենք, մի քիչ էլ դիմացիր,— հորդորում է Հարությունը։

Ետ գնացի, ուսից վերցրի բեռը՝ թեթևացավ։ Ու այնուհետև ամեն օր ես դարձա Ազատ Վշտունու կամավոր բեռնակիրը։

Բեռից ազատվեց, բայց դրանով չբավականացավ. երբ մեզ տեղավորել էին ռուսական մի խրճիթում, ծոցագրպանից հանեց ծալած մի թուղթ ու մեկնեց մեր խմբի «տնտեսվար» Բաբկեն Շահումյանին։

— Պրոֆեսոր Մելիք Ադամյանի դեղատոմսն է։ Մեկնելուց առաջ եմ ստացել։ Կարդա՝ անելիքդ կիմանաս...

Բաբկենն սկսեց կարդալ բարձրաձայն.

«Ազատ Վշտունին ունի արյան պակասություն։ Հյուծված է։ Ընդունել թարմ կարագ՝ օրական 200 գրամ, խավիար՝ 50 գր., հում ձու՝ 10 հատ, կաթի հում սեր՝ 1 բաժակ, կակաո...

www.a-pdf.com

— Լսի՛ր, դու հո մեզ տանջելու միտք չունես,— բարկացած կտրեց մեր խմբի ամենից մեծ ախորժակ ունեցող անդամը՝ այսինքն՝ ես։

Այնքան քաղցած էինք և պատերազմի ընթացքում մոռացված եղեմական ուտելիքների հիշատակումն այնպիսի ռեֆլեքսներ առաջ բերին առատ որսամսին սովոր ու հիմա դատարկ իմ ստամոքսում, որ քիչ էր մնում խլեմ ու պատառոտեմ Մելիք Ադամյանի «դեղատոմսը»։

— Լսիր, էդ պրոֆեսորը քեզ ձեռք է առել,— հանգիստ եղրակացրեց Հարությունը։— Նրա ռեցեպտով հիմի Փարիզում էլ բան չի գտնվի, քանի որ գերմանացիները մորեխի նման խժռել են ամեն ինչ։

— Իմ գործը չի,— իրենը պնդեց Վշտունին,— Մելիք Ադամովը անվանի բժիշկ է, նա անտեղի բան չի գրի։ Թե որ ուզում եք հետներդ դիվիզիա հասնեմ, տվեք ռեցեպտով ինձ հասնող «պայոկը»։

Մնացինք շիվարած։ Տանտիրուհուն խնդրեցինք գոնե մի քաժակ կաթ ճարել «մեր հիվանդ բանաստեղծի» համար։

— Երդվում եմ,— ասաց բարի պառավը,— գյուղում ոչ մի կով չի մնացել... Գերմանացիք բոլորն էլ մորթեցին։ Մի երինջ ունեի, վեց ամիս դետնի տակ թաքուն պահեցի։ Գերմանացիք որ կորան՝ դուրս հանեցինք։ Հանեցինք ու փոշմանեցինք. խեղճ կենդանին կուրացավ... Վեց ամիս լույս չէր տեսել... կուրացավ...

Ու պառավը թոնթորալով աչքերը սրբեց գոգնոցի փեշով։

— Աքլորականչին հագնվում ենք,— հրահանգեց «դելեգացիայի» պետ Մկրտչյանը։

Քնով ընկանք մինչև կեսօր. գյուղում ոչ մի աքլոր չէր մնացել, որ արթնացներ մեզ...

2

Հասանք դիվիզիա՝ քեֆներս բացվեց. ամբողջ թերակղզին ծածկված է խաղողի անտեր մնացած այգիներով, ու հիմա ողջ տափաստանը հագեցած է պճպճացող մաճառի բուրմունքով. Արարատյան երկրի խաղողագործները իրենց պապենական փեշակով են զբաղված...

Իզուր է գոռգոռում դիվիզիայի փոխ-հրամանատար Կարա-

պետյանը, իզուր է հրամայում շուռ տալ ջահել գինով լիքը տակառները. տասը հազար մարդ խաղող է մղում, այդքանի առաջն առնե՞լ կլինի։

Շուտով կերշի նեղուցը կանցնեն ու նորից կնետվեն դժոխքի կրակների մեջ... Թող մի լավ հանդստանան... Թող մաճառ էլ խմեն։ Հաղթողներն իրավո՞ւնք ունեն, թող խմեն, հալա՛լ իրենց...

Ներկայացանք Նվեր Սաֆարյանին, որ արտաքուստ բոլորովին էլ դիվիզիայի հրամանատարի նման չէր. մեր հուշակալոր դիվիզիան, իմ պատկերացմամբ, մի ամրահաս պետ պիտի ունենար, մինչդեռ մեր առաջ կանգնած էր միջահասակ, հայդուկի նիհար ու թուխ դեմքով մի համեստ մարդ։ Սիրալիր ընդունեց, կարգադրություններ արավ, որ մեզ տեղավորեն։ Տնտեսական գծով նրա տեղակալը՝ լայն ու խոշոր դեմքով, խոշոր աչքերով գնդապետ Ջիլինգարյանը, երբ մեր կարիքներն էր հարցնում, տնտեսվար Բաբկենը հարկ համարեց ներկայացնել Մելիք Ադամյանի «ռեցեպտը»։ Գնդապետը կարդաց, զարմացավ, ուսերը թոթվեց. երևի նա էլ վաղուց մոռացել էր դեզատոմսում թված մթերքների գոյությունը։ Աշխատեց հիշել, թե ինչ բաներ են դրանք՝ խավիար, կակաո... ապա տարակուսած հարցրեց.

— Ի՞նչ բան է դա...

— Մելիք Ադամովի ռեցեպտն է,— բացատրեց Բաբկենը։— Ազատ Վշտունուն պետք է կերակրել այդ ռեցեպտի համաձայն...

Սիծաղեցինք, բայց գնդապետը լրջորեն մոռածեց մի պահ ու անսպասելի վճռեց.

— Լա՜վ... Միայն թե վաղվանից...

Դիմացի՛ր, Ազատ Վշտունի, մինչև վաղը գիմացիր զինվորական կաշայով, տեսնենք վաղվանից ինչ հրաշքով է ուժի մեջ մտնելու «Մելիք Ադամովի ռեցեպտը»...

3

Շրջեցինք զորամասերը, ծանոթացանք հերոսներին՝ նոյեմբերյանցի Ջահան Կարախանյանին, զանգիջեցի Հարությունին և նրանց ընկերներին։

Խոնավ ու մինատատ գետնատնակներում մտերիմ զրույց-

www.a-pdf.com

ներ ունեցանք նրանց հետ, և երբ դիվիզիան գունդ առ գունդ դդաստ կանգնեց ընդարձակ տափարակում, անվանի բանաստեղծը իր ճերմակող երկար մազերը թափահարելով երույթ ունեցավ դորշ շինելավորների ծովի առաջ։

Վառ Հայաստանի չքնաղ վայրերից
Ձեզ անմար բարև՛ եմ բերել,
Ձեր քույրիկներից ու մայրերից
Սիրո ջերմ համբույր եմ բերել։

Տոկուն, աննկուն հայ ժողովրդից
Ձեզ ուժ ու կորով եմ բերել,
Ու ձեր հաղթական վերադարձի
Հավատք ու գորով եմ բերել...

Շարքերով, սակայն, տարակուսանքի մի շշուկ անցավ, երբ բանաստեղծն ասաց, որ բարև է բերել նաև նրանց նորածիններից։ Գյումրեցի մայլար Օնիկը չհամբերեց ու տեղից.

— Երկու տարի է բանակն ենք, էդ նորածինները ուրդե՞ն իջաթ եղան...

Պատասխան ոտանավորով հանդես եկավ դիվիզիայի պոետ Արշալույս Սարոյանը։ Նա բամբ ձայնով կարդում էր.

Երբ վերադառնաք կրկին Հայաստան,
Անցեք Արաքսի ափերով նորից,
Հայ ժողովրդին մեր հավերժական
Բարևներ տարեք իր որդիներից։

Մեր վերադարձի օրերն են հասել,
Հաղթական կգանք՝ դռները բացե՛ք,
Սրտերում մեր ջերմ և՛ կարոտ, և՛ սեր,
Գալու ենք՝ դինու կարասներ բացե՛ք։

Շինելավորների ծովն ալեկոծվեց, ապա որոտաց ուժգին.

— Ուռա՜ա՜... Կեցցե՛ մեր հայրենիքը...

Ի՜նչ արյան պակասությո՜ւն, ի՜նչ հյուծախտ, այնտեղ պիտի լիներիր, պրոֆեսոր Մելիք Ադամյան, որ տեսնեիր, թե ինչ շառագույն ալիքներ են անցնում ալեհեր բանաստեղծի գունատ այտերով, ի՜նչ կրակներ են ցոլանում այն աչքերում, որ մարած էին, երբ բանաստեղծին քննում էիր ռազմաճակատ մեկնելուց առաջ։

www.a-pdf.com

Տեղ հասավ մարշալ Տիմոշենկոն՝ հաղթանդամ ու հսկա-ծաղեմ, ողջագուրվեց մեզ հետ ու դարձավ զորքին.

— Մի մոութներին նայեցեք, ամեն մեկը մի Տիմոշենկո է... էսպիսի զորքի առաջ ֆաշի՞զմ կդիմանա...

Նորից ծփաց-ծիծաղեց լայնատարած ծովն ու նորից մոռնչաց իր խորքերից.

— Ուռա՜ա՜...

4

Այդ երեկո մենք մարշալի հյուրն էինք։ Այդ ինչքա՜ն գեներալներ կայի՜ն... նույնիսկ համհարզը գեներալ է, այն ժամանակ, երբ մեր պանծալի դիվիզիայի հրամանատարը դեռևս գնդապետ է։

Այդքան գեներալների մոտ ուտե՞լ կլինի... Շարել են սեղանին «Մելիք Ադամովի ռեցեպտով» նախատեսված բոլոր ուտելիքները, բայց քանակով՝ հարյուրապատիկ։ Կան բազմաթիվ այնպիսի ուտելիքներ էլ, որոնք «ռեցեպտում» չկան (օրինակ, ֆրանսիական «բորդո» գինի), այնպիսի պահածոներ, որոնց անուններն անգամ լսած չէինք։

Քաղցած ենք, բայց դե սրանք աչքները լի գեներալնե՞ր, ո՞չ իրենք են ուտում, ո՞չ մեզ են ստիպում, որ ուտենք (հո հայ չե՞ն, որ ստիպեն...)։ Բաժակաճառեր են ասում, կենացներ են առաջարկում։ Վշտունին ուշադրության կենտրոնում է. «Մեր ժողովրդական բանաստեղծն է», պարծեցել ենք մենք ու ակամայից վնասել խեղճին՝ հարցերով դիմում են իրեն, գլուխը տաքացած մարշալը ձեռքը վզովն է գցել, համբուրում է ու չեն թողնում ձեռքը մեկնի խավյարին, կարագին, Մելիք-Ադամովի նշած բարիքներին...

Հաջորդ օրը մեզ հրավիրեց բանակի հրամանատար Լենսելիձեն։ Նույն պատմությունը. սոված նստում ենք, սոված վեր կենում։ Իսկ սեղանները տնքում են գերմանացիներից ավար վերցրած ընտիր մթերքների ու թանկագին խմիչքների ծանրության տակ։

Էլի Տիմոշենկոն ներկա է, եղբայրացել է հետներս. թե՝ ես Տիմոշենկո չեմ, ես Տիմոշենկոյանց եմ։ Ու զգացված, ջիգյարով պատմություններ է անում հայ մարդկանց հետ ունեցած իր բարեկամության մասին, մի գլուխ թամանյան քաջերին է

www.a-pdf.com

գովում ու ասում է՝ իմ արծիվները կերշը կկտրեն անց կկենան, թեկուզ թշնամին մյուս ափից ինչպիսի կրակ էլ թափելու լինի...

Երկու օր հետո Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատար Իվան Պետրովի հյուրն էինք։ Այդտեղ էին նաև Սևծովյան ռազմական նավատորմի գեներալները, ուստի և այս անգամ գեներալներին բոլորովին հաշիվ չկար։

Ասացի՝

— Բարկենն ջան, չի լինի՞, որ առանց գեներալի սեղան նստե՞նք։

Թե՝

— Ո՞նց...

— Էնպես, էլի՛, բաժակաճառերը արագ ավարտեն գնան իրենց զինվորական գործին, մենք շարունակենք...

Բարկենը թե՝

— Լավ ես ասում, Վախթանգ ջան, համա վիճակներս գեներալական է. էսքան գեներալ միայն Ռեպինի «Պետական խորհուրդ» նկարի մեջ եմ տեսել։

Անհաշիվ տպավորություններով վերադարձել ենք Կրասնոդար և տեղավորվել մի լավ հայի՝ մշեցի Տիգրանի տանը։ Ազատ վշտունին գեներալական ճոխ սեղաններից հետո արհամարհանքով է նայում իր զինվորական օրաբաժնին՝ չոր «վոբլային» ու եփած-ծրարած-մամլած ձավարե «կաշային»։ Էլի Մելիք Ադամովի դեղատոմսը դրել է սեղանին ու հացադուլ հայտարարել.

— Բժիշկն այս է նշանակել, կտա՞ք՝ լավ, չեք տա ես ձեր «ավյոսի կաշային» ձեռք տվողը չեմ։

Հաջորդ օրը գնացինք շուկա՝ ահռելի գներ են։ Կարագ գտանք՝ կիլոն 400 դուրլի արժի, իսկ իմ սպայական աշխատավարձը ամսական 800 ռուբլի է։ Մելիք-Ադամյանի նշանակած չափով կարագ առանք, այդ օրն էլ մթնեցրինք։ Երեկոյան մեր բարի տանտերը խորհուրդ տվեց դիմել Կրասնոդարի քաղսովետին։

— Նախագահի տեղակալը ղարսեցի մի հայ է՝ Թումասովը, նա մի բան կանի։

www.a-pdf.com

Ձա՞, Թումանո՞վը, հիշում եմ։ Անցյալ տարի, որ մեր զորքը մտավ Կրասնոդար, դրանց տանը գիշերեցի։ Գե, ե՞ կիմանա հայ բանաստեղծի «ղադրը», Մելիք-Ադամովի դեղատոմսը փերցնեմ մուտը գնամ։

Գնացի, տիրալիր ընդունեց, վշտունու «դեղատոմսի» վրա մի փոքր զվարճացանք։

— Բայց,— ասաց,— հիմի ձեզ այնպիսի տալոններ կտամ, որ Մելիք-Ադամովի ռեցեպտն էլ մոռանաք։

Ինչ ասեղով դարակից ինչ-որ գանձապարկեշտ թղթեր հանեց, որոնց վրա միայն թվեր կային տպագրված։

— Սա մինիստրական պայոկ է,— բացատրեց Թումանովը։— էս թիվը նշանակում է մի կիլո կարագ, էս անենշան թիվը հինգ տուփ ինքրա է, էս մեկն էլ՝ մեղը է, կարծեմ էլի մի կիլո։ Մյուսները...

Էլ շարունակությանը չսպասեցի։

— Ինչ, որտեղի՞ց պիտի ստանանք...

— Քաղկոոպից։ Բայց դիրեկտորը մի ժլատ հույն է, չգիտեմ, նրանից կարո՞ղ եք բան պոկել։

— Ինչո՞ւ չենք ստանա, տալոնի բան չի՞։

— Բայց նայած տալոնն ո՞ւմ ձեռքին է...

Ու Թումանովը կարեկցությամբ նայեց իմ զինվորական կեղտոտ գրպանին, որի խունացած ասպագիրներից միայն կարելի էր հասկանալ, որ այդ հնամաշ հագուստի տերը սովետական բանակի սպա է։

Ուրախ-ուրախ մտա տուն ու տալոնները դրի սեղանին։

— Մելիք-Ադամովի պայոկը բերի՞, թե չէ,— հաղթականորեն հարցի ես։

Քեռի Տիգրանը, որ թերահավատի մեկն էր և պանդուխտ հայի իր տառապալից կյանքում շատ անգամ էր հիասթափություններ կրել, խրատեց.

— Քանի դեռ ափիդ մեջ չէ՝ քոնը չհամարես։ Եթե նույնիսկ բերանումը է, քանի դեռ կոր չես տվել՝ քոնը չհամարես...

Ա՜յ քեզ անհավատ մարդի՛կ... Ճիշտ Թումանովի պես հեղինակավոր մարդը...

Բարկենին ուղարկեցինք հույն դիրեկտորի մոտ։ Նայել էր անուսադիր ու կեղտոտ տելեգրեյկային, նայել էր «մինիստրական» տալոնին ու տեսել էր, որ դրանք հեչ իրար չեն բռնում...

www.a-pdf.com

Բայց քանի որ Թումանովն էր տվել, բարեգործությանն համար «ցանել էր», թե՝ հիմի մթերք չկա, երթք օրից կդաք։

Փուքներս իջավ, իսկ քեռի Տիգրանը քմծիծաղ է տալիս մշեցու թավ քեզերի տակից. «Զատապի՞...»

Մոլորվել ենք. ի՞նչ անենք, երթք որ ո՞նց ուղարկենք, ասիր վաղը վիրավորմանդի էշերուն մեկներու ենք հայրենիք։

Ո՞նց ձեռքներիցս թռավ մինիստրական պայո՞ղը... իսկ մենք մտածում էինք այդ ուրբաթյան ուղղությամբ մի ճար հասցնել Երևան՝ պատերազմից տատանված մեր եղբայրներին։

Մանր տրամադրությամբ զարգացինք։ Գիշերվա կեսին լսեցինք Ազատ Վշտունու ուրախ կանչը.

— Գոտա՛, ճարը գոտա...

Արթնացանք, հարցուփորձ արինք։ Միտքը բացատրեց. դիպլոմատ է ձևանում...

Լուսաբաց դեռ կարգին չբացված հաղնվեցինք, կարգավորեցինք Վշտունու հագուստը, փայլեցրինք կոշիկները, քեռի Տիգրանի սնդուկից հանեցինք իր ջահել օրերի «եվրոպական կոստյումը»։

Զորա կողմից նստած ենք Վշտունուն, և կորած հույսեր են արթնանում մեր մեջ. սլացիկ ու բարձձև հասակը, ճերմակող երկար մազերը, որոնցից մի փոքր անփութորեն կախվել էր գեղեցիկ սև հոնքերի վրա, բանաստեղծական պարզությամբ ցի հայացքը, կոկիկ կոստյումը, պատկառելի դեմքը ֆրանսիական կոնսուլի տեսք էին տվել նրան։

Երիտասարդ հասակում մի քանի ամիս հաճախել էր Սորբոնի համալսարանը ու այդ ժամանակից մնացած հատուկենտ ֆրանսերենն էր կրկնում և հետո էլ հանդիսավոր քայլում սենյակում։

Կանգ առավ, ուսերանս արավ ֆրանսիացի հին ազնվականի նման ու գլխի մի կիրթ շարժումով դիմեց քեռի Տիգրանին.

— Բոնժո՛ւր, քամարա՛դ...

Միծաղեցինք։ Չէ՞, փորձը լավ է. գնա՛նք։ Ես դարձա «կոնսուլի» թիկնապահ սպան և մտանք դիրեկտորի ընդարձակ ընդունարանը։

Ես զգաստ ու հարգանքով կանգ առա շեմքին, իսկ Վշտունին առաջ անցավ բարձրաստիճան պաշտոնյայի վեհ քայլքով ու հանդիսավոր կերպարանք առած՝ մոտեցավ մեծ սեղանին։

www.a-pdf.com

Ապա զարմանալի կիրթ մի շարժումով ուսերանս արավ ու ալեխառն դանգուրները թափ տալով գոչեց.

— Բոնժո՛ւր, քամարա՛դ...

Դիրեկտորը իսկույն ոտքի կանգնեց և շփոթված կմկմաց. դե ինչ պատասխաներ, երբ նույնիսկ չգիտեր, թե ի՛նչ լեզվով են դիմում իրեն։ «Դիպլոմատը» առաջ մեկնվեց և խստությամբ հարցրեց.

— Տի պա ֆռանցուցկի փանիմա՞յ...— ու պատկառազդու հայացքը մեխեց շվարած դիրեկտորի դեմքին։

— Ցա... նննեետ,— կմկմաց սա։

«Կոնսուլս» այլևս ժամանակ չտվեց, որ դիմացինն ուշքի գա և տալոնները դրեց սեղանին։

Ա՛յ հիանալի ելք, շուտ ստորագրիր ու աղատիր պատիվդ...

Ու շփոթված-կարմրատակած դիրեկտորը՝ առանց նայելու, շտապ մակագրեց տալոններն-ու պատվիրեց օգնականին.

— Հետները դնա պահեստ... ու... այնպես, որ ... հասկացա՞ր...

Սորբոնի համալսարանի բառապաշարի մնացորդով Վշտունին հրաժեշտ տվեց և նույն վեհ քայլվածքով դուրս եկավ ընդունարանից։

Նրա ետևից, պատկառելի հեռավորության վրա, քայլում էր սովետական թիկնապահ սպան...

www.a-pdf.com

ԱՆՑԱԾ ԳՆԱՑԱԾ ԲԱՆԵՐԻՑ

www.a-pdf.com

ԾԱՆՐ ԶՄԵՌ

1

Զմեռանոցը, ուր պահում էինք մեր անասունները, թաղվել էր ձյան հաստ շերտի տակ։ Ծառերի ճյուղերը խոնարհվել էին ձյան ծանրությունից, իսկ լեռնային գետակը հաղիվ լսելի ձայնով խշշում էր սառույցի տակ։

Տարբեր կենցաղով ապրած մարդկանց վրա ձմեռը տարբեր ազդեցություն է ունենում։ Ես այժմ ամեն աշնան ականատես եմ լինում երեխաների բերկրանքին, երբ տեղում է առաջին ձյունը։ Քաղաքում ապրող մարդը հիացմունքով է նայում ձյան անթիվ-անհամար փաթիլներին, որոնք էլեկտրական լույսով ողողված օդում պտույտներ են գործում ճերմակ թիթեռների պես, իջնում մայթերին, էլեկտրաքարշի վագոնների վրա, ամենուր։

Սակայն մեզ՝ տավարածներիս, ձմեռը բերկրանք չէր բերում։ Կարիքի տակ կուչ եկած՝ մենք չէինք զգում ձմռան հմայքը։ Մեր փարթամ անտառները, մեր ծաղկոտ մարգագետիններն ու քչքչան վտակները թաղվում էին սառը վերմակի տակ, իսկ կարիքը շոքում էր դռանը։ Լավ է ասել իր մանկությունը մեր լեռներում անցկացրած բանաստեղծը.

Ո՞ւր կորան, ո՞ւր...
Տերև ու խոտ,
Վարդը շաղոտ,
Սարվորն ուրախ,
Սրինգ ու խաղ,
Ո՞ւր կորան, ո՞ւր...

Ընագնդին, լախտին, աթուրման, խարույկներն անտառում, սրինգն ու պարը բուխարիկի առաջ՝ ձմռան երեկոյին. այս բոլորը, որ մենք ապրում էինք շատ թե քիչ հաջող ձմեռները, այդ ձմռանը չքացել էին։ Եղբայրասպան պատերազմները դեռ չէին

www.a-pdf.com

վերջացել։ Մեկի որդին էր սպանվել, մյուսի եղբայրն էր հաշ-մանդամ ընկած տանը։ Զղվել էինք հողից էլ, ցանքից էլ։ Եղածն էլ մաուզերիստներն էին տանում բռնությամբ։ Հազար ու մի տանջանքով սարերից բերած մեր խոտը տրորում ու միջին տրտինգ էին տալիս խմբապետ Սեպուհի ձիերը։

Եվ մենք ահով ու թախիծով տեսնում էինք, թե ինչպես հետզհետե մարում էր փայլը մեր անասունների աչքերում, օր օրի չքանում էր նրանց մարմնի կլորությունը, ոսկորները դուրս էին ցցվում, խամրում էին մաղերը։

Ջահել երինջներն ու արջառները ջուրը տանելիս այլևս չէին խաղում, և ցուլն այլևս գետինը չէր քանդում ու չէր գոռում...

2

Մեր ձմեռանոցի ամենից փորձված տավարածը Մելոնց Ամին էր։ Այդ ձմեռ նրա երեսին մենք ժպիտ չտեսանք։

Հաճախ, խրճիթում նստած ժամանակ, լսում էի նրա ձայնը.

— Է հե՛յ, Ստեփանի տղա։

— Ի՞նչ է, ամի՛։

— Մի դեսն արի։

Գնում էի ցած։ Գոմաղբի կույտի վրա կանգնած՝ ճիպոտի ծայրով քրքրում էր։ Գիտեի, թե ինչ է ասելու. այդ կույտը մերն էր։ Ամեն առավոտ ես տաշտակը սղղացրել էի սառույցի վրայով և գոմաղբը տարել-թափել էի այնտեղ։

— Էս ի՞նչ է։

— Ի՞նչը, ամի՛։

— Ջահրումարը։ Բա իսկի տարուն չես մտիկ անո՞ւմ։

Եվ ճիպոտի ծայրով ցույց էր տալիս խոտի շյուղերը։

— Հիմի ամեն մի ծեղը մի ոսկի է, ամեն մի ծեղը մի անասունի կյանք։ Հլա գարունքն ո՞ւր է...

Ես մեղապարտի նման գլուխս կախում էի։ Իսկապես, ոչ մի «ծեղ» չէր կարելի կորցնել. չէ՞ որ դեռ հունվարն էր, իսկ մեր ցանկապատում մի բլրակ խոտ էր մնացել։

Փետրվարին մեր անասունների կերը բոլորովին վերջացավ։ Վերջացավ նաև հորեղբորս տղայի՝ Հայկի խոտը։ Այդ ձմեռ ես նրա հետ մի խրճիթում էի ապրում։ Ջորանոցում նա տիֆ էր

www.a-pdf.com

ընկել և առողջանալուց հետո գրեթե կորցրել լսելու կարողությունը։

Ամեն առավոտ, երբ գոմի դուռը բաց էի անում ու տեսնում, թե ինչպես են ինձ ուղղված կենդանիների աղերսալի հայացքները, սիրտս մղկտում էր։ Հայհոյում էի մեր խոտը տանող թալանչիներին և գոմից դուրս էի գալիս լցված աչքերով։

Հարկավոր էր միջոց գտնել անասունները փրկելու համար։ Մի երեկո Հայկի ականջին գոռացի.

— Էգուց գնանք բուրջ[1] անենք։

— Ձինը խորն է, տավարին հալ չի մնացել, տեղ չեն հասնի,— առարկեց նա։

— Կտանենք Կաղնուտը, էնտեղ ձինը բարակ է։

Համաձայնեց։ Մյուս օրը լեռան արևկող լանջի կաղնուտում անասունները ձյան մեջ կանգնած, դունչները վեր ցցած, նայում էին ծառերի ճյուղերին, որոնց վրա բողբոջներն արդեն սկսել էին ուռչել՝ ավետելով գարնան մոտիկությունը։ Ամեն մեկս մի ծառի տակ մտած՝ թրըխկ հա թրըխկ, կտրում էինք։

Հենց որ հսկա կաղնին ճռնչալով վայր էր ընկնում, և իր տակ ջարդում-խորտակում իրենից փոքր ծառերն ու թփերը, քաղցած կենդանիները վրա էին հասնում, ագահությամբ խրժռում նրա դալար ոստերը։

Այդ օրվանից սկսած մեր ձմեռանոցի անասունները բողբոջով էին ապրում։

Խառը տարիներ էին, տեր չկար մեր բնությանը։ Անխնա կտրվում էր անտառը, փչանում էր ժողովրդի այդ հարստությունը, բայց դարձյալ անասունները նիհարում ու կոտորվում էին. դե բողբոջը հո խոտին չէ՞ր փոխարինելու։

Գետի ձորը դարձել էր անասունների գերեզմանոց...

Մարտի սկզբներին մեր Մաշկա կովն էլ նստեց ու այլևս վեր չկացավ։ Դա մեր անասունների մայրն էր, մեր բոլորի սիրելին, մեր ընտանիքի հույսը։ Ցեղական, խոշոր, ճերմակ մազերով և գեղեցիկ եղջյուրներով մի կենդանի էր նա։

Ես շատ էի պարտական մեր Մաշկային։ Այդ այն տարին էր, երբ մենք գարու հացը երազում էինք տեսնում։ Եվ գարնանից մինչև օգոստոս, մինչև նոր հացի դուրս գալը, ես Մաշկայի

---

[1] Բուրջ անել — ծառի բողբոջներով կերակրել անասուններին։

www.a-pdf.com

կաթով էի ապրել, ու զարմանալի չէ, որ առանձին քնքշանք ունեի դեպի այդ կենդանին, որին պահել, խնամել էի՝ սկսած մանկությունից։

Այդ առավոտ ես ու Հայկը լինդ գցեցինք Մաշկայի տակ և մի կերպ վեր քաշեցինք նրան։ Կեսօրին կովը նորից նստեց, և երբ գոմը մտա, թախծոտ ու շաղված հայացքով նայեց ինձ։ Հասկացա, որ այլևս հույս չկա։ Փրկությունը խոտի մեջ էր։ Ի՞նչ անեի, խոտ որտեղի՞ց գտնեի։

Միայն մի հույս կար. մեր լեռնային խոտհարքում աշնանը ես մի բլրակ խոտ էի թողել ձյան տակ՝ այն մտադրությամբ, որ նրանով գարնանը վար անենք։ Այդպես, իրենց խոտի մի մասը սարում էին թողել նաև Հայկն ու մեր մյուս հարևանները։

Բայց էլ սպասելու տեղը չէր։

— Թքած վարի վրա էլ, աշխարհքի վրա էլ,— վճռեցինք մենք ու որոշեցինք գարնանացանի համար պահած խոտը սարից բերել։

3

Հաջորդ օրը բուք էր, անհնարին էր սար բարձրանալ։ Ես անասունները տարա անտառ՝ բողբոջ ուտեցնելու, իսկ Հայկը հրացանը վերցրեց և իջավ Ջուխտակ վանքերի ձորը։

— Ցամաք կոտորվեցինք, ուրիշ բան որ չլինի, հո՞ նապաստակ կբերեմ,— ասաց նա ինքնավստահ։

Քիչ անց Վանքերի ձորից թնդյուն լսվեց։ Երբ հրացանը երկրորդ անգամ որոտաց, ես անասունները թողեցի ու վազեցի այն կողմ։ Դեպի վանքերը տանող լանջով սայթաքելով գնում էի, մեկ էլ տեսնեմ Հայկը գալիս է՝ մի ահագին գայլ ձյան վրա քարշ տալով։ Եկավ, երջանիկ ժպտաց ու հարցրեց.

— Ո՞նց է, էս տղեն կարողանո՞ւմ է սպանել, թե՞ չէ։

Գովեցի. իրոք հաջող որս էր։

— Ո՞նց պատահեց, ո՞նց խփեցիր,— հարցրի ես՝ հետաքրքրությունից եփվելով։

— Ո՞նց, տղի պե՛ս...

Նստեց կոճղին, ծխախոտ փաթաթեց ու հետն էլ սկսեց պատմել։

— Հենց որ դուրս եկա վանքերի վրա՝ տեսնեմ դիմացիս դոշին երկու գել գնում են իրար հետևից։ Մադնանց շորանը

www.a-pdf.com

սուրուն էդ կողմի վրա էր տարել, երևի գնում էին նրա ոչխարներից անուշ անեն։ Գելերին որ տեսա, նստեցի ձնի վրա ու շվացրի։ Որ շվացրի, կանգնեցին։ Ետ մտիկ անելու համար մեծ գելն ամբողջ մարմնով շուռ եկավ։ Որ շուռ եկավ՝ կրակեցի։ Որ կրակեցի, էդ անտերը գոռգոռոցը գցեց ու սկսեց քոլոլվել ձնի հետ։ Որ գոռգոռաց, էն մեկն իրեն գցեց վանքերի կողմը։ Հենց փախչելիս՝ նրա հետևից էլ կրակեցի։ Համա բեղերս կկըտրեմ, թե որ նրան էլ դիպած չլինի...

Այդ երեկո ձմեռանոցի բնակիչները հավաքվեցին մեր խըրճիթը, բուխարին թեժացրինք, ու սկսվեց աշխույժ, հետաքրքիր զրույց որսի մասին։

Հայկը գաղանին կախել էր սյունից ու տիկ էր հանում։ Երբ նա գայլի ամբողջ մարմինը բերանովը հանեց և աղ ու շիբ արավ, որ մորթին չփչանա, Մելոնց Ամին ասաց.

— Չէ, երևում է, որ կարգին որսկան ես եղել։

Հայկը հասկացավ, որ խոսքն իր մասին է, ականջը դեմ արավ. Ամին նրա շատ թե քիչ լսող ականջում բարձր ձայնով կրկնեց իր գովասանքը։ Հայկը շիկնեց, ապա մռայլվեց ու խոր հոգոց հանեց։

— Էս ի՞նչ որս է որ։ Դեռ տասնվեց տարեկան էի, որ քեմ գնդակից պախրեն էլ չէր պրծնում։ Ի՞նչ թողեցին առաջվա Հայկից...

Եվ նրա խաժ աչքերում մենք արցունք նկատեցինք ու զգացվեցինք։ Իմ հիշողության մեջ վերակենդանացավ մեր Հայկը։ Գյուղի գեղեցիկ ու կտրիճ երիտասարդներից էր։ Միշտ քաջ, միշտ աղնիվ ու շիտակ։ Տմարդին այնպիսի լավություն կաներ, որ նա մինչև իր սրտի խորքը կդղջար իր անաղնիվ արարքը։

Այդ երեկո այդ կարգի մի պատմություն արավ մեզ։

— Սրանից տասնհինգ տարի առաջ,— սկսեց նա,— որսկան Շաքարը, Ղազարանց Սամսոնը, մեկ էլ կարծեմ Աստուրանց Քոքորը գնում էին որսի։ Խնդրեցի, որ ինձ էլ հետները վերցնեն։ Էն ժամանակ ես տասնվեց տարեկան էի, համա զենքի հետ էնպես էի մերվել, որ ծոցս դրած էի քնում։

— Ա՛յ պուճուր, քո բանը չի, զամբի[1] տակով կլինես,— ասաց Շաքար ամին, բայց էլի մեղքը եկա, ինձ վերցրեց հետը։

---

[1] Զամբ — ձյան հյուս։

www.a-pdf.com

Էդպես շորսով բարձրացանք մեր խալ-խալլու սարը։ Մեր դիմաց Լոռին էր, իսկ հեռուը՝ Գիլիջանի ձորը։

Սարում պախրաներ պատահեցին, սպանեցինք ու մոտեցանք Լոռու Ահնիզոր գյուղին։ Ինձ ուղարկեցին գյուղը, էշեր բերելու, որ պախրաների միսը բարձենք, տուն տանենք։ Գյուղամիջին ասացին, թե՝ Անդոնը կտա, էշեր նա՛ ունի։ Անդոնը հայտնի մարդ էր Լոռու ձորում։ Սոտեցա դրա դռանը, տեսնեմ՝ մի թեժ կրակ են արել, խոզ են խանձում։ Համա հենց սովել եմ, որ ծնկներս ծալվում են։ Կրակի վրա կարմրած խոզի տեսքից քիչ էր մնում ուշքս գնա։ Մոտ գնացի, պատմեցի մեր որսի մասին, էշ խնդրեցի։ Բանի տեղ չդրեց։ Ասում է՝ ես էշ չեմ պահել, որ սրան-նրան տամ... Ասում է ու գլուխն էլ չի վեր քաշում, թե տեսնի ո՞վ է հետը խոսողը։

Իսկի շասեց էլ, թե՝ սարից ես եկել, նստիր, մի կտոր հաց կեր։

Աչքս խանձած-կարմրացրած խոզի վրա մնաց։

Էդ օրվանից տասը տարի անց կացավ։ Համա սրտումս վրեժն անթեղած էր, ուզում էի էդ Անդոնին պատահեմ ու լա՛վ պատահեմ։ Միշտ հարցուփորձ էին անում, ասում էին՝ Անդոնը կա ու էլի Լոռու ձորերում մեծ պատիվ ունի։ Համա դե իմ աչքին նա ի՞նչ մարդ էր որ...

Հազար ու մի մեղավոր բաներ եմ մտածում։ Միտք եմ անում՝ գնամ դրա ոչխարի հոտը քշեմ-բերեմ, որ սիրտս հովանա՛, մեկ էլ ասում եմ՝ դա ավազակություն կլինի. նրան ուրիշ պատիժ պիտի տալ։

Մի խոսքով, գլուխներդ ինձ ցավեցնեմ, Անդոնի էդ մի խոսքը տասը տարի սրտիս մեջ ցցված սուր էր մնացել։

Մի ամառ գնացի սարը։ Ինց որ գիտեք, ահնիզորցիք էլ են ամառները մեր սարը գալիս։

Էդ Անդոնն էլ, լսել եմ, որ Մելոնց Արշակին բարեկամ է։ Արշակին աղաչանք արի, ասի՝ ախպե՛ր, ծախսը. ե՛ս կքաշեմ, լսել եմ, Անդոնը սարումն է, հյուր կանչիր, ծանոթանամ, ասում են՝ շատ իգիթ մարդ է։

Համա դե ոչ ոք չգիտի, թե ինչ մտքով եմ կանչում։

Անդոնին հրավիրեցին։ Եկավ։ Մեծ խմբով եկավ, փառավոր եկավ։

Սարվորները թամաշի էին դուրս եկել։ Ահնիզորցիք ձիերից իջան, դրանց առոք-փառոք տարա իմ օջախը։

էնպես մի առատություն էր՝ է՛լ սեր, է՛լ ղայմախ, է՛լ խմիչքներ, է՛լ թառ ու քյամանչա։ Ջահելներն էլ ապրշումն կանաչի վրա լախտի էին խաղում, իսկ մենք համ քեֆ էինք անում, համ նշան խփում։

Մինչև արևի մտնելը քեֆ արինք։ Անդոնի բերանը բաց էր մնացել, լացը գալիս էր, էնքան, որ սիրտը փափկել էր։ Վերջում բաժակը վերցրեց, առաջարկեց իմ կենացն ու էսպես դիմեց սարվորներին.

— Ա՛յ պողոսքիլիսեցիք, աշխարհից ուրիշ բան չեմ ուզում, մենակ թե Անանանց Հայկը մի օր իմ դռանը ձիուցը վեր գա։ Ու էն ժամանակ կտեսնի, թե ահնիզորցի Անդոնն ի՞նչ մարդ է...

Ես էլ չթողեցի, որ շարունակի, սուփրի էն ծերիցը վեր կացա ու բարձր ասացի.

— Քեռի Անդոն, մի անգամ ես քո դռանը վեր եմ եկել... Ասացի ու բեղիս տակ կծու քմծիծաղ տվի։

Անդոնը զարմացավ։

— Ե՞րբ, այ տղա։

— Սրանից տասը տարի առաջ...

— Դե լա՜վ, հանաք ես անում...

— Չէ՛, երկինքը վկա, քեռի Անդոն, ես քո դուռը եկել եմ։

Մոլորվեց, երևի մոռացել էր։

— Միտդ չի՞, որ սարիցը բեղարած, սոված եկա, էշ էի ուզում,— թրի նման վրա բերի ես։

Անդոնը գույնը գցեց. մին կարմրեց, մին էլ հենց դեղնեց, ոնց որ էս պատը։ Ժողովուրդը շունչը պահեց, իսկ ես հանդարտ շարունակեցի.

— Էն ժամանակ, քեռի Անդո՛ն, հիշում եմ, դու խոզ էիր խորովում, տկով գինին էլ կրակի կողքին մեկնված էր... Ահնիզորցի Անդոն (էստեղ ձենս բարձրացրի), իսկի ասացի՞ր, թե՝ ա՛ բալա, սոված կլինես, նստիր, մի կտոր հաց կեր...

Ժողովուրդը քարացավ։ Հարվածը էնպես անսպասելի էր, էնպես ծանր, որ բոլորն էլ՝ ծանոթն էր, անծանոթն էլ ամոթից գլուխները քաշ էին գցել։

Անդոնի ճակատի ու վզի տամարներն էնպես էին ուռել, որ ասում էիր՝ էս մարդը հիմի կտրաքվի։ Խեղդվելով միայն մի բան կարողացավ ասել.

— Իմ նամուսը դու գետնովը տվիր, Անանանց Հայկ...

www.a-pdf.com

Դեռ ահնիզորցի Անդոնի անունը ոչով էսպես ցեխը չէր կոխել...

— Ոչի՛նչ, քեռի Անդոն,— ասացի ես հանդիստ,— քեֆիդ կաց, աշխարհք է, էդպես էլ կպատահի։ Մենակ մի խնդիրք ունեմ քեզանից՝ որտեղ քո՛նն ասես՝ էնտեղ էլ ի՛մն ասա...

Բա՛... նամարդ մարդին, էն էլ հարուստ՝ ամբարտավան մարդին, էդպե՛ս պետք է պատժես,— իր պատմությունը վերջացրեց Հայկը։

Բուխարու առաջ, թաղիքին ծալապատիկ նստոտած, մենք որոշ ժամանակ լուռ մնացինք. ազդված էինք Հայկի պատմությունից։

— Ասում ես պախրա սպանեցի՞ր,— հարցրեց Մելոնց Ամին։

— Հա՛, չորսը...

— Դե, պատմիր տեսնենք, ձմեռվա տարի գիշեր է, ո՞վ է քնողը...

Ամաչելով ես էլ իմ կողմից խնդրեցի։

Այն ժամանակ ես տասնչորս տարեկան էի, նոր էի սկսել որսորդությունը և հազար ու մի ցնորքներ կային գլխումս որսի հետ կապված։

Հայրս նոր էր եկել գյուղից, մյուս օրը միասին գնալու էինք սարից շալակով խոտ բերելու։ Նա գոմից եկավ, ճրագը հանգցրեց ու տխուր նստեց բուխարու առաջ՝ քարի վրա։

Ես հարցական նայեցի։

— Էգուց որ խոտ չհասցնենք, մինչև իրիկուն չի ապրի,— ասաց հայրս տխուր ու սկսեց լցնել իր կավե ծխամորճը։

Խոսքը մեր Մաշկայի մասին էր։

Հետզհետե նրա մտածմունքներն էլ ցրվեցին, քանի որ զրույցը գնում էր իր սիրած նյութի՝ որսորդության շուրջը։ Նա էլ քաշվեց խոսակցության մեջ։

— Միտս է, երեխեք էինք,— սկսեց նա,— աշնանամտին կալերում խաղ անելիս ամեն իրիկուն մեր գյուղի դիմացի սարից լսում էինք պախրի գոռոցը։ Ձենը դմբդմբալեն գալիս էր գեղը հասնում։ Մի օր էլ շատ շոգ էր։ Մեկ էլ տեսանք մեծ-մեծ պոզերով մի պախրա ճանճերից նեղացած, իրեն պոզահարելով ու պոչահարելով, արտերի միջով գալիս է։ Սրտապատառ փախանք։ Դա մեր տան տակով անց կացավ ու գեղի ներքին բոստաններով գնաց, Դիլիջանի գետն անց կացավ։ Որսկան խալաթը չախմախավոր հրացանը վեր կալավ, հետևից վազ տվեց։ Միտս չի, սպանե՞ց, թե՞ վիրավորեց։

www.a-pdf.com

Այսպես խոսք բացվեց եղջերուների մասին, ու մեր Հայկը շարունակեց իր կիսատ թողած պատմությունը։

Դ

— Դե՛, ոնց որ ասացի,— սկսեց նա,— էն ժամանակ ես տասնվեց տարեկան էի։ Մեր խմբի ղեկավար որսկան Շաքարը ասաց՝ պախրաները հիմա կլինեն խալ-խալլվի դոշերին, քանի որ սարի էս երեսը արևին է մտիկ անում, տաք է, ձինը հալած կլինի։ Թե որ հալած էլ չլինի՝ քամին ձինը սրբում-տանում է լեռնամատներից ու թոփալախոտը բաց անում։ Հենց էդ բաց տեղերում պախրաները շարվում են ու արածում։

Դեռ աքլորը չէր կանչել, որ մենք, բաշլղներով գլուխներս փաթաթած, տրեխներիս մեջ տաք բուրդ դրած, դուրս եկանք ձմեռանոցից։

Արևը ծագելիս արդեն սարում էինք։

Ճիշտն ասած, մեր սարերին որ մտիկ արի, սիրտս լցվեց։ Էն ռանգ-ռանգ ծաղիկները, էն փափուկ ատլասի պես կանաչը, մեր շուշանն ու նարգիզը, մեր էն սիրուն ուրթերը կարծես էլ չկային։ Ո՛ր կողմը նայում էինք՝ տկլո՛ր, ձյո՛ւն... Ոչ չոբանի ձենն էր գալիս, ո՛չ շների հաչոցը, ո՛չ էլ կովերն էին բառաչում մեր էն սիրուն սարերում։ Դրա համար էլ թուրքը քոչելիս, ետ է մտիկ անում, մեկ էլ է նայում իր սիրած սարերին ու դարդոտ ասում.

«Գեթդի գյուլ, գեթդի բլբուլ...»[1]։

Ադրբեջանցի քոչվորները, ոնց որ գիտեք, սարերին ուղղած մի տխուր բայաթի ունեն, ուր խոսում են սարի հետ, ծաղկի հետ, դարդ են անում, որ աշունքանում է։ Նրանք, ոնց որ գիտեք, լաց լինելով, մնաս բարի են ասում մեր սարերին ու տրխուր երգում.

«Էլը ֆյոշտի արանա, դաղլար գալդի մարալա»[2]։

Ու էդ բայաթին էնպես են ասում, որ մարդի սիրտը կըտրատվում է, ոչխարներն էլ են քար կտրած լսում...

Իսկապես որ սարը մնացել էր մարալին, ձմեռը նրանցից բացի ուրիշ շունչ արարած չկար մեր խալ-խալլվում։

---

[1] «Վարդն էլ անցավ, սոխակն էլ...»։

[2] Սիտն ախպոր արյուն — ծաշկի անուն է։

www.a-pdf.com

Դեմ էինք առնում ահագին զամբերի։ Ներքև ես մտիկ անում՝ անտակ ձոր է։ Հրացանի կոթով ոտիդ տեղ ես անում ու գնում, գնում փնշալով, քափ-քրտինքի մեջ կորած։

Շատ չաքշաթվեցինք, շա՜տ...

Մեր սարի Սառն աղբյուրը հո դիտեք։ Հե՛յ գիտի, աշխարհ, հա՜... Հո գիտեք, թե նրա կողքին ի՞նչ բոնկուտ, ի՞նչ թավուտ է դուրս գալիս, ի՞նչ նարգիզներ են լինում։ Ամառը խոտ հընձելիս էնքա՜ն եմ նրա կողքին մածուն կերել, էնքա՜ն եմ քնել նրա մոտի ծաղիկների մե՜ջ... Հիմի տկլո՜ր. ո՛չ կանաչ, ո՛չ ծաղիկ։ Մարդու սիրտը լցվում է, որ Սառն աղբյուրն էդ օրն ընկած է տեսնում...

Աղբյուրի մոտ պճեղների տեղեր կային. կարծես կովեր ու մոզիներ ման եկած լինեին։

— Պախրի նախիրը եկել է, ջուր խմել ու անցկացել,— ասաց Շաքար ամին, ու նրա էդ խոսքից մենք ամեն չարչատանք մոռացանք։

Աղբրի մոտ հաց կերանք, մի կուշտ ջուր խմեցինք։ Էստեղ Շաքար ամին ջուր խմելուց հետո մի սքոսալի «օխայ» տրավ, շուխի փեշով բեղերը սրբեց ու ասաց.

— Ջուր հո չի, մեռոն է, մեռո՛ն...

Մենք վեր կացանք ու պաիբաների հետքը բռնած՝ գնացինք, ո՞նց ենք գնում...

Խալ-խալլվի դագաթը չհասած, Շաքար ամու կարգադրությամբ իրարից ջոկվեցինք ու ամեն մեկս մի կողմով սկսեցինք սարը բարձրանալ։

Վերջապես ես մենակ դուրս եկա լեռան գլխի ուրթը[1]։ Մի շատ սիրուն, արևոտ օր էր։ Ջյունը պլպլում էր ու էնպես էր աչքերս ծակում, խուտուտ ածում, ոնց որ թե մեկն էզ սարերում անհաշիվ ուլունքներ էր փռել։ Մտիկ եմ անում՝ Լոռու աշխարհքը ոնց որ ոտներիս տակ լինի։ Դիմացս Լոք, Լալվար, վերջան սարերն են։ Բարձր ու հպարտ։ Հեռվում Թիֆլիսից գենը ընկած լեռներն են։ Իսկ շա՜տ հեռու մի սպիտակ կատար էր երևում։ Շաքար ամին ասում էր դա Կավկազի ամենամեծ սարերից է, անունն էլ Կազբեկ։ Ետ մտիկ արի մեր Ղազախի կողմը՝ ներքևում անտառնե՛ր, ձորեր, մինչև Քուռ գետը երևում է։ Հարավի կողմը մտիկ անեմ և ի՞նչ տեսնեմ, որ լավ լինի.

[1] Ուրթ — սարահարթ։

www.a-pdf.com

Մասիսի ծերը երևում է, սպիտա՜կ, ոնց որ շաքարի գլուխ։ Նրանից դեսն էլ մի բան սիրուն կապտին էր տալիս, հետո հասկացա, որ Սևանա ծովն է։

Մի խոսքով, գլուխներդ ի՞նչ ցավացնեմ, էդ բոլորից բարձր կանգնած, Կավկազին եմ մտիկ անում շաղված-տարված ու ինձ ու ինձ մտածում, թե՝ յարաբ մեր աշխարհքի պես էլ սիրուն աշխարհք կա՞, թե չէ...

Դե մենակ մարդը էն ամայի սարի ծերին կանգնած՝ ինչ ասես, որ չի մտածի։ Էդպես բնության խորհրդով տարված՝ չգիտեմ ինչքան եմ մնացել կանգնած, վերջապես ուշքս գլուխս եկավ, հրացանս վիզս գցեցի ու առաջ դնացի։ Ձինը ուրթում խորն էր, բայց չէի թաղվում, երեսը սառած էր։ Էնպես էի թեթև, կփկփալեն գնում, ոնց որ կոկիկ ճամփով։

Գնացի՜, գնացի՜, վերջը դեմ առա Լոռին Ղազախից բաժանող Խալափա սարին։

Դե մեր Խալափի դիժ բնավորությունն էլ հո գիտեք։ Ամառվա էն շոգին, երբ արևը աշխարհքը էրում-խորովում է, Խալափում մեկ էլ տեսար հանկարծ երկինքը սևակնեց, դոդոռաց, կարկուտ թափեց ու տավար-ոչխար ձորերը լցրեց։

Դե ձմեռն էլ գիժ է ու գիժ։ Խալափը մի բուք ու բորան արավ, մի բուք ու բորան, որ էլ ասել չեմ կարող։ Մի քարի տակ կուչ եմ եկել, ո՞նց եմ ղնդրը-ղնդրը դողացնում։

Որ բուքը հանդարտվեց, մի քիչ էլ առաջ գնացի ու դեմ առա ուրթի փեշին։ «Կարող է էստեղ պախրա լինի»,— մտածեցի ես, ու ոնց որ Շաքար ամին էր պատվիրել, փորսող տալով հասա ուրթի պռնկին։ Շունչս պահեցի ու գլուխս կամա՜ց հանեցի քարի կողքով։

Որ գլուխս բարձրացրի, սիրտս վեր թռավ ու սկսեց մորթած հավի պես թպրտալ։ Տեսնե՜մ, ի՞նչ տեսնեմ, որ լավ լինի. դիմացս մի ահագին նախիր հանգի՜ստ արածում է։ Քանի սիրտս խփում էր, ասի՝ չկրակեմ։ Ու մտիկ եմ անում բերանս բաց, խելքս գնացած... Ասա՝ ո՞նց են արածում էդ պախրաները. առաջին ոտով ձինը քանդում են, ետ տալիս, խոտը բաց անում ու պոկում։ Հետո՝ ուտելիս դունչները վեր են տնկում, խլուշ-խլուշ անում, շորս կողմը նայում ու էլի արածում։

Դե, ես ձեզ ի՞նչ պատմեմ, պախրա հո շատերդ եք տեսել. ոտները երկար, բարակ ու շիմշատ, մարմինները բարակ՝ կոկիկ ու սիրուն, ոնց որ նախշ։ Որձերը շատ մեծ են, ամեն մինը

www.a-pdf.com

մի եզան չափ։ Պոզեր ունեն, ոնց որ ծառի ճղներ, իսկ էգը պոզեր չունի։

Նախրից ներքև, մի թմբի վրա վեց պախրա ջուխտ-ջուխտ նստած՝ որոճում էին։ Զարմանալին էն էր, որ մեկը երեսը դեպի է՛ս կողմն էր նստած, մյուսը՝ է՛ն կողմը, որ մեկը առաջը նայի, մյուսը՝ հետևը։ Արածողներն էլ էդպես էին, մի մասը երեսը Լոռվա կողմն էր արել, մյուսը՝ դեպի Դիլիջան։

Էն ժամանակ, ոնց որ ասացի, տասնվեց տարեկան էի։ Էնպես խամ ու ջահել էի, ոնց որ երեխա։ Շշկլված, շունչս պահած մտիկ եմ անում որսին, իսկի չեմ էլ մտածում, որ կփախչեն, կամ սպանելու եմ եկել, էս ի՞նչ բանի եմ։

Որ շատ մտիկ արի, կշտացա, սիրտս էլ հանդարտվեց։ Ետ քաշվեցի ու նշան բռնեցի։ Հրացանի փակը բացելու շրխկոցից պախրաները գլուխները վեր բարձրացրին, ականջներն սկսեցին ետ ու առաջ թեքել, սրել, իսկ մեծ բուղեն դունչն իմ կողմը մեկնեց ու սկսեց հոտոտել։

Նշան բռնեցի դրա կրծքին ու ոտը քաշեցի։ Որ հրացանը տրաքեց, դրանք խառնվեցին, հավաքվեցին իրար գլխի ու կարծես հրամանի էին սպասում։ Հրամանը ո՞րտեղից. նախրի ղեկավարին արդեն փռել էի, պոզերով, ոտներով քանդում էր ձինն ու խուլ բվվացնում։

Ու սկսեցի իրար հետևից կրակել հա՛ կրակել...

Խեղճ կենդանիները չդիտեին, թե գնդակը ո՛ր կողմից է գալիս, որ փախչեն։ Մեկ էլ որ կրակեցի, փախան դեպի ինձ ու քիչ էր մնում գլխիս թափվեն։ Երկու-երեք անգամ կրակեցի հենց դոշներին։ Ինձ տեսան ու ճղեցին դեպի Լոռու սարերը։ Դրանք որ փախան, նոր տեսա, որ ուրթում երեք պախրա է ընկած։

Քիչ հետո ընկերներս տեղ հասան, գովեցին ինձ ու միասին վիրավորների հետքն ընկանք, գնացինք։

Շաքար ամին նրանցից մեկին սպանեց մի ձորում։ Մեր որսը թաղեցինք ձնի տակ, և ես գնացի Ահնիզոր՝ էշեր բերելու։ Դրանից դենն արդեն գիտեք. Անդոնի մասին ձեզ արդեն պատմել եմ։

Համա մի հրաշք բան պատահեց ինձ, որ չեմ ասել։

Այ տղա, որ էշեր ճարեցինք, տարանք պախրաները բերելու, իմ աչքերը շաղվում են, դժվում եմ ու հրացանը դեմ եմ

www.a-pdf.com

անում, որ Շաքար ամին սպանեմ։ Բռնում են, աչքերս տրորում, Շաքար ամին կրակ է անում ու ինձ դնում կեծեցած մոխրի մեջ։ Դրանից ոտներս էրվել էին։ Վերջը որսորդները որոշում են, որ պախրաների մեղքից է։ Իհարկե, դատարկ բան է, մեղքի հարց չկար։ Կարող է կամ խղճահարվելուց էր, կամ թե չէ՝ էդ օրն էնքան էինք շարշարվել, մրսել, որ մարդկությունից էլ էինք ընկել։ Վերջը, գլուխներդ ինչ ցավացնեմ, ինձ էլ պախրաների հետ բարձում են էշերին ու բերում տուն։

Սադափլուն որ անց կացանք, ուշքս գլուխս եկավ։ Վեր եկա էշից ու մի կերպ, էրված ոտներով, կաղալով առաջ գնացի։ Մեր գոմերից ներքև անտառապահներն առաջներս կտրեցին, որ պախրաները խլեն։

Սամսոնը աղաչեց թե՝ «Հաղար ու մի ցավի տեր մարդիկ ենք, թողեք տանենք, մեր ցավին ճար անենք»։

Չլսեցին։ Դե իմ գիժ ժամանակն էր։ Անցկացա ծառի հետևը, հրացանը մեկնեցի։

— Շան որդիք, ումնի՞ց եք պախրա խլում,— որոտացի ես ու էն է՝ ոտը քաշում էի, Շաքար ամին թևից բռնեց։

— Ադա՜, շաշ չես, մեզ Սիբիր կքշեն, ինչ ես անում, ասաց նա կամաց ու հրացանս խլեց։

Վերջը անիրավները մեր որսը խլեցին ու գնացին Դիլիջան։ Մնացինք մղկտալով հետևներից նայելիս։

Մյուս օրը լսեցի, որ կառավարության մարդկանց վրա հրացան քաշելու համար ինձ բերդ են նստեցնելու։ Փախա Հաղարծնի գոմերը։ Հորեղբայրս՝ Ուսեփ քյոխվեն, հո գիտեք ինչ անուն ուներ, գնում է Դիլիջան՝ պրիստավի մոտ, թե՝ «Ջահել է, զալաթ է արել, բաշխեցեք»։ Կարող է էդ արանքում կաշառքից-բանից էլ ժաժ եկած լինի, թե չէ, չեմ կարծում, որ առանց դրա մի բան դուրս գար։

Բա՜, էդպես բաներ, պախրեն մեր գլխին հարամեցին...— վերջացրեց Հայկը։

— Էն ժամանակ էլ էին հարամում, հիմի էլ,— տնքաց Հայրս, ճրագը վառեց ու գնաց գոմը։

Երբ վերադարձավ, նրա աչքերը վիշտ էին արտահայտում։

— Մաշկեն սատկեց,— ասաց նա ու գլուխը կախեց։

— Հիմի էլ են հարամում,— կրկնեցի ես ցավով ու դանակը վերցնելով, գնացի իմ փայփայած կովը մաշկելու...

www.a-pdf.com

Մյուս օրը մենք բքի բռնված ծնկահար ձյան միջով քայլում էինք դեպի լեռները։

Գնում էինք շալակով խոտ բերենք՝ կենդանի մնացած անասուններին փրկելու համար...

1934

ՀՈՎՎԱԿԱՆ ՍԵՐ

1

Ձմռան կարճ օրը վերջացավ, արևը թաքնվեց Վիրահայոց լեռների ետևում։ Լռեց վերջին կրակոցը Ջաթինդաղի ծերպերում։

Սպանված եղնիկի ոտքերը հրացանիս փոկով կապեցի իրար, ուսս գցեցի և բարձր տրամադրությամբ իջանք Խառատանոցի ձմեռանոցը։

Մանր թփուտներով ծածկված երկնամբարձ մի ժայռի տակ, բարակ առվի ափին մի քանի գետնափոր խրճիթներ ու գոմեր. ահա այն անշուք ձմեռանոցը, ուր հույս ունեինք գիշերելու և, լուսադեմին, երբ եղնիկները դուրս են գալիս առավոտյան արոտի, նորից որսի գնալ։

Ձմեռանոցի շները վրդովմունքով դիմավորեցին մեզ. ի՞նչ գործ ունի հրացանավոր մարդն աշխարհից կտրված այդ վայրում։

Գետնափոր խրճիթից դուրս եկավ դեմքը քամուց խաշված, լայնալանջ ու լայնաթիկունք, կարճ ոտներով, ջլապինդ մի մարդ և սաստեց շներին։

Մենք «բարի աջողում» մաղթեցինք հովվին, ոտներիս ձյունը թափ տվինք շեմքում և կռանալով, ցածր դռնից ներս մտանք։

Թեժ բուխարու առաջ մի ծերունի նստած, կրակի լույսով տրեխ էր դործում։ Բարևեցինք։ Նա դլուխը վեր բարձրացրեց, «աստծու բարի՞ն, բարով եկաք» ասաց և, ուսիս եղնիկը տեսնելով, դարձավ լայնաթիկունք մարդուն.

— Երևում է տղերքը սարիցն են դալիս, մրսած կըլեն, մի քեչա փռի բուխարու առաջ ու դանթափու[1] շայ դիր խմեն, դամարնին կակղի։

[1] Դանթափի — սարի դեղնավուն ծաղիկ, որի թելը մրսածի դեղ է։

www.a-pdf.com

Ու երբ որ աշխարհք եկավ էս նզովվածը (դրա աշխարհ գցողի կուռը կոտրեր), Քյոռօղլին հավաքեց իր քաջերին, թուրը քարին տվեց-փշրեց ու ցավը սրտում ասաց. «Իգիթի դովրանն անց կացավ, տղե՛րք, գնացեք ձեր տները... էլ իմ ապրելը զուր է, քանի որ ամեն նամարդ մի պատի տակից, մի քունջից կտա է՛ն տեսակ իգիթի շուռ կտա, որ աշխարհք արժի...»։

Ինչքա՛ն արին է թափել էս նամա՛րդը, ինչքա՛ն մերեր է լացացրել, ինչքա՛ն ջահել նշանածների ձեռը ծոցումը թողել, ինչքա՛ն անմեղ էրեխեք է որբ թողել...

Ծերունին լռեց, նա խորապես զգացվել էր։

Ապա բուխարին խառնեց, կրակ դրեց իր հինավուրց ծխամորճին, մի քանի անգամ ծուխը ներս քաշեց, կարծես այնտեղ մոխիրների տակից բորբոքվող կայծերը թեժացնելու համար, ու մտազբաղ, ինքն իրեն շարունակեց.

— Իգիթ մարդը նա է, ով համ սրտոտ է ասլանի պես, համ խղճով, համ էլ սիրտը փափուկ է ճուտ ունեցող մոր պես։ Բա՛, տղա ջան, էդ տեսակ մարդիկ իմ ժամանակ կային։ Բայց որ հրացանը մեյդան եկավ՝ աշխարհքը փոխվեց։

— Վարդան ապի, մի ասա տեսնենք, ի՞նչ քաջություն արած կաս, որ էդքան շատ ես խոսում իգիթության մասին,— գրգռեցի ես։

— Ո՞րն ես ուզում ասեմ, մազերիս համբարքովը մին բան է գլխովս անցկացել, մազերիս համբարքովը լավություն արած կամ՝ հարևանի ու բարեկամի, ծանոթի ու անծանոթի։ է՛ն կորած Քռի ափի մուսուլմանն էլ իմ հարկի տակ հանգստացել է ու մի կտոր հաց կերել, հիմի քու կաթնակեր տեղովդ մեր կոմլոմոզների պես եկել ես իմ իգիթությունն ես տնաղ անո՞ւմ,— կեղծ վիրավորվեց ծերունին։

Մենք ծիծաղեցինք։

— Չէ՛, պապի՛, կատակը մի կողմ, դու արի պատմի տեսնեմ, առանց հրացանի ոնց էիր իգիթություն անում, որ հրացանով արած իմ քաջությունն իգիթություն չես համարում։

2

— Ի՞նչ ասեմ, այ ջահելներ ,— սկսեց ծերունին իր պատմությունը,— ինչ էլ որ ասեմ, վրես մտիկ եք անելու ու մտածեք, թե էս քոնձոտ պառավը էսե՛նց հունար է ունեցե՞լ որ։

www.a-pdf.com

Տերդ մեռնի ծերութիւն, ծերութիւնն է ինձ քոնձոտացրել։ Բայց փորձված մարդը, որ ծմակում փտած կաղնի քոթուկ է տեսնում, դրանից իրեն հաշիվն առնում է, թե ժամանակով ինչ ծառ է եղել դա։ Ջահել ժամանակ մեջքս կաղնու պես պինդ էր ու կոներումս նրա ճղների չափ ուժ կար։ Տարին-տասներկու ամիս կռիվ էինք տալիս սար ու քոլի հետ ու դրանից էլ պընդվում էինք։ Դուք որ էտենց ռանդներդ թռած է, իմ կարճ խելքովը նրանից է, որ փափուկ պրուժինի վրա եք քնում, համ էլ հույսներդ դնում եք ձեր հնարքների վրա, խելքի վրա։ Բայց մենք հույսներս մեր բիլակների վրա էինք դնում, դրանից էլ մեր բիլակը եղան ուսի պես ղվաթով էր։

Էն ժամանակ մեր Լոռին ուրիշ տեսակ էր։ Ոչ մաշինա կար, ոչ ճամփա, գեղերն էլ մանր էին, ժողովուրդը՝ քիչ, քոլն ու ծմակը՝ շատ։ Ու էդ ծմակներն էլ լիքն էին ամեն պտուղներով, ամեն տեսակ որսով։ Հրացանն ո՞վ էր տվել, մեր գեղերումը մին-մին չախմախավոր հրացան էր պատահում, էն էլ կամ անտառապահի ձեռքին էր լինում, կամ քյոխվի։ Դրանից էլ որսը շատ էր։

Էրեխեքը գնում էին տանձ հավաքելու, մեկ էլ տեսար ղալմաղալը գցեցին. արջի են պատահել։ Հարսները ջրի էին գնում, մեկ էլ տեսար կուժը դատարկ՝ լեղաճաք ետ եկան ու ոտով-ձեռով հասկացրին, թե հրե լուսանը աղբրի կողքի թփուտումը տապ է արել։ Էս Ջաթինդաղի քարափները վիրու էծը լիքն էր, դրանից ներքևի թփուտներում էլ կխտարին հաշիվ չկար։ Վերևը, սարում, փափուկ ուրթերում էլ պախրի գյալլահներն[1] էին, ամեն մինը հարիր, հարիր հիսուն գլուխ, ոնց որ հիմիկվա մեր կոլխոզի նախիրը։

Հենց որ աշունքն էինք մտնում, ամեն իրիկուն պախրի բուղանները սկսում էին գոռալ, մզզալ, մղկտալ իրենց սիրածների համար, ու ամբողջ գիշերը դրանց գոռոցից մենք քուն չունեինք։ Վիրու անասունն էնքան շատ էր, որ հանդում չէին տեղավորվում, գալիս էին արտերը թափվում, գեղը մտնում։ Մի ձմեռ, օրըցերեկով մի շշկլված կխտար գեղն ընկավ, էրեխեքը, շները քամակիցն ընկան։ Կտուրից կտուր թռչելով գնաց գերեզմանատուն ու մտավ սուրբ Սարգսի մատուռը։ Հենց իսկը սուրբ Սարգսի պասին էր։ Դա որ մատուռը մտավ, գեղը քա-

[1] Գյալլահ — նախիր։

www.a-pdf.com

բացավ, էրեխանց ու շների ձեներն էլ կտրվեցին, ու որսկան խալաթը բղավեց, թե՝ ա՜յ գեղջցի՜ք, դրան ձեռք չտաք, դա սուրբ Սարգսի մատաղն է։ Մենք էլ, անուսում, մութ ժողովո՜ւրդ, հավատացինք։

Որսն էնքան շատ էր, որ երբեմն մի բախտով, մի պատահմունքով մի պախրա էիր տուն բերում։

Մի տարի կալ ու կուտից պրծնելուց հետո կացինը գոտիկս խրած մեր էն ծմակն եմ բարձրանում, որ սելի ճաղեր շինեմ։ Մի մեծ քարափի ճակատով մի սատանի կածան կա. էդ կածանը բռնած գնում եմ։ Մեկ էլ դիմացիցս ոտնաձեն լսեցի։ Քրտինքս վրա տվեց, ասի՝ անտառապահը կլինի, կացինս կխլի, տուգանք կգրի։ Կացինս հանեցի, որ խաշամի տակին պահեմ, մին էլ դիմացս ծառի ճղների շափ պոզերը գլխին մի ահագին պախրա դուրս եկավ։ Էլ չիմացա ինչ անեմ, կացինս բարձրացրի ու գոռացի՝ «հա՜յ, հա՜յ, հա՜յ...»։ Էդ խեղճ կենդանին շշկլած քարափիցը թռավ ներքև, փշրվեց... Գնացի գեղիցը էշեր բերի, միսը տարա. ամբողջ գեղը երկու օր էր խորոված էր ուտում։

Բա՜, դադեն ջան, էտե՜նց որս կար, հա՜... Թե չէ հիմի, որ մի լոր է թռչում՝ տասը հրացան է քամակիցը տրաքում։ Մինչև անգամ կարող եմ ասել, որ վիրու ճանճերի ոտիցն էլ թել են կապել-նշան արել. հիմի որսն ո՞վ է տվել։ Մեր էս Ալավերդու ծառայողներն էնքան են կրակել նապաստակների վրա, որ էդ միամիտ կենդանիներն էլ են ժուլիկացել։

Մենք ծիծաղեցինք, իսկ ծերունին շարունակեց։

— Մի տարի հենց էս խառատանոցի գոմերումը տավար ենք պահում։ Արջին էդ տարին հաշիվ չկար։ Դե մեր էս անտառում մոռը, կաղինը, տանձը, խնձորը, հաճարը բո՜լ... ուտում էին, ախմախավարի չաղանում ու օր չէին տալիս մեր անասուններին։ Մին-մին ոչխարից-տավարից շալակում էին ու հանգի՜ստ, լնգլնգալեն գնում. ոչ ղենք կար, ոչ բան, մեզանից ու շներից էլ ահ չունեին։

Էդ տարին հերս Թիֆլիս էր գնացել ախպորս հարսանիքի համար շորեր առնելու։ Հետը մի երկաթե ժանգոտ լուլա բերեց։ Դարբին Մուկուչը (լիս դառնա ինքը, ուստա հո չէր՝ ձեռքերիցը ոսկի էր թափվում), էդ լուլի մի ծերը շաքուչով ծեծեց, ծալեց, չախմախաքարի համար էլ մի ծակ բաց արավ, ու էդ լուլին մի կոթ շինեց, վրեն պնդացրեց, չախմախ դրեց՝ դառավ

www.a-pdf.com

հրացանի նման մի բան։ Համա մի լնգի չափ էր։ Մի բուռ վա-ռոդ լցրի, մի բուռ էլ արճճի, երկաթի կտորներ ու գնացի էս ներքին տանձուտի պունկին, մի թփի տակ կուչ եկա։

Էդպես թաքնված շատ մնացի թե քիչ, մեկ էլ տեսա մի ահագին անասուն թփերը ջարդելով գալիս է դեպի տանձուտը։ Թփերից դուրս եկավ ու ականջ է դնում, տեսնի որտե՞ղ է տանձ կաթում։ Մի ահագին որձ արջ էր, ճակտին էլ սպիտակ նշան կար, շոմբախի տված՞ տեղ էր, թե՞ գնդակի, լավ չիմացա։ Էնքան մոտիկ էր, որ մի քիչ էլ գար՝ գլխիս կընկներ։ Լուլեն մեկնեցի դրա վրա ու ոտը քաշեցի։ Տերը մեռածը օսմանլվի հին թուփի ձեն հանեց, բոցը երեսովս տվեց, կտորները երկինք թռան ու ծուխը պատեց տանձուտը։ Արջը ծխի մեջ գոռգոռում էր՝ ես ճղեցի, ո՞նց եմ ճղում։ Համա ձեռիս մենակ հրացանիս կոթն էր մնացել...

Դրա ճանկերիցը պրծա, համա էդ օրը մի ուրիշ ձախորդություն պատահեց. իրիկունը որ նախիրը տուն եկավ, տեսա, որ Թավադանց Օհանեսի Ջեյրան կովը չկա։ Դե, ես գեղի տավարածն էի, քարիցը վեր ընկա՞վ, գելը տարա՞վ, ոտը գերաններ-ի արանքն ընկավ-կոտրեց՝ պատասխանատուն ես էի։

Դիշերը մեծ ախպորս՝ Արութի հետ գնացինք էդ կովին ման գալու։ Մինչև ադամամութը ման եկանք, չգտանք։ Տեսա, որ մի տեղ մի բան են քարշ տվել դեպի ձորը։ Ասի՝ Արո՛ւթ, էս ի՞նչ բան է, գերան են տարե՞լ... Մի լավ մտիկ արինք. լուսնի լուսով տեսանք, որ խաշամի վրա արին կա ու արնի հոտն էլ քթներիս առավ։ Էդ իզը[1] վեր կալած ներքև գնացինք ու մի զարմանալի բլուրի դեմ առանք. քար, փետ, քոթուկ, գերան բերել էին մի փոսում կիտել։ Ասի՝ այտա Արութ, էս ի՞նչ բան է։ Դա թե՝ արջն է արել, քոթուկները ետ տուր։ Ասեց ու սկսեց քար, փետ, քոթուկ փնթփնթալով դես-դեն շպրտել։ Ասում եմ ա՛յտա, ինչի՞դ է պետք, արի մեր բանին գնանք։ Դա թե՝ տո դեդալ, բա դու էս աշխարհքիցը չե՞ս։ Ու էլ բան չասեց։ Ես էլ դրա ահիցը սիրտ չեմ անում էլ հարց տամ (դե էն ժամանակ ո՞վ կարող էր մեծ ախպոր առաջ խոսել)։ Ես էլ շուխես հանեցի ու սկսեցի էդ բլուրը քանդել։

Քանդեցի՞նք, քանդեցինք, մին էլ տեսնեմ, հրես տակիցը մի կովի գլուխ երևաց։ Ճանաչեցի՝ Թավադանց Օհանեսի Ջեյ-

[1] Իզ — հետք։

www.a-pdf.com

բանն էր։ Նոր հասկացա, որ արջը խեղդել է, թաղել, որ հետո քիչ-քիչ ուտի։

Ջեյրանին սատկած տեսա, գլխիս կրակ մաղվեց։ Նրա գինը տալը դժվար էր, բայց ամենից դժվարն էն էր, որ սիրտս կպել էր Թավադանց Օհանեսի աղջկանը ու հիմի էդ անտեր արջն իմ փափախը գետնովը տվեց Թավադանց առաջ, էլ ի՞նչ երեսով երեամ նրանց աչքին։

Կովը մաշկեցինք՝ չաղ էր։ Արուքը թե՝ միսն ափսոս է, տանենք ղաուրմա անենք։

Միսը կտոր-կտոր արինք, մի ծառի բարձր ճղերից կախ արինք, որ գելերը, աղվեսները չփչացնեն, ու կաշին շալակած տուն գնացինք։

Մյուս օրը էշերը առաջներս արած գնացինք, որ միսը տուն տանենք, տեսանք ծառի վրա միս չկա։ Այ աղա, էս ո՞վ տարավ։ Դես-դեն ենք մտիկ անում՝ մարդի ոտնատեղ չկա, գելն ու աղվեսն էլ հո ծառը չեն բարձրանում։ Ներքև մտիկ արինք, տեսանք, որ մեր քանդած բլուրն էլի նորից շինել են։ Քոթուկները, քարերը դեն շպրտեցինք՝ միրը տակը թաղած է։ Նոր հիշեցինք լուսահոգի հորս խոսքը, թե արջը մարդի պես ծառ է բարձրանում։

Միսն էշերին բարձում էինք, մեկ էլ չորացած ճղների փշրվելու ձեն եկավ. ծմակովը մի անասուն էր մոտենում մեզ։ Ծառերի արանքով մտիկ արի, տեսա քոթուկի քամակից մի ահագին գլուխ երևաց։ Ճակատի մեջտեղը նշան կար, իմ ծանոթ արջն էր։ Դա մեզ տեսավ թե չէ՝ ետ դառավ ու փնթփնթալով գնաց։ Արջն էտե՛նց է, որ ձեռք չտվիր, մի երեխու էլ պատահի՝ կքաշվի-կհեռանա։

Ասի՝ Արուքթ, սա է խեղդել Ջեյրանին, բա ո՞նց անենք սրա հախիցը գանք։ Դա թե՝ թող մի ձինը գա, քուն մտնի, էն ժամանակ հեշտ է։

Արջը գնաց, համա խեթ-խեթ մտիկ արավ վրես ու իրանիրան փնթփնթաց, ոնց որ ասելիս լիներ. «Իմ որսը տանում ես, հա՞, նամարդ մարդ, է՛դ էլ պնչներիցդ կհանեմ, վրես կրակելն էլ»։

Էդ օրվանից էդ արջի հետ մենք դուշման դառանք ու էդ օրվանից մենք պտտում էինք, որ իրար վնաս տանք։ Էդ կռիվը համարյա երկու տարի քաշեց, ու թե ինչով վերջացավ, էդ էլ կիմանաք կարտոլն ուտելուց հետո։

www.a-pdf.com

Այս ասելով, Վարդան ապին ձեռնափայտը խրեց բուխարու կեծացած մոխրի կույտի մեջ։ Օջախում թաղված կարտոֆիլները փսփսացին-թսթսացին, մոխիրը ցրիվ տվին. դա նշան էր, որ խորովվել են, ուտելու ժամանակն է։ Մենք մեկ-մեկ հատ կարտոֆիլ վերցրինք, մինչ ընկերս կլպում էր, Վարդան ապին կծու դիտեց.

— Էդ չելավ է՞, բարեկա՛մ, կարտոլն էտենց չեն ուտիլ, խարաբ ես անում։

— Ախր մոխրոտ է, ստամոքսս կփչացնի,— պատասխանեց ընկերս, որ կոշտ կյանքի, կոշտ ուտելիքի սովոր չէր։

Ներունին փառ-փառ ծիծաղեց։

— Ստամոքսս ո՞րն է, ա՛յ բալա, բա էն ժամանակ, որ մենք ստամոքս չունեինք, պակա՞ս էինք ապրում... էնա էդ ստամոքսն աշխարհ գցեցիք, որ էտենց ռանգներդ թռած է, է...

Ու Վարդան պապը կեղևն այրված-մոխրոտ կարտոֆիլը քսեց բրդե կոշտ շալվարին։ Մուրն ու մոխիրը գնացին, մաքրվեց, բացվեց խորոված կեղևը՝ կարմիր ու ախորժակ գրգռող։ Ու այնպիսի ախորժակով կերավ, ինչպես լոռեցիներն են սովոր ուտելու իրենց այնքան սիրելի կարտոֆիլը։

— Գործը որ սրտալի չարիր՝ հարամ է։ Ուտելիքն էլ որ սրտալի չկերար՝ էլի՛ հարամ է,— խրատեց Վարդան ապին։— Ես որ հարիր տարի ապրել եմ ու աչքերումս էնքան լիս կա, որ ասեղ եմ թելում, էդ նրանից է, որ ոչ մոխրի եմ մտիկ արել, ոչ էլ ստամոքսի. խժռել եմ, ինչ ճանկս է ընկել, ու սելը քարկապով վեր հանելիս ուսս դեմ եմ արել, վեր քաշել։ Բա՛, ղադեն ջան, ծղծղալով ուտողը ստամոքս էլ կընգնի[1], քարին ու քոլին չի էլ դիմանա...

3

Հա՛, Է՛ն էի ասում, էդ անտեր աղջի հետ հանդուգնակվել եմ, ցավը սրտումս մխում է, ուզում եմ մի հնարքով ապանեմ ու Քավադանց աղջկա աչքում իգիթ երևամ, բաղքի սիրտը վրես տաքանա։

Համա սիրում եմ, ո՞նց եմ սիրում, ներեցեք ջան, չորս-

[1] Այնպես էլ չիմացանք, թե ստամոքս ասելով Վարդան պապը ի՞նչ նկատի ունի։

www.a-pdf.com

հինգ տարի էր ինձ ու ինձ էրվում, մղկտում էի, խաղեր էի հնարում, չոմբախս սազ էի շինում ու ցերեկը տավարի մոտ, քարափների գլխին նստած բայաթի կանչում, գիշերը արխաջում կրակի մոտ նստած էրվում, խորովվում, իմ սիրտը ծազիկների առաջ բաց անում, ցավս աստղերին պատմում... Մեկ-մեկ միտք եմ անում՝ մոտենամ, ձեռքը բռնեմ, սիրտս ոտների տակին դնեմ, լաց լինեմ, համա որ հեռվում երևում է ջուրը գնալիս, կամ բերիցը կաթի տիկն ուսին ետ դալիս, քրտինքս վրա է տալիս, ականջներս դժժում են, ամոթից գլուխս առնում եմ, հանդերն ընկնում ու էլի բայաթի ասում։

Սերս մաշում է ինձ, գժի պես եմ դառել, ոչ քուն ունեմ, ոչ հանգստություն։ Դա էլ ջահել խնձորքու պես ծաղկել է, բացվել։ Ու ոնց որ աշխարհքում ինչքան մեղու կա՝ խնձորքու կարմրավուն ծաղկից հայիլ-մայիլ էլած գալիս են, որ քաղցր նյութ քաղեն ու իրենց անմահական մեղրը շինեն, էտենց էլ գեղի ջահելներն էին պտտում դրա հետևիցը։

Դա էլ էն սարերի մարալի պես ոտները բարակ, բոյը շիմշատ, աչքը սուրմա, գլուխը բարձր, հպարտ պահած, ոչ մեկին էլ բանի տեղ չի դնում...

Գեղական հարսանիքներում էդ անիրավի աղջիկը որ պար էր գալիս, ոնց որ թե երկնքիցը վեր եկած փերի լիներ... Գեղի ջահելները, խելքամաղ էլած, ինչքան փող կար ջերները, շաբաշ էին տալիս զուռնաչիներին, որ նրա մի քաղցր նայվածքին արժանանան, իսկ նա, հե՛չ, ոնց որ թե ինքն էս մեր սարերի խանումն էր։ Դրանից էլ սիրտ չէի անում մոտենամ, հիմիկվա պես չէր, որ ամոթդ մի կողմ դնես ու օրը ճաշին ժողովրդի մեջ ասես՝ աղջի՛, իրիկունը կգաս այսինչ տեղը։ Էն ժամանակ օջախի պատիվ կար, արին կթափվեր, համ էլ մարդիկ ամոթ ունեին, նամուս ունեին։

Վերջապես, էլ համբերելու ճար չկար, մի օր սիրտ արի, մոտը գնացի։ Ասենք էլի սիրտ չէի անի, եթե ինքը մի քիչ հույս չտար։

Հույս տալն էլ է՛ն էր, որ ամառվա մի իրիկուն արխաջումը կրակի մոտ նստած, շվի եմ ածում, ոչխարն էլ մուշ-մուշ արոճ է անում ու ննջում։ Համա հենց եմ կլկլացնում, որ սա՛ք-քար լացացնում եմ ինձ հետ, իմ դարդին նրանց էլ եմ մասնակից անում։ Շներս գլուխները դրել են իրենց թաթերի վրա

www.a-pdf.com

ու աչքերն ինձ են գցել. իմ յարեն նրա՞նց է հայտնի, իմ նեղ օրի ընկերները նրա՞նք են։

Գիշերվա մի ժամանակ, երբ սարվորները հանդիստ քնած էին, մին էլ Թավադանց ալաչուխիցը[1] սպիտակ շորով մի աղջիկ դուրս եկավ. ոնց որ մութը ձորերի վրա լուանյակը դուրս գա...

Դուրս եկավ, իրենց դագի[2] կողքի աղաքարին նստեց ու իմ շվու ձենին է ականջ դնում... Նա՞ էր, իմ սիրածը, իմ հոգու կտորը, իմ կյանքն ու աստծը։

Էն տեսակ մի շիքյաստի[3] վեր քաշեցի, մի շիքյաստի, որ քարերն էլ կհալեցներ, ո՞ւր մնաց մարդու սիրտը։ Ես շվիս փչում եմ, էրվում-խորովվում, նա լսում է, մին էլ հակառակի պես գելը հոտի մեջ ընկավ, շները վեր կացան, սարվորները զարթնեցին։ Իմ փերին էլ խրտնեց, դագեն մտավ ու սիրտս իր հետ տարավ։

Էդ դեպքից սիրտ առած, ամբողջ ամառն ու աշունքը դևի պես պտտեցի դրա հետևից, որ մենակ պատահեցնեմ՝ չելավ։

Աշունքը, որ Ղրանց Ջեյրան կովին արջը խեղդեց, դրանից հետո տավարը տղերքին պահ տվի, գեղի հանդը գնացի, ասի՝ միգուցե հարսների հետ աճար հավաքելու դուրս գա։

Գեղի կնանիքը մերին[4] էին մտել, միրդ էին հավաքում, որ ձմեռվա պարապ ժամանակ տաք բուխարու առաջ նստոտեն ու աճար չրթացնելով, հեքիաթ լսեն, բայց էդ անիրավի աղջիկը չկար։

Գնացի գեղին մոտեցա. ծառերի արանքով աղվեսի պես ծկրակում[5] եմ, մին էլ տեսնեմ, էդ աղջիկը տանիցը դուրս եկավ ու իր պուճուր ախպոր ձեռքը բռնած՝ աճարկուտն է գալի։ Դրա տեսքիցը սիրտս տեղահան էլավ։ Քույր ու ախպեր ծառերի տակերն ակը տալով գնում են, ես էլ, թաքուն, փորսող տալով, կուզեկուզ կրնկակոխ հետևում եմ դրանց, ոնց որ գելն է թփերի տակին կուչ-կուչ անում, աչքը ամլիկ գառան թմփլիկ դմակին գցած։

---

[1] Ալաչուխ — վրանի տեսակ է։

[2] Դագա — վրան։

[3] Շիքյաստի — արևելյան մեղեդի։

[4] Մերի — անտառ։

[5] Ծկրակել — գաղտագողի նայել։

www.a-pdf.com

Մի աճարի ծառի տակ էդ աղջիկն ուրախությունից ճչաց, թե՝ պա՛հ, էս ինչքան աճար կա, ու դառավ ախպորը, թե՝ Վահան ջան, Վահան, մի վազ տուր տանիցը մի տոպրակ բեր։ Երեխեն դեպի գեղը վազ տվեց, ես ծառերի քամակով մոտեցա աղջկան։ Հիմի մի մեծ կաղնու քամակն անց կացած շունչս պահած, դրա շարմաղ դեմքին եմ մտիկ անում, ու հոգիս փառավորվում է դրա տեսքիցը։ Էդ աղջիկն էլ նստել է, երեխու պես խաշամի հետ խաղ է անում, չալտիկ տերևները վարդի տեղ դոշիցն է կպցնում, իրեն-իրեն դնդնացնում է (թաքուն մտիկ արա մենակ մարդին, տես ինչքան մաղալու է...) ու ամեն խշրտոցից, ամեն ձենից կխտարի պես խլուշ-խլուշ է անում, դես ու դեն մտիկ անում, ու էդ ժամանակ նրա սիրուն աչքերի մեջ ես ահ եմ տեսնում ու մտածում եմ, թե ոնց մոտենամ, որ սիրտը չճաքի ու էդ անգին դուշը ձեռիցս չթռչի։

Ու էտենց քարացած, հայիլ-մայիլ էլած, դրան եմ մտիկ անում ու մին քրտնում եմ, մին սառչում, մին էլ զնգր-զնգր դողացնում եմ, ոնց որ հունվարի գիշերը շապկահանց սառցի վրա նստած լինեմ։

Վերջը չհամբերեցի, ասի՝ ինչ ուզում է թող լինի, դուրս եկա ծառի ետևիցը ու ասացի՝ Վարդանուշ ջան, հոգի ջան, վախես ոչ, ձեռս կոտրի, թե քու մազին դիպչեմ։

Դա վեր թռավ, ու գել տեսած գառան պես ետ-ետ գնաց, ձեռքերը շարժում է, լեզուն կապ է ընկել։ Ես, ոնց էլավ, մի ժամանակ տեսա, որ խաշամի վրա շոքած փափախս վեր եմ կալել ու մղկտում եմ, ինձ կորցրած դելն[1] եմ տալիս, ե՛ս էլ չգիտեմ, թե ինչ եմ դուրս տալիս։ Էնքան է միտս, որ դրան ասում եմ՝ Վարդանուշ ջան, բա դու քար ե՞ս, բա էս հինգ տարի է քեզ համար էրվում եմ, բա դու խիղճ չունե՞ս, բա դու գիշերներն իմ ձենը լսում չե՞ս, բա որ սիրտս կրակ գցած երգեր եմ կապում քեզ համար, խի՞ չես գոնյա մի քաղցր մտիկ անում վրես, այ անասունածի աղջիկ։ Ասում եմ ու հետն էլ երեխու պես լաց եմ լինում։ Հանաք բան չկարծեք, է՛, որ ոտս էլ կըտրեին, օֆ չէի անիլ, համա էդ աղջկա առաջ հունգուր-հունգուր լաց եմ լինում ու ասում՝ Վարդանուշ ջան, արի կլինի ինձ մի քաղցր խոսք ասա, մի հույս տուր իմ էրվող-փոթորկվող հոգին հանգստանա, թե չէ, երկինքը վկա, խանչալը սիրտս կխրեմ,

---

[1] Դելը տալ — զառանցել։

www.a-pdf.com

իմ արինը քեզ հանգիստ չի տալ։ Ասում եմ ու մոտ գնում, ինչքան ասում եմ հեռու մնամ էդ սրբից, լինում չի, ուզում եմ մոտենամ, բռնեմ էն շարմաղ ձեռքը։ Նա էլ աչքերը լեն բաց արած, սարսափը դեմքին, վախեցած ջեյրանի պես ինձ է մոտիկ անում ու կապտած շրթունքները դողում են, ուզում է խոսի՝ ձենը դուրս չի գալիս։ Ես որ առաջ գնացի, դա վեր թռավ, որ փախչի։ Ես թռա առաջը կտրեցի ու ձեռը բռնեցի։ Դա ոանգը գցեց, ճչաց ու փեշի տակիցը մի պուճուր դանակ հանեց, ասում է՝ ձեռս թող, թե չէ կկտրեմ։ Ծիծաղեցի, ասի՝ կտրի՛, Վարդանուշ ջան, ուզում եմ, որ քու ձեռովը կտրես՝ քեզանից վրես մի նշան մնա։

Էն ժամանակվա աղջիկը արին կթափեր, իրեն ձեռքն օտար տղամարդի ձեռքի մեջ չէր թողել, խելքդ հիմիկվա երես առածների վրա չգնա... Դա թալական ընկած սիրուն դալի[1] պես թաթը թափ տվեց, տեսավ բաց չեմ թողնում, դանակը գցեց, բութ մատս կտրեց։ Քեֆս եկավ, ծիծաղեցի։ Իսկ դա արինս որ տեսավ, հանկարծ մտիկ արավ ինձ սրտակից քրոջ պես ու մըղկըտաց՝ վա՜յ, քոռանամ ես, ձեռս կոտրեր, էս ի՞նչ արի... Ասեց ու էն սիրուն աչքերիցը հունգուր-հունգուր թափելով, իրան աղջուխը ճղեց, մատս փաթաթեց։ Էդտեղ ուրախությունից սիրտս փուլ եկավ, ու լաց էլա, էնպես լաց էլա ու հանգստացա, ոնց որ երկինքն է անձրև թափում, լաց լինում ու հանգստանում։

Ծունկ շոքեցի, ձեռքերս վերև մեկնեցի՝ աղոթք եմ անում թե՝ փառքդ շատ լինի, ո՞վ կապիտ երկինք, որ ինձ էս բախտին արժանացրիր։ Թե դու էդ սիրուն լիսնյակդ կսիրես, թե քու դոշը զարդարող էդ անգին գոհար աստղերդ կսիրես, թե քու էդ անմահ արևի խաթրը կսիրես, իմ մուրազը սրտումս մի թողնի, ո՞վ կապիտ երկինք, քու դուռն եմ ընկել։

Ես աղոթում եմ, էդ աղջիկը լաց է լինում. նա էլ իրեն ցված սիրտն է դատարկում։ Հետո վեր կացա ու հանդստացած ասացի.

— Դե գնա, Վարդանուշ ջան, ինձ էդքանն էլ հերիք է, նա՛, սրանից դենը, որ սաղ աշխարհքն էլ վրա գա, էլ քեզ մի ձեռիցը չի կարող խլի։

Ասացի ու գնացի։

Գնում եմ, համա ուրախությունից ոտներս գետնին չեն

---

[1] Դալա — կզաքիս։

www.a-pdf.com

առնում, ոնց որ ամպերի միջով գնալիս լինեմ։ Գնում եմ ծմակովն ու ինձ թվում է, թե էն, որ ծառերը սվսվում են քամու առաջ, իմ սերն են պատմում, էն, որ տերևները հանդարտ պըտրտվելով վեր են գալիս, իմ նշանդրեքի պարն են պար գալիս, էն, որ թռչունները աճարքու շորուկներին արևկող արած, «ղո՜ւ, ղո՜ւ» են անում՝ իմ սերն են փառաբանում։ Գնում եմ ու ամեն թփի հետ, ինձ ծանոթ ամեն քարի հետ, իմ սիրած սարերի հետ խոսում եմ ցնդվածի պես, պատմում եմ իմ Վարդանուշի մասին, ուզում եմ նրանք էլ իմանան, որ Վարդանուշն էլ ինձ է սիրում։ Վերջապես, գլուխներդ ինչ ցավացնեմ, արևը մեր մտնելիս ուշքի եկա, տեսա որ հասել եմ Հաղպատա սարերը։ Ներքև եմ մտիկ անում՝ Լոռին, Բորչալլուն ոտներիս տակն են, Քուռն էլ հրե՜ն դեղին շամբուտների միջով հանդարտ գնում է։

— Բա՞, ղադեն ջան, էն ժամանակ մենք անուսում, շոբան մարդիկ էինք, համա է՛դ տեսակ էինք սիրում,— ասաց Վարդան ապին և հուզված սկսեց լցնել չիբուխը։

Հին օրերի քաղցր հուշերը տակնուվրա էին արել նրա զառամյալ սիրտը, և թվում էր, թե այդ հուշերից նրա մաշված աչքերում կրակը վերջին անգամ է առկայծում։

Իր մտքերի հետ բավական երկար մնաց Վարդան պապը։ Նա լուռ, մեզ մոռացած ծխում էր։ Ապա սթափվեց ու շարունակեց.

— Վարդանուշին տեսնելու մյուս օրը ամաչելով մորս աղաչանք արի, որ հորս ուղարկի Թավադանց աղջիկն ուզելու։ Մերս թե՝ վի՜, քոռանամ ես, Վարդան ջան, նրանք մեզ աղջիկ տվողը չեն։

Ասացի՝ նանի՛, կամ նրանց աղջիկը կուզես, կամ թե չէ կգնամ Ագռավի քարիցն ինձ ձորը կգցեմ։

Մերս լեղաճաք էլավ ասածիցս ու էդ գիշեր հորս համոզեց։ Մյուս օրը հերս ճարահատյալ գնաց Թավադանց Օհանեսի մոտ նրա աղջիկն ուզելու։

— Նա իսկի կարաց ոչ իմ Ջեյրան կովը պահի, իմ աղջիկը ո՞նց պիտի պահի,— կծու պատասխանել էր Օհանեսը։

Հերս էդտեղ աղաչանք է արել, թե ախպեր Օհանես, մեր տղեն ձեռներուցս գնում է, արի կլինի, ջահելի մուրազը փորումը մի թողիլ։

Օհանեսը հարուստ ու անուն ունեցող մարդ էր, համ թարս

էր, համ էլ իրեն խոսքի տեր։ Որ տաքացած ժամանակ խելքին փչեր մի բան ասեր՝ անպայման կաներ։ Էդ իրիկուն խմում են, ու կատարներուն լավ տաքացած ժամանակ Օհանեսը հորս ասում է՝ Զոբանանց Մացակ, դե գիտես, որ ես պրիստավի ու գլավու հետ նստող, վեր կենող մարդ եմ, քու տղեն էլ ո՞չ փեշակ ունի, ո՞չ հարստություն, գոնե թող մի էնենց բան անի, որ ասեմ իգիթ է, նրան աղջիկ տալն ափսոս չի...

Հերս ասում է՝ լա՜վ, էն անփորձ ջահելն ի՞նչ անի, որ դու նրան իգիթ հաշվես։

Օհանեսն ասում է՝ ա՜յ, թող արջին սպանի։ Էս էլ մեր բարեկամներն ու հարևանները վկա։ Ո՞ր օրը տղեդ էն ճակատը նշանով արջին խանչալով սպանեց, էն օրը նա իրավունք ունի իմ բախչիցը վարդ քաղելու։

Էդպես քեֆի ժամանակ տաքացած իրար ձեռք են տալիս, պայման կապում։

Լոթի մարդ էր Օհանեսն ու իրեն լոթի քեֆի համար իմ կյանքի հետ խաղ էր անում։

Վերջը գեղն իմացավ էդ պայմանի մասին, ու շատերը նախանձեցին ինձ։

4

Իմ պապի ահագին խանչալը կապած, կրակը սիրտս լափեով, շոլերն եմ ընկել։ Ոչ ապրանքն է աչքս գալիս, ոչ հացը, ոչ աշխատանքը։ Գիշեր-ցերեկ Վարդանուշի էն անմեղ, սիրուն աչքերի արտասուքն եմ տեսնում ու հոգիս տնքում է էն մտքից, թե յարաբ ինչո՞վ կվերջանա կյանքի ու մահի էս խաղը, յարաբ բախտ ու զորություն կունենա՞մ էդ գաղանի մորթին Վարդանուշիս ոտների տակ փռե՞մ, թե՞ գաղանն իմ լեշն էլ Ջեյրան կովի պես քոթուկների տակ կթաղի...

Էդ մտքերով բարձրանում եմ Արջաքարի կողմերը։

Ջմեռնամուտ է, մի բարակ ձին է եկել, գիտեմ, որ ճակատը նշանով արջը Արջաքարի ճակատի մութ էրերից մեկի մեջ բուն մտած կլինի։ Հետս իմ ախպեր Արութն է գալիս, մեկ էլ մեր քավոր Արտեմը։ Դրանք էլ գալիս են, որ բան է, եթե պառահողը ճակատը նշանով արջը չլինի. ուրիշը լինի, իրենք ախմախավոր հրացանը դեմ անեն-սպանեն։

Հասանք ասածս մեծ քարափին։ Դրա ճակատին երկու խոր

www.a-pdf.com

ծակ է երևում՝ արջի բներ են։ Արութն ու քավոր Արտեմը ներքևում մնացին, ես լուսանի պես քարափները չանգռելով վեր բարձրացա ու խանչալս հանած արջի բույնը մտա։

Էդ անտերը երևի դեռ կարգին քնել չէր. հենց ոտս դրի բնի մեջ, դա բամփ արավ, ինձ դենը շպրտեց ու գոռգոռալով դուրս պրծավ։ Ես շշկլված, ձեռս գցեցի էրի պռնկին բուսած մի կաղնի թփի ու մինչև շուռ կգայի, որ խանչալը սիրտը խրեմ, արջը թաթը գցեց մեջքիս, շորերս հավաքեց, արջավարի թափ տվեց, որ ինձ ձորը շպրտի,— լավ էր, շորերս հանդումը թաց գետնին քնելուց, արևից, անձրևից փտել էին՝ պոկ եկան, թաթի մեջ մնացին, ու դա քարափիցը թափով ձորը գլորվեց։ Արտեմի հրացանը տրաքեց, ու մինչև մեկն էլ կլրցներ, արջը կորավ ծմակում։ Հիմի Արտեմն ու Արութը ներքևից ինձ են մտիկ անում ու, փորները բռնած, ծիծաղից նվաղում են։ Դու մի ասիլ, արջը շալվարիս քամակը պոկել է, ու քամակս բաց, քամուն տված կանգնել եմ, դրանք էլ թամաշա են անում ու ծիծաղում։

Քարափից վեր եկա ու քամակս բաց, քոռ ու փոշման տուն գնացի։

Էդ լուրը գեղում տարածվեց, մարդիկ սկսեցին ինձ ձեռ առնել ու անունս դրին «քամակը բաց Վարդան»։

Ես էլ ինձ կտրատում եմ ու չոլերն ընկած, սիրտս սևակնած, արջին եմ մտն գալիս, որ խանչալս ջիգյարը խրեմ, սիրտս հովանա։

Մանավանդ արինս գլուխս տվեց, երբ էդ նամարդ Օհանեսը՝ լոթուքյա՞ն, թե՞ քեֆի համար, չգիտեմ, գլուխը տաքացած ժամանակ մի շալե շալվար ուղարկեց ինձ, հետն էլ էսպիսի պատվեր, թե՝ փեսա ջան, առ հագի, քամակդ ծածկի, հետո արի աղջիկս ուզի։

Հարուստ մարդի լոպազությունն էր, ինչ կարող ես անել։ Համա էդ խոսքը խանչալ դառավ, սրտումս մնաց խրված։ Էդ դեռ հեչ, բա Վարդանուշն ի՞նչ կասի, բա նրա աչքին ի՞նչ երեսով երևամ, բա հիմի նրա՞ն ո՞նց են ձեռ առնում, լացացնում։ Լուրն ինձ հասավ, որ Թավադանց հարսները Վարդանուշի հետ խոսելիս հանաքով ասում են՝ «Քու քամակը բաց նշանածի արևը վկա...»։

Մի խոսքով, գլուխներդ ինչ ցավացնեմ, ես գեղի բերանի ծամոնը դառա ու էդ ձմեռը ամոթից գեղը չմտա. ցերեկը հան-

www.a-pdf.com

դերը ընկած արջին էի ման գալիս, դիշերը թաքուն գնում էի գոմերում քնում։

Գարունքացավ, սար-ձոր կանաչեց, ուրթերը կենդանացան գառների ու հորթերի քաղցր ձեներից, իմ էն սիրած սարերը ալ ու ալվան շորեր հագան ու անմահական ծաղիկներով զարդարվեցին. մենակ իմ սիրտն է սև մնացել։

Էլի ցերեկը քարափների գլխին նստում եմ ու ինձ կորցրած մեր Լոռու սիրուն ձորերին եմ մտիկ անում, մեր Դեբեդի անուշ ձենն եմ լսում ու սիրտս լցվում է...

Ասում եմ՝ տե՛ր մեռնի քյասիբությունից չի՞, որ Թավադանց Օհանեսը ինձ շոլերն է գցել, մեյմուն շինել, պար է ածում, որ քեֆի ժամանակ ուրախանալու նյութ ունենա։ Բա էդ մարդը հենց քար է կտրել, որ իր մինուճար աղջկա արտասուքն է՞լ չի տեսնում։

Ու միտք եմ անում, թե՝ լա՜վ, ասենք էդ անտեր արջին իսկի չեմ պատահում, կամ, հայվան է, էլի՛, մի տեղ վեր է ընկել, սատկել, բա ուրեմն Վարդանուշը, իմ էն սիրուն դուշը ձեռիցս գնալու է՞...

Ու էդ մտքից արինս սառչում է, ու մի բան գալիս բկիս դեմ առնում, ինձ խեղդում։

Իրիկունները էլի արխաջի կրակի մոտ նստած, աչքս նրա շողքին գցած, շվի եմ փչում ու նրանով իմ դարդը պատմում սարերին ու ձորերին։ Ու էլի իմ դարդիման ախպերտինք շները, գլուխները թաթերի վրա դրած, խելոք աչքերով ինձ են մտիկ անում, երգիս են ականջ դնում ու նրանց աչքերը թացանում է. նրանք էլ են դարդ անում ինձ համար, քանի որ նրանք Թավադանց Օհանեսից խղճով են ու նրանից ազնիվ սիրտ ունեն...

5

Վարդիվորին հարս ու աղջիկ գեղիցը սար բարձրացան։ Մեր էն սիրուն սարերը ավելի զվարթացան ու սիրունացան տանց սիրուն տեսքից, նրանց նախշուն շորերից, նրանց զանգակ ծիծաղից ու երգերից։

Ջուռնեն կոխի ուրախ եղանակ էր փչում։ Ջահելները փաթուկ ու լեն ուրթում կոխ էին բռնել՝ աշառների պես փնչացնելով։ Պառավ նաները խնոցի էին հարում, հարսներն էլ՝ ա՛ր

սեր էր դնում, ո՛րը սաջի վրա սալի[1] թխում։ Իսկ ջահել աղջկերքը իրար ջուր էին վրա տալիս. կարգն էդպես էր։

Կարմիր շորը հագին, կարմիր լալի պես, օխտն ախպոր արնի[2] պես մի սիրուն ծաղիկ կար նրանց մեջ՝ իմ Վարդանուշն էր։ Հեռու, մի քարի նստած, մտիկ եմ անում, մտիկ ու սիրտս ուռչում է ուրախությունից, որ էդ մարալ աղջիկը ինձ է սիրում։ Մին էլ սիրտս հենց տխրում-սևանում է, ոնց որ երկինքը՝ կարկուտից առաջ։

Ձենքը կապած, արծաթե վազմեքով չերքեզկեն հագին մի ձիավոր եկավ։ Ջուռնի ձենը կտրեցին, հարգանքով ճամփա տվին, շներին սաստեցին։ Դա եկավ ու Թավադանց դռանը վեր եկավ։ Օհանեսի կինը դագիցը դուրս եկավ, աղջկանը ձեռովոտով սաստեց, հասկացրեց, որ ջահել-ջուհուլի միջից դուրս գա, դագեն գնա։ Վարդանուշը գնաց, գլուխը կախ, սիրտը կոտրած։ Փսփսոցը ընկավ սարվորների մեջ։ Ինձ են մտիկ անում ու խոսում։

Հասկացա։ Հասկացա ու... ոնց որ երկինքը փուլ եկավ գլխիս։ Ոչխարը թողած գնացի մեր էս Ջաթինդաղի ամենասուր, ամենաբարձր կատարին կանգնեցի ու ներքև եմ մտիկ անում։ Մուժը սպիտակ ծովի պես ձորերը լցվեց, ու ես մնացի էդ ծովի մեջ, ոնց որ կղզու վրա։ Ասի՝ ինձ ներքև, էդ ծովը գցեմ խեղդվեմ, փոթոթվող հոգիս հանգստանա։ Ու ոնց է լինում, խելքս կորցրած, գժվածի պես ինձ ներքև եմ շպրտում։ Մի ժամանակ ուշքի եկա, տեսնեմ քարափի տակին փափուկ կանաչի վրա ընկած եմ, էդ կաթնի ծովն էլ արագ ցաք ու ցրիվ է գալիս, ու նրա սպիտակ կտորները փախչում են քամու առաջ։ Խելքս գլուխս հավաքեցի, ասի՝ այ տղա, սարսաղություն մի՛ անիլ, տեսնենք ինչ է դառնում, իցե՞ թե մի օր երկնքի աչքը վրեդ քաղցրանում է։

Գնացի բինեն։ Էդտեղ իմացա, որ հրացանավոր մարդը Դսեղի գլավա Օսեփի տղեն է, ու իմացա է՛ն, ինչ սիրտս արդեն իմացել էր. իմացա, որ Օհանեսն ուզում է գլավու հետ խնամի դառնա...

Հորս ուղարկեցի Օհանեսի մոտ. խեղճ մարդը ճարահատյալ գնաց։ Օհանեսն ասել էր՝ տղամարդի խոսք եմ տվել ու

---

[1] Սալի — շատ համեղ թխվածք է։

[2] «Օխտն ախպոր արյուն»— ծաղկի անուն է։

www.a-pdf.com

ես իմ խոսքի տերն եմ. թող տղեղ ճակատը նշանով արջի մորթին բերի, հենց էս րոպեիս էլ աղջիկս տամ։ Լոթի հարուստը համ ուզում էր գեղի առաջ խոսքի տեր մարդ երևա, համ էլ մի քիչ էլ ուրախանա իմ շարշարանքների վրա։

Էդ գիշեր իմ մոքրի աղջկա միջոցով մի հնարքով տեսա Վարդանուշին։

Որ իրենց դագի հետևի քարափի տակ իրար երես եկանք (մի լուսնկա գիշեր էր), դա հետևիս մտիկ արավ։ Ասի՝ ի՞նչ կա որ, Վարդանուշ ջան։ Ասաց՝ հեչ, ուզում եմ տեսնեմ իմ իգիթ որսկանի քամակը կարկատա՞ծ է, թե չէ։ Հանաքով ասեց ու ծիծաղեց։ Համա էդ խոսքը գյուլլի պես ծակեց սիրտս-անց կացավ։ Ասի, բա դու էլ ես էտենց ասո՞ւմ, Վարդանուշ ջան, դու էլ ես ինձ տնաղ անո՞ւմ։ Բա ես գլուխս ո՞ր քարովը տամ. հերդ ինձ է՞ն տեսակ քար ու կապի է դեմ արել, որ շշկլվել եմ։ Ախր, Վարդանուշ ջան, թող ասի՝ ուզում եմ, որ հիմի էլ էս Դևբեդ գետը դեսը չգնա, Դիլիջանի ձորովը գնա, բահ ու քլունգ առնեմ, հավատարիմ ընկերներիս հավաքեմ, գնամ յոթը տարի գիշեր-ցերեկ քրտինք թափեմ, սարը ծակեմ, գետը դեռն անեմ։ Թող ասի, որ ուզում եմ էս ծմակի տեղը այգի լինի, կացինն առնեմ քու աչքերի խաթեր յոթը տարի քրտինք թափեմ, մերին կտրատեմ, քոքահան անեմ, տեղը այգի դցեմ, որ դու դաս միջին սեհր անես։ Թող ասի՝ գնա Սադափ Օղլի Օմարի[1] գլուխը բեր, գնամ հետը կռիվ տամ՝ կամ սպանվեմ, կամ սպանեմ, գլուխը բերեմ դնեմ ոտներիդ տակ։ Ախր էդ անաստված մարդը էնպես մի պայման է դրել, որ Սաթայելն ինքն էլ չէր կարող էդ բանը հնարել։ Արջը, դե, վիրու գազան է, էսօր էստեղ է, էգուց Հաղպատի ծմակումը, մյուս օրը Լալվարի քերծերումը։ Տարեն մի անգամ էլ որ պատահում է, մինչև դու խանչալդ կհանես, սարն անց է կենում։ Ո՞նց անեմ, ախր, գլուխս ո՞ր քարովը տամ, Վարդանուշ ջան...

Ես էսպես մղկտում եմ, նա լցվում է, լցվում, տեսնում եմ, որ քիչ է մնում սիրտը տրաքի։ Վերջը սիրող քրոջ պես երեսիս մտիկ արավ ու ինքն իրան լացակումած ասաց՝ խե՜ղճ տղա, ինչ օրն է ընկել... Երևի շատ էի մաշվել (դե էն ժամանակ իրեն երեսն ո՞վ էր տեսնում, մենակ տերտերի տանը հայելի կար)։ Դա որ էտենց խղճով ու արտասուքը աչքերին խո-

---

[1] Սադափ Օղլի Օմար — Ղազախի հայտնի դաշաղներից էր։

www.a-pdf.com

սեց, ես սիրտ առա, մի տեսակ ուժ եկավ կոներիս մեջ, արբեցի փրփրեց, աչքերս ու երեսս սկսեցին վառվել (հե՜յ գիտի ջահելություն, ջահելությունը ամեն բանի հաղթում է)։ Ասի՝ Վարդանուշ չան, դու պինդ կաց, դու ջլավու տղին խոսք մի տալ, ես կգնամ շոլերը կընկնեմ, հորդ պայմանը կկատարեմ։ Դու մարդու կգնաս միայն է՛ն ժամանակ, երբ որ մոքրիս աղջիկը իմ արնոտ շապիկը կբերե քեզ։

Մեր էդ ուխտին մոքրիս աղջիկը վկա էր։ Իրար ձեռք տվինք ու հեռացանք իրարից։

Ես ոչխարի սուրուն ընկերներիս պահ տվի ու իջա ծմակը։ Մի քանի օր անհաց, անջուր, պտուղներ ուտելով, թփերի ջարդվածքներին ու նշաններին մտիկ անելով, վիրու անասունների ոտնատեղերը տնտղելով ուղում եմ որոշել, թե իմ դուշմանը որտեղ կլինի, որ դրան արնաթաթախ անեմ, իմ բախտի ճամփեցը դեն գցեմ...

6

Հաղպատա ծմակումը մի բարձր մամոտ քարափ կա։ Մոռն ու հաղարջը հասել են ու դրա ճակատով կախկիվել։

Էդ քարափի գլխին նստած իմ սև օրի մասին եմ միտք անում, մեկ էլ կողքիս թփերը ժաժ եկան։ Մտիկ անեմ, տեսնեմ ի՞նչ, թփերի միջից մի ահագին մազոտ թաթ վեր մեկնըվեց, ղարաղաթի (սև հաղարջի) ճյուղը մարդի պես քաշեց ներքև, սև ճթերը բերանին մոտեցրեց ու քամեց մեջը։ Շունչս պահած, տերևների արանքով մտիկ արի դրա ճակատին ու նշանը տեսա։ Նշանը տեսա ու սիրտս սկսեց թպրտալ. նա՛ է որ կա, իմ մահի ու կյանքի հարցը որտեղ որ է հիմի կվճռվի։

Թփերի տակով փորսող տվի, հասա դրան, քամակի կողմից թռա մեջքին ու խանչալը խրեցի թիկունքը։ Խրեցի, համա զգացի, որ լավ չգնաց, ոսկորի դեմ առավ։ Մի գոռոց լսեցի, մի գոռոց, ոնց որ ամպը տրաքի, ու ինձ թվաց, թե մի ահագին թիակով երեսիս ապտակ տվին, աչքերիցս պնծ ու կրակ թռավ ու մեկ էլ էն տեսա, որ գլխիս վրա քարափի գըլխիցը դեպի ձորն եմ գնում... Գնա՜ցի, գնա՜ցի, քարափի տակին զրխկացի ու ինձ կորցրի, էլ բան չեմ հիշում...

Մի ժամանակ աչքս բաց արի, տեսնեմ մի թաց, բորբոսնած ձորում եմ, ոտներիս տակովն էլ մի բարակ առու է գնում։

www.a-pdf.com

Հասկացա, որ մեռել չեմ. էնքան եմ բախտ ունեցել, որ ընկել եմ ձորում ամբարված փափուկ տերևների վրա։ Ձեռներս երեսիս քսեցի, արնոտ էր, ականջս տնտղեցի՝ կախ էր ընկել։ Ասի՝ փառք աստծու, էժան պրծա։ Ու վեր կացա կաղալով, ինգլինգալով հեռացա։

Մյուս օրը եկա, խանչալս գտա. ծերը ծռվել էր։ Ա՜խ, թե ոսկորի չէր դեմ առնի՜...

Մերս գլխին տալով ինձ համար տեղաշոր բաց արավ, հեքիմ կանչեց, դեղ ու դարման արին, լավացրին։ Լավացրին, համա ականջս կախ ընկած մնաց։ Հեքիմն ուղեց կտրի՝ չէի թողնում։ Ասի կպցնելու հնար չկա՞։ Դա թե՝ այ որդի, ծակը կա՞, լսում ե՞ս, հերիք է, էս մսի կտորն ինչի՞դ է պետք։ Ասեց ու կտրեց անիրավը, էլ չմտածեց, որ շնորհքից գցում է, չհասկացավ, որ էդ շնորհքը ինձ շա՜տ-շատ է պետք...

Էդ գիշեր սրտիս նեղվելուց լաց եղա։ Մտածում եմ, թե՝ առողջ, հարուստ շիշմատ տղերքին թողած՝ ինչի՞ պիտի գա միականջանի շոբանին առնի։ Էդպես միտք եմ անում ու ինձ ու ինձ մղկտում, մերս էլ գլխավերևս նստած դոգնոցով աչքերն է սրբում ու ինքն իրեն մրմնջում՝ օջախդ հանգչի, Թավադանց Օհանե՜ս... Ու արտասուքն աչքերին աղաչում է ինձ, թե՝ Վարդան ջան, ոմբրիդ մատաղ, ձեռք քաշի դրանից, Թավադանց հետ բարեկամություն անելը մեր բանը չի, գեղումը մասխարա ենք դառել...

Ո՞վ է լսողը, սիրտ տերը չմեռնի, սերը էնենց բան է, որ մարդի սիրտն ընկավ՝ ոչ խոսքով դուրս կգա, ոչ արտասուքով, ոչ էլ խանչալի ծերով...

Սարեցի առողջ տղա էի, ոտի վրա լավացա։ Լավացա, համա էս օրն ընկա։

Վարդան ապին բուխարու առաջ թեք էր նստած, այնպես որ ձախ ականջը ստվերի մեջ էր։ Նա ընդհատեց իր պատմությունը և ամբողջ երեսով դարձավ դեպի մեզ, և մենք տեսանք, թե ինչ ավերածություն էր գործել արջը իր թաթի հարվածով՝ ութսուն տարի առաջ. ձախ ականջի տեղ մի մազմզոտ անցք էր մնացել՝ խորդուբորդ սպիով։

— Հա, էն էի ասում,— շարունակեց նա,— լավացա, համա մերս խանչալս խլեց, որ էլ արջի կողմը չգնամ։

www.a-pdf.com

Աշունքացավ, սարից քոչեցինք եկանք ձմեռանոց. տավարը, ոչխարը մեր անտառի պտուղներից լիացավ։

Հին ժամանակ մեզ մոտ սովորություն կար. աշունքվա պարապ ժամանակ անտառում տաշտ, եղան, գդալ, կամն ու էտենց փետեղեն գործիքներ էինք շինում, որ տանենք Շորագյալում հացի հետ փոխենք։

Էդ աշունք Աճարկուտումը քանի օր էր տաշտ էի շինում ու շինածս տաշտերը խաշամի տակ պահում։ Մի իրիկուն էլ կացինը տաշտերի հետ պահեցի ու ծմակովը միտք անելով տուն եմ գնում. էլի ուշքս ու միտքս Վարդանուշիս հետ է. վերջին օրերը դրան ուղղները շատացել են, գլավին էլ սպառնալիք է տվել Օհանեսին, թե՝ դու քանի՞ գլխանի ես, որ իմ առաջ չեմ ու չում ես անում։ Օհանեսի չեմ ու չումն էլ նրանից էր, որ աղջիկն իրեն կտրատում էր, գլուխը պատերին էր տալիս, թե՝ ես գլավու տղին չեմ գնա։ Համա ես գիտեի, որ Օհանեսը աղջկա կամքին մտիկ չի անիլ. էն ժամանակ ո՞վ էր աղջկա կամքը հարցնում։ Էդ մտքերով սիրտս սևակնած, գնում եմ ծմակի ճամփով։ Մի սիրուն լուանյակ գիշեր էր, մովրովն[1] էնպես տխուր էր ձեն ածում, ոնց որ իմ դարդն էր լաց լինում։ Ծմակն արդեն տկլորվել էր ու խաշամի վրա նստում էր ուշ աշունքվա եղյամը։

Հանկարծ ծառերի արանքում մի ահագին սև անասուն երևաց։ Կանգնել միտք եմ անում՝ այտա՛, էս թե գոմեշ է՞, տարու էս ժամանակ գոմեշը մենակ էստեղ ի՞նչ բանի է։ Թե գոմեշ չի՞, բա ի՞նչ է...

Մեկ էլ տեսնեմ, դա մոթմոթալով, լնգլնգալով եկավ դեպի ինձ։ Արջը եթե վիրավոր չլինի կամ սրտումը ոխ չունենա, մարդի դեմ չի գնա։ Ասի՝ նա՛ է, տերը մեռածը ճանաչեց, տղա ես՝ գլխիդ ճարը տես։ Վազ տվի մի տկլոր աճարի ծառի հասա, հևալով բարձրացա ու կատարին շունչ առա։ Հիմի դա եկել է ծառի տակին պպզել ու աչքերը վերև տնկած, իրեն-իրեն մոթմոթում է. երևի մտածում է, թե՝ ինչ հնարով էս նամարդ խանորդուն վեր բերեմ։ Համա որ ներքև եմ մտիկ անում՝ փշաքաղվում եմ դրա տեսքից, աչքերի կրակից։ Հե՛յ գիտի

---

[1] Մովրով — գիշերային թռչուն։

www.a-pdf.com

վարաղած[1] խանչալս ձեռիս լինե՞ր... բախտս իր ուտովը դուռս է եկել, հա.մա ձեռիս բան չկա, որ բռնեմ։ Ու ինձ ու ինձ մրտքումս կռիվ եմ անում մորս հետ, կռիվ եմ անում բնության հետ, թե մորը ինչի՞ է էտենց ջիգյարով ստեղծում, որ զավակի ամեն քայլի վրա դողում է ու շատ սիրելուց նրա ճամփեն փակում։

Արջը մարդի պես երկու ոտքի վրա կանգնեց, կոնները ծառին պատ տվեց ու բարկացած, մոթմոթալով բարձրանում է։ Ասի, էս է, վերջս եկել է։ Ու էդ բոպեին իմ կյանքի մասին բոլորովին չեմ մտածում. աչքիս առաջ իմ խեղճ մերն է ու Վարդանուշը՝ արցունքն աչքերին։

Արջը գալիս է, ես բարձրանում եմ դեպի կատարի ամենաբարձր ճղները։ Որ տեսա էլ դենը գնալու տեղ չկա, ներքև թեքվեցի ու ինչքան ուժ ունեի բղավեցի.

— Այ անասուած գապան, ինձանից ի՞նչ ես ուզում, իմ մուրաղը ինչի՞ ես փորումս թողնում...

Իմ ձենի՞ցը, թե սարսափած տեսքից՝ դա կանգ առավ, զարմացած վերև է մտիկ անում ու իրեն-իրեն մոթմոթում։ Ես էլ ծառի ճղնիցը կպած կուչ եմ եկել ու մտածում եմ՝ այ տղա, ո՞նց թե իմ օրն էլ էստեղ մթնե՞ց։

Վերև եմ մտիկ անում՝ անտակ երկինքն է, ներքևում՝ արջը, ի՞նչ անեմ։ Փորձված ոռսկաններից լսել էի, որ արջը կրակից վախենում է։ Էդ բանը միտս ընկավ, պենջակս հանեցի, աստառը պատռեցի, չախմախը, չախմախաքարն ու աբեթը հանեցի, պատրաստեցի։ Արջը որ տեսավ սուս եմ արել, սիրտ առած գալիս է, ո՞նց է գալիս, արդեն բաց բերանից տաք հուրքը ոտներիս էր դիպչում, երբ չախմախս պեծին տվեց։ Դա որ կրակը տեսավ՝ կանգ առավ. երևի միտք է անում, թե՝ էս ինչ բան էր։ Ջը՛խկ-ջը՛խկ, խփում եմ չախմախաքարին ու պեծերը ցրում, արջն էլ ներքևում բարկացած փնթփնթում է, բայց ռիսկ չի անում վերև գա։ Աբեթի անուշ հոտն առա, քեֆս բացվեց, արդեն վառվում է։ Էդ կրակը դրի պենջակիս աստառի բամբակի մեջ ու փչեցի. վառվեց։ Հենց էդպես վառվելիս գցեցի արջի գլխին։ Դա գոռգոռալով ծառիցը վեր ընկավ, մի քիչ փախավ, պպզեց ու վառվող շորին է մտիկ անում, երևի որոշել է, որ հենց կրակը հանգչի՝ գա ոսկորներս փշրի։

Դրա միտքը հասկացա ու էլ ժամանակ չտվի, որ խելքը

[1] վարաղած — անդալուզած։

www.a-pdf.com

գլուխը գա. ծառիցն արագ վեր եկա, վառվող շորը փաթաթեցի մի երկար փայտի ծերին, փչեցի ու վրա քշեցի դրան։ Հիմի պենջակս հարսանիքի ջահի պես վառվում է մութը ծմակում, ես էլ էնպես եմ գոռգոռում, էնպես եմ հո՜ւ անում ու փախչող արջի հետևից վազ տալիս, որ Սադայելն ինքը կզարմանդվեր ու առաջս դեմ չէր առնի...

Էդ հնարքով պրծա էդ հարամու ձեռիցը ու տուն գնացի։ Մերս հարցրեց, թե՝ այ տղա, բա պենջակդ ո՞ւր է։ Ասի՝ մտիցս ընկել է. տաշտերի մոտ ծառի վրա եմ թողել։ Արջի մասին բան չասացի, քանի որ խեղճ մերս երազումն էլ հանգստություն չուներ նրա ահից։

Ադամամութին հորս շուխեն հագա, մորիցս թաքուն խանչալը տակին կապեցի ու գնացի Աճարկուտի ծմակը՝ շինածս տաշտերի մոտ։

Որ տեղ հասա, տեսա էդ անիրավի գաղանն իմ հոտովը եկել է տաշտերը գտել, իրար խառնել, մեկի միջին էլ արջավարի թրքել է ու կորել։ Թրքին ձեռք տվի՝ տաք էր։ Էդ տերը մեռածը չլինի՞ թե մոտերքում տապ է արել, որ ոխը հանի։ Էդ բանը մտքովս անցկենալն ու կողքիս թփերի ժաժ գալը մեկ էլավ։ Որսկան տեսած կխտարի պես տեղիցս ծուլ էլա, թոա մի քոթուկի վրա, շուխես հանեցի, ձախ թևիս փաթաթեցի՝ իսկ աջով խանչալս հանեցի։ Հենց խանչալս հանեցի, դա գոռգոռալով վրա տվեց։

Արջը, որ ուզում է իրեն որսին գիրկն առնի ու փշրի, միշտ հետևի ոտների վրա կանգնում է։ Դա որ հետևի ոտների վրա կանգնեց ու բերանը մարաքի ծակի չափ բաց արավ, շուխով փաթաթած ձեռս կոխեցի բերանը, գնաց բկին դեմ առավ ու աջ ձեռքովս խանչալը մինչև կոթը ձախ կոնատակը խրեցի ու սկսեցի խառնել,— ախր էրկու տարի էր հոգիս կերել էր, է՞...— Սիրտը խառնեցի, դա ձեռս ծամելով ճլորեց, թուլացավ ու մը-ռընչալով ընկավ քոթուկի վրա։ Ձեռս բերանիցը հանեցի, խանչալս՝ սրտիցը, դրան ոտով բոթեցի՝ վեր ընկավ, մեկնվեց ու հոգին ավանդեց...

Բա՜, ղադեն ջան, էտե՞նց իգիթ կլնեն, հա՜։ Թե չէ քարի տակին կուչ ես գալի, մոսինի ոտը քաշում, հեռվում անմեղ արածելիս մի խեղճ ու կրակ կենդանի ես սպանում ու գնում քաղաքի հարսների մոտ պարծենում, թե՝ իգիթ եմ։ Իգիթն

www.a-pdf.com

էսե՛նց կլի, էսե՛նց,— ասաց Վարդան պապն ու արխալուղի ձախ թևը վեր քաշեց։

Ծերունու ոսկրոտ թևը բացվեց, բայց դա ավելի շուտ խլխլոտ, ծուռ ու մուռ, ակոսված, քերված ու նորից լավացած կաղնի ճյուղի էր նման, քան մարդու թևի. արջի ժանիքների հետքերն էին։

— Վե՞րջը,— անհամբեր հարցրեց ընկերս։

— Վերջն արջի մորթին շալակս գցեցի և ինձ ու ինձ, Վարդանուշիս վրա խաղեր ասելով, տուն եմ գնում, արինս էլ թևից ծլում է, ո՞վ է մտիկ անողը, դուշմանիս սպանել էի, որ ջանիս կեսն էլ կտրեին՝ օգ չէի անի։ Համ էլ դե էն ժամանակ ուրի՛շ սիրտ ունեինք, հիմիկվա շոկոլադ ուտողների պես չէինք, որ մատները մի փուշ է մտնում թե չէ, բժշկի մոտ են վազ տալիս...

Մենք ծիծաղեցինք ծերունու կատակի վրա, նա շարունակեց.

— Տուն գնացի, էն սարերի ուրախությունը սրտումս տուն գնացի։ Մերս տեսավ փշրված թևս, մազերը պոկեց, սուգ արավ։ Ասի՝ նանի՛, հեչ լաց մի լինի, թե որ մուրազս կատարվեց, էլ քեզանից բախտավոր կնիկ չկա։ Կռանս մասին էլ մտածիլ մի, փափախիս աստառումը չորացած ծաղիկ կա, բեր, փշրի, վրեն դիր, կապի։

Էդ ծաղիկն էլ մի հրաշք բան էր, որ գտել էի էդ ամառ։ Ասա՝ ո՞նց։ Սարումը ոչխար պահելիս, մի օր մտիկ անեմ տեսնեմ հրես կանաչների մեջ մի կտոր ոսկոր վեր ընկած, էդ ոսկորի կողքիցը մի կտոր միս կպած, կենդանի միս, կաշին ու մազերը վրեն։ Զարմացա էդ հրաշքի վրա։ Տեսա էդ ոսկորի վերև մի ծաղիկ գլուխը կախ է արել։ Հասկացա, որ ամեն առավոտ շաղը կաթել է էդ ծաղկիցը ու մեռած ոսկորի մի կողքը կենդանի է մնացել։ Բա՞, ղաղեն ջան, մեր սարերում էդ տեսակ անմահական ծաղիկներ էլ կան, որ մեռածին շունչ են տալիս, խելքդ ձեր մեռած պարաշոկի վրա չգնա... էդ ծաղիկը վրա տվինք՝ վերքս լավացրեց-գնաց։

— Իսկ Վարդանո՞ւշը,— անհամբեր հարցրի ես։

Ծերունու դվարթ դեմքով մռայլ մի ամպ անցավ, փայլող աչքերը մշուշապատվեցին։ Մի պահ լռեց, ապա հոգոց հանեց ու ասաց.

— Վարդանուշին ինձ չտվին։ Թավադանց Օհանեսի հա-

նաքը վերջացել էր՝ արջը սպանված էր։ Իմ պառկած ժամանակ Վարդանուշին ուզում են տան գլավու տղին։ Աղջիկն իր մազերը պոկում է, սուգ անում, թե՝ իմ սիրածին եմ գնալու։ Էդտեղ մեր տանեցիք միտք են անում ու իրենց կարճ խելքովը որոշում են, թե քանի Վարդանը տանը պառկած է, հաջողեցնենք էն աղջկանը գեղիցը տանեն, ոտդ անեն։ Մեկ է, ասում են, Թավադանք մեզ պես չոբաններին աղջիկ չեն տալ, սա էլ ջահել է, վեր կկենա նշանդրեքին արին կթափի։ Ու մոքրիս աղջիկը, որ իմ ու Վարդանուշի ուխտի գաղտնիքը գիտեր, իմ արնոտ պատառոտված շապիկը տանում է Վարդանուշին, թե՝ քույրիկ ջան, հույսդ կտրի նրանից, արջը ջարդել էր, էս գիշեր հոգին ավանդեց։

Վարդանուշն էլ երկար սուգ անելուց հետո ասում է՝ իմ մուրազը որ փորումս մնաց, սրանից հետո կուզեք պսակեցեք, կուզեք մորթեցեք, կուզեք գլավու տղին տվեք, կուզեք շանը, ինձ համար մեկ է, իմ արևը խավարել է պրծել...

Էդպես մատանին դրա մատն են դնում։

8

Ես որ լավացա, ասի՝ նանի՛, արջի մորթին ուղարկեցի՞ր Վարդանուշին։ Դա լացակումեց։ Դուռը շրխկացրի, գնացի սրահը, տեսա մորթին սնիցը կախած։ Տեսա ու աչքերիս առաջը մթնեց։

Հորս ասի՝ ապի՛, էս ինչի է մորթին էստեղ... Դա թե՝ ա՛յ որդի, ինչի՞ չես ոտդ յորղանիդ չափով մեկնում։

Էդ որ ասեց, հասկացա, ու աշխարհքը գլխիս պտիտ եկավ։ Բայց դե չկարացի բան խոսեմ, էն ժամանակ մենք մեր հոր առաջ հարսի պես էինք։ Սիրտս լցված տուն մտա, ասի՝ նանի՛, էս ի՞նչ բան է, խոսի՛ր, էստեղ մի բան կա։

Մերս լաց լինելով պատմեց բոլորը ու վերջում ասաց՝ տանը կաց, որդի՛, էսօր եկել են աղջկանը տանեն։ Թող տանի գլավու տղան, դրա պսակը սև կապեմ, դրա մերն էլ ինձ պես մղկտա...

Էդ որ լսեցի, գժի պես տանից դուրս թռա, բայց բռնեցին, ոտ ու ձեռս կապեցին ու գցեցին գոմը։

Գիշերը զուռնա-դհոլի ձենը լսում եմ ու գոռում, մղկը-

www.a-pdf.com

տում, բառաչում, գլուխս սնին եմ խփում, գետինն եմ կրծոտում։

Մյուս օրը ձեռ ու ոտս բաց թողեցին, խրատեցին, համոզեցին, թե՝ արդեն տարան Դսեղ, ձեռք քաշիր, խելքդ գլուխդ հավաքիր, աշխարհքում աղջկանից շատ ի՞նչ կա։

Սուտ համոզվեցի, համա արինս եփ է գալիս, արնոտ սիրտս տնքում է։ Խանչալս թաքուն կապեցի չուխիս տակ ու ասի՝ նանի՛, ես տավարը ջուրն եմ տանում։ Դրանք բան չկասկածեցին։ Մերս թե՝ տա՛ր, որդի՛։

Տավարը ջուրը տարա ու էգտեղից խանչալիս դաստակիցը բռնած, ձորովը վազ տվի դեպի Դսեղ, ո՞նց եմ գնում... Դսեղի մոտի ծմակից զուռնա-գհոլի ձենը գալիս է, դրանք ձիով ոլորմոլոր ճամփովն են գնում, ես ձորը կտրեցի ու կարճ կածանով խանչալս հանած դուրս եկա առաջները։

Ես որ դրանց առաջը կտրեցի, Վարդանուշը ճչաց՝, վա՞յ, Վարդանը կենդանի է... Ճչաց ու նվաղեց։ Զուռնի ձենը կտրեցին, ես բղավեցի՝ նամա՛րդ, էդ ո՞ւմ սիրածն ես տանում, թե տղամարդ ես, մեյդան արի, ուժով տար...

Գլավին պլետը վրես թափ տվեց, ձիավորները շրջապատեցին ինձ, Օհանեսն էլ քաթանի պես սպիտակած՝ բան չի ասում։ Ասի՝ Թավադանց Օհանե՛ս, էդ է՞ր մարդկությունդ, էդքան էժա՞ն էր քո խոսքը... Բա ես երկու տարի հարամու հետ կռիվ անեմ, արին տամ, դու իմ սիրածը վերցնես էդ փսլնքոտ լակոտին տա՞ս... Դե էդ գովական փեսադ թե տղամարդ է, ասա թող հարսների փեշերի տակիցը մեյդան դուրս գա...

Էդ որ ասեցի, փեսեն (դե ինչքան չըլի փափախ կար գըլխին) մի քարի թիկունք անցկացավ ու հրացանը մեկնեց վրես։ Համա վախից ոանգը գցել է, գիտի, որ հրացանը ձեռին չլինի՝ հում-հում կուտեմ։ Ես ձիերի արանքներովը դուրս պրծա ու գուսանի պես թռա դրա վրա, որ խանչալը սիրտը խրեմ, մին էլ աչքերիս առաջ մի բան տրաքեց, բոցը երեսովս տվեց, թիկունքս տաքացավ, աչքերս մթնեցին ու վեր ընկա...

Վեր ընկնելիս երազի պես Վարդանուշի ճչոցը լսեցի ու Օհանեսի ձենը, թե՝ ձեզ մատա՛ղ, բռնեցե՛ք, աղջիկս գժվեց...

Չորս օրից հետո, որ ուշքի եկա, էլի մեր սները մրոտած տանն էի, էլի մերս գլխավերևս նստած գոգնոցով աչքերը սրբում էր...

Բա՛, տղա ջան, դրա համար եմ ասում՝ նամարդ է էդ

սատանի հաջաթը... դրա համար եմ ասում, որ իգիթի մեջքը դա՛ կոտրեց, դրա հնարողի մեջքը կոտրի...

Այսպես վերջացրեց իր պատմությունը Վարդան պապը ու պղտորված աչքերը բուխարու ծիրանագույն ցոլքերին հառած, հուզմունքից դողդողացող ձեռքերով սկսեց օջախաքարին թափ տալ հանգած ծխամորճը։

Ծանր ու ճնշող լռությունից հետո ընկերս հարցրեց.

— Իսկ Վարդանուշն ի՞նչ եղավ։

— Վարդանուշը գժվեց, շոլերն ընկավ ու մի քանի ամսից մեռավ։

Նրա մահից հետո աշխարհքը գատարկվեց ինձ համար։ Սիրտս կոտրած, շոլերն ընկած, բայաթի էի ասում՝ իմ թառլան զուշը հիշում։ Մեկ-մեկ էլ գիշերները գնում էի Երա գերեզմանի վրա լաց լինում, գլուխս թմբին դրած քնում ու երազում միասին սեհր էինք անում մեր էն սիրուն սարերում...

Իմ կյանքի ութանասուն տարիներն էդ քաղցր երազներով անց կացան. Վարդանուշից հետո շամուանացու Սրտիս կսկծից մի գիշեր Թավադանց եբդիկովը տուն ընկա, Օհանեսի մեղավոր հոգին էն աշխարհքն ուղարկեցի ու փախա սարերը...

— Բա՛, դադեն ջան, մենք էն ժամանակ էդպե՛ս էինք սիրում...— բարձրաձայն վերջացրեց ծերունին՝ կարծես տխուր հուշերը իրենից վանելու համար։

Մենք սթափվեցինք ու դուրս եկանք խրճիթից։

Մեզմ գիշեր էր, հանդարտ ձյուն էր գալիս։ Հիսանալի որսի օր էր բացվում...

1936—1940

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻՆ

1

Ես վաղուց չէ, որ վայր եմ դրել տավարածի մահակը։ Ամառանոցային կոկիկ այս քաղաքում ես սարից նոր բերած եղնիկի նման ամեն քայլափոխի դես-դեն եմ նայում խրտնած։ Ինչքա՞ն մարդ կա այդ ամառանոցում և ինչ տեսակ հագուստներ ասես, որ չեն հագնում։ Բոլորն անծանոթ, բոլորն ան-

www.a-pdf.com

մաշելի։ Եվ ինչ զարմանալի կարգեր ասես, որ չկան այստեղ. մարդիկ փոքրանակ թփուտներով գնալու, կոկիկ ճանապարհներով են քայլում, և ոչ ոք ծառ չի բարձրանում...

Ծառ ու ծաղիկ պատած են փշալարերով, և ոչ ոք չի վազում կանաչի միջով ու չի թավալվում։ Աթուրմա, լախտի խաղացող էլ չկա... Բնության մեջ լինել ու աթուրմա չխաղա՞լ... Տարօրինակ է, շատ տարօրինակ ու անհասկանալի։

Քեռիս, որ աշխարհ տեսած, զարգացած մարդ է, հանքային ջրերի առողջարանների քարտեզը ձեռքս է տվել ու պատվիրել՝ լինել բոլոր նշանավոր վայրերում։ Բայց երեք օր է, ինչ այստեղ եմ և դեռ ոչինչ չեմ տեսել, այս ժխորից միտքս չի պարզվել, շփոթությունս դեռ չի անցել։

Ամառանոցն ապրում է իր ուրախ կյանքով, թատրոնում հնչում է Չայկովսկու դյութիչ երաժշտությունը, աշխատավոր մարդն առողջանում ու բերկրանքով վայելում է այդ աննման ամառանոցի բարիքները, իսկ ես, անընկեր ու անլեզու, ամեն օր որոշ ժամերի վաննա եմ ընդունում, զանգի կանչով օրական ուտում եմ չորս անգամ, թփուտներում պառկած գիրք կարդում, իսկ իրիկնադեմին միայնակ սար եմ բարձրանում՝ վերջալույսը տեսնելու։

Ա՜խ այդ երկրի դյութիչ վերջալույսը...

Մի օր էլ վճռեցի հենց առաջին պատահած մարդուն ցույց տալ քեռուս տված քարտեզը և իմանալ, թե որտե՞ղ են դրանք՝ իմ տեսնելիք վայրերը, և ինչպե՞ս կարելի է ընկնել այնտեղ։

Այգում, նստարանի վրա համեստ դեմքով մի տիկին նստած՝ գիրք էր կարդում։ Ռուս է։ Ափսոս, որ ռուսերեն վատ եմ խոսում, և այդ է պատճառը, որ այստեղ ոչ ոքի հետ չեմ ընկերանում։ Բայց միայն դա չէ, այլև իմ բնական ամոթխածությունը, հետամնաց գյուղի, նախկին տավարածի ամոթխածությունը, որ ես բերել եմ հետս մեր սարերից։ Այդ ամոթածությունն էր պատճառը, որ ես մի քանի օր առաջ Սև ծովի ափերից փախա Կիսլովոդսկ։ Հազարավոր տղամարդ ու կին միասին լողանում էին ծովում և մերկ փռվում ավազի վրա՝ կողք-կողքի... Իսկ տեսնվա՞ծ բան է դա...

Ու հիմա կանգնել եմ այդ տիկնոջ առաջ կարկամած և ամաչում եմ նույնիսկ շուռ գալ-գնալ։

Նա գլուխը բարձրացրեց և, հավանաբար իմ գեղջկական

www.a-pdf.com

կարմրած դեմքից դրությունս հասկանալով, սիրալիր ժպտաց ու հարցրեց.

— Ի՞նչ եք կամենում, երիտասարդ։

— Ներեցեք, ես... ես... չգիտեմ ո՞ւմ դիմեմ...— կմկմացի ես։

— Նստեք և խոսեք համարձակ։ Դուք հավանաբար առաջին անգամն եք լինում ամառանոցում,— ասաց նա այնքան բարեկամաբար, որ ես սիրտ առած՝ նստեցի ու սկսեցի իմ կոտրտված ռուսերենով.

— Այո, առաջին անգամ... Մենակ եմ... ուզում եմ նշանավոր տեղեր տեսնել, բայց ցույց տվող չկա... Ա՞յ, օրինակ, Լերմոնտովի մենամարտի տեղը...

— Էլի ի՞նչ տեղեր կուզենայիք տեսնել,— հարցրեց նա հետաքրքրությամբ ինձ զննելով։

Ես պատասխանի փոխարեն ծոցիցս հանեցի իմ քարտեզը, որի վրա կարմիր մատիտով նշաններ կային արած...

— Քեռիս է տվել, որ գնամ, բոլորը տեսնեմ,— թոթովեցի ես։

Նա բարեսրտությամբ ծիծաղեց՝ ցույց տալով իր սիրուն ատամների ճերմակ շարքերը։

— Քեռի՞դ... Որտեղացի՞ է քեռիդ։

Ինչպես դուք կխոսեցնեիք թոթովախոս ու միամտաբար դուրս տվող մանկան, նույնպիսի հետաքրքրությամբ ինձ հարցուփորձի ենթարկեց երկնագույն աչքերով, փոքրիկ, ձվաձև դեմքով այդ տիկինը։ Իսկ երբ իմացավ, որ ողջ կյանքս սարերում, վրաններում ու ձմեռանոցներում է անցել, երբ իմացավ, որ որսի հետևից ամեն ձմեռ թափառում եմ անտառներում ու ձորերում, նրա հետաքրքրությունը բաղմապատկվեց։ Այդ տիկնոջ համար ես արդեն գյուտ էի, կամ հազվագյուտ հետաքրքիր մի արարած՝ այդ քաղաքակիրթ ամառանոցում։

— Ո՞ւր կուզեիք գնալ այսօր,— հարցրեց նա վեր կենալով։

— Մեկ է... Թեկուզ Լերմոնտովի մենամարտի տեղը։ Կասե՞ք ինչպես գնամ։

— Կասեմ...

Եվ նա բացատրեց իմ մարշրուտը։

Չէ, գլուխս բան չմտավ։ Ինձ համար ավելի հեշտ է մեր գյուղից սարերով գնալ Լոռի, քան Կիսլովոդսկից՝ Պյատիգորսկ։

www.a-pdf.com

Նկատեց, որ մոլորվել էմ, հասկացավ։

— Իսկ դուք այն կողմերը չե՞ք գնալու,— ներքին պայքարից քրտնած, հարցրի ես։

Ժպտաց մտերմաբար։

— Վաղը գնալու եմ։ Եթե առավոտյան ինը անց քառորդ լինես կայարանում՝ ցույց կտամ ճանապարհը։

Շնորհակալություն հայտնեցի ու հեռացա։ Ոչ, ուղղակի փախա. կյանքումս առաջին անգամ էի քաղաքացի կնոջ հետ այդքան երկար ու համարձակ խոսում։

2

Տարի թվաց մինչև բացվեց հաջորդ առավոտը։ Նախաճաշեցի ու անմիջապես սլացա կայարան։

Ծաղկավոր սարաֆանը հագին, ուսերը բաց, հովանոցը ձեռքին, բոբիկ ոտքերին հասարակ սանդալներ՝ կանգնած է հերթի. տոմս է գնում։

Գլխի շարժումով բարևս առավ։

Վագոնում ես այլևս նախորդ օրվա նման կաշկանդված չէի զգում ինձ։ Պյատիգորսկում պարզությամբ ասաց.

— Վախենում եմ այս օտար քաղաքում կորչես։ Ուզեմ-չուզեմ պիտի ուղեկցեմ քեզ։

Եվ ավագ քրոջ մտերմությամբ թևս վերցրեց, ապա, քիչ քայլելուց հետո, ասաց կիսակատակ.

— Անշնո՞րհք, թևանցուկ անել էլ չգիտե...

Ըստ երևույթին սաստիկ կարմրեցի, որովհետև կանգ առավ ու դեմքիս նայելով՝ ինքնիրեն շշնջաց.

— Ինչպե՞ս գույնն անմիջապես փոխում է...—Ապա զվարթ ավելացրեց,— է՜, երիտասարդ, լավ է, որ դեռ հոգով անարատ ես մնացել։

Սատանան տանի, թևանցուկ արած քայլել չեմ կարողանում։ Ինչպե՞ս քայլեմ, որ կողքին չքսվեմ, ոտս ոտին չառնի։ Ա՜խ, իմ այս անճոռնի ոտքերը...

Ես բառեր ճարեցի մտքումս, դասավորեցի ու ասացի.

— Գիտե՞ք, ճիշտն ասած՝ ուղիղ տեղով քայլած չկամ... դժվար է ուղիղ տեղով քայլել... իսկ թևանցուկ առաջին անգամն է... ներեցեք...

Եվ թևը թողեցի։ Կարգին քրտնել էի։

www.a-pdf.com

Այնպես ուրախ քրքջաց, և այդ ծիծաղն այնքան զրնգուն ու դուրեկան էր։

— Ի՞նչ հետաքրքիր արարած ես, ասուփած ինկա, ես Մոսկվայում շատ մարդ եմ ճանաչում, ոչ մեկը քեզ նման չի։

Կարգին ձեռ է առնում ինձ. երևի իրոք շատ անճոռնի արարած եմ...

Այդ օրը եղանք Լերմոնտովի մենամարտի վայրերում։ Գրլխարկս հանեցի ու հարգանքով նայեցի հանճարեղ պոետի արձանին։

Տիկինը թաքուն հայացքով զննում է ինձ։ Այս անգամ չծիծաղեց վրաս. ըստ երևույթին, չուզեց վիրավորել զգացմունքներս։ Նա Լերմոնտովի «Դև»-ն արտասանեց կարծես իր համար, բայց հետզհետե հափշտակվելով։

Վա՜հ, այս ինչքա՜ն լավ, ինչքան երաժշտական ձայն ունի... Սա անպայման ակումբներում արտասանելիս կլինի։

Վերադարձանք, և քաղաքային զբոսարանում բաժանվելիս հարցրի.

— Իսկ ձեր անունը կարելի՞ է իմանալ։

— Ինչ կարիք կա... Միևնույն է, այլևս չենք հանդիպելու։

Ու չարաճճի հայացքով զննում է դեմքս. կարծես ուզում է իմանալ, թե ինչ տպավորություն կթողնի ասածը։

Ես մռայլվեցի։

— Բա քեռուս ասած մյուս տեղերն ո՞վ պիտի ցույց տա,— մռթմռթացի ես դժգոհ։

— Է՜, երեխա՜, երեխա, խոռվել է՞լ գիտես,— հնչեց նրա երգեցիկ ձայնը։ Ապա ձեռքը մեկնեց ու ասաց, կարծես ինձ մխիթարելու համար— Նո՞ւ, մի՛ խռովիր, առավոտյան ժամը տասին եղիր հանդիպման վայրում։

Ես ուրախ սեղմեցի նրա ձեռքը։ Որքա՜ն նուրբ, որքան քնքուշ է այդ ձեռքը, որ այնպես անօգնակա՜ն է պատսպարվել իմ կոշտ ու խոշոր ափի մեջ։

Ես մի պահ կարկամել եմ։ Նա հասկանում է, դեմքին խիստ արտահայտություն է տալիս ու զգուշությամբ ձեռքը քաշում ափիցս։

— Նո՞ւ, բարի գիշեր, մի՛ մոլորվիր,— լսում եմ նրա հընչեղ ձայնը։

Թեթև սրտով բարձրանում եմ աստիճաններով։ Ի՞նչ լավն է, ի՞նչ բարի այդ տիկինը, անպայման մանկապարտեզում աշ-

www.a-pdf.com

թատելիս կլինի. նրանք սովոր են բոլորի հետ վարվել, ինչպես երեխաների հետ։ Այնպե՞ս բարի են լինում մանկապարտեզի դաստիարակչուհիները։

Մյուս օրը, պայմանավորված ժամին ես մոտեցա ծանոթ նատարանին։ Այնտեղ է, էլի երեկվա գիրքն է կարդում։ Այնպե՞ս մտերիմ է ժպտում ինձ։ Նույնիսկ թվում է, թե քրոջ կարոտ կա նրա հայացքում։

— Նո՞ւ, լա՞վ քնեցիր, չորա՜ն,— հարցրեց նա կատակով։— Քեռիդ է՞լ ի՞նչ է պատվիրել։

Ու ծիծաղում է զրնգուն, այնպես դուրեկան ծիծաղով։ Եթե հնարավոր լիներ ձայնագրել այդ գանգակ ծիծաղը...

— Քեռիս պատվիրել է, որ «Օդի տաճարն» էլ տեսնեմ։

Վեր է կենում, ձեռքս բռնում ու տեռասներով վեր ենք բարձրանում։

Ամառանոցի վերևում անտառապատ բլուրներ են, որոնց գագաթները բաց են ու ծածկված ալպիական կանաչով։ Մենք դուրս ենք գալիս անտառից ու մտնում ծով կանաչի ու ծաղիկների աշխարհը...

Այդտեղ իսկապես ոչ մի «տաճար» գոյություն չունի, հենց ինքը՝ ողջ բնությունը, այս չնաշխարհիկ բլուրները, ուր ստեղծագործ հուզմունք են ապրել ռուս ժողովրդի հանճարները՝ Պուշկինը, Լերմոնտովը, այս աննման վայրերն իրենք են «տաճար», «օդի տաճար»...

Ես բնության զավակ եմ և կարիք չկա, որ սիրունիկ ուղեկցուհիս ինձ բացատրի, թե ինչո՞ւ է այդ վայրը կոչվում «օդի տաճար»։

Աշխարհ ու ընկեր մոռացած-տարված նայում եմ հեռո՜ւ, հեռու հորիզոնում մինչև ամպերն իրար վրա բարդված, իրար թիկունքից ավելի ու ավելի վեր ելնող, մանուշակագույն մշուշով քողարկված Կովկասյան լեռներին։ Նայում եմ Էլբրուսի ճերմա՜կ-ճերմակ գագաթին, և հոգիս, բնությանը սովոր հոգիս թռչում է գեպի այդ անծանոթ ու փառահեղ լեռնաշխարհը, դեպի Մեծ Կովկասի մթին ծմակները, ուր վայրի ցուլն է եղջյուրներով քանդում գետինը և ուր վխտում են եղջերվի նախիրներն ու քարայծյամների հոտերը։

Ուղեկցուհիս հայացքով ինձ է զննում. երևի ջանում է հասկանալ, թե ի՞նչ է կատարվում իմ մեջ։

— Ա՜խ, այնտեղ լիներ՝ հրացանը ձեռքիս, գոնե մի շաբ-

www.a-pdf.com

թով, գոնե մի շաբթով...— զառանցողի նման շշնջում եմ ես հայերեն։

— Ի՞նչ,— հարցրեց նա ականջը մոտեցնելով։

Ես սթափվեցի ու թարգմանեցի ասածս։

— Ի՞նչ տարօրինակ տղա ես, քեզ Մոսկվա պիտի տանեմ՝ Մեծ թատրոնի դերասանների հետ ծանոթացնելու։

— Մոսկվա՞, Մեծ թատրո՞ն... ի՞նչ գործ ունեք դուք այնտեղ։

— Կատակ եմ անում, ես Սիմբիրսկի գյուղերից եմ։

...Մենք զառիվայրով ցած ենք իջնում։

Նա թեև պարզ շորերի մեջ է և հասարակ սանդալներ ունի հագին, բայց դժվարանում է։

Ներքևում, անդունդի վրա հաղարջի ու մորի թփեր կան կախկխված։

— Գնանք, ի՞նչ կլինի, գնանք քաղենք,— առաջարկեցի ես։

— Ի՞նչ, դժվե՞լ ես, այստեղից վայրի այծն էլ չի կարող իջնել,— ասում է նա ու երկյուղով նայում անդունդի հատակին, ուր կիսախավարի միջից լեռնային վտակի վշվշոցն է լսվում։

Այս անգամ էլ ես եմ ծիծաղում՝ կոպիտ ու լիաթոք։

— Էս հո իսկական կոկիկ մայթ է։

Ու մի քանի ոստյունով զառիվայրով ինձ ձորը նետեցի։

Նա բռնել է մի ճյուղից, ցած կռացել, սարսափահար անդունդին է նայում ու կանչում.

— Ստյո՞պա, Ստյո՞պա...

Ի՞նչ զվարճալի է փափկասուն տիկինների հետ վայրի թավուտում լինել։

Մորի ու հաղարջի պտուղներով ծանրաբեռնված ճյուղերի մի խուրձ գրկիս՝ զառիվերով վեր եմ վազում թեթև ոստոստալով. ուզում եմ զարմացնել նրան։

Ի՞նչ կարճ է օրը։ Նորից արևը խոնարհվել է, ահա պուտուկը կընկնի բլրին։

Մենք իջանք քաղաք։

— Ի՞նչ կլինի միասին գնանք ընթրիքի,— խնդրեցի ես։

Նա, չգիտես ինչու, դժվարանում է։

— Ա՞յդ էլ քեռիդ է պատվիրել,— ասաց նա։ Ու աչքերը, շարաճճի աչքերը ծիծաղում են։

www.a-pdf.com

— Այո՛, քեռիս է պատվիրել... Ասել է՝ ռուս աղջիկների հետ ման կգաս, որ ռուսերեն սովորես։

— Լա՜վ, որ քեռիդ է պատվիրել, գնանք,— ասաց նա ծիծաղելով։— Բայց այն պայմանով, որ ե՛ս քեզ հյուրասիրեմ։

Ու հարցական նայում է։

— Ի՞նչ... բա իմ գլխին փափախ չկա՞,— վիրավորվեցի ես։

Այդ նրան է՛լ ավելի հետաքրքրեց։

— Ի՞նչ փափախի հարց է...

— Բա տեսնված բա՞ն է, որ կինը տղամարդուն պատվի. մեր երկրում էդպիսի բան չկա։

— Ա՜հ, չոբա՛ն, չոբա՛ն, գնա՛նք։

Նա աչքով-ունքով ինձ սաստում ու հասկացնում է, որ էժանագին ճաշեր պատվիրեմ։

— Սա օտար երկիր է, որ փողդ վերջացավ, ինչպե՞ս ես վերադառնալու... սնապարծություն մի անի,— մեծ քրոջ նման խրատեց նա ու ինքը պատվիրեց ընթրիքը։

Ես շատ անհարմար դրության մեջ էի։

«Երևի համեստ ապրող ուսուցչուհի է»,— անցավ մտքովս։ Բայց այս ինչ է, դիմացի փառահեղ սրահից, արվեստի ու գրականության ինձ ծանոթ հայտնի մարդիկ վեր են կենում, գլուխ տալիս ու ժպտում իմ ուղեկցուհուն։ Տիկինը սիրալիր ժպիտներով պատասխանում է նրանց ողջույններին։ Իսկ ինչո՞ւ են այդ մարդիկ տարակուսանքով ուսները թոթվում, քշփշում իրար հետ ու մեզ նայելով՝ ժպտում։ Ո՞ւմ հետ եմ նստած ես, ի՞նչ տարօրինակ բան կա որ, վուշի պարզ շորերով, հասարակ սանդալներով այդ տիկինը ի՛նձ հետ է նստած ճաշարանում։

Այդ երեկո բաժանվելիս գրեթե խստությամբ հարցրի՝ անցնելով «դու»-ի։

— Ինչո՞ւ էին մեզ նայում էն մեծամեծները։

— Սատանան նրանց տանի, ես ի՞նչ գիտեմ։

— Բայց ո՞վ ես դու...

Զգում եմ, որ հարցիս մեջ սպառնալիքի շեշտ կա. ի՞նչ մեղավոր բաներ ասես, որ չեմ մտածում այդ կնոջ մասին։ Ինչո՞ւ պիտի թեկուզ այն գեներալը ժպտալով խոնարհվեր սրա առաջ։ Այստեղ մի բան կա։ Երևում է, որ շատերի հետ է «սիլի-բիլի» անում...

www.a-pdf.com

Ես տանջվում եմ այդ մտքերից, իսկ նա ծիծաղում է, անվերջ ծիծաղում։ Կրկեսի ա՞րջ եմ սրա համար, ի՞նչ է, ինչո՞ւ է վրաս ծիծաղում։ Ու վրդովված շուռ եմ գալիս գնում քնելու։

Այո, կոպիտ, առանց «բարի գիշեր» մաղթելու։

3

Մյուս օրը այդի չգնացի։ Ո՞վ գիտի ով է... Մենակ ես եմ, որ հիմար պարզամտությամբ տարվում եմ հենց առաջին պատահածով, ու ամեն ժպտացող ինձ բարի ու անմեղ է թվում։ Չէ՞, իմ քեռին այդպիսի բան չի ասել։ Սա ամառանոց է, երկրի բոլոր ծայրերից ամեն տեսակ մարդիկ գալիս են այստեղ. ով գիտի ինչ պտուղ է...

Բարձրանում եմ «Օդի տաճարը», բլուրն անց եմ կենում ու նստում ձորի պոնկին։ Երեկ այս ձորից մոռ քաղեցի։ Մանկան հրճվանքով ընդունեց մոռի ճյուղերը և սեղմեց կրծքին...

Անմեկին մի տխրություն է համակում ինձ, և թվում է, դա ոչ թե երեկ էր, այլ շա՜տ վաղուց... Թփերի արանքից դեռ նրա երկյուղած հայացքն եմ տեսնում ու լսում տաղնապալից կանչը՝ «Ստյոպա՜, Ստյոպա՜...»։

Չէ, հիմարություն է, նրա ողջ հոգին իր անարատ պարզությամբ արտացոլված է աչքերի մեջ։ Նա չի կարող վատ արարած լինել, այդ անկարելի է, այդ քեռիս է մեղավոր՝ իր ավելորդ զգուշավորությամբ։

Ես վար ցատկեցի, անտառում լանջով վազեցի ցած, մտա քաղաքային այգին և դեռ հեռվից տեսա նրան՝ ծանոթ նստարանին նստած, գիրքը ձեռքին։

— Անշնո՜րհք, անշնորհք կավալեր, ո՞ւր ես կորել,— փոքրիկ ձեռքը մեկնելով ասաց նա։

Չէ, լավ է, վիրավորված չի, էլի նույն վճիտ հայացքը, էլի նույն բարությամբ ժպտացող աչքերը։

— Ներիր, ընկեր, ներիր... գոնե անունդ իմանայի։

— Նու, անունը կարևոր չէ, հանիր քարտեզդ, տեսնենք քեռիդ է՞լ ինչ է պատվիրել,— խոսքս կտրեց նա։

Ես քարտեզը հանեցի ու կարդացի կարմիր նշանները՝ Ժելեզնովոդսկ, Եսենտուկի...

— Լավ, գնանք Ժելեզնովոդսկ։

www.a-pdf.com

Գնացքից իջնելիս ուշադիր տնտղեց արտաքինս, ձեռքով հարդարեց բլուղիս ծալքերն ու ասաց.

— Այսօր մաքուր ես հագնվել։ Մի՛շտ պետք է մաքուր հագնվել։

Ու այնպես է ասում, որ չվիրավորվեմ։ Եվ ինչպե՞ս կարելի է վիրավորվել այդ պարզ ու հարազատ արարածից։

Բայց էլի շառագունում եմ։ Սատանան տանի, եթե չլիներ իմ այս կարմրելը, երևի կրկեսի կենդանու նման հետաքրքրություն առաջ չբերեի։

Մենք ծառի հովում, կանաչի վրա պառկած զրույց էինք անում։ Արվեստի ու դրականության մասին եմ խոսեցնում. չէ՞ որ ես դրանց եմ ծարավի։ Որքա՜ն եմ երազել սովորելու մասին, քաղաքի թատրոնի մասի՜ն... Իսկ նա շարունակ խոսքը փոխում ու սարի կյանքից է պատմել տալիս, պարզ քոչվորների կյանքից։

— Ինչ կլինի մի բան սուլես,— խնդրեց նա,— այնպիսի մի բան, որ լսած չլինեմ։ Կովկասցի չոբանները լավ սուլել գիտեն, այնպես չէ՞։

Ես կարմրելով սուլեցի մեր սարերում հայտնի «Չոբան բայաթին»։ Չգիտեմ հասկացա՞վ, թե ոչ, բայց երբ իմացավ, որ մեռած հովվի մոր երգն է՝ ուղղված անտեր մնացած հոտին, զգացվեց, և նրա սիրուն աչքերում արցունքի շիթեր երևացին։

Ես սիրտ առած սուլեցի աշուղի երգը «Ալմաստ» օպերայից։ Նա կլանված լսեց ու խնդրեց.

— Ստյոպա, ջանի՛կ, սովորեցրու ինձ այդ երգը, ուղղակի հայերեն սովորեցրու։

Ու մինչ արևը մայր մտնելը ես եռանդով սովորեցնում էի։

Բայց չնայած թախանձանքին, այդ երգը նա չերգեց, և այնպես էլ չիմացա՝ բնությունը ձայնով օժտե՞լ է նրան, թե ոչ։

Այդ երեկո կտրականապես հրաժարվեց ընթրիքի գալ, բայց երբ տեսավ վիրավորվում եմ, ասաց.

— Ընթրիքի դրամով տոմսեր կգնես, կգնանք «Եվգենի Օնեգին» օպերան տեսնելու. այսօր Մոսկվայի Մեծ թատրոնի խումբը գաստրոլի է եկել։ Դու կարդացե՞լ ես «Եվգենի Օնեգինը»,— հանկարծ դարձավ նա ինձ։

— Այո, բայց վատ եմ հասկացել։

— Ո՞վ է քեզ ավելի դուր եկել։

www.a-pdf.com

— Տատյանան։ Սիրում եմ նրա երազկոտ ու թախծոտ բնավորությունը։ Նրա համեստությունն ինձ դուր է գալիս։ Մեր գյուղի աղջիկներն էլ են ամաչկոտ ու համեստ...

Նա կանգ առավ և հարցական նայեց ինձ։

Ես նկատեցի, թե ինչպես իմ վերջին բառերից մռայլվեց։ Երևի կարծեց, թե իրեն եմ ակնարկում։ Մի պահ բարձր արժանապատվությամբ վերևից ներքև նայեց, ապա էլի իսկույն մտավ իր դերի մեջ, պարզասրտորեն ծիծաղեց և ուսիս խփելով անփույթ շպրտեց.

— Գնանք ներս... Լավ կլինի, որ ձեր գյուղն էլ, ձեր գյուղի համեստ աղջիկներին էլ մոռանաս...

Դրամը ձեռքիցս վերցրեց և հետևի կարգի տոմսեր դնելով, մնացորդն ինձ մեկնեց։

— Կարմրելու կարիք չկա, վաղն առանց կոպեկի ես մնալու, և այն ժամանակ ապրանքատար գնացքով էլ չեն տանի քեզ քո հայրենիքը... Լեռնցու հիմար ինքնասիրություն էլ թույլ չի տա, որ ինձանից, մի ռուս կնոջից փող վերցնես։ Ի՞նչ կլինի այն ժամանակ քո դրությունը...

Մենք տեղավորվեցինք վերնահարկում, ուր մեծ մասամբ «կրկեսի հասարակությունն» էր տեղավորված՝ աղմկարար և ուրախ։

Դիմացի կերպասապատ օթյակից նշանավոր գրողներից երկուսը (այո, հենց նրանք, ես նրանց ճանաչում էի հեռվից հեռու) վեր կացան և հարգանքով գլուխ տվին ուղեկցուհուս...

Նրանց դեմքին ես տարակուսանք կարդացի. կարծես ասում էին՝ «Այդ ո՞ւր եք ընկել, տիկին այսինչ...»։

Ուղեկցուհիս բարեսրտորեն ժպտաց և աչքով ինձ ակնարկեց։ Նրանք ծիծաղեցին ու գլուխները շարժեցին, կարծես ասում էին՝ «Ի՞նչ օյինբազն է այդ տիկին այսինչը»։

Ընդմիջումներին զբոսնելիս ինձ բացատրում էր Չայկովսկու երաժշտության այնպիսի նրբերանգներ, այնքան պարզ ու խորը, որ ես զարմանում էի նրա երաժշտական կարողությունների, նրա նրբին ճաշակի վրա։ «Մանկապարտեզում երաժշտության դասեր է տալիս»,— վերջապես հասկացա ես։

Ու նրա բացատրությունից հետո Չայկովսկին սկսում էր ինձ աստիճանաբար հասկանալի դառնալ, թեև մինչ այդ էլ նրա մեղեդիները ես հոգով ըմբռնում էի. չէ՞ որ լեռը, հովը, բնությունը մեղմ ու ներդաշնակ ձայներ շատ ունեն, նրանք հաս-

www.a-pdf.com

կանալի են իմ հոգուն։ Ես դա հասկացրի իրեն՝ ուրախացավ։

— Գիտեմ, հովիվները շատ երաժշտական մարդիկ են, միայն կուլտուրան է պակասում։ Շա՛տ կարդա և թատրոն ու օպերա շա՛տ գնա։

Ինչքա՛ն լավ է նրա ներկայությունը, նրա փսփսոցը, տաք շունչն ականջիս մոտ՝ ներկայացման պահին։ Բայց արյունս պղտորվում է, երբ ընդմիջումներին «բարձր հասարակությունը» օթյակներից կասկածանքով մեզ է նայում։

Ներկայացումից հետո մենք թևանցուկ անցանք լուսնի լույսով ողողված ծառուղիներով և կանգ առանք իմ սենյակի առաջ։

Երբ նա ձեռքը մեկնեց, որ «բարի գիշեր» ասի, ձեռքն ափում պահած խնդրեցի.

— Ինչ կլինի, գնանք ինձ մոտ։

— Օհո՛, այդ չեղա՛վ... Այդ է՞լ է քեռիդ պատվիրել...

Ու մատը վրաս թափ տվեց։ Էլի աչքերը, չարաճճի աչքերը ծիծաղում են։

Գուցե կգա, երևի «նազ է անում»։

— Գնա՛նք,— պնդեցի ես։

Այնպես լրջացավ, այնպես վեհորեն ու արժանապատվությամբ նայեց ինձ, որ ես նսեմացա, փոքրացա նրա առջև։ Այդ պահին նա կերպարանափոխվեց և բոլորովին այլ կին դարձավ՝ անմատչելի՛, բա՛րձր...

Բայց դա միայն մի պահ տևեց։ Նորից անփույթ ծիծաղեց և ուսիս խփելով ասաց.

— Գնա, գնա և հանգիստ քնիր։ Միայն ա՛յն արա, ինչ քեռիդ պատվիրել է։

Ապա անսպասելի հարցրեց.

— Վաղը կգա՞ս ինձ ճանապարհ դնելու։

— Ո՞ւր,— անակնկալի եկա ես։

— Կայարան... Գնում եմ տուն։

Ես մնացի շվարած։ Այսպես ուրեմն, այլևս ողջ կյանքումս երևի էլ չտեսնեմ նրան։

— Նու, նու, մի՛ տխրիր, էլի կհանդիպենք։ Դե, բարի գիշեր։

— Գոնե ասացեք ով եք, ձեր անունը, հասցեն...— թախանձեցի ես նորից՝ «դուք»-ին անցնելով։

www.a-pdf.com

Չգիտես ինչու, դժվարանում է, բայց չի էլ ուզում մերժել, չի ուզում սիրտս կոտրել։

— Լավ,— ասաց նա քիչ տատանվելուց հետո,— ահա իմ այցետոմսը... Եվ պայուսակից քառակուսի ստվարաթղթի մի կտոր հանեց ու մեկնեց ինձ։

Բաժանվեցինք։

Սենյակ մտնելուն պես այցետոմսը նետեցի սեղանին և բերանքսիվայր ընկա մահճակալին։

Ծանր էր, շատ ծանր հրաժեշտ տալ այդ կարճատև ու թովիչ երազին...

Այդպես էլ լույս չվառեցի և քնեցի հագուստներս հագիս։

4

Առավոտյան երբ արթնացա, արդեն ուշ էր։ Արագ հագնվեցի և մեկնեցի երկաթուղու կայարան։ Այնքան էի շտապում, որ մոռացա նույնիսկ այցետոմսին նայել։

Ինչքա՜ն մարդ է հավաքվել այստե՛ղ... ու շատերի ձեռքերին ծաղկեփնջեր։

Ինչ-որ նշանավոր մարդու են ճամփու դնում։ Ո՞վ կլինի տեսնես...

Հենվել եմ ծառի բնին ու սպասում եմ իմ «մանկապարտեզի ուսուցչուհուն»։

Խփեց երկրորդ զանգը։

Վերջապես ահա նա, այն տիկինը, որին բերել են այդ ծաղկեփնջերը։ Շքեղ վագոնի աստիճանների վրա կանգնած՝ օդային համբույրներ է հղում իր երկրպագուներին։

Հիմա գնացքը կշարժվի, իսկ ո՞ւր է նա։

Արագ քայլերով մոտեցավ ինձ իմ տանտիրուհին և մատը վրաս թափ տալով, ասաց.

— Երիտասարդ կովկասցի, այս ինչե՞ր եմ տեսնում, ընդամենը մի շաբաթ է, ինչ այստեղ ես և արդեն հաջողացրել ես աշխարհահռչակ դերասանուհիներին կավալերությո՞ւն անել։

— Ի՞նչ դերասանուհի, ցնդվե՞լ եք, ինչ է։

Նա պատասխանի փոխարեն ինձ մեկնեց այն այցետոմսը, որ գիշերը ես նետել էի սեղանին։

Ձեռքից հափշտակեցի ու կարդացի.

www.a-pdf.com

ԼՅՈՒԴՄԻԼԱ ԴՈՒԲՐՈՎԻՆԱ

Ժողովրդական դերասանուհի

Կարդացի ու մնացի շվարած։ Ահա թե ո՞վ է եղել պարզ շորերով ու հասարակ սանդալներով այդ կինը...

Նայեցի վագոնի աստիճաններին կանգնած տիկնոջը։ Այո, թեև շքեղ, ինձ համար օտարոտի է հագնված, բայց իսկ և իսկ նա է, նույն մանկական անմեղ ու դյութիչ ժպիտը նուրբ շուրթերին, նույն շարաճճի ծիծաղն աչքերում։

Ես ապշած, կարկամած նայում եմ ներքևից, և նա հետզհետե հեռանում է, բարձրանում ամպերից էլ վեր, բազմում է այդ կիսաաստվածուհին արվեստի արևային բարձունքին, այնքա՜ն բարձր ու պայծառ, որ միլիոնավոր մարդիկ տեսնում են, ճանաչում են նրան, հրճվում են նրա հանճարով ու երկրպագում նրա արվեստին, իսկ ինքն այդ անմատչելի բարձունքից սիրալիր ժպտում է մեզ բոլորիս։ Ու կորչում են, փոքրանում, ոչնչանում։ Ինչպե՞ս կարող է նկատել ինձ մեր մեծ երկրի միլիոնավոր մարդկանց այդ գորշ զանգվածի մեջ...

Ցնցվեցի. ձեռքով կարծես ինձ է կանչում, այո՛, հենց ինձ՝ երեկվա մտերիմ ու պարզ ժպիտով։

Կարկամել-գամվել եմ տեղումս, միայն հիշում եմ, որ նրա տված նշանով մարդիկ ինձ տարան վագոնի մոտ։ Կռացավ, ձեռքս ամուր սեղմեց ու քնքշությամբ ասաց.

— Մնաս բարով, իմ լավ շոբան, կսովորես, Մոսկվա կգաս, և այն ժամանակ քեզ անմատչելի չեն լինի ոչ Չայկովսկին, ոչ էլ իմ երգերը...

Գնացքը շարժվեց։

Բազմաթիվ գլխարկներ ու թաշկինակներ շարժվեցին օդում, իսկ նա, վագոնի բաց պատուհանից սիրուն գլուխը դուրս հանած, օդային համբույրներ էր ուղարկում բոլորին։ Այո՛, բոլորի՛ն...

Ես նորից փոքրացա ու կորա ընդհանուրի մեջ...

Ու այդ օրից առաջ գնալու, արվեստի բարձունքներին հասնելու տենչն ինձ հանգիստ չէր տալիս և շարունակ մղում էր դեպի գործ։

www.a-pdf.com

5

Տարիներ անց ես արդեն գրականության մարդ էի, թերթի խմբագիր և հայ ժողովրդի պատվիրակության հետ գնացել էի Կրեմլ՝ կառավարական ընդունելության։ Դա 1935 թվի դեկտեմբերին էր։

Երբ Կրեմլից դուրս եկանք երջանկությունից փայլող դեմքերով և շտապեցինք մեզ համար պատրաստված շքեղ բանկետին, այդտեղ անակնկալ կերպով ես նորից հանդիպեցի նրան։

Ճաշակով հագուստի, արդեն նրբացած իմ դեմքի և կիրթ շարժուձևերի մեջ նա դժվարությամբ ճանաչեց նախկին հովվին։

— Այս ո՞ւմ եմ տեսնում, այս ո՞ւմ եմ տեսնում,— գոչեց իր զրնգուն ձայնով և, ի զարմանս ներկա եղողների, ինձ իր գիրկն առավ։— Ինչպե՞ս է փոխվել... ինչպե՞ս,— կրկնում էր նա շուռումուռ տալով ու բոլոր կողմերից դննելով ինձ։

— Նո՞ւ, քեռիդ ինչպե՞ս է, քեռիդ էլ ի՞նչ նոր բաներ է պատվիրել,— ինձ այնքան ծանոթ ծիծաղով ասաց նա։ Եվ առանց պատասխանի սպասելու շարունակեց.

— Էլ չե՞ս կարմրում, ասա՛, կարմրո՞ւմ ես, թե ոչ, թե՞ երեսիդ վարագույրն արդեն պատռվել է... Այո՛, զգում եմ, որ այլևս ա՛յն չես, այլևս չես շառագունում... փոխվե՞լ ես... Լա՛վ է եղել, որ փոխվել ես... Բայց... ափսո՞ս, ախ, ափսո՞ս որ փոխվել ես... Այնպես ավելի լավ էր, այնպես շա՞տ լավ էր... Այնպես դո՛ւ էիր, ինքնատիպ... Հիմա քեզ նման այնքա՞ն մարդ կա մայրաքաղաքո՞ւմ...

Ասաց շտապ, կցկտուր ու ափսոսանքի նկատելի շեշտով։ Եվ ես զգացի, թե ինչպես մարեց գգվանքի ինձ ծանոթ փայլը նրա երկնագույն աչքերում, ու... հետզհետե սառեց, հոգով հեռացավ ինձանից...

Բանկետի վերջում նա ոտքի ելավ և երգեց իմ սովորեցրած երգը՝ աշուղի արիան «Ալմաստ» օպերայից։ Երգեց այնպե՞ս սրտառուչ, այնպե՞ս թախծոտ...

Ես զգացի, որ նա այլևս իմ ներկայությունը չի զգում, և Կիսլովոդսկում տարիներ առաջ թողած հովվին է հիշում, իր երգի սրտառուչ ելևէջներով նրա՛ հետ է խոսում...

1939

www.a-pdf.com

ՀԻՆ ՆՇԱՆԴՐԵՔ

Իմ հորեղբայր Ավետի կինը՝ Սոնան, շատ էր դեմ, որ ջահել տղան ու աղջիկը իրար տեսնում են, իրար հավանում, հետո նշանվում։

— Ամոթն էլ է կորել էս աշխարքում,— ասում էր նա գլուխը շարժելով։

— Իսկ դու ո՞նց ես նշանվել, ձալո՛,— մի օր հարցրինք մենք։

Նա վրանում նստած ճախարակ էր մանում։ Մի պահ դադարեցրեց գործն ու խամրած աչքերում ժպիտ նշմարվեց։

— Երկու տարի նշանված եմ մնացել, համա չեմ իմացել ով է իմ նշանածը... էն ժամանակ ամոթ կար, հո հիմիկվա պես չէր։

— Վե՞րջը, նշանածիդ ո՞նց տեսար,— իրար աչքով անելով մեր Սոնա ձալոյին խոսեցնում էինք մենք՝ տավարած պատանիներս։

— Ոնց տեսա՞, հարսանիքիս օրը տեսա։ Բերին ինձ սիրուն շորեր հագցրին, զարդարեցին, դռանն էլ ոչխարներ էին մորթել։ Սիրտս ճաքում էր, մտածում էի, թե ե՞րբ են գալու, տեսնես ով է իմ նշանածը, ինչ հասակի է, սև՞ է, թե սպիտակ, աչքերը թո՞ւխ են, թե չալ, դե ջահել աղջիկ էի, էլի՛... Հը՞, վրես ծիծաղո՞ւմ եք, ամբողջ կյանքս հետն ապրելու էի, բա չիմանայի՞, ինչ տեսակ մարդ է...

Մեկ էլ տեսանք հրես սարի դոշի կածանով «աղվեսը» թռած գալիս է, տակի ձին քափ-քրտինքի մեջ մտած։ Էն ժամանակ կարգ կար, մի մարդ ձիու գլուխը աղլուխներով զարդարած՝ քամու թևի հետ տեղեկություն էր բերում հարսի ծնողներին, թե՝ պատրաստ կացեք, փեսան գալիս է իր մարդկանցով։ «Աղվես» մենք էդ ձիավորին էինք ասում։

Հա՛, «աղվեսը» եկավ, մեր տան առաջ ձիուց իջավ ու աչքալուսանք տվեց, թե՝ փեսացուն գալիս է ու շատ մեծ խմբով է գալիս։

Հիմի սիրտս չի հանգստանում. ե՞րբ է գալու, մի տեսնենք էդ ոնց տղա է իմ նշանած Ավետը...

Վերջապես, գլուխներդ ինչ ցավացնեմ, եկան ու սկսվեց իմ հարսանիքը։ Հարսանիք են անում, բայց դեռ չգիտեմ, թե ո՛վ է իմ փեսացուն ու չեմ էլ հարցնում, ամաչում եմ։

www.a-pdf.com

Իրիկունը հարսի փարդի ետևից թաքուն մտիկ արի՝ տեսնեմ երկու տղա, չերքեզկա չուխաները հագած, խանչալները կախ, բեղները նոր ծլած իրար կողքի կանգնած են։ Ականջովս է ընկել, որ մեկը փեսան է, մյուսը՝ փեսախպերը։ Դե արի որոշի, թե ով է դրանցից փեսան։ Հիմի ո՞նց հարցնեմ, ամոթ չի՞, գյուղում կտարածեն, թե հարսը էդպես հարց է տվել, խաղը ու խայտառակ կլինենք։

Չերքեզկա հագած տղերքից մեկի մեջքը բարակ է, թիկունքը լեն, բոյը չինար, երեսը շարմաղ... «Երանի է՛ն լինի իմ նշանածը»,— մտքումս ասում եմ ես ու ասածուն աղոթում, որ նրա կողքի էն մեկէլը չլինի. նա էլ լավ տղա էր, բայց կարճ էր, աչքերը կարմրած, թշերը կարմիր խնձոր։ Չէ՛, սա սրտովս չի՝, երանի էն մեկը լինի, էն շիմշատ բոյովը...

Մեկ էլ զուռնեն «խնկի ծառի» փչեց, ինձ թախտից ցած իջեցրին, որ պար գամ։ Հիմի փեսան առաջ կգա, որ հետս պարի։ Ցարաբ ո՞րն է առաջ գալու, էն սիրո՞ւնը, թե՞...

— Փեսի՛ն, փեսին մեջտեղ քաշեցեք,— գոռաց թամադեն ու փեսեն թևերը բարձրացրեց առաջ եկավ...

— Ո՞րն էր, ո՞րը,— անհամբեր հարցրինք մենք, որ արդեն մասնակից էինք մեր Սոնա ձալոյի ապրումներին։

— Էլ ո՛րը պիտի լիներ, ձեր Ավետ ամնի բոյ ու բուսաթը ձեզ հայտնի չի՞,— դառն հեգնանքով և սիրտը կոտրած պատասխանեց Սոնա ձալոն ու շարունակեց պատեցնել իր հնամենի ճախարակը։

— Իսկ էն բոյով սիրունն ո՞վ էր։

— Ասատուրանց Ասատուրն էր։ Նրան դուք չեք տեսել, մի խառը տարի թուրքերը սպանեցին մեր սարի ճամփին։ Ի՞նչ տղա էր, ի՞նչ թառլան տղա...

Եվ Սոնա ձալոյի խամրած աչքերում արցունքներ երևացին։ Ո՞վ գիտե, գուցե հենց իր հարսանիքի երեկոյին իր սրտի խորքում նա զաղտնի սիրել էր նշանածի հետ եկած այդ տղային և ամբողջ կես դար մարդկանցից թաքցրել էր իր գողունի սերը...

Եվ մենք՝ սարեցի պատանիներս, կարեկցեցինք մեր Սոնա ձալոյին, որին ծնողները տվել էին իր չսիրած մարդուն, բայց նա լուռ և մունջ կես դար քաշել էր իր բախտի լուծը...

1951

www.a-pdf.com

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Մեր Եգոր ապին հաղթանդամ ու ազդեցիկ մարդ էր գյուղում։ Լավ անասնապահ էր Եգոր ապին և լավ հողագործ, բայց չգիտես ինչու, գեներալի վերարկու էր հագնում՝ պսպղուն, դեղին կոճակներով։ Որ կապույտ դրապից այդ վերարկուն գցում էր ուսերին, «բուխարա» փափախը դնում ու արծաթապատ դաշույնը կապած գյուղամեջ գնում, անծանոթ մարդը ակնածանքով համփա էր տալիս ու մտածում՝ «էս գյուղի տերը երևի սա է»։

Նշանի հասած երկու որդի ուներ Եգոր ապին՝ Արգամն ու Արշավիրը։ Արգամը, որ ավագն էր, ամառ-ձմեռ տավար էր պահում և գյուղում հազվադեպ էր երևում։ Հիշում եմ, հանդից նախիրը տուն բերելիս իր սուր կացնով տանձի ծառից մի մեծ կտոր էր պոկում, դնում կոնատակին, բերում ձմեռանոց։ Եվ երեկոները, մինչ մենք հավաքված հեքիաթ էինք լսում, նա բուխարու առաջ թաղիքին նստած՝ տաշում էր տանձի փայտն ու նրանից սիրուն-սիրուն գդալներ պատրաստում։ Իսկ նրա ձեռքից դուրս եկած շերեփների մասին հո սարվոր կանայք հիացմունքով էին խոսում։ Ա՛յդ էր Արգամի միակ շնորհքը, մնացած բաներում ձախողակ մարդ էր. շալե կարկատած շորեր հագին, ծուռտիկ տրեխներով, ահագին փափախով, ոչ դուրեկան ու միշտ խոժոռված դեմքով համակրանք չէր առաջ բերում նա ո՛չ ընկերների շրջանում, ո՛չ գյուղում։

Ուրիշ էր նրա կրտսեր եղբայր Արշավիրը։ Կարծես միևնույն մորից չէին ծնվել այս երկու երիտասարդները։ Արշավիրը բարդու նման սլացիկ հասակ ուներ, մեջքը բարակ էր, բեղերը ոլորած, դեմքը միշտ մաքուր սափրած, զգեստը՝ ընտիր, «հրեղեն ձին» տակին։ Ինչ-որ պաշտոն ուներ նա Ղազախում, կարծեմ զինված ուղեկցում էր փոստատար կառքին։

Որ քրտնած ձին տակին, թուրը կախած, մտրակը շարժելով հպարտ-հպարտ անցնում էր գյուղաքաղաքի գլխավոր փողոցով, հարս ու աղջիկ պատուհաններից թաքուն նրան էին նայում։ Ասում էին, թե իբր գաղտագողի նրան է նայում նաև «ակը կապող Հայրապետի» թխլիկ աղջիկը՝ Թագուհին։ Եվ երբ երիտասարդն անցնում էր քառատրոփ, նրա ձիու հեռացող ոտնաձայնը դեռ արձագանքում էր այդ աղջկա մատաղ սրտում ու հետզհետե մարում քաղցր զողանջի նման։

www.a-pdf.com

Ծնողներից անվրեպ չմնաց իրենց աղջկա թաքուն տագնապները, խորհրդակցեցին իրար հետ ու մարդկանց միջոցով հասկացնել տվին, որ դեմ չեն լինի, եթե Եգորը գյուղից իր ոտքով իջնի Դիլիջան և մի վարդ խնդրի Սանթենանց Հայրապետի պարտեզից։

Ու Եգոր ապին հագավ իր գեներալական երկնագույն վերարկուն, կոճկեց ոսկեգույն կոճակները, գլխին դրեց իր «բուխարան», թավ բեղերը սղալեց և գյուղի «քյադխուդեքի» հետ թափոր կազմած ծանր-ծանր իջավ Դիլիջան։

Պատվով ընդունեցին պատվարժան հյուրերին, տեղավորեցին, սուփրա բաց արին։

Եգոր ապին, ժամանակի սովորության համաձայն, գրպանից հանեց արաղով լի շիշը, դրեց սեղանին և երկու գավաթ խնդրեց։ Լցրեց դանդաղ, հանդիսավոր, մեկը տվեց տանտիրոջը, մյուսը ինքը վերցրեց ու ծանր ասաց.

— Ուստա Հայրապետ, դու ինձ ճանաչում ես, հորս էլ ես ճանաչում, մեր ամբողջ ազգին էլ։ Նմանապես, գիտես, որ էս ձորերում անուն ունեցող ու հացով մարդիկ ենք։ Գիտես նմանապես, որ մեզ հետ բարեկամություն անողը չի փոշմանում։ Ուրեմն եկել եմ, որ բարեկամ դառնանք։ Եկել ենք քու բախչիցը անուշ հոտով մի ծաղիկ տանենք։

Ասաց, աչքերը վեր բարձրացրեց ու մրմնջաց.

«Տեր աստված, դո՛ւ մեր գործը հաջողես»։ Ասաց ու դատարկեց օղու գավաթը։

Եթե աղջկա տերը նույնպես դատարկեր իրեն առաջարկված օղու գավաթը, ուրեմն դրանով տալիս էր իր համաձայնությունը, եթե ոչ՝ ոչ։ Դե ինչ առարկեր Հայրապետը. օջախը հարո՞ւստ, տղան՝ պետական պաշտոնյա, ձին տակին, թուրը կապած։ Թաքուն ուրախություն ուներ Հայրապետն իր կրծքի տակ, բայց զսպեց իրեն, քողարկեց, ծանրացավ։ Քիչ լռեց, մտածեց, իբր թե ներքուստ մեծ պայքար մղեց իր հետ և վերջում ասաց.

— Ինչ ասեմ, Եգոր ջան, թող տիրոջ կամքը լինի...

Ասաց ու խմեց։

Այստեղ մինչ այդ լուռ ու երկմտանքի մեջ սպասող մարդկանց լեզուները բացվեցին, իրար ձեռք տվին, հավանության բացականչություններ լսվեցին, աշխուժացան՝ ժխոր բարձրացավ։ Այդ ձայները հասան դռան հետևում սրտատրոփ սպա-

www.a-pdf.com

սող Թագուհուն և ուրախության թունդ հանեցին նրա մատաղ հոգում. ուրեմն կատարվե՞ց իր մուրազը, ուրեմն էն շիմշատ բոյով երիտասարդը ի՞ր ամուսինն է դառնալու...

Վառվող այտերով նա կրում էր ուտելիքը, շարում սեղանին, նորից գնում, նորից գալիս՝ եփվելով, կարծես քաղցր երազում, կարծես ամպերի մեջ...

Որտեղից-որտեղ ներս մտավ և քահանան, աչքերը վեր հառած, ահագին մորուքը տնկած օրհնեց սեղանը, աստծու անունից հավանություն տվեց երկու օջախների բարեկամությանն ու փափուկ ձեռքը մեկնեց տապակած հավին։ Այդ ժամանակ տանտերը անմեղ հարց տվեց.

— Խնամի Եգոր (օղին խմելուց հետո Եգոր ապին արդեն «խնամի» էր դարձել), բա տղեդ ո՞ւր է, մի բերեիր, երեցը երկուսին միասին օրհներ շնորհքով, ախր մենք քրիստոնյա ենք, չէ՞...

Եգոր ապին, որ արդեն բավական տաքացել էր հոնի օղուց, որոտաց.

— Տղեն որտե՞ղ է, որ բերեմ։ Տղեն հրե՜ Լոռվա ձորերում տավար է պահում, սարն էլ ղամբը փակել է։ Գարունքը ձինը պտի հալվի, ճամփեն բացվի, որ նոր աղջիկդ իրան նշանածին տեսնի...

Ասաց ու քահ-քահ խնդաց հսկայի նման։

Հայրապետը անակնկալի եկավ։

— Ո՞նց թե, Եգո՛ր, տավար պահելու հետ ի՞նչ գործ ունի, տղեդ ստրաժնիկ չի՞...

— Ստրաժնիկը հո փոքր տղես է։ Ես աղջկանդ մեծ տղիս համար եմ ուզում, ստրաժնիկ տղիս հետ ի՞նչ գործ ունես,— անհոգ պատասխանեց Եգոր ամին։

Կարծես հանկարծ պարզ երկնքից կայծակը հարվածեց մատղաշ սալորենուն. Թագուհին ճչաց, գինով լիքը շշերն ընկան ձեռքից։

— Չէ՜, մեր բարեկամությունը գլուխ չեկավ, Եգո՛ր,— խուլ ձայնով ասաց սրտից զարնված «ակը կապողը»։— Մենք կարծել ենք, թե Արշավիրի համար ես ուզում, մենք իսկի չենք էլ իմացել, որ քեզ չոլերում ապրող տավարած տղա ունես։ Նեղանաս ոչ, ես տավարածին աղջիկ չունեմ տալու...

Ասաց ու վեր կացավ։

www.a-pdf.com

Եզոր ապնի արյունը գլխովը տվեց, ճակատի երակներն ուռան։

Պիտի ամպի նման պայթեր, եթե գյուղի քյադխուդեքը մեջ չընկնեին։ Ազդեցիկ մարդիկ էր բերել իր հետ Անանանց Եզորը՝ տանուտերն էր, անտառապահը (որ հին գյուղում մեծ մարդ էր համարվում), գրագիրն էր, խանութպանը, եկեղեցու հոգաբարձուն... դրանք չորս կողմից լեզվակոխ արին խեղճ արհեստավորին։ Մեկը թե՝

— Հայրապե՛տ, բա դու նամուս չունե՞ս, ախր արաղը խմել ես։

Մյուսը՝

— Տղամարդը՝ իրեն թքածը չի լիզի։

Երրորդը՝ թե՝

— Դու ո՞նց ես Եզորի նման մարդին դատարի ձեռքով ճամփու դնում։ Ուզում ես գեղումը մասխարա դառնա՞...

— Անանանը որ քեզանից աղջիկ են ուզում, դու պետք է թաքուն տեղը պար դաս...

Կինն ու աղջիկը մոլեգնում էին հարևան անեյակում, նրանց հեծկլտոցը հասնում էր ծեր արհեստավորի ականջին և անպայման բոլորի բերանն էլ կփակեր Հայրապետաք, եթե իր հեղինակության ամբողջ ուժով մեջ չմտներ քահանան։ Նա ասաց, որ աստծու ու կրոնի անունից ինքը օրհնել է նշանդրեքը և որ դրանից ետ կանգնել չի լինի, ինչպիսի թյուրիմացություն էլ որ կատարված լինի։

— Դե լա՜վ, Հայրապե՛տ, ի՛նձ թաղես, քեֆներս խարաբ մի՛ անի,— մորուքը բռնած աղաչեց հոգաբարձուն, որ շատ էր գրգռված համադամ կերակուրների հոտից։ Եվ իսկապես, ինչոր թյուրիմացության պատճառով ուզում են այդ պատվավոր մարդկանց լավ սկսված քեֆը փչանա, այն էլ այն ժամանակ, երբ դեռ նոր է սեղանի վրա բազմել տապակած գոճին, ու շշերը դեռ լիքն են անմահական խմիչքով։

— Այշի՜, հիմի էլ Արշավիրը չի, Արգամն ա, մեկ չի՞։ Լցրո՜ւ... գուցե հենց լավը էդ է՞։

— Տավարա՜ծ... Մեր պապերը բոլորն էլ տավարած են եղել, վատ մարդիկ էի՞ն...

— Գուցե նրա ճակատին էլ է՞դ է գրված...

Այսպես չորս կողմից վրա տվին, համոզեցին ու քեֆը շարունակվեց։

www.a-pdf.com

...Գարունը բացվեց, մեր սարերում ամբարված ձյունը հալվեց և սարի մյուս երեսին գտնվող Ահնիզորի ձմեռանոցից գյուղ եկավ տավարած Արգամը։ Ոտքերը ծուռ, դեմքը անգույն, ձայնը՝ քթի մեջ, կարկատանների ու մաքերի մեջ անիծի կուտեր։ Բայց դա ինչ նշանակություն ուներ, եգորի նման հայր ուներ, գյուղի տերերն էլ նրա թիկունքին էին կանգնած։

Ամառանոցային քաղաքում մաքուր ապրած և սիրունիկ գլխում քաղցր երազանքներ ունեցող այն օրիորդին բիրտ ձեռքերով պոկեցին իր հայրենական տնից և զուտնա-դհոլով բերին մեր գյուղը։ Չքնաղ էր նա իր ճերմակ շորերով, իր թափանցիկ ջղարշի տակ։ Իսկ կողքին քայլում էր մի անշնորհք արարած՝ ծուռթաթ արջի նման...

— Է՛հ, ինչ իմանաս երկնքի բաները, գուցե նրա ճակատին էլ էդ էր գրվա՞ծ,— ասում էին աներևույթ ճակատագրի զոհերը՝ մեր գյուղի կանայք։

Թագուհին ամբողջ կյանքում անմռունչ տարավ իր լուծը, շատ երեխաներ ունեցավ և երբեք չտրտնջաց։ Նա ևս հավատում էր, որ իր ճակատին «էդ էր գրված»...

1951

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵԼԻՆ

Դա վաղուցվա բան է. 1877 թվականին, ռուս-թուրքական պատերազմի տարին, Դիլիջանի ձորով Ղարս մեկնող ռուսական զորքից մի գումարտակ ժամանակավորապես տեղավորվում է մեր գյուղում։

Երևի կազակներն են կորցրած լինում հայելու այն կտորը, որ վար անելիս հանդում գտնում է մեր գյուղացի Կարոն։ Գրտնում է այդ տարօրինակ իրը, նայում է վրան և ուրախացած բացականչում.

— Վի՞ի՞, էս հո իմ օղորմածիկ հոր նկարն ա...

Ու զարմանում է, թե իր հայրը այդ ե՞րբ, որտե՞ղ կարող էր նկարվել։

Բայց չէ, կասկած լինել չէր կարող, իսկական հայրն էր նայում իրեն. ահա նրա մազոտ դեմքը, հաստ հոնքերը, սև խալը աջ այտի վրա, խոշոր, սև աչքերը,— ամեն ինչով հայրն է որ կա։

www.a-pdf.com

— Հա՜, մի տարի Բաքու էին գնացել, գյուղերի երեսից նավթ էին հավաքել-լցրել տկերը և բերել. կա՜-չկա էնտեղ ա նկարվել,— վերջապես գլխի է ընկնում Կարոն, կարոտով ու ակնածությամբ համբուրում է հոր «շուշե նկարը» ու դնում արխալուղի գրպանը։

Երեկոյան տուն է գալիս՝ կինը տանը չի։ Դե, հոգնած մա՜րդ, պառկում է թախտին ու քնում։ Կինը վերադառնում է հորանց տնից, ամուսնուն տեսնում է շորերը հագին քնած, սիրտը մղկտում է։ Զգուշությամբ հանում է նրա շորերն ու վրան վերմակ գցում։

Արխալուղը կարկատելիս մի բան է զրնգում գրպանում։ Հանում է հայելու կտորը ու մնում զարմացած. ի՞նչ բան կարող է լինել։ Դե, այն ժամանակ մեր գյուղում ո՞վ էր հայելի տեսել։ Շուռումուռ է տալիս ու հանկարծ քարանում զարմանքից. ահա աղլուխը գլխին կապած, կարմիր թշերով մի սիրուն, ջահել կին նայում է իրեն։

— Վո՛ւյ հողեմ գլուխդ, ես էլ գիտեմ թե վարի տեղիցն ա գալիս... դու մի ասիլ սիրուհու մո՞տ ա եղել...

Ու Մարանը զայրացած դեն է նետում «նկարը» այդ կարմիր թշերով «չար սատանայի», որ մտել է իր ամուսնու սիրտը։

«Դրա համար է տուն մտնելուն պես շնթռում, հա՞»,— խանդից եփվելով ինքն իրեն ասում է Մարանը։ Ապա նորից է վերցնում հայելու կտորը և նորից նայում նրան, տեսնում է անծանոթ կինը զայրույթով լի սիրուն աչքերով նայում է իրեն։

— Վույ հողեմ գլուխդ, մարդիս տիրացել ես քիչ ա, հլա վրես էլ փշտացնո՞ւմ ես... Բայց սատկածն ինչ էլ սիրունն ա՞, դե իհարկե իմ տամարները թույլ մարդս քոռ-քոռ պիտի դրա թալակն ընկներ։

— Ա՛յ կնիկ, էդ ո՞ւմ հետ ես խոսում,— արթնանում ու ծույլ-ծույլ հորանջելով հարցնում է ամուսինը։

— Ո՞ւմ հետ, սիրուհուդ հետ, էլ ո՞ւմ հետ...

— Վա՜, սիրուհի՞, ո՞ւր ա, ասա մի դեսը գա...

Ու Կարոն կատարյալ սթափվելով վրա է նստում։

— Ա՜ռ, բախտավորվի՜ր... Չի էլ ամաչում մազից-միրքից, ուրիշի ջահել հարսների հետևից ա ընկնում...

Ու փղձկալով նրան է նետում հայելու կտորը։

www.a-pdf.com

Կարոն վերցնում է, և դեմքը ողողվում է ուրախությամբ։

— Կնի՛կ,— ասում է նա,— մի լավ մտիկ, էս հո իմ հոր նկարն ա, հանդում վար անելիս եմ գտել։

Ու մեկ էլ է նայում հայելուն. դե իհարկե, իր հոր ջահել ժամանակվա նկարն է, ի՞նչ սիրուհի, ի՞նչ բան, մի մաղոտ մարդու նկար է։

— Հա՞, ոնց որ դու ես ասում՝ մաղս երկար ա, խելքս կարճ, կխաբես, իհարկե կխաբես,— լալով ասում է կինը, աչքերը սրբում, նորից է նայում «նկարին» ու խայթված ձեռքից գցում խոռված գնում է իր մոր մոտ վիշտը նրան պատմելու։ Մայրը ներսում եփվելով, բայց արտաքուստ հանգիստ ասում է.

— Գնանք մի տեսնենք, էդ ինչ բան է։

Գնում են աղջկա տուն. Կարոն երեսը դեպի պատը մեկնված, խռով սրտով սուտ քուն է մտել։

— Հողեմ դրա սիրուհու գլուխը, մի դեսը բեր տեսնեմ, դա ո՞նց ա քեզանից սիրուն, որ ասում ես։

Աղջիկը հայելին տալիս է մորը։ Պառավի կնճիռները հարթվում են, դեմքը իսկույն խաղաղվում է։

— Ի՞ի՞, Մարան ջան, էս ինչ ա, էս քավթառը, որ Կարոն սրան սիրի... Մի սրա մեյմուն երեսի կնճիռներին մտիկ, մի ճպռոտ աչքերին մտիկ... Հողեմ սրա գլուխը, էս ինչ ա էս պառավը, որ սրա համար լաց ես լինում,— արդեն բոլորովին հանգստացած ասում է մայրը։

— Տո դուք հո սատաներոց չեք եղել, այ կնանիք, իմ հերը հիմի էլ քավթառ կնի՞կ դառավ,— տեղից վրա նստելով գոռում է Կարոն ու «նկարը» վերցնելով գնում է գյուղի քահանայի մոտ՝ կինն ու զոնքանչն էլ ետևից։

Գնում էր լուծելու առեղծվածը։ Դե, քահանայից բանիմաց մարդ կա՞ր այն ժամանակվա գյուղում...

Լսում է քահանան ամուսինների վեճը, հայելու կտորը վերցնում է նայում, և նրա դեմքը պայծառանում է, աչքերը լցվում են արցունքով։

— Ոչ քո հոր նկարն է, օրհնյա՛լ, ոչ քո ա՛յ պառավ, ոչ էլ մարդիդ սիրուհունն է... Սա իմ լուսահոգի հոր նկարն է։

www.a-pdf.com

Մի տեսեք՝ սև մորուքը մինչև դոշն է հասնում, բեղերը կախված բերանի վրա, խաչը վզիցը կախ։ Օղորմի քեզ, ի՞նչ տերտեր է՞ր, որ սկսում էր «սուրբ, սուրբը» երգել, եկեղեցին դրմբդրմբում էր...

1951

ՉԱՏՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Մեր գյուղացի Ալխանանց Չատին մեռել էր։ Բարեկամներն ու հարևանները հավաքվել էին Չատնի աղքատիկ խրճիթը և լուռ կանգնած նայում էին թախտին մեկնված դիակին։ Չատնի կինը այլևս լաց չէր լինում։ Դնչկալը մինչև քիթը վեր քաշած, աչքերը կարմրած, ձեռքերը ծալած-դրած փորին, գլխիկոր կանգնած նայում էր ամուսնու դեմքի խճճված մազերին ու դեղնավուն թափանցիկ ճակատին։ Ի՞նչ էր մտածում այդ դժբախտ կինը, ոչ ոք չգիտեր։

Երեխաները ուրուր տեսած ճուտերի նման ծվարել էին հանգչող բուխարու առաջ, իսկ ամենափոքր աղջիկը ոտաբոբիկ կանգնել էր մոր մոտ և բռնել նրա փեշից։

Չէր հասկանում, թե ինչու են մարդիկ հավաքվել իրենց տուն, ինչու էր մայրը գիշերը լալիս, ինչու ապին տեղից վեր չի կենում...

Եկավ գյուղի քահանա տեր Հայրապետը։ Դա մի հաղթանդամ, կարմիր թշերով, կարմիր վզով մարդ էր։ Ասում են լավ խմում էր, լավ էլ հայհոյում։ Դե ոնց չհայհոյեր տեր Հայրապետը, ուտող-խմող մարդուն ամեն օր փող է հարկավոր, իսկ մեր գյուղացիները նույնիսկ հին ժամանակ էլ սեր չունեին եկեղեցու հետ և տերտերին փող էին տալիս առանց ոգևորության։ Այդ օրը մեր գյուղացի Ակոն կալօրհնեքի դիմաց նույնիսկ սովորականից մի չափ ցորեն պակաս էր տվել քահանային, պատճառ բռնելով, թե՝ կարկուտն արտերը տարել է, հատիկը քիչ է։ Դատարկ պատճառաբանություն. աստծու ի՞նչ պետքն է, քո արտը կարկո՞ւտն է տարել, թե մուկը, դու նրա ծառայողի վարձը տո՞ւր, մնացածը դու գիտես։ Եվ զայրացած քահանան պոկել էր Ակոյի մորուսը, հայհոյել ու հետո եկել Չատնին թաղելու։ Դրանից էլ դեմքը թթված էր։

Բեղի տակ փնթփնթալով, մորուսը տմբտմբացնելով ինչոր բան կարդաց ձեռքի հնամաշ գրքից (դե, աղքատ Չատնի

www.a-pdf.com

[illegible] հո ժամերով «տաղմոս» չէ՞ր կարդալու...) և դարձավ ձեռնակ շապիկ հագած տիրացվին.

— Վերցրու հանգուցյալի շորերը...

Որ ասում եմ՝ նրբանկատ չէր տեր Հայրապետը։ Տեսա՞ք։ Չի սպասում, որ տնեցիք իրե՛նք առաջարկեն իրենց հանգուցյալի զգեստները։ Ասենք, տեր Հայրապետն իրավունք ուներ ուղղակի պահանջելու. կարգն էր այդպես, վախճանվողի հագուստը և անկողինը պատկանում էր նրան թաղող քահանային։

Կինը մի մեզարի մեջ փաթաթեց Զատնի արխալուղը, հնամաշ չուխեն, փափախը, կարկատած շալե շալվարը, անգամ գուլպաներն ու տրեխները չմոռացավ դնել և ակնածությամբ հանձնեց տիրացվին։

— Բա յորղա՞նը... Բա կարպե՞տը,— դժդոհ փնթփնթաց քահանան։

Հնամաշ վերմակն էլ հանձնեցին տիրացվին։

Քահանան նայում էր մյուս թախտին փռված ծակ կարպետին և ներսում եփվում, թե ինչու առանց հիշեցնելու, չի ստանում իր օրինական ստանալիքը։

Պիտի սկսի ծեսը և երգելով դուրս գնա, որ դիակը հետևից դուրս տանեն, բայց լռել է, նայում է կարպետին և կարծես Զատնին թաղելու ոչ մի մտադրություն չունի։

Մի համարձակ և տաքարյուն քեռի ուներ՝ Օհանեսը։ Նրա համար քահանա, քյոխվա, պրիստավ՝ նշանակություն չուներ. որ տեղն եկավ, կդաղեր, թեկուզ դրա համար ինչ պատիժ էլ որ տալու լինեին։ Բոլորովին նրբանկատ մարդ չէր քեռի Օհանեսը։ Տեսավ, որ քահանայի ուշքն ու միտքը Զատնի հին կարպետի կողմն է, զուսպ վրդովմունքով ասաց.

— Ա՛ տեր, դրանք որ տանում ես, էն եթիմներն ինչի՞ մեջ են քնելու...

Բայց երբ տեսավ, որ ագահ քահանան անդրդվելի է մնում, թախտից թափով վերցրեց կարպետը, շպրտեց նրա կողմն ու հետն էլ գոչեց զայրացած.

— Ա՛ռ, քու հերն անիծած...

Շատ զվարճալի տեսարան ստացվեց. քահանայի գլուխը մտել էր կարպետի անցքը և կեղտից ու կաթիլներից բնական գույնը կորցրած կարպետը շուրջառի նման կախվել էր նրա վզից...

Մինչև օրս էլ մեր գյուղի ծերունիները հիշում են այդ գեպքն ու իրենց-իրենց քրթմնջում.

— Հա դե անխիղճ բան էր, էլի՛, բա մեռելի շորը կտանե՞ն... Ո՞նց էլ հավատում էինք, թե տերտերը աստծու մարդն է...

1952

ՍԱԼԴԱԹ ՆԻԿԱԼԸ

Դիլիջանցի շոբան Նիկալին զինվոր տարան։

Ամառը սարերում էր ապրել Նիկալը, ձմեռը՝ հեռավոր ձմեռանոցում. ոչ կարգ գիտեր, ոչ կանոն, ոչ էլ հասկանում էր ֆելդֆեբելի ուսերեն հրամանները։ Եվ որովհետև չէր հասկանում, մտրակով ծեծում էին, որ հասկանա...

Ցարական բանակում առաջին բանը, որ նրան ջանում էին սովորեցնել, դա թագավորի ու նրա կնոջ անուններն էին՝ իրենց տիտղոսներով։

Անունն օտա՞ր, լեզուն՝ օտար, տիտղոսն՝ օտար, դե եկ մտքումդ պահիր, շոբան Նիկալ։

Գալիս էր կոճղի նման հաստ, թիկունքը լայն, բեղերը շեկ ֆելդֆեբելը, թափահարում մտրակն ու ատամների արանքից ֆշշացնում զայրագին.

— Կրկնի՛ր, ապո՛ւշ... կրկնիր՝ Եվո իմպերատորսկոյե վելիչեստվո գոսուդար-իմպերատոր Նիկոլայ Ալեքսանդրովիչ...

Այդքանն ասե՞լ կլինի։ Միայն Նիկոլայ բառն էր կարողանում սահուն անցկացնել,— դե դա իր անվան լրիվ ձևն էր,— մնացածը արտասանել ավելի դժվար էր, քան ասենք՝ իրենց Դոնգուզ-դարասի կոչված ձորից մի կաղնի գերան մինչև ձմեռանոց տանելը։

Է՛հ, չե՞ս կարողանում, կե՛ր, մեղքը քո վիզը։

— Ռոզգի՛,— որոտում էր ֆելդֆեբելը և ցած էին իջեցնում մոլորված զինվորի վարտիքը...

«Ռոզգին» ուտելուց հետո նորից էին հրամայում.

— Կրկնի՛ր, ապո՛ւշ, կրկնի՛ր... Եվո իմպերատորսկոյե...

Եվ այսպես ամեն օր։

...Երբ մենք՝ գյուղական պատանիներս, Դիլիջանի դպրոցն

www.a-pdf.com

էինք հաճախում, ամեն օր ամբոխով շրջապատված մի մարդ էինք տեսնում փողոցում։ Նա զինվորական հնամաշ պիջակ ուներ հագին, պայտեր կպցրած ծանր կոշիկներ և կարկատած գորշ շալվար։ Դեմքը վաղուց ածելի չէր տեսել, իսկ աչքերը պղտոր էին ու թափառող։

Ամեն հանդիպողի առաջ կանգ էր առնում, կրունկները շրխկոցով խփում իրար, ձգվում ու զինվորական պատվի առած՝ մեքենայորեն շարում էր իրար հետևից.

— Եվո իմպերատորսկոյե վելիչեստվո գոսուդար իմպերատոր Նիկոլայ Ալեքսանդրովիչ...

— Եյո իմպերատորսկոյե վելիչեստվո գոսուդարինյա իմպերատորիցա Ալեքսանդրա Ֆեոդորովնա...

Նիկալն էր։ Վերջապես սովորել էր, բայց արդեն խելք չկար գլխին...

Եթե մի տարի ևս դիմանար ծեծին և չխելագարվեր, պիտի հետո անցնեին հետևյալ՝ ներկայի լեզվով ասած՝ «պարտադիր մինիմումը».

— Եվո իմպերատորսկոյե վելիչեստվո նասլեդնիկ ցեսարևիչ Ալեքսեյ Նիկոլաևիչ։

Պիտի սովորեցնեին նաև կրկնել գնդի, դիվիզիայի, կորպուսի հրամանատարների անունները, հայրանունները, ազգանունները, կոչումները, տիտղոսները...

Չէ՞, լավ ազատվեց չոբան Նիկալը, այդքանը սովորե՞լ կլիներ...

Հիմի ի՞նչ կա որ, ոչ ռոզգի, ոչ ֆելդֆեբել, ոչ... ոչ էլ խելք...

Միայն պառավ մայրն է սևակնած մրմնջում.

— Թախտդ փուլ գա, Նիկոլայ Թագավո՞ր... Թախտդ փուլ գա...

1957

ԲԻՆԳՅՈԼՈՒՄ

Երկար հասակով, քիչ կռացած, կկոցած սև աչքերի բարի հայացքով մի հին մանկավարժ էր Կարապետ Հովհաննիսյանը, որ անցյալներում իր կյանքի նպատակն էր դարձրել լու-

www.a-pdf.com

սավորություն տարածել սուլթանական լծի տակ հեծեծող հայկական գյուղերում։

Մանոթացանք հենց դպրոցի միջանցքում և ուղղակի սկսեց նրանից, ինչ, ըստ երևույթին, վաղուց ցանկանում էր ասել ինձ։

— Կարդում եմ ձեր գրածները, հիշում եմ ինձ հետ պատահած դեպքերն ու մտածում՝ իսկապես որ ամեն կենդանի էլ ծնողական սիրտ ունի։

Զրուցելով հասանք տուն և իր խաղաղ բնակարանում, գոլ վառարանի մոտ նա մի քանի դեպք պատմեց իր կյանքից։

Տարիներ անցան, մեռավ վաստակավոր ծերունին և նրա պատմությունները մնացին իմ հիշողության մեջ։ Սկսվել էր Հայրենական պատերազմը, գնացել էի ռազմաճակատ, ի՞նչ կենդանիների մասին գրելու ժամանակ էր։

Հիմա ուրիշ է, հիմա՝ թեկուզ երկու տասնամյակ է անցել, ես փորձում եմ վերականգնել հիշողությանս մեջ հին ուսուցչի պատմությունները և դրանք հասցնել իմ ընթերցողներին[1]։

Հանգիստ աճյունիդ, լուսավորության գործի անխոնջ մշակ։ Ներիր, որ ուշ եմ կատարում իրձդ։

ԱՐԾՎԱՔԱՐ

Այնպիսի տեղեկություններ էին գալիս Թուրքիայում տառապող մեր եղբայրների մասին, որ ո՛վ զգացմունք ուներ, ո՛վ ապրում էր ժողովրդի ցավով, չէր կարող հանգիստ նստել։

Էջմիածնի ճեմարանն ավարտելուց հետո մնաս բարի ասացի իմ ծննդավայրին, բարձրացա Հայկական Պար լեռնաշղթան, որն այն ժամանակ Ռուսաստանի և Թուրքիայի սահմանն էր, ու մի գիշեր սողացի-անցա սահմանապահների մոտից։

Ցերեկը անձավներում թաքնվելով, գիշերը զգուշությամբ առաջ շարժվելով, վերջապես քուրդ հովիվների հանդիպեցի, նրանցից իմացա մոտակա հայկական գյուղի տեղը և քայլերս ուղղեցի այն կողմ։

Խավարի մեջ խարխափող, բռնակալներից ահաբեկված գյուղակը սկզբում կասկածներով ընդունեց ինձ, բայց շաբաթ-

---

[1] Խոսքը սրան հաջորդող երեք պատմվածքների մասին է։

www.a-pdf.com

ներ անց՝ ես արդեն հյուր չէի, այլ սրտակից, հարազատ մարդ։

Մի խարխուլ մարագ դպրոց դարձրի և այդտեղ սկսվեց իմ մանկավարժական գործունեությունը։

Ձմեռն անցավ, Բինգյոլի լեռները ալ ու ալվան հագան և խաշնարածները սար քոչեցին։ Ես արձակեցի իմ «դպրոցը» և նույնպես գնացի յայլաղ՝ հանգստանալու։

Այդտեղ, վրաններից ոչ հեռու մի բլուր կար, որի հարավ նայող լանջին մի ժայռ էր ցցված, այնքան բարձր, որ նրա ծերպերում բույն էին դրել ու ձագեր հանել արծիվները։ Տեղացիներն այդ ժայռերը կոչում էին Արծվաքար։

Պատուհաս էր դարձել Արծվաքարը սարվորների համար. մեկ էլ տեսար նրա բարձր կատարից լայն թևերը շարժելով մի արծիվ պոկ եկավ ու սլացավ դեպի գառների հոտը։ Մինչև շները վրա կհասնեին, արծիվը ճանկում էր գառներից մեկին և օդ բարձրացնում։ Ավազակություն էր նրա արածը, բայց դե ինչ մեղադրես, ձագերը հո քաղցած չէի՞ն մնալու...

Մի օր էլ մի սարսափելի դեպք պատահեց, որ մոռանալ չեմ կարող... Սարվոր կանայք անկողինները դուրս էին բերել վրաններից և փռել ուրթի կանաչին, արևի տակ։ Երեխաները թավալվում էին փափուկ կանաչին, իսկ նորածին մի մանուկ բարուրի մեջ մեկնված էր արևից գոլացած վերմակի վրա։

Հանկարծ կանայք աղաղակ բարձրացրին.

— Տարա՛վ, տարա՛վ, երեխին տարա՛վ...

Մի ահագին գառնակեր իր մետրանոց թևերը ծանր-ծանր թափահարում էր օդում, իսկ նրա ոտներից կախված էր... բարուրը։

Երեխայի մայրը ճչալով վազում էր և օդում ճոճում ձեռքն ընկած փայտը, մյուսները քարեր էին նետում։ Իր բեռի ծանրությունից անգղ-արծիվն այնքան դանդաղ ու ցածր էր թռչում, որ սարսափահար մայրը արդեն հասել էր և իր աղեկտուր ճիչերով շփոթեցրել նրան։

— Հիմի վեր կգցի... տակը յորղան պահեցեք,— գոչեց մի հովիվ՝ թռչնի ստվերի հետ վազելով։ Կանայք վերցրին վերմակները և նրանց անկյուններից բռնած վազում էին թռչունի ոտքերի ուղղությամբ, այն հույսով, որ եթե գիշատիչը երեխային բաց թողնի՝ ընկնի վերմակի վրա։

Բայց արծիվը այդպես հեշտ կհրաժարվե՞ր իր ավարից... Կանանց աղմուկից, վրա հասած շների հաչոցից խրտ-

www.a-pdf.com

նած, նա հավաքեց վերջին ուժերը և ընթացքը թեքեց դեպի իր բույնը։

Այդպես թափորով նրան ուղեկցեցինք մինչև ժայռը, ուր և նա իջեցրեց իր ծանր բեռը։

— Կերա՞ն բալիս,— ճչաց դժբախտ մայրը և ընկավ ուշաթափ, իսկ մենք կրակ կտրած հասանք բարձունքը և թիկունքի կողմից սկսեցինք մագլցել ժայռը։ Ներքևից մի խումբ կանայք քարեր էին նետում դեպի վեր ու իրենց գոռում-գոչումով աշխատում էին խանգարել գիշատչի քստմնելի գործը, իսկ մենք հասել էինք ժայռի գագաթին ու մնացել մոլորված. բույնը ներքևում էր. ժայռի լանջին, սեպ-սեպ քարերի արանքում։ Նրանից ներքև անդունդ էր, վերև՝ ուղղահայաց պատ, ի՞նչ անեինք։ Քարերով հեռացրին արծվին, մինչև որ վրաններից պարան հասցրին մեզ։

Երեխան բնի մոտ ընկած ճչում էր. արծվի ճուտերը սկսել էին կտցահարել նրա դեմքը...

Պարանը փաթաթեցինք մի ջահել հովվի մեջքին, իսկ մյուս ծայրը քարից կապեցինք։ Ժողովուրդը շունչը պահած հետևում էր ժայռի ճակատից իջնող տղային, իսկ մայր արծիվը կռընչալով պտույտներ էր գործում մեր գլխավերևում։

Սկզբում նա կարծես անտարբեր էր մեր աղմուկին։ Է՛հ, որսը արդեն ձագերի մոտ է. ինչու պիտի անհանգստանար։ Բայց հենց որ տեսավ մարդ է իջնում դեպի իր բույնը, ծղրտոցով ցած խոյացավ։ Հովիվը հանեց դաշույնը և նրանով սկսեց պաշտպանվել։ Քանի նա մոտենում էր բնին, այնքան մեծանում էր մայր արծվի տագնապը։ Եվ նա մահու ու կենաց կռիվ սկսեց իր ձագերին փրկելու համար։ Պտտվում էր տղայի շուրջը, դաշույնից խուսափելով խփում էր նրան թիկունքից, ճչում աղեկտուր։ Իսկ երբ հասկացավ, որ համառ տղան որոշել է ինչ գնով էլ լինի հասնել բնին, կտուցով կախվեց պարանից, սկսեց ծամել, քրքրել։ Պարանը սղոցվածի նման պոկ եկավ և տղան գլորվեց ցած...

— Վա՜յ, վա՜յ,— ճչացին կանայք, բայց շուտով լսվեց տղայի հանգստացնող ձայնը։

— Ղալմաղալ միք անի, ինձ բան չի պատահել...

Դաշույնը ձեռքին, վնասված ոտքը քարշ տալով, նա մոտեցավ բարուրին, որ վերցնի, այդ պահին մայր արծիվը թափ առած նորից խոյացավ դեպի իր հակառակորդը։ Հասավ, ճան-

www.a-pdf.com

կեց տղայի ուսը, կատուցով հարվածեց նրա բաց գլխին և նրա-խողխող ու արյունլվա թևերը փռեց իր ձագերի վրա. մեռնելիս դարձյալ պաշտպանում էր իր փոքրիկներին...

Մենք քարացած նայում էինք։ Տղան ձեռք չտվեց ո՛չ մեռնող արծվին, ո՛չ նրա ձագերին։ Շուտ եկավ, երեխային վերցրեց ու ձայն տվեց.

— Կենդանի է, մի քթոց կախ արեք...

Այդպես փրկեցինք երեխային։ Միայն արծվի ձագերը կըտցահարել էին նրա դեմքն ու ձեռքերը, բայց աչքերն անվնաս էին մնացել։

Ժայռի գագաթը բարձրացավ ուշքի եկած մայրը, սրտապատառ գրկեց երեխային, արցունքներով ողողեց նրա վիրավոր դեմքը։

— Հը՛ կոտորե՞մ սրանց,— ներքևից ձայն տվեց Հովիվը, արյունոտ դաշույնը ձագերի կողմը մեկնելով։

— Կոտորի՛ր, կոտորի՛ր,— ձայն տվին գրգռված ամբոխի միջից։— Կոտորիր, որ չմեծանան էդ արնախումները։

Տղան բնի վրայից դեն նետեց մայր արծվի անշնչացած մարմինը և հենց դաշույնը վրա էր բերում սարսափած ձագերի վրա, երեխայի մայրը վերևից ճչաց.

— Ձե՛ռք չտաս... Ճուտերին ձեռք չտաս...

Ինչո՞ւ ահ կար այդ կնոջ աչքերում, չէ՞ որ իր երեխան արդեն փրկված էր։

Ով մայր էր՝ հասկացավ նրան ու ձայն տվեց.

— Ճուտերին սպանելը մեղք է, ձեռք չտաս...

Մեր սրտերին ևս հասավ մեծահոգի մոր ձայնը։ Եվ լուռ ու զգացված ցած կախեցինք պարանն ու վեր քաշեցինք Հովվին։

1955

ԱՆԼԵԶՈՒ ԵՂԲԱՅՐԸ

Բինգյոլի լեռներում երևի ես միակ գրագետ մարդն էի։ Իմ անունը տարածվել էր շրջակա քրդական ցեղերի մեջ, և բոլորն էլ ինձ պատվում էին «էֆենդի»[1] տիտղոսով։ Բոլոր կող-

[1] էֆենդի — (տաճկերեն) պարոն։

մերից գալիս էին մոտս, խորհուրդներ հարցնում, խնդրում, որ լուծեմ իրենց միջև եղած վեճերը կամ խնդիրը գրեմ թուրքական կառավարությանը։ Փեշքեշներ[1] էին բերում ինձ. ոչխար, մոթալ պանիր, տկով յուղ՝ չէի վերցնում, ինչի՞ս էր հարկավոր։ Դրանից իմ համբավն ավելի մեծացավ։

Մի օր քրդական ցեղերից մեկի ցեղապետն ինձ հյուր հրավիրեց. արոտների շուրջը վեճ ուներ հարևան ցեղի հետ, իմ խորհուրդը պիտի հարցներ։

Ձին հեծա և շուքով գնացի դեպի Բինգյոլի բարձունքները։

Սլ ու ալվան ծաղիկների մեջ, քչքչան ջրերի ափին խրփված էին քուրդ խաշնարածների թաղիքե կոները[2]։ Ինձ առաջնորդեցին դեպի մի փառահեղ ճերմակ վրան, որից դուրս եկավ զոլավոր լայն շալվարը հագին, մետաքսե շալը գոտու տեղ մեջքին փաթաթած, ապրշումե փուշիի[3] ծոպերը ճերմակ քոլգից մինչև ուսերը կախ մի գեղեցիկ տղամարդ։

Հին սիստեմի մի ատրճանակ խրած էր նրա գոտիկը, իսկ արծաթապատ թուրը կախված էր կողքից։

Առաջ եկավ, ձեռքը կրծքին դրեց, արևելյան ձևով խոնարհվեց և ներս հրավիրեց։

Կոնի ներսում, գետնին, ճերմակ թաղիքի վրա սուփրա էր փռած, իսկ վրան շարված էին սարվորների ստեղծած բարիքները՝ սեր, մածուն, ղայմախ, սաջի վրա նոր թխած հաց։ Շուտով թոնիրում խորոված մի ամբողջ ոչխար դրին սուփրի մեջտեղը և կավե ամաններով բողբաշ բաժանեցին մեզ։

— Կարապետ էֆենդի, կե՛ր,— սիրալիր ասում էր ցեղապետը, համեղ պատառներ առաջարկելով ինձ։

Երկար ճամփա էի կտրել և խիստ քաղցած էի, այնպես որ խնդրելու կարիք չկար։ Բայց հենց ձեռքս տարա ուտելիքին, մի քավթառ շուն ներս մտավ և կանգ առավ սուփրի ծայրին։ Նրա կողերը ներս էին ընկել, բուրդը թափվում էր, աչքերը ճպռոտ էին ու կարմրած։

Այդ այլանդակ արարածին տեսնելուն պես, ցեղապետի դեմքը շողաց այնպես, ինչպես դա լինում է այն դեպքում, երբ մարդուս այցի է գալիս ամենասիրելի բարեկամը։ Քուրդը մեղմ

---

1 Փեշքեշ — նվեր, ընծա։

2 Կոն — վրան։

3 Փուշի — մետաքսյա թափանցիկ քող։

ձայնով իր մոտ հրավիրեց շանը և իր բաժին կերակուրը դրեց նրա առաջ։

— Կե՛ր, զուրբան քեզ, կե՛ր,— խնդրում էր տերը։

Շունը ծույլ-ծույլ լափեց բողբաշը և շրթունքները լիզելով գնաց-պառկեց անկյունում։

Շատ տարօրինակ թվաց քրդի այդ արարքն ինձ։

— Երևի զզվեցիր, չէ՞, էֆենդի,— ժպտալով հարցրեց ցեղապետը։— Մի՛ զզվիր, նա իմ անլեզու եղբայրն է, ահա վեց տարի է, որ առանց նրա ես հացի չեմ նստում... Կե՛ր, մի զզվիր... Զզվիր նամարդ մարդուց... Շունը նեղ օրի ընկեր է, նրանից զզվելը մեղք է...

Ուտում էի դժկամությամբ։ Աչքիս պոչով նայում էի պառավ գամփռին և մտածում, թե ինչով է առանձնահատուկ հարգանքի արժանացել իր տերերի մոտ այդ տգեղ ու այլակերպ կենդանին։

Քուրդը հասկանում էր ինձ ու թավ բեղերի տակ ծիծաղում ինքն իրեն։

— Շունը քուրդ մարդու ախպերն է,— դանդաղ բացատրեց նա։— Իսկ սա ախպորից էլ վեր է։ Հիմի լսիր, թե ինչու եմ էդ շանը էղքան պատիվ տալիս։ Համ կեր, համ լսիր պատմությունս։

Եվ նա այսպես սկսեց.

— Մի ժամանակ էս սարերը, էս ուրթերը Զեյնալ բեկինն էին, իսկ ես շոբան էի նրա մոտ։ Բան չունեի աշխարքիս երեսին, ունեցածս մի սև յափնջի էր, մի կեռ շոմբախ ու մի անլեզու ախպեր՝ էս շունը, որ էն ժամանակ դաշաղին[1] ցած կբերեր ձիուց։ Արև եղանակին ուրախանում էր ինձ հետ, ամպին՝ տխրում, կարկուտի ու շողունի[2] ժամանակ հետս հոտը հավաքում-լցնում էր զաղաները[3]։ Իսկ երբ թալանի կամ կռիվ էինք գնում ուրիշ ցեղերի դեմ, իմ շունը իմ աջ թևն էր։

Զեյնալ բեկին մի կին ուներ, ոնց որ ջեննաթից[4] իջած մի փերի։ Դիարբեքիրից մեր սարերը յայլաղ եկող քրդերից էր փախցրել։

---

1 Դաշաղ — ավազակ։

2 Շողուն — կարկտախառն հորդ անձրև։

3 Զաղու — անձավ։

4 Ջեննաթ — դրախտ։

www.a-pdf.com

Էդ թաղան աղջկան բեկը պահում էր խաս ու ղումաշի մեջ, բայց կնոջ սիրտը չէր մերվում ամուսնուն։ Ու էդպես տրխուր-տրտում գերու նման ապրեց Զուլե խանումը Զեյնալ բեկի ապրշումե կոնում և սրտով մնաց նրան օտար ու թշնամի։

Մի ամառ էլ, երբ հարազատները նորից սար են գալիս, Զուլե խանումը գաղտնի մարդ է ուղարկում իր ավագ Ղեբոր՝ Ջալիլի մոտ։

— Իմ լաչակը քո ձեռքով ախպորս գլխին կդցես, քանի որ նա կնկա պես տանը նստեց ու չեկավ իր քրոջ վրեժն առնելու,— պատվիրում է Զուլե խանումը իր սուրհանդակին, և նրա հետ, որպես անպատվության նշան, ուղարկում է իր լաչակը։

Գիտեր, թե ինչ է նշանակում լաչակ ուղարկել քուրդ տղամարդուն և գիտեր, որ եղբայրը կգա՝ արյունով սրբելու իր ցեղին հասած անպատվությունը, ուստի սուրհանդակին ասում է, թե ո՛ր օրը և ի՛նչ ճամփով պետք է իր ամուսնու ցեղը քոչի դեպի աշնանային արոտները։

— Մեր ճամփին մի նեղ ձոր կա՝ Արջուտի ձորը։ Թե որ ախպորս գլխին քոլոզ[1] կա, թող գա էն ձորը կտրի...

Էդպես իր ամուսնու ցեղին մատնեց Զուլե խանումը։

Նրա եղբայրները իրենց մարդկանցով Արջուտի նեղ ձորում կտրեցին մեր քոչի առաջը և հենց առաջին գնդակով ձիուց վեր գցեցին Զեյնալ բեկին։ Կինը մտրակեց ձին ու փախավ-միացավ իր հարազատներին և նրանց հետ միասին այնտեղից սկսեց գնդակոծել մեզ։ Մենք կիրճի նեղ հատակին էինք, իսկ նրանք ձորի վերին պռունկներին, քարերի մեջ։

Մեծ կոտորած եղավ, շա՜տ մեծ։ Կոտորեցին մեր ամբողջ ցեղը, խլեցին մեր ունեցվածքն ու անթաղ դիակները ձորում թողնելով, հեռացան։

Զեյնալ բեկի ցեղից ոչ մի մարդ չազատվեց։

Ազատվածը միայն ես էի, որ գլխիցս վիրավոր, ընկած էի մի քարի տակ և զգում էի, որ մոտ է մահս։

Շուտով ջրի վշշոցը կտրվեց, ձայները լռեցին, աչքիս առաջ մութը պատեց ու էլ չեմ հիշում, թե ինչ եղավ։

Էդպես ուշագնաց շատ եմ մնում, թե քիչ, հանկարծ մի թաց բան դիպավ ճակատիս ու ես ուշքի եկա։ Իմ էս շունը լիզում է ճակատիս վերքը ու արյան առաջն առնում։ Ջուր

---

[1] Քոլոզ — թաղիքե քրդական գլխարկ։

www.a-pdf.com

ուզեցի՝ չհասկացավ, բայց երբ կախվեցի վզից, ինձ քարշ տվեց դեպի մոտիկ առուն։ Էնպես վառված սրտով խմեցի, ոնց որ շատ արյուն կորցրած մարդը կխմի։ Վերքս լվացի սառը ջրով՝ արյունը կտրվեց, շալ գոտիկովս փաթաթեցի գլուխս։ Շունս ուրախությունից պտտվում էր շուրջս, պոչով ավլում գետինը, երջանիկ վնգստում ու ձեռքերս լիզում։

Երբ մթնեց՝ շունս դիակների միջով ինձ առաջնորդեց դեպի ձորի բերանը, էնտեղից էլ չգիտեմ թե ուր։ Հույսս դրած նրա հավատարմությանը, առաջ էի գնում երերալով, նստելով-վերկենալով։ Իսկ սա պոչը մեջքին դրած գնում էր նեղ-նեղ կածաններով ու շուտ-շուտ ետ նայում, աչքերով հասկացնում, որ շտապեմ։ Ո՞ւր է տանում ինձ, ի՞նչ կա առաջս, թշնամի՞, թե՞ բարեկամ՝ ոչինչ չգիտեմ։

Շատ գնացինք, թե քիչ, շատն ու քիչը ալլահը գիտի, վերջապես մտանք մի մութ անտառ ու իջանք մի ձոր։ Էդտեղ ես նստած մնացի, իսկ շունս փորսող տալով առաջ գնաց, ժայռի պոնկից ներքև նայեց ու ետ եկավ էնպես գոռ-գոռ, էնպես դավադիր, որ մնացի տեղումս քարացած։ Տեսավ, որ տեղիցս չեմ շարժվում (երևի հենց էդ էր ուզածը), նորից փորսող առաջ գնաց ու կորավ ժայռի տակ։

Շունչս պահած սպասում էի, երբ խշրտոց լսվեց ու երկու աչք պսպղացին։ Ձեռքս տարա խանչալին, բայց հանելու կարիք չեղավ, շունս էր։ Հասկացրեց, որ հետևեմ իրեն։ Զգուշությամբ առաջ գնաց, ես էլ՝ հետևից։ Հասա ժայռի տակ ու շան հետևից մտա մի զաղա ու մնացի շեմքին քարացած. վառվող օջախի մոտ մեն-մենակ նստած էր Զուլե խանումը... Ինձ որ տեսավ, ճչաց ու վեր թռավ, բայց ես ժամանակ չտվի։

— Դավաճա՜ն, մատնի՜չ,— գոռացի ես ու դուրս հանեցի դաշույնս։

Կինը ետ-ետ գնաց ու մեջքը դեմ արավ պատին. վարդ թշերը դեղնել էին, լեզուն կապ էր ընկել։

Հենց ձեռքս բարձրացրի, որ խանչալս սիրտը խրեմ, զաղայի խորքից մի աժդահա քուրդ դուրս պրծավ, վիզս ոչխարի նման ոլորեց-դրեց տակն ու դանակը հանեց, որ մորթի ինձ։ Փորձ չարի դիմադրելու, ուժ չէր մնացել մեջս։ Պսպղուն դանակն եմ տեսնում կրակի լույսի տակ, մեկ էլ իմ դահճի ճերմակ ատամները սև դեմքի վրա... Աչքս խուփ արի ու լուռ սպասում եմ մահվան, մեկ էլ զգացի, որ վիզս սեղմող ձեռքը

Թուլացավ, ինձ ճնշող ծանրությունը ետ գնաց ու փուլեց գետնին։ Ոտքի կանգնեցի, տեսնեմ շունս ատամները խրել է հրակայի վիզն ու ինչքան ուժ ունի ետ է քաշում։ Էլ չթողեցի, որ թշնամիս ուշքի գա. խանչալս մինչև կոթը խրեցի սիրտը...

Էդ որ տեսավ Զուլե խանումը, դողդողալով ոտներս ընկավ, խնդրում է, որ կյանքը բաշխեմ իրեն։

— Ասա՛, ղանջը՛ղ[1] որտե՞ղ եմ ես, որտե՞ղ են ձերոնք...

Կապտած շրթունքները հազիվ շարժվելով պատմեց, որ մեր ցեղի ամբողջ հարստությունը տեղավորել են քարափի ղաղաներում, մեկին թիկնապահ են թողել իրեն, իսկ իրենք գնացել են մի ուրիշ ցեղի էլ թալանելու։

Էդ որ իմացա, խանչալս սրտին դեմ արի ու ֆշշացրի.

— Թե ուզում ես ապրել, ցույց տուր Զեյնալ բեկի ոսկիների տեղը։

Զեռքս բռնեց տարավ այրի խորքը։ Էնտեղից մենք մի ուրիշ այր մտանք։ Լուսավորեցի վառվող ճյուղով ու մնացի քարացած. ղանավուզ[2] շորե՞ր, խորասանի խալինե՞ր, արծաթապատ թամբե՞ր, տկերով յո՞ւղ, ի՞նչ ասես, որ չկար կուտակված։ Մի ուրիշ բաժանմունքում Զեյնալ բեկի ձիերն էին կապած, մյուս ղաղաներում նրա տավար-ոչխարն էր, իսկ մի թաքուն քնջում ես էնքան ոսկեղեն գտա, որ Զեյնալ բեկը դրա կեսն էլ չէր ունենա։ Ոսկեղենը լցրի մի խուրջինի մեջ, Զեյնալ բեկի սև ձիու սմբակները փաթաթեցի քեչայով, որ ռադը[3] չերևա ու ոտնաձայնը չլսվի։ Հետո ամենալավ խալիները, խաս շորերն ու զենքերը բարձեցի ձիուն, սիրունիկիս թոկով փաթաթեցի ձիու մեջքին ու սանձը բռնելով, դուրս եկա անձավից։ Շունս ամեն բան տեսավ, հասկացավ և ուրախ վնգստոցով առաջ ընկավ։

Ամբողջ գիշերը մենք ճամփա գնացինք, թե ո՞ւր, չգիտեմ. շունս էր մեզ տանում։ Տարավ մեր սարերը հասցրեց ու երբ արևը դուրս եկավ, ես իմ աղոթքն արի ու հրամայեցի դավաճան կնոջը.

— Զոքիր ու քո վերջին խոսքն ասա Շամս[4] աստծուն։

---

[1] Ղանջրդ — (տանկերեն) քած։ Անարգական ածական է։

[2] Ղանավուզ — հում ապրշումից՝ գազից գործված կտոր։

[3] Ռադ — հետք։

[4] Շամս — արև։

www.a-pdf.com

— Ինչո՞ւ վերջին խոսքը,— դողալով հարցրեց նա։

— Որովհետև հիմի պետք է պատասխան տաս քո մատնության համար և իմ շոբան ընկերների արյան համար...

Էդպես, Կարապետ էֆենդի, էս շունը ազատեց իմ կյանքը և հարստության տեր դարձրեց ինձ. բերածս ոսկով ես հաղար գլուխ ոչխար առա, հիսուն ձի, հովիվներ վարձեցի, էստեղից-էնտեղից քրդեր եկան, թրիս տակով անցկացան, միացան իմ խմբին, ու ես դարձա ցեղապետ։

Հիմի քեզ համար պա՞րզ է, էֆենդի, թե ինչու առանց սրա հացին չեմ նստում։

Շունն իր զառամյալ հայացքով նայում էր տիրոջը և ինձ համար նա այլևս ո՛չ տգեղ էր, ո՛չ այլանդակ...

1955

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ

Վատ մարդիկ լուր էին տվել գայմագամին[1], թե Ռուսաստանից մի վարժապետ եկել, գաղտնի դպրոց է բացել Բ. գյուղում ու բնակիչներին դրդռում է կառավարության դեմ։

Տանտերս, որ մի բարի մարդ էր, ուտելիք դրեց հետս ու գիշերը առաջնորդեց գյուղից դուրս։

— Գնա՛, վարժապե՛տ, քո գցած սերմը կծլի-բերք կտա մեր գյուղում,— ասաց նա ու ինձ ճամփու դրեց դեպի հայրենիք. տեղեկություն ուներ, որ մյուս օրը գայմագամը ոստիկաններ է ուղարկելու, որ ինձ ձերբակալեն։

Սարերով փախա-հասա սահմանին. ահա մի բլրի վրա երևում է կաղակների այն ուղեկալը, որի մոտով երկու տարի առաջ սողալով անցկացա...

Տեղը ծանոթ է ինձ. մթնի՝ նորից կանցնեմ։ Մտել եմ մի ժայռի փչակ, հաց եմ ուտում ու նայում դիմացիս ձորին, որի հատակով գոշգոշում է Բինգյոլից եկող գետակներից մեկը։

Արևածագից առաջ Բինգյոլի զմրուխտ լանջերին էի մնաք բարի ասել, իրիկունն էլ՝ գետին մնաս բարի կասեմ ու դրանով կվերջանա իմ առաքելությունը։ Մտածում եմ այդ մասին,

---

1 Գայմագամ — տաճկական գավառապետ։

www.a-pdf.com

սիրտս լցվում է, բայց և հայրենիքի կարոտը քաշում է ինձ. ահա դիմացս թագը գլխին Արագածը, իսկ նրա փեշերից դեպի հարավ ու արևելք փռվում է Արարատյան դաշտը՝ իմ հայրենիքը։ Արևն արդեն թեքվում է դեպի Հայկական Պարզ, հենց մթնեց՝ սահմանը կանցնեմ ու լուսադեմին կծեծեմ մեր դուռը...

Այսպես խոսում եմ ինքս ինձ հետ, մեկ էլ նկատեցի, որ ձորի մյուս լանջով մի արջ է բարձրանում՝ քոթոթները հետևից։ Կենդանին շտապում էր և շտապեցնում ձագերին, իսկ սրանք ետ էին ընկնում մորից, խաղում իրար հետ, գզվրտվում։ Մայրը ջղայնանում էր, բաժանում քոթոթներին իրարից, ապտակներ հասցնում նրանց ու վերցնում շպրտում էր դեպի վեր, ստիպում, որ շտապեն-հեռանան ներքևի ժայռերից։

Ի՞նչ կա այնտեղ, ումից է այդպես տագնապահար փախչում այդ ահագին գազանը։ Այդ մտքին էի, երբ ժայռից դուրս եկավ գայլերի մի խումբ ու սկսեց հետապնդել փախստական արջին։ Է՛հ, ինչ կա որ, թող հետապնդեն, գայլն ինչ կարող է անել արջին։ Հա՞, քոթոթները՞... ահա ո՛ւմ համար է անհանգիստ, ահա ինչու է փախչում այն կենդանիներից, որոնց նա երբեք էլ բանի տեղ չի դրել։ Սպասենք, տեսնենք ինչ կլինի...

Ձագերի ոտքով ի՞նչ ճամփա պիտի գնար որ... Մինչև նա հարայ-հրոցով իր քոթոթներին էր քշում դեպի վեր, գայլերը թեթև առաջ սլացան և հասնելով արջին՝ շրջապատեցին նրան։ Մայր արջը գոռաց ահից ու զայրույթից, իր ահագին թաթերով դես-դեն շպրտեց իր ճամփան փակողներին և ձագերին առաջն արած՝ դուրս եկավ օղակից։ Բայց նենգ գազանները, ինչպես երևում էր, որոշել էին խլել նրանից ձագերին, ուստի շարունակեցին հետապնդումը։ Մի քանիսը հարձակվում էին մոր վրա, նրան զբաղեցնում, իսկ մյուսները վրա էին տալիս, որ քոթոթներին փախցնեն։ Սրանք էլ ճվճվոցով պատսպարվում էին մոր փորի տակ ու երբ նա ճամփա բացելով առաջ էր գընում, վազում էին հետևից։

Աշուն էր, բլրից դենը ծառերը դեղնին էին տալիս. անտառը մոտ է, և արջը շտապում էր իր ձագերին հասցնել այնտեղ։ Հասան անտառ՝ ծառ կբարձրանան ու կփրկվեն. այդ հաշվով էր շտապում արջը։ Բայց գայլերը ևս փորձ ունեին. նրանք հասկանում էին, որ իրենց որսին կարող են տիրանալ, քանի դեռ բաց լանջին են։ Եվ գազաններն այնպես վրա տվին

www.a-pdf.com

իրենց զոհերին, այնպես նեղեցին ու հուսահատեցրին, որ խեղճ մայրը ստիպված ձագերից մեկին վերցրեց ու իր ձեռքով նետեց գայլերի բերանը... Ի՞նչ աներ, մեկին պիտի զոհեր՝ երկուսին փրկելու համար, այլապես զրկվում էր բոլորից էլ։ Արավ այդ զոհողությունը, և նրա հաշիվը ճիշտ էր. գայլերը հավաքվեցին իրենց զոհի շուրջը և մի քանի րոպե ազատ թողեցին արջին։ Սա էլ, մրմունջը սրտում, առաջն արավ կենդանի մնացած քոթոթներին և հևիհև շտապեց դեպի փրկարար ծառերը...

Դժբախտաբար, երկար չտևեց գայլերի ճաշը, և նրանք զրգռված ախորժակով նորից հասան փախստականների հետևից։

Ի՞նչ սրտամորմոք տեսարան էր...

Կռվում էր հուսահատ մայրը, գոռում սրտի ցավից, օգնություն աղերսում, բայց ոչ մի տեղից օգնություն չկար։ Ես կարող էի հարայ-հրոց բարձրացնել ու փախցնել գայլերին, բայց ո՞նց ձայն հանեի սահմանում, չէ՞ որ մի փախստական էլ ես էի... Եվ իմ խոռոչում թաքնված, ես սրտի կսկիծով նայում էի, թե ինչպես դժբախտ մայրը շարունակում է իր հուսահատ կռիվը գիշակեր ոհմակի դեմ...

Ահա, վերջապես, հևիհև հասավ բլրի գագաթը, բայց անօգուտ, քոթոթներից մեկին փախցրին, իսկ անտառի պոնկի մոտ վրա տվին, շփոթեցրին ու տարան երրորդ ձագին ևս...

Դժբախտ մայրն այլևս անտառ չմտավ. ո՞ւմ համար մտներ, ո՞ւմն ազատեր, սիրասուն ձագերն այլևս չկային։

Նստեց ծառի տակ, գլուխը կախ, վշտահար ու երկար ժամանակ այդպես անշարժ մնաց։ Իսկ գայլերը իրենց ոճիրը գործելուց հետո՝ ծույլ-ծույլ նորից ձորն իջան և գորշ կույտ կազմեցին ժայռի տակ. կուշտ ուտելուց հետո թմրել-մրափում էին արևի վերջին շողերի մեջ։

Ա՜խ, մի հրացան լիներ ձեռքիս, և ես էլ կրակելու իրավունք ունենայի՞...

Այդ մտքին էի, երբ տեսա, որ աբջը սուսուփուս իջնում է լանջով։ Եկավ անձայն, գողեգող, ժայռի գլխից ցած նայեց, նկատեց իր թշնամիներին ու փորսող տալով ետ-ետ գնաց։ Թաթերն ա՜յս քարին է գցում, ա՜յն քարին է գցում՝ ի՞նչ կա մրտքում՝ չեմ հասկանում։ Ահա մի ժայռի բեկոր պոկեց, գրկեց, երկու ոտքով լնգլնգալեն առաջ եկավ, ժայռի կտուրից կռա-

ցավ ցած նայեց ու գրկի քարը թափով նետեց մրափող գա-
զանների կույտի վրա...

Ով կենդանի մնաց այդ անակնկալ հարվածից, վեր թռավ ու սարսափահար փախավ, իսկ երկուսը ջախջախված թպըրտում էին ժայռի տակ։

Արջը կռացավ ցած նայեց, խո՞ւլ բվվացրեց ու շուռ եկավ գնաց դեպի անտառ։

Այրվող սիրտը հովացա՞վ արդյոք...

1955

ՄԵՐ ՀԻՆ ՏԱՆՁՈՒՏՈՒՄ

1

Ինչքա՞ն եղջերու կար մեր սարերո՞ւմ...

Այժմ էլ մանկությանս հեռավոր ձայների միջից լսում եմ եղջերուի խանդոտ բառաչը մեր ձմեռանոցի վերին անտառից։

Աշնանամուտի խաղաղ ու մեղմ գիշերները մենք քնում էինք մեր խրճիթների տափակ կտուրներին, և քնի մեջ լսում էինք դեղնող անտառներում մինչև լույս թափառող եղջերուների գոռոցը։

Ո՞ւմ էին կանչում, ինչո՞ւ էին գոռում այդ կենդանիները...

— Կմեծանաք՝ կհասկանաք,— բեղի տակ խորհրդավոր ժպտալով՝ ասում էր որսորդ Մուկուչը։— Դեռ ձեր մոգի ժամանակն է, ամեն բան ձեզ ասվիլ չի...

Ինչո՞ւ են գոռում, ինչո՞ւ են կռվում եղջերուները...

Մենք, հանդում անասուններն արածեցնելիս, երբեմն նրանց պատահում էինք ճյուղավոր եղջյուրներով իրար հարվածելիս։ Միշտ արուներն էին իրար հետ կռվում, իսկ մայր եղջերուները հեռվում կանգնած՝ երկյուղով նայում էին նրանց. սպասում էին կռվի վախճանին...

Իզուր է խորամանկություն անում Մուկուչ պապը, մենք արդեն վաղ մանկությունից գիտենք, թե ինչու մեր ցուլերը միշտ ատում են իրար...

Մեր հանդի եղջերուներից մեկը պետք է որ շատ խոշոր լիներ. նրա խուլտոտ ու հզոր ձայնը բոլորն էին ճանաչում։ Մենք

www.a-pdf.com

Ներան չէինք տեսել, բայց գիշերները անտառի ձայների մեջ այդ մեկի ձայնը զանազանվում էր իր ուժգնությամբ։ Երբ նա գոռում էր, մեր անտառոտ ձորը, ուր ձմեռանոցն էր տեղավորված, դղրդղրում էր և թվում էր, թե այդ ձայնից դեղնած տերևներ են թափվում մեր տան առաջի տանձենուց։

Երբ լսվում էր այդ խանդոտ գոռոցը, բոլոր մյուս ձայները լռում էին անտառում, և մենք դրանից եզրակացնում էինք, որ այդ ցուլը տիրակալն է մեր դարավոր անտառի։

— Ա՜խ, թե լուսին կլինի՜,— վառված ասում էր որսորդ Մուկուչը՝ ականջը անտառից եկող ծանոթ ձայնին։

Լուսինն էլ կլորացավ, բայց այն եղջերուի «բախտից» սկսվեց աշնան ամպամած գիշերների շրջանը. օր ու գիշեր բարակ անձրև էր մաղում ձմեռանոցի վրա ծառերի կատարներին քսվող ամպերից։

Մեր անտառի տիրակալն այդ աշնանը ևս ազատվեց որսկան Մուկուչի գնդակից։

— Պոզեր ունի, է՜, պոզեր, որ մենակ թագավորի պալատի ճակատին է լայեզ,— ասում էր ծեր որսորդը։

— Աչքովդ տեսե՞լ ես, պապի՜,— հարցնում էինք մենք։

— Փիե՜,— թավ հոնքերը վեր քաշելով զարմանում էր ծեր որսորդը։— Բա հենց օդի միջից եմ խոսո՞ւմ։ Ոնց որ դուք եք ճանաչում ձեր անասուններին, էնպես էլ ես եմ ճանաչում հանդի գազաններին։ Բա՜, հլա ձեր հերը ձեր չափ երեխա էր, որ ես պախրաներին արածացնում էի հորթերի պես,— անմեղ պարծենկոտությամբ ասում էր ու հաղթական նայում մեզ՝ ձմեռանոցի ամենափոքր տավարածներիս։

Այն ժամանակ այդ միջահասակ մարդու հասակը բարձրանում էր մեր աչքում։

— Բա որ տեսել ես, ինչո՞ւ չես սպանել։

Նա միանգամից չպատասխանեց։

— Ի՞նչ ասեմ, թե որ ասեմ, կրակել եմ՝ չի դիպել, շեք հավատա։ Բայց հաստատ կրակել եմ։ Որ բան է՝ պատահեք, նայեցեք ուսին՝ իմ արած նշանը կտեսնեք. գնդակիս խփած տեղը սպիտակ մազ է դուրս եկել, մի սպիտակ խալ՝ մի շահանոցի[1] չափ...

— Կաշվի՞ն է դիպել... Համա որսկան ես, հա՜,— ծաղրեց Աթոն՝ մեր ձմեռանոցի ամենահաբուստ մարդը։

---

[1] Շահանոց — հինգ կոպեկանոց։

www.a-pdf.com

Խոտի դեզի տակ նստոտած տավարածները դժկամությամբ ոտքի ելան, նրանց հետ էլ Աթոյի տավարած Սիմոնը։

— Ադա՛, գնա գործիդ, ի՞նչ ես վեր ընկել դատարկ փչոցներ լսում,— գոռաց Աթոն։ Սիմոնը գլխահակ գնաց, իսկ ծեր որսկանը բերանի անկյուններում հեգնական ժպիտ խաղացնելով հարցրեց.

— Աթո՛, սրանք ջահել են՝ չգիտեն, դու հո՞ աչքովդ ես տեսել, թե ոնց է կրակում որսկան Մուկուչը։ Մի՞տդ է, որ սարը գնալիս ձիու վրից «բերդանս» մեկնեցի՝ Աճարկուտում փախչող գելերից մեկին վեր գցեցի։ Գուցե քո միտը չի, բայց ես լավ եմ հիշում, որ զարմանքից բերանդ բաց էր մնացել։

— Էն անց կացավ ջահելությանդ հետ, դու հիմի՛ ասա,— շարախնդությամբ պատասխանեց Աթոն։— Դու էն ասա, հիմի ո՞նց ես կրակել, որ էն ահագին ցուլի կաշին ես քերել...

Մուկուչ պապի վզի երակներն ուռան, ճակատը կարմրեց, շարության կրակ երևաց արծվենի աչքերում։

— Կաշին եմ քերե՞լ... նրա տեղը որ մի կաքավ էլ կանգնած լիներ՝ կխփեի, բայց նրան չդիպավ... Աչքերս շաղվեցին, ձեռքս դողաց... Ասենք, ո՞ւմ եմ ասում, դու սիրտ ունե՞ս, որ ինձ հասկանաս...

Ասաց ու դանդաղ քայլեց դեպի իր խրճիթը՝ տարիների ծանրության տակ կորացած։

— Զարմացրիր քո սրտովն, էլի՛,— նրա հետևից փնթփնթաց Աթոն և բութ մատը արծաթե գոտու տակ խրելով, գնաց դեպի իր գոմերը։

Այնպես էլ մենք չիմացանք, թե որսկան Մուկուչն ինչու է վրիպել ցուլի վրա կրակելիս։ Դա մեզ համար հանելուկ մնաց մանավանդ այն օրից, երբ իմացանք, որ կրակել է շատ մոտիկից, ցուլի հանդարտ կանգնած ժամանակ։

— Մեկ է, ասեմ էլ՝ չեք հասկանա։ Պետք է աչքներովդ տեսնեք, որ հասկանաք,— խուսափողական պատասխան տվեց նա։

— Որտե՞ղ տեսնենք, պապի՛, որտե՞ղ գտնենք նրան։

— Որտե՞ղ։ Տանձուտում։ Իրիկնադեմին գալիս է տանձի ծառերի տակ թափված պտուղն ուտելու։ Ցուրտն ընկնում է, պախրաները շուտով քոչելու են, թե ուզում եք տեսնել, հիմի պիտի տեսնեք։

Դե՛, գնանք Տանձուտ, գուցե պատահենք այն կենդանուն,

www.a-pdf.com

որի ձայնը օրորոցից սկսած մենք լսել էինք ամեն աշնանամուտ։

Տանձուտը հին գյուղատեղ է, ուր տեղ-տեղ քանդված բակեր կան, ավերված խրճիթների մնացորդներ, որոնք կորել են թփերի ու մացառների մեջ։ Մի կիսավեր մատուռ կա այդտեղ՝ մոմից սևացած խաչքարով, իսկ նրա շուրջը թափթփված են խաս քարից տաշած խաչեր։

Այդ գյուղատեղի առաջ մի ընդարձակ հարթություն ծածկված է պտղատու հսկա ծառերով։ Տանձենիներ կան, որոնց գլխով դարեր են անցել, կան պառաված, մամռակալած խնձորենիներ, ճյուղերն իրար խճճած սալորենիներ և այդ բոլորը ծանրաբեռնված գույնզգույն մրգերով։ Այդ գյուղի երբեմնի բնակիչների այգիները չե՞ն եղել արդյոք սրանք, որ դարերի ընթացքում անմշակ մնալով վայրենացել են...

Թփերի մեջ թաքնված, շունչներս պահած սպասում ենք։

Շատ օրեր այդպես դարան մտանք, եղնիկներ տեսանք տանձ ուտելիս, տեսանք մի արջ իր քոթոթներով, որ ծառն էր բարձրացել և տանձ էր թափ տալիս, իսկ քոթոթները ներքևում իրարից խլխլում էին պտուղները։ Բոլորն էլ օգտվում էին այդ վայրի այգուց՝ սկյուռները, փորսուղները, թռչունները, ընտանի կենդանիները։ Մի օր նույնիսկ մի աղվես տեսանք գողեգող տանձ հավաքելիս։

Բայց այն կենդանին, որին տեսնելու էինք եկել՝ չկար ու չկար։

Երբ հուսահատվելու վրա էինք, անսպասելի երևաց նա։ Անտառի խորքից եկավ շոր ճյուղերը իր ծանրության տակ ջարդելով, հասավ մեծ տանձենուն, կնճռոտ վիզը քսեց ծառի բնին։ Ապա մլակներից նեղվելով՝ շուռ եկավ ու մտավ մացառների մեջ, ջարդեց-անցավ թփերը և նրանց մեջ իրեն անհանգստացնող միջատներին թողնելով՝ դուրս եկավ մի այլ ծառի տակ, նրա ստվերում սկսեց պտուղ հավաքել։

Ահա ինչու են եղջերուները ամբողջ ամառը անտառում ապրում. թփերը նրանց փրկում են բոռերից։

Ես, Սիմոնն ու Ակոբը, երեք անբաժան ընկերներ, թփերի արանքներով գաղտագողի դիտում էինք կենդանուն։ Արևը մայր էր մտնում, Տանձուտի նոսր մասերում խաղում էին նրա վերջին շողերը և դրանից էր, որ ստվերներում աղջամուղջ էր։ Եվ այդ աղջամուղջի մեջ ճյուղավորված ահագին եղջյուրները իրենց սուր ծայրերով խոնարհվում էին գետնին և թափով վեր բարձրանում։

www.apdf.com

Այդպես տանձ խժռելով առաջ եկավ, ելավ ամբիոնից և բարձրացավ արևի շողերի մեջ։ Կարծես արքայական ծիրանի հագցրին մեր անտառի տիրակալին։ Կանգնած է ահա նա բացատի կենտրոնում, գլուխը վեհորեն բարձր պահած, ամբողջովին ողողված մայր մտնող արևի նարնջագույն շողերով...

Մեր հոտն առել էր, զգում էր մեր ներկայությունը։

Կիսածամել կանաչի փունջը բերանի մի անկյունից կախ, բազմաճյուղ հսկա եղջյուրները սպառնագին առաջ մեկնած, մկանները պրկված՝ հոտոտում էր նա օդը և վայրենի կրակ էինք տեսնում նրա աչքերում։

Ի՞նչ գեղեցիկ էր այդ հսկան, ի՞նչ վսեմ էր կանգնած նա մեր հինավուրց Տանձուտի կենտրոնում, կիսավեր մատուռի առաջ...

Նրա ողորկ ու շիկակարմիր մորթը վզի մոտ ծալծլվում էր և ուսին պարզ երևում էր «բերդանի» արճճե գնդակի տեղը՝ կարճ բուսած մի փունջ ճերմակ մազ, հինգ կոպեկանոցի չափ մի ճերմակ խալ։ Այլևս կասկած չկա, նա է, նա՛, որի ձայնը մանկուց վեր լսում ենք մենք։

Նայեցինք մենք մեր բնության այդ հոյակապ կերտվածքին և միանգամից մեզ համար պարզ դարձավ, թե ինչու է վրիպել անվանի որսորդը նրա վրա կրակելիս։

Սպանե՞լ։ Ի՞նչ ձեռք պիտի լինի, որ բարձրանա այս չքնաղ արարածի վրա...

Նայեց մեր թաքստոցի կողմը, ոտքով դուփեց գետինը։ Ապա իր հսկայական եղջյուրները ծալեց-հպեց թիկունքին և այդպես դունչը վեր ցցած՝ գեղեցիկ թռիչքներով կտրեց-անցավ բացատն իր երկարությամբ՝ արեգակի ոսկեհուռ ծիրանին վրան...

Մենք լուռ վերադարձանք ձմեռանոց։

— Հո տեսա՞ք իմ մարալին, հո տեսա՞ք ինչ ապրանք է,— վառվող բուխարու առաջ ճերմակ մորուսը շփելով ասում էր Մուկուչ պապը։

— Տեսանք, ուսի նշանն էլ տեսանք... Պապի՛, նրա պոզերն ո՞ւմ ես խոստացել,— հարցրեց Ակոբը։

— Կնյազ Ճավճավաձեին...

— Հա՛... էդ պոզերը իսկական կնյազի տան ճակատի հարմար բաներ են,— համաձայնեց Ակոբը։

Ծերունին բեղի տակ քմծիծաղ տվեց։

— Իմ տան ճակատին ավելի հարմար են, բայց դե... Ստիպ-

www.a-pdf.com

ված եմ խոսք տվել, նեղը լծեցին՝ խոսք քաշեցին բերանիցս, թե չէ հարամ մարդի ես նվեր կտամ։

Եվ Մուկուչ պապը պատմեց, թե ինչ պայմաններում է կնյազին խոստացել Դիլիջանի շրջակայքում համբավ հանած եղջերուի գլուխը։

— Հո գիտեք, որ էս դիմացի անտառները կնյազինն են,— սկսեց նա։— Մի անգամ անտառում ձիով ման գալիս պատահեց ինձ, հակառակի պես հրացանը ձեռիս էր։ Հրացանս խլել տվեց։ Ասում է՝ անտառն իմն է, նրա մեջի կխտարն էլ է իմը, պախրեն էլ, դու ի՞նչ իրավունք ունես իմ անտառում որս անես։ Մի ոչխար փեշքեշ տարա անտառապետին, կակղեց, ասաց՝ իմ կողմից համաձայն եմ, հրացանդ ետ կտամ, դու կնյազի համաձայնությունը բեր։ Մի ոչխար էլ կնյազի համար տարա։ Մորթել տվեց, քեֆ արավ Թիֆլիզից եկած հյուրերի հետ ու քեֆի տաք ժամանակ ասաց. մեծ մարալի պոզերը էս իշխանուհու տան ճակատին պիտի խփել տամ, կբերե՛ս, հրացանդ կտանես։ Իշխանուհի ասածդ էլ մի տեսիլք կնիկ էր, սիրո՛ւն, շարմա՛ղ, ոչ ուտես, ոչ խմես, մտիկ անես։ Դա էլ էր Թիֆլիզից կնյազին հյուր եկել։ Պոզերի մասին որ լսեց, հարցրեց, թե ի՞նչ մարալ է դա և որտե՞ղ է։ Կնյազը ձեր տեսած մարալին էնպես նկարագրեց, որ էդ կնիկը կպավ ինձ, ասում է՝ որ բերիր ես էլ իմ կողմից եմ նվեր տալու։ Էդ սիրուն-մարալ կնիկը որ էդ խոսքն ինձ ասաց ու վրես էն սիրուն աչքերովը քաղցր մտիկ արավ, երեխեք ջան, ձեզանից ինչ պահեմ, արինս եռաց, մտքումս ասացի՝ հե՛յ գիտի ջահելություն, հա՛, ո՞ր սարի հետև մնացիր...

Մուկուչ պապը, որ մինչ այդ ուրախ կիսակատակով էր խոսում, հոգոց հանեց, ստվեր անցավ նրա դեմքով։ Թավ հոնքերը կախած՝ ծխամորճն էր լցնում։

— Հա՛, երեխեք ջան, էդ հուրի-փերի իշխանուհին, որ էդպես ասաց, ես փափախս վեր կալա ու խնդրեցի դրան, որ միջնորդի հրացանս ետ տան։ Ասի, խանո՛ւմ, թող հրացանս տան՝ էդ մարալի պոզերն էլ բերեմ, մորթեն էլ, որ սիրուն ոտներիդ տակ փռես։ Ծիծաղեց՝ ատամները ոնց որ մարգարիտներ լինեին... Հետո խեթ-խեթ նայեց կնյազին, թե՝ մարգուն զինաթափ եք արել ու հետո էլ ուզում եք պախրա՞ սպանի, ինչո՞վ սպանի խեղճ մարդը։ Էդ որ ասաց, ոնց որ սրտիս միջից ջուր խմեն։ Չէ՞, էդպիսի կնկա համար պախրա չէ, որ հոգի էլ ուզի՝ չի կարելի խնայել,— մտածեցի ես, հրացանս ետ ստացա և սար ու ձոր

www.a-pdf.com

ոտի տակ տալով՝ վերջապես մեր Ցանձուտում գտա նրա ուղած մարալին։ Գտա, նայեցի՝ սիրտս մղկտաց. անմե՞ղ, իրեն համար տերևներ էր պոկում մի թփից ու իսկի տեղեկություն էլ չուներ, որ նամարդ մարդիկ իրեն գլուխը ծախել են... Հետո հիշեցի իշխանուհուն տված խոսքս, հիշեցի ու նշան բռնեցի։ Որ նշան՝ բռնեցի, դա դունչը մեկնեց դեպի ինձ, օդը հոտոտեց ու էդ բոպեին դրա սիրուն տեսքի առաջ ես քարացա, ձեռքս դողաց ու գնդակս ուսը քերծելով գնաց...

Հմի հասկացա՞ք, երեխեք ջան, թե ինչի երկնքից թևավոր վեր բերող որսկան Մուկուչի գնդակը էն ահագին կենդանուն չի կպել։

Գիտեմ, որ հասկացաք, դեռ սիրտներդ չի կոպտացել։ Բայց դե Աթոն... Դե նրան ես ինչ պատմեմ, խիղճը մեռած մարդ է, նա ո՞նց հասկանա ինձ...

2

Աշնան մեղմ ու խաղաղ գիշեր էր։ Լիալուսինն իր սառը շողերով այնպես էր ողողել սար ու ձոր, որ երբ կորած մոզին փնտրելիս հասանք Ցանձուտ, ծառերի տակ թափված պտուղները հեռվից դեղնին էին տալիս աշնան կարճ կանաչի մեջ։ Տանձ հավաքեցինք, նստեցինք մի ծառի տակ և սկսեցինք դանդաղ ուտել. քաղցած էինք և շատ էլ հոգնած։

— Ի՞նչ քարվան կտրելու գիշեր է՞,— լուսնին նայելով կատակեց Սիմոնը։

— Մենք որ քարվան կտրելու տեղ Աթոյի կորած մոզին գտնենք՝ ավելի լավ կլինի։ Հիմի ուշունց է տալիս, հա՞...

— Է՛հ, սովորել եմ, թող ուշունց տա,— անտարբեր պատասխանեց Սիմոնն ու հանկարծ ականջները սրելով ձեռքը դրեց շրթունքներին։

Անտառում խշրտոց լսվեց և մի խումբ կենդանիներ իրար հրմշտելով մտան Ցանձուտի բացատը, ուր մի կալի չափ տեղ լերկ էր և ցերեկվա նման լուսավորված։ Շունչներս պահեցինք։

Մի ցուլ իր հսկա եղջյուրներով սրան-նրան հարվածեցվանդեց ասպարեզից, բայց փորի տակը չալ մի արջառ որոշել էր կռվել հզոր հակառակորդի դեմ՝ քանի շունչ կա բերանում։ Ճակատ առ ճակատ մենամարտել չկարողանալով՝ ջահել ցուլը թեթև ոստնում էր ետ-ետ, ճարպկությամբ խուսափում էր հարվածից և

www.a-pdf.com

կայծակի արագությամբ հարվածում էր հսկային կողքից, հետևից։ Մինչ հսկան շուռ էր գալիս, որ սասսի հանդուգն ջահելին, սա թռիչք էր գործում, և մենք մի պահ օդում տեսնում էինք նրա պրկված, աղեղնաձև մարմինը ու գետնից կտրված ոտքերը։

Ծեր հսկան փրփրել էր։ Բացատի կանաչը ոտքի տակ սևացնելով, նա դես-դեն էր վազում փնչոցով, փրփուր էր թափում բերանից։ Մենք սարսռում էինք նրա հևքից, իսկ մյուսը այնպես թեթև էր ցատկոտում, այնպես անհոգ շարաճճիությամբ էր ոստնում և այնպես շեշտակի էր հարվածում, կարծես ոչ թե օրհասական գոտեմարտի, այլ խաղի մեջ էր։

Հաղթված եղջերուները ծառերի ստվերում աղջամուղջի մեջ կանգնած՝ դիտում էին մենամարտը, իսկ ավելի խորքում հավանաբար այն արարածներն էին, որոնց համար արյունահեղ կռիվ էր տեղի ունենում մեր Տանձուտում...

Վերջապես ծեր հսկան մոլուցքով բռնված չոքեց, եղջյուրները գցեց իր հակառակորդի փորի տակ, ուռեցրեց հաղթ վիզը և վեր շպրտեց նրան։ Օդում խառնիխուռն ոտքեր երևացին, մի բան հեռվում փափուկ թրմփաց ու փախավ անտառի խորքը։

Այն ժամանակ բացատի կենտրոնում իր հաղթ հասակով մեկ կանգնեց մեզ ծանոթ ցուլը, ձգվեց, գլուխը վեր բարձրացրեց, հպարտ նայեց շրջակայքին և հզոր գոռոցով աշխարհին ազդարարեց իր հաղթությունը։ Անտառը թնդաց նրա ձայնից, և այդ ձայնի մեջ սպառնալիք ու մարտակոչ կար՝ ուղղված մեր հանդերի բոլոր արու եղջերուներին։

Նրա ողորկ մարմինը մեղմ փողփողում էր լուսնի կաթնագույն լույսով և գիշերվա այդ պահին իր ստվերի հետ նա աժդահա էր ու աննման՝ բնության այդ անձեռագործ կերտվածքը...

Դե ո՞նց խելքամաղ չլիներ այսպիսի չքնաղ արարածի տեսքից բնության սիրահար որսկան Մուկուչը...

Երբ ձմեռանոց վերադարձանք, պատմեցինք մեր տեսածը Մուկուչ պապին։ Աշխուժացավ, հանգչող աչքերում կրակներ վառվեցին։

— Ասում եք՝ կռիվը աչքներովդ տեսաք, էլի՞։ Երանի՞ ձեզ, երանի ձեզ,— վառված հետաքրքրությամբ հարցնում էր ծեր որսորդը։— Ուրեմն կողքը չալ բուղեն էդպես ռիսկո՞վ էր... Հե՞յ գիտի ջահելություն, հա՞, մարդիս ռիսկ տվողը ջահելությունն է... Բայց, երեխեք ջան, էդ էլ ասեմ ձեզ, որ եկող տարի, կամ մյուս տարի վերջ ի վերջո էն ջահել բուղեն հաղթելու է իմ մա-

www.a-pdf.com

բալին, պոզահարելու է դենը քշի ու նախրի տերը ինքն է դառնալու...

Դառնությամբ ասաց այս խոսքերը Մուկուչ պապը, մտախոհ շարունակեց տրեխ գործել բուխարու կրակի լույսով ու վերջն ավելացրեց.

— Էդպես է աշխարքի բանը. նամարդ ծերությունը վրա է հասնում, աչքերիդ լիսն էլ է տանում, կռներիդ ուժն էլ, սրտիդ թափն էլ, քաջությունդ էլ... Իմ մարալը շատ է ծեր, շա՜տ... Դուք դեռ օրորոցում էիք, որ նրա պոզերի համբավը Թիֆլիս էր հասել... Վաղուց է, հա՜, որ ես կնյազին խոսք եմ տվել ու խոսքս դեռ չեմ կատարել. սպասել եմ մարալս պառավի, շարքից դուրս գա, որ նոր պոզերը վերցնեմ գլխից... Էդ բանը գիտի կնյազը, սուս է արել, սպասում է... Դե չսպասի՜ ի՞նչ անի, էն սիրուն իշխանուհին էլ է հիմի պառավել, նրան տված խոսքն էլ... Պառավել են, ես էլ եմ պառավել... Բայց նա դեռ ուժ էլ ունի, գեղեցկություն էլ։

Բայց դե, ջահել արջառն էլ է համարձակվում նրա հետ կռվի բռնվել՝ դա լավ նշան չի... Ուրեմն իմ մարալն էլ է պառավել ու էդ բանը ջահելներն էլ են հասկանում...

3

Մեր անտառի տիրակալին մեկ էլ տեսա երկու տարի հետո, ուշ աշնան մի քամոտ օր։ Սարերում հնձած խոտը բոլորը կրել էինք ձմեռանոց, բայց մեր խոտի կիտուկներից մի քանիսը դեռ սարում էր մնացել։ Մեր ունեցածը մի զույգ նիհար եզ էր, դե դրանով և՛ կալ կալսիր, և՛ աշնան հերկն արա, և՛ սարերից, քարքարոտ ճանապարհներով խոտ կրիր։ Հաճախ մեր խոտի մի մասը սարում ձյան տակ մնում էր մինչև գարուն։ Լավ էր, այդ տարի սարերում դեռ ձյուն չէր եկել, երբ ես ու հայրս մեր նիհար եզները սայլին լծած՝ սար բարձրացանք։

Մեր հին սայլը ճռնչալով վերջապես հասավ սարահարթ, ուր այստեղ-այնտեղ քամուց շուռ տված-գզգզված կիտուկներ էին մնացել։

Գառների քաղցր մայունին, ձիերի ուրախ խրխինջին սովոր, ալ ու ալվան ծաղիկներով զարդարված մեր սարերը այնպես էին ամայացել, այնպիսի թախծոտ լռություն էր տիրում մեր լեռներում, որ սիրտս լցվեց... Ուշ աշնան ցրտաշունչ քամին պար էր

www.a-pdf.com

գալիս խոտի բլրակների շուրջը, չոր խոտի փնջերը բերանն էր առնում ու գլորելով սարահարթի պռունկը տանում։

Այդ քամուն էլ սայլ բարձե՞լ կլինի։ Հենց եզանով վերցնում էինք խոտը, հողմը խլում էր մեր ձեռքից ու ցրիվ տալիս։ Դժվարությամբ, քամու դեմ կռվելով բարձեցինք սայլը, պարանով կապկպեցինք և նորից լծեցինք եզները։

Դե՛հ, մնաք բարով, մեր սիրուն սարեր, մինչև գարուն, երբ ծաղկանկար գգեստներ կհագնեք ու կսպասեք մեզ։

Վերջին անգամ նայում ենք հանդերին և ահա, հանկարծ, սարահարթի պռունկն է բարձրանում եղջերուների մի նախիր։

Կանգ են առնում, գեղեցիկ վզներն առաջ մեկնած՝ հեռվից հոտոտում մեզ։ Ապա համոզվելով, որ անվնաս մարդիկ ենք, դանդաղ ծռում են իրենց ընթացքն ու դիմացի լեռնամատն ի վեր ուղղվում են դեպի մեր խալ-խալլու սարի բարձունքները։

Նախրի առաջից, գլուխը բարձր պահած, ընթանում էր մի վիթխարի եղջերու։ Նրա գույնը գորշ էր, մեր սարերի չորացած խոտի գույնին, բայց փորի տակը ճերմակին էր տալիս։

Նա է, Տանձուտի ջահել բուզեն... Մի տես ինչքան է մեծացել։

Նախրի հետևից մի ծեր ցուլ էր գնում՝ դանդաղ և ծույլ-ծույլ։ Նրա եղջյուրները այնքան խոշոր էին, կարծես կաղնի ծառի զույգ ճյուղերը լինեին ամրացված գլխին։ Ստեպ-ստեպ կանգ էր առնում, երևի պզտոր հայացքով նայում էր ձորերին, իր ծիրանի զգեստները հանող անտառին, և մենք զգում էինք, որ իր կյանքի ձմեռը թևակոխած այդ կենդանին ուշ աշնան այս օրվա նման տխուր է։ Հեռու էր, նրա ուսի ճերմակ սպին չէր երևում, բայց մենք առաջին իսկ հայացքից ճանաչել էինք մեր բարեկամին, որսորդ Մուկուչի երազած կենդանուն։

— Սարերը մարալին են մնացել,— հոգոց հանեց հայրս, և մենք սայլը քշեցինք դեպի ձմեռանոց։ Սարահարթից ձորն իջնելուց առաջ կանգ առանք և ետ նայեցինք։

Եղջերուի նախիրը շարվեշարան գնում էր դեպի վեր, դեպի բարձունքները։ Իսկ մեր անտառի ծեր տիրակալը կանգնել էր մի բարձր քարի և նրա աննման եղջյուրները գծագրված էին աշնան պարզ երկնքի ֆոնին։

Կարծես երկնի կապույտին մի աներևույթ ձեռք, մի փառաշեղ եղջերու էր նկարել...

www.a-pdf.com

Հաջորդ աշնանամտին, երբ սարից իջանք տաք ձորերը, հենց առաջին գիշերը եղջերուի հեռավոր գոռոց լսվեց։ Ամեն տարվա պես, խանդից կուրացած ցուլերը իրար կռվի էին հրավիրում։

Տեսնես կա՞, ապրո՞ւմ է մեր անտառի ծեր տիրակալը, թե՞ մնաց լեռնագագաթի ձյան «զամբերից» մեկում...

Իր գետնատնակի առաջ կանգնած, մահակին կոթնած՝ ունկնդրում էր անտառի ձայներին նաև Մուկուչ պապը։ Մտահոգ էր նա ու մռայլ։

Ուշ էր, մտանք մեր խրճիթներն ու մեկնվեցինք բուխարիների առաջ։ Անտառից եկող ձայները հետզհետե հեռացան, կարծես յոթ սարի հետև անցան։ Ննջում էինք մենք, քնի մեջ անգամ լսելով եղջերուների գոռոցը հեռու ձորերից։

Առավոտյան Մուկուչ պապը մեր խրճիթը մտավ։ Նրա ճակատի կնճիռները հարթվել էին, դեմքը ողողված էր ներքին գոհունակությամբ։

— Կենդանի է, հլա կռիվ էլ է անում ջահելների հետ,— աչքերը կկոցելով հաղորդեց նա։

— Իսկապե՞ս, ձայնը լսեցի՞ր...

— Էն էլ ո՞նց... Մինչև լուսադեմ, աստղերին էի մտիկ անում, մեկ էլ Տանձուտի կողմից լսվեց նրա գոռոցը։ Մի ուրիշ ձենից ձորը դմբդմբաց ու դրանք իրար հասան... Բայց մի ժամանակ երկուսի ձենն էլ ղը՛րթ, կտրվեց, չիմացա ինչ պատահեց։ Էն օրը ծառի տակ քնել եմ, մրսել, թիկունքս ծակում է, երեխեք ջան, մի վազ տվեք Տանձուտի կողմը, տեսեք ինչ է պատահել։

— Որ կռվում սպանված լինի՝ լավ կլինի, պոզերը կբերենք կտանես իրենց կտաս, հրացանդ կաղատես,— ասացի ես ուրախացած։

— Սարսաղ-սարսաղ խոսալ մի,— վրդովվեց ծերունին,— ես որ ուզենամ առանց պոզերը տալու էլ հրացանս կաղատեմ, նրա գլխի գնո՞վ եմ զենք աղատելու...

Սրտի նեղվելուց էր հոխորտում։ Դե ոնց չնեղվեր որսկան Մուկուչի սիրտը. թեև հրացանը իր տանն էր, բայց տասը տարի էր պատից չէր իջել, չէր որոտացել որսի վրա։ Կնյազին տված խոստումը չէր կատարված, ո՞վ կթողներ նրան որս անել...

Մենք՝ երեք անբաժան ընկերներ, այդ օրը ժամանակից

www.a-pdf.com

շուտ անասունները հանդ տարանք։ Աթոն չիմացավ մեր միտքը և կյանքում առաջին անգամ գովեց Սիմոնին.

— Ա՜յ հիմի որ հացի տեր կդառնաս։ Էդպե՛ս է, տավարած մարդը պետք է աքլորի հետ զարթնի...

Հասանք Տանձուտ, խուզարկեցինք ամեն ծառ ու թուփ և թավուտի մեջ թաքնված փոքրիկ բացատը տրորված-սևացած տեսանք։ Աժդահա ցուլերը քիչ առաջ հզոր ըմբիշների նման կյանքի ու մահու կռիվ էին տվել իրար և կճղակներով փորփրելայլանդակել էին կանաչ մարգագետինը։ Տեղ-տեղ հող ու կանաչ արյան շիթերով էին ներկված։ Բացատի մի անկյունում կովողները փշրել էին թփերը և թափված տերևներն ու շոր ճյուղերը իրար խառնելով՝ գնացել էին դեպի ցած։

Ի՞նչ կռիվ էր տեղի ունեցել այստեղ, լույսը բացվելուց առաջ...

Երկու օր փնտրեցինք՝ ոչ մի արդյունք։ Երրորդ օրը ձորում, առվակի մոտ կանգ առանք շանթահարված. ահա երկու վիթխարի կենդանիներ ճյուղավոր եղջյուրներն իրար խճճած մեկնված են առվի ափին, խոնավությունից բորբոսնած մի կոճղի մոտ։ Նրանցից մեկը, որի փորի տակը շալ էր, մեզ տեսնելով փնչացրեց, վեր թռավ, իրեն թափահարեց, որ փախչի, բայց հարևանը, որ աչքերը խուփ, անշարժ մեկնված էր, իր ահագին ծանրությամբ նրան գետնին մեխված պահեց։ Ջահել ու շալ եղջերուն թպրտում էր, թափահարում էր ոտքերը, գլուխն էր խփում գետնին, բայց նրա եղջյուրները անքակտելի կերպով խճճվել էին հակառակորդի պողպատի նման ամուր ու հսկայական եղջյուրներին։ Մեռնում էր ծեր հսկան, շնչում էր ծանր, ընդհատ-ընդհատ և իր հետ դեպի մահ էր տանում կյանքով լեցուն այս ջահել ու խնդուն արարածին ևս...

Մենք լուռ ու ահով նայում էինք այդ մեռնող հսկաներին՝ մեր անտառի հին և նոր տիրակալներին և չգիտեինք ինչպես փրկել նրանց։

Առաջինը Սիմոնն ուշքի եկավ։

— Տղե՛րք, մի պինդ սղոց որտեղի՞ց ճարենք, մանր ատամներով սղոց,— ասաց նա։

Թփերում խշրտոց լսվեց և անսպասելի հայտնվեց Աթոյի տղա Հրանտը։

Մենք չէինք սիրում այդ լկտված ու մեծամիտ տղային։ Չէինք սիրում նրա փայլուն սապոգները, մաքուր, կոկիկ հա-

www.epdf.com

գուատները, գիմնազիստի փայլուն կոճակների սիրուն շարքերը մահուղե համազգեստի վրա։ Չէինք սիրում նրա խոսելու ամբարտավան տոնը, և մանավանդ այն, որ մեզ նման չէր թավալվում խոտերի մեջ ու ծառ չէր բարձրանում։ Չէինք սիրում գուցե այն պատճառով, որ նա սովորում էր գիմնազիայում, իսկ մենք զրկված էինք ուսումից։

Եկավ, տեսավ մեկնված կենդանիներին, զարմանքից ու ահից քարացած մնաց։ Ապա, երբ ուշքի եկավ, արտաքուստ քընքուշ այդ պատանու առաջին խոսքն էր.

— Էլ ի՞նչ ես մոլորվել, դանակդ վիզը խրի՝ թող հանգրստանա։

Սիմոնին էր դիմում։

— Մուկուչ պապին պետք է հարցնենք, հետո,— համեստորեն պատասխանեց Սիմոնը։

— Մուկուչ պապի՞ն, ինչի՞, սրանց տերը նա՞ է։

— Հա, նա՛ է,— գրգռված պատասխանեց Ակոբը,— էս պոզերի համար է նա պատժված մնացել, էլ որսի չի գնում։

— Միծաղելի բաներ ես ասում... Լսե՛ք, հիմարություն մի արեք, սպանեցեք երկուսին էլ, սրանից լավ որս չի լինի... Ի՞նչ եղջյուրներ են... Այս ծերի եղջյուրները թող կնյաղին լինի, ոչի՛նչ, բայց մյուսինը ես հաճույքով կհանձնեմ մեր գիմնազիայի դիրեկտորին։ Տո՛ւր դաշույնը...

— Հաճույքով ինչ կանե՞ս... Հաճույքով զալա՛թ կանես։ Սա գիմնազի բակը չի, հա՛, Տանձուտումն ես, խելքդ գլուխդ հավաքիր...

Եվ Ակոբը մի քայլ առաջ եկավ։

Սիմոնը նրա առաջ կտրեց և ավագի տոնով կարգադրեց.

— Վազիր Մուկուչ պապին կանչիր։

Ակոբը խեթ-խեթ նայեց գիմնազիստին և գնաց դեպի ձմեռանոց, իսկ ես սիրտս լիքը կարեկցությամբ նայում էի մեր հանդերի ամենագեղեցիկ արարածներին, որ լուռ ու անմռունչ մեռնում էին իմ աչքի առաջ։ Նրանք նիհարել էին, քաղցից ու ծարավից թուլացել։ Մանավանդ ծեր եղջերուն այնպես էր մաշվել, որ կողի ոսկորները համրվում էին, մազը կորցրել էր իր նախկին փայլը և խճճվել-կպել էր մարմնին, կիսաբաց աչքերը խամրել էին, մարմինը փոքրացել էր և դրանից եղջյուրներն ավելի մեծ էին երևում։

Ի՞նչ աննման եղջյուրներ էին դրանք և ի՞նչ ձեռք պիտի լի-

www.a-pdf.com

ներ, որ կտրեր այդ եղջյուրները։ Բայց պիտի կտրել, երկուսի կյանքն էլ փրկելու միակ ելքը հիմա այդ է։

Շատ սպասեցինք, վերջապես լսվեց Մուկուչ պապի անհամբեր ու բամբ ձայնը.

— Ադա, որտե՞ղ են...

Եկավ «դեպքի վայրը», տեսավ, գլուխը տարուբերեց։ Մեր ցուլը աչքերից մեկը բացեց, պղտոր ու անտարբեր նայեց նրան։ Ճանաչե՞ց արդյոք իր հին հակառակորդին։ Երևի ճանաչեց. հենց այս մարդը չէ՞ր, դեմքը մաղոտ, մեծ փափախը գլխին, սև սատինե արխալուղը հագին այս մարդը, որ կրակեց իր վրա...

Վերջին ուժերը հավաքեց, գլուխը գետնից կտրեց, թափահարեց և նրա եղջյուրներն անզոր նորից գետին ընկան. նրանց ծայրերին խրված չոր տերևներ կային և մի ճումբ հող. ցուլերի առվորության համաձայն, կռվի մեջ մտնելուց առաջ, գետինը քանդել էր՝ հակառակորդին ահաբեկելու համար։

— Քեզ կտրատիլ մի, մազիդ էլ չեմ դիպչելու, չվախենաս,— բարեկամաբար նրան դիմեց ծեր որսորդն ու գոտկից հանեց փոքրիկ սղոցը,— հիմի որի՞ պոզը կտրենք, երեխե՛ք,— դիմեց նա մեզ։ Ասաց, բայց երևում է, որ մեզ է խոսեցնում, իր մեջ նա արդեն վճռել էր ո՛ւմ զոհել։

— Դրանց եղջյուրներն անգին են,— մեր փոխարեն պատասխանեց Հրանտը՝ վիրավորված այն բանից, որ իր կարծիքը չեն հարցնում։— Անգին են, կրկնում եմ, մի փչացրեք։ Սպանեցեք երկուսին էլ և այն ժամանակ եղջյուրներն էլ կմնա, միսն էլ, կաշին էլ...

— Միսն է՞լ, կաշին է՞լ... Հը՞մ... Մի՞սը, կաշի՞ն... մռայլ փնթփնթաց ծեր որսորդը։— Գիմնազում ես սովորե՞լ էդ բանները,— ձայնը բարձրացնելով և տղային շեշտակի նայելով՝ հարցրեց Մուկուչ պապը։

Փոքրիկ մարդու մեծ ինքնասիրությանը կպան։

— Միայն տգետ մարդը կայլանդակի այդպիսի եղջյուրները,— շպրտեց Հրանտը, երբ ծերունին սղոցը պատրաստ մոտեցավ մեռնող կենդանիներին։

— Բա որ տգետ չլինենք, հո միսի ու կաշվի գինը կիմանանք,— քմծիծաղով պատասխանեց նա և սկսեց կիսից սղոցել ջահել ցենդանու մի եղջյուրը։

— Բայց դրան ոչանես լավ է, քան գրկես պոզից,— գրժիկամությամբ ասացի ես։

www.a-pdf.com

Ներունին չպատասխանեց։ Կենդանին կյանքի էր կոչել իր ուժերի վերջին մնացորդները, թպրտում էր, խփվում գետնին և խուսոտ ձայներ արձակում։ Դրանից Ներունին դարձել էր կենտրոնացած և նյարդային։ Նա արագ սղոցեց և դեռ կիսին չհասած, ճայթյուն լսվեց և կենդանին վեր թռավ տեղից, երերաց, վայր ընկավ, ապա նորից ոտքի ելավ, ետ-ետ գնաց ահով ու ոռնգները լայնացնելով՝ փռռացրեց։ Հետո շուռ եկավ ու անհետացավ թավուտում՝ եղջյուրի մի կտորը հակառակորդի գլխին թողած...

Ներունին զոհ հայացքով դեռ նայում էր ճարճատող թփերին։ Վերջապես սթափվեց և իր բրդոտ փափախը թրջելով առվի մեջ, բերեց ջուրը մղեց մեռնող ցուլի գլխին։ Սա սթափվեց մղձավանջից, գլուխը վեր բարձրացրեց և զգաց, որ իրեն կաշկանդող ու գետնին մեխող ուժն այլևս չկա։ Ապա նստեց և շաղված նայեց իր դիմաց կանգնած մարդկանց։ Մինչ նա իր ուժերն էր հավաքում, Մուկուչ պապը մեզ նայեց հաղթական և հարցրեց.

— Հասկացա՞ք ինչ արի...

— Հասկացանք, ջահելին սպանեցիր, պառավին փրկեցիր,— դժգոհ պատասխանեցի ես։

Ներունին քահ-քահ ծիծաղեց։

— Խելքդ էդքան է՞... Դու կարծում ես չալ բուղեն առանց պո՞ղի է մնալու։ Նա նախրի ղեկավարն է, խելքդ ինչ է կտրում, ես նրան առանց պոզի կթողնե՞մ։ Երեք-չորս ամիս ման կգա սղոցած պոզով, հետո սղոցածն էլ, առողջն էլ վեր կընկնեն ու եկող տարի էս ժամանակ դուք տեսեք, թե ինչ շիմշատ պոզեր կունենա...

Իսկապե՞ս...

Մենք գլխի ընկանք և միանգամից ուրախացանք։

— Որ էդպես է, էս պառավինը սղոցեիր, էլի՞,— ասաց Ակոբը։

— Ձեռքս չբռնեց... ամբողջ կյանքում կմնար մի պոզանի։ Շատ է պառավ, քանի տարի է սա էլ պոզերը չի փոխում ու էլ չի փոխելու մինչև մահը...

Ի՞նչ խելացի լուծեց հարցը Մուկուչ պապը, ի՞նչ բարի մարդ է նա։ Շա՜տ է բարի, բայց մինչև ե՞րբ մնա առանց որսի, վիրավորված ու ստորացած։

— Պապի՜, պառավել է, մեկ է, սա երկար չի ապրելու... պոզերը տանենք անտառապետին,— խրախուսեցի ես։

Ներունին մտատանջության մեջ ընկավ։

www.a-pdf.com

— Հա՜, լավ ես ասում, սրա օրերը հաշվված են։ Բայց դե ընկածին սպանելն էլ մի տղամարդություն չի... Որ ուժ ունենար, փախչեր իրեն պաշտպաներ՝ ուրի՛շ բան։ Հիմի ես ո՞նց ձեռք բարձրացնեմ էս խեղճ ու կրակ կենդանու վրա... Չէ՜, որսկան Մուկուչը իր կյանքում նամարդ բան չի արել ու չի էլ անի,— ձայնը բարձրացրեց նա և իր հին բաշլուղով կենդանու վիրավոր ոտքը փաթաթելուց հետո շուռ եկավ և վճռական քայլերով մտավ Տանձուտ։

Մենք հետևեցինք նրան։

Ճանապարհին Մուկուչ պապը կատակներ էր անում և զգում էինք, որ գոհ է իրենից, այնպես գոհ, ինչպես մարդ լինում է մե՜ծ և բարի գործ կատարելուց հետո։ Ուրախ և գոհ էինք նաև մենք։ Միայն Աթոյի որդի Հրանտն էր դժգոհ։ Դե նա ո՞նց հասկանար ծեր որսորդի մեծ սիրտը...

5

Այդ դեպքից մի քանի օր անց, գյուղի գզիրը եկավ ձմեռանոց և բերեց պրիստավի հրամանը որսկան Մուկուչին՝ հրացանով անմիջապես ներկայանալ Դիլիջանի անտառապետին։

Մեր որսորդը կապեց իր մեծ դաշույնը, հրացանը ուսը գցեց և մռայլ տրամադրությամբ գնաց Դիլիջան։ Նրա սիրտը լավ բան չէր գուշակում. դե պարզ չէ՞, թե պրիստավը ե՛րբ է հիշում աշխատավոր մարդուն...

Երեկոյան Մուկուչ պապը Դիլիջանից վերադարձավ առանց հրացանի և առանց դաշույնի։ Վերադարձավ գլխիկոր, ավելի ծերացած։

Իր ընկեր Քոչարը մոտը գնաց, մենք էլ նրա հետևից։

Մուկուչ պապը ծալապատիկ նստել էր բուխարու առաջ փռված թաղիքին և մեջքը գետնատնակի սյունին հենած, հայացքը վառվող կրակին՝ լուռ ծխում էր իր հնամենի ծխամորճը։

Դուռը ճռռաց, մենք քաշվելով բարի երեկո մաղթեցինք ծերունուն, բայց նա աչքը չէր կտրում կրակե լեզուներից։

— Բա թվանքդ ո՞ւր է, Մուկո՛ւչ,— ծանր-ծանր նստելով հարցրեց Քոչար պապը։

— Ջարբդ տարավ,— առանց նրան նայելու մռայլ պատասխանեց ծերունին։

— Խլե՞լ են...

www.a-pdf.com

— Սարսաղ-սարսաղ մի խոսի. ինձանից ո՞վ կարող է զենք խլել,— բարկացավ Մուկուչ պապը։— Ես իմ հոժար կամքով եմ տվել...

Ու լուռ շարունակեց ծխել։

Երկուսն էլ լռեցին, հետո խոսեցին դեսից-դենից։ Զրույցի ընթացքում Մուկուչ պապը հետզհետե բացվեց և նոր միայն կարողացավ խոսել իրեն տանջող ցավի մասին։

Հրանտը հորը պատմել է Տանձուտում իր տեսածը ու զրուցել նրան։ Աթոն գնացել է կնյազի մոտ ու շարախոսել, թե՝ «Բա չե՞ս ասի, Մուկուչը պախրին վեր ընկած, շունչը փչելիս տեսնում է, բայց էլի ափսոսում է նրա պոզերը քեզ բերի, էնքան որ քեզ տվածը դեն գցած է հաշվում»։ Նա էլ գանգատվում է պրիստավին, թե՝ Մուկուչն իբր թե անարգել ու անպատիժ կոտորում է իշխանական անտառի որսը։ Ու հետո էլ կնյազը սպառնում է պրիստավին, թե՝ զենքը խլեցեք, պատժեցեք էդ որսկանին, թե չէ ձեզ վրա բողոք կգրեմ նահանգապետին։

— Անտառապետը գիտեր կնյազի փորացավը։ Ինձ ասում է՝ Մուկուչ պապի, ինչի չես խոստացածդ մարալի գլուխը բերում իրեն տալիս պրծնում։ Իրեն հարցրի՝ որ գլուխը բերեմ, հրացանս մոտս կթողե՞ք։ Ասաց՝ կթողեմ։ Մեկ մտածեցի գնամ էդ անլեզու անասունին սպանեմ, հրացանս ազատե՞մ, մեկ էլ խիղճս բողոքեց իմ վճռի դեմ. ախր ես ոնց սպանեմ էն կենդանուն, որի կյանքը ազատեցի, վերքը փաթաթեցի, բաց թողեցի։ Բա որ սպանելու էի, էլ ո՞ւր էի փրկում... Ու ինքս ինձ ասացի՝ թքած էն հրացանի վրա, որ իմ սիրած կենդանու կյանքը խավարացնելով եմ պահելու։ Անտառապետը, տեսնում են, իրեն ուտում է, թե ո՞նց մի հասարակ չոբան մարդ իր խոսքը կոտրի՞։ Աչքերը շարությամբ լցվեցին, վեր կացավ տեղից վրաս գոռաց։ Հրացանդ կխլեմ, ասում է, աչքդ կհանեմ՝ մինչև մահդ քեզ որսի կարոտ կթողնեմ։ Էդ որ ասաց, ես էլ իմ վճիռն ասացի. Է՛ աղա, ասացի, որսկան մարդի համար հո նրա զենքը խլած, հո թևը կտրած՝ մի հաշիվ է։ Բայց ես մարդ եմ, խիղճ ունեմ, որ թևս էլ կտրեք՝ իմ խղճին դեմ բան չեմ անի...

Ասացի, հրացանս իմ հոժար կամքով իրեն տվի ու դուրս եկա...

Լռեց, տնքաց և շարունակեց ծխել։

— Լա՛վ, մեծ բան չի մի թվանքը, դարդ մի անիլ,— փորձեց մխիթարել Քոչարը։

www.a-pdf.com

— Մեծ բան չի՞... Իսկ որ պատիվս ոտքի տակ են տալիս մեծ բան չի՞։ Մեծ բան չի՞, որ Աթոն մատնություն է անում, թե՝ Մուկուչը բունտ է սարքում։ Ծերության մեջքը կոտրի, թե ուժս տեղը կլինե՞ր, բունտը էն ժամանակ կտեսնեիք...

Եվ քիչ լռելուց հետո, դարձավ մեզ.

— Աշխարքն էսպես չի մնալ, երեխեք ջան, ձեզ վրա պարտ եմ դնում, որ աշխարքի կարգը փոխվի՝ գաք ոտով գերեզմանիս խփեք ու ասեք՝ Մուկուչ պապի՞, հիմի կնյազի անտառն էլ է մերը, Աթոյի հողերն էլ։ Էն ժամանակ ես հանգիստ կմնամ իմ գերեզմանում...

Չպատասխանեցինք, ոչինչ չխոստացանք։ Բայց ծեր անասնապահի խոսքը կրակի նման կտրեց անցավ մեր պատանի հոգին և ամեն մեկս մեր մեջ վճիռ ընդունեցինք՝ «Այդպես էլ կլինի, Մուկուչ պապի...»։

Այդ օրից մինչև իր մահը այլևս զենք չտեսավ և որսի չգնաց Մուկուչ պապը։ Նստում էր իր խրճիթի առաջ, մեջքը պատին հենած արևկող էր անում ու լուռ քաշում իր համրիչի սաթե հատիկները։

— Մի գործի կաց, այ պապի,— ասում էին նրան։

— Ի՞նչ գործի կենամ, այ որդի, նամարդ մարդիկ թևս կըտրել են...

— Ի՞նչ ես մտածում, պապի,— երբեմն հարցնում էին հարևանները։

— Աշխարքի գործերի մասին եմ մտածում,— անորոշ պատասխանում էր ծերունին և մենք տեսնում էինք, որ մեր լավ, մեր բարի պապը օր-օրի հալվում է։

6

Ժամանակ անցավ, որսկան Մուկուչը մեռավ։

Հավանաբար անտառի կուսական խորքում իր շունչը փչեց նաև ծեր եղջերուն. տարիներ էին անցել, աշնան գիշերներին նրա գոռոցն այլևս չէր լսվում։

Բայց ի՞նչ եղջերուի մասին մտածելու ժամանակ էր. այնքա՞ն դեպքեր տեղի ունեցան այն ժամանա՞կ... Պարտիզանները քարանձավներից գյուղ իջան և կարմիր դրոշ բարձրացրին գյուղի ամենաբարձր տան կտուրին։ Նրանց հետ գյուղ եկավ նաև մեր ընկեր Սիմոնը, որ քանի ամիս էր անհետացել էր Աթոյի տնից։

www.a-pdf.com

Եկավ նա փամփուշտակալները լանջին՝ աջ ու ձախ գցած, մոսին հրացանն ուսին, նորածիլ սև բեղերով։ Ասում են, Աթոն գյուղամիջին պատահել էր իր նախկին տավարածին և մեղրածոր ժպիտը դեմքին շողոքորթել էր՝ «Սիմոն ջան, կարգին տղամարդ ես դառել, իմ տված աղ ու հացը հալալ լինի քեզ...»։

Պարտիզանները իջան Դիլիջան, հյուսիսից էլ ռուս զորքը եկավ, էլ կնյա՞զ կմնար այդ ձորերում...

Այդ օրերին մեր ընկեր Ակոբը անտառի խորքում մի կենդանու կմախքի է պատահում՝ հսկայական ճյուղավոր եղջյուրները գլխին։ Իրիկնադեմ էր, վերևից նա ձմեռանոց մտավ եղջերուի գլուխն ուսին դրած, և դեռ հեռվից մենք ճանաչեցինք մեր անտառի երբեմնի տիրակալի եղջյուրները։

Այդ եղջյուրները մենք հանդիսավոր կերպով խփեցինք որսորդ Մուկուչի տան ճակատին և մեր հրացանները վերցնելով՝ խմբով գնացինք գերեզմանատուն։

Արևը մայր էր մտնում, նրա կարմրագույն շողերը ողողել էին այն բլուրը, որի վրա մեր գյուղի գերեզմանատունն է։

Կանգ առանք մի անշուք հողաթմբի մոտ և գլխարկներս հանեցինք։

— Մուկուչ պապի, հանգիստ քո ոսկորներին, աշխարքը հալալվել է,— իր առնական ձայնով գոչեց Սիմոնը և մեզ նշան տվեց։

Երեք մոսին միաբերան որոտացին ի պատիվ այն բարի ու վեհանձն մարդու։ Եվ այդ թնդյունը մեր պատանի հոգու բերկրանքն էր, դարավոր շղթաներից ազատագրված մարդու բերկրանքը...

Տասնամյակներ են անցել այդ օրերից, վաղուց ես չեմ եղել այն վայրերում, որտեղ տավար էի պահում իմ ընկերներ Սիմոնի ու Ակոբի հետ։

Ասում են այլևս չկան մեր ձմեռանոցի գետնափոր խրճիթները։ Նրանց տեղ, ասում են, քարաշեն տներ են, ֆերմայի լուսավոր ու ընդարձակ գոմեր, սիլոսի բարձր աշտարակներ։ Եվ, երբ մտնում ես մեր ձմեռանոցը, ասում են՝ բարձր սյունի գլխին մի եղջերուի գլուխ է խփված՝ փառահեղ եղջյուրները վրան։ Ավանդական են այդ եղջյուրները, ոչ ոք ձեռք չի տալիս նրանց։

Նայում են այդ եղջյուրներին մեր գյուղի երիտասարդները ու հարցնում իրենց ծնողներին.

www.a-pdf.com

— Ի՞նչ եղջյուրներ են... ինչի՞ են այսպես պատվով պահում...

Եվ անցյալ կարգերը տեսած մարդիկ իրենց երեխաներին պատմում են մեծահոգի որսորդ Մուկուչի և ագահ ու չար Աթոյի մասին։ Պատմում են բռնակալ կնյազի մասին, անգութ պրիստավի մասին և անարդար այն կարգերի մասին, որոնք մնացին հին աշխարհի փլատակների տակ...

1955

ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ ՍԱՏԱՆԱՆԵՐԻ ՄԵՋ

Մի տարի մեր գյուղացի Ասատուրանց Արշակի կինը սար գնալիս կորավ։ Արշակի երեխաները սուգ ու շիվան բարձրացրին, խեղճ մարդը հունձը թողած՝ հանդերն ընկավ, չոբաններին հարցուփորձ արավ՝ կինը չկա ու չկա։ Երկու շաբաթ անց չոբանները Գառնաքարի ձորում տեսել էին անհետացած կնոջը։ Սարից գյուղ եկան պատմեցին, թե՝

— Հոռոմսիմը շորերը պատառոտած, գզգզված, մինչև վիզը բռնկուտի մեջ թաղված՝ բլդրդան էր ուտում։ Մեզ որ տեսավ, ծղրտաց ու փախավ...

Ամբողջ գյուղը պոկ եկավ ու գնաց դեպի Գառնաքար։

«Հոռոմսիմ, հե՜յ»... կանչելով մարդիկ ոտի տակ տվին այդ կողմի սարերն ու ձորերը։

Բայց Հոռոմսիմը չկար ու չկար։

Վերջապես մի ծերունու խորհրդով զուռնա-դհոլ տարան Գառնաքարի ձորը և մի ամբողջ օր՝ «դը՛մբ հա դը՛մբ», էն ծմակները դղրդացրին։ Մեկ էլ տեսան քարայրից մի կին դուրս եկավ՝ գզգզված շորերով, նիհարած, աչքերի տակը կապտած, բանջարեղենի կանաչ փրփուրը բերանի անկյուններում չորացած։ Հարազատներն ուրախության արցունքներն աչքերին գրկախառնվեցին կորած կնոջ հետ և զուռնա-դհոլով, քեֆով ու պարով տուն բերին։

Այն ժամանակ գյուղն ահով էր նայում այդ դեպքին։

— Սատաներոց է էլել խեղճ կինը,— ասում էին պառավները ու Հոռոմսիմին խոսեցնում էին սատանաների վարք ու բարքի մասին։

www.a-pdf.com

— Շատ մասխարա բաներ են էդ սատանաները,— ասում էր նա՝ պատի տակ նստած գուլպա գործելով։— Սաղ օրը զուռնա էին փչում ու պար գալիս։

— Աղջի՛, բա քեզ ո՞նց տարան, այ միսդ քրքրվի։

Եվ Հոռոմսիմը նորից էր պատմում այն, ինչ շատ անգամ էր պատմել։

— Սար գնալիս հենց մտքերիս հետ ընկած՝ նրա՛նց մասին էի մտածում, մին էլ ներքին ծմակիցը մի տեսակ ձեն հասավ ականջիս։ Հիշեցի մեր լուսահոգի Սոնա տատի խոսքը, որ սատանաներն իրենց հարսանիքը միշտ էս ձորում են անում։ Մի անգամ էլ Սոնա տատին հարսանիքի էին կանչել, գիլի ատամը ջեբիցը հանել էր, վրեն թքել՝ շարը խափանել էր։ Էդպես մի կերպ պրծել էր ու լեղապատառ փախել սարվորների մոտ։

Հա՛, է՛ն էի ասում, էդ որ միտս ընկավ (արևն էլ մեր էր մտել, ձորին մտիկ անելիս զարզանդվում էի), ահը սիրտս պատեց։ Ներքևիցը զուռնա-դհոլի ձեն լսեցի։ Ասի, էս է, որ կա, սատանաների հարսանիքի եմ պատահել։ Հենց էս մտածեցի թե չէ, մեկ էլ տեսա ձորը լցվեց սատանաներով։ Ջալտիկ շորերը հագներին, գլխներին իծի պոզերի պես բաներ, ո՞նց են իրար ձեռքից բռնած՝ յայլի գնում, ո՞նց են պար գալիս հարսի ու փեսի առաջ և հետն էլ քաղցր ձենով կանչում՝ «Արի՛, Հոռոմսիմ մոքիր, արի քեֆ անե՞նք, մեր հարսանիքի փլավն էլ դու կեփես...»։ Ասացին, ինձ շրջապատեցին ու հետները տարան Գառնաքար։

— Աղջի՛, ա՛յ սրտամեռ, սաղ գեղով չոլերն ընկած քեզ էինք ման գալիս, բա մեր ձենն ականջդ չէր ընկնո՞ւմ, որ փախչեիր գայիր,— հարցնում էր հարևան Թամո տատը։

Հոռոմսիմը ծիծաղում էր ու գլուխն օրորելով շարունակում էր իր անսովոր պատմությունը.

— Ես ամեն օր էլ տեսնում էի ձեզ։ Տեսնում էի, թե ոնց ոչխարի սուրուն, շներն ու չոբանները քամակից ընկած իջնում էր Գառնաքարի ձորը։ Ինձ ման եկողներին բոլորին էլ տեսնում էի։ Ուզում էի ձեն տամ՝ սատանաներն օձի գլուխը բերանս էին կոխում, որ չխոսեմ։ Ուզում էի փախչեմ՝ չորս հոգով նստում էին ոտներիս ու ձեռներիս վրա։ Համա դուք խելոք բան արիք զուռնա-դհոլի ձենը որ իմացան, թողին փախան...

Զարմանալի աշխատասեր կին էր Հոռոմսիմը։ Նա մենակ երեք հոգու գործ էր կատարում։ Բայց այդ դեպքից հետո առանց ուրիշի ձեռքը բռնելու ոչ մի քայլ չէր անում։ Նրա հիվանդոտ

www.a-pdf.com

երևակայությանն ինչ-որ մեկը փչել էր, թե պետք է մեկի ձեռքը բռնած ման գաս, թե չէ սատանաները նորից կտանեն քեզ։ Ու ներշնչված այդ մտքից, ուր էլ որ գնար՝ դաշտը աշխատանքի, թե կով կթելու, ձեռքը պետք է դներ մեկի ուսին, հետո քայլեր, թեկուզ այդ «մեկը» նոր ոտքի ելած երկու տարեկան երեխա լիներ։

Մի անգամ աղջիկը վառարանը լցրել էր չոր փայտով և դուրս գնացել անասուններին խոտ տալու։ Վառարանը բորբոքվել էր, կարմրել, և տան առաստաղի տախտակներն սկսել էին բոցավառվել։ Կրակի կտորները թափվում էին գլխին, տունը լցվում էր ծխով, Հոռոմսիմն օգնություն էր գոռում, բայց տնից դուրս չէր գալիս, որովհետև մարդ չկար, որ ձեռքը բռներ...

Հիվանդ կինը մի գլուխ խնդրում էր.

— Ինձ տարեք Սևան... Ինձ ասել են, թե՝ որ ուզում ես ազատվել էդ ցավից, յոթը տարի Սևանա վանքը ուխտի պիտի գնաս...

Վեց տարվա մեջ վեց անգամ Ասատուրանց Արշակը իր կնոջը ուխտի տարավ Սևան։ Յոթերորդ տարվա ուխտագնացությունը զուգադիպեց «Կոմսոմոլի զատկին»։ Ռազմական կոմունիզմի շունչը դեռ թարմ էր Դիլիջանի ձորերում և մենք կոմերիտականներս անողոք կռիվ էինք հայտարարել կրոնին ու տերտերներին։ Ներկայացնում էինք «Կրակի՛ր, ռմբակոծիր երկինքը» պիեսը և հակակրոնական երթեր էինք կազմակերպում։ Եվ ահա այդ օրերին Արշակի տղան հուզված մտավ կոմբջջի գրասենյակը.

— Էլի ուխտի են տանում, ես ի՞նչ անեմ... Ինչքան համոզում եմ՝ չի լինում,— գանգատվեց արցունքի միջից։

— Մեկ է, եթե մայրդ ուխտի գնա, քեզ անմիջապես կհեռացնենք կոմսոմոլից,— սպառնաց բջջի քարտուղարը։

Ես ինչ-որ տեղից մի պատառոտված գիրք էի ճարել ու հանդում կարդում էի։ Այնտեղ այսպիսի տարօրինակ միտք կար, որ թբր թե ինքնաներշնչմամբ առողջ մարդը կարող է հիվանդանալ, նույնիսկ մեռնել, իսկ հիվանդը կարող է առողջանալ։

Սպասիր փորձենք տեսնենք ճի՞շտ է ասում այս գիրքը։

Մեր հարևանի կինը շատ սվսվող, դժգոհող, տնքտնքացող կին էր՝ ուղղակի երևակայական հիվանդ։ Ամեն ինչով առողջ այդ կնոջը թվում էր, թե աշխարհի բոլոր հիվանդություններից էլ իր մեջ կան։

Մեր տանն այսպիսի տարօրինակ մի դեղ պատրաստեցի. մի բաժակ ջուր վերցրի ու տանն ինչ որ պատահեց հետը խառ-

www.p-pdf.com

նեցի՝ մի գդալ կաթ, մի գդալ հարած մածուն, պատից իջեցրի մորս համեմեղենի տոպրակները, ամեն տեսակ համեմներից էլ ծեծեցի ու լցրի մեջը։ Մի կտոր շաքար էլ գցեցի։ Վերջապես ուրիշ բան տանը չճարելով, մի կտոր հավի ծերտ էլ գցեցի բաժակի մեջ և ծիծաղեցի ինձ ու ինձ՝ «թող համը տեղը գա»։ Այդ բոլորն իրար խառնեցի, լցրի թանզիֆի մեջ, քամեցի՝ ահա և քեզ ամենափրկարար դեղը պատրաստ է։ Լցրի դեղի մի հին սրվակի մեջ, որ շատ տարիներ առաջ Դիլիջանի կոզակական գնդի բժիշկ Սոկոլովն էր տվել իմ հորը։ Պսպղան պիտակով սրվակը ձեռքիս մտա մեր հարևանի տուն։

— Շուշան մոքիր, էս դեղն իմ փեսեն է քեզ համար բերել Բաքվից։ Էս դեղը սարքող բժիշկը Պարսկաստանի շահին էլ է սրանով բժշկել։ Ասել է՝ էդ կնիկը որ խմի, ջանումը ցավ չի մնա, իսկույն վեր կկենա...

— Վի՜ի՜, շահի դոխտուրն ա ղրկե՞լ,— ղարմանքից աչքերը չռեց հիվանդի մայրը։— Խմի՜, Շուշան ջան, խմի՜, էդ դոխտուրի մասին ես էլ եմ լսել, դա մարդ հո չի, աստված ա, աստված...

«Շուշան մոքիրը», որ մինչ այդ անկողնում մեկնված տնքում էր, խմեց իմ պատրաստած ծերտախառն խառնուրդը ու քիչ հետո սկսեց շորերը հագնել։

Ես մինչև դրասենյակ մի շնչում վազեցի։

— Արշակ քեռու տղա Ալեքսոյին պետք է մոր հետ Սևան ուղարկել,— գոչեցի ես ներս ընկնելով։

— Արդեն ուղարկեցինք,— պատասխանեց քարտուղարը դեռ չչորացած արձանագրությունը ցույց տալով։

Բյուրոն որոշել էր Ալեքսոյին վտարել կոմերիտմության շարքերից՝ «իր ծնողների կրոնամոլության դեմ չպայքարելու համար»։

Ես տաքացա։

— Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է ինքնաներշնչումը,— գոչեցի ես։— Հրեն Շուշանիկին ծերտով ջուր խմացրի՝ լավացավ։ Որովհետև հավատաց, որ կառողջանա,— վրա տվի ես։— Ալեքսոյի մոր հիվանդությունը հոգեկան է, հասկանո՞ւմ եք... Նրան ներշնչելով կարելի է բուժել...

— Ուրեմն թողնենք ուխտի՞ գնա,— գոչեց տեղից բջջի ագիտպրոպը։

— Եթե նրա կյանքի, նրա ընտանիքի մասին մտածում եք, թողեք, գնա, ինչ կա որ,— պնդեցի ես։— Եթե նա հույսը Սևանի

www.a-pdf.com

վրա է դրել, ուրեմն Սևանը չի նրան բժշկողը, այլ՝ հույսը, հավատը։ Այսինքն՝ հավատալը այն բանին, որ ինքն այդ միջոցով կբժշկվի։ Ուրիշ խոսքով իմ գրքում կարդացած ինքնաներշընչումը...

— Հավատ ես քարոզո՞ւմ, տո՛,— վրդովվեց քարտուղարը։— Հիմի սրա հարցն էլ չքննե՞նք...

Ես շփոթվեցի, բայց ինձ հավաքեցի ու աշխատեցի միտքս տեղ հասցնել։

Իզուր էի խոսում, այն ժամանակվա իմ ձախլիկ կոմերիտական ընկերների համար հավատի մասին խոսելը ուղղակի կրոնական պրոպագանդա էր...

Վեճ բարձրացավ, հարցը տեղափոխեցինք Կոմերիտմիության գավառային կոմիտե։ Գավկոմի ագիտպրոպը, որ մի շատ կարդացած երիտասարդ էր, համաձայնեց, որ այդ կնոջ «բատանաների հետ գնալը» նախապաշարման, վախի, ներշնչման արդյունք է, հետևապես այդ կարգի նյարդային հիվանդությունները պետք է բուժել հենց այն առարկայով, ինչին հիվանդը հավատում է։ Լինի դա դեղ, ջուր, ուտելիք, ճամփորդություն, թե՝ ուխտագնացություն՝ միևնույն է։

— Սեպը սեպով կհանեն,— վերջացրեց նա իր խոսքը ռուսական առածով։— Նրա Սևան գնալուց վնաս չկա, թող գնա։ Տղային էլ մի հեռացրեք կոմսոմոլից։

Մի արտառոց, մի անթույլատրելի առաջարկ էր Գավկոմի ագիտպրոպի առաջարկը։ Ո՞նց թե, ուրեմն թողնենք, որ կոմերիտականի մայրը ուխտի՞ գնա...

Ընկերներս հուզված ու վրդովված վերադարձան գյուղ, իսկ ես մտքումս հեգնում էի նրանց՝ «Հը՛, կերա՞ք...»։ Բայց կասկածն իմ սիրտն էլ էր մտել. «Իսկ եթե վանքը չօգնի՞...»։ Այն ժամանակ, օ՛, լա՛վ կբզկտեն ինձ կոմերիտական ժողովում...

Արշակն իր կնոջը յոթերորդ անգամ Սևան տարավ։ Ականատեսները պատմում են, որ կինը երեխայի ձեռքը բռնած վանք մտավ և այնտեղից դուրս եկավ առանց որևէ մեկի ձեռքը բռնելու։

Գավկոմի ագիտպրոպը գյուղի ընդհանուր ժողովում բացատրեց այդ «հրաշքը»։

— Այո՛, հավատը սրտում ուխտի գնացողներից երբեմն բժշկվում են՝ դա ժխտել չի կարելի,— ասաց նա։— Նույն բանը տեղի է ունեցել նաև ձեր գյուղացի հիվանդ Շուշանի հետ։

www.a-pdf.com

Ու այդտեղ բացվեց իմ բժշկության գաղտնիքը։ Գյուղացիները քահ-քահ խնդացին իմ հնարամտության վրա։

Այն էլ ասեմ, որ Շուշան մոքիրը մինչև օրս էլ նեղացած է ինձանից, թե ինչու իր դեղին ծերտ եմ խառնել։

Իսկ նրա ամուսինը ինձ հանդիպելիս ասում է.

— Վայ, ես քու արևին մատաղ։ Տո վաղուց ծերտ տայիր, է՞։ Քանի տարի է հոգիներս դինջացել է։ Մեղ վառել էր, վառե՛լ...

1939

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՍԵԽՆ ՈՒ ՁՄԵՐՈՒԿԸ

1

Կարծեմ 1913 թվականին պիտի լիներ, երբ մեր գյուղում, չգիտենք որտեղից, լույս ընկավ օտար երկրից եկած մի մարդ։ Նիհար էր այդ մարդը, քամուց ու արևից վառված թուխ դեմքով, ճամփի փոշին սև թարթիչներին։

Եկավ նստեց գյուղի հրապարակի քարին, հին մախաղը դրեց կողքին և ջուր խնդրեց։

Հարցնողին՝ «Տիգրանակերտից եմ»՝ ասաց։

— Անունդ ի՞նչ է, ախպե՛ր։

— Տիգրան։

— Տիգրանի քաղաքի Տիգրան զավակը,— հանդիսավոր արտասանեց վարժապետ Խալաթը՝ օտարականին ծանոթանալուց հետո։— Ի՞նչ հանգամանքներով թողեցիք ձեր հայրենի քաղաքը,— հարցրեց նա։

— Ջանազան հանգամանքներով,— անորոշ պատասխանեց ճամփորդը։

Այնուհետև ոչ ոք չիմացավ, թե ինչու է այդ մարդը թողել տուն ու տեղ, թողել ազգական ու հայրենիք և երկրե երկիր անցնելով եկել հասել մեր գյուղը։

— Կառավարությունից փախած կլի,— ենթադրեց մեկը և այդ ենթադրությունը բոլորից հավանական թվաց։

Մի դատարկ մարագ տվին օտարականին, մաքրեց, կարկատեց ծակուծուկը, շոր խոտ փռեց հատակին և հարմարեցրեց բնակության համար։

www.a-pdf.com

Մշակություն էր անում գյուղացիների համար, անասուններ էր արածեցնում, քար կրում, անտառից փայտ բերում ու բավարարվում էր քիչ վարձով, և մանավանդ, երբեք չէր սակարկում՝ որքան տալիս էին, լուռ վերցնում էր։

Անհաջող մշակ էր Տիգրանը, ո՛չ անտառ էր տեսել, ո՛չ քարհանք, ո՛չ հունձ։ Պատմում էր ձմերուկի ու սեխի մշակության մասին, որ իբր իր մասնագիտությունն էր, բայց դե մեր լեռնային գյուղում ինչ սեխ, ինչ ձմերուկ։

— Վարունգ ալ կմշակեմ, լոլիկ ալ,— ասում էր նա։ Բայց այն տարիներին մեր գյուղում առհասարակ բանջարաբուծություն չկար, իսկ «լոլիկ» միայն մեր հարևան մալականներն ունեին։ Ի միջի այլոց այդ «լոլիկ» բառը շատ գլխացավանք պատճառեց խեղճ օտարականին. պամիդորին էլ լոլի՞կ կասեն։ Գյուղի երեխաների բերանն ընկավ այդ լոլիկը և ուր գնում էր, ետևից կանչում էին.

— Լոլի՜կ, լոլի՜կ, լոլի՜կ...

Բավական հալածեցին այդ լոլիկի համար, բայց ամենից անտանելի հալածանքն սկսվեց այն օրից, երբ Տիգրանը պահանջ զգաց գովելու իր հայրենիքի սեխն ու ձմերուկը։

— Տիգրիսի ափին բոստան ունեինք, անանկ ձմերուկ կաճեցնեինք, որ ուղտը երկու հատ հազիվ կտաներ...

Ու հեքիաթներ էր պատմում Տիգրանը Տիգրանակերտի վիթխարի սեխ ու ձմերուկի մասին։ Նրա ասելով, այդ երկրի խանութներում ձմերուկը վաճառվում էր շերտերով։ Կտրում են մի շերտ, կշռում մի 10—15 հոխա և տալիս «մուշտարուն»։ Է՛, կտրած ձմերուկը տանե՞լ կլինի։ Դրա միջոցն էլ են մտածել մարդիկ. ձմերուկը գնելու համար տնից միշտ երկու հոգի էր գնում շուկա, որպեսզի ամեն մեկը շերտի մի ծայրից բռնի... Այնքան մեծ ձմերուկ է պատահում, որ նրա մի շերտը մի փոքր նավակի չափ է լինում, ամեն մեկը մի ծայրը դնում է ուսին և այդպես տուն են տանում։ Ինչպես նավակը կտանեին...

— Տակառի չափ էին մեր ձմերուկները։ Կնստեինք վրան, ոտներնիս գետին չէր հասնի,— ասում էր Տիգրանը։

— Պա՜...— զարմացած լսում ու զարմացած բացականչում էինք մենք։

Բայց բոլորն էլ մեր գյուղում հո մեղ նման միամիտ չէին, որ ամեն հեքիաթի հավատային։

— Փչում է անիրավը, ո՞նց է փչո՞ւմ,— ասում էին նրա մասին։

— Փչում չի՛, է՞, քամի ա անում,— ուղղում էր մեկը։

— Թի՛փի ա, թիփի, հո մարդ չի...

Լսում էր Տիգրանը ու վշտացած ասում էր.

— Ա՜խ, ինչ անեմ, որ աչքներովդ տեսնեք։

— Դու տեսել ես, հերիք ա էլի... Ադա՛, Տիկո՛, որ էդքան մեծ ձմերուկներ կան ձեր երկրում, էլ ինչի՞ եք տուն շինում, էնա ձմերուկի մի կողքից դուռ բաց արեք, մեջը դուրս տվեք կերեք ու մտեք մեջը ապրեցեք, էլի,— մի անգամ մեջ մտավ մեր գյուղի Մասխարա Խեչանը։

Հոհոում էին խեղճ օտարականի վրա ձմերուկ չտեսած այդ սարեցիք, իսկ նա վիրավորվում էր ու լռում։

— Էդ տեսակ տունը հեչ կաթիլ չի,— լրացրեց Խեչանը, որ այդ անձրևոտ օրերին կաթիլքից քուն ու հանգիստ չուներ։

Մի օր Տիգրանը աշխատում էր մեր կալում։ Հայրս հարցրեց.

— Քո ասելով ձեր ձմերուկի կլեպը, ուրեմն, էս կամի չափ պիտի լինի՞։

— Այո, այո, ուղիղ այդ կամի չափ,— լրջորեն հաստատեց Տիգրանը։ Հայրս թերահավատությամբ շարժեց գլուխը։

Այդ առիթ եղավ, որ Տիգրանը նորից խոսի իր սիրած նյութի մասին։ Զարմանալի վառ կերպով նա նկարագրեց Տիգրանակերտի շուկան՝ տոնավաճառի օրերին։ Բլուրներով վեր են բարձրանում սեխի ու ձմերուկի կույտերը և ողջ շրջակայքը հագեցած է սեխի աննման բույրով։ Լեռներից քրդերն են իջել, իրենց գույնզգույն հագուստները հագած, գլխներին և մեջքներին մեծաքսե «փուշիներ» կապած։ Ձիերը բարձած բերել են տկերով յուղ, մոթալ պանիր, սուրոներով ոչխար։ Միրգ պիտի տանեն սար, բայց ստիպված պիտի բավականանան փոքր ձմերուկներով, որովհետև խոշորները սար տանելու հնար չկա...

Ուրի՛շ են դաշտի արաբները, նրանք աժդահա ուղտեր ունեն։ Ահա շոքեցրել են ուղտին և հինգ-վեց հոգի վրա թափված՝ չվաններով կապկպում ու նրա մեջքին հարմարեցնում են Տիգրանակերտի վիթխարի ձմերուկներից երկուսը։ Այո, ուղտը հազիվ երկուսը տանի՝ ամեն «թայը» մի հատ։ Շատ ուժեղ ուղտ պիտի լինի, որ տերը համաձայնի երրորդ ձմերուկը դնելու այն երկու թայերի մեջտեղը,— այդ արդեն դարձավ մի սայլի բեռ...

— Պահո՜...

www.a-pdf.com

— Հապա ի՞նչ կկարծեք, նրան Տիգրիս կասեն, գիտե՞ք ինչ կբերի Տիգրիսը լեռներից·

— Ի՞նչ։

— Տիղմ... Տիղմ կբերի, որ ոսկի է...

— Գիտնական բալա, տիղմը ո՞րն ա, հո տիլը չի,— ուզում է գլխի ընկնել հայրս։ Ես ամաչում եմ նրա փոխարեն ու հաստատում եմ, որ տիղմը տիլն է։

— Այդ տիղմը կզորացնե մեր սեխն ու ձմերուկը,— ասում է Տիգրանը և պատմում է, թե ինչպես են մարդիկ օգտվում Հայկական բարձր լեռներից բերված այդ տիղմից։ Նրա մեջ խրամատներ են փորում, խոնավ հատակին թաղում սերմերը։ Տիգրիսը վարարած ժամանակ պղտոր ջրով է լցնում այդ խրամատները։ Ապա երբ ետ է քաշվում, խրամատների հատակին, խոնավ տիղմի մեջ ծլում են սերմերը ու հետզհետե փարթամ կանաչով են լցնում խրամատները ու դուրս սողալով նրանցից՝ փռվում են Տիգրիսի ավազների վրա։ Ու բերքով է լցվում Տիգրիսի բերրի ափերը, վարունգներ են բուսնում ամեն մեկը մի արշին երկարությամբ, իսկ սեխի բույրը բարձրանում հասնում է լեռները, քուրդ քոչվորներին։

Պատմում էր Տիգրանը մեղմ թախիծով ու ես պատանու իմ զգայուն հոգով զգում էի, որ ծուխ է ելնում նրա մորմոքված սրտից։

Տիգրանակերտի սեխն ու ձմերուկը...

— Ա՜խ, երկի՜ր, երկի՜ր,— մղկտում էր Տիգրանը և արցունքներ էին երևում նրա թախծոտ աչքերում։

2

Տիգրանակերտցի Տիգրանը մեզ հետ խոտ էր հնձում մեր Ղանձլկուտ սարում։ Սովոր չէր գերանդու հնձին, վատ էր «գերանդի քաշում»։

— Մերը մանգեղն է, մենք գերանդին չգիտենք ինչ բան է,— արդարանում էր նա ու ամեն գերանդին վրա բերելիս բարալիկ ու ջղուտ վիզը ձգում էր տանջալի։

Գյուղից բոզ ձին հեծած սար եկավ այն մարդը, որի համար հունձ էր անում տիգրանակերտցի Տիգրանը։

Ստուգեց իր մշակների կատարած աշխատանքը, թավ բեղերի տակ մռտաց, խոժոռ նայեց Տիգրանին։

www.a-pdf.com

— Գոմեշների փայը թողնում ես, բա՛ռեկամ։

Տիգրանը կուլ տվեց։

— Ադա, բոստանչի, բա էսպես կհնձե՞ն...

Ձիուց իջավ, ձեռքից գերանդին խլեց, բոի մեջ թաթեց ու թափով սկսեց։ Ու այդ ժամանակ նրա հաստ վզի երակներն էլ ուռան, թշերն էլ փքվեցին, աչքերն էլ լցվեցին արյունով։ Կուշտ ապրած մա՛րդ, էն էլ սարի փափուկ խոտ, փնչոցով առաջ էր գնում շիքը լայն դրած...

— Էսպես կհնձեն, հա՛... Բոստանը չի, է՞, որ կորիզը տընկես, շվաքում քնես, վեր կենաս տենաս ձմերուկը էն խոտի կիտուկի չափ ա դառել...

Ու հռհռաց իր սրամիտ խոսքի վրա։ Տիգրանը ամոթահար ու կարմրած լռում էր։

— Հա՛, Տիկո՛, կիտուկ ասեցի, միտս ընկավ։ Ուրեմն ձեր երկրի ձմերուկները էս կիտուկների պես էի՞ն...

Ու ցույց տվեց Ղանձկուտի լանջին վիթխարի փափախների նման այստեղ-այնտեղ դրված խոտի բլրակները։

Տիգրանը դարձյալ լուռ էր։

Մշակներից մեկը շողոքորթեց, թե՝

— Աթո ամի, էդ կիտուկները ձմերուկի նման չեն, եմիշի են նման. ոնց որ պոչների վրա տնկած եմիշներ...

— Հա՛, հա՛, հա՛, իսկական Տիկոյի բոստանի եմիշներն են... Ադա՛, Տիկո՛, դու մեզ խոտակերի տեղ ես դրե՞լ,— հանկարծ լրջացավ Աթոն ու զայրացած ցուլի նման կնճռոտ աչքերով նայեց տեղում լուռ եփվող օտարականին։— Ուրեմն քո կարծիքով մենք խոտակեր ե՞նք, որ ամեն սուտ փչես ու մեզ վրա ծիծաղես,— որոտաց նա ու վրդովված առաջ եկավ։

— Ես իմ կյանքի մեջ սուտ խոսած չկամ,— արժանապատվությամբ պատասխանեց Տիգրանը։— Եվ ես կապացուցեմ, որ ճշմարիտը կխոսեմ...

Ասաց դառնացած, շուռ եկավ ու հաստատուն քայլերով գնաց դեպի գյուղ։

— Իի՛ե՛... նեղանալ էլ գիտի՞... Քնձռոտ բոստանչի,— ետևից շպրտեց ամբարտավան հարուատը։

— Գնաց ապացուցի... Ասա ո՞նց ես ապացուցելու, տո քնձռոտ, գնալու ես Տիգրանակերտից ձմերուկը շալակես բերես մեզ նշանց տա՞ս... Ու ոնց էլ բերելու ես, ախր ձեր ձմերուկների երկուսը մի դավի բեռ ա.... Հա՛, հա՛, հա՛...

www.a-pdf.com

Ու դարձավ իր հնձվորներին.

— Ինչ եք պելվել, գործ արեք, հրե քամակը մթնում ա...

Ու այդ օրվանից տիգրանակերտցի Տիգրանը անհետացավ։ Նույնիսկ գյուղ չէր մտել, հանդերով իջել էր Դիլիջան ու այնտեղից թե ուր էր գնացել, ոչ ոք չիմացավ։

Ուղիղ մի տարի անց, 1916 թվականի աշնանամտին գյուղում լուր տարածվեց, թե տիգրանակերտցի Տիգրանը ետ է եկել։

Իրոք նրան տեսան գյուղի կենտրոնի հրապարակի քարին նստած։ Հագուստը նույնն էր, բայց ավելի մաշված և ճամփի փոշին վրան մաղված։ Ավելի էր նիհարել ու սևացել։ Հոգնած էր ամբողջ տեսքը, միայն սև աչքերն էին խորհրդավոր փայլում։

— Որտե՞ղ էիր, Տիգրան,— ձեռք էին տալիս ու հարցնում գյուղացիները։ Շատերը նույնիսկ ուրախացել էին նրան տեսնելով,— իսկապես, ինչ վատ բան էր արել այդ մարդը։

— Երկիր էի գնացել,— անտարբեր պատասխանում էր Տիգրանը։

— Երկիրը ո՞րն ա, Տիգրանակե՞րտ...

— Հրամանքդ...

— Էստեղից շատ ա հեռո՞ւ...

— Շա՜տ...

— Ոտով ես գնացե՞լ...

— Չէ, տո՜, Աթոն իրեն բոզ ձին տված կլինի։ Է՜ն խիզճը, որ նա ունի, կթողնի՞, որ իրեն հնձվորը ոտով ճամփա գնա...

Տիգրանը զարմացած նայեց այս բառերն ասողին. առաջին անգամ էր իր օգտին խոսք լսում այս գյուղում։

— Ոտով գնալը՝ ոչինչ, մարդուս սի՛րտը վիրավոր չլինի,— դառնացած ասաց նա։

— Եղո՞վ, Տիկո՛, ձմերուկներդ տեսա՞ր,— հարցրեց մեկը ծիծաղելով։

— Տեսա։

— Էլի առաջվա չափ մեծ ե՞ն։

— Ավելի մեծ են,— լսվեց անտարբեր պատասխանը։

— Գոմշի չափ կլինե՞ն...

— Աթոյի կիտուկների չափ,— լրջորեն պատասխանեց Տիգրանն ու հանկարծ կարմրատակեց, նիհար վզի երակներն ուռան, սև աչքերը փայլատակեցին։

— Հավաքեցեք գյուղը,— որոտաց նա անսովոր ձայնով։— Բոլորդ էլ հավաքվեցեք... Թող այն մեծամիտ մարդն ալ գա...

www.a-pdf.com

Ես հիմա կապացուցեմ բոլորիդ, որ ես ճշմարտախոս մարդ եմ...

Գզիր Փիլոյի համար հետաքրքիր գործ բացվեց։ Բարձրացել է կտուրն ու գոռում է.

— Այ գեղացի՜ք, հավաքվեցե՜ք, Տիկոն Տիգրանակերտից ձմերուկ ա բերել, հավաքվեցե՜ք...

Ով գյուղում կար՝ հավաքվեցին գյուղի հրապարակը։

— Բա ո՞ւր ա ձմերուկը...

— Բա ինչո՞վ ա բերել...

Իսկապես մեջտեղը ոչ մի ձմերուկ էլ չկար, միայն հոգնած ճամփորդ էր, իր հին մախաղով, որի մեջ ինչ-որ բան կար՝ երևի ճամփի պաշարն էր։

Երբ բոլորն էլ հավաքվել էին, գզիր Փիլոն դարձավ ճամփորդին.

— Դե ձմերուկներդ ցույց տուր...

— Աթոյին կանչեցեք՝ անոր պիտի ցույց տամ։ Անոր մեկ հատիկ խոսքին համար երեք ամիս ոտքով ճամփա եմ գնացել... Խոսք չէր... դանա՛կ էր, թո՜ւյն էր...

Այս ի՞նչ է, արտասվո՞ւմ է Տիգրանը...

Աղմուկը դադարեց, լրջացան։

— Ադա՛, Տիկո՛, Տիգրանակերտի բոստանդ ո՞նց ա,— լսվեց Աթոյի բամբ ձայնը, և մենք նկատեցինք, որ մարդը նստած տեղում ցնցվեց այդ անախորժ ձայնից։

— Բոստանս իր տեղն էր, Աթո աղա, բայց էլ մերը չի, թուրքինն է։

— Հաա՞,— հեգնեց Աթոն։— Ուրեմն թուրքը ձեր քաղաքն էլ ա վեր կալե՞լ... բոստաններն էլ հե՞տը...

— Վերցրել է, հրամանքդ... Վերցրել է, մարդկանց կոտորել, իսկ ձմերուկներին ձեռք չի տվել...

— Հա՜ա... էդ լավ ա, որ ձմերուկին ձեռք չի տվել,— հավանություն տվեց Աթոն։— Հիմի նստոտած են մեր եղների նման։

— Եղների չափ չեն, ավելի խոշոր են, աղա... Քո խոտի կիտուկների չափ են...

Զգում ենք, որ լուռ պայքար է գնում երկու ախոյանների միջև ու սպասում ենք, թե ինչով կվերջանա այդ պայքարը։ Ասենք, ինչով պիտի վերջանա որ... մեկը աղքատ, վտիտ, անտուն ու օտարական, մյուսը՝ փորը պարարտ, աչքը յուղակալած, ձայնը հզոր... Եվ ահա այդ մարդը, որը շարունակ իրեն շրջապատողների քծանքն է տեսել, հիմա կանգնած է մի վտիտ գաղ-

www.a-pdf.com

թականի առաջ, որը նշաններից երևում է, որ նույնիսկ արժանապատվություն էլ ունի, նույնիսկ հեգնում է իրե՛ն, իր կիտուկները... Այո՛, այո՛, երբ այդ փսլնքոտն ասում է՝ Տիգրանակերտի ձմերուկները քո կիտուկների չափ են, աշկարա Աթոյի խոտի դեղերն է ծաղրում։ «Ուրեմն իմ էն ահագին կիտուկները սրա աչքին ձմերուկից էլ են պուճո՞ւր»,— վիրավորված իրեն-իրեն եփում էր Աթոն։ Ու հիմա իր խոտի կիտուկների անունը լսելով, խայթվեց ու հանկարծ զայրացավ։

— Ադա,— ասաց,— դու էլի մեզ ձեռ ես առնո՞ւմ, տո գաղթական շան որդի։

Ու վրա քշեց։

Մարդիկ բռնեցին նրա թևերից։

— Նահլաթ քեզ, չար սատանա...

Իսկ Տիգրա՞նը։ Օ՜, այնտեղ պիտի լիներիք, տեսնելու նրա լուռ զայրույթը, որ ճնշված էր կամքի փականքների տակ։ Եփվում էր այդ մարդը, բայց անձայն, առանց խլթխլթոցի, առանց գոլորշի արձակելու...

Անզոր ատելությամբ նայեց իր հակառակորդին ու տեղից վեր կենալով գոչեց.

— Մեյդան բացեք, հիմա ես պիտի ցույց տամ, թե ինչ է Տիգրանակերտը և թե, դո՜ւք, հայե՛ր, ի՞նչ եք կորցրել...

Զարմացած ետ-ետ քաշվեցինք. ինչը պիտի ցույց տա, ո՞ւր է ձմերուկը։

Մարդու շուրջը փոքրիկ հրապարակ բացվեց։

— Կապացուցես... կուտես, որ կապացուցես,— վիրավորված մոթմոթում էր Աթոն և չարության կայծեր էին խաղում նրա կլոր աչքերում։

— Ժողովո՛ւրդ, հայե՛ր,— գոչեց Տիգրանը փոքրիկ հրապարակի կենտրոնում կանգնած։— Երեք ամիս ես ճամփա գնացի, որ բերեմ իմ դրախտ հայրենիքիս բերքը, բայց չկարողացա, ուժերիցս վեր էր։ Թաքուն շրջեցի Տիգրիսի ափին,— թաքուն, քանի որ թուրքի արյունոտ յաթաղանը կտիրապետի հոն...— Գիշերները լսեցի իմ Տիգրիսի մրմունջը, ցերեկով պահվեցի իմ հոր բոստանի մեջ և ամեն թփից կարոտս առա...

Մենք արցունքներ նկատեցինք թախիծով լի նրա աչքերում։

— Խեղճ մարդ,— լսվեց կարեկցական մի ձայն, ապա մեկը գոռաց.

— Ադա տազ արեք, մի տենանք ինչ ա ասում, է՞...

www.a-pdf.com

Քրթմնջոցը դադարեց։

Մարդը շարունակեց լցված սրտով.

— Հարաղատներիս չտեսա. կոտորել էին անոնց... քշել էին Արաբական անապատը...

— Գլուխս մի՛ ուռացնի, դու ձմերուկի մասին խոսի...— լսվեց Աթոյի բիրտ ձայնը։ Իրոք, նոր միայն մենք զգացինք, որ բիրտ և անզգա է այդ մարդը։ Ուշքի եկանք այդ ձայնից և զգացինք, որ մենք էլ այս կամ այն չափով բիրտ ենք վարվել այս վշտոտ մարդու նկատմամբ։

— Այո՛, ձմերուկի մասին պիտի ասեմ, մարդն ի՞նչ է որ,— տնքաց Տիգրանը։— Ձմերուկ բերելու էի գնացել, բայց Տիգրանակերտի ձմերուկը քո կիտուկի չափ է, աղա Աթո, բերել չի լինի,— դիտավորյալ շեշտեց մարդը։— Այն ժամանակ ես հարմար համարեցի սեխ բերել, որ ձմերուկի եղբայրն է։

Այս ասելով, նա բացեց իր ճամփորդական տոպրակի բերանը և նրա միջից մի փաթեթ հանեց։

— Էդ հո կաշի է... փաթաթած կաշի,— ձայնեց մեկը։

— Այո՛, կաշի է՛, Տիգրանակերտի սեխի կաշին... Ճամփա բացեք, հիմա դուք կտեսնեք այդ կաշվի մեծությունը...

Եվ գետնին դրեց փաթեթը, գլորելով ետ տվեց, հասարակության առաջ փռեց մի շերտ սեխի շորացած կեղևը...

— Պա՞... ադա էդ եմիշի կլեպ ա՞...— զարմացած գոչեց մեկը։

Փռեց կեղևը և զայրացած քայլեց նրա երկարությամբ. երկարությունն էր չափում, որ երեք քայլ դուրս եկավ, մի մեծ գոմշի կաշվից ոչ պակաս։

— Աղա Աթո, եկուր հոս, սա սեխին կեղևով բոյդ չափենք, տես իմ երկրի սեխը քո հասակից երկար չէ՞...

Ծիծաղն ընկավ։

— Համա ուտացրեց, հա՞...

— Այ տո՜ւր...

Աթոյի հաստ վզի երակները նորից ուռան. պատասխան էր փնտրում, բայց զայրույթից մի պահ մնաց կարկամած։

Իսկ օտարականը նայեց մեզ և՛ հաղթական, և՛ դառնացած, և՛ վշտով։ Ապա փուլ եկավ, նստեց քարին և նրա նիհար ուսերն սկսեցին ցնցվել։

— Ի՞նչ եք կորցրել, հայե՛ր... Գիտե՞ք ինչ եք կորցրել,—

www.a-pdf.com

մրմնջում էր նա արցունքի միջից։— Տիգրանակերտ եք կորցրել ու... ու կխնդաք...

Մենք քարացել էինք, նույնիսկ գոռոզ Աթոն վիրավորանքը կուլ էր տվել ու սկվել։

Եվ հեկեկում էր տիգրանակերտցի Տիգրանը անմռունչ, և նրա առաջ դագաղի նման մեկնված էր իր հոր բոստանից բերված սեխի մեռած կեղևը։

Միակ հիշատակը Տիգրիսի ափերից...

ՈՍԿԵՀԱՏԸ

1

Մեծ հաճարենու տակ խարույկ էինք վառել և նրա շուրջը բոլորած չորացնում էինք մեր թրջված հագուստները։

Անտառի կանաչ բացատում անձրևի տակ կանգնել էին մեր անասունները և նրանց վրայից գոլորշի էր բարձրանում։

Նոր տերևակալած հաճարենին մեղ վատ էր պատսպարում տեղատարափ անձրևից. մինչև լանջդ չորանում է, թիկունքդ է թրջվում, և մենք շարունակ շուռումուռ էինք գալիս ծառի բունն ի վեր ելնող բոցերի դիմաց, որ բոլոր կողմերից չորանանք։

— Հրե Բեղլո Արթինն էլ եկավ։ Կգաս բա՞, կրակը կբերի,— ասաց մեր ընկեր Մովսեսը՝ անտառի խորքը ցույց տալով։

Ջվալը վեղարի նման գլուխը քաշած, միջակից քիչ ցած հասակով մի մարդ մոտեցավ կրակին, «Բարի աջողում» ասաց ու շեքը բոցերին դեմ անելով՝ մի սրտալի «օխայ» արավ։ Նրա արտասովոր երկար բեղերից անձրևաջուր էր կաթում։

— Կրակը մուրազ է, մուրա՛զ,— խորին բավականությամբ ասաց նա և գլխից ջվալը հանելով՝ շուռ եկավ թիկունքը դեմ արավ խարույկին։

Ապա նստեց ջվալին, տրեխները հանեց և թաց ոտքերը մեկնեց կրակին։

— Երկնքի փորը պատռվել է,— գլուխն օրորելով նորից կարծիք հայտնեց «Բեղլո Արթինը», ապա դիմեց մեզ.— Ի՞նչ եք կարծում, այ ջահելներ, անձրևը գիշերս էլ կգա՞, թե՞ կկտրվի։

Ի՞նչ ասեինք։

www.a-pdf.com

— Թող գա, ինչ կա որ։ Ինչքան շատ գա, խոտն էնքան շատ կլինի,— պատասխանեց Մովսեսը։

— Է՜, դու էլ ինչի՞ մասին ես մտածում։ Իմ սիրտը սևակնել է, թե հիմա ուր որ է տունս փուլ է գալու, դու խոտից ես խոսում...

— Ինչի՞ պիտի փուլ գա որ։

— Ինչի՞ չպիտի փուլ գա որ,— սրտնեղած հարցրեց Բեղլոն։— Վերի պատը ուռել է, հողը թացանում-վերևից հուպ է տալիս պատին, ինչի՞ չպիտի փուլ գա որ...

Հասկացանք։ Որ հողը «հուպ է տալիս», և պատն էլ ուռել է, իհարկե փուլ կգա։

Մենք՝ հին գյուղի տավարածներս, հասկացանք, որ մեծ վտանգ է կախված մեր հարևան Բեղլո Արթնի ընտանիքի գլխին, բայց ընթերցողը չհասկացավ, որովհետև չգիտի, թե ի՛նչ հողի վրա և ինչպե՛ս էին կառուցված այն ժամանակ մեր գյուղի տները։

Հիմա բացատրեմ։

Մեր գյուղը լեռան թեք լանջին է տեղավորված և ոչ մի կտոր հարթ տեղ չունի։ Տուն շինելիս լանջը բահով-քլունգով կտրում էինք, հավասարեցնում և տան թիկունքի պատը շարում այդ կտրվածքն ի վեր։ Այսպիսով, առաջին կողմից տունը բաց էր, պատը բարձր, իսկ ետևի կողմից պատ չէր երևում, և կտուրի պռունկը հավասարված էր լանջին։ Այնպես որ, եթե անծանոթ մարդը մեր գյուղի վերին լանջից ցած իջներ, չէր հասկանա, որ իր առաջ տուն կա։

Քար չկա մեր գյուղում, ինչքան քանդես՝ փափուկ սևահող է կամ շեկ կավ։ Ծծվում է անձրևաջուրը այդ կավի մեջ, ցեխ դառնում երկրի ընդերքում ու մեկ էլ տեսար հողը «փախավ»։ Այսինքն՝ ներքևից պատռվում և հոսում-ձորն էր լցվում երկրի ներսում կուտակված ցեխաջուրը և երկրի մակերեսից մի կտոր տարածություն նրա հետ ցած էր գնում կամ ուղղակի տեղն ու տեղը նստում էր։ Երբեմն այդ ստորերկրյա ցեխաջուրը հուպ էր տալիս տան թիկունքի պատը փլցնում, երբեմն տունն էլ հետը իջնում էր և հիմքը, խախտված շենքի պատերը ճաքճքում էին։

Ով միջոցներ ուներ, իր տան ետևը փորում էր, հողը դուրս տալիս, միջանցքի նման նեղ տարածություն էր բացում տան ետևը և պատն ազատում իրեն ճնշող հողից ու խոնավությունից։ Իսկ ով մեր հարևան Բեղլո Արթնի նման սակավազոր էր, նայում

www.a-pdf.com

էր իր տան բորբոսնած պատին ու ինքն իրեն հույս տալիս, թե՝ գյուղում ինչքա՞ն տներ կան, որ դեռ չեն փլվե՞լ, և ո՞վ գիտի իր տունը կփլվի՞, թե՞ անտեղի է ինքը անհանգստանում։

Այդպես, Բեղլո Արթինն էլ, մեր գյուղացիներից շատերի նման, տարիներ շարունակ իրեն օրորել էր այն հույսով, թե պարտադիր հո չի՞, որ իր պատն անպայման փլվի։ Բայց երեկ երեկոյան, երբ հանդից տուն էր վերադարձել, կինը դեռ շեմքում երկյուղով հայտնել էր, թե տան թիկունքի պատը ուռել է. «Մի հնար պետք է անել, թե չէ երեխանց գլխին փուլ կգա, տնաքանդ կլինենք...»։

Ինչ աներ այդ ձախորդ օրերին Արթինը։ Տարվա այն պահն էր, երբ մեր գյուղի աղքատ մարդկանց ամեն ինչը վերջացած էր լինում՝ խոտն էլ, հացն էլ, յուղն ու պանիրն էլ, ձավարն էլ, իսկ ձմեռը նիհարած անասունները հազիվ էին ոտքի վրա կանգնում և հազիվ էլ կերակրում էին իրենց նորածին ձագերին։ Դե Արթինը իր նիհարած անասուններին հա՞նդը տաներ, երեխաների համար հա՞ց ճարեր, թե՞ այդ ուժասպառ վիճակում բահը վերցներ ու անձրևներից ծանրացած հողը փորեր-դուրս տար իր ուռած պատի ետևից։ Այդքան հողն իսկի դուրս տա՞լ կլինի. հինգ մշակ քսան օրում հազիվ էին մեր հարևան Սերգոյի տան ետևը բացել, Բեղլո Արթինը հասած տղա չունի թիկունքում, հղի կինն էլ հազիվ փոքրիկ Հրանտին է խնամում ու աղջկա՝ Ոսկեհատի, «ոտ ու ձեռը կարգի բերում», դպրոց ուղարկում, ի՞նչ անի Բեղլո Արթինը։

Եվ նա մի գերանի ծայրը հենել էր պատի ուռած տեղին, կնոջն էլ սիրտ էր տվել, թե՝ «Բան չկա, անձրևը կտրի, հողը չորանա՝ կամաց-կամաց կքանդենք դուրս կտանք»։

Հիմի մեծ հաճարենու տակ, կրակի մոտ իր թաց ջվալին նստած՝ մեր հարևան Արթինը ահը սրտում մտածում էր՝ պատը կդիմանա՞, թե ոչ։

— Պակասության տերը մեռնի, պակասությունը թողնո՞ւմ է աշք բաց անենք,— տնքաց նա և սկսեց տրեխները հագնել, որ գնա անասունների կողմը։

— Քեռի՛, մի քանի շաբաթ մենք ձեր տավարը կպահենք, դու ետ ընկիր պատիդ ետևը փորիր,— անկեղծորեն առաջարկեցի ես։

— Է՛, քո պահած տավարն ինձ ուտի... Դու կով պիտի պա-

www.a-pdf.com

Հե՞ս, որ Ղալմանց Արթինը կթի-ուտի,— կատակի տվեց նա ու իր պոպոզավոր ջվալը գլխին հագցնելով՝ գնաց անասունների կողմը։

2

Հաջորդ առավոտյան նորից անձրև էր տեղում։ Երբ դադարեց, անասունները դուրս հանեցինք գոմից, որ հանդ տանենք։ Մեր հարևան Արթնի կինը՝ Գեղեցիկը, սրահով դեպի գոմն էր գնում կռացած, որ գլուխը առաստաղին չառնի. նա վիթխարի հասակ ուներ և թիակների նման մեծ-մեծ ձեռներ։ Ամուսնու գլուխը հաղիվ իր ուսերին էր հասնում, դրանից էլ ամաչում էր Գեղեցիկ քեռակինը և ուրիշների ներկայությամբ խուսափում էր ամուսնու կողքին կանգնելուց։ Ինչ վերաբերում է Արթնին, նա անկեղծորեն պարծենում էր իր հսկա կնոջով.

— Մարդ էսպես կնիկ պիտի ունենա, որ աժդահա երեխեք բերի,— ասում էր նա։— Մենակ մի բանն է վատ, որ պճեղներիս վրա կանգնում եմ ու ինչքան վիզս ձգում՝ դունչս շարմաղ երեսին չի հասնում...

Ասում էր ու շեկ բեղերի տակ ծիծաղում երջանիկ։

Իսկապես աժդահա երեխաներ ուներ Գեղեցիկ քեռակինը։ Ահա սրահում կաթիլքի տակ տաշտ է դնում նրա յոթնամյա աղջիկը՝ Ոսկեհատը։ Դպրոցական տարվա սկզբին նա առաջին նստարանին էր նստում և իր լայն թիկունքով փակում ետևում նստած երեխաների առաջը։ Ստիպված տեղափոխեցին վերջին նստարան։ Մեծ-մեծ խորունկ աչքերով, ճերմակ մորթով, խոշոր արարածներին հատուկ դանդաղ շարժումներով մի աղջիկ էր Ոսկեհատը։

— Աղջի՛, դպրոցից ուշացար, ի՞նչ բանի ես,— խստությամբ դիմեց մայրը։

Այդ պահին խրճիթից ոտաբոբիկ մի թմբլիկ երեխա դուրս պրծավ ու փաթ ընկնելով, կարծես գլորվելով, հասավ քրոջն ու նետվեց նրա գիրկը։

— Կաց մի Հրանտիկի հետ մի քիչ խաղ անեմ, ես սրա ցավը տանեմ...

Մոայլ սրահը մանկական ուրախ կանչերով լցվեց և կարծես պայծառացավ։ Իսկ Գեղեցիկ քեռակինը գոմի շեմքին կանգնած՝ խանդաղատանքով նայում էր իր բալիկներին, և նրա մայրա-

www.a-pdf.com

կան կուրծքը ուռչում էր բերկրանքից։ Դրանք են, ուրիշ ի՞նչ միխիթարություն ունի նա հոգսերով լիքն այս աշխարհում...

Ես ու իմ ընկեր Մովսեսն էլ տան առաջին փոքրիկ կալում կանգնած, մեր մահակներին հենված՝ նայում էինք երեխաների խաղին ու սպասում, որ Արթին քեռին տնից դուրս գա, միասին հանդ գնանք։

— Ձեր արևն ապրի, մի դեսն եկեք,— դիմեց մեզ Գեղեցիկ քեռակինը և, իր խրճիթի դուռը բացելով՝ մեզ ներս հրավիրեց։

— Բա սա բա՞ն է, բա էստեղ մա՞րդ կապրի,— ցույց տվեց նա ուռած պատն ու նրան դեմ արած ահագին գերանը, որի մի ծայրը շեմքափայտին էր հենված, մյուսը՝ պատին։— Ա՛յ մարդ, ասում եմ, ուժդ չի՞ պատում տունը փուլ գալուց ազատես, գոնե գնանք հերանցս տուն մի քանի շաբաթ յոլա գնանք, մինչև էս կաթիլքը կտրվի։

Կաթի՛լքը... ընթերցողը ապրե՞լ է մեր անձրևոտ Լոռու կամ Ղազախի խարխուլ խրճիթներից մեկում, որ իմանա ինչ բան է կաթիլքը։ Պառկում ես թախտի վրա, մեկ էլ՝ ծը՛լթ՝ աչքիդ մեջ։ Կավե ամանով ապուր են դնում առաջդ, մեկ էլ՝ ծը՛լթ՝ ամանի մեջ։ Փափախդ վերցնում ես, մեկ էլ՝ ծը՛լթ՝ գագաթիդ։

Ի՞նչ էլ տռուզ կաթիլներ են, մե՞ծ, ծա՞նր...

Որ օճորքի սևացած գերանից պոկ է գալիս ու շրպպոցով խփվում հողե գետնին, ցեխի ցալքուններ են թռչում դես-դեն, ու հատակին փոքրիկ փոսեր են փորվում։ Ահա Արթնի խրճիթի առաստաղին շարվել են հարյուրավոր այդպիսի կաթիլներ, որոնք հետզհետե ուռչում են, մեծանում ու հերթով ցած գալիս...

Շատ աներես ու շատ ձանձրացնող բան է այդ կաթիլք կոչվածը, որ գարնան և աշնան տանջում էր մեզ։

Կաթիլքից խրճիթում բորբոսի հոտ էր տիրում։ Առաստաղի ոսխտակների ճեղքերին մանր սունկեր էին բուսել։ Խրճիթի կիսամութի մեջ այստեղ-այնտեղ՝ պատերի տակ, թախտերի վրա՝ կաղնու փայտից շինված կոպիտ պահարանի գլխին դրված էին տանտիրոջ ունեցած բոլոր տեսակի ու գույնի ամանները՝ կավե «քերեղաններ», կովկիթը, մի հին դույլ, երեխան լոգացնելու հին լագանը, մի քանի փայտե տաշտեր, որոնց մեջ՝ ը՛փ հա ը՛փ՝ կաթում էր անձրևաջուրը։ Իսկ խարխուլ պատի կենտրոնը ուռել-դուրս էր ընկել մի ահագին ստինքի նման։ Այդ պատն իր թիկունքի հողի ճնշմանը չէր դիմանա, որովհետև

www.a-pdf.com

Խրճիթը կառուցողները կրի և ավազի փոխարեն հարդ խառնած կավացեխ էին գործածել։

— Հազար ասացի՝ ա՛յ մարդ, առանց կրի պատ չի լինի,— գանգատվում էր քեռակին Գեղեցիկը։

Ամուսինը բարկացավ։

— Բա էդքանը մենք չե՞նք հասկանում,— ասաց նա սրտնեղած։— Կիրը ես որտեղի՞ց ճարեի։ Կիրը Ջարխեչումն է, դե գնա բեր...

— Բա Սերգոն ո՞նց բերեց։

— Ո՞նց բերե՞ց, շալակով բերեց։ Երկու գութան է լծում, հինգ սելով գնաց բերեց, դո՞ւ ինչով պիտի բերեիր, որ հիմի մեծ-մեծ խոսում ես։

Պակասության մեջքը կոտրի, պակասությունից ինչքա՞ն վեճեր էին առաջ գալիս մեր հարևանների տներո՞ւմ...

Խրճիթից դուրս եկանք։

— Բա ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, բա գոնե հերանցս տուն չգնա՞նք,— իր հարցը կրկնեց կինը։

— Կգնանք, էլի, հո էսօր փուլ չեկավ։ Ասա որ գնացիր, նրանց տանը տեղ կա՞, նրանցն էլ մերի օրին չի՞,— սրտնեղած պատասխանեց ամուսինը և գնաց անասունները դուրս հանեց գոմից։ Նրանց վրա էլ էր կաթել, մազները թաց էր ու խճճված։

— Լա՛վ, դե որ ես մարդ չունեմ, մենակ կփորեմ պատի ետևը,— զայրացած ասաց կինը և, բահը վերցնելով, ցույց տվեց իր ահագին բազուկները։— Էս կոներով կփորեմ, իսկ դու տավարի պոչը բռնի գնա։

Եվ վճռական քայլերով գնաց տան ետևը փորելու։

— Ապի՛, թութակ կբերե՞ս Հրանտիկի համար նվագեմ,— ծնողների վեճից անտեղյակ, սրահից եկավ և անմեղությամբ հորը դիմեց Ոսկեհատը։

— Հա, բալա ջան, կբերեմ, դու շուտ դասիդ գնա...

Ու մի առանձին քնքշանքով նա համբուրեց դստեր գլուխը՝ առանց կոանալու. դե կոանալու ինչ կարիք կար, աղջիկն արդեն իր հասակին էր...

— Բոյին մատաղ, մարա՛լ է, հո աղջիկ չի,— երջանիկ ժպտալով իր աղջկան ներկայացնում էր մեզ Արթին քեռին, կարծես մենք առաջին անգամ էինք տեսնում նրան։

Իսկ Ոսկեհատը իր մեծ-մեծ աչքերի անմեղ հայացքով մեկ

www.a-pdf.com

հորն էր նայում, մեկ՝ մեզ, կարծես հարցնելիս լինի, թե ինչ է մարալը և ինչու են համեմատում նրա հետ։

Ապա շուռ եկավ և վազեց սրահը՝ իր եղբայրիկի մոտ։

— Ցավդ տանեմ, ոտներդ կմրսեն, տուն գնա...

3

Ինչպե՞ս մոռանամ ես այն ահավոր, այն մռայլ գիշերը...

Նավթ չկար, որ ճրագը վառենք։ Ես ու Մովսեսը մթնում նստել էինք մեր տանը, իսկ պատուհանի տակ շփշփում էր գարնան հորդ անձրևը։ Երբեմն կայծակի լույսով կտուրից թափվող ջրերն էին երևում, իսկ կայծակից հետո այնպիսի խավար էր տիրում, որ մարդու սիրտ նեղվում էր։

Հանկարծ դրսից խուլ դղրդյուն լսվեց և թվաց, թե գետինը թեթև ցնցվեց մեր ոտքերի տակ։ Ա՞մպը գոռաց, թե՞ տուն փլվեց։ Շունչներս պահեցինք՝ ոչ մի ձայն։ Դուրս եկան՝ մեր դեմ վարար անձրևի վարագույրներն էին կախված սև երկնքից։ Կայծակի ցոլքին էինք սպասում, որ տեսնենք, ինչ վիճակում է մեր Հարևան Արթնի տունը, երբ չարագուշակ խավարից կանացի մի աղեկտուր ճիչ լսվեց.

— Վա՜յ, տունս քանդվե՜ց, երեխեքս մնացին գերանների տակ...

Այդ ձայնից մենք սարսափեցինք։ Հրեղեն լախտը ցոլաց ցած ամպերում, մի վայրկյան շրջակայքը լուսավորեց և այդ ակնթարթին մենք տեսանք, որ մեր հարևան Արթնի խրճիթը չկա, փռվել-հավասարվել է գետնին, իսկ նրա առաջ, փոքրիկ կալում ծնկներին տալով մի վիթխարի կին է վազվզում խելագար.

— Հասե՜ք, հասե՜ք, բալեքս քարերի տակ մնացին...

Ապա նորից խավարը ծածկեց ամեն ինչ, և երբ նորից լուսավորվեց շրջակայքը, բացվեց մեր մյուս հարևանի՝ Ներսեսի տան դուռը և այնտեղից տագնապահար դուրս պրծավ Բեղլո Արթինը։ Հասկացանք. երեխաներին թողել են քնած, իսկ իրենք Ներսեսի տունը զրույցի են գնացել...

Գոռում-գոչումով ամբողջ թաղը ոտքի հանեցինք։ Մի տեղից նավթ գտանք, շորեր թրջեցինք, փաթաթեցինք ձողերի գլուխն ու վառեցինք։ Կանայք այդ ջահերն էին բռնել, իսկ տղամարդիկ բահերով ու թիակներով ետ էին տալիս փլատակների հողը։

www.a-pdf.com

Գեղեցիկ քեռակինը դողացող ծնկները բռնած ճչում էր.

— Վա՜յ, բալեքս... վա՜յ, գառնուկներս... Զգույշ, կտրորեք բալեքիս... ձեզ մատաղ, զգույշ քանդեցեք, բահը երեխանցս չդիպչի...

Բեղլո Արթինը գլխաբաց կանգնել էր անձրևի տակ ու տընքում էր՝ սրտին դանակի հարված ստացած կենդանու նման։ Կանայք լաց էին լինում բարձրաձայն, և երբ ձայները դադարում էին, թշվառ մայրը դիմում էր փլատակներին ու կանչում.

— Ոսկի ջա՜ն, Հրանտիկ ջա՜ն, մի ձեն հանեցեք, է՜, այ ձեր մերը կուրանար, որ ձեզ էդ օրին չտեսներ...

Կանչում էր, ձեռքի նշանով պատվիրում էր ձայն չհանեն ու ականջ էր դնում։ Եվ երբ ձայն էր տալիս իր զավակներին և քար լռություն էր պատասխանում իր սրտակեղեք կանչին, գլխի մազերը փունջ-փունջ պոկոտում էր...

Հանկարծ մեկը ձայն տվեց.

— Ոսկեհատի շորը երևաց, տղե՛րք, հեռու կանգնեցեք։

Մի քանիսը դժբախտ մորը գրկեցին, որ ետ պահեն, իսկ մյուսները հողը ետ տվին։ Նախ աղջկա սրունքները բացվեցին, ապա՝ իրանը։ Շոշափեցին, ականջ դրին՝ շնչում էր։

— Վախիլ մի, Գեղեցիկ ջան, երեխեն կենդանի է,— ձայն տվեց մեկը, ապա խփեց իր ծնկանը։— Պա հո՜, գերանի ծերը երեխու սրտին է ընկել...

Վեր քաշեցին փտած գերանը, աղջկան դուրս հանեցին տակից և ջահերի լույսով մենք տեսանք, որ նրա շրթունքները սևացել են, դեմքը կապտել է լեղակի նման։ Մեր հարևան Ներսեսի ձեռքերի վրա նա թույլ շարժվեց, սրտի խորքից մի «ախ» դուրս թռավ և շունչը փչեց...

Դժբախտ ծնողներին ուժով տարան Ներսեսի տունը և շարունակեցին որոնել փոքրիկ Հրանտիկին։ Բացվեց կաղնի փայտից շինված կոպիտ պահարանը, որ թեքվել էր, գլուխը հենել պատի մնացորդին և իրենով ծածկել երեխայի թախտը։ Այդպիսով, այրի նման մի փուչ տեղ էր ստացվել թեքված պահարանի տակ և այդ խոռոչում մենք գտանք փոքրիկ Հրանտին իր մաշված անկողնում մուշ-մուշ քնած...

Ամբողջ կյանքումս չեմ մոռանա այն սրտաճմլիկ տեսարանը. ջահերի լույսն ընկել էր երեխայի դեմքին և աղետին ու արհավիրքին անտեղյակ ննջում էր նա՝ խաղաղ ու անմեղ ժպիտը սիրուն բերանի անկյուններում սառած...

www.a-pdf.com

Կանայք լաց էին լինում հուզմունքից, իսկ երեխան աղմուկից արթնացել էր և իր մեծ-մեծ աչքերով նայում էր մեզ, ջահերին, շուրջը թափված քարերին, տեղացող անձրևին և հավանաբար կարծում էր, որ երազի մեջ է։

Հևիհև տեղ հասավ մայրը, հափշտակեց իր ձագին և սեղմեց կրծքին։

... Այդ գիշեր ոչ ոք չքնեց մեր թաղում։ Հավաքվել էին մեր հարևան Ներսեսի տանը, ոմանք լուռ ողբում էին, ոմանք էլ մխիթարում էին անբախտ մորը.

— Ասծու դեմ ինչ կարող ենք անել, Գեղեցիկ ջան, աստած տվել էր, ինքն էլ տարավ...

Իսկ մայրը ծնկներին խփում էր ու մորմոքված սրտով ասում.

— Ասծու բան չկա, ձեզ մատա՜ղ, իմ բալին աղքատությունը տարավ։ Բա ինչի՞ Սերգոյի տունն էլ չի կաթում, բա ինչի՞ նրա պատը փուլ չի գալիս... Ասծու բան չկա... Նրա պատը կրով է պատած, նրա տան գլխին կրամիտից ծածկ կա, նրա տունն ինչի՞ պիտի փուլ գա որ...

Երբ անձրևները դադրեցին, բարի հարևանները հավաքվեցին և գյուղի ծայրին խրճիթ կառուցեցին Արթնի համար։ Բայց իր սիրասուն աղջկան կորցնելուց հետո օր-օրի ընկավ, ավելի փոքրացավ այդ փոքրամարմին մարդը։ Հանդում նստում էր մի քարի և տխուր բայաթի ասում ու կարծես աշխարհը դատարկվել էր նրա համար։

Այդ տարվա աշնան վերջին մեծ դեպքեր տեղի ունեցան մեր երկրում։

Հեղափոխությունը հաղթել էր, մեր գյուղի աղքատները հող էին ստացել, շունչ առել, նոր տներ էին կառուցում Դիլիջանի խճուղու վրա, բայց Բեղլո Արթնի սիրտը դեռ սեակնած էր։

— Իմ կյանքը խավարեց, երեխես ձեռիցս գնաց,— տրնջալով գանգատվում էր իր բախտից։

Այդպես քարշ տվեց նա իր վշտոտ կյանքը, և մի օր էլ անկողին ընկավ, մեռավ մեր հարևան Արթինը։

4

Այդ օրից շատ տարիներ էին անցել։

«Մաճկալ» թերթի խմբագրատանը ինչ-որ հարցի մասին հոդ-

www.a-pdf.com

Ված էի գրում, երբ առանձնասենյակիս դուռը բացվեց և ներս մտավ մեծ-մեծ աչքերով, կլոր երեսով, կարմիր թշերով և լայն ուսերով մի պատանի։

Բարևեց ու մնաց շեմքում կանգնած։ Հրավիրեցի նստել՝ հրաժարվեց։ Առաջ եկավ և շփոթմունքից շիկնած գրասեղանին դրեց մի տետր և ինչ-որ գծագրեր։

— Ուզում եմ ձեր թերթում հանդես գալ մի առաջարկով,— ասաց նա։— Ահա՛, կարդացեք, եթե ժամանակ ունեք...

Տետրն աչքի անցկացրի։ Հոդվածը այսպես էր վերնագրված. «Խիստ թեք լանջերին տներ կառուցելու նոր եղանակ»։ Հոդվածում խոնավ վայրերի «փախչող հողերը» ճանաչելու մի շատ պարզ միջոց էր առաջարկում և ցույց էր տրվում, թե ինչ նյութերից կազմված շաղախով պետք է կառուցել տան թիկունքի պատը, եթե տեղը թեք է և այդ պատը դեմ է առնում հողի կտրվածքին։

— Իմ առաջարկած շաղախով պատը կդիմանա հողի ճընշմանը և խոնավություն չի քաշի,— շփոթվելով բացատրեց ինձ երիտասարդը, թեև այդ միտքը շատ լավ հիմնավորված էր իր տետրում։

— Դուք շինարա՞ր եք,— հարցրի ես։

— Ո՛չ, ես մասնագիտությամբ անասնարույժ եմ, բայց այդ հարցը, որին նվիրված է իմ համեստ աշխատությունը, մանկուց ի վեր զբաղեցրել է ինձ։ Շատ եմ կարդացել այդ հարցի մասին, շատ փորձեր եմ արել, շատ մասնագետների հետ եմ խորհրդակցել և վերջապես ինձ հաջողվեց...

— Մանկուց ի վե՞ր, ինչո՞ւ մանկուց,— նրա խոսքը կտրեցի ես։

Շփոթվեց և մի պահ լուռ մնաց. տատնվում էր, պատասխանե՞լ իմ հարցին, թե ոչ։

— Հիմա ասեմ... Թեև դուք այդ մասին ինձանից լավ գիտեք... Ես շատ փոքր եմ եղել, որ մեր տան պատը փլվել է՝ շաղախի անպետքության պատճառով և իմ միակ քույրը...

— Նստի՛ր, մնացածը ես գիտեմ,— իսկույն գլխի ընկնելով, թե ով է ինձ հետ խոսողը, միջամտեցի ես և խմբագրության աշխատակիցներին հրավիրեցի ինձ մոտ։ Երբ բոլորը հավաքվեցին, ասացի.

— Ծանոթացեք այս տղային։ Քսան տարի առաջ, մի անձ-

www.a-pdf.com

բևոտ ու մռայլ գիշեր մենք սրան հանեցինք իրենց խրճիթի փլատակներից։ Այն ժամանակ սա երկու տարեկան էր...

Եվ պատմեցի մեր հարևան Բեղլո Արթնի մասին, նրա պայծառ ու մեծ-մեծ աչքերով աղջկա մասին և այն ծանր աղետի մասին, որ հասավ այդ ընտանիքին գարնանամտի այն սև գիշերը։

Լսում էր երիտասարդը գլխահակ ու լցված։ Վերջում խոսեց զգացված, կցկտուր.

— Երազի նման եմ հիշում քրոջս, իսկ խոսքերից միայն մեկն է մնացել հիշողությանս մեջ. «Ես քո ցավը տանեմ»,— այսպես էր միշտ դիմում ինձ... Երբ մեծացա, որոշեցի այնպիսի մի գյուղ անել, որ ոչ մի տնակ այլևս չփլվի անձրևից և ոչ մի երեխա չմնա գերանների տակ, ինչպես նա մնաց... Եթե հրապարակեք, ես հասած կլինեմ իմ նպատակին, և իմ հայրենակիցները սրանից հետո ամուր տներ կունենան նույնիսկ խոնավ զառիվայրերում...

Երբ աշխատակիցները դուրս ելան, մտերիմ զրույց սկսվեց մեր միջև։

— Մայրդ ինչպե՞ս է, կենդանի՞ է։

— Կենդանի է, աշխատում է կոլխոզում։

— Իսկ տո՞ւնը։

— Տունն ամուր է, չի փլվի,— դառը ժպտալով պատասխանեց նա։— Իմ մեթոդով է կառուցված... Հա՛, եղբորս երևի շեք ճանաչում, մեծացել, կրթված երիտասարդ է դարձել, ուսուցիչ է գյուղի դպրոցում։

— Եղբա՞յրդ։ Ո՞ր եղբայրդ... Հա՛, այն երեխան, որ ծընվեց ձեզ հասած աղետից հետո՞... Խե՜ղճ քեռի Արթին, կենդանի լիներ տեսներ, ինչ լավ տղաներ եք դարձել... Հա՛, առաջարկդ կհրապարակենք։ Դե, հաջողություն, մորդ կբարևես իմ կողմից։

Հաջորդ օրը, երբ տետրը խմբագրում էի, նկատեցի որ վերջին էջի ներքին անկյունում մանր տառերով գրված է.

«Իմ այս գյուղը նվիրում եմ վաղամեռ քրոջս՝ Ոսկեհատի հիշատակին։ Հրանտ Ղալումյան»։

Կարդացի և նորից իմ հիշողության մեջ վերակենդանացավ մեծ-մեծ ու պայծառ աչքերով այն աղջիկը և, որպես մղձավանջ՝ մեր հին գյուղի վրա կախված այն շարագուշակ գիշերը...

1951

www.a-pdf.com

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՋԱԿԱՆ

Սով սկսվեց մեր գյուղում, մոայլ տարիների հերթական սովը։ Մարդիկ ապրում էին անտառի պտուղներով ու վայրի բանջարներով։

Մի օր հայրս դիմեց մեր հարևանին, թե՝

— Քոչա՛ր, ասում եմ գերան տանենք կոոյի աշխարհքը, գուցե մի քանի փութ գարի բերենք։

Սայլերը լծեցին, ամեն մեկի մեջ երկու կաղնի գերան դրին ու Դիլիջանի ձորով ճամփա ընկան դեպի Սևան՝ դեպի իրենց ասած «կոոյի աշխարհքը»։ Բա ես չիմանա՞մ ինչ կան մեր գյուղի դիմացը փակող սարերի հետև։ Բայց դե ինձ հետները կվերցնե՞ն. թողել են տանը, որ անասունները պահեմ։

Թեկուզ պարանով կապեն, իսկի կմնա՞մ։ Ծառերի արանքներից գաղտնի հետևում եմ, թե որ կողմն են սայլերը քշում ու հետներն առաջ եմ գնում՝ գող աղվեսի նման ծպտված։ Գոլովինոն անցան՝ մտան կեռմանները։ Ճամփան ոլոր-մոլոր ժապավեն է կապել Գյոյդաղի լանջին և նրա ծայրը շեկին է տալիս ամպի տակ՝ Սեմյոնովկայի լեռնանցքում։ Մեր լղար եղների «հունարը» ես լավ գիտեմ, մինչև կեռմանների ծայրը հասնեն՝ օրը կմթնի, սպասիր ես ջուրն ի վեր գնամ՝ կարճ կածանով։

Քայլում եմ լեռնանցքից ցած եկող գետակն ի վեր, բայց ուշքս-միտքս նրա սահանքների ու ջրվեժների տակ է, փրփրած գյոլերում։ Տեսնում եմ, որ ավազը մաքո՞ւր, հուրհրատին է տալիս արևի տակ, ուրեմն կարմրախայտը զբոսնել է այնտեղ։ Տրեխներս հանեցի, ծոպերն իրար կապեցի, խուրջինի նման ուսս գցեցի, փողքերս վեր քաշեցի ու մտա զուլալ ջրերը։ Զեռքով ակն եմ տալիս քարերի տակերը, գտնում եմ թաքնված ձկներն ու նրանց ականջներից բռնած լույս աշխարհ հանում...

Այդպես ձուկ բռնելով հասա վերջին կեռմանին, կանաչի վրա մեկնվեցի ու սառը ջրից կարմրած ոտներս դեմ արի արեգակին։ Հետո վեր կացա, կրակ վառեցի ու սկսեցի ձուկ խորովել։ Դե թող մեկն ասի, որ ինքը աշխարհի ամենալավ ռեստորանում խորոված կարմրախայտի նման համեղ բան է կերել...

Սայլերը մոտենում են, հիմի հայրս քոթակ կտա ինձ։ Ահը սրտումս կուչ եկա, թաքնվեցի մի թփի հետև։ Տեղ հասան քըրտ-

www.a-pdf.com

նած եղները ու կանգ առան հևալով։ Հայրս նայեց խարույկին, նրա մոտ կանաչին թափված ձկների կույտին ու ասաց.

— Քոչա՛ր, էս մեր սարսաղի արած բանները կլինեն...

— Չէ՛, տո՛, ձեր սարսաղն էստեղ ի՞նչ գործ ունի,— առաբկեց Քոչարը։

Զդիմացա, դուրս եկա թփի հետևից։

— Բա որ ասում էի՞,— որոտաց հայրս։ Ու մոռանալով, որ պարտավոր է քոթակ տալ ինձ, ուրախ պատվիրեց.— Մինչև մենք եղներն արձակենք, դու էդ ձկները քյուլլամիշ արա, ա՛յ ասլան բալա...

Առվակի ափին գիշերեցինք, լուսադեմին նորից ճամփա ընկանք։ Թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ, երկու օր երկու գիշեր ճամփա գնացինք։ Սայլի վրա էի քնում, զույգ գերանների մեջտեղը մեկնրված։ Եվ որպեսզի քնած ժամանակ վար չընկնեմ, հայրս ինձ պարանով փաթաթել էր գերաններին։ Հիմիկվա ասֆալտը հո չկար, խճուղի էր, ջրապատ փոսերով։ Թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ, այնպես էր թափահարում մեր սայլը, որ գերանին հպված թոքերս դմբդմբում էին, «սրտիս գդալը» քիչ էր մնում ջարդվի։ Էդ բոլորը հեչ, մենակ թե հասնենք Քոչար քեռու բարեկամների գյուղը, ուր, ասում են, լավաշը կույտով դնում են առաջդ, ինչքան կուզես կեր...

Ծարավը մեզ տանջում էր, սկսած Սևանի ափից ճանապարհին ոչ մի տեղ ջուր չկար, ցամա՛ք, քարքարոտ աշխարհ էր։ Ա՜խ, մեր կանաչ սարերի սառն աղբյուրնե՛րը...

Մի ճամփորդ մեզ սիրտ տվեց, թե.

— Տնաշեններ, ի՞նչ եք մթնել։ Ֆանտանն առաջներդ է։

Էլի գնացինք։

— Քոչա՛ր, դու մալականի լեզուն լավ գիտես, Ֆանտանն ի՞նչ բան է,— հարցրեց հայրս։

— Գիտեմ, բա՞,— պարծեցավ Քոչարը,— հմա սխալ ես ասում, Ֆանտան, չի Ֆանթալ ա,— հեղինակավոր տոնով ուղղեց նա։— Ֆանթալը որ կա... էն... էն... Բաքու գնացել ե՞ս, հա՞, էն որ նոթը Ֆանթալ ա տալի, գետնի տակից դուրս շպրտում...

Հայրս ուրախացավ։

— Ուրեմն ջուրն էլ էդ գեղումն ա Ֆանթալ տալի՞...

www.a-pdf.com

— Բա՜... Բա որ Ֆանթալ չտա, գեղի անունը Ֆանթալ կդնե՞ն....

Կորեկի հացը կերել եմ՝ աղի «ջիլ» պանրի հետ ու առավոտից ներսս կրակ է ընկել։

— Դիմացի՛ր, բալա ջան, դիմացի՛ր, հիմի Ֆանտան կհասնենք...

— Ֆանտան չի, է՛, ա՛նհասկացող, Ֆանթալ ա,— նորից ուղղեց Քոչարը ու ճիպտեց հոգնած եզներին։

Հասանք Ֆանտան, այն գյուղը, ուր հիմա սարից բերված սառնորակ աղբյուրներ կան, հասանք ու մնացինք մոլորված. մեզ նման ծարավ էին այդ գյուղի բնակիչներն էլ, անասուններն էլ. երաշտից ցամաքել էր գյուղի մոտի միակ ու պղտոր «գյոլը»։ Ինչ-որ ժամանակ մեկը միշտ ծարավ այդ գյուղի անունը Սուխոյ Ֆանտան էր դրել, որ չոր շատրվան է նշանակում...

Կատակ էր արել։

— Ոչինչ, Ալափարսում ջուր շատ կա, դիմացե՛ք,— հրահանգեց Քոչար քեռին և հոգնած ու ծարավ եզներին քշեցինք դեպի Ալափարս։ Այն ժամանակ ես հազիվ տասներկու տարեկան էի և այժմ, շատ տասնամյակներ հետո, լավ չեմ հիշում գիշերը ո՞ր գյուղում կանգ առանք, Ալափա՞րս, թե Արզական։ Ջրից հույսս կտրած քնել էի իմ սովորական տեղը՝ անընդհատ թիկթիկացող գերանների արանքում, երբ զգացի, որ կապերս արձակեցին, երակներիս մեջ արյունը դարձյալ խաղաց...

Մեր եզները մի գետնափոր տան ցածր դռնից ներս մտան՝ մենք էլ նրա հետևից։ Եզները տեղավորվեցին «ղոնաղօթախին» կից գոմում, իսկ մենք՝ անասունների շնչով գոլացած օդայում։ Հետո բոլորեցինք քուրսու շուրջը, տասը-տասներկու հոգով, ու ոտքներս կախեցինք նրա տակ՝ իրար խառնվեցին. դե եկ այդքանի միջից ջոկիր քո ոտքերը... Դրա մասին էի մոլորված մտածում, երբ հաց դրին քուրսու վրա, թոնրի մեջ թխած գարու բոքոններ, որ այն ժամանակ մուրազի նման բան էին սովահար մարդկանց համար։

Քուրսու ուղղությամբ առաստաղում մի անցք կար, որի միջից երևում էր երկնքի մի կտորը՝ մի քանի աստղերով։ Առաստաղի գերանները ձյութի նման սև էին, իսկ պատից կախված ձեթի ճրագը ճրթճրթալով ծուխ էր արձակում, որ սյունն ի վեր ձգվում էր դեպի երդիկը...

www.a-pdf.com

Լուսադեմին լսեցի հորս բամբ ձայնը.

— Քոչա՞ր, վեր կաց, ա՛յ տնաքանդ, կոռքերը մեզ ծուխ են դրել...

— Քոչարը վրա նստեց ու աչքերը տրորելով հարցրեց.

— Ո՞նց թե ծուխ են դրել...

— Քեզ բան եմ ասում, ծուխ են դրել, մեզ խեղդում են աղվեսի նման...

Քոչարը քահ-քահ ծիծաղեց։

— Ինչ խեղդել, տո՛, թոնիրը վառել են, որ սպաս եփեն մեզ համար։ Պառկի՛ր, պառկիր բերանիդ վրա, որ դիմանաս...

Անշարժ մեկնվեցինք գետնին փռած թաղիքներին, իսկ թանձրը ծուխը գերանները սևացնելով, մլմլալով գնում-դուրս էր ելնում երդիկից...

Վերջերս գնացել էի Արզական։ Երբ գյուղի ղեկավարների հետ հյուր էինք գնում այդ բարեկեց ու հյուրասեր մարդկանց, հայացքով մեր գերաններն էի փնտրում առաստաղներին։ Կան, անշուշտ, մեծ շարշարանքով մեր անտառից այստեղ հասցրած իմ գերանները, բայց նրանք մի հին թոնրատան առաստաղին ելինեն բաղմած ու այնքան սևացած ծխից, որ չեմ ճանաչի։ Իսենք կտեսնե՞մ, որ ճանաչեմ. այստեղ թոնրատներում այլևս մարդ չի ապրում. արզականցիք նոր տներ են կառուցել, պայծառ ու լուսավոր բնակարաններ, որոնց լուսամուտներից ամեն երեկո էլեկտրական լույսեր են հորդում և ուր ռադիոընդունիչներ կան դրված և գեղեցիկ հեռուստացույցներ։ Կիրթ ու զարգացած մարդիկ են ապրում քաղաքին վայել այդ բնակարաններում։

— Մի օր նստել հաշվել ենք. սովետական իշխանության տարիներին մեր փոքրիկ գյուղը բարձրագույն կրթության տեր վաթսունյոթ մարդ է տվել,— ասաց ինձ գյուղսովետի նախագահ Հարությունը։— Գիտնականներ էլ ունենք, ճարտարապետներ էլ, դոկտոր-պրոֆեսոր էլ։ Մինչև անգամ Միջին Ասիայում մինիստրի տեղակալ կա մեր գյուղի տղաներից,— ավելացրեց նա կիսակատակ պարծենալով։

Ո՞ւր էր և ուր է հասել սևացած թոնրատների Արզականը...

www.a-pdf.com

«Վոլգան» մեզ դուրս բերեց ձորից և ասֆալտապատ ճամփով սլացավ դեպի Ֆանտան։ Մոքերի ծովն եմ ընկել. այստեղով էինք գնում՝ թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ։ Ապա տասնամյակների հետևից ծանոթ ձայներ եմ լսում. «Դիմացե՛ք, իրիկունը Ալափարս կհասնենք...» Քոչար քեռին է, կարծեմ։ Մեկ էլ հորս հեռավոր ձայնն է հասնում ականջիս. «Քոչա՛ր, վե՛ր կաց, ա՛յ տնաքանդ, կոռքերը մեզ ծուխ են դրել, խեղդում են աղվեսի նման...»։

Գնացքի շչակից ուշքի եկա։ Հասել էինք Լուսավան։

1960

www.a-pdf.com

ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՆ

www.a-pdf.com

ԹՈՐՈՍԵՆՑ ԱԹՈՆ

Աթոյի տունը երկհարկանի էր, թիթեղյա տանիքով և արևոտ սենյակներով։ Ջորին նայող պատշգամբի կեսն ապակեպատ էր՝ կազմված եռանկյունի գույնզգույն մանր ապակիներից, և երբ արևը ծագում էր, սենյակներում խաղում էին ծիածանի բոլոր գույները։

Նկուղներն ընդարձակ էին և լի ամեն բարիքով։ Այդտեղ տարվա բոլոր եղանակներին դուք կգտնեիք արկղներով մեղրահացեր, կարասներով յուղ, պանիր, ղաուրմա, առաստաղից կախած խնձորի և տանձի կախաններ։

Տան հետևը, գյուղից դուրս, Աթոյի գոմն էր, ուր կապված էին քսան-քսանհինգ կով, գոմեշներ, եզներ։ Ձիանոցում գարի էին խժռում և ուրախ խրխնջում ձիերը, իսկ ոչխարի հոտը գյուղից հեռու, անտառի մեջ շինված ձմեռանոցումն էր։

Աթոն մեր գյուղի ամենահարուստ և ամենաժլատ մարդն էր։ Իր կյանքում այդ մարդը լավություն արած չկար։ Ոչ ոք նրա տունը հյուր չէր գնում, ոչ ոք նրանից ո՛չ հաց էր փոխ առնում, ո՛չ կացին, ո՛չ բահ։

Մարդն ահագին հարստության մեջ թաղված՝ տանջվում էր այն մտքից, թե իր հարսները թաքուն կարող են հաց ուտել։ Սնդուկների բանալիներն իր մոտ էր պահում, հավերին ամեն լուսադեմ «ակն էր տալիս» և ձվերի հաշիվը պահում, բայց էլի հանգիստ չէր հոգով, կասկածը տանջում էր նրան։

Բացի ժլատ լինելուց, զարմանալի չկամ մարդ էր Աթոն, չէր ուզում, որ ուրիշի վրա արև կպչի, չէր ուզում, որ հարևանն ապրի։ Վայ այն հարևանին, որ կհամարձակվեր լվացք անել ու շոր փռել այն օրը, երբ Աթոյի տանը լվացք ունեին։

www.a-pdf.com

Կբարձրանար մարագի կտուրը, բութ մատը կխրեր արծաթե գոտու տակ, ոտքերը լայն դրած՝ կոճղի նման կկանգներ ու բերանը բաց կաներ.

— Քեզ ասել չե՞մ, ո՞ր օրը լվացք ունենք՝ դու շոր մի փռիլ, հը՞... Էս տեսակ էլ անամոթ կնանիք կըլե՞ն, տո ո՞ւր քոչենք, որ պրծնենք սրանց ձեռիցը։ Թողեք էս զահրումար արևը մեր լվացքը չորացնի, հետո գո՛ւք փռեցեք, է՛լի...

Կարծես արևը չէր կարող և՛ իրենց շորերը չորացնի, և՛ հարևանի։

Կամ փայտը կվերցներ ու հայհոյելով կընկներ աքաղաղի հետևից.

— Ը՞ը, ես քու կտուցը... հերիք չի՞ իմ կուտն ուտես, գնաս խալխի կտերը ծուղրուղու կանչե՞ս...

Որ հարևանի երեխան կրակն ընկներ, ձեռքը չէր մեկնի, որ աղատի։ Բնությունը կարծես ջոկել, նրա մեջ դրել էր այն ժամանակվա մարդկանց բոլոր արգահատելի գծերը։

Այսպիսի մարդ էր Թորոսենց Աթոն։

Վայ այն դժբախտին, որ նեղության մեջ ընկած ժամանակ մի քանի ռուբլի պարտք կվերցներ նրանից. էլ մինչև մահը տոկոսների ու նրանց տոկոսների տակից չէր կարող դուրս գալ։

Դրա համար էլ մեր գյուղում ատում էին Աթոյին։

Բայց ուժը նրա՛ ձեռին էր, գյուղի ամենալավ հողերը նրա՛նն էին, հարստությունը նրանն էր։

2

Ինչպե՞ս էր հարստացել Թորոսենց Աթոն։

Այդ հարցը շատերն էին տալիս իրենց, բայց քչերը գիտեին նրա պատասխանը։ Հասակակիցները գիտեին, որ նա երիտասարդ ժամանակ մանրավաճառի փոքրիկ խանութ ուներ և շատ աչքաբաց, «ժուլիկ» տղա էր։

1877 թվականին մեր ձորերով մեծ զորք էր անցել,— ռուսական զորք,— և գնացել էր կռվելու Տաճկաստանի դեմ։ Այդ կռիվը մեր կողմերում հայտնի էր «Լոռիս-Մելիքովի կռիվ» անունով։ Թորոսենց Աթոն եթե այդ կռվովը հարստանար՝ հասկանալի կլիներ, քանի որ այդ խառը ժամանակները ոմանք զորքի հետևից ռազմաճակատ էին գնացել և ավար ճանկել։ Բայց Աթոյի բերանը ոսկոր չընկավ այդ ժամանակ. նա հանկա՛րծ հարստացավ՝ պատերազմը վերջանալուց հետո։

www.a-pdf.com

Այսպես եղավ։

Մեր գյուղում նահապետական մի ընտանիք կար, որի գլխին կանգնած էր բարի ու աշխատասեր ծերունի Մելիքենց Արշակը։ Նա ութ չափահաս տղա ուներ և բազմաթիվ թոռներ։ Ընտանիքում տասնչորս աշխատող տղամարդ կար. մեկը ոչխարն էր պահում, մեկը՝ տավարը, մեկը մեղվանոցին էր հսկում, մի քանիսը վար էին անում։

Մելիքենց Արշակը հաց էլ շատ ուներ, անասուն էլ։ Նա լավ բերք վերցրեց Լոռիս-Մելիքովի կռվի տարին և հացի ու անասունների մի մասը լավ գնով ծախեց զորքին։

Երբ կռիվը վերջացավ և ժամանակ անցավ, մի օր ծերունի Արշակը մտավ Աթոյի տուն և շուրջը նայելով՝ գաղտնի ասաց.

— Սանիկ ջան, մի քիչ փող ունեմ, գիտեմ ոչ ո՛րտեղ պահեմ։ Դե մեծ օջա՛խ, գնացող-եկողին էլ հաշիվ չկա, ո՛վ գիտի՛, ինչ կպատահի...

Երիտասարդ շարշու աչքերը պսպղացին գող կատվի աչքերի պես։

— Քավոր ջան, հո սանիկը, հո՛ հարազատ տղեն՝ մի՛ բան է, տուր պահեմ, երբ հարկավոր կըլի՝ կտամ,— ասաց նա։

Ծերունին արխալուղի գրպանից հանեց իր կարմիր թաշկինակը, դողդոջուն ձեռքերով քանդեց կապը և թղթադրամները հանձնեց իր սանիկ Աթոյին։

Սա համրեց նոր կտրած «ճռճռան» Նիկոլայի հարյուրանոցները և, աշխատելով անտարբեր ձևանալ, ասաց.

— Տասնչորս հատ է։

— Հա՛ տասնչորս հատ ա, սանիկ ջան, պահի՛, Սեդրակիս հարսանիքին ինձ կտաս։

— Հանգիստ գործիդ գնա,— պատասխանեց «սանիկը»՝ սնդուկը կողպելով։

Իսկ երբ քավորը դուրս էր գալիս, շեմքում նորից հիշեցրեց.

— Տասնչորս թուղթ փող ինձ պահ տվիր, հա՛, քավոր Արշակ, լա՛վ միտդ պահիր...

Մի տարի անց Սեդրակին նշան դրին։

Քավոր Արշակը գնաց փողը վերցնի իր սանիկից, որ տղայի հարսանիքի ծախսերը հոգա։

Աթոն սնդուկից մի փոքրիկ կապոց թղթադրամ հանեց, հաշվեց և ծերունուն հանձնելով ասաց.

— Տասնչո՞րսն է, թե՞ չէ։

www.a-pdf.com

— Տասնչորս ա, սանիկ ջան, կյանքդ երկար ըլի։

Ու գնաց։

Այդ այն ժամանակ էր, երբ մեր լեռնային հետամնաց գյուղերում շատ քիչ մարդ կար, որ փողը լավ ճանաչեր. դեպք էր եղել, երբ նոր կտրված երկու կոպեկանոցը մեր գյուղում ոսկի դրամի տեղ էին ընդունել։ Այդ դեպքից հետո գյուղացիները այլևս ոսկի չէին վերցնում. կասկածում էին, թե ոսկու տեղ պղնձե դրամ կտան իրենց։ Այդ ժամանակ փակ նահապետական տնտեսություն էր. ո՞վ էր փողի երես տեսնում, փողի մասին ո՞վ գաղափար ուներ։

Ուրեմն թող զարմանալի չթվա, որ երբ Մելիքենց Արշակը մի թղթադրամ հանձնեց իր ավագ որդուն՝ Սմբատին, և պատվիրեց Սեդրակի համար «ղարամանդուլ» արխալուղ ու «բուխարա» (կարակուլ) փափախ գնի, Սմբատն էլ չհասկացավ, որ իր ստացածը ո՞չ թե հարյուրանոց է, այլ ռուբլիանոց... Այդ բանը պարզվեց միայն գավառական քաղաքում՝ իր հոր պատվիրած իրերը գնելիս։

Մելիքենց Արշակը սիրտը սևակնած՝ գնաց իր սանիկի մոտ, թուք ու մուր տվեց, ոչինչ դուրս չեկավ։

— Ախպե՛ր, տասնչորս հատ տվել ես, մոտդ հաշվել եմ ու դրել սնդուկը։ Եկար՝ տասնչորսն էլ քեզ տվի, էլ ի՞նչ ես ուզում ինձանից։

— Բա տասնչորս ճիպոտն ու տասնչորս կաղնի գերանը մին ա՞։ Ես քեզ կաղնի գերաններ եմ պահ տվել, տեղը ճիպոտնե՞ր ես տալիս,— իրեն հանգի պատկերավոր բացատրում էր ծերունի Արշակը։

— Ճիպոտ ես պահ տվել, գերանի երես չեմ տեսել,— ուրացավ Աթոն։

— Թո՛ւ էդ նամուսիդ, նամա՛րդ...

Ու ծերունին դառնացած սրտով վերադարձավ իր տուն, անկողին մտավ և այլևս վեր չկացավ։

Մեռնելուց առաջ նա իր մոտ կանչեց իր որդիներին, հարսներին և երեսունի հասնող թոռներին ու ծոռներին և թույլ ձայնով ասաց.

— Հարյուր տարի էն ծմակի կաղնու պես կանգնած էի, երեխեք ջան, ու ո՞չ սելավն է ինձ տեղահան արել, ո՞չ էլ գլուխս եմ ծռել քամու առաջ։ Բայց նամարդ մարդն իմ մեջքը կոտրեց։ Ջասեք, թե մեր կորած փողի մասին եմ մտածում։ Փողը հե՛չ,

www.a-pdf.com

փողը ձեռի կեղտ ա, էսօր կա, էգուց չկա։ Իմ դարդն էլ էն ա, որ աշխարհքը փչացել ա, մարդիկ դառել են խորամանկ, կեղծավոր, խաբում են իրար, հարևանին տրորում են՝ իրանք բարձրանում։ Է՛դ իմ մեջքը կոտրեց, երեխեք ջան...

Ու մեռավ ծերունի Արշակը՝ ցավը սրտում, որ «աշխարհքը փչացել ա»։

Իսկ Աթոն նրա փողերով գեղեցիկ տուն կառուցեց։ Ռուսաստանից խնձորենու ու տանձենու տնկիներ բերել տվեց և մի մեծ այգի գցեց, տավար-ոչխար առավ, աղքատների հողերը չնչին գներով գնեց ու սկսեց օր-օրի հարստանալ։

2

Աթոն աղջիկներ շատ ուներ, ու ամեն անգամ նրանց մարդու տալիս մեկ սրտանց ուրախանում էր, որ մի ուտողից ու հագնողից էլ է ազատվելու, մեկ էլ տնքում էր, որ հարսանիքին մարդիկ են գալու իր տուն և ծախսի տակ են գցելու իրեն։

Այդ տարի նրա աղջիկներից մեկին հորեղբորս տղային ուզեցին։

— Ասում եմ մի քանի մարդով գնանք սուսուփուս բերենք մեր հարսին, Աթոյի օջախում հաց ուտելը հարամ է,— ասաց հայրս իր փոքր եղբորը՝ Սաքոյին։

Սաքոն ուտող-խմող, քեֆ անող մարդ էր։ Խոզեր էր պահում-շատացնում մինչև աշուն։ Աշնանը բոլորն էլ մորթում էր, բացի երկու մերունից, և ձմեռը հյուրասիրում էր ընկերներին ու բարեկամներին ու ինքն էլ հետները քեֆ էր անում։

Մեր գյուղում Աթոն ու իմ հորեղբայր Սաքոն ամեն մեկը մի բեռում էին՝ մեկը ծայրահեղ ժլատ, մյուսը՝ ծայրահեղ սրտաբաց ու հյուրասեր։ Այդ էր պատճառը, որ ոչ ոք Աթոյին այնքան չէր ատում, որքան Սաքո ամին։

Դրա համար էլ նա եղբոր խոսքը կտրեց և, իր սովորության համաձայն, տաքացած գոչեց.

— Իի՞նչ... սուսուփուս բերե՞նք։ Չէ՛, ես չեմ թողնի, որ Աթոն էժան պրծնի։ Մինչև ծուխը նրա քթից չհանեմ՝ չեմ հանգրստանա, նա ինձ վառել է...

Բոլորն էլ գիտեին տաքարյուն Սաքոյի բնավորությունը, ուստի չառարկեցին։

— Հարսանիքը կազմակերպողն էլ եմ ես, կառավարողն էլ, ոչ ոք մոտ չգա,— կարգադրեց նա։

www.a-pdf.com

Այդ նշան էր, որ մեր խնամի Աթոյի գլխին փոթորիկ է պատրաստվում։

Սաքո ամին շուխի փեշը ընկույզով լցրեց, բարձրացավ կտուրն ու այնտեղից բուռ-բուռ սկսեց շպրտել՝ մեկ կալի, մեկ մեծ ճանապարհի կողմը։ Թաղի երեխաները իսկույն հավաքվեցին կուտ տեսած հավերի նման ու սկսեցին իրար հրմշտելով հավաքել ընկույզները։

Ապա կտուրից իջավ, մոտեցավ մեզ ու գոչեց.

— Ձեններդ կտրեցեք, բան եմ ասում։

Հետո մեզ փոքր խմբերի բաժանեց ու հրահանգեց.

— Ագա՛, Ենո՛ք, ներքի թաղը քեզ։ Վերի թաղը էս մեր կաշաղակի ճուտին, Ակոյենց թաղը՝ Մացակի էս լպուզին։ Այ ճիպրո (դարձավ ինձ), Ալխանանց թաղն էլ քեզ։ Կգնաք տնետուն մանկգաք ու կասեք՝ Սաքո ամին պատվիրել է, որ էգուց դհոլի ձենն առան թե չէ, թող տնով-տեղով, ճժով-պժով գան ինձ մոտ։ Ասացեք՝ Սաքո ամին բոլորիդ էլ զոնաղ է կանչում, ում տանը որ երկու ոտանի է մնացել, կգամ տեղնուտեղը կսպանեմ...

Մենք թովռալով հենց ուզում էինք ցրվել դեպի նշանակված տեղերը, Սաքո ամին որոտաց.

— Կացե՛ք։ Բա հանդերում, գոմերում, քոլերում շոբաններ էլ կան, ծառ կտրողներ էլ, խոզարածներ էլ կան, բա նրանք իմ խնամի Աթոյի հավերի համը չպետք է առնե՞ն, ինչ եք կարծում։

— Պետք է առնե՛ն,— ձայն տվինք մենք ուրախացած։

— Դե՛, լակոտներ ջան, գեղը որ պրծնեք՝ մի խումբը թող գնա Անագյունեի գոմերը[1], մեկը Ղոշտոզանի գոմերը, մեկը՝ Հաղարծնի գոմերը, ինչքան շոբան ու տավարած կա, կհավաքեք կբերեք։ Համա որ մեկը պակաս էլավ, ձեր մեծ թիքեն ականջներդ եմ թողնելու, հա՛...

Այսպես ամուր պատվիրեց Սաքո ամին, ամեն մեկիս ձեռը մի մեծ շիշ հոնի օղի տվեց ու ավելացրեց.

— Ամեն պատահողի մի բաժակ օղի կտաք ու կստիպեք, որ խմի։ Որ խմեց՝ կգա։

Հին գյուղի սովորությունն այդպես էր. հարսանիքի կանչելիս, որպես հրավեր նշան մարդկանց գտնում և մի գավաթ օղի էին խմեցնում, որից հետո օղի խմող մարդու համար հարսանիք գալը պարտադիր էր դառնում։

---

[1] «Գոմեր» մենք ձմեռանոցին էինք անվանում։

www.a-pdf.com

Մենք տնեստուն պատեցինք, ապա հանդերն ընկանք, ձմեռանոցները գնացինք և ում պատահեցինք՝ բոլորին էլ հրավիրեցինք հարսանիքի։

Ո՞վ էր գլխից ձեռք վերցրել Դալի Սաքոյի հրավերը չընդունել...

4

Մյուս օրն առավոտյան հենց զուռնան փչեց, ամբողջ գյուղը՝ մեր ու մանուկ, հարս ու աղջիկ, ծեր ու ջահել, բոլորն էլ հավաքվեցին Սաքո ամու ընդարձակ կալը։

Քիչ անց, ձմեռանոցներից չոբաններն ու տավարածներն էլ եկան՝ Թութակ ու սրինգ փչելով։ Դրանք էլ որ եկան, Սաքո ամին բարձր ձայնով հարցրեց.

— Ժողովո՛ւրդ, տներում էլ մարդ չի՞ մնացել։

— Չէ՛, չէ՛,— ձայն տվին այս ու այն կողմից։

— Մեր օրորոցումը մի երեխա կա,— կատակեց մեկը։

— Նրան էլ բերեք, նրան օրորողին էլ, թե չէ...— որոտաց Սաքո ամին։

Ժողովուրդը քրքջաց։ Գնացին, որ օրորոցի երեխային ու նրա խնամողին էլ բերեն։

— Ուստա Ակոփ, մի «Քոչարի» փչի,— կարգադրեց Սաքո ամին ու, խմբի գլուխն անցած, սկսեց պարել։ Դրանից հետո հեքթը «Լեզգինկային» հասավ, հետո՝ «Խնկի ծառին», հետո՝ «Որսկանի պարին»։

Այդպես, Սաքո ամին մինչև կեսօր բոլորին էլ պար ածեց, հալից գցեց և մի քարի բարձրանալով, ձայն տվեց.

— Ժողովո՛ւրդ, գիտե՞ք ձեզ ինչի եմ էսքան լեզգինկա պար ածում։

— Ինչի՞...

— Նրա համար, որ փորներդ նստի, մի լավ սովեք։

— Նստած է, ա՛յ մարդ, սովից կոտորեցիր մեզ,— ձայն տվին այս ու այն կողմից։

— Ես էլ էդ եմ ուզում, է՛... Ուզում եմ ոսկորներդ սով ընկնի, որ առատ մարդու տուն ենք գնում։ Ա՛յ ժողովուրդ,— ձայնը բարձրացրեց նա,— իմ խնամի Աթոն խնդրել է մի-մի բաժակ օղի խմեք, որ ախորժակներդ բացվի։

Ծիծաղ բարձրացավ, լրիվ պարզվեց նրա մտադրությունը։

www.a-pdf.com

— Այ մարդ, աղիքներս կտրատվում են, քարից կակուղ ինչ ճանկս ընկնի՝ կուտեմ, ինչ արաղի ժամանակ է, շուտ արեք մի բան տվեք ուտելու,— դժգոհեց մեր գյուղի անվանի ուտող խեշանը։

Բայց Սաքո ամին ականջ չդրեց։ Նա մատռվակին կարգադրեց մեկական բաժակ օղի խմեցնել ներկա եղողներին։

Ապա ձայն տվեց.

— Ախորժակներդ բացվե՞ց, ժողովո՛ւրդ։

— Էն էլ ո՞նց, ճար ունես՝ տես...

— Ճար ունեմ, ա՛յ ժողովուրդ, համա խնամի Աթոն շատ կնեղանա, որ առաջ իմ տանն ուտեք, հետո՝ իրեն... Դե՛, ուստա Ակո՞փ, զուռնեդ փչի, քավո՛ր, հարսնախպե՛ր, փեսացո՛ւ, առաջ ընկեք։

Ու ամբողջ գյուղը պոկ եկավ դեպի մեր խնամի Աթոյի տուն։ Կարգն այդպես էր, փեսան իր մարդկանցով գնում էր հարսին բերելու։ Բոլորին էլ վարձացնում էր այն միտքը, թե ինչպես է ընդունելու Աթոն այդ ահռելի բազմությանը։

Հակառակի պես այդ գիշեր անձրև էր եկել և գյուղամեջը ցեխ էր։ Մեր գյուղի ցեխն էլ հո՞, աստված հեռու տանի...

Ժողովուրդը հարայ-հրոցով, պարելով, կատակներով հոսեց դեպի գյուղի ներքին թաղը ու խուժեց Թորոսենց Աթոյի բակը։

Աթոն դուրս եկավ, տեսավ սելավի պես եկող բազմությունն ու աչքերը մթնեցին։

Սաքո ամին պարելով առաջ եկավ, գրկեց իր խնամուն, հետը պար եկավ և մի բաժակ օղի առաջարկելով ասաց.

— Խնամի Աթո, լավ կամպանիայով ենք եկել, հը՞...

— Լավ եք արել, խնամի Սաքո, աչքիս վրա եք եկել,— խեղդված պատասխանեց Աթոն։

— Համեցեք ներս, սրտալի՛ մտեք,— գոչեց Սաքո ամին առաջի շարքերին, երբ տեսավ, որ մարդիկ իրենց տրեխների ցեխին են նայում ու չեն համարձակվում մտնել Աթոյի սիրուն սենյակները։

Ու ժողովուրդը խուժեց Աթոյի տունը, տրորեց նրա խալիները, լցրեց նրա բոլոր սենյակներն ու ամուր տեղավորվեց։

— Տղերք ջան, սրտա՛լի կերեք,— խրախուսում էր թամադա Սաքոն ու այնպիսի թանկագին կենացներ էր առաջարկում, որ բոլորն էլ պարտավոր էին համարում խմել մինչև հատակը։

www.a-pdf.com

Դրսում նոր ոչխարներ մորթեցին, և Թորոսենց Աթոյի հավանոցում այլևս փետրավոր չմնաց։

Իսկ Սաքո ամին բաժակաճառ բաժակաճառի հետևից էր ասում.

— Սեղանակիցնե՛ր, ո՛վ չի ճանաչում իմ խնամի Աթոյի օջախը, ո՛վ չի հաց կտրել նրա առատ սեղանից։ Է՞ն հեռավոր Քոի ղրաղի Թուրքն էլ ամառը մեր սարը գալիս՝ աչքը գցում է մեր գեղի վերի էս տան կարմիր կտուրին ու մտքումն ասում՝ «Քիչ մնաց հա՛, հիմի կհասնեմ Աթոյի օջախն ու նրա հարկի տակ հանգիստ կառնեմ»։ Ուրեմն, սեղանակիցնե՛ր, խմենք մեր խնամի Աթոյի օջախի կենացը ու վրեն էլ սրտալի ուտենք մեր խնամի հարսների տապակած հավերը...

Այս ծաղրը բոլորն էլ հասկանում, իրար աչքով էին անում ու բաժակներն իրար խփելով, հռհռալով խմում էին ու անուշ անում սեղանի բարիքները։

— Շեն մնա խնամի Աթոյի օջախը, կերե՛ք,— լսվում էր այս ու այն կողմից։

Իսկ Աթոն մեկ վրդովմունքից ուռչում էր, մեկ նիհարում էր ու գունատվում, մեկ էլ աշխատում էր անհոգ ձևանալ, ծիծաղել, բայց անբնական ծիծաղ էր դուրս գալիս նրա բերանից։

Այդպես, մեր գյուղացիք այդ օրը բոլորն էլ լիացան Աթոյի առատ սեղանից, բացի Սեդրակից. նա երդվել էր իր կյանքում չկտրել Աթոյի «հարամ հացը»։

1939

ԳՅՈՒՂԻ ՀԻՆ ՄԱՐԴԻԿ

ՄԵԼՈՆՑ ԱՄԻՆ

Միջահասակ, կլոր երեսը միշտ մազոտ, տրեխներով ու տան գործած շալե շորերով մի մարդ էր Մելոնց Ամին։ Ի՞նչ էր նրա անունը՝ ոչ ոք չգիտեր, բոլորն էլ Ամի էին կանչում նրան, որ մեր կողմերում հորեղբայր է նշանակում։

Հիշում եմ, առաջին պատերազմի տարիներին ռազմաճակատից մի նամակ ստացվեց Պետրոս Մելյանի հասցեով։ Այդպիսի մարդ չկար մեր գյուղում։ Շատ հարցուփորձ արին, ոչ ոք

www.a-pdf.com

չիմացավ, թե ով է Պետրոս Մելյանը։ Նույնիսկ Ամնի կինն ու երեխաները չիմացան։ Վերջապես գյուղի քահանան նայում է ծննդյան մեծ մատյանն ու գտնում հասցեատիրոջը։ Գյուղում տարածվեց տարօրինակ լուրը.

— Բա չեք ասել, որ Պետրոս Մելյանը Մելոնց Ամին է եղե՞լ...

Ամին ինքն էլ զարմացավ, երբ իմացավ, որ իր անունը Պետրոս է...

Ամառը սարերում էր անցկացնում, ձմեռը՝ ձմեռանոցում, գյուղում շատ քիչ էր երևում Մելոնց Ամին։ Լավ անասնապահ էր ու իր ամբողջ կյանքը դրել էր անասունների խնամքի վրա։ Դե, մեզ մոտ այն ժամանակ հեշտ չէր անասուն պահելը։ Խոտհարքները բարձր սարերում էին կամ անտառի հեռավոր բացատներում։ Ճանապարհներ չկային, խոտ բարձած երկանիվ սայլերը ահագին բարձունքից շուռ էին գալիս և մարդ ու լծկան տակով անելով՝ գլորվում ձորը։

Կարկուտն էլ մի կողմից, ցավն ու չոռն էլ մյուս կողմից։ Ու կարիքից, ձախորդություններից միշտ տխուր, միշտ սրտնեղած Ամին հոգու մաղձը թափում էր իր կենդանիների ու երեխաների վրա։

Մեկ էլ տեսար մահակը վերցրեց ու սկսեց իր շանը՝ մե՞կ, հի՞նգ...

— Ես քո տիրոջ էսենցն ու էնենցը,— հայհոյում էր նա,— հերիք չի՞ իմ լակն ուտես, գնաս ուրիշի դռանը հաչե՞ս...

Կամ՝ ձմեռանոցում կբարձրանար կտուրն ու կկանչեր հանդում հոտն արածեցնող իր տղային.

— Էհե՞յ, խեչա՞ն, խեչա՞ն...

— Հե՞յ,— լսվում էր դիմացի սարից։

— Ա՛յ զարհումա՞ր, գիտես թե ջան եմ ասելո՞ւ...

Միայն այդքան կասեր ու կիջներ կտուրից։

Միշտ տխուր էր, միշտ դժգոհ։

Բայց, զարմանալի բան, թաքնված ժպիտ կար նրա ամեն տխուր խոսքի մեջ։

Մարտ ամսի մի ցուրտ ու անձրևոտ օր էր, երբ քաղցած կուչ էինք եկել մի խոնավ քարայրում, Ամնի շունը եկավ, պառկեց տիրոջ ոտների մոտ ու սկսեց ծմրալ. նա էլ էր քաղցած։

— Ծմրա-ծմրա՛նք, Բողար ջան, ծմրա-ծմրա՛նք,— դարգոտ ասում էր Ամին իր շանը...

www.a-pdf.com

Բայց շան գործը այդ օրը հաջողվեց. ժայռից անասուն էր ցած ընկել-ջարդվել, Բողարը արյան հոտը բռնած անհետացավ մառախուղի մեջ և քիչ անց վերադարձավ փորը կուշտ, աչքերն ուրախ, շրթունքները լիզելով, ու սկսեց տիրոջ հետ կատակներ անել։ Դե այդ մոայլ օրը, երբ նիհար անասունները կուչ են եկել անձրևի տակ, քաղցած փորով Ամին ո՞նց կատակ աներ։ Ու սրտնեղած սկսեց նախատել Բողարին.

— Դե, իհարկե, պար կգաս. քո փորում հարսանիք ա, իմ փորում կնունք էլ չկա...

Ափսո՛ս, Մելոնց Ամին շուտ մեռավ։ Ապրեր, թեթևանար իր բեռը, երևի չունենար այն օրերի սրտնեղությունը և այլևս մոայլ ու դառն կատակներ չաներ։

ԱՍԱՏՈՒՐԱՆՑ ԴԱՆԵԼԸ

Նիհար, վիզը բարակ, մեծ փափախը գլխին մի մարդ էր Ասատուրանց Դանելը։ Իր կյանքում բացի շոբանությունից ուրիշ բան չգիտեր։ Սարի լանջով մեկ փռում էր ոչխարի հոտը, մեջքը մի քարի դեմ անում, շվի էր նվագում, կամ գալիս էր մեզ՝ տավարածներիս մոտ, օրվա նորություններ իմանալու։

— Է՛,— տնքում էր նա իր ծակ տրեխներին նայելով,— կաշին թանկացավ, կաշի՛ն, մնացածը՝ հե՛չ...

Նրա համար կյանքում գլխավոր բանը կաշին էր. դե, ամեն օր սարերը չափում էր ոտքով, իսկ գիշերները հանդերն ընկած կորած ոչխար էր փնտրում կամ գայլերին էր հալածում «արխաջի» մոտերք. կաշի՞ կդիմանա հովիվ մարդուն։

Մի օր Դանելը սարից իջել էր Դիլիջան, յուղ-պանիր էր վաճառել, տրեխացու էր գնել ու մնացել էր ապշած նրա գնից։ Տասնինը թվին էր, դրամի արժեքը օր-օրի ընկնում էր։

Դիլիջանից եկավ Դանելը և երկու օր ոչ ոքի հետ չխոսեց. մոայլ էր։ Երրորդ օրը մոտեցավ մեր խմբին ու սիրտը բաց արավ առաջներս.

— Աշխարքը կքանդվի... անպայմա՛ն կքանդվի,— համոզված հայտարարեց նա։— Չորս հարյուր մանեթ եմ տվել մի ջուխտ տրեխացու առել, ի՞նչ տրեխացու, ոնց որ լվի կաշի...

Ու վշտացած, գլուխն օրորելով գնաց հասնի իր հեռացող հոտին։

— Ինչքա՞ն պիտի բարակ լինի իր գնած տրեխացուն, որ

www.a-pdf.com

լվի կաշվի հետ է համեմատում Դանել քեռին,— մտածում ենք մենք։

Մյուս օրը Դանելը էլի հոտը փռեց լանջին ու մոտեցավ մեզ։ Ավելի տխուր էր երևում։

— Ի՞նչ է պատահել, քեռի Դանել,— հարցրինք մենք։

Նստեց, գլուխն առավ ծնկների մեջ ու մի պահ անշարժ մնաց։

— Է՜, էլ ինչ պիտի պատահեր... գիշերս էն սատկած շունը կաշին տարել է... Դիլիջանից էի առել չորս հարյուր մանեթով... Կաշի որն է, երկու մատը ճակատ ուներ...

Ու կաշվի հաստությունը ցույց տալու համար նա երկու մատը միացրեց ու մեկնեց մեզ...

ՂԱԶԱՐ ՔԵՌԻՆ

Երկար, ճերմակ մորուքով, փայտը ձեռքին, հին չուխան հագին, աչքերը ցավոտ, կռացած մի ծեր մարդ էր Ղազար քեռին։ Միշտ լավատես, միշտ լավն ասող, հարևաններին սիրտ տվող, դժբախտության դեպքում մխիթարող. ահա նա՝ իր բնավորությամբ։

Երբ գայլը ընկնում էր հոտի մեջ, տասը-քսան ոչխար խեղդում, Ղազար քեռին գնում էր իր գլխին վայ տվող տիրոջ մոտ ու մխիթարում.

— Էն որ մնացել է, գտած բան է։ Անիրավը կարող էր բոլորին կոտորել...

Որ մեկը ծառից ընկնում էր ոտը ջարդում, Ղազար քեռու առաջին հարցն էր լինում.

— Հո երկո՞ւ ոտը չի՞ ջարդվել։ Չէ՞... Դե, փառք աստծու, լավ է որ մեկն է, թե չէ կարող էր երկուսն էլ ջարդվել... Էն ժամանակ ինչ կլիներ դրա օրը...

Որ մեկից գողերը մի անասուն էին տանում, Ղազար քեռին տիրոջն այնպիսի խոսքեր էր ասում, որ սա ուրախանում էր, թե ինչ լավ է, որ մեկն են տարել։ Իսկ եթե բոլորը տանեի՞ն...

Մարդուն հասած ամենածանր դժբախտությունն էլ կարող էր պատճառաբանել, արդարացնել։

— Ցավը որ կա, մարդկանց համար է։ Մարդը որ իր ցավը չքաշի, հո էն սարը չի՞ քաշելու,— խրախուսում էր նա։

www.a-pdf.com

Մի անգամ էլ մի կին անտառում հաճար թափ տալիս ընկնում է ծառի վրայից ու մեռնում։

Ուրիշների հետ Ղազար քեռին էլ է գնում դեպքի վայրը։ Ահով նայում է հաճարենու բարձր կատարին, նայում է նրա տակի ձորում կուտակված քարերին, որոնց վրա ընկել ու ջախջախվել է կինը և գլուխն օրորելով ասում է.

— Էլի լավ է պրծել... Փառք աստծու, էլի լավ է պրծել...

ԴԱՐԲՆԱՆՑ ՄԻՆԱՍԸ

Հիշում եմ, մեր գյուղում հեշտ չէր տետրակ, մատիտ, նավթ, լամպի ապակի և ուրիշ մանրուք գնելը։ Թանկ էր, իսկ փող հո չկար ու չկար։

Երբ ես սովորում էի գյուղական դպրոցում, ինձ համար մի գրչածայր գնելը բավական դժվար բան էր։ Իսկ մեզնից աղքատ մարդ շատ կար գյուղում։

Ահա մեր գյուղացի Մինասը։ Կինը նրան ուղարկել է Դիլիջանից լամպի ապակի գնելու։ Ապակին գնել ու փափախը կրունատակին դրած, քրտնքի մեջ կորած բարձրանում է դեպի սարի լանջին փռված մեր գյուղը։

Դիլիջանի ու մեր գյուղի միջև մի քարքարոտ դարիվեր կա։ Ոնց է լինում, այդ դարիվերում ապակին վայր է ընկնում-ջարդվում։ Խեղճ մարդը նստում է գետնին, աչքերը խուփ անում և շուտ-շուտ ասում։

— Աստված ջան, երազ ըլի, երազ ըլի...

Աչքերը բաց է անում. չէ՛, երազ չի, ապակին իսկապես որ ջարդվել է։

Դե հինգ կոպեկը որտեղի՞ց, որ ետ դառնա մեկն էլ գնի։

Կոտրված սրտով գնում է գյուղ։

Մեր գյուղի ներքև մի հարթություն կա։ Այդտեղ Մինասը մի ասեղ է գտնում, կռանում է, որ վերցնի՝ չի կարողանում։ Դե, հողագործի կոշտ ու կոպիտ մատնե՞ր, նա էլ բարակ, փոքրիկ ասեղ, ո՞նց բռնի։ Համ էլ մի ուրիշ տեսակ մատներ էին Դարբնանց Մինասի մատները։ Բայց այդ մատների մասին ընթերցողին գաղափար տալու համար լավ է նկարագրենք այդ մարդու ոտները։

Ամեն աշնան ու գարնան անձրևներին այնպիսի ցեխ էր լինում մեր գյուղի փողոցներում, որ կանայք չէին կարողանում

www.a-pdf.com

գնալ աղբյուրը՝ ջրի։ Ու բոլորն էլ սպասում էին, թե երբ է Մինասը կովերին աղբյուր տանելու, որ ճամփան բացվի։ Իսկ ինչպե՞ս էր Մինասը դեպի ջուրը ճամփա բացում։ Իր հսկայական ոտներով։ Գյուղացիները ասում էին.

— Մինասը վաթսուներեք նոմերի տրեխ է հագնում։

— Մի գոմշի ձագի կաշվից Մինասի համար մի ջուխտ տրեխացու հագիվ դուրս գա...

Այդպիսի ոտներ ուներ Մինասը։ Ու մեր գյուղի կպչուն, ծընկահար ցեխի միջով որ նա գնում էր փնչոցով, կարծես մի-մի թիակ էին գնում ցեխին ու հուպ տալիս։ Նրա վիթխարի ոտնատեղերով գյուղի հարսները ազատ կերպով գնում էին աղբյուրից ջուր բերելու...

Այդ ոտներին համապատասխան էլ մատներ ուներ Մինասը։ Դե, այդպիսի մատներով նա ո՞նց վերցներ իր գտած ասեղը։ Գետնին շոքած շարշարվում է, շարշարվում՝ չի կարողանում վերցնել, միամիտ գյուղացին ուրիշ հնար էլ չի կարողանում մտածել։ Բայց ո՞նց թողնի-գնա, այն ժամանակ մեր գյուղացին ընկած ասեղը, մեխը, լծկանի ոտքից պոկված պայտը, թոկի կտորը անպայման պիտի վերցներ։

Վերջապես հնարը գտնում է. մի մեծ քար տնքտնքալով բերում է դնում ճանապարհի մեջտեղը՝ ասեղի վրա, նշան անում։ Երբ հասնում է տուն, ուրախ ասում է կնոջը.

— Կնիկ ջան, Դիլիջանի ճամփին քեզ համար մի ասեղ եմ գտել, չկարողացա վերցնեմ, գնա բեր։

— Ո՞նց գտնեմ էն մի թիքա երկաթի կտորը, ա՛յ սրտամեռ,— վրան չանչ է անում կինը։

— Կգտնե՞ս, վրեն մի ահագին գերեզմանաքար եմ դրել...

ՄԻՆԴԻՆ

Ցուրբինակ մարդ էր մեր գյուղացի Մցկանանց Քոքորը, որին չգիտեմ ինչու, Մինդի մականունն էին տվել։ Ամառ-ձմեռ մի ահագին փափախ էր դնում ու ման էր գալիս սպիտակ վարտիքով։

Զարմանալի բան, վարտիքով գյուղամեջ գնալուց չէր ամաչում, բայց որ հարևանի տանը հաց էին առաջարկում, ուտելուց հրաժարվում էր ամոթխածությամբ։

Պատկերացրեք գյուղական թոնրատուն, առաստաղը ծխից

www.a-pdf.com

սևացած։ Մինդին ծալապատիկ նստել է թոնրի մոտ՝ ճերմակ վարտիքով ու լուռ ծխում է իր ծխամորճը։ Հարսը դնչկալը բերանին կռանում թոնրից հանում է տաք-տաք լավաշներն ու դեմքը շուռ տալով և դնչկալը բերանին հագցնելով՝ կամաց ասում է.

— Ապի՛, հաց կեր...

«Չխոսկան» է, դեմ ու դեմ խոսել չի կարելի։

Մինդին լուռ ծխում է ու երբեմն իր կոշտ ձայնով, ծխամորճի կոթի արանքից մռլտում.

— Ուտում չեմ...

Իր հաշվով շնորհակալություն է հայտնում։

Հարսը մի լավաշ դրեց նրա առաջ և դնչկալի տակից նորից շշնջաց.

— Ապի, կե՛ր...

Մինդին ծխամորճը հանեց բերանից, գետնին թքեց ու նեղացած նախատեց.

— Վա՜, բա դու ամոթ չունե՞ս... ասեցի ուտում չեմ, էլի՛...

Մի տարի Մինդին իր հարևան Ղազարանց Քոքորի հետ գնում է Սևանի գյուղերը. գերաններ է տանում հացի հետ փոխանակելու։ Հյուր են մնում Դդմաշեն գյուղում։ Շատ են քաղցած լինում ու ապասում են, թե տանտերը երբ է հաց դնելու իրենց առաջ։

Քոքորը, որ մի աչքաբաց ու համարձակ մարդ էր, նայում է թոնրատան առաստաղին ու տանտիրոջը հարցնում.

— Ախպե՛ր, ձեր տան գերանները հացենի՞ են...

Տանտերը հասկանում է, թե ինչ է ակնարկում հյուրը ու իսկույն հնարը գտնում է.

— Չէ, ախպեր, սաբրենի[1] են...

Լռում են, դժկամ խոսում դեսից-դենից. դե քաղցած մարդը ի՞նչ սրտով զրույց անի...

Վերջապես տանտիկինը քուրսին վերցնում է թոնրի վրայից ու կճուճը հանում, կերակուրը դնում է հյուրերի առաջ, սպիտակ լավաշն էլ հետը։

Քոքորը կատակով ասում է տանտիրուհուն.

— Ընկերոջս համար գդալ չբերեք, կուշտ է, չի ուտելու...

Մինդին համ ամաչկոտ էր, համ խռովկան։ Այդպես էլ չի

---

1 Սաբր արտ — համբերիր։

www.a-pdf.com

մոտենում ուտելիքին, ու խեղճ Քոքորը ստիպված նրա բաժինն էլ է ուտում...

Երկու օր մնում են այդ տանը, երկու օր Մինդին հաց չի գնում իր բերանը։ Քոքորը համոզում է, մղկտում, թե՝ «Այ տղա, հանաք արի, հաց կեր, հիմար հո չես...»։ «Չէ՞ որ չէ, ոնց թե գու խալխի մոտ ասես՝ գդալ միք բերի...»։

Այդպես էլ Մինդին մինչև իր կյանքի վերջը խռով մնաց իր հարևան Քոքորից։

ՓԱՓԱԽՉԻ ԱՍԱՏՈՒՐԸ

Մի անգամ փափախչի Ասատուրը գնում է Ղազախ, փափախներ է կարում ադրբեջանցիների համար ու փոխարենը ցորեն ստանում, բերում գյուղ։

Հիմի երեկո է, Ասատուրը նստել՝ զրույց է անում իր կնոջ՝ Անայի հետ. դե, քանի ամիս է հեռու են եղել իրարից, երևի իրար կարոտել են։

Ասատուրն ասում է.

— Կնիկ ջան, Ղազախում մի լավ ձիու քուռակ պատահեց, քիչ էր մնում առնեմ-բերեմ։

Անան ասում է.

— Ասատուր ջան, դե բերեիր, էլի՞... լավ կլիներ, վրեն կնստեի, Վարդավառին սարը կգնայի։

— Ինչի՞, բա ոտներդ ինչ են, որ էն խեղճ քուռակին ես ուզում նստել,— նեղանում է Ասատուրը։

— Բա ես խեղճ չե՞մ, էնքան ճամփեն ոտով եմ գնում,— բողոքում է կինը։

— Էն քյորփա քուռակին նստես, որ մեջքը կոտրի՞,— բարկանում է Ասատուրն ու կնոջը ոտի տակ տալիս ծեծում...

ՀԱՄԲՈՆ

Ոչ ոք նրա անունը չգիտեր, բոլորն էլ Կնյազ էին կանչում։ Կանչում էին ակնածանքով ու ահով։ Դե, սովորական մարդ հո չէր Կնյազը, ասում էին՝ սնգուկում թավադության թուղթ ունի՝ թագավորի ձեռքով կնքած։

Աղստև գետի ափին սիրուն շենքեր ուներ Կնյազը, հովիտը ամբողջովին այգի էր դցել, իսկ մեր գյուղի դիմացի անտառները

www.a-pdf.com

նրա ժառանգական սեփականությունն էին համարվում։ Դե եկ ահով ու ակնածությամբ ճանապարհ մի տա այդպիսի մարդու կառքին...

Մեր հարևան Համզաշիման գյուղից տրեխները հագներին, մեծ-մեծ փափախները գլխներին մարդիկ սայլերով գալիս էին Դիլիջանի ձորից փայտ տանելու։ Նրանցից մեկը՝ Համբոն, պատահում է Կնյազին ու խոսում հետը...

— Տղե՛րք, բոզիգեղցի[1] Համբոն Կնյազի հետ խոսել է...

Այդ լուրը տարածվեց մեր գյուղում, ու շատերը նախանձեցին այդ բախտավոր մարդուն։ Հետո էլ եկավ տեղ հասավ այդ դեպքի մանրամասնությունը։

Հենց հասնում է Համզաշիման, Համբոն, եզները դեռ չարձակած, բարձրանում է կտուրն ու ղիլ կանչում.

— Այ գեղացի՛ք, եկե՛ք, եկե՛ք...

Գյուղացիները հավաքվում են ու ներքևից վերև հարցնում.

— Այտա, էդ ի՞նչ է էլել...

— Ժողովո՛ւրդ,— կտուրից հանդիսավոր սկսում է Համբոն,— բա չեք ասիլ Կնյազն ինձ հետ խոսեցավ...

— Պա՛՝ա... Այտա, ի՞նչ ասաց։

— Ասաց՝ շան որդի՛, սելը ղրաղ քշի...

— Պա՛՝ա, դրո՞ւստ, այտա...

Մի շաբաթ շարունակ Համզաշիմանում բոլորի խոսակցության նյութն այն էր, թե այդ ինչպես է եղել, որ Կնյազը խոսել է Համբոյի հետ...

Շատ կենսուրախ մարդիկ էին այդ համզաշիմանցիները։ Ապրում էին լեռներում, ցանքը կարկուտն էր տանում կամ սեպտեմբերին ձյուն էր գալիս, բերքը դաշտում ծածկում, բայց էլի չէին ընկճվում, էլի դժբախտության ժամին կատակներ էին անում, թեև դառը կատակներ։

Մի անգամ քառասուն սայլով Դիլիջանի ձորից փայտ են տանում գյուղի հարուստների համար, որ փոխարենը կարտոֆիլ առնեն, մի կերպ ձմեռն անցկացնեն։ Ճանապարհը վատ ու դարիվե՛ր, նիհար եզները ուժ են տալիս, քրտնում, տերերը սրբտնեղում են, հայհոյում։ Սայլերը առաջ են գնում ծանր, ճռնչալով. մազութն ո՞վ է տվել աղքատին, որ յուղեր առանցքները։ Երկինքն էլ մի կողմից է մռայլվել, սկսել է ձյուն տեղալ։ Ու

---

[1] Բոզիգյուղ — Համզաշիմանի հին անունն է։

www.a-pdf.com

Մարդկանց այդ սրտնեղած ժամանակ մի դժվարին դարիվերում նրա հնչում է նույն համզաշիմանցի Համբոյի ձայնը.

— Հոո՜, հո՜, կանգնի՜ր...

Քարավանի առաջից նրա սայլն էր գնում։ Կանգնեցնում է սայլը ու ամբողջ քարավանը կանգ է առնում։

Ի՞նչ է պատահել, որ այս դժվարին տեղը Համբոն քարավանը կանգնեցնում է։

— Հո՜ո, հո՜... Այտա՜, ակների տակին քար դրեք ու դեսն եկեք,— գոչում է նա։

Չէ՜, անպայման մի կարևոր բան է պատահել։

Գնում հասնում են առաջին սայլին ու հարցնում.

— Այտա Համբո, էդ ի՞նչ է պատահել...

— Հի, հի, հի, այտա ճիճուն...

Ու ճիպոտի ծայրով ցույց է տալիս աղբի միջի ճիճուները։

Ահա ինչի համար էր քարավանը կանգնեցրել կեսճամփին։

Ասում են այդ օրը Համբոն պատժվում է իր հիմար կատակի համար. նրա սայլը եզները հետը զառիվայրով գլորվում է անդունդը։ Ընկերները վազում են ձորը, իսկ Համբոն նրանց ետևից ձայն է տալիս.

— Այտա՜, եզները ջհանդամը, մի տեսեք լուծն ու սամիները տե՞ղն են...

Ասում են՝ Համբոն իր կյանքում սպիտակ հաց տեսած չի լինում, իսկ Համզաշիմանի հացը առաջ միշտ սև էր. կամ մրիկ էր խառը լինում, կամ մնում էր անձրևի տակ ծլում՝ «ածիկ» դառնում, իսկ «գժվուկ» կամ «դև» կոչված մոլախոտի սերմեր նրանց հացահատիկի հետ միշտ կար, որից ուտողների գլուխը պտտվում էր, աչքերի առաջը մթնում, մեր խոսքով՝ «գժվում էին»։

Դե իր ամբողջ կյանքում միայն նկարագրածս հացը կերած մարդը ի՞նչ իմանար, որ աշխարհի երեսին ուրիշ գույնի հաց էլ է լինում։

Մի անգամ Համբոն Դիլիջանում մի լավ հագնված մարդու ձեռքին ճերմակ հաց է տեսնում, իսկ ինքը սև հաց է ուտելիս լինում։ Բերանի ջուրը գնում է, աչքը չի կարողանում կտրել այդ չտեսնված հացից։ «Թագավորը անպայման էդ հացից ուտելիս կլինի»,— մտածում է նա ու որոշում է՝ ինչ գնով էլ լինի համը տեսնել։ Անհամարձակ մոտենում է, փափախը վերցնում դնում թևի տակ ու ասում.

www.a-pdf.com

— Աղա ջան, աղա, էդ սպիտակ հացից մի կտոր տա՞ս դնեմ իմ սև հացի մեջ ուտեմ...

Երևի ուզել է պանրի տեղ գործածել։

Շատ հնարամիտ մարդ էր Համբոն։ Տեսեք, թե մի անգամ ինչ սրամիտ բան է անում։

Գետի մյուս կողմի անտառից ագռավները երամ-երամ թռած գալիս էին ու վնասում գետի այս ափին տարածված արտերը։

Դե ոնց կռվես այդ չարիքի դեմ։ Մտածում են մտածում, էլի Համբոն է հնարը գտնում։

— Տղե՛րք,— ասում է,— եկեք գնանք մեծ կամուրջը քանդենք, որ ագռավներն էլ գետն անց չկենան ցանքերի կողմը...

— Գժվուկի հաց են ուտում, դե իհարկե կգժվեն,— ծիծաղում էին մեր գյուղի կուշտ մարդիկ՝ մեր հարևան համդաշիմանցիների միամիտ արարքները մեծացնելով։

Այդ չէր պատճառը։ Համբոնների ամբողջ կյանքը կռիվ էր դաժան բնության, դաժան կարիքի, դաժան կարգերի դեմ։ Պետք է մեկ-մեկ էլ «խենթություն» անեին, մեկ-մեկ էլ ծիծաղեին։ Թե չէ այն ժամանակ մարդ կարող էր խեղդվել թախիծի ծովում...

ԱՆՏԱՌԱՊԱՀ ՍԱՐԳԻՍԸ

Մեր գյուղացի Սայնանց Դալլաքին մի շատ նենգ շուն ուներ։ Դա առանց հաչելու, գաղտագողի կմոտենար մի ոտաբոբիկ աղքատ երեխայի, ջրի գնացող մի կնոջ ու՝ հա՛մփ, կբռներ, կծվատեր շորերը, արյունլվա կաներ։

Վաղոն ու Հայկը Դալլաքի տան մոտով ամեն օր անասունները հանդ էին տանում ու ամեն առավոտ-երեկո շունը գաղտագողի հարձակվում էր նրանց վրա։ Հաց էին գցում, շոյող խոսքեր էին ասում, ուզում էին իրար վրա չհարձակվելու դաշինք կնքել այդ շան հետ՝ չէր հաջողվում։ Դե եկ այդպիսի կենդանուն խնայիր։

Մեր գյուղում խիղճը կորցրած մի անտառապահ կար՝ Սարգիս անունով։ Անտառում կացնի թխկոց էր լսում թե չէ, տեղ էր հասնում ու ծառերի ետևից թաքուն նայում։ Թե ծառը կըտրողը գյուղի հարուստ, ազդեցիկ մարդկանցից է՞, մոտենում էր, մեղրածոր ժպիտը դեմքին խորհուրդ տալիս.

www.a-pdf.com

— Կտրելուց հետո քոթուկն ու ճղները վառի ու հետո էլ խաշամով ծածկի, որ չհասկանան, թե էստեղ ծառ է էլել...

— Հա՛, Սարգիս ջան, կանենք, հո խամ չենք,— աչքով էր անում ծառը կտրողը և ավելացնում,— իրիկունը մի մեր տունը դիպի...

Երեկոյան Սարգիսը ծառագողի «տունն էր դիպչում», խմում էր հոնի օղին ու բեղերը սրբելով դուրս գալիս։

Թե որ անտառում մի խեղճ, աղքատ մարդ էր տեսնում, թեկուզ նա մի ճյուղ էլ կտրած չլիներ, կացինը խլում էր, արձանագրություն կազմում ու սպառնում.

— Էգուց էս թուղթը որ իշխանությանը հասցնեմ՝ կորած ես, կուղարկեն Սիբիր, ոսկորդներդ կփտի...

Ապա վերջում, բաժանվելիս, իբր թե զիջողաբար, ավելացնում է.

— Իրիկունը մեր տունը դիպի, գուցե մի հնար անենք...

Ակնարկը պարզ էր։ Թե գյուղացին իրիկունը մի բան էր տանում անտառապահի տուն՝ ասենք մի գլուխ պանիր կամ մի հավ, կամ մի աման յուղ, կամ մի դառ, հո կացինը ետ էր ստանում ու ազատվում։ Իսկ եթե դատարկ ձեռքով էր գնում մոտը, մի քանի օրից հետո այնպիսի մի տուգանք էր գալիս շրջանի կենտրոնից, որ խեղճ մարդու աչքերը մթնում էին։

Դե, Ղազարանց շոփուռ Վաղո, արի այդպիսի մարդուն խնայիր։

Մի երեկո Դալլաքի շունը ճանապարհի մեջտեղը մեկնվել էր ու քավել իր գործած բազմաթիվ մեղքերը...

— Հիմի ի՞նչ անենք,— հարցնում է Հայկը։

— Ո՞նց թե ինչ անենք, ինչ անհասկացող տղա դուրս եկար, տո՛։ Պարզ չի՞, որ տանելու ենք Սարգսի դռան ճակատին կախ տանք։

— Ինչի՞ ենք կախ անում որ...

— Կախ ենք անում, որ լուսանալիս տնից դուրս գալուն պես կարծի, թե բոզիգեղացիք իրեն ոչխար են բերել...

Բոզիգեղացիք այն ժամանակ օգտվում էին մեր անտառից և Սարգսի համար որպես կաշառք ոչխար բերելու սովորություն ունեին։

— Բա չեն ասի՞, թե ոչխարն ինչի են դռան գլխից կախել,— հարցնում է Հայկը միամտաբար։

— Անխե՛լք։ Բոզիգեղից մարդը հո կաշառքը հետը չի գնա

www.a-pdf.com

բարեկամի տուն, ախր գործը կբացվի... Գիշերը եկել է, տեսել Սարգիսը քնած, ոչխարը բարձր տեղից կախ է արել, որ շները չուտեն, իսկ ինքը դատարկ գնացել է բարեկամի տանը քնելու...

Համա ֆանտազիա ունի այդ Վաղոն, հա՞...

Լուսադեմին անտառապահի կինը դուռը բացում է ու տեսնում է վերևից մի կենդանի կախված։ Վախեցած ներս է ընկնում, ամուսնուն թե՝

— Էս ի՞նչ կլի մեր դռանը կախած։

— Ի՞նչ պիտի լինի, անխելք, ոչխար են բերել, ի՞նչ ես սրտաճաք եղել,— ուրախացած պատասխանում է ամուսինը, աղջամուղջի մեջ կենդանու կակուղ մարմինը շոշափելով։

Հետո թե՝

— Այ կնիկ, վայ թե ոչխար չի, էծ է, բուրդ չունի։ Որ կողմը ձեռ եմ տալիս՝ մազ է...

Ու մի հայհոյանք է բաց թողնում մեր հարևան Բոզիգյուղի «ժլատ» բնակիչների հասցեին.

— Իջևանցոց ենք «ասեղ մաշկող» ասում, տո աննամուսներ, էն ահագին գերաններ տեղը քոսոտ էծ եք բերո՞ւմ... մի ճրագը վառի, կնիկ....

Ճրագը դուրս են բերում ու տեսնում կախվածը նույնիսկ այծ էլ չի, Դալլաքի շունն է...

Ճարահատյալ շան դին քարշ տալով տանում է ներքևի ձորը, բայց առավոտյան, երբ տնից դուրս է գալիս, տեսնում է էլի սատկած շունը կախված է իր կտուրից՝ դռան գլխին...

Դրանից հետո ամեն առավոտ նա հայհոյելով շունը քարշ էր տալիս-տանում գյուղի տակի ձորը, իսկ գիշերները Հայկը քրտինքի մեջ կորած, լեշը շալակին ձորից դուրս էր գալիս ու տանում նորից կախում իր տեղը։

Այդպես պատժեցին կաշառակեր ու անխիղճ անտառապահին մեր գյուղի ջահելները։

ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԸ

Պատմում են, որ մեր գյուղի քահանա տեր Կարապետը մի լոթի ուտուղ-խմող, հայհոյող ու ծեծող մարդ է եղել։ Շատերն են իրենց մեջքին փորձել նրա ծանր գավազանի ուժը։

Մի գարնանամտի հանկարծ խոր ձյուն է գալիս, հանդերը կապվում են, անասունները մնում են գոմերում քաղցած։

www.a-pdf.com

Զատկի հինգշաբթի այդ օրը մեր գյուղացիները, ձնից ու պակասությունից սրտները սևացած, պատարագի չեն գնում։ Եկեղեցում հավաքվում են միայն մի քանի տասնյակ աղքատ պառավներ։ Քահանան ստիպված սկսում է ժամերգությունը։ Սկսում է, բայց ի՞նչ սրտով երգեր, ի՞նչ մարդիկ էին եկել, որ ինչ խաչհամբույր տային։

Կրոնական առասպելի համաձայն, իբր թե իր խաչելությունից մեկ օր առաջ Քրիստոսը ջուր է դնում և համեստությամբ լվանում իր աշակերտների ոտքերը։ Այդ ծեսը կատարվում էր հայկական գյուղում ամեն զատկի հինգշաբթի երեկոյան։ Եկեղեցի գնացողներից ամեն մեկը հետը մի քիչ կարագ էր տանում, որ քահանան, Քրիստոսի օրինակով, լվա մեկի ոտքը և վրան կարագ դնի։ Դրա անվան տակ, ամե՛ն զատկի հինգշաբթի եկեղեցում համարյա մի փութ կարագ էր հավաքվում, որ վերջը, եհարկե, փոխադրվում էր քահանայի տուն։

Այդ երեկո տեր Կարապետը շատ էր զայրացած. նայում էր ամանին՝ հազիվ մեկ-երկու գրվանքա կարագ էր հավաքվել. դե գարնանամտի պակաս ժամանակն էր, ձյունն էլ եկել էր, դուռը կտրել, կարագը որտեղի՞ց, որ եկեղեցուն բերեին։

Շարական էր կարդում տեր Կարապետը, բայց սրտովը սև արյուն էր գնում. սպասված եկամուտը չկար։ Դե, թատրոնի տերն ի՞նչ տրամադրության մեջ կլինի՝ երբ տեսնի, որ ներկայացումն արդեն սկսվել է, իսկ դահլիճում ընդամենը երեսուն պառավ կա, տոմսերն էլ դրամարկղում մնացել են առանց կտրելու...

Վերջապես սկսվում է ոտնլվայի արարողությունը։ Քահանան տաք ջուրը լցնում է կոնքը, սրբիչը գցում է ուսը և շոքած սպասում։

Ըստ ընդունված կարգի, գյուղի անվանի մարդկանցից մեկը պետք է ոտը մերկացներ և մեկներ քահանային, որ լվանա։ Գյուղի քեդխուդաները, որ բոլորն էլ անասնատեր էին, այդ օրը գնացել էին ձմեռանոցները՝ իրենց անասունների համար կեր հայթայթելու։ Եկեղեցում եղած մարդկանցից շատ թե քիչ աչքի ընկնում Բաղալանց Արթինը։

Սա անհամաձակ առաջ է գալիս, ոտներից մեկը մերկացնում ու դնում կոնքի մեջ։

Տեր Կարապետը, որ մի անղուսպ մարդ էր, գոռում է.

www.a-pdf.com

— Ավետարանն ասում է՝ «զոտս լվաց աշակերտաց» և ոչ թե Բաղալանց քոնձոտ Արթնի...

Խեղճ Արթինը ոտքը ամոթահար հագնում է ու դուրս գալիս եկեղեցուց։

Այդ դեպքի առթիվ մեր գյուղացիք քահանայի վրա շատ էին բարկացել։ Մադոնց Բեգոն, որ մի կտրուկ մարդ էր, մյուս օրը գյուղացիներին ասում է.

— Տղե՛ր, հետս կգաք եկեղեցի, ինչ ես անեմ, դուք էլ է՛ն կանեք...

Պայմանավորվում են։

Եկեղեցին մեծ եկամուտ էր ստանում զատկին։ Այդ օրերը քահանայի «բերքահավաքի» օրերն էին՝ է՛լ մատաղներ, է՛լ աջհամբույր, է՛լ տնօրհնեք, է՛լ գերեզմանօրհնեք, այդ բոլոր ծիսակատարությունները մի-մի պատրվակներ էին, որ ո՛վ ի՛նչ կարող է տա քահանային ու եկեղեցուն։

Զատկի ուրբաթ գիշերը, լույս շաբաթ, երբ եկեղեցում Քրիստոսի մահվան ծեսն են կատարում, հավատացյալները, ըստ սովորության, համբուրում են Քրիստոսի «դագաղը» (որ դնում են եկեղեցու բեմում) և «դագաղին» դրված արծաթե սկուտեղի մեջ դրամ դնում՝ ով ինչքան կարող էր։ Դե, Քրիստոսը, որ իր կյանքը չի խնայել մարդկության համար, դու քո կոպեկները ո՞նց կխնայես... Աղքատները ստիպված պարտք էին անում, որ այդ օրը դատարկ գրպանով եկեղեցի չգնան։

Ժամասացությունը վերջանալուց հետո սկսվում է աջհամբույրի ծեսը։ Կարգն այն էր, որ բոլորը պիտի մեկ-մեկ մոտենային քահանային, համբուրեին ավետարանը և սկուտեղի մեջ «գանձանակ» գցեին։

Առաջինը մոտենում է Բեգոն, համբուրում ու առանց կոպեկ գցելու գնում։ Տեր Կարապետը քիչ է մնում պայթի բարկությունից. մոտիկ կանգնածները լսում են նրա տնքոցը։ Բեգոյից հետո, նրա օրինակով մեկ-մեկ գալիս խաչը համբուրում ու առանց կոպեկ գցելու գնում են եկեղեցում հավաքված գյուղացիները։ Տեր Կարապետը ամեն մոտեցողի դեմքին աչքերով շանթ է թափում, որ սա «գանձանակ» գցի, իսկ Բեգոն քիչ հեռու կանգնած ամեն մոտեցողի հայացքով խստությամբ հետևում է, որ չխախտի պայմանը, կոպեկ չտա։

Վերջապես տեր Կարապետը վերցնում է դատարկ սկուտեղը, զրնգոցով բեմի խորքը շպրտում, դուրս գալիս եկեղեցուց ու

հասնում սիրտը հովացած գեպի իր տունը շտապող Արթնի ետևից։

— Խոսքներդ մեկ եք արել, հա՞, քյոփակ Արթին,— գոչում է վիրավորված քահանան ու իր հոնի գավազանով դրան մեկ, հինգ, ջարդում։ Գյուղացիները գազազած տերտերին ուժով տանում են իր տուն և այդ օրվանից մեր գյուղի բնակիչները «բոյկոտ» են անում նրան. ոչ ոք մատաղ չի անում, ոչ ոք զատկին աջհամբույր չի տալիս, ոչ ոք տերտերին չի թողնում տնօրհնեքի համար իր տունը մտնի, ոչ ոք զատկի երկուշաբթի օրը նրան թույլ չի տալիս իր հարազատի գերեզմանն օրհնելու։ Տերտերը միաժամանակ խեղճանում է, մինչև որ Էջմիածնից վարդապետ է գալիս՝ մեր գյուղում առաջացած այդ կնճիռը հարթելու։

ԸՄԲՈՍՏ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Մի անգամ հայրս իր ավագ եղբայր Աթոյի հետ իրենց տան առաջ գերան են սղոցում։ Հարևանը վազելով գալիս իմաց է տալիս թե՝ պրիստավը գալիս է։

— Է՛հ, գալիս է թող գա, ծառը բիլեթով ենք կտրել, հո թաքուն չենք բերել,— պատասխանում է հորեղբայրս ու շարունակում են գերանը սղոցել։

Պրիստավը իր մարդկանցով գալիս է, կանգնում դրանց գլխավերևը։ Եղբայրները գլուխները կախ շարունակում են իրենց աշխատանքը։

— Բիլեթ ունե՞ք, որ սղոցում եք,— հարցնում է պրիստավն ու ձիու վրայից կռանալով՝ մտրակի կոթով բզում է Աթո ամու ուսին։

— Ես անասո՞ւն եմ, որ ինձ փետով բզում ես,— գլուխը վեր քաշելով հարցնում է հորեղբայրս, ու սղոցը դեն գցելով՝ եղբորը կարգադրում է,— ադա՛, Ստեփա՛ն, լինգը վերցրու, ես դրա եկած ճամփեն...

Լինգերը վերցնում են և տուր թե կտաս՝ պրիստավին ձիուց վեր են գցում։

Գյուղացիները վրա են հասնում, պրիստավին ազատում, դնում ձիու վրա ու ճամփու դնում։

Հորս և իր եղբորը ձերբակալեցին։ Նրանք բանտ էլ նստեցին, շատ կաշառքներ էլ տվին, բայց իրենց արժանապատվությունից ոչ մի մաղ չզիջեցին այն ժամանակվա իշխանությանը...

www.a-pdf.com

ՊԱՊԱՆԸ

Շատ աղքատ մարդ էր մեր հարևան Պապանը, այնքան աղքատ, որ նավթի ճրագ անգամ չէր վառում. երեկոները նրա տան պատուհանները միշտ սև էին լինում ու մռայլ։

Հենց մթնում էր, կինը երեխաներին քնեցնում էր մի ընդհանուր, քրքրված վերմակի տակ։ Դժվարությամբ էին քնում քաղցած երեխաները, իսկ մայրը մեղմ ու տխուր համոզում էր.

— Իրիկվա կերածը կորած է, բալա ջան, քնի՛ր...

Երբ երեխաները քնում էին, նրանց մայրը օջախի առաջ նստած կարկատան էր անում կամ գուլպա գործում, իսկ ամուսինը կրակի լույսով փայտ էր տաշում՝ կոթեր էր պատրաստում՝ կացնի, բահի, գերանդու։

Մի երեկո էլ, երբ կինը տանը չէր և օջախում թաց փայտն էլ վատ էր վառվում, Պապանը որոշում է շռայլություն անել և ճրագի լույսով տրեխ գործել։

Հին ճրագը վառում է, կաշին ձևում ու հենց սկսում է դաշույնի ծայրով ծակոտել տրեխացուն, լույսն իջնում է։ Թափ է տալիս ճրագը, տեսնում է միջին քիչ նավթ է մնացել։ Ստուգում է նավթամանը՝ դատարկ է։ Իսկ տրեխներ պիտի անպայման գործի, որ լուսադեմին հագնի ու ճանապարհվի դեպի Դիլիջան՝ գործ որոնելու։ Բայց ճրագը հակառակի նման իջնում է։ Պապանը բզի ծայրով բարձրացնում է պատրույգը և շարունակում իր գործը, բայց քիչ հետո լույսը նորից աղոտանում է։ Նորից է պատրույգը բարձրացնում, բայց նավթի պակասությունից պատրույգը ճրթճրթում է ու պատում «ճպուռներով»։

— Տե՛ր աստված, դու ինձ համբերություն տաս,— վրդովվում է Պապանն ու աղոտ լույսի տակ շարունակում իր գործը։

Լույսը նորից է իջնում, Պապանը նորից է պատրույգը բարձրացնում ու հաշտարար տոնով խոսում հետը.

— Ա՛յ ճրագ, համբերիր տրեխներս պրծնեմ, հո ծակ տրեխներով չե՞մ քաղաք գնալու...

Լույսը նորից է իջնում։

— Ա՛յ ճրագ, արի կլինի դու նամուսով ճրագություն արա, թե չէ, արևս վկա, վերջը վատ կլինի, ա՞յ,— նախազգուշացնում է Պապանը՝ պատն ի վեր կանգնած մահակին նայելով։

Ճրագը չի հասկանում տիրոջ ակնարկը և ոչ էլ աղդվում է

www.a-pdf.com

նրա զուսպ, բայց սպառնալից տոնից, էլի ճրթճրթում է ու իջնում։

Այն ժամանակ Պապանը համբերությունից ելած՝ գնում է բերում իր մեծ չոմբախը, կանգնում է ճրագի գլխավերևն ու ահարկու ձայնով նախազգուշացնում.

— Ա՛յ ճրագ, պատրույգդ մի անգամ էլ կբարձրացնեմ, բայց որ իջել ես՝ հետո ինձանից չնեղանաս, հա՞...

Այդպիսի պայման է դնում Պապանը դատարկ ճրագի առաջ, պատրույգը բարձրացնում է ու շարունակում տրեխը գործել։ Մեկ-մեկ էլ ցանցառ հոնքերի տակից թշնամաբար նայում է նրան, որ տեսնի հո չի՞ խախտում պայմանը։

Իսկ ճրագը արդեն առանց բոցի իր խավարող ճպուռներով նայում է վրդովված տիրոջը։

Այն ժամանակ տեղից վեր է կենում Պապանը, տրեխն ու բիզը մի կողմ է նետում, վերցնում է կողքին մեկնված մահակն ու հայհոյում.

— Ես քո էսենցն ու էնենցը, ճրագ ես՝ ճրագություն արա...

Ասում է ու մահակը թափով վրա բերում հանգչող ճրագի գլխին...

Հանգիստ քո աճյունին, Պապան քեռի։ Գիտեիր, որ անլեզու ճրագը մեղավոր չէ, բայց սրտիդ դառնությունը նրա վրա էիր թափում։ Կենդանի լինեիր ու տեսնեիր, ամեն երեկո ի՞նչ պայծառ լույս է հորդում քո տան երբեմնի խավար լուսամուտներից...

ՔԵՌԻ ՄՈՒԿՈՒՉԸ

Զարմանալի լավատես ու հանգիստ մարդ էր քեռի Մուկուչը։ Ինչ ծանր ձախորդության որ հանդիպեր, հանգիստ կասեր.

— Բալքի հենց լավը դա՞ էր...

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մուկուչի միակ որդուն ձերբակալեցին և աքսոր ուղարկեցին։ Կինը փետում էր իր մազերը, իսկ ամուսինը հանգիստ ծխում էր ծխամորճն ու ասում.

— Վայնասուն մի բարձրացնի, ա՛յ կնիկ, բալքի լավը հենց դա՞ էր...

— Տունդ քանդվի, Սիբիրից էլ վատ տե՞ղ կա որ... Ջիգյար չունես, ջիգյա՛ր։

www.a-pdf.com

Ու կինն անիծում է իր չար բախտը և ամուսնու հիմար լավատեսությունը։

Շատերի տղաները գնացին պատերազմ ու ետ չեկան. իսկ Մուկուչի տղան ժամանակը լրացնելուց հետո Սիբիրից վերադարձավ տուն։

— Բա որ ասում էի՝ բալքի լավը դա՞ է, անիծում էիր, հիմի ո՞նց է։ Որ չբռնեին, հո՞ ուրիշների պես կորչելու էր կռվում,— ասում էր Մուկուչը՝ որդու տեսքից ուրախացած։

Գյուղացիները մռայլ գանգատվում էին, թե՝ «Շատ անձրև եկավ, արտերը հոռանում են, փչվում», իսկ Մուկուչ քեռին հանգիստ ծխում էր ու անվրդով պատասխանում.

— Ոչի՜նչ, թող գա, բալքի հենց լավը դա՞ է. կարտոֆիլի ու խոտի բերքը շատ կլինի...

Մի տարի Մուկուչ քեռին մի քանի մարդու հետ գնում է Սևան ձուկ բերելու։ Ձիերով են գնում։ Վերադարձին Սեմյոնովկայի կեռմաններում մթնում է, Մուկուչ քեռին առաջարկում է այդտեղ գիշերել։ Բեռներն իջեցնում են հոգնած ձիերի վրայից, կրակ են վառում, բայց մառախուղ է բարձրանում, անձրևն սկսում է մաղվել, և մեր ճամփորդների տրամադրությունն ընկնում է։

— Դու որ չլինեիր, մենք էստեղ մնացողը չէինք։ «Մնանք հա մնանք», հիմի լա՞վ է, կուչ ենք եկել անձրևի տակ,— նախատում է ընկերներից մեկը։

— Ոչինչ, բալքի հենց լավը դա՞ է,— հանգստացնում է Մուկուչը։

Ընկերները վրդովվում են ու որոշում խաղ խաղալ նրա գլխին. գիշերվա կիսին Մուկուչի կողովները բարձում են ձիուն ու տանում, կապում հեռու, անտառի խորքում, իսկ իրենք ետ են գալիս նորից քնում։

Դե հիմ թող ասի՝ «Բալքի հենց լավը դա՞ է», տեսնենք կասի՞,— մտածում են նրանք։

Լուսադեմին բեռները բարձում են ձիերին, որ գնան՝ Մուկուչի ձին էլ չկա, ձկնով լիքը կողովներն էլ։

— Հը՞, հիմի ո՞նց է, քեռի Մուկուչ, բալքի հենց լավը դա՞ է,— չարախնդությամբ հարցնում է ընկերներից մեկը։

— Ի՞նչ է եղել, գողերը տարե՞լ են... Է՛հ, ինչ իմանաս աշխարքի բանը, բալքի հենց լավը դա՞ է... Դուք գնացեք, ես մնամ իմ կորուստը ման գամ։

www.a-pdf.com

Անբնկերասեր, չկամ մարդկանց է պատահած լինում Մուկուչը։ Նրանք սրտները հովացած շարունակում են իրենց ճանապարհը, իսկ խեղճ Մուկուչը հողի վրա չոքչոք ձիու ոտնատեղերն է փնտրում։ Վերջապես գտնում է ու ձիու թարմ հետքը բռնած՝ խորանում է անտառում։

Մինչ Մուկուչը իր ձին է փնտրում, նրա շար ընկերները ուրախ-ուրախ շարունակում են իրենց ճանապարհը դեպի գյուղ ու ճամփին հեգնանքի խոսքեր շպրտում նրա հասցեին. «Բալքի հենց լավը դա է՞... խելքին մտիկ, ձին էլ են տարել, ձուկն էլ, էլի մեջքը գետնովը չի տալիս...»։

Հենց այդ ժամանակ ծառերի ետևից հրացանների փողեր են երևում, և ավազակապետը հրամայում է.

— Կանգնեցե՛ք, տկլորվեցեք ու շուտ կորեք, թե չէ բոլորիդ էլ կոտորում եմ...

Ընկերները տկլոր են մտնում գյուղ, իսկ Մուկուչը ձին առաջն արած, լիքը կողովներն էլ վրան բարձած։

— Հը՞, ոնց է քեֆներդ,— գյուղամիջին հարցնում է նա իր կողոպտված ընկերներին։— Ձիուս կորչելու վրա էիք ծիծաղում, չէի ասո՞ւմ թե՝ ինչ իմանաս, բալքի հենց լավը դա՞ է...

Այդ էր Մուկուչ քեռու հայացքը աշխարհի մասին, կյանքի մասին։ Դա էր նրա փիլիսոփայությունը։ Եվ դա նրան հոգեպես պահում էր շարով լիքն այն աշխարհում։

Երբ մեռնում էր, էլի վերջին խոսքն այդ էր.

— Ի՞նչ իմանաս, բալքի հենց լավն է՞ս է...

Իր ետևում դառնություններով լիքը մի աշխարհ էր թողնում, ի՞նչ էր կորցնում, որ ափսոսար...

ԽԵՎ ԱՐՏԵՄԸ

Սև յափնջին լայն ուսերին գցած, արծաթե դուտին բարակ մեջքին կապած, կարակուլ փափախը գլխին, մտրակը ձեռքին, արծաթապատ լայն գաշուլնը կախ։ Որ քայլում էր գյուղամիջով, կարծես իշխանական տոհմից սերված լիներ։ Ի՞նչ էր պաշտոնը՝ ավագ անտառապահ...

Մի անգամ գյուղական խանութի ներսից մատը դեպի դուրս մեկնեց, թե՝

— Տեսնո՞ւմ եք էն ծառի ծերի մազը...

www.a-pdf.com

Ուշադիր նայեցինք. իսկապես, արևի տակ մի մազ էր պրսպղում դիմացի աքացենու վրա։

— Ի՞նչ եք տալիս էն մազը վեր բերեմ...

— Ինչո՞վ...

— Գյուլլո՛վ։

Ու բերդան հրացանն ուսից իջեցրեց։

Ոչ ոք գրաղ չեկավ հետը։ Տարվելուց էին վախենում, նա հո իսկապե՞ս մազը չէր կտրելու գնդակով։ Չէին ուզում կպչել լեռնականի արժանապատվությանը։ Իսկ եթե վրիպե՞ց։ Այն էլ գյուղամիջին, բոլորի աչքի առաջ... էդ անպատվությունը կտանե՞ր խև Արտեմը...

— Հը՞, մեյդան եկող չկա՞, պլոճիկ ունեցող տղամարդ չկա՞ մեջներդ,— հեգնանքով հարցրեց նա՝ հրացանը նորից ուսը գցելով։

— Դե լա՞վ, գիտենք, որ կդիպցնես, էլ ինչ մարջ գանք,— ասաց գյուղացիներից մեկը։

— Կդիպցնեմ, բա՞, ուզում ես էն թռչող ագռավին էլ երկընքից վեր բերեմ...

Մի տեսնեիք, թե ի՞նչ արժանապատվությամբ էր խոսում մի փոքր էլ պարծենկոտ այդ մարդը։

Մի անգամ հարսանիքի ժամանակ, ոնց է լինում, Ղուկասանց Ամպակը վիրավորում է Արտեմին, թե՝ «Հլա գյուլլով մազ կտրողիս մտիկ արա...»։

Ախր Ամպակն էլ էր գյուղի իգիթներից։ Լսել էր Արտեմի ամբարտավան առաջարկի մասին ու ինքն իրեն վիրավորվել. «Իսկի ե՛ս սիրտ չեմ անում մազի վրա կրակել, Արտեմը մազ կտրո՞ղ է, որ պարծենում է գյուղամիջին»։

Ու հիմի Ամպակի խոսքից վիրավորված Արտեմի սրտովը սև արյուն է դնում։

Ո՞նց թե, գեղի հարսների մոտ Արտեմին հեգնե՞ն...

Դաշույնը պատյանից դուրս է քաշում, որ իր «փափախը գետնովը տվողին» խողխողի, հարսանքավորները բռնում են։

Ամպակն էլ էր տաքարյուն, նա էլ արծաթապատ դաշույն ուներ չերքեզի շուխայի տակ կապած։

— Ադա, դու էդ ո՞ւմ վրա ես խանչալ քաշում, ես կնիկ եմ առա՞ջդ, թե... Ադա, մի թողեք մսրի-ղլիջով ես դրա թոքերը խառնեմ...

«Մսրի-ղլիջ» անունով Ամպակը իր դաշույնին էր մեծարում...

www.a-pdf.com

Եվ իսկապես, լուսնի աղոտ լույսով փողփողաց «վարաղած» դաշույնը. գյուղացիք վրա թափվեցին, զենքը խլեցին ձեռքից։ Թափ տվեց, դուրս պրծավ, վագրի նման ցատկեց դեպի հակառակորդը՝ օդում բռնեցին, ձեռքերը ոլորեցին։

— Բա՛ց թողեք, բա՛ց թողեք,— որոտում էր նա՝ իրեն բռնողներին քարշ տալով խամ արջառի նման։

Ուրի՛շ պատկեր էր նրա հակառակորդի մոտ։ Դարբնոցի առաջ գյուղացիք հավաքվել էին ու անանցանելի պարիսպ քաշել նև Արտեմի շուրջը։ Իսկ սա զինաթափ, շոքել էր գետնին, փափախն ու յափունջին մի կողմ նետել և ձեռքերը կրծքին խաչած՝ խուլ ձայնով աղաչում էր.

— Ես ձեր արևին մատաղ, խանչալս ինձ տվեք...

Խոսում էր խեղդված ու ցածր ձայնով, բայց զգում էինք, որ եթե ուշացնեն խնդրանքը կատարել՝ կպայթի այդ մարդը, այնքան ցասում կար կուտակված նրա ներսում։

— Ձեզ մատաղ, ինձ բաց թողեք... Ձեզ մատաղ, խանչալս ետ տվեք... Բա ուրեմն իր փափախը գետնովը տա՞ն... Բա ես էլ ո՞ւր եմ ապրում աշխարքի երեսին...

Ասում էր խո՛ւլ, սիրտը խոցված կենդանու մռնչոցի նման։

Այդպես հպարտ էին ու այդպես էին պաշտպանում իրենց պատիվը մեր մութ գյուղի մութ մարդիկ...

ՊՐԻՍՏԱՎԸ

— Պրիստավը գալիս է՛, պրիստավը գալիս է՛...— ձայն տվին գյուղամիջին, և մենք՝ գյուղական երեխաներս, դուրս թափվեցինք տներից, ու կտուրները բարձրացանք, որ տեսնենք, թե ինչ տեսակ մարդ է այդ պրիստավը։

Գյուղից ներքև ձիավորներ երևացին։ Քիչ հետո պրիստավը, ձիավոր ոստիկաններին ետևը գցած, առոք-փառոք գյուղ մտավ։ Մեծ-մեծ բեղերով, ցուլի կնճռոտ աչքերով մի մարդ էր դա, որ իր ձիու վրայից հավաքված ժողովրդին այնպես էր նայում, ինչպես տերը կնայի իր ոչխարներին։

Երեխաները վազում էին ձիերի ետևից, պրիստավին ուղեկցող գյուղացիների թիվը գնալով շատանում էր։

Մարդիկ ճանապարհի եզրերին կանգ էին առնում-նայում, ոմանք էլ իրենց շեմքերից, սրահներից ու կալերից էին լուռ հայացքով ճամփու դնում պրիստավին իր մարդկանցով։

www.a-pdf.com

Գյուղական գզիրը, թափորի առաջն ընկած, բարձր ձայնով կանչում էր.

— Այ գեղացի՜ք, փափախներդ վե՜ր կալեք...

Նրա ետևից քայլում էր գյուղական քյոխվան՝ «բուխարա» փափախը գլխին, արծաթապատ դաշույնը չուխայի վրա կապած, մտրակը ձեռքին։ Նա սաստող հայացքով շանթում էր իր հպատակներին, աչքով-ունքով հասկացնում, որ պրիստավին հարգանքով գլուխ տան։ Եվ գյուղացիները փափախները հանում էին ու մի կողմ քաշվելով՝ ճամփա տալիս թափորին։

Զոմբախն ուսին, գամփռը ետևը գցած մի հովիվ սարն էր գնում։ Երևի այդ մարդն իր կյանքում իսկի պրիստավ էլ չի տեսել։ Կանգ առավ, խորթ-խորթ նայեց թափորին։

— Փափախդ հանի, գլուխ տուր պարոն պրիստավին,— հրամայեց գզիրը։

Հովիվը գլխի՞ չընկավ, թե՞ շփոթմունքից կարկամեց, չգիտեմ, այն եմ հիշում, որ կանգնել էր ճանապարհի եզրին ու ապուշ-ապուշ պրիստավի՞ն էր նայում, թե՞ նրա արծաթե ու վարշամե զարդերի մեջ կորած ձիուն։

Այդ ժամանակ պրիստավը հավասարվեց նրան, ձին կանգնեցրեց ու թունոտ հարցրեց.

— Ինչի՞ չես փափախդ վերցնում. լայաղ չե՞ս անում...

Մինչ հովիվը գլխի կընկներ, թե ինչ են պահանջում իրենից, պրիստավը ձեռքը բարձրացրեց ու մտրակը թափով իջեցրեց նրա գլխին։ Հովվի փափախը ցած ընկավ, դեմքը ցավից ծռվեց, ձեռքերը բնազդաբար վեր տնկեց, որ գլուխը պաշտպանի հարվածներից։

Ի՜նչ խղճալի տեսք ուներ այդ պահին կյանքում պրիստավ չտեսած այդ միամիտ լեռնականը...

Բայց այդ ժամանակ մի զարմանալի բան կատարվեց։ Հովվի շունը, որ մինչ այդ թշնամաբար նայում էր անծանոթ հեծյալներին ու մռռացնում, հենց տիրոջը հարվածեցին, վագրի նման վեր թռավ, հեծավ ձիու շալակը ու պրիստավի ուսից բռնելով՝ նրան գլորեց ճամփի փոշիների մեջ...

— Ադա, սպանեցեք էս շան որդու շանը,— խուճապահար գոչեց քյոխվան։

Ոստիկանները վրա հասան, սրերը մերկացրին և կտորկտոր արին ըմբոստ շանը։

Ապա գյուղի քեդխուդեքը շրջապատեցին պրիստավին, թափ

www.a-pdf.com

տվին նրա շորերը, հարդարեցին, հանգստացրին։ Բայց պրիստավը փրփրել էր քյոխվի վրա։

— Ո՞նց թե, քո ժողովուրդը իշխանության առաջ գլխարկ չի հանո՞ւմ,— գոռում էր նա զայրացած։

— Աղա ջան, հայվանի պես բան է. նա ինչ մարդ է, որ նրա պատճառով նեղանում ես մեզ վրա,— մղկտում է քյոխվանը։

Եվ գտավ իր տիրոջը մեղմացնելու հնարը. ոտքի տակ տվեց հովվին և գզրի օգնությամբ մի լավ ջարդեց։ Ապա ձեռքերը կապել տվեց և ուղարկեց շրջանի կենտրոն, ուր պիտի նրան դատեին։

Մի քանի ամիս հետո հովիվը իր ոչխարները կաշառք տալուց հետո բանտից ազատվեց, սար գնաց՝ առանց գյուղ մտնելու, հանդերո՛վ։

— Էլ ոչ գյուղ կիջնեմ, ոչ էլ պրիստավի առաջ փափախս կվերցնեմ,— ասել էր նա հանդում փայտ կտրող մեր գյուղացիներից մեկին։

Եվ իսկապես, այդ հովիվը մինչև մեր երկրում նոր կարգերի հաստատվելը գյուղ չմտավ. ամառը հոտի հետ սարերում էր ապրում, ձմեռը հեռավոր մի ձորում ծվարած ձմեռանոցում...

ԴԱՐԲՆԱՆՑ ԱԿՈԲԸ

— Ա՛յ կնիկ, կարծես մեր դարմանը գողանում են, հը՞...

Խոսողը մեր գյուղացի Դարբնանց Ակոբն էր, որ անասուններին հարդ տալուց հետո օջախի մոտ նստած լուռ ծխում էր։ Մոայլ մտքեր էին պաշարել նրան. ձմեռը երկարում էր, կերը՝ վերջանում։ Իսկ հարդը մարադում օր-օրի այնպիսի արագությամբ էր պակասում, որ դեռ մարտ չմտած կվերջանար։

Հաջորդ օրը, երբ բացեց մարադի դուռը, աչքերի առաջը սևացավ. իր դրած նշանը չկար, գիշերը դարձյալ գող էր մտել մարադը։

— Սպասիր, ես քեզ աղվեսի նման պիտի բռնեմ,— բեղի տակ սպառնաց որսկանը։ Երբ մթնեց, նա մի ժանդոտ թակարդ լարեց մարադի շեմքին ու գնաց անկողին մտավ։

Կինը նախատեց.

— Ա՛յ մարդ, համ գիտես, որ դարմանը գողանում են, համ էլ հանգիստ յորղանի տակ ես մտել։

— Ի՞նչ ես ուզում, որ անեմ։

www.a-pdf.com

— Ի՞նչ պիտի անես, գնա մարագի մոտ տապ արա, գողին բռնի։

Որսկան Ակոբը քմծիծաղ տվեց.

— Բռնելու եմ, դու հանգիստ կաց, թալակով եմ բռնելու...

Լուսադեմին շունը հաչեց, դուռը ծեծեցին։

— Քավո՜ր, քավոր Ակո՜ր, դուռը բաց արա,— տագնապով կանչում էր մի կին։

Սանամեր Եղսանի ձայնն էր։ «Հը՜մ, ուրեմն բռնվել է...», բեղի տակ ծիծաղելով անկողնում նստեց որսկանը։

Սանամորը ներս ընդունեցին, մոլորվել է, չգիտի ինչպես պատճառաբանի։

— Քավոր ջան, սանահերդ գիշերս հանդից գալիս, որ անց է կենում ձեր մարագի առաջով, մի երկաթ՝ չրբիկ՝ դրա ոտքը կախվում է։ Հիմի գոռում է խեղճ մարդը...

— Ինչի՞ է գոռում, թող դեն գցի, էլի,— բեղի տակ հեգնական ժպիտով խորհուրդ է տալիս քավորը։

— Ուզում է դեն գցի, համա էդ երկաթը պինդ բռնել է ոտքից, բաց չի թողնում... Հուպ է տալիս, խեղճ սանահորդ ձենը երկինք է հասել...

— Հա՜ա՜... որ երկինք է հասել՝ կգամ... Կնի՛կ, էն թալակի բանալին դեսը տուր...

Մյուս օրը գյուղում տարածվեց արտակարգ լուրը. իսկ Մասխարա Փիլոն կանչում էր.

— Ժողովո՜ւրդ, որսկան Ակոբը իր սանահորը գելի թալակով բռնել ա՜...

Այդ էր ու այդ, էլ սանահերը չերևաց իր քավորի մարագի շեմքին։

1951

ՇԱՏԱԽՅԻ ԳԵԼՈՆ

1

Լեռնոտ, ճանապարհներից զուրկ երկիր էր Շատախը։ Մարդիկ հանդից խոտը, փայտը շալակով կամ գրաստով էին բերում գյուղ։ Եվ դաժան բնության դեմ մղած պայքարում ամրանում էին ֆիզիկապես. շատախցիք ջլապինդ էին ու դիմացկուն։

www.a-pdf.com

Իսկ նրանց մեջ ամենից ամուրը Գելոն էր։ Բոլորից բարձրահասակ էր, բոլորից թիկնեղ, իսկ բազուկներում մի-մի արջառի ուժ կար։

Երբ ձյունը շոքում էր դռանը, Գելոն բքին սար էր բարձրանում և մեն-մենակ մի ամբողջ դեզ խոտ կապկպում էր պարանով և ձյան վրայով քարշ էր տալիս դեպի գյուղ։ Երբ ձմեռը Գելոն տանը փակված զգում էր, որ անգործությունից թուլանում է իր մկանների ուժը, գրաղ էր գալիս հարևանների հետ, թե ո՛վ Տիգրիսի ձորից ուսին դրած մի գերան կբերի կամ ով Հունվարի պարզկա գիշերը ոտաբոբիկ ու գլխաբաց կգնա հարևան գյուղը։

Գնում էր Գելոն Տիգրիսի ձորից գերանը բերում ուսին դրած, կեսգիշերին ոտաբոբիկ ու գլխաբաց գնում էր հարևան գյուղը, տանում էր բոլոր գրաղները և դրանից կաղնու ծառի նման ամրանում էր նրա մարմինը։

Ճանապարհին երբեմն գայլեր էին պատահում,— Շատախի կատաղի գայլերը,— բայց չէր կրակում նրանց վրա, թեև միշտ հետը հրացան ուներ։ Իր հրաղենը մի կողմ էր դնում, բռնում ծալում էր գայլին, դնում տակն ու առասպելական Սամփսոնի նման ճեղքում նրա երախը։ Դրանից էր մնացել նրա Գելո մականունը։

Մի անգամ Գելոն նկատեց, որ իր տան պատշգամբի սյունը փտել է։ Նա զույգ ձեռքերով վեր բարձրացրեց առաստաղը, փտած սյունը ոտքով հրեց ցած գլորեց ու հրամայեց իր փոքր եղբորը.

— Տղա՛, մի՞նոր սյուն դիր տակը...

Ու իր հուժկու բազուկներով այնքան ժամանակ պահեց պատշգամբի առաստաղը, մինչև որ եղբայրը մի գերան տաշեց պատրաստեց և բերեց դրեց հին սյան տեղը։

Այդպիսի ուժի տեր մարդ էր Գելոն։

Նա գյուղի ամենալավ դարբինն էր, ամենից լավ շալ գործողը, ամենից հմուտ մաճկալը և հնձվորը։

Եվ չնայած իր ահռելի ուժին, Գելոն երեխայի նման բարի էր ու միամիտ։

2

Գոմերը գյուղից դուրս էին։

Շատախում ձմեռը այնքան ձյուն էր գալիս, որ փակվում

www.a-pdf.com

Վերջապես, երբ շնչափողը արդեն բոլորովին փակվում էր, Գելոն ցած ցատկեց անկողնուց ու դիմեց կնոջը.

— Դավթի՛ մեր, կռանս տո՛ւր...

Մարդիկ վազեցին դարբնոց և բերին Գելոյի ծանր կռանը։

Հիվանդը վերցրեց ահագին մուրճը, ճոճելով վազեց սենյակի պատերի տակով ու գոռաց.

— Եկել ես հոգիս տանե՞ս, Գաբրիել հրեշտակ... Ո՞ւր ես, չես երևա, մեյդան եկ կռվենք...

Առյուծի սրտի տեր այդ մարդը աստծու ներկայացուցչի դեմ էր կռվում՝ կյանքի համար, ապրելու համար...

Այդ երեկո շատախոսի Գելոն մեռավ։

— Վերջը հրեշտակը հաղթեց,— ասում էին գյուղացիները ահով։

Իսկ ոմանք ասում էին.

— Գելոյին հրեշտա՞կ կհաղթեր։ Աստված որ չօգներ, Գաբրիելի պես տասը հրեշտակ չէին կարող Գելոյի վրա...

1951

«ԱՊԱ ԿԱԼԲԱՀՍ...»

(Վահրամ Չիթունու պատմածներից)

Այնպես եղավ, որ 1921 թվի փետրվարի մի գիշեր մեր տներում ցրված քնած ժամանակ ապստամբ դաշնակները մեզ անակնկալի բերին, ձերբակալեցին և լցրին Քանաքեռի «բանտը»։ Դա կեղտոտ ու ոջլոտ մի որջ էր. փշրված լուսամուտներից բուքը ձյուն էր ներս լցնում և մենք՝ թվով քսանյոթ հոգի «կարմիրներ», պատերի տակ կուչ եկած դողում էինք։

Օրական քառորդ ֆունտ սև հաց էինք ստանում և մի բաժակ տաք ջուր։ Ու քաղցը, ամենազոր քաղցը լափում էր մեր ներսը ու դանդաղ մահացնում մեզ։

Մի թոքախտավոր ընկեր ունեինք, արյուն էր թքում և ուժասպառ ընկած՝ նվվում։ Եթե սնունդ չհասցնեինք, նրա օրերը հաշված էին։

Բաց պատուհանի տակից անցավ բանտի տնտեսվար պարոն

www.a-pdf.com

Փոխանյանը, մի նիհար, վիզը երկար մարդ։ Նա մի ժամանակ Վանում իմ ուսուցիչն էր եղել, և ես այժմ քաշվում էի նրա աչքին երևալուց։

— Լսի՛ր, դմբո, քաղցից կոտորվում ենք, ի՞նչ ամաչելու ժամանակ է, ասա ուսուցչիդ մի կտոր հաց գցի,— կողքիս բղում էր ընկերս՝ շամշադնեցի Ավագը։

— Որ մերժի՝ գետինը կմտնեմ,— պատասխանեցի ես։

— Տո՛, գլխիդ հո լաչակ չի՞, ը՛ը... տղամարդիս մտիկ, անունն էլ պարտիզան է... Թե որ ամաչում ե՞ս, նրա՛ համար ուզի, տեսնում ես աչքիդ առաջ մեռնում է,— ասաց Ավագը մեր թոքախտավոր ընկերոջը ցույց տալով։

«Անպայման կուզեմ... պետք է փրկել տղային»,— վրճռեցի ես։

Տնտեսվարը դարձյալ անցավ պատուհանի առաջից և անցնելիս մի հայացք ձգեց կամերայի ներսը։

— Ասա՛,— կողքիս բղեց Ավագը։

Մի քանի անգամ անցավ սիրտ չարի, քաշվում էի։

Երեկոյան դեմ տնտեսվարը պատուհանից մի քանաքեռցու համար տնից ստացված կապոց ներս գցեց։ Ավագն այնպես կմշտեց թևս, որ աչքերիս առաջը մթնեց։ Մեքենայորեն մոտեցա ջարդված լուսամուտին ու կարմրելով ասացի.

— Պարոն Փոխանյան, թոքախտավոր ընկերս մեռնում է, խնդրում եմ իմ դրամով մի քիչ հաց բաց թողնեք...

Նա երկար վիզն առաջ մեկնեց ականջը լարեց, ներքին շրթունքը ծռեց ու վանա բարբառով ֆշշացրեց.

— Ի՞ի՞նչ, խա՞ց... Ապա կալրաստ չե՞ս ուզի...

Եվ շուռ եկավ, գնաց։

Ես մնացի քարացած։

Ապա նստեցի անկյունում խոտի վրա, գլուխս ափերիս մեջ առա և քաղցից ու այդ մարդկանց վայրագությունից դառնացած բարձրաձայն մտածեցի.

— Լա՛վ, պարոն Փոխանյա՛ն, մենք դեռ կհանդիպենք...

Եվ մենք հանդիպեցինք այդ դեպքից շատ տարիներ հետո ու ահա թե ինչ պայմաններում։

Ես Սովետական Միության առևտրական լիազորն էի Պարսկաստանում։ Մի օր էլ գործերի վարիչի ներկայացրած թղթերն եմ նայում և երբեմն էլ հեռախոսով կարգադրություններ անում,

www.a-pdf.com

երբ քարտուղարը մտավ կաբինետ և զեկուցեց, որ տեղական հայերից մեկը ուզում է տեսնել ինձ։

— Ազգանունը Փոխանյան է, իր ասելով Վանում ձեր ուսուցիչն է եղել...

— Փոխանյա՞ն... Նա ի՞նչ գործ ունի Պարսկաստանում,— զարմացած գոչեցի ես։— Հա՜, քսանմեկ թվին, իր շեֆերի ետևից... Հասկանալի է... Ասացեք միջանցքում սպասի։

Հրճվանքից ձեռքերս շփում եմ։ Ամբողջ մի տասնամյակ նրա արհամարհական պատասխանը հնչել էր ականջիս և այրել սիրտս. «Ի՞ի՞նչ, խա՞ց... ապա կալբաստ չե՞ս ուզի...»։

Այդ անգութ պատասխանի հետևյալ օրը քաղցից ու հիվանդությունից ուժասպառ մեռել էր այն թոքախտավոր պարտիզանը և այժմ նրա վրեժն էր փրփրում իմ ներսում։

Երկար սպասեցնել տվի պարոն Փոխանյանին, վերջապես, աշխատանքային օրվա վերջում քարտուղարին պատվիրեցի ներս թողնել։

Մտավ ուսուցիչս. էլի նույն հարցական շեշտի նման երկար ու կոր հասակը, նույն լազլագի վիզը, միայն մազերն են ճերմակել։

— Ա՜, պարոն Փոխանյա՞ն, պարոն Փոխանյա՞ն,— բացականչեցի ես՝ իբր թե նրան հանդիպելուց երջանկացած։ Ապա վեր կացա և հարգալիր տթոռ առաջարկեցի։

Ջննեց դեմքս խորամանկ հայացքով. երևի ուզում էր հասկանալ՝ հիշում եմ «այն գեպքը»։

Իսկ ես նրա կասկածները ցրում եմ իմ սիրալիրությամբ։

Խրախուսված իմ վերաբերմունքից, առաջ թեքվեց, ձեռքը դրեց բերանին և խորամանկ աչքով անելով փսփսաց.

— Պարոն մի ասի, Վահրամ ջան, կլսեն աշխատակիցները, լավ չի։ Ավելի լավ է ընկեր կոչես ինձ...

— Պարոն ասելով ես իմ հատուկ հարգանքն եմ ցույց տալիս ձեր նկատմամբ, չէ՞ որ դուք իմ ուսուցիչն եք եղել,— հորդորեցի ես։

Պարոն Փոխանյանը խիստ զգացվեց իմ ջերմ վերաբերմունքից։

— Հա, հա, Վահրամ ջան, ինչքան ես մեծացել, երեսդ տեսնելու եկա... Հիշում եմ՝ փոքր, շարաճճի մանչ մը էիր, հոգուս չափ կսիրեի քեզ... Ասի՝ գնամ տեսնեմ ի՞նչպես է աշակերտս... Ախ, Վահրամ ջան, որքան երջանիկ եմ, երբ կտեսնեմ իմ աշ-

www.a-pdf.com

խատանքս իզուր չի անցել, իմ գցած սերմը պարարտ հողի մեջ է ընկել ու առատ պտուղ կտա... (Նա զգացվեց և թաշկինակը հանեց)։ Փնավ չեմ կասկածել, որ ու առաջարկեմ աշակերտ լինելով՝ ան[illegible] դ[illegible]ք ։ նաև պատասխանատու աշխատող դառնա[illegible]։ Որքան ինքս իմ աչքում կփարցրանամ, կհպարտանամ, որ քեզ նման պետական առաջավոր քորձիշներ պատրաստելու մեջ ես էլ երախտիք ունեմ...

Այսպես, այս տոնով սկսեց լեզու թափել իմ ուսուցիչ Փոխանյանը և խմել իրեն առաջարկած թեյը։ Իմ սիրալիր վարմունքից նա նույնիսկ արտասվեց և հեռվից սկսեց մոտենալ փուն խնդրիճ. գանգատվել իր վիճակից։ Ապա հետզհետե սիրտ առնելով՝ վերջում խնդրեց, որ իրեն մի «շաղ պաշտոն» տամ Առևտրական ներկայացչությունում։

Ես հենց դրան էին սպասում։ Տեղիցս թափով կանգնեցի, դեմքս խոժոռեցի, առաջ թեքվեցի ու թունոտ պատասխանեցի.

— Ի՞՞նչ, շաղ պաշտո՞ն... Ապա կալբաստ չե՞ս ուզի...

Պարոն Փոխանյանի դեմքը գաջի գույն ստացավ։ Իսկ ես մատով ցույց տվի կաբինետիս դուռը...

ՄԱՑԱԿ ՊԱՊԸ

1

Գիգոլենց Մացակը ճերմակ մորուսով, երկար հասակով, ազնիվ ու լայն ճակատով մի աշխատասեր ու շիտակ մարդ էր։ Բարի սրտով այդ ծերունին դառնությամբ էր լցվում, երբ տեսնում էր մարդկանց վատ արարքները։

Մեր Ղազախը թարս բնություն ունի. մեկ էլ տեսար երկինքը մռայլվեց, մառախուղը շոքեց երկրին ու շարաթներով անձրև տեղաց։ Մի ամառ այնքան անձրև թափվեց, այնքան ամպ ու մառախուղ արավ, որ երբ, վերջապես, արևը երևաց՝ շները սկսեցին հաշել վրան. անսովոր բան էին տեսել...

Այդպիսի տարիներին հասած արտերը պառկում էին ու նորից կանաչում, իսկ հնձածը նորից ծլում, փչանում էր. ո՞ւր էին այսօրվա կոմբայններն ու կալսիչ մեքենաները... Շատերը եղ չունեին, շատերը՝ կամ (կալսելու գործիք)։ Ու հենց կալն սկսվում էր՝ հարևանները գալիս էին Գիգոլենց դուռը.

— Մացակ ապի, կամդ տուր մի օր բանեցնենք, էլի ետ կբերենք։

Բարի մարդ էր Մացակ պապը, պատահում էր, որ իր կալը թողնում էր կիսատ և կամը տալիս հարևանին։

Եվ ահա ասածս անձրևոտ ամառը վերջապես եղանակը բացվում է։ Աթոն գալիս է իր սանահեր Մացակից մեկ օրով խնդրում նրա կամը։ Բարի ծերունին չի մերժում, բայց ամուր պատվիրում է.

— Համա էգուց բերես, հա՜, քավոր ջան, իմ կալն էլ է կիսատ մնացել։

Քավոր Աթոն խոսք է տալիս մյուս օրը կամը բերի, բայց անցնում է չորս-հինգ օր՝ կամը չկա ու չկա։ Մացակը իր տղա Արշակի հետ լուր է ուղարկում թե՝ «Քավոր ջան, հաշանս կալի միջին փչանում ա, հավ ու ճիվի փայ ա դառնում, ապրանքները դեզը քանդում են, թե մեր բարեկամությունը կսիրես, կամը ուղարկի կալս կալսեմ»։

— Հա՜, սանիկ ջան, դու գնա, էս ա ես բերում եմ,— հանգստացնում է քավոր Աթոն իր սանիկ Արշակին ու դատարկ ճամփու դնում։

Ու շարունակում է իր կալը կալսել։

Մյուս օրը նորից երկինքը նոթերը կիտում է, մառախուղը ձորն է լցվում, չոքում երկրի կրծքին ու սկսվում է անտառոտ երկրի բարակ, երկարատև անձրևը։ Դե, Գիգոլենց Մացակ, արի լավություն արա մարդկանց...

Եվ մենք՝ հին գյուղի բնակիչներս, այդ անձրևոտ ու մռայլ օրը, որ պարապությունից հավաքվել էինք գյուղի կենտրոնի խանութի ծածկի տակ, ականատես եղանք այսպիսի մի տեսարանի։

Ահա փառահեղ մորուքով, առանց շապիկի մի մարդ, կամը թարս շալակած, տնքալով ներքի թաղից ցեխոտ ճանապարհով բարձրանում է վեր։

Հասավ մեզ. Մացակ պապն էր։

Սայթաքելիս կամը սահում էր, և սուր-սուր կայծքարերն ու ծուռումուռ չեչաքարերը քերծում էին նրա նիհար մեջքի կաշին։

Մենք զարմացել էինք ծերունու այդ ինքնատանջանքից ու բան չէինք հասկանում, երբ մեր հարևան Արտեմը ձայնեց.

— Ա՜յ մարդ, ինչի՞ ես կամը թարս շալակել, ինչի՞ ես շորերդ հանել, ախր մեղք ես, մեջքովդ արինը գնում է...

www.a-pdf.com

Ու Արտեմն առաջ վազեց, որ կամն իջեցնի ծերունու մերկ մեջքից։

— Թո՛ղ, Արտե՛մ,— մռայլ մռնչաց ծերը, թո՛ղ չանգռի, է՞... թո՛ղ արինը գա, որ խրատվեմ...

2

Ամեն անգամ, երբ տեսնում եմ մեր ֆերմաներին իրենց կաթնամթերքի ամանները, սերզատներն ու յուղ հարող մեքենաները բեռնատար ավտոներին բարձած սար բարձրանալիս, հիշում եմ Գիգոլենց Մացակին իր մահակին հենված, մռայլ ու հուսահատ ինքն իրեն խոսելիս.

— Բա մեր քոչը մնաց... Բա մեր լուծ եզը ես ո՞ւմնից ուզեմ...

Ու գնում է Մացակ պապը իր քավոր Աթոյի եզները խնդրում, որ իր քոչը սարը տանի։

— Եզները մի շաբաթ առաջ Դիլիջանի հանդում են տեսել։ Հիմի որտե՞ղ արածելիս կլինեն՝ ասել չեմ կարող։ Գնա ման արի գտի, քոչդ տար, սանահեր ջան, քու ուզածը մի լուծ եզը չի՞, հո մեծ բան չի, ես քեզանից ե՞րբ եմ բան խնայել, որ հիմի խնայեմ,— սիրալիր պատասխանում է Աթոն։

Ոտքից թեթև, ժրաջան մարդ էր Մացակ պապը։ Ձուխի փեշերը հավաքում է գոտին խրում, փափախը դնում կոնատակը ու ընկնում է Դիլիջանի սարերը, ձորերն ու անտառները։ Շատ շարշարանքներ կրելուց, շատ փնտրելուց հետո գտնում է իր քավոր Աթոյի եզները։ Հենց եզները բերում է լծում, որ քոչը տանի, Աթոն կանգնում է գլխավերևն ու հանգիստ ասում.

— Եզնիքը գտե՞լ ես, սանահեր ջան... էդ հո լավ ես արել, օղորմի քու հորը։ Ես էլ մոլորվել էի, թե գերանները ոնց եմ տանելու Դիլիջան։

Ու եզները սայլից արձակելով, տանում է։

Մացակ պապը մնում է շշմած, տեղում քարացած։ Քոչը մնում է ձմեռանոցում։

Այդ դեպքը ցավ է դառնում Գիգոլենց Մացակի համար։

Մեռնելիս կանչում է իր որդիներին ու հարցնում.

— Ձեզանից ո՞վ ա իմ տղեն...

Միջնեկ որդին՝ Արշակը, առաջ է գալիս։

— Ե՛ս եմ քո տղեն, ա՛պի, ինչ ես հրամայում։

www.a-pdf.com

Այդտեղ Մացակ պապը պատմում է քավոր Աթոյի նամարդ արարքի մասին ու կտակում է որդուն.

— Թե որ դու իմ տղեն ես, հենց կանես, որ ես գերեզմանում հանգիստ մնամ...

3

Անցնում է տասը տարի։

Մի անգամ Արշակը սայլով խոտ բերելիս, գեմ է առնում Բլդան-Հայ գետին, որ երկարատև անձրևներից խիստ հոսգացել էր։ Տեսնում է մի մարդ գետի ափին մոլորված։ Մարդն Արշակին տեսնելուն պես մոտ է գալիս և մեզրածոր լեզուն գործի դնում։

— Էդ ի՞նչ լավ էր, սանիկ ջան, որ պատահեցիր։ Սելի ճաղեր ու մի քանի լուծն եմ շինել, չեմ կարում գետն անց կացնեմ։ Էդ ի՞նչ լավ էր, որ պատահեցիր...

— Սելին նատիր, Աթո ապի... Ոնեցածդ էլ բարձիր։

— Քու ումբրը երկար ըլի, սանիկ ջան, մնացել էի մոլորված, աստած քեզ հարեհաս ըլի...

Ու իր քարի սանիկին օրհնելով՝ Աթոն իրերը դնում է սայլին՝ բարձրանում-թառում է փափուկ խոտին ու հետն էլ շարունակում է մրմնջալ.

— Քու հերը լիս դառնա, մի բարի մարդ էր, երևում ա, որ լուսահոգի հորդ ես քաշել...

— Հորս եմ քաշե, բա՞,— խորհրդավոր պատասխանում է Արշակն ու լծկանին ճիպոտում։ Գոմեշները մտնում են պղտոր գետը ու փոնչոցով ճեղքում հոսանքը։

Հենց սայլը հասնում է հեղեղի ամենասրընթաց տեղը, Արշակը սայլը կանգնեցնում է.

— Հո՞, հո՞, Շմալ ջան, կանգնի՞ր։

Ու խոտի գլուխը բարձրանալով քավոր Աթոյի շինած փայտե գործիքները մեկ-մեկ շպրտում է ջուրը։

— Էդ ի՞նչ ես անում, սանիկ ջան։

— Ոչի՞նչ, բեռը թեթևացնում եմ...

Պղտոր ալիքները առնում-տանում են քավոր Աթոյի երեք օրվա աշխատանքը։ Ու Արշակը վերջին թիակը ջուրը նետելուց հետո մռայլ ու խիստ կարգադրում է.

— Աթո ապի, վեր արի։

www.a-pdf.com

Աթոն մեղրաձոր ժպտում է։

— Վի՜ի՜, հանաք ես անո՞ւմ, սանիկ ջան։

— Վեր արի, քեզ ասում եմ,— որոտում է Արշակը զայրացած։

— Արա, սանիկ ջան, հո շաշ չես...

— Վե՜ր արի...

Ու աչքերը փայլեցնելով՝ ճիպոտը բարձրացնում է։

— Վե՜ր արի, քեզ ասում եմ...

Աթոն սիրթնած, դողդողալով, կախվում է պարանից և ուզում է իջնի սայլի վերևի կողմից, որ դեմ առնի նրան ու չգնա հոսանքի հետ։

— Էդ կողմով չի կարելի, Աթո ապի, սելի ներքևով վեր արի։

— Ախր ի՞նչ եմ արել, սանիկ ջան, հո շաշվել չես...

— Ի՜նչ ես արե՜լ... Հետո կիմանաս, հիմի շուտ վեր արի։ Ներքևո՜վ, ներքևո՜վ, ա՞յ էդպես։ Թոկը բաց թող, բաց թող ասում եմ...

Մահվան սարսափով համակված մարդուն հեղեղը առնում է իր պղտոր ալիքների մեջ, տանում է դեմ անում գետի կենտրոնում գլուխը վեր հանած մի քարի։

Գյուղի ճանապարհին պատահում է Աթոյի կինը։

— Մեր հալիվորին տեսար ո՞չ, սանիկ ջան։

— Տեսա, ո՞նց չէ, հրե Բլդան-շայում ձուկ է բռնում...

Գնում են տեսնում Աթո ապին գետի մեջտեղում մի քարի սուր ծայրին փաթաթված՝ հաղիվ դիմադրում է հեղեղին ու սարսափահար օգնություն է բղավում։

... Այժմ էլ կա Մացակի տղա Արշակը։ Մի անգամ ես նրան հիշեցրի Աթոյի դեպքը։ Ներողամտաբար ժպտաց ու հարեց.

— Աչքածակ մարդիկ էին, էլի՜... Ասա ի՞նչ տարար աշխարհից...

1951

ՄԻ ԴԵՊՔ ՌՈՍԿԱՆ ՇԱՔԱՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Մի անգամ անվանի որսորդ Շաքարը հրացանը գոգին նստել էր մի բարձր ժայռի և նայում էր Հաղարծնի ձորին ու միտք անում. «Հե՜յ գիտի աշխարհ, դեռ քեզնից չկշտացած ծերացանք...»

www.a-pdf.com

Ձորերում դեղին զգեստներ հագած անտառը սվսվում էր աշնան քամու առաջ ու տխուր մտքեր առաջ բերում ծեր որսորդի մեջ։

— Աչքս լավ չի ջոկում, ա՛յ բալա, մի տես՝ Փափախ քարին նստածը բազե՞ է, թե՞ ագռավ,— դիմեց նա իր եղբոր որդի Պետրոսին, որ մոտիկ թփից զկեռ էր պոկում ու լցնում գրպանները։ Թեև սուր աչք ուներ լեռներում մեծացած այդ պատանին, բայց որքան ձեռքով հով արավ, ոչինչ չտեսավ Փափախ քարի վրա, որ մի ահագին գլխարկի նման ծածկում էր դիմացի սարի ապառաժե գլուխը. այդ հեռավորությունից ագռա՞վ կերևար...

Ծեր որսորդը լուռ ծիծաղում էր թավ բեղերի տակ ու շարունակում արծվենի հայացքը ման ածել իրենից ցած տարածվող լեռներում ու ձորերում. որս էր փնտրում ու հետն էլ գոհ մտածում. «Չէ՞, աչքերս հլա պետք կգան...»

Վերջապես նրա հայացքը կանգ առավ անտառոտ ձորի մի բացատի վրա, ուր դեղնին էր տալիս աշնան խոտը։

Մատով իր մոտ կանչեց Պետրոսին ու պատվիրեց։

— Ա՛յ բալա, էն ձորում մի կխտար է արածում, գնա բեր։

— Ոտները կապա՞ծ է, որ գնամ բռնեմ,— նեղացավ տղան։

— Գնա՛, մինչև դու տեղ հասնես, ես վեր կգցեմ։

— Դե հիմի՛ կրակիր, գուցե չի դիպչում... Գնամ տեսնեմ փախել է, էն խորխորատներից մինչև իրիկուն չեմ կարող դուրս գալ,— առարկեց տղան ու հետն էլ զոռում էր տեսողությունը, բայց ոչ մի կենդանի չէր երևում ծերունու ցույց տված տեղը. էն ո՞ւր է՞ր... այդ հեռավորությունից եղնի՞կ կխփվի...

— Ադա՛, տո փսլնքո՛տ, իմ գյուլլեն ե՞րբ է գետին ընկել... Գնա՛ քեզ ասում եմ, գնա էն կխտարը բեր... Դե, էլ մի պելվի, վազի՛ր...

Պատանին դժկամ իջավ ժայռից և թույլ-թույլ գնում էր զառիվերով դեպի ձորը, երբ նրա գլխի վրայով մի գնդակ բզզաց, որին հետևեց ծեր որսորդի քահ-քահ ծիծաղը։

— Շաքար ամի, թե դիպավ ոչ՝ ետ դառնամ,— ձայն տվեց տղան ու հետն էլ մտածեց. «Երանի սպանած չլինի... էն ձորիցը շալակով կխտա՞ր կբերվի...»

— Ոնց կդիպչի որ, պառավել եմ, ա՛յ բալա, աչքս չի ջոկում, կդիպչի՞ որ...

Ու ծեր որսորդը ժայռին նստած շարունակում էր ծիծաղել ինքնավստահ, հսկայի առողջ ծիծաղով...

www.a-pdf.com

— Ես գա՞մ,— ուրախացած հարցրեց Պետրոսը ներքևից։

— Գնա՛, քեզ ասում եմ, հրե թալումը մեկնված ա, գնա բեր։ Ես էլ էս ա կրակը թեժացնում եմ խորոված անենք...

1952

ՀՊԱՐՏ ՊԱՏԱՍԽԱՆ

1

— Մուկո՛ւշ քեռի, ամերիկացիք եկել են Դիլիջան, մորթեղեն են հավաքում, որսի չգնա՞նք՝ բախտներս փորձենք։

Ձայն տվողը մեր հարևան Արշակն էր, որ նոր էր եկել «գերմանու ֆրոնտից»։ Դա փոքր մարմնով, թուխ դեմքով, արագաշարժ մի երիտասարդ էր և մեր գյուղում հայտնի էր որպես ըմբոստ, իշխանությանը չենթարկվող, տերերի հասցեին համարձակ խոսող։ Դե Ռուսաստանում իր աչքով տեսել էր հեղափոխությունը, ինչպե՞ս հաշտվեր մեզ մոտ տիրող անարդար կարգերի հետ։

— Ադա՛, մորթու դիմաց ի՞նչ են տալիս,— հարցրեց ծեր որսորդը։

— Դեղին կտավ. կուզես շապիկ կարիր հագիր, կուզես ներկել տուր բլուզացու դառնա։

— Դե գնանք... Բայց դե էս կաթնակերն էլ է մեզ պոչ դառնալու, չգիտեմ ոնց կլինի, ուզում եմ ծմակի խորքը գնանք...

«Կաթնակերը» ես էի, որ աչքաբաց հետևում էի, թե երբ է որսկան Մուկուչը որսի գնում, որ իսկույն ընկերանամ։ Հե՞շտ էր ինձնից պոկ գալը։ Ստիպված այս անգամ էլ հետները վերցրին։

Գնում էինք մեր Բակատեղեր կոչված հանդը՝ կզաքիս որսալու։ Շրջանում լուր էր տարածվել, որ ամերիկացին մի շատ բարի մարդ է ու լավ էլ գին է տալիս մորթեղենին։

— Հիմի որ շապիկ-ոտաշոր հագա՞նք,— սար բարձրանալիս ուրախ ասում էր որսկան Մուկուչը։

Արշակը միայն հեգնական ժպիտով էր պատասխանում։

— Ինչքան մեռած լինեմ, որ շաբաթական մի հինգ-վեց դալա[1] չմաշկեմ,— իր սովորական լավատեսությամբ հաշիվներ

---

1 Դալա — կզաքիս։

www.a-pdf.com

էր անում ծեր որսորդը։— Էդ հո էս ձմեռվա մեջ կտորն էլ տունը կլցնենք, նավթ ու շաքար էլ կառնենք։

Նա՜վթ, շաքա՜ր... Նավթն ու շաքարը եթազ էր մեզ համար այն տարիներին։ Նավթի տեղ մենք եղևնու արմատ էինք վառում, իսկ շաքարի տեղ թեյի հետ գործ էինք ածում մեր անտառի չորացած մրգերը։

— Հը՞, ինչ կասես, Արշա՜կ, հիմի էլ կտավ չեմ ուզում, շաքար եմ ուզում, ինչ պիտի ասի, որ չտա։

— Կտա՜, ինչի չպիտի տա որ,— քմծիծաղով պատասխանում էր Արշակը։

Մեր գյուղի վերին բլուրներն անց կացանք, մտանք ձմեռվա սառած անտառը։ Ծառերը լուռ կանգնած էին՝ եղյամից ճերմակած գլուխներով և կարծես ցրտից սրսփում էին։ Ձյունը խորն էր, և եթե որսկան Մուկուչը՝ կաղնի կոճղի նման այդ մարդը՝ առաջից ճեղքելով չգնար, իմ բանը բուրդ էր։

Շատ գնացինք, Բակատեղերն էլ անցանք և վերջապես արևահայաց մի նոսր կաղնուտում գտանք այն կենդանու հետքը, որի մորթին տանելու էին հեռավոր Ամերիկա...

Որսկան Մուկուչը կանգ առավ ժանյակի նման նախշուն հետքի մոտ, փափախով սրբեց իր մազոտ երեսի քրտինքն ու հանդիսավոր հայտարարեց.

— Էս հեչ, էս մերն է...

Եվ փափախը կոնատակին դնելով, հետքը բռնեց ու գնաց։ Մենք ոգևորված հետևեցինք նրան։ Դե ո՞նց չոգևորվես, երբ որսորդ Մուկուչը հաստատ ասում է, որ անտառում նախորդ գիշերը մեր եկած այդ կենդանին մերն է...

Շատ գնացինք այդ հետքով, այնքան շատ, որ ծնկներս ծալվում էին և եթե շամաչեի, կնստեի ձյան մեջ ու էլ վեր չէի կենա։ Ինչպե՞ս չի հոգնում այդ կենդանին։ Առենք, ինչու պիտի հոգնի որ. նա թեթև թռչկոտելով գնում է սառած ձյան երեսով, իսկ ես խրվում եմ մինչև ծնկներս, դե՛, իհարկե, նա չի հոգնի, ես կհոգնեմ։

Ի՞նչ դժվարին տեղերով է գնացել այդ անխիղճը. կարծես գիտե, որ հետքով որսորդները գալու են իրեն փնտրելու և դիտմամբ, նրանց տանջելու նպատակով, անցել է անտառի ամենադժվարին տեղերով. թփերով ծածկված ժայռերի ծերպերով, անանցանելի մոլուտներով, պառկած ծառերի արանքներով։ Մեկ գիրք իջել է ձորը, մեկ բարձրացել ծառապատ բարձունքները ու

www.a-pdf.com

ամեն տեղ տենդագին խուզարկել ծառերի փշակները. մե՞զ է փնտրել, թե իր բնում անմեղ քնած սկյուռ...

— Սրա մորթին դու ամերիկացու խանութում կախած հաշվի, սա ո՞ւր պիտի պրծնի ոբսկան Մուկուչի ձեռից,— մեկ-մեկ պարծենում էր ծեր որսորդը և նրա ինքնավստահ խոսքը հուսադրում էր ինձ ու առաջ մղում։

Վերջապես նա կանգ առավ մի կաղնու տակ և ձեռքը շրթունքին դնելով՝ մատով ցույց տվեց ձյունը։ Մենք առաջ եկանք և նայեցինք։ Ձյան վրա մի քանի կաթիլ արյուն կար և ինչ-որ բան էին քարշ տվել։ Հետքերով գնացինք և տեսանք մի կոճղի տակ կեսը կերված մի սկյուռ է ընկած։ Նրա մոտ կզաքիսի խաղը հետքեր կային։ Դե մենք փոքրուց սովոր էինք կարդալ այն նշանները, որ վայրի կենդանիները թողնում են անտառներում։ Պարզ է, կզաքիսը մեզ փնտրելիս բարձրացել է այս կաղնին և նրա փշակում պատահել հանգիստ քնած սկյուռին։ Բռնել է նրա բկից, գզել-գզգզել, ապա փշակից հանել է ու միասին գլորվել են ծառից։ Ահա ծառի տակ թափթփված են սկյուռի բնի փափուկ խոտը, մազերը։ Պայքարը երկար չի տևել, կզաքիսը ծառի տակ խեղդել է սկյուռին, իր ցեղի սովորության համաձայն նախ մաքրազարդել է նրա համեղ ուղեղը, ապա ուտելով եկել է մինչև մեջքն ու այդտեղ կշտացել է, կանգ առել։ Մնացածը թողել է հաջորդ օրվան, իսկ ինքը հիմա մրափում է կաղնու փշակում՝ սկյուռի ավերված բնում։

Մուկուչ պապը շարունակ մեզ լռելու նշաններ անելով՝ անձայն հետազոտեց շրջակայքը և երբ համոզվեց, որ հետքը այդ ծառից դենը չի գնացել, ինձ ծառը բարձրանալու նշան տվեց։ Երբ սկսեցի վեր մագլցել, նա իր ահագին փափախը ինձ հանձնեց ու նշաններով հասկացրեց, որ փափախը փշակի մուտքը խցեմ։

Ծառի կեսից ետ նայեցի, Մուկուչ պապը բավականությունից շփում էր իր թավ բեղերն, ու երջանկություն արտահայտող նրա դեմքին պարզ կարդացվում էր. «Ծկա՜վ, կտավն էլ եկավ, շաքարն էլ...»։

Քիչ էլ սողացի, հանկարծ ծառի ներսից խրթխրթոց լսվեց և զգացի, որ գազանիկը վեր է բարձրանում։ Հենց փափախը մեկնեցի, որ փշակը խրեմ, կզաքիսը դուրս պրծավ, իր ճանկով, թե ժանիքով քերծեց մատիս ծայրն ու մագլցեց ծառի կատարը։

www.a-pdf.com

— Մուկո՛ւշ քեռի, փախավ անիրավը,— անհանգստացավ Արշակը, իսկ ծեր որսորդը հանգիստ նշան էր բռնում ու ասում.

— Էդ հե՛շ, էդ մերն է, մեր ձեռից ո՞ւր պիտի փախչի որ...

Բայց նա չհաջողեցրեց կրակել, քանի որ կզաքիսը ցատկեց հարևան ծառին, այնտեղից էլ ցած նետվեց ու անհետացավ անտառի թավուտում։

— Ոչի՞նչ, գա մեր ապրանքն է, հեչ չմտածեք,— միշտ լավատես՝ մեզ սիրտ էր տալիս Մուկուշ պապը։— Դա կուշտ կերած անասուն է, հեռու չի գնա, դուք ղոչաղ եկեք հետևիցս։

Գնացի՞նք, գնացի՞նք, է՛, զինված մարդկանց առաջ կզաքի՞ս կանգ կառնի...

Զորակներում չոքում էինք ջուր խմում սառն առվակներից, բայց ուտելու ժամանակ չկար, որսին հետապնդող մարդու աչքը հա՞ց կգա...

Երեկոյան դեմ մեծ-մեծ ոտքերով մի մարդու հետք եկավ միացավ կզաքիսի հետքին։

— Մամիկոնն է, մի տես ոնց է ոտները ծուռ-ծուռ դրել,— վճռեց Մուկուշ պապը ու առանց կանգ առնելու շարունակեց ճանապարհը։

Կզաքիսը շարունակ թռչկոտելով էր գնացել, դա երևում էր նրանից, որ ոտքերը զույգ-զույգ էր դրել։ Միայն տեղ-տեղ նա կանգ էր առել, մի ոտքը բարձրացրած ականջ դրել և դանդաղ առաջ գնացել, դրանից էլ ոտքերի զույգ նախշերը խախտվել էին, ու ձյան վրա մնացել էր կլոր թաթերի երկու կանոնավոր շարք։ Տեղ-տեղ էլ այնպես արագ էր վազել (երևի հետևից լսել էր մեր ձայնը), որ հետևի ոտքերը առաջի ոտքերից առաջ էին անցել, ու ճանկերը ձյան մեջ չռված հետքեր էին թողել։

Այդպիսով, մենք պարզ կարդում էինք, թե ե՛րբ է մեր որսը հանգիստ եղել, ե՛րբ է վախեցել, ե՛րբ է զգացել մեր ներկայությունը։

Անտառի խորքում թրխկոց լսվեց. ծառ են կտրում։ Մուռ ոտներով մարդու և կզաքիսի թողած հետքերը մեզ տարան այդ ուղղությամբ և քիչ հետո մենք տեսանք մեր գյուղացի Մամիկոնի ահագին հասակը՝ կացինը ձեռքին, մի փուչ կաղնու տակ կանգնած։ Տաշեղները թափթփված էին ձյան երեսին, ինքը շապկով էր, բլուզի թևերը երևում էին ծառի կեսին. պարզ է, իր հագուստով փակել է փշակի բերանը։

www.a-pdf.com

— Ճանճի բույն ես գտել, հա՞,— ուրախ ձայնեց Մուկուչ պապը՝ գետնին թափված մոմի կտորներից մեկը վերցնելով։

— Ես եմ գտե՞լ որ, դալեն է գտել...

— Հիմի մենք դրան տիկ կհանենք, դրա գտած մեղրն էլ կլցնենք... Ա՛յ տղա, Արշա՛կ, հետներս գոնե մի վեդրո չենք բերել, բա ինչի՞ մեջ ենք լցնելու...

— Այ Մուկուչ քեռի, ձուկը դեռ ջրի մեջ առևտո՞ւր ես անում։ Դու մեղրը հանի՛ր, վեդրո ճարելը հեշտ է,— թերահավատությամբ գլուխն օրորելով պատասխանեց Արշակը։ Հետո ավելացրեց.

— Մի տեսնենք Մամիկոնը իրեն որսին մեզ ընկերացնո՞ւմ է ո՞ր...

— Վա՛, ամոթ չի՞, որ էդպես բան ես ասում, Արշա՛կ,— անկեղծորեն նեղացավ Մամիկոնը։— Մուկուչ քեռին քսան անգամ ինձ իրեն սպանած որսին ընկերացրած կլինի... Բա ես մարդ չե՞մ որ...

Մուկուչ պապը՝ շուխի փեշերը վեր քշտեց խրեց գոտին, կացինը առավ Մամիկոնի ձեռքից, ափերի մեջ թքեց ու շարունակեց ծառը կտրել։ Խփում էր ծառին, ապա ականջը դեմ անում նրա բնին և այդ պահերին մենք տեսնում էինք, որ անմեղ երեխայի նման ուրախանում է։

— Համա միջին ցիրկ է պարում, տղե՛րք...— ասում էր նա ականջ դնելիս։— Ասա՝ որ քեզ կտրատում ես, ո՞ւր ես պրծնելու որսկան Մուկուչի ձեռքից։ Համա, Մամիկո՛ն, փչակը ա՞քն է, է՞, վայ թե էնքան մեղր հանենք, որ չկարողանանք տանել...

Նա խոսում էր լավատեսությամբ ու վառ հույսերով, իսկ Արշակը բեղի տակ քմծիծաղ էր տալիս։ Ի՞նչ թերահավատ մարդ է էդ Արշակը...

Ծառն օրորվեց և դղրդոցով տապալվեց, զարնվեց ներքևի կոճղին, փորը պատռվեց և այդ պատռվածքից դուրս պրծան վայրի մեղվի մեղրահացերն ու ջագանակագույն մի թավամազ կենդանի։

— Ադա փախա՛վ, հասե՛ք,— գոչեց Մուկուչ պապը դեպի հրացանն շտապելով։

Էլ ո՞ւր հասնեիր, ծլկե՛ց...

— Լա՛վ, էն մերն է ու մերը, էն հե՛չ, դու մեղրը տանելու մասին մտածիր...

Ի՞նչ մեղր, ամբողջը սևացած չեչեր էին։ Ով գիտի երբ է

www.a-pdf.com

մեղու եղել այդ փշակում, երաշտի է հանդիպել, կոտորվել, և դատարկ են մնացել նրա մեղրի, նեկտարի և ծաղկափոշու շտեմարանները։

Բայց դե Մուկուչ պապը կհուսահատվե՞ր որ։ Միշտ վարդագույն ցնորքներով լցված, միշտ լավատես այդ մարդը ամենադառը պահին էլ իր համար մխիթարական բան էր գտնում։

— Գնաց Քարկապի քարերը։ Դա քարի գալա է, դրա բույնը քարափներում է։ Մեջն է մտնում ու սուս անում։ Սուխ դրիր թե չէ, խելոք սատկում է, ձեռդ մեկնիր ու հանիր։

Այսպես հուսադրեց մեզ Մուկուչ պապը, և մենք կզաքիսի թարմ հետքը բռնած առաջ գնացինք։ Հասանք Քարկապի շեկ ժայռերին և տեսանք, որ կենդանու հետքը իրոք կտրվում է մի խոռոչի առաջ։

— Հիմի որ մերն է,— համոզված հայտարարեց Մուկուչ պապն ու այդ խոռոչի առաջ ծալապատիկ նստելով գրպանից հանեց շախմախը, աբեթն ու շախմախաքարը (այն ժամանակ մեր գյուղում լուցկին ո՞վ էր տվել...)։

— Դե հիմի չորացած տերևներ ու խոտ խցկեցեք դրա բույնը, տեսնեմ ուր է պրծնելու մեր ձեռքից... Համա, Արշա՛կ, շատ մեծն է էս դալեն ու էնքան սիրուն, որ քու ամերիկացու բերնի ջուրը գնալու է։ Կտավ չէ, որ ոսկի էլ ուղես, չի խնայելու...

Մենք էլ էինք համոզված, որ մեր հետապնդած կենդանին շատ խոշորն է. դա երևում էր նրա թաթերի մեծությունից և ահագին թռիչքներից։

Չորացած տերևները լցրինք ժայռի փշակն ու կրակ տվինք։ Սուխը մլմլալով ներս գնաց և քիչ անց երկրի խորքից հազոցի նման ձայն լսվեց։

— Խեղդվում ես, հա՞, ախր մեզ վառեցիր, է՛,— ասում էր ծեր որսկանը, ալեզարդ մորուքը շոյում ու հետն էլ կարգադրում.— Կրակը փչեցե՛ք, որ ծուխը լավ ներս գնա...

Մոտ կես ժամ այդպես «ծուխ դրինք», հետո կրակը հանգցրինք ու հերթով ձեռքներս խոթեցինք խոռոչի մեջ։ Անցքը խորն էր։ Հրացանը մեկնեցինք՝ դարձյալ չհասավ ծայրին։

— Պուճուր ջան, մի վազիր գոմերը, մի քլունգ բեր, երկու հատ էլ բահ,— կարգադրեց ինձ Մուկուչ պապը։

— Համա ղզույշ կաց, ճամփին նալած նապաստակները քացի չտան...— ավելացրեց նա։

Ջե՞ռ է առնում, ես արդեն երկու տարի է որսի եմ գնում,

www.a-pdf.com

նա դեռ ինձ երեխա է համարում։ Մուկուչ պապը դեռ խոսքը չէր վերջացրել, երբ ես արդեն թռչում էի դեպի գոմերը՝ մեր գյուղի ձմեռանոցը։ Ի՜նչ քաղց, ի՜նչ հոգնածություն, մեր հանդերի ամենախոշոր կզաքիսը խեղդված ընկած է ժայռի խորքում, շուտ հանենք, որ ուսս գցած գյուղ մտնեմ...

Լուսինը դուրս էր եկել, երբ ես բահերն ու քլունգն ուսիս քարկապ վերադարձա։

— Չէ՛, Արշա՛կ, սրանից դենը էլ «կաթնակեր» անունը չի սազում սրան, կարգին որսկան է դառել, հը՞,— հարցրեց Մուկուչ պապը՝ ինձ ակնարկելով։

Արշակը համաձայնեց և այդ լուսնյակ գիշերը հանդիսավոր կերպով իմ վրայից վերցրին «կաթնակեր» արհամարհական կոչումը։

Սկսեցին բահերով ու քլունգով լայնացնել ժայռի տակի անցքը։ Շատ աշխատեցին, Մամիկոնը շատ անգամ ահագին հասակով մեկնվեց ու սողաց բույնը, բայց կզաքիսը չկար ու չկար։

— Մի դեսը կաց, քո բանը չի, արջն էլ աղվեսի բո՞ւյնը կմտնի,— ծաղրեց Արշակն ու իր բարակ ճկուն մարմինը ժայռի արանքներում ոլորելով, այնպես խոր խցվեց անցքը, որ նա ոտքերի ծայրն էր միայն երևում։

— Դուրս քաշեցե՛ք,— կարծես երկրի խորքից լսվեց Արշակի խեղդված ձայնը։

Երբ ոտքերից բռնեցինք դուրս քաշեցինք, ես ուրախությունից ճչացի. Արշակն ատամներով բռնել էր կզաքիսի պոչից և իր հետ դուրս էր քաշել ծխախեղդ կենդանուն։

— Մամիկո՛ն, ախր ուղտի չափ բոյդ ինչի՞ս է պետք. հիմիկվա մարդը մի աղվեսի չափ պիտի լինի, որ ամեն ծակ ու ծուկ մտնի գլուխն աղատի,— լուրջ ու հանդարտ խրատում էր Արշակը. իր ուրախությունը նա էլ այդպես էր արտահայտում...

Հերթով վեր բարձրացրինք և լուսնի լույսով զննեցինք մեր որսը։ Զննեցինք և հիացանք։ Դա մի շատ խոշոր կզաքիս էր, մեջքը մուգ շագանակագույն, փորի տակը բաց դույնի, լանջը ճերմակ, պոչը՝ թավամազ։

— Հը՞, մարդս երկու շապկացու կաավն եկա՞վ, թե չէ, հարցրեց Մուկուչ պապը։

— Տանենք Դիլիջան, տեսնենք,— անորոշ պատասխանեց Արշակը, և ճանապարհ ընկանք դեպի գյուղ։

www.a-pdf.com

Մարդս երկու շապկացո՞ւ... Դա հո երազ էր այն ժամանակվա համար, երբ մենք առհասարակ սպիտակեղեն չունեինք և ոչխարի բրդից տանը գործած կոշտ շորերը հագնում էինք մերկ մարմնի վրա...

Գիշերը պարզ էր ու ցուրտ։ Բայց մենք չէինք զգում ոչ հոգնածություն, ոչ սառնամանիք. Մուկուշ պապի ուսից կախված թավամաղ կենդանին տաքացնում էր մեզ բոլորիս՝ իր տեսքով, իր ներկայությամբ, իր բացած հեռանկարով...

2

Գավառական քաղաքը հեռու չէր։ Մեր գյուղից պարզ երևում էին ձորում, Աղստև գետի ափերին վեր ելնող ճերմակ պատերով և կղմինդրյա կարմիր տանիքներով տները։ Դեռ արևը չէր ծագել, կուշտ առևտրականները դեռ չէին արթնացել, երբ մենք մտանք ցրտից սառած քաղաքը։

Դռնապանները ձեռքները փչելով ավլում էին ծուռ ու մուռ փողոցները, մի սայլակ փոից թարմ հաց էր տեղափոխում խանութ։ Լա՜վ էր թարմ հացի բուրմունքը այդ սովի տարին...

— Կասենք մի մասը փող տա, մարդս մի երեք-չորս հաց առնենք,— ասաց Մուկուշ պապը՝ ըստ երևույթին փոից նոր դուրս եկած հացի հոտից գայթակղված։

Երեք-չորս հա՜ց...

— Մեր մորթին էդքան փող կհանի՞ որ, պապի՛,— քաշվելով հարցրի ես։

— Կհանի՞... Սրան էսպես փոքր մի տեսնի, սա իրեն փոքր տեղով երկու ոչխարի գին ունի,— պատասխանեց Մուկուշ պապը՝ մորթին վեր բարձրացնելով և մեկ էլ զննելով։ Արևի առաջին շողերը ընկել էին մեզ վրա և երբ մորթին շարժում էր, թավիշի նման նուրբ երանգներ էր տալիս։ Իսկապես, մեկ էլ ո՞վ էր մեր ձորերում այդպիսի գեղեցիկ կենդանի բռնել։

— Բա՜,— պարծանքով եզրակացրեց որսկան Մուկուշը մեզ ուրախ աչքով անելով, որ նշանակում էր, թե՝ մի՛ վախեցեք, էս մորթին մեզ համար կտորեղեն էլ կբերի, շաքար էլ, հաց էլ։ Ափսոս, Մամիկոնը չէր կարողացել հետներս գալ, որ անձամբ տեսներ ամերիկացու զարմանքը...

Մուկուշ պապի գովասանական խոսքերից սրտապնդված առաջ գնացինք։

www.a-pdf.com

Ահա և մորթեղենի խանութը՝ մեծ կողպեքը վրան, սառած ցուցափեղկում մի աղվես կախած։

Անհամբերությունից շուտ էինք եկել, այս ժամին էլ ամերիկացի՞ կարթնանա։

— Դե տավար չունի, որ մեզ նման շուտ վեր կենա, խոտ տա, տակները քերի, դարդ չունի, որ քունը չտանի։ Է՛հ, մե՛նք էլ կասենք ապրում ե՞նք, նա՝ էլ,— տխուր կարծես ինքն իրեն միտք էր անում Արշակը։

Մուկուչ պապը խեթ-խեթ նայեց նրան։

— Ինչ ես ավսվում, էն որ հրացանն ուսիս մեր սիրուն սարերում ման եմ գալիս ու աստղերի տակ քնում, սրա պալատից էլ է լավ, հարստությունից էլ։ Փող աշխատելու համար մարդ իրեն երկիրը կթողնի, Ամերիկայից կգա Դիլիջան կհասնի՞։ Ոչ լեզու գիտի, ոչ հետը խոսող կա...

Ապա քիչ լռելուց հետո մտախոհ ավելացրեց.

— Խելքս չի կտրում, թե էնպես մարդը օգուտի համար եկած լինի... Ով գիտի ինչ գործով է եկել։ Ասում են ամերիկացիք հայերին շատ են սիրում, դրա համար էլ ամիսներով ճամփա են կտրում հասնում մեր երկիրը...

Իր դեմքին զգալով Արշակի սուր, նախատական հայացքը, Մուկուչ պապը ձայնը կտրեց և քիչ հետո տոնը փոխած ու ինձ խորամանկ աչքով անելով ասաց.

— Չէ՛, ամերիկացիս մեր ուղած գինը վազելով կտա, էսպես ապրանքից նա ձեռ կքաշի՞ որ...

Ու նորից կզաքիսի դնչից վեր քաշեց, դիմացը բռնեց ու զննեց նրա գեղեցիկ հասակը՝ գլխից մինչև թավաղամ պոչի ծայրը։

Շատ սրթսրթացինք խանութի պատի տակ, մինչև որ վերջապես եկավ ամերիկացու հայ գործակատար և թարգման Միհրանը։ Եկավ, սառը նայեց մեզ և դուռը բացեց։ Դա չոր-չոր, վիզը երկար, ճակատը կնճռոտ մի մարդ էր։ Նրա հագին ամերիկյան հակից հանված հին շորեր էին, որոնցից ամենը մեկը մի տիրոջ էին պատկանելիս եղել, ուստի կարված էին տարբեր չափերով ու տարբեր ճաշակներով։

Ներս գնացինք։ Մուկուչ պապը, չուխի փեշի տակից հանդիսավոր կերպով հանեց կզաքիսի մորթին և Միհրանի դիմաց բարձր բռնելով, հարցրեց.

— Ինչ ես կարծում, պարո՞ն Միհրան, ամերիկացին սրան ինչքան կտոր կտա։

«Պարոն Միհրանի» կանաչ աչքերում ագահ փայլ երևաց, ինչպես փայլում են շաղ մսի կտոր տեսած կատվի աչքերը։

Բայց նա իսկույն քողարկեց այդ փայլը և անտարբեր պատասխանեց.

— Բերածդ ի՞նչ է, որ դիմացն ինչ ստանաս...

Մուկուչ պապը վիրավորվեց։

— Էս ձորերում էսպիսի դալա իսկի բռնող եղե՞լ է որ...

— Գառավն իր թանին թթու չի ասի... Ամենքի բռնած որսն իր աչքին մեծ է երևում...

Ու պարոն Միհրանը գնաց խանութի խորքը և այնտեղ սկսեց մորթիները դասավորել։

— Բա որ ասում եմ շատ չեն տալո՞ւ,— նորից հուսահատվեց Արշակը։

— Չէ՞, ի՞նչ ես խոսում,— ծլթացրեց ծեր որսորդը,— սա ի՞նչ գիտի որ... Ամերիկացին աշխարհք տեսած մարդ է, ապրանքի դին գիտի։ Ուսումնական մարդը, էն էլ ամերիկացի ուսումնականը... Չէ՞, դու հանգիստ կաց...

Եկավ «ուսումնականը», գլուխը քիչ խոնարհեց, որ դռնով ներս մտնի։ Ամերիկացի մի ասի, լավ կերած մի ահագին ցուլ ասա... Կեռ ծխամորճը բերանի անկյունից կախ, հայացքը անտարբեր։ Նայեց մեր բերած մորթուն, տնտղեց, քթի տակ մրմնջաց։ Իսկ պարոն Միհրանը, որ մինչ այդ հպարտ ու արհամարհանքով էր նայում մեզ, ամերիկացու ներս մտնելուն պես իսկույն կերպարանափոխվեց։ Մեղրածոր ժպիտը դեմքին իսկույն աթոռ հրամցրեց տիրոջը, նրա լայնեզր գլխարկը այնպես զգուշությամբ ու երկյուղով տարավ կախելու, կարծես սրբություն էր ձեռինը։

Ես մորթի ու ամերիկացի թողած, այդ մարդուն էի նայում, ապշահար հայացքով հետևում էի ինձ համար տարօրինակ նրա քնքուշ շարժումներին և գլուխ էի ջարդում հասկանալու համար, թե ինչու իսկույն փոխվեց այս մարդը։ Այդ պահին պարոն Միհրանը շատ նման էր մեր Բողար շանը, որը ինձ տեսնելուն պես փաթաթվում է ոտքերիս ու պոչով ավլում գետինը։ Բայց չէ՞, Բողարն իմ մտերիմն է, նրա պարզ աչքերի մեջ կարդում եմ, որ սիրում է ինձ ու կրակը կնետվի ինձ համար։ Չէ, սրանը մի ուրի՞շ բան է, ինձ անծանոթ մի ուրիշ բան...

www.a-pdf.com

Ամերիկացին ծխում էր ու մտահոգ լուռ չափումներ անում, և ես տեսնում էի, թե ինչպես գոհ դեմք ունի մեր Մուկուչ պապը։ Նրա հայացքն ասում էր՝ «Թող չափի, է՛... էդ չափսին մորթի դա տեսե՞լ է որ... Թող չափի, որ իսկական գինը տա...»։

Վերջապես ամերիկացին մորթին անփույթ գցեց վաճառասեղանին և կոկորդում ինչ-որ բան մռլտաց։

— Ինչ է ասում, հավանե՞ց,— անհամբեր հարցրեց Մուկուչ պապը պարոն Միհրանին։

— Ո՛չ, չհավանե՛ց։ Ասում է՝ գնի կեսը կորցրել է։ Մեր որսորդն անակնկալի եկավ։

— Ինչի՞,— խեղդված ձայնով հարցրեց նա։

Ամերիկացին պատասխանեց իր լեզվով և Միհրանը թարգմանեց.

— Մորթին հանելիս ճանկերից մեկը թողել եք ոտքի վրա...

Մուկուչ պապը տնտղեց մորթին, հաշվեց կենդանու սուրոուր ճանկերը. իսկապես ճանկերից մեկը չկա, մաշկելի՞ս, թե ծառը մագլցելիս պոկ է եկել։

— Ասա՛ լա՛վ, մի ճանկն ի՞նչ է, որ, իսկի չի էլ երևում...

Միհրանը թարգմանեց, որի հետևանքը եղավ այն, որ ամերիկացու դեմքին ժպիտ երևաց և նա թարգմանի միջոցով շատ քաղցր և շատ քաղաքավարի ասաց, որ Ամերիկայում տիկինները մորթի գնելիս, առաջին հերթին ճանկերին են նայում...

— Հասա՛,— միամտորեն համոզվեց Մուկուչ պապը։— Դե, որ էդպես է կարգը, ինչ արած, պիտի տանք էլի, Արշա՛կ...

Բայց Արշակն այդքան միամիտ չէր, որ շուտ համոզվեր, և նա դառը հեգնանքով հարցրեց ամերիկացուն.

— Որ մի ճանկի համար գնի կեսը վեր եք գցում, բա որ երկու ճանկ պակաս լինի, ուրեմն էս մորթին ոչ մի բան չարժի՞...

— Այո՛, եթե ճանկեր չունի, մորթին ոչինչ չարժի,— լրջորեն հաստատեց ամերիկացին։

— Հո դա սուտ չի խոսի... Հո մեղ չի՞ խաբի,— միամտորեն հարցրեց ծեր որսկանը պարոն Միհրանին։

Այդ հարցից պարոն Միհրանը երկյուղով ետ-ետ գնաց։

— Որ խոսքդ հասկանա, շատ մեծ ամոթ կլինի մեր ազգի համար... Կրթված, պատվով մարդ է, Ամերիկայից այստեղ է եկել էդպես խոսքե՞ր լսելու... Գնացե՛ք, գնացե՛ք, կոպիտ սարեցիներ եք, դեռ մարդու հետ խոսելու ձև էլ չգիտեք...

www.a-pdf.com

— Բա հիմի վերջն ինչքա՞ն կտավ է տալու,— հարցրեց Մուկուչ պապը։

Պարոն Միհրանը գինն ասաց։

— Էդ հո ամեն մեկիս մի տոպրակացու էլ չի հասնի,— ինքն իրեն ասաց Մուկուչ պապը, մորթին ետ վերցրեց և մնաց մոլորված։

— Ո՞ւր տանենք, Արշա՛կ,— հարցրեց նա։

— Մեր գավառում միայն մի մարդ կա, մի բարեգործ մարդ, որ անտառի ձրի մորթուն գին է տալիս, ուրիշ ո՞ւր պիտի տանենք,— ամերիկացուն ակնարկելով ասաց պարոն Միհրանը։

— Լա՛վ, տա՛նք... Բայց որ դու դրա առաջ պոչդ շարժում ես, ինձ դուր չի գալիս... Տղամարդ ես, տո՛... Տվե՛ք ինչ որ տալու եք... Ճանկե՛րը... Ապրշումի պես սիրուն մեջքն ու փափուկ պոչը թողած ճանկերն է մտիկ անում...

Եվ Արշակը մորթին Մուկուչ պապի ձեռքից առավ ու նետեց վաճառասեղանին։

— Ադա՛, ամոթ է, կհասկանա...— աչքով-ունքով Արշակին ասաստում էր ծեր որսկանը։

Ամերիկացին անփութորեն մորթեղենի կույտի վրա նետեց այն կենդանուն, որին բռնելու համար ես այնքան ապրումներ էի ունեցել, այնքան տանջանքներ կրել։ Նրա այդ անփույթ շարժումը սրտիս կպավ։ Ինձ այլևս չէր հետաքրքրում ոչ նրա դիմաց ստանալիք կտավը, ոչ դրամը, որով հաց էինք գնելու։

— Հա՛, թող կեսը փողով տա, հացի ենք տալու,— Միհրանին դիմեց ծեր որսարդը։

Ամերիկացին լսելով թարգմանությունը, գլխով հավանության նշան արավ և սկսեց արագ-արագ չափել կտավը։

— Արշինը խաղացնում է... պակաս չափեց անխիղճը,— փնթփնթաց Արշակը։

— Ամո՛թ է, ա՛յ տղա, կհասկանա,— նորից ասաստեց Մուկուչ պապը։

«Պակաս չափե՞ց...»,— ամերիկացու մաքուր սափրված դեմքին, գեղեցիկ փողկապին, մաքուր, ճաշակով հագուստին նայում էի ես ու մտքումս նախատում մեր հարևան Արշակին, որ այդքան կասկածոտ է ու կոպիտ։ Այսպիսի շնորհքով ու կրթված մարդը իրեն թույլ կտա՞, որ մեր բաժին հասարակ կտավից գողանա։

Այս մտքին էի, երբ լսվեց Արշակի գրգռված պատասխանը.

www.a-pdf.com

— Ամոթ չի, արշինը դե՛սը տուր... Դու սրանց չես ճանաչում...

Եվ Արշակը վերցրեց արշինը, չափեց իրեն հանձնված կտավը ու վրդովված ասաց.

— Կես արշին պակաս է...

Ու դիմելով Միհրանին ավելացրեց.

— Ասա՝ ամոթ չի՞, էս մի թիզ կտավով հարստանալո՞ւ ես, ինչի՞ ես խաբում...

Այդտեղ մի զարմանալի բան կատարվեց։ Միշտ միամիտ, միշտ բարի, երբեք իր շահին չհետևող որսորդ Մուկուչը կարմրեց մինչև ականջները. երևի հասկացավ, որ ճանկի մասին ասածն էլ խաբեություն է։ Հասկացավ ու խուլ ձայնով հարցրեց պարոն Միհրանին.

— Ուրեմն դա մեզ մարդ չի՞ հաշվում... Մի էն մորթին դե՛սը բեր,— ձայնը բարձրացնելով՝ կարգադրեց նա։

Մինչ ամերիկացին տարակուսանքով նայում էր որսորդի այլայլված դեմքին, ջանում էր հասկանալ, թե ինչ պատահեց, Մուկուչ պապը վերցրեց կզաքիսի մորթին, բարձր բռնեց ու ասաց.

— Քու ամերիկացուն ասա՝ բա էդ բոյիցդ չե՞ս ամաչում։ Ի՞նչ է էս կատվի մաղը, որ սրա համար դու մարդկությունդ կորցնում ես, մարդ ես խաբում... Թո՛ւհ քո նամուսին...

Ասաց, պատյանից դուրս քաշեց իր ահագին դաշույնը, մասմաս կտրտեց կզաքիսի այն չքնաղ մորթին, դեն նետեց և պատվիրեց.

— Խազեինիդ ասա, որ մենք սարեցի կոպիտ մարդիկ ենք, էգպես բաներ չենք սիրում...

Ամերիկացին հասկացավ, արհամարհանքով նայեց ծեր որսորդի մազոտ դեմքին, կարկատած կոպիտ շորերին, ծակ տրեխներին ու դառնալով գործակատարին, քմծիծաղով հարցրեց.

— Շա՞տ են հարուստ այս մարդիկ...

— Ասա՝ հարուստ չենք, բայց մա՛րդ ենք...— խանութից դուրս գալիս մեր հետևից լսեցինք ծեր լեռնականի հպարտ պատասխանը։

Լուռ գնում էինք գավառական քաղաքի սառած փողոցներով։ Ջնայած ոչինչ չստացանք մեր այնքան շարշարանքի դիմաց,

www.a-pdf.com

բայց իմ սրտից կարծես ինչ-որ ծանրություն էր ընկել։

Լա՛վ ասաց որսկան Մուկուչը. «Հարուստ չենք, բայց մա՛րդ ենք...»։

1953

ՄԻՍՏՐ ՅԱՐՈՒՆ, ԻՐ ԿԻՆԸ ԵՎ ՇՆԻԿԸ

1

Թեռը ծանր էր, եզները գնում էին տնքալով, սայլը ճռնչում էր։

Աբուուշը քաշում էր եզների եղջյուրներից կապված փոկից ու խրախուսում.

— Դե, Մեքրան ջան, քիչ մնաց...

Խաբում էր, քիչ չէր մնացել, փամփուշտը պիտի հասցներին Սևանի մյուս ափը։

Դա հեղափոխությունից մեկ-երկու տարի առաջ էր, փամփուշտը մենք մեր սայլերով տեղափոխում էինք դաշնակների զորքի համար։

Աբուուշը աչքը չէր կարողանում կտրել իր առաջ ընթացող սայլի սրկներից։ Ի՞նչն էր նրան գրավում։ Սրկներից մեկի տախտակը պակ էր եկել և ճեղքից պսպղում էին փամփուշտի գեղին շարքերը...

Իր հայրը Աբջաքարում նստած է առանց փամփուշտի, իսկ այստեղ ինչքա՞ն փամփուշտ կա՞... Ա՜խ, թե իրենց ուղեկցող այս հրացանավոր զինվորները չլինեի՞ն...

Տղան այնպես էր տարվել փամփուշտների տեսքով, որ երբ իր առաջի սայլը կանգ առավ ու ինքը դեմ առավ սայլի հետևի ճաղերին, մեքենայորեն ձեռքը մեկնեց սրկին, ճեղքից մի քանի փամփուշտ գուրս քաշեց, տրակ թաքցրեց գրպանում։

Այդ պահին լսվեց զինվորի բարկացած կանչը.

— Ի՞նչ եք կանգ առել, քշեցե՛ք...

Աբուուշը փոկը քաշեց, բայց ականջները ուժժում էին, դեմքը այրվում էր. նրան թվում էր, որ բոլորն էլ նկատեցին իր գողությունը և հիմա ուր որ է խայտառակելով կտանեն գումակի պետի մոտ։

Չէ, զինվորն առաջ անցավ, սայլերը շարժվեցին, իրենով հետաքրքրվող չկա...

www.a-pdf.com

Արտուշը անհամբեր սպասում էր մթնելուն։ Վերջապես Ցևան չհասած՝ Սեմյոնովկայի կեռմաններում մթնեց։

Սայլվորները բարձրացան իրենց սայլերին և արկղերի վրա պառկած՝ ննջում էին, իսկ Արտուշը քունը զսպելով ամբողջ գիշերը գնում էր եզների առջևից. գործ ուներ, շատ կարևոր գործ։ Հենց որ հեռանում էր զինվորի պայտած ատնամանի ձայնը, նա ձեռքը մեկնում էր ծանոթ ճեղքը և հանում փամփուշտները, որոնք աստղալույսով մեղմ փողփողում էին տղայի ձեռքին ու նրանց տեսքից Արտուշի սիրտը թպրտում էր։ Կտանեմ հորս, համա կուրախանա հա՞,— մտածում էր նա։

Գրպանները լցվեցին, ծանրացան։ Հետո գրպանը ծակվեց ու փամփուշտները թափվեցին անդրավարտիքի փողքը։ Լավ է, փոզքի ծայրը գուլպայի տակով էր արած և ծոպով կապած։

Այդպես քայլել կլինի՞. կարծես կշռաքար կախված լիներ ոտքից։

Սայլի վրայից ցած բերեց խուրջինը և գրպանների փամփուշտը դատարկեց նրա մեջ։ Մինչև կեռմանների գլուխը հասնելը խուրջինը շատ ծանրացավ։

«Կբռնվեմ»,— ահով մտածեց տղան և ճանապարհից դուրս գալով, խուրջինը թաքցրեց մի մեծ կաղնու տակ, բարձր խոտերի մեջ։ «Վերադարձին կվերցնեմ»,— վճռեց նա։

Բայց երբ տեղ հասան, մի ցավալի դեպք տեղի ունեցավ. սպան ստուգեց սայլերը, տեսավ փամփուշտ է պահպանում կողքը բաց արկղից և մտրակի տակ առավ սայլի տիրոջը...

Սայլապանը մղկտում էր, թե ինքը տեղեկություն չունի, փամփուշտը երևի թափվել է ճանապարհին, բայց չէին հավատում։ Արտուշը լսում էր մտրակի հարվածները և կարծես իր սրտին էին իջնում գրանը։ Ի՞նչ աներ, ինչպե՞ս ասեր, որ ինքն է վերցրել...

Վերադարձին Արտուշը նա քնկավ, քնկերները հեռացան։ Երբ հասավ ծանոթ կաղնուն, սայլը կանգնեցրեց և դուրս եկավ ճանապարհից։

Չէ, խուրջինը մնում է։ Ա՜յ թե պարտիզանները կուրախանան, հա՞...

Մյուս օրը գիշերով նա փամփուշտը հանեցրեց Ալրաքար, իսկ հետո մանկական միամտությամբ պատժեցավ քնկերների մոտ։ Լուրը հասավ գյուղի տանուտերի ականջը և սա կարգադրեց գտիրին.

www.a-pdf.com

— Գտիր էդ լակոտին, պադվալը գցիր, էգուց ուղարկենք նաչալնիկի մոտ, թող գնա պատասխան տա։

Բայց քահանան, որ թեյ էր խմում տանուտերի պատշգամբում, դեմ եղավ այդ կարգադրությանը։

— Էգուց պառլամենտի ընտրության օրն է, կարող է պատահել, որ միստր Ցարոն էլ գա, հարմար չի մարդ բանտարկել...

— Լավ, թող ընտրություններն անցնեն, ես կհանեմ էդ լակոտի կաշին,— իր կարգադրությունը փոխեց տանուտերը։

2

Մյուս օրը իսկապես իր սեփական կառքով գյուղ եկավ ամերիկացի միստր Ցարոն իր կնոջ՝ միսիս Լուիզայի և շնիկի հետ։ Նրան ուղեկցում էին մի խումբ ձիավորներ և անձամբ ինքը՝ գավառապետը։ Դե, ինչպե՞ս չուղեկցեր, այն ժամանակ միստր Ցարոն մեր գավառական քաղաքում մեծ կշիռ ուներ։ Երևանից պաշտոնյաները մեր գավառը գալիս իջևանում էին նրա մոտ։

Գյուղի ծայրին քահանան ամերիկացուն դիմավորեց խաչ ու խաչվառով, կրոնական թափորով։ Նա փայլուն շուրջառ էր հագել, գլխին դրել էր պսպղուն խույրը՝ արծաթե խաչը գլխին և բացօթյա ժամերգություն էր կատարում ամերիկացու պատվին։ Սարկավագն ու դպիրը, ճերմակ շապիկ հագած, եկեղեցական երգեր էին երգում և բուրվառներով խունկ ծխում։

Թափորի հետ գնում էր և տանուտերը՝ սև բեղերը սրած, իր պաշտոնից անբաժան մտրակը ձեռքին, «չերքեզկա» չուխան հագին, արծաթապատ դաշույնը գոտուց կախ։ Նրա հետ էին գյուղի «քյեդխուդաները»՝ հարուստ Աթոն, խանութպան Մինասը և ուրիշները, բոլորն էլ կարակուլ փափախներով և նոր չուխաներով։

Եկավ ամերիկացին, կառքի միջից իր մոնոկլով նայեց թափորին, գլխով բարևելու նշան արավ։

Բայց այդտեղ մի անհարմար բան կատարվեց. քահանայի ջողջողուն զգեստներից ու անսովոր տեսքից խրտնած, ամերիկացու ճերմակ շնիկը դուրս պրծավ կառքից ու փախավ։

Դե ո՞ւր պիտի փախչեր մեր գյուղի գայլախեղդների ձեռքից։ Քաղաքից բերած իրենց տարօրինակ ցեղակցին տեսնելով, մոտիկ բակից երկու գամփռ դուրս պրծան և ահագին թռիչքներով սկսեցին հետապնդել շնիկին։

www.a-pdf.com

Իրարանցումն ընկավ գյուղը։ Միսիս Լուիզան ճչաց և իր հաղուստի երկար փեշերով ճամփի փոշին ավլելով՝ շտապեց դեպի իր սիրելի շնիկը, բայց գունատված տանուտերն արդեն դեպքի վայրն էր հասել։

Վրա հասան և գավառապետն ու ձիավորները, ականջները երկար ճերմակ շնիկին խլեցին մեր գյուղի գամփռների բերանից։

Շնիկը ճեղքված ականջը թափ էր տալիս, որից արյան կաթիլներ էին ցրվում բամբակի նման սպիտակ նրա մազերի վրա։

Միստր Յարոն խոժոռեց հոնքերը և ձեռնափայտը մեկնեց դեպի իրենց բակը քաշվող գամփռները։ Պարզ էր նրա ցանկությունը և գավառապետը շտապեց կատարել. նա նշան տվեց իր զինված ձիավորներին։

Մեծ փափախով և ոտաբոբիկ մի տղա վատ բան գուշակելով, թափորից դուրս պրծավ ու վազեց դեպի շները, որ նրանց փախցնի։

— Ալաշ փախի՛ր, Բողար փախի՛ր,— գոչում էր նա տագնապով։

Այդ պահին ձիերի վրայից հրացաններ որոտացին և գամփռներից մեկը անակնկալ հարվածից ծուլ եղավ, ոռնաց և սկսեց թավալվել ճամփի եզրի խոտերի մեջ...

Մյուս գամփռը անհետացավ տան առաջի ծառերի հետև։

Միստր Յարոն գլխի հաղիվ նկատելի շարժումով հավանություն տվեց կատարվածին։

Թափորը շարժվեց դեպի գյուղ, իսկ ճամփից քիչ հեռու ոտաբոբիկ տղան գրկել էր մեռնող շան գլուխն ու արցունքն այտերին սառած, բռունցքները սեղմած նայում էր հեռացող կառքի հետևից։

Արտուշն էր։

3

Տանուտերի պատշգամբի ծայրին մի սեղան էր դրված, վրան մի կոպիտ արկղ։ Արկղի կողքին կարմիր, կանաչ և դեղին թղթերի կույտեր կային—առանձին-առանձին. ընտրական բյուլետեններ էին։

Պատշգամբի մյուս ծայրի օթոցին բազմել էին միստր Յարոն ու իր տիկինը, քիչ հեռու նստած էին գավառապետը, տերտերը, իսկ տանուտերը ոտքի վրա էր։

www.a-pdf.com

Շնիկը, իր հետ կատարված ցնցող դեպքից հետո, խեղճացած կուչ էր եկել միսիս Լուիզայի գոգում. նրա ականջը կապված էր մետաքսե թաշկինակով, իսկ տերերի դեմքերը թթված էին, որովհետև շնիկը մերթ ընդ մերթ վեր էր թռչում վախեցած. երևի իրեն զզող գամփռի ահեղ ուրվականը նրան հանգիստ չէր տալիս։

— Վայրենի են այս երկրի շները իրենց տերերի նման,— անգլերեն գանգատվում էր միսիս Լուիզան իր ամուսնուն և արհամարհանքով նայում էր բակում խռնված ամբոխին։

Այնքա՜ն գաղթական կար մեր գյուղո՜ւմ... Մեծ մասամբ կանայք ու երեխաներ էին։

Գաղթականները մեր գյուղը եկան երեք-չորս տարի առաջ, քաղցած, գզգզված շորերով, կրած սարսափների կնիքը դեմքներին։ Նրանք այժմ նայում էին միստր Ցարոյի կուշտ, կարմիր դեմքին, նրա կնոջ թանկագին հագուստներին և ակնազարդ մատանիներին։ Նայում էին, թե ինչպես տանուտերի կինը եփած հավ է գնում նրանց «վիրավոր» շնիկի առաջ, թե ինչպես միստրն ու իր կինը խնդում-համոզում են շնիկին, որ գոնե մի կտոր միս ճաշակի։ Նայում էին և ո՜վ գիտի, թե ինչ էին մտածում բախտից հալածված այդ լուռ մարդիկ...

Շան առաջ ուտելիքներ տեսնելով, գաղթական երեխաները առաջ եկան և ձեռքները մեկնեցին։ Տանուտերը նյարդայնանում և աչքով-ունքով ուտում էր գզիրին։ Սա երեխաներին հեռու քշեց պատշգամբից։

— Ալյուր են բաժանելու, ժողովո՜ւրդ, ալյուր են բաժանելու, ամերիկական սպիտակ ալյո՜ւր,— կտուրից գոչում էր գզիր Պետոն։

Ընտրություններին եկող չկար. ո՜վ սիրտ ուներ այդ քաղցի ու դժբախտությունների տարին պառլամենտ ընտրելու։ Բայց լսելով, որ ալյուր են բաժանելու, շուտով ամբողջ գյուղը հավաքվեց տանուտերի բակը և լցվեց նրա կողքի կալը։

Կալի ծայրին մի սայլ էր կանգնած, ալյուրով լիքը տոպրակները վրան։

Վեր կացավ միստր Ցարոն և քթի տակ անգլերեն մի քանի բառ մոթմոթաց։ Գավառապետը այդ մի քանի բառը այսպես «թարգմանեց» ժողովրդին.

— Մեր մեծարգո միստր Ցարոն ասում է, թե Ամերիկայում շատ են ցավում, որ թուրքերը կոտորել են հայերին։ Ասում է՝

www.a-pdf.com

որ լսում ենք ձեզ մոտ սով է, մեր սրտովը սև արյուն է գնում։ Ասում է՝ միշտ էլ Ամերիկան անկեղծորեն տանջվել է հայերի համար և սպասում է պառլամենտ ընտրվի, որ Հայաստանը վերցնի իր թևերի տակ, պաշտպանի Թուրքերից։ Միստր Յարոյի կարծիքով, և Ամերիկայի կարծիքով միայն դաշնակցական կուսակցությունը կարող է երկիրը հանել այս նեղ վիճակից, ուստի նրա կարծիքն այն է, որ ժողովուրդը իր ձայնը տա մեր կուսակցությանը։ Նա կարգադրել է ձրի ալյուր բաժանել գաղթականներին և գյուղի չքավորներին։ Այսօր մեր առաջին պառլամենտի ընտրության առթիվ Հայաստանի շատ գյուղերում ամերիկյան ալյուր է բաժանվում։ Ուրեմն, կեցցեն ամերիկայի բարեգործները...

Ալյուրի անունը լսելով, գաղթականներից ոմանք ծափ տվին, ոմանք լուռ ու մռայլ նայում էին մեկ գավառապետին, մեկ վիզը կարմիր ամերիկացուն. կարծես լուռ հարցնում էին. այստեղ մի դավ չկա՞...

Սկսվեցին «ընտրությունները»։

Առաջ եկավ գյուղի ամենահարուստ մարդը՝ Աթոն։ Վիզը հաստ, բեղերը թավ, արծաթե գոտին մետաքս արխալուղի վրա կապած, կոպիտ քայլվածքով առաջ եկավ ու բարձր, խրոխտ հարցրեց.

— Ո՞րն է դաշնակների բյուլետենը։

— Կանաչը,— ուրախ պատասխանեց տանուտերը՝ նրան բարեկամաբար աչքով անելով։

— Դե ես կանաչը գցեցի, ժողովո՛ւրդ,— ասաց Աթոն, բյուլետենը վերցրեց, ծալեց ու տարավ հանդիսավոր գցեց արկղի մեջ։ Նրան հետևեց խանութպան Մինասը։ Հետո տերտերը ծանրծանր առաջ եկավ, բյուլետենը վերցրեց, օրհնեց ու գցեց արկղը։

Հերթը հասավ հասարակ ժողովրդին։

Գավառապետը այդ գյուղում ինքնագլուխ կերպով այսպիսի «ընտրական կարգ» էր սահմանել. ընտրողը նախ վերցնում է բյուլետենը, ապա գնում ալյուրն ստանում ու հետո բյուլետենը գցում արկղը։

Ալյուր բաժանող շարքի Ակոն, աչքերը բներում անհանգիստ շարժող մի մարդ, գաղտագողի նայում էր ընտրողի ձեռքի բյուլետենին ու ըստ այնմ էլ տալիս ալյուրը։ Ալյուրի կիսատ տոպրակի մեջ երկու չափ կար՝ ամերիկյան պահածոյի ժանգոտ

www.a-pdf.com

տուփեր։ Մեկը մեծ էր, մոտ երկու լիտրանոց, մյուսը՝ նրա կիսի չափ։

Ակոն ում ձեռքին կանաչ բյուլետեն էր տեսնում, աչքերը բներում արագ-արագ շարժվում էին, մեծ չափը լցնում ու սրբատալի դատարկում էր իրեն դեմ արած գլխարկի, փեշի կամ տոպրակի մեջ ու ասում.

— Տա՛ր, բարով վայելեք...

Ում ձեռքին դեղին թուղթ էր տեսնում, փոքր չափով էր ալյուր տալիս։ Իսկ ում ձեռքին բոլշևիկյան կարմիր բյուլետենն էր տեսնում, ցածր ձայնով ֆշշացնում էր.

— Հեռացիր աչքիցս, թե չէ բանկեն գլխովդ կտամ...

Այնպես որ ընտրությունների ելքը որոշում էր չարչի Ակոն իր թիթեղյա չափով։ Ավելի շուտ՝ ալյուրի տերն էր որոշում, որ հիմա անտարբեր իր համար սուրճ էր խմում պատշգամբում, կամ շոյում շնիկին, իբր թե ինքը ոչ մի բանի չի խառնվում և ազատ ընտրելու իրավունք է տրված ժողովրդին...

Քաղցից հյուծված մի նիհար կին, կանաչ թուղթը ձեռքին մոտեցավ սայլին։ Նրա փեշերից կախվել էին ոստաբոբիկ, կիսամերկ երեխաները։ Նրանց դեմքերը դեղին էին, աչքերը փոս ընկած։ Գաղթական կինը դեմ արավ իր կեղտոտ շալը։ Ակոն փոքր չափով ալյուր լցրեց շալի մեջ։

— Էսքանը ո՞ր մեկին տամ,— տնքաց կինը՝ իր երեխաներին ցույց տալով։

— Էդ թղթից մի հատ էլ բեր, մեծ չափով կտամ,— ցածրաձայն խորհուրդ տվեց Ակոն։

Կինը թուղթը տարավ գցեց արկղը, գնաց իր խրճիթը, ալյուրը թողեց այնտեղ և շտապ վերադարձավ նորից հերթի կանգնեց։ Հասավ թղթերի կույտերին, վախվխելով ձեռքը մեկնեց։ Նրա ձեռքը դողում էր. հանկարծ չբռնվի՞։ Տանուտերը հրացայտ աչքերը հառեց կնոջ վրա և մոտեցավ, որ թևից բռնի դուրս շպրտի հերթից, բայց տեսնելով, որ կինը կանաչ բյուլետեն վերցրեց, իսկույն մեղմացավ և շուռ եկավ, չտեսնելու դրեց։

Կինը գնաց Ակոյի մոտ և նորից ալյուր ստացավ։ Գաղթականները գլխի ընկան, և ովքեր արդեն քվեարկել էին, նորից հերթ կանգնեցին քվեատուփի մոտ։

Կեսօրն անցել էր, մարդիկ շարվեշարան գալիս «քվեարկում» էին, բայց հերթին վերջ չկար։ Միստր Յարոն զարմացած էր։ Նա մատով իր մոտ կանչեց գավառապետին ու հարցրեց.

www.a-pdf.com

— Գյուղը քանի՞ տուն է։

— Երեք հարյուր,— թարգմանի միջոցով հասկացրեց գավառապետը։

— Բայց հերթերին վերջ չկա, այսքան մարդիկ որտեղի՞ց են գալիս։

— Ամեն մեկը մի քանի անգամ է քվեարկում դաշնակցության օգտին, մի՛ստր,— մեղրածոր ժպիտը դեմքին պատասխանեց գավառապետը։— Քաղաքական ակտիվությունը մեծ է... Ժողովուրդը շատ է սիրում դաշնակցությանը...

— Հը՛մ,— մոլտաց ամերիկացին և ժպտաց, երևի հասկացավ, թե ինչ է կատարվում։

Պառլամենտական ընտրությունները գյուղում, այդպիսով, իդեալական կերպով լավ էին գնում, երբ ձմեռանոցից եկան որսկան Մուկուչը, Քոչարը և Աթոյի տավարած Սիմոնը։

Բակ մտնելուն պես որսկան Մուկուչը նայեց ամերիկացուն ու թեքվեց Քոչարի ականջին.

— Ադա՛, Քոչա՛ր, էդ հո մեզանից մորթի առնող ամերիկացին է... Ո՞նց խաբեց մեզ շան որդի՛ն...

— Հա՛, նա է. մորթին էլ է հավաքում, հին խալիներ էլ... լավ եմ ճանաչում...

Առաջ եկավ Սիմոնը, հանդուգն հայացքով ոտից գլուխ չափեց անտառապահ Արտեմի տղային, որ աքլորացած կանգնած էր պատշգամբում, և առանց իր տիրոջ՝ Աթոյի երեսին նայելու՝ մոտեցավ սեղանին։ Վճռական էր շարժվում, մտքում ինչ-որ ճակատագրական բան էր որոշել։

— Ադա՛, կանա՛չը վերցրու,— կամաց հուշեց տերը։

Սիմոնը շուռ եկավ, խեթ-խեթ նայեց իր տիրոջն ու ձեռքը մեկնեց կարմիր թղթերին։

— Ա՛յ տղա, է՛դ չի,— զուսպ սաստեց Աթոն և երկյուղով նայեց գավառապետի կողմը. խայտառակությո՛ւն, իր հովիվը պարտիզան դառած բոլշևիկների օգտին է քվեարկում... Գավառապետը նախատինքով լի հայացքը մեխել էր Աթոյի դեմքին, որից սկսել էին ուռչել սրա վզի երակները։

— Ադա՛, լակո՛տ, դու ինձ խայտառակ արիր, կանա՛չը վերցրու,— այլևս իրեն անկարող լինելով զսպել, գոչեց Աթոն։

— Ես գիտեմ, թե ո՛րը կվերցնեմ,— կտրուկ պատասխանեց Սիմոնը և կարմիր բյուլետենը ձեռքին, առանց ալյուրի սայլին մոտենալու, գնաց արկղի կողմը։

— Ի՞նչ պատահեց,— Աթոյի տագնապը տեսնելով, հարցրեց ամերիկացին։

Նրան հասկացրին, թե ինչ է տեղի ունեցել։

Միստր Յարոն դժգոհ մռլտաց և դարձավ գավառապետին.

—Վատ եք դաստիարակել մարդկանց։

— Ընտրություններից հետո անձամբ կզբաղվեմ նրանով, մի՛ստր, անհոգ կացեք,— պատասխանեց գավառապետը՝ իր գրքույկում ինչ-որ բան խզմզելով. երևի Սիմոնի անունն էր գրում։

Հերթը հասավ Քոչարին։ Դա մի խեղճ մարդ էր, մեծ փափախով, մազոտ երեսով, տրեխները հագին։ Անճոռնի քայլվածքով նա մոտեցավ բյուլետենների սեղանին, տատանվեց, ձեռքը մեկնեց նախ կարմիր թղթերին, ապա նայեց տանուտերի դեմքին, և նրա աչքերում լավ բան չկարդալով կանաչ բյուլետենը վերցրեց ու ոտքերը թույլ-թույլ քարշ տվեց դեպի քվեատուփը։

— Քոչար քեռի՛, արի քո բաժին այլուրը ստացիր,— ձայն տվեց Ակոն՝ մեծ չափը ցույց տալով։

Քոչարը միայն օդում հուսահատ թափ տվեց ձեռքը ու գլխիկոր իջավ պատշգամբից։

Այնպե՜ս մռայլ էր ու հուսահատ, այնպե՜ս խոր վիրավորված...

Ի՞նչ աներ Քոչարը, ո՞նց ձայն տար բոլշևիկների օգտին։ Դեռ երեկ էր, որ իր սայլը կոռ տանելու դեմ դժգոհելու համար տանուտերը գյուղամիջում մտրակով կապտացրեց մեջքը։ Իսկ Սեմյոնովկայի վերելքում, երբ եզները խրվեցին ցեխի մեջ, սայլը կանգ առավ, գումակին ուղեկցող սպան ոտի տակ տվեց նրան. Քոչարի սայլը առջևից էր ընթանում և երբ կանգ էր առել, ամբողջ գումակն էր կանգ առել։ «Չէ՛, կրակի հետ չեն խաղա»,— մտածում էր Քոչարը. նա դարձել էր վախկոտ և զգուշավոր։

Իջավ Քոչարը սանդուղքներից, նրա հայացքն առավ իր ընկեր Մուկուչի սուր հայացքին և աչքերը խոնարհեց մեղավորի նման։

Որսկան Մուկուչը առաջ եկավ՝ դաշույնը կապած, հրացանն ուսին։ Նա իր հաստ հոնքերի տակից խիստ նայեց տանուտերին ու հարցրեց.

— Էս թղթերից ո՞րը ո՞ւմն է...

www.a-pdf.com

— Սա մեր դաշնակցությանն է, սա էսերներինը, սա էն խառնակիչ բոլշևիկներինը...

Որսորդը հպարտ նայեց թղթերին, պատշգամբի մարդկանց և ամուր ասաց.

— Ես ոչ դաշնակ եմ ճանաչում, ոչ էսեր։ Ես մի անգրագետ որսկան մարդ եմ, կուսակցությունից գաղափար չունեմ։

Ու շուռ եկավ գնաց։

— Ձեռ քվեարկելո՞ւ,— հետևից լսվեց տանուտերի սպառնալից ձայնը։

— Չէ՛, դո՛ւք քվեարկեցեք...

Ու քայլեց դեպի ձմեռանոց։

Սիմոնն ու Քոչարը հետևեցին նրան՝ մեկը խրոխտ և վճռական, մյուսը ընկճված ու երերուն։

4

Ձմեռանոցում մենք հավաքվել էինք որսկան Մուկուչի խրճիթը և բուխարու առաջ նստած, լսում էինք նրան։

Արտուշը իր Բողարի գլուխը գրկած, նստել էր տխուր և հենվել խրճիթի մեջտեղը տնկված սյունին, որից կախված ձեթի ճրագը աղոտ լույս և մուր էր տարածում շուրջը։

Շատ էր տրտում Արտուշը։

— Մենակ մնացիր, էլի՛, Բողար ջան,— մրմնջում էր նա։ Իսկ շունը գլուխը դրել էր թաթերի վրա և կարծես լուռ ողբում էր իր սպանված ընկերոջ մահը։

— Ընտրություն չի, խաբեբայություն է,— վրդովված ասում էր ծեր որսորդը։— Թուհ դրանց նամուսին, որ մի բուռն այլուրի համար իրենց հոգին ծախում են...

— Ի՞նչ անեն, Մուկո՛ւչ, որբերի տեր են... Վախենում են,— չգիտես իրեն, թե գաղթականներին արդարացնելու համար մրմնջում էր Քոչարը։

Գյուղից եկավ գզիր Պետոն և հայտարարեց, որ հովիվներն ու տավարածները հանդից գալուն պես գնան քվեարկելու։

Նախիրն ու հոտը գոմերում տեղավորելուց հետո, երեկոյան անասնապահները ճանապարհ ընկան գյուղ։

— Արդեն մեծացել եմ, էս էլ գնամ քվեարկելու,— գզիրին ասաց մեր ընկեր Գրիգորը։ Նա մեզնից մի քանի տարով մեծ էր,

www.a-pdf.com

բեղատեղը սկսել էր սևանալ, բայց դեռ ընտրական իրավունք չուներ։

— Ո՞ր կուսակցությանն ես ձայն տալու,— հետաքրքրվեց գզիրը։

— Չգիտեմ։ Որի՞ն տամ։

— Կանաչ թուղթը կգցես,— խորհուրդ տվեց գզիրը։

— Հիմի էլ կանաչը կգցեմ, ինչ կա որ,— իսկույն համաձայնեց Գրիգորը։

— Դե, տրեխներդ հագի գնանք։

Եվ գզիրը դուրս եկավ խրճիթից։

— Այ տղա, անխելք բան մի անի,— խրատեց ծեր որսորդը։

— Խելոք բան եմ անելու... էնպես մի պառլամենտ եմ ընտրելու, Մուկուչ պապի, որ էդ ամերիկացին մինչև կյանքի վերջը հիշի... Քո ախպորը սպանեցին, հա՞, Բողար ջան...

Ու շան գլուխը շոյելով՝ Գրիգորը ձեռքը մեկնեց իր մահակին։

Արտուշը հասկացավ և տեղից վեր թռավ.

— Ես էլ եմ գալիս...

— Քո գործերը վատ են, գնալ մի, կրոնեն,—խորհուրդ տվեց Սիմոնը։— Համ պարտիզանի տղա ես, համ փամփուշտ ես գողացել, համ շունդ ամերիկացու շան ականջը քերծել է... Գիտե՞ս ինչ հանցանքներ են դրանք,— դառն ժպիտով ավելացրեց նա։

— Որ սպանելու էլ լինեն՝ Գրիգորի հետ գնալու եմ...

Մենք կրակի լույսով տեսանք, որ Արտուշի աչքերը փայլում են անսովոր կրակով։

Տեսնես ինչ է անելու Արտուշը...

Մութ, անձրևոտ աշնանային գիշեր էր։

Մեր ձմեռանոցի անասնապահները գյուղ հասան, անտարբեր վերցրին թղթերը, գցեցին արկղը և գնացին։ Պատշգամբում միստր Յարոյի տեղը բազմոցին նստած էր խանութպան Մինասը և որպես ընտրական հանձնաժողովի անդամ հեռվից հրսկում էր բյուլետեններին ու արկղին։ Ներքև, բակում, մտրակը ձեռքին մի ստրաժնիկ էր շրջում, իսկ տանուտերը և գյուղի տերերը խորքի սենյակներից մեկում խնջույք էին կազմակերպել ամերիկացի հյուրի պատվին։

Պատշգամբի առաստաղից սեղանի վրա մի մեծ լամպ էր կախված, իսկ բակում սև պատի նման կանգնած էր խավարը։ Այդ խավարի մեջ Գրիգորը շնջում էր Արտուշի ականջին.

www.a-pdf.com

— Իմացա՞ր ինչ կանես...

— Իմացա...

— Դե, ես գնացի։

Ու Գրիգորը իր մահակին հենվելով բարձրացավ պատշգամբ։

— Էն կանաչ թղթերից մեկը վերցրու, ծալիր ու տար գցիր արկղի մեջ,— տեղից կարգադրեց Մինասը և հորանջեց. արդեն ուշ էր, գյուղի ճրագները մեկիկ-մեկին հանգչում էին։

Հենց Գրիգորը բյուլետենը ձեռքին մոտեցավ արկղին, դրսից մի փայտ ֆռռաց օդում և լամպը ջախջախված ցած ընկավ առաստաղից։

— Էն ով էր, ա՛յ շան տղերք,— տեղից վեր թռչելով գոռաց Մինասը, իսկ բակից ստրաժնիկն աննպատակ կրակում էր խավարի մեջ։ Շները դուրս թափվեցին սրահներից։ Մարդիկ արթնացան, աղմուկ ընկավ գյուղը։

Այնպես մութ էր, որ մատդ մարդու աչք կոխեիր՝ չէր տեսնի։

Տանուտերի քեֆը խանգարվեց, հյուրերը դուրս թափվեցին, միսիս Լուիզան և իր շնիկը շատ անհանգստացան։

Իսկ միստր Ցարոն մռայլ ծխում էր իր կեռ ծխամորճը։ Նա գոհ չէր ընտրությունների ո՛չ ընթացքից, ո՛չ էլ, մանավանդ, վախճանից...

5

Ուշ գիշերին ձմեռանոցի խրճիթներից մեկում հավաքվել էին հովիվները և հարցուփորձ էին անում Գրիգորին։

— Այ տղա, ո՞նց փախցրիր...

Խոսքը կանաչ ներկած արկղի մասին էր, փոքրիկ կողպեքը վրան, որ հիմա բուխարու լույսի տակ ընդհանուր հետաքրքրության առարկան էր։

Արտուշն էլի իր Բողարի վիզը գրկած, նստած էր գետնին փռված թաղիքին, իսկ որսկան Մուկուչը ծխում էր. նա գոհ էր, բայց անհանգիստ։

— Ա՛յ տղա, ցրվեցեք քնեցեք։ Գրիգոր ջան, հեռացի—գնա էս կողմերից, ճանկերը կընկնես, մեղք ես,— խրատում էր նա։

— Կգնամ, Մուկուչ պապի, բայց թող մի պառլամենտի ընտրության արդյունքները պարզեմ՝ հետո։

Այս ասելով, Գրիգորը քարով ջարդեց կողպեքը և արկղը

www.a-pdf.com

բացեց, որ բերնե բերան լիքն էր գույնզգույն թղթերով՝ մեծ մասը կանաչ։

— Էս մեր Սիմոնի գցած թուղթը, էս էլ իմը... Պա՜հ, սա ինչ է, Մուկուչ պապի, դաստա-դաստա թղթեր...

Եվ Գրիգորը արկղի տակից հանեց առանց ծալելու կանաչ բյուլետենների ամբողջ դաստաներ...

— Արկղը փակելուց առաջ մեջը տես քանի հարյուր թուղթ են դրել՝ դաշնակների օգտին։ Թո՜ւհ դրանց ընտրություններին...

Սիմոնին այնպիսի մի վրդովմունք համակեց, որ լեղուն կապ ընկավ։ Նա անխոս վեր կացավ, Գրիգորի ձեռքից խլեց թղթերը և նետեց կրակի մեջ։

— Թո՜ւհ, ձեր օրենքներին...

Թեժ բուխարու ծխնելույզից կարմիր բոցի մի ոյուն ձգվեց դեպի մութ ու մռայլ երկինքը և մի պահ ձմեռանոցը լուսավորվեց ծիրանագույն ցոլքերով...

1955

ԿՈՆՉՈԼ

1

Չգիտե՞ք ինչ բան է կոնչոլը։ Լոռեցիք լավ գիտեն։ Հնում, անճար մարդու համար համով կերակուր էր կոնչոլը։

Մեր տատերն ամիսը մեկ-երկու անգամ էին հաց թխում։ Անձրևոտ երկի՜ր, խոնավ խրճիթ, կաթիլքի տակ ընկած հացի տաշտ։ Փռան բոքոնները հինգ-վեց օրում «ծաղկում» էին, հետո կանաչ բորբոսն էր փառ կապում բոքոնի ներսում։

Հիմա դեն են նետում այդպիսի հացը, բայց այն ժամանակ գյուղացին հա՞ց դեն կգցեր, թեկուզ լրիվ բորբոսնած լիներ։ Եվ ահա այդպիսի հացերը «սաղացնելու» համար մեր տատերը մի խորամանկ կերակուր էին հնարել։ Մի գդալ յուղ էին «դաղ անում» կաթսայի մեջ, ջուր լցնում վրան և երբ եռում էր, մի ձու էին կոտրում մեջը։ Հետո սնդուկում ինչքան որ հին, ծաղկած, բորբոսնած հաց կար մեծ-մեկ կտորներով լցնում էին մեջն ու պոչն այրված փայտի խուփը դնում վրան։ Գոլորշու մեջ փափկում էին հին հացերը և երբ խուփը վերցնում էինք՝ ամպ էր բարձրանում կաթսայից, ու կոնչոլի հոտը բռնում էր տունը։

www.a-pdf.com

Համով էր թվում կոնչոլը մեզ, որովհետև հացի պակաս տարիներ շատ էին անցել մեր գլխով։ Որսից եկած մարդը, հոգնած գութանավորը, բահով հող փորողը, բքից մի կերպ ազատված հովիվը, անտառից շալակով փայտ բերողը այնպես ուտել են ուզում, որ կոնչոլը անմահական բան էր թվում նրանց։ Իսկ մի բան, որ սաստիկ քաղցածդ ժամանակ դուր եկավ, նրա համն ու հոտը այլևս չես մոռանում, միշտ էլ դուր է գալիս։

Այդպես է կոնչոլը դարերի ընթացքում նվաճել մեր քիմքը։

Հիմի անցնեմ իմ պատմությանը։

2

Մեր գյուղում նոր էր կոլտնտեսություն կազմակերպվել։ Հայրս ու մայրս աշխատում էին Ասատուրանց Լևոնի բրիգադում։

Ես ու կինս քաղաքից հյուր էինք գնացել ծնողներիս։ Բրիգադիրը երեկոյան մեր տուն եկավ և մեծահոգաբար հայտարարեց.

— Ստեփան ապի, դե որ ղոնաղներ ունես, էգուց քեզ էլ, Կատին ձալոյին էլ ազատում եմ աշխատանքից։

Ասաց ու գնաց։

Ուշ գիշերին, երբ տեղավորվեցինք քնելու, մյուս սենյակի բաց դռնից լսվում էր մորս ձայնը.

— Ամոթ է, գոնյա դո՛ւ գործի գնա, մեր բրիգադը ետ է մնում։

Օհո՞, մեր պառավներն է՞լ են սոցիալիստական մրցության մեջ...

— Կգնա՞ս,— հարցրեց մայրս անսովոր մեղմությամբ։

Ներուկը լուռ ծխում էր, և ծուխը բաց դռնից մլմլալով գալիս էր մեր ննջարանը։

Մայրս որ շատ զոռեց, հայրս անորոշ պատասխան տվեց.

— Լա՛վ, հլա թող լուսանա՝ մի բան կանենք...

— Ի՜ի, ես զարմանում եմ քո համբերության վրա։ Տարին վերջանում է, ժողովրդի առաջ խոսելու են, թե ո՛ր բրիգադն է առաջ, ո՛րը՝ ետ...

— Հա հիմի էլ թող խոսե՜ն։ Օխտանասունս անց է կացել, ես ե՞մ բրիգադ վեր քաշելու։

Երկար վիճեցին, վերջը հայրս դրեց իր պայմանը.

— Որ գիշերհանա մի լավ կոնչոլ ուտեցնես՝ կգնամ։

www.a-pdf.com

— Ի՞ի, պակսես դո՞ւ...

«Պակսես դու» խոսքը նա մի առանձին հաշտարար ժպիտով էր ասում։ Վերջապես կոտրել էր ծերունու համառությունը։

Թող նրանք քնեն, իսկ ես ուզում եմ երկու խոսքով ներկայացնել իմ հորն ու մորը՝ իրենց բնավորություններով։

3

Շատ «արխային» մարդ էր իմ հայրը, խաղա՞ղ, հանգի՞ստ... Որ հանգիստ չլիներ հարյուր տարի կապրե՞ր։

— Հա դե կանենք, էլի, վռազդ ինչ է...

— Վա՜, տարին հո չվերջացավ, մի օր էլ էդ կանենք...

— Բա՞, լավ ես ասում, անվիլ պտի...

Նրա այս խոսքերից հասկացա՞ք ոնց մարդ էր իմ հայրը։

Ու ամեն բան հետաձգում էր վաղվա։ Լավ որմնադիր էր, գեղեցիկ տներ էր կառուցում ուրիշների համար, իսկ մենք շարունակ փայտաշեն խրճիթում էինք ապրում։

— Տուն շինելն ի՞նչ է որ, մի օր էլ մեզ համար կշինենք, վռազդ ինչ է...

Լավ էր, ես իմ գժությամբ արագացրի մեր նոր տան կառուցումը, թե չէ ամբողջ կյանքում հին խրճիթում էինք ապրելու։

Մեր տան վերևը մի թեք լանջ կար և այդ լանջին մի հաստ ու կարճ գերան։ Ո՞վ գիտի հայրս ե՞րբ էր այդ գերանը բերել անտառից, որ տախտակ քաշել տա, տանի «կռոյի աշխարհում» հացի հետ փոխանակի։ Թեև մայրս միշտ շտապեցնում էր, բայց ծերունին իր պատճառաբանությունն ուներ.

— Տնաշենի կնիկ, կոռքերը հո քոչեցին ոչ իրենց աշխարքիցը։ Կտանենք, էլի, ինչ ես վռազում...

Ամառվա մի լուսնկա մեղմ երեկո ես ու իմ ընկեր Մոսեսը այդ գերանին նստած երազում էինք. պատանիներ էինք, գլուխներս լի ցնորքներով։ Մեր տանը մարդ չկար, հայրս սար էր գնացել։

Պատանին որքան էլ երազկոտ լինի, անպայման մի գիժ տամար կունենա. բռնեց այդ գիժ տամարս, գերանի հետևն անցա, ոտներս դեմ տվի, զոռում եմ, որ տեղահան անեմ։

Մոսեսի գժությունն էլ բռնեց, դա էլ ոտները դեմ տվեց, պրկված ողնաշարներս քիչ էր մնում ջարդվեին։

— Բա մենք սրա՞ն էլ չկարողանանք շուռ տալ... Ադա, բա մենք ի՞նչ տղամարդ ենք...

www.a-pdf.com

Նամուսի ընկանք, զոռ արինք, գերանը շուռ եկավ ու թեք լանջով գլորվեց գնաց։ Նոր միայն գլխի ընկանք, որ ներքևում մեր խարխուլ խրճիթն է... Բայց արդեն ուշ էր, գլորվող գերանը կանգնեցնե՞լ կլինի։

Թափ առավ, գնաց խփեց մեր խրճիթի պատին, փլցրեց ու անհետացավ տան մեջ...

Կարծում եք մեր բազկաթոռներն ու գահավորակները փշրվեցի՞ն, թե՞ հագուստի պահարանը խորտակվեց։ Հանգիստ կացեք, ներսում մի փայտե թախտ էր՝ ոտների տեղը քարեր դրած, ու մի հին սեղան, որի կողքերը այնքան էի տաշել երեխա ժամանակս, որ այլանդակվել էր։ Իսկ վրան պղնձե ինքնաեռիր թափված կրակը սև փոսեր էր թողել...

Հայրս ստիպված քարե տուն կառուցեց, այն տունը, որի մի սենյակում հիմա մենք էինք տեղավորված, մյուսում՝ Ասատուրանց Լևոնի բրիգադի անդամներից երկուսը...

Մայրս հորս հակապատկերն էր։ Նախ նրանից ջահել էր ամբողջ քսաներեք տարով (երկրորդ կինն էր)։ Հետո, անհամբեր էր և անընդհատ շարժման մեջ։ Այն օրը, որ պիտի գործով գնար Դիլիջան՝ ասենք հաց, շաքար, կամ կտոր առնելու՝ կամ բարեկամի համար մածուն ու ավելուկ տանելու, այդ գիշեր չէր քնի։ Մի քանի անգամ շապկանց դուրս կգար, կնայեր երկնքին, թե՝

— Բա լիսացա՞վ ո՞չ...

— Տարի դառա՞վ էս անտեր գիշերը...

— Հրե լիսաստղը դուրս է եկել, շորերս հագնեմ ո՞չ, էհեյ («էհեյ» հորս էր ասում)։

— Էն լուսաստղը չի, քարվանդռանը կլի,— չիբուխը վառելով ասում էր հայրս։

Բայց մայրս իսկի կհանգստանա՞ր որ։ Սկսում էր պատրաստությունը։

— Վա՜ա, ա՜յ կնիկ, սատաներոց էլա՞ր, դե համբերի լուսանա, էլի՛,— որոտում էր իմ հսկա հայրը, բայց անօգուտ. անհամբեր մարդուն հանգստացնե՞լ կլինի։

4

Հիմի հարևան սենյակում քնած են իրար հակառակ այդ բնավորությունները։ Բայց ես համոզված եմ, որ մայրս լուսամուտով շուտ-շուտ ասուղերին է նայում. ախր գիշերհանա կոնչոլ է եփելու ամուսնու համար...

www.a-pdf.com

Եվ իսկապես հենց աքլորները կանչեցին, հարևան սենյակում շարժում սկսվեց։

Նախ՝ նոր վառվող վառարանի հոտն առա։ Հետո հորս ծխամորճի դառը ծուխը մլմլալով ներս եկավ. արթնացել էր, որ կոնչոլ ուտի, թե չէ այս ժամին ի՞նչ ցավն էր կտրել, որ վեր կենա։

Յուղի տժժոցը լսվեց, հետո կաթսան հանկարծ դժժացեռացող յուղի վրա ջուր լցրին։ Քիչ անց կոնչոլի հոտը բռնեց տունը։ Մանկությանս դուրեկան հոտերից է, ուզում եմ վեր կենամ ընկերանամ հորս, բայց սսկվել եմ ու կնոջս էլ հասկացրել, որ քնած ձևանա. գիտեմ, որ ներկայացում է սկսվելու։

Կերա՞վ, կոնչոլը կերավ չփչփալեն։

— Էհեյ, էլի լցնե՞մ...

— Վաա՜, խի ես հարցնում, էնա լցրու, էլի՛,— որոտաց հայրս։

— Սուա, այ պակսես, սուս արա, երեխեքը կզարթնեն։

Երեխեքն էլ մենք ենք։

Էլի կերավ։

— Էլի լցնե՞մ...

— Վաա՜, հարցնում ես, որ չէ ասե՞մ... Կոնչոլի նուրն ինչ է, որ դրա նուրովը ես կոլխոզի համար կարտոփ հանեմ։

Երրորդ ամանը կերավ ու սկսեց դանդաղ ծխել։ Նորից եկավ դառը ծուխը, լցվեց մեր սենյակը, ելք է որոնում։

Արևելքը շառագունեց, լուսանում է։ Դրսից շների հաչոց է լսվում, սայլերի ճռինչ։ Մայրս անհամբեր դուրս ու տուն է անում, բայց չի համարձակվում շտապեցնել,— ախր մենք կլսենք...

Վերջապես չհամբերեց.

— Էհեյ, ախր խալխը գնացին...

— Հա թող գնան, վռազդ ինչ է,— անտարբեր պատասխանեց հայրս՝ քուլանները բաց թողնելով։

Առանց տեսնելու պատկերացնում եմ դեմքը, վիճակը. երեք ամսան կոնչոլը կերել է, թախտին փառավոր մեկնվել, մեջքը պատին դեմ տվել ու ծխում է աշխարհից ու մարդկանցից գոհ։

Մայրս ցածր ձայնով, որ մեզ չարթնացնի՝

— Դե թե՛զ արա, է՜, էհեյ, խալխը գնացին...

Փառ-փառ ծիծաղեց։

— Թող գնան, բարի ճամփա...

— Ուրեմն գնում չե՞ս,— անհանգստացավ մայրս։

www.a-pdf.com

— Խի չեմ գնում... կգնամ, էլի, օրը նոր է բացվում, հո չմթնեց։

Նորից բոպեներ անցան, պատի մյուս կողմից զգում եմ, որ մայրս «ուտում է իրեն»։ Ախր մի նրբություն էլ կար. խեղճ կինը հարազատ մայրս չէր, ինձնից քաշվում էր. ինչո՞ւ իմանամ, որ ծերունի հորս գործի է ուղարկում...

— Ուրեմն գնալու մի՞տք չունես,— լսվեց զուսպ հարցը։

Հայրս լուռ ծխում է։

— Բա, որ գնալու չէիր, ինչի՞ ինձ քնահարամ արիր, կոնչոլ եփել տվիր։

Մորս այդ խոսքի վրա իմ վիթխարի հայրն այնպես քահ-քահ ծիծաղեց, որ, ինչպես մեզ մոտ են ասում՝ «օճորքից հող թափվեց»։

Ծիծաղեց ու ասաց.

— Հիմի էլ ես եմ, կերել եմ ու գնում չեմ, ի՞նչ տես անիլ...։

Այդ որ ասաց, մենք էլ ծիծաղեցինք։

— Ի՜ի, պակսես դու, պակսես, տեսա՞ր ոնց խաբեց ինձ...։

Ու մայրս բարեկամաբար չանչ արավ դեպի ութսուն գնացող իր «կավալերի» վրա...

1961

www.a-pdf.com

ՈՒՐԱԽ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

www.a-pdf.com

ԻՆՉՊԵ՞Ս ՀՅՈՒՐ ԳՆԱՑԻ
ԱՐՈՒԹԻՆ ԶԻՄՉԻՄՈՎԻՆ

Քսաներկու թվականին տասնյոթ տարիս նոր բոլորած գյուղացի տղա էի, երբ կյանքումս առաջին անգամ ընկա քաղաք, այն էլ Թիֆլիսի նման քաղաքը... Անակնկալի եկած՝ զարմանքից բերանս բաց՝ դիտում էի բարձր շենքերը, զրնգոցով երթևեկող էլեկտրաքարշը, փողոցներում ու շուկաներում խռնված ծով բազմությունը։ Պահո՜, մարդ հո այստեղ ոտով գլխով կկորչի... Մանկությունս անցել էր մեր լեռնային հետամնաց գյուղում, պարզ խաշնարածների հետ։ Մահակս ուսիս էի դնում ու բռնում լեռնային կածանները. գնա՜-գնա՜, թե մարդու կամ շենի պիտի հանդիպես։ Շուրջդ խաղա՜ղ, ոչ մի ձայն, ոչ մի թխկոց. ականջներս տժժում էին մենակությունից։ Իսկ այստեղ, այս ժխորի մեջ հո մարդ կգժվի։

Ընկերներս գաղտնի իրար աչքով անելով՝ նայում են ինձ, իմ շարժումներին, ու ժպտում, երբեմն էլ թեթից քաշելով զգուշացնում են.

— Ուշքդ վրադ պահիր, տրամվայի տակն ընկար...

Ուշքի էի գալիս, ետ քաշվում, բայց էլի մի անսովոր բան գրավում էր ինձ, և ես ընդհարվում էի մայթով գնացող մարդկանց։

Ի՜նչ դժվար բան է եղել հարթ մայթով քայլելը. ափսոս չէի՞ն մեր սարի նեղ կածանները։ Այնտեղ ձևը գիտեմ քայլելու, իսկ այստեղ գնում եմ անճոռնի, ծուռ ու մուռ. երևի նրանից է, որ մանկությունից սկսած հարթ տեղով քայլած չկամ. դե, սարերում հարթ տեղ որտեղի՞ց...

Երբ վերջապես կոմերիտմիության աշխատողների Անդրկովկասյան խորհրդակցությունը, որին մասնակցելու էինք եկել,

www.a-pdf.com

«ընկեր Արտյոմը»՝ Դիլիջանի գավառային կոմիտեի «ագիտպրոպը», ասաց՝

— Տղե՛րք, երեկոյան Վախթանգին Զիմզիմովի տուն եմ տանելու... Համա կզարմանա, հա՞...

Արտյոմը բնիկ Թբիլիսցի էր։ Հեղափոխությունից անմիջապես հետո Անդրերկրկոմը նրան ուղարկել էր Հայաստանում աշխատելու։ Դա մի աչքաբաց, ռուսերեն ու վրացերեն վարժ խոսող, պարահանդեսներում աղջիկների հետ պարող և շատ կարդացած երիտասարդ էր։ Քաջ ծանոթ էր Թբիլիսիին, նրա մարդկանց կենցաղին։

Գնամ աչքովս տեսնեմ ինչ մարդիկ են Սունդուկյանի նկարագրած այդ զիմզիմովները։ Դիլիջանի գավկոմի աշխատակից Մանվելը նույնպես ընկերացավ մեզ, և մենք այդ երեկո գնացինք Արտյոմի հարուստ բարեկամներից մեկի մոտ, որին նա կատակով Արութին Զիմզիմով էր կոչում։

Շենքը, որի բակը մտանք, մեկ և կես հարկանի էր։ Նրա ճակատը զարդարված էր քանդակած խոյակներով, մուտքը որոշ չափով պահպանում էր իր նախկին շքեղությունը։

Տան առաջ մի գեղեցիկ պարտեզ կար, որ խնամքով ցանկապատված էր։ Դիրքը բարձր էր, այստեղից երևում էր քաղաքի մեծ մասը, իսկ ներքևում՝ հանդարտ հոսող Քուռը՝ իր վրա մեկնված վիթխարի կամուրջներով։

Ոչի՛նչ, վատ տեղ չի ընտրել իր բնակության համար վաճառական Զիմզիմովը...

Մուտքը, իր ուղղությամբ եղած սենյակներով, գրավված էր հեղկոմի կողմից. տանտիրոջ տրամադրության տակ թողել էին միայն շենքի հետևի մասի սենյակները, որոնց անշուք մուտքը պարտեզի մի անկյունից էր։

Արտյոմը աստիճաններով համաբաձակ բարձրացավ և զանգը տվեց, իսկ մենք ներքևում սպասում էինք։

Դուռը բացվեց և սև, կեռ հոնքերով մի օրիորդ երևաց՝ երկար խալաթը հագին։

— Արտյո՞մ... Այդ ո՞ր քամին,— լսվեց օրիորդի կարկաչուն ձայնը, ապա Արտյոմի բասը.

— Վերև բարձրացեք, ի՞նչ եք փայտացել...

— Ներս համեցեք, ներս համեցե՞ք,— սիրալիր ու երգեցիկ կրկնեց օրիորդը, և մենք մտանք։

www.a-pdf.com

Իսկապես որ Զիմզիմովի տուն... Որքան էլ տանտերերը հեղափոխության ահից կծկվել էին, պահպահել իրենց շքեղ կահկարասին, բայց մնացածն էլ այնքան անսովոր, այնքան շլացուցիչ էր ինձ համար, որ դահլիճի մուտքի մոտ կանգնած դիտում էի։

— Հրամմեցե՛ք, հրամմեցեք,— ասաց օրիորդը՝ ինձ կանաչ թավշե մի բազմոց ցույց տալով։— Նստեցե՛ք։

Առաստաղից ոսկեզօծ մի ջահ էր կախված, որի մոմաձև բազմաթիվ լամպերը մեղմ, կաթնագույն լույս էին արձակում։ Դահլիճի ամբողջ հատակը ծածկում էր վիթխարի մեծության պարսկական մի գորգ, անկյունում դաշնամուրն էր, պատից կախված էին Թբիլիսիի հին տարազով մի բեղավոր տղամարդու և մի հեզ կնոջ նկար. «Երևի Զիմզիմովն է իր կնոջ հետ»։

Ներսի դուռը բացվեց, և հանդարտ ու վեհաշուք ներս մտավ միջին տարիքի, դեմքի թարմությունն արդեն անցած, գլուխը վրացական ձևով պճնազարդած մի կին։ Նրա ճակատը երկայնքով մեկ պարուրող կարմիր «կոպիի» մեջտեղը մեղմ փողփողում էր մի թանկագին ակ, իսկ գլխին գցած էր թափանցիկ շղարշ, որի երկու ծայրերը աջ և ձախ ուսերով իջնում էին վար։ Գոտին արծաթե էր, մաշիկները՝ տան գործած։

— Բարով ես եկել, վո՛ւրթի, բարո՞վ...— ծանր-ծանր ասաց կինը և ձեռքը մեկնեց։

Արտյոմը խոնարհվեց, համբուրեց նրա պարզած աջը (մի բան, որ, իհարկե, շատ խորթ թվաց մեզ՝ կոմերիտմիության աշխատողներիս) և ասաց.

— Ինչպե՞ս եք, մամիդա՛, ինչպե՞ս է ձեր առողջությունը։

— Է՛հ, վո՛ւրթի, ապրում ենք, էլի՛...

Ապա աչքերը կկոցելով նայեց մեզ և խոսքի կիսում կանգ առավ, երևի զգուշանում էր իր վիճակից գանգատվել։

— Ընկերնե՞րդ են, բարով են եկել։ Էլի կոմունիստ կլինեն... Լավ ես արել, Արտյոմ ջան, որ բալշևիկ ես դառել... Հիմի դիփունքս էլ բալշևիկ ենք...

— Ինչո՞վ եք բոլշևիկ, մամի՛դա,— հեգնական ժպիտը բերանի անկյուններում խաղացնելով, հարցրեց Արտյոմը։

— Նրանո՛վ ենք բալշևիկ, վո՛ւրթի, որ, մտի՞կ, տան գործն էլ ենք մենք անում, էլ ոչ ծառա, ոչ՝ աղախին...

Եվ իսկապես, դուռը բացող օրիորդը և նրա նման, բայց նրանից փոքր մի այլ աղջիկ, որոնք անշուշտ, այս «խանում-

www.a-pdf.com

խաթուն» կնոջ դստերն էին, սեղանի պատրաստություն էին տեսնում իրենք՝ անձամբ, առանց որևէ աղախնի աջակցության։ Նրանք բացեցին-երկարացրին դահլիճի կենտրոնում դրված ճաշասեղանը և ծանր աթոռները շարեցին նրա շուրջը։

— Ախր, Արտյոմ ջան, դուն չես գիտի, թե բալշևիկներն ինչ մեծ օգուտ տվին մեզ,— շարունակեց իր զրույցը Արտյոմի «մամիդան»։— Ասա ո՞նց։ Քսան թվին բժիշկները քննեցին մեր Գիքոյին ու որոշեցին, որ նա վեց ամիս էլ չի ապրիլ... Հո մի՞տդ է նրա փորը, Արտյոմ ջան, որ ֆայտոն էր նստում, սունին կռանում էր ծանրության տակ։ Հևում էր, շունչը կտրում, ոչ քուն ուներ, ոչ կյանք... Բժիշկն ասել էր՝ սրտիդ վրա կես փութ եղ կա, պարոն Գիքո, էդ եղը քեզ սպանելու է՝ ճար ունես, տես։ Ճարն էլ էն էր, որ գնում էր Կիսլովոդսկ, ջուր էր խմում, մասաժ էին անում, մի քիչ լղարացնում։ Հենց գալիս էր իր թավուր խորոված ուտում, մի շիշ Կախեթի գինի խմում, էլի տռզում էր... Վերջը, վո՛ւրթի, լավ էր, բալշևիկներն եկան, տունը խլեցին, դուքանները խլեցին՝ Գիքոս դարդից լղարեց, կարգին շնորհքի եկավ, թե չէ նա հիմի, հեռու իրենից, վաղուց էր մեռել... Բա՜, վո՛ւրթի, էդպես բալշևիկները փրկեցին մեր մարդի կյանքը...

— Հիմի ո՞ւր է Գիքո ձյաձյան... իսկապես, էլ փոր չունի՞, հավատալս չի գալիս,— հարցրեց Արտյոմը։

— Ո՞ւր է,— Ռոստո՛վ։ Մի քիչ գինի է տարել... Դե, սովոր է, պատահում է մեկ-մեկ ոտի վրա առուտուր է անում... Փո՞ր... փոր չկա՜... օրհնվեն բալշևիկները, Գիքոյի կյանքը վեց ամիս էր մնացել, եկան—փրկեցին...

Սեղան բաց արին և մեզ հրավիրեցին բոլորել նրա շուրջը։

Ա՜յ քեզ տարօրինակ սեղա՜ն... Շարել են ընթրելու ամեն տեսակի «հարմարանքներ»՝ դանակներ, պատառաքաղներ, չոր միրգ ջարդելու գործիքներ, ամեն մեծության պնակներ, վազեր։ Այդ հարմարանքների մեծ մասը ոսկեզօծ էին, շատերը՝ արծաթյա, ապակեղենը՝ բյուրեղյա։ Ջահի լույսի տակ այդ բոլորն էլ, ամեն մեկն իր երանգով փողփողում էին, շլացնում իմ անսովոր աչքը։

Ինչ թաքցնեմ, կենցաղով շա՜տ հետամնաց էինք այն տարիներին։ Գյուղում մեր «ընթրիքի սեղանին» կավե ամաններ էին լինում, տանձի փայտից իմ ձեռքով շինված գդալներ, պոչը փայտից մի մեծ դանակ (կարծում եք հա՞ց կտրելու համար, ո՜չ, հացը մենք ձեռքով էինք կտրում), իսկ բուխարու մեջ՝ կրակի

www.a-pdf.com

Վրա խլթիլթում էր մրոտ հին կաթսան՝ կեռ պոչով փայտե շերեփը մեջը ցցված։ Ամբողջ կյանքումս ես ա՛յդ էի տեսել, դե, իհարկե, պիտի զարմանայի Զիմզիմովի տանը։

Բյուրեղյա երկար ծաղկամանի մեջ մի մեծ փունջ վարդեր բերին-դրին սեղանի կենտրոնում։ Սա՝ ինչի համար է. հո նշանդրեք չի՞։ Երևի վարդերի սիրուն տեսքից մեր ախորժակը բացվելու է... Եթե դրա՞ համար է, իզուր են նեղություն կրում. ես ախորժակի պակասություն կյանքումս չեմ զգացել, մանավանդ այն տարիներին, երբ դեռ ցած չէի դրել տավարածի մահակը...

Զիմզիմովի աղջիկները, ճերմակ գոգնոցներ կապած, բերում էին, հա՛ բերում։ Եվ ի՞նչ էր բերածները՝ ուտելու ամեն տեսակի հարմարանքներ։ Այսքան որ հարմարանքներն են, բա ուտելիքը քանի՞ տեսակ կլինի, մտքումս ուրախացա ես։

Վերջապես եկավ և «ուտելիքը». շքեղ վազերի մեջ չոր միրգ՝ ընկույզ, չամիչ, տխիլ, շագանակ, մի ամանով «կայսերական» խնձոր, երկու վազ մուրաբա և երկու վազ էլ բարակ տաշեղների նման բան, որ հետո պարզվեց, ինչ-որ թխվածք էր...

Վերջացա՛վ։ Իրենք ևս աթոռները քաշեցին-նստեցին և Արտյոմի «մամիդան» քաղցր ու երգեցիկ ձայնով դիմեց մեզ.

— Կերե՛ք, վուրթի՛ք, մի՛ք ամաչիլ...

Կարծես թե սրտաբաց է ասում, բայց զգում եմ, որ մեր ոչ մի շարժումը այդ բուրժույի կնոջ սրտովը չի, զգում եմ, որ մեզ հետ սեղան է նստել ձևի համար, ստիպված, ցույց տալու, թե իբր իրենք էլ «հասարակ մարդիկ» են։ Գիտեմ, որ մի քանի տարի առաջ պատահեի՝ ինձ նմանին շեմքն էլ չէին թողնի։ Հասկանում եմ նաև այն, որ այսպիսի ընտանիքում պիտի պահպանես «բարձր խավի» կենցաղում ընդունված բոլոր ձևականությունները, և որ բավական է «խախտեցիր» ընդունված կարգը՝ վե՛րջ, ով գիտի ինչի տեղ կգնեն քեզ։ Օտար ու սառը հայացքով զննում է ինձ Զիմզիմովի կինը ու հետն էլ կեղծ ժպտալով ասում.

— Կե՛ր, վո՛ւրթի, ամանչիլ մի...

Ո՞նց չամաչեմ, փշերի վրա եմ նստած, հիմա կհետևեն յուրաքանչյուր պատառիս ճանապարհորդությանը։ Բացի դրանից, ճիշտն ասած, չգիտեմ ի՞նչ ուտեմ և ո՞նց ուտեմ...

Ամենակարևորը՝ այս պսպղուն գործիքներից ո՞րը ինչի՞ համար է, ո՞րը ինչպե՞ս պիտի բռնել...

Մնացի մոլորված։

«Մամիդան» արծաթե ունելին վերցրեց և նրանով վազի-

www.a-pdf.com

միջից մի «տաշեղ» հանեց-դրեց իմ ճենապակյա պնակի մեջ։ Այդ մեկը հասկացանք։ Ուրեմն դրանով ենք վերցնելու։ Բայց ծիծաղս գալիս է, այնպես քնքուշ են բռնում այդ ունելին, այնպես մեղմությամբ են բանեցնում, որ... Չէ՛, ախպե՛ր, սա իմ տեղը չի։ Նայի՛ր, նույնիսկ տխիլը արծաթե գործիքով են ջարդում։ Իսկ ատամները ինչո՞ւ է բնությունը տվել մարդուս, չեմ հասկանում,— մեր գյուղի բոլոր տավաբածների նման մտածում էի ես։ Ինչ-որ քաղաքավարական ձևեր պիտի բանեցնես, խոսելիս պիտի դեմքիդ սիրալիրություն առաջ բերես։ Չէ՛, փշերի վրա եմ նստած։ Ես այդ բաներին ձեռք տվողը չեմ. մի բան էլ սխալ արի՝ հիմի այս սիրունիկ աղջիկները...

— Արտյոմ ջան, Կախեթի գինուն կարոտած կլիս, ասեմ՝ բերեն,— առաջարկեց տանտիրուհին։

— Հա՛, մամիդա՛, կարելի է,— անմիջապես համաձայնեց Արտյոմը։

Աղջիկներից մեկը երկու շիշ կարմիր գինի բերեց, իսկ մյուսը՝ այնպիսի բաժակներ, որոնց նմանը ես միայն կինոնկարում էի տեսել. բարակ-երկար վզերով բյուրեղապակյա գավաթներ էին դրանք, որոնց տեսքից սիրտս ահ ընկավ. «Հիմի ես ոնց շարժվեմ, որ դա վեր չընկնի...»,— մտածեցի ես։

Արտյոմը շարժվում է վարժ, ազատ՝ ի՛ր միջավայրն է, իր տարերքը։ Նա գինի լցրեց։ Նայում եմ բարակ, երկար վզով գավաթին ու մտքումս ասում. «Սա հո իսկական վեր ընկնելու համար է...»։ Ինձ թվում է բարակ կոթով, նեղ հատակով, գինով լիքը ծանր «գլխով» այդ գավաթը հարբած մարդու նման դժվարությամբ է ոտքի վրա կանգնել։ Որ ընկավ՝ խայտառակ կլինենք. գինին մուգ է, գրեթե՝ սև, իսկ սփռոցը ճերմակ է, և ի՞նչ սփռոց. «Երևի Փարիզից բերած կլինեն»։

— Կե՛ր, վո՛ւրթի, ինչի՞ ես մոլորվել,— շինծու մեղմությամբ դարձավ ինձ տանտիրուհին։

Ամաչելով ձեռքս մեկնեցի, որ մի կտոր թխվածք վերցնեմ, չգիտեմ ինչպես եղավ, մեկ էլ այն տեսա, որ գավաթս շուռ եկավ ու իր ամբողջ հասակով մեկնվեց ճերմակ սփռոցին... Գինին ալիք տալով առաջ գնաց և բավական տարածություն կարմրեց, ոնց որ լերդացած արյուն...

Քարացա, ամոթից աչքերս խոնարհեցի։ Երևի հիմա Զիմզիմովի աղջիկները նայում են ինձ և հազիվ են զսպում իրենց ծիծաղը։ Երևի ընկերներս իմ փոխարեն գետինը մտան...

www.a-pdf.com

Ի՞նչ գետին մտնող պտուղ է Արտյո՛մը. «աչքիս պոչով» նայում եմ կախված թևին. ցնցվում է, երևի ծիծաղը հաղիվ է զսպում։

— Վո՛ւնչինչ, վո՛ւրթի, վո՛ւնչինչ,— լսեցի տանտիրուհու հանգստացնող ձայնը։

Էլ ինչ «վունչինչ», սեղանն ապականել եմ։

Այդպիսի դեպքերում, հիշում եմ, գյուղում մենք աղ էինք ցանում թափված գինու վրա և մի աման դնում՝ ծածկում, որ չերևա։ Բայց չէ, այստեղ աղ չարին վրան, այլ զգուշությամբ հավաքեցին սեղանի վրայի ամանեղենը, ուտելիքը և սփռոցը փոխեցին։ Դա բավական ժամանակ տևեց. դե, սեղանին ինչքան որ ուտելիք կար, տասը այնքան էլ ուտելու հարմարանքներն ու գործիքներն էին...

Դահլիճում անհարմար լռություն էր տիրում, իսկ ես, չգիտեմ ինչու (երևի շփոթմունքից), մի պսպղուն դանակ էի վերցրել և կենտրոնացած ուշադրությամբ զննում էի այնպես, կարծես այդ դանակով մի շատ կարևոր հարց էի լուծելու։

Սփռոցը փոխելիս, ինչպես է լինում ձեռքիս դանակը մնում է նոր սփռոցի տակ...

Կարգը վերականգնվեց, Արտյոմը վեր կացավ, կատակներ անելով վիզը երկար գավաթս նորից լցրեց ու հանձնեց ինձ։ Ահը սրտումս, դողդողացող ձեռքով վերցրի, զգուշությամբ դրի առաջս։ Հենց դրի՝ իսկույն պառկեց։ Գնաց Կախեթի գինին ու հեղեղեց վազերի տակը։ Դու մի ասի գավաթը դրել եմ սփռոցի տակ մնացած դանակի վրա...

— Վո՛ւնչինչ, վո՛ւրթի, վո՛ւնչինչ,— նորից ինձ հանգստացնելու փորձ արավ Արտյոմի «մամիդան»։ Անհամարձակ նայեցի դեմքին. գունատվել էր, իսկ աչքերի մեջ այնպիսի ատելություն կար, որ սարսռեցի։

Նորից սեղանը հավաքեցին և գնացին մյուս սենյակից մի այլ սփռոց բերելու։ Բերին-փռեցին ի՞նչ սփռոց. կիտրոնի գույնի կերպա՞ս էր դա, չինական մետա՞քս, թե... Դե, ես ինչ գիտեմ, ինչ կտորից կարող էր լինել Զիմզիմովի նման վաճառականի սփռոցը։

Փռեցին, սփռոցի ծոպերը սեղանի կողքերով ցած կախվեցին։ Շփոթմունքից գլխահակ ոլորում եմ այդ ծոպերն ու հետն էլ մտքումս հայհոյում Արտյոմին, որ իմ գլխին այդպիսի խաղ խաղաց։ Ոլորում եմ ծոպերը, ձեռքիս պատառաքաղով խճճումս

www.a-pdf.com

Պատառաքաղն ի՞նչ գործ ունի ձեռքիս։ Երևի նորից շփոթմունքով եմ վերցրել։ Դե, այդպիսի ժամանակ մարդ մի բանով պե՞տք է զբաղվի, թե ոչ։ Լռություն է տիրում դահլիճում, միայն նորից իրենց տեղերը վերադարձող ամանների ու վազերի զրնգոցն է երբեմն լսվում։

— Կերե՛ք, վո՛ւրթի... Արտյոմ ջան, գինի ածա,— լսվեց տանտիրուհու ձայնը։

Դարձյա՞լ գինի... Աչքիս պոչով թշնամաբար նայում եմ առաջս տնկված «լագլագի վզի» նման երկար գավաթին։ Իսկական բուրժույի բաժակ... Չի լինի՞, որ մարդավարի բաժակներ դնեն, տակները լայն, բոյները՝ կարճ։ Նորից լցրել դրել են առաջս։ Չէ՞, ես դրան ձեռք տվողը չեմ։ Սփոռցի ծոպերի հետ կզբաղվեմ, մինչև որ վերջանա այս պատիժ—ընթրիքը՝ ազատ օդ դուրս գանք...

— Կե՛ր, վո՛ւրթի, կե՛ր,— հանգստացնող ու մխիթարող շեշտով ասում է ինձ տանտիրուհին։ Կեղծում է։ Ա՜խ, այդ ձևական քաղաքավարությունը...

Իսկի կուտե՞մ որ։ Բայց հետո մտածեցի. անհարմար է, ընթրիքին չմասնակցելն ավելի վատ, բոլորի ուշադրության կենտրոն եմ դարձել, եկ ձեռքիս պատառաքաղով մի խնձոր վերցնեմ։ Վճռեցի, տեղիցս վեր կացա և պատառաքաղով զինված բազուկս թափով մեկնեցի առաջ։ Ո՞վ սարսափ, սփոռցի ծայրը վեր բարձրացավ և ձեռքիս հետ գնաց։ Զրնգոցով ու շրխկոցով ցած թափվեցին վազերը, գավաթները, գինով լի շշերը։ Դե ոնց չթափվեին, բազուկիս հետ «մղանել»—սրբել էի այն ամենը, ինչ կար իմ սահմաններում։ Թո՛ւհ, այդ անիծված պատառաքաղն էր մեղավոր, չէի նկատել, որ խճճվել է սփոռցի ծոպերին...

Այս անգամ այլևս չլսեցի տանտիրուհու «վունչինչ վուրթի» հանգստացնող խոսքը. երևի վրդովմունքից դողում էր։ Լսում եմ նյարդային շարժումներ, արագ երթևեկություն, երևի նորից են փոխում սփոռցը, թե՝ ջարդվածներն են դուրս տանում...

Երբ, վերջապես, մի այլ սփոռց բերին, բոլորից թանկագինն ու շքեղը, Արտյոմի «մամիդան» դարձավ ինձ մեղմ ու զուսպ տոնով.

— Սա մեր վերջին սփոռցն է... էլ սփոռց չունենք, վո՛ւրթի...

Երբ, վերջապես, դուրս եկանք Զիմզիմովի տնից, շնչեցի

www.a-pdf.com

ապատ ու լիաթոք, իրոք քիչ էր մնում խեղդվեմ այդ ճոխ կահավորված տանը։

Ճանապարհին, մինչ Արտյոմը փորը բռնած՝ ազատություն էր տվել իր ծիծաղին, ես մտածում էի. ի՞նչ լավ են մեր մարդիկ՝ իրենց պարզ կենցաղով, իրենց անմիջական ու պարզ վերաբերմունքով։

Բայց և ամոթ էի զգում իմ հետամնացության համար։ Ահա մարդիկ ստիպված են համակերպվել մեզ, շողոքորթել։ Խլել ենք նրանցից և՛ իշխանություն, և՛ կարողություն։ Իսկ կուլտուրական կենցա՞ղը։ Այդ արդեն խլել չես կարող։ «Ինչի՞ նման եմ,— մտածում էի ես,— կարգին պատառաքաղ անգամ բռնել չեմ կարող...»։ Չէ՞, այս մակարդակի վրա մնալ չի կարելի...

Զիմզիմովի տանն անցկացրած այն ձախորդ երեկոյից հետո ա՛յդ մտքերը մնացին իմ ուղեղում։ Եվ տարիների ընթացքում նրանք տվին իրենց պտուղները։

Այժմ, իհարկե, ոչ մի ճոխություն ինձ շլացնել չի կարող։ Բայց, ճիշտն ասած, երբ առաջս երկար վզով գավաթ են դնում, սիրտս ահ է ընկնում, թե հիմի ուր որ է կընկնի և կապականի սփռոցը։

Այդ «ահի» դեմ արդեն կռվել չես կարող. անհաղթահարելի ռեֆլեքս է դա, որ կապված է Զիմզիմովի տանն անց կացրածս այն ձախորդ երեկոյի հետ...

1952

ՇԱՏԱԿԵՐՆԵՐԸ

Սովետական իշխանության առաջին տարիներին էր։ Մեր գյուղում կոոպերատիվ էր բացվել, կազմակերպվել էր հողագործական ընկերություն, և սովից, կռիվներից, ճնշումից ազատագրված մարդիկ նո՞ր-նոր շունչ էին առել ու սկսել էին խաղաղ ապրել։ Բայց չարչի Փիլոն դեռ մաքառում էր նորի դեմ, դեռ շարունակում էր մրցել կոոպերատիվի հետ։

Գյուղսովետի նախագահ Պետրոսը ասում էր.

— Այ Փի՞լո, աշխարհքը փոխվել է, ձեռ քաշի հարամ առուտուրից, մի հալալ աշխատանքի կպի։

Բայց Փիլոն, որ ապրում էր առանց քրտնելու, առևտրից

www.a-pdf.com

ձեռք վերցնելու միտք չուներ։ Կանգնում էր իր խանութի առաջ, բութ մատը խրում արծաթե գոտու տակ, տռուզ փորը ցցում, յուղալի աչքերով նայում էր կոոպերատիվ գնացող գյուղացիներին ու հաստ բեղի տակ մռլտում.

— Հենց ձեռքները կոպեկ է ընկնում դեպի կոոպերատիվ են վազում... Ոչի՜նչ, երևի մի օր էլ իմ դուռը կգաք... մաշկե՜մ, մաշկե՜մ...

Եվ վայ նրան, ով գալիս էր Փիլոյի «դուռը»։

Նա հոտառությամբ զգում էր, թե ի՜նչ ապրանք չի կարողանում ճարել կոոպերատիվը, կամ ի՜նչը շուտով կվերջանա։ Բերում էր չճարվող ապրանքներ ու տասնապատիկ գնով ծախում։ Իսկ ով ընկավ նրա ապառիկի մատյանը՝ կորա՜վ, որովհետև այդ մատյանում մարդուս պարտքը ճուտեր էր հանում՝ բազմանում...

Մեր գյուղում մի կատակասեր մարդ կար՝ Խեչան անունով։ Նա շեկ էր, բեղերը ցանցառ, աչքերը միշտ ծիծաղով լի։ Որ նայում էիր երեսին՝ չգիտես ինչու, առանց պատճառի ծիծաղդ գալիս էր։

Մի օր Խեչանը մտնում է գյուղսովետ ու դիմում Պետրոսին.

— Նախագահ ջան, ինչ կլինի իրավունք տաս Փիլոյի խանութը մի օրվա մեջ փակեմ. ախր վառեց ժողովրդին...

— Ո՞նց փակես, ուժո՞վ։

— Ինչո՞ւ ուժով։ Էնպես մի խաղ խաղամ դրա գլխին, որ իրեն կամքով խանութի բանալիները ուղարկի գյուղսովետ։

Ու ծիծաղն աչքերում, նախագահին քշփշոցով պատմում է իր ծրագիրը։

Պետրոսը բեղի տակ ժպտալով հավանություն է տալիս և վերջն ասում է.

— Միայն մի պայմանով... որ Փիլոյի ապառիկի մատյանը բերես ինձ։ Գիտե՞ս քանի աղքատի հաշիվ կա նրա մեջ... Քամել է էդ անխիղճը աղքատներին, քամել...

— Բերե՜մ, նախագահ ջան, դրանից էլ հեշտ բա՞ն...

Այդ նույն օրը երեկոյան դեմ Մասխարա Խեչանը եղանն ուսին անցնում էր շարքի Փիլոյի խանութի մոտով։ Նա գլուխը ներս խոթեց խանութի բաց պատուհանից և արհամարհանքով ասաց.

— Փի՜լո, հիմի դու էլ կասես խանութ ունեմ, էլի՜... Հրե՜

www.a-pdf.com

Խանութը, հրե՛, մի կոոպերատիվ մտի՞, խանութը նրա՞ն կասեն...

Փիլոյի վիրավոր տեղին կպան. չէր դիմանում կոոպերատիվի մրցությանը, դրանից էլ գազազած էր։

— Ի՞նչ է, Զփլախանց Խեչան, խանութիս հավան չե՞ս։

— Հավանելու բա՞ն է, որ հավանեմ. մարդ որ խիղճը կորցնի, մի նստելումը խանութիդ էլած-չելածը կուտի։

Մոտիկ կանգնած գյուղացիները, որ հետևում էին այդ բանավեճին, հռհռացին։

Խանութպանը փրփրեց.

— Ա՛յ լուպազ, ախր ինչի՞ չես ռեխիդ չափով խոսում... Ախր լեզուդ չլինի՝ ագռավներն աչքերդ կհանեն։

— Ճի՛շտ եմ ասում, Փիլո՛, նեղանալ մի, խանութդ ամենաշատը հինգ մարդի պորցի է։

— Դե կե՛ր... Դե չուտողի էսենցն ու էնենցը...

Եվ Փիլոն հիշոցներ արձակելով՝ խանութի դուռը լայն բաց արավ շրխկոցով ու Խեչանի թևից բռնելով՝ ներս քաշեց. նա շատ էր վրդովվում, որ իր կոտը ընկնելը հիշեցնում էին իրեն։

Պարապ-սարապ գյուղացիների մի խումբ, իրար աչքով անելով, Խեչանի հետևից խանութ մտան։

— Տո, խելո՛ք, հո մեխերն ու շուշեղենը չեմ ուտելու. խանութիդ էլած-չելածը ծախի մի խոզ առ, հինգ հոգով չուտողի էսենցն ու էնենցը (ու Խեչանն էլ իր հերթին մի քանի համով հիշոցներ տվեց)։

— Բա որ չկերա՞ր...

— Որ չկերանք՝ հա՛մ խոզիդ գինը տանք, համ էլ երկու խոզ տուգանք տանք։ Մենակ մի պայման. եթե գրազը մենք տանենք, ապառիկի մատյանը պետք է տաս կրակը գցենք։

Գյուղացիները հանդից վերադառնում էին գործիքներն ուսներին և խանութի ներսի գոռգոռոցը լսելով՝ կանգ էին առնում ու հարցնում կատարածու Արշակին.

— Էն ի՞նչ ղալմաղալ է ներսում...

— Կացե՛ք, տեղ չգնաք, հանգամանք կա,— խորհրդավոր աչքով էր անում և գյուղացիների հետաքրքրությունը գրգռում կատարածուն։

Մեր գյուղում առաջ ոչ թատրոն կար, ոչ կինո, ոչ էլ որևէ կուլտուրական զբաղմունք։ Ու պարապ ժամանակ գյուղամիջին հավաքված մարդիկ գրազներ էին բռնում, մարդկանց իրար դեմ գրգռում, կռիվներ սարքում, որ զվարճանան։ Այս անգամ էլ հա-

www.a-pdf.com

վաքված մարդկանց մի մասը խեչանի թիկունքն անց կացավ, մյուսը խանութպանի կողմը բռնեց ու սկսեցին վեճը թեժացնել, որ չլինի թե հանկարծ գրագը խափանվի։

— Փիլո՛, վախես ոչ, մի խոզը քսան մարդի փորհարինք կգցի, ոիսկով ձեռքդ տուր, դրանք խոզ ուտողը չեն։

— Խեչա՛ն, բա դու տղամարդ չե՞ս, մի խոզն ի՞նչ է որ առաջը կուչ ես եկել-խեղճացել... Բա տղամարդն ուտելիքի առաջ կխեղճանա՞...

— Էն տարին գնացի տեսա Ագռավի Քարի տակին գելը մեր մոդու կեսը կերել է։ Կրակ արի, մնացած կեսն էլ ես կերա... Հիմի մի խոզն ի՞նչ է, որ հինգ հոգով չուտեք, բա հնգով իմ ու էն գելի չափ էլ չկա՞ք,— էն կողմից վրա բերեց կատարածու Արշակը։

Այսպես մարդիկ երկուսին էլ խրախուսեցին, սիրտ տվին և խեչանն ու խանութպանը շրխկոցով ձեռք տվին իրար, ու ներկա եղող գյուղացիները վկա դարձան նրանց գրագին։

Երբ գրագը գլուխ եկավ, մարդիկ ուրախ ժխոր բարձրացրին, ու ամեն մեկը թաքուն հույս ուներ, որ խեչանն իրեն կհրավիրի հետը խոզ ուտելու։

— Դե՛, խոզն առ, կրակը վառի, ես գնամ ընկերներիս կանչեմ,— ասաց խեչանը։

— Էլ ո՞ւր ես գնում,— անհանգստացավ շարշին. նա գիտեր, որ գյուղի հայտնի ուտուղներն իրենց տներումն են։— Ակոփին, Հաննեսին, Արտեմին, Մացակին մարդ չե՞ս հաշվում, էնա թող հետդ նրա՛նք ուտեն, էլի՛,— առաջարկեց Փիլոն՝ ներկա եղող գյուղացիներից մի քանիսին ցույց տալով։

Խեչանը ցանցառ բեղերի տակ քմծիծաղ տվեց.

— Հը՛մ, դու խոզը բե՞ր, խեչանը գիտի, թե ո՛ւմ կկանչի...։

Ու եղանն ուսին գնաց ընկերներին կանչելու։

Իսկ շարշի Փիլոն իր խանութի ապրանքը աճուրդի հանեց, ցածր գներով վաճառեց և այդ գումարով տեղնուտեղը մի խոզ գնեց։ Նա էլ ի՛ր հաշիվն ուներ. «Էս լավ եղավ,— մտածում էր,— կոոպերատիվը շատ բան ունի, համա միս չի ծախում։ Խոզերը կմորթեմ, կծախեմ, էժան գնով կառնեմ, էլի՛ կմորթեմ՝ ապրուստս կվարարի։ Խանութից օգուտ չկա, հիմի միս ծախելն է ձեռնտու...»։

Ճիշտն ասած, խեչանն էլ իրեն տանջող մտքերն ուներ։

«Բա ես անխելք չե՞մ։ Մի խոզ ուտելու համար միթում երեք

Հոգին հերիք չի՞, որ հինգն եմ կանչո՞ւմ»,— ճանապարհին իրեն նախատում էր նա։

— Առաջ Բարդան ապոր կողմը գնամ, թե չէ պառավ մարդ է. կքնի,— ինքն իրեն ասաց խեչանն ու քայլերն ուղղեց դեպի ներքին թաղը։

Ո՞վ էր Բարդան ապերը։

Նրա անունը մեր գյուղում ոչ ոք չգիտեր, բոլորն էլ Բարդան էին կոչում, երևի բարդանի նման հաստ լինելու պատճառով։

Լավ մաճկալ էր Բարդան ապերը, իսկ մենք վաբ անելիս հոտաղ էինք նրա մոտ։ Երբ մութն ընկնում էր, եզներն արձակում էինք ու անուշ քուն մտնում հենց գութանի լայն ակոսում։

Լուսադեմին, քնի ամենաքաղցր ժամանակ, մեկ էլ լսում էինք Բարդան ապոր խռպոտ ձայնը.

— Ադա՛, օրը ճաշ դառավ, վե՛ր կացեք... Սովից կոտորվեցինք, վեր կացեք...

Եվ դեռ ադամամութին մեզ ճիպոտով բզում էր, վեր կացնում, որ հաց ուտենք։ Ու ինքն էլ ուտում էր, ո՞նց էր ուտում...

Մի առավոտ արդեն լուսացել էր, երբ մենք արթնացանք ու զարմանքով տեսանք, որ Բարդան ապերը ակոսում հանգիստ քնած է։ Արթնացրինք։

— Բարդան ապի, էս ո՞նց է չես ասում, թե օրը ճաշ դառավ, վեր կացեք հաց ուտենք։

— Երեխեք ջան, ասածուց թաքուն չի՝ ձեզանից ի՞նչ պահեմ, գիշերհանա ես մի թեթև զակուսկա եմ արել...

Խուրջինը բաց արինք, հացերը հաշվեցինք. ինը հատ պակասում էր...

Մինչև օրս էլ մեր գյուղում «Բարդանի զակուսկան» մնացել է որպես առած. եթե ուզում են ասել՝ չափից շատ կերանք, ասում են.

— Էս հո Բարդանի զակուսկեն դառավ...

Բարդան ապերը, որպես հին ու փորձված հողագործ, գյուղացիներին հաճախ խրատում էր, թե՝ «էն մարդը, որ թաղա հացից ու անքաշ պանրից կկշտանա, իմացեք, որ նրա ջանումը հիվանդություն կա»։

Ու խորհրդավոր, խորին համոզմունքով ավելացնում էր.

— Ձեզ քա՛ն եմ ասում, փորձված բան է...

Խեչանը Բարդան ապորը գտավ իրենց սրահում, թախտին

www.a-pdf.com

նստած։ Մի ահագին կավե աման կար նրա առաջ, որի մեջ Բարդան ապերը գարու հաց էր բրդել, մածուն լցրել, սառը ջուրը կապել վրան ու փայտե գդալով ուտում էր հանդից նոր եկած մարդու ախորժակով։

— Ախորժակդ մի՛ փչացնի, Բարդան ապեր, խոզի խորոված ենք ուտելու,— բակ մտնելուն պես ձայն տվեց Խեչանը ու մոտ գալով պատմեց գրագի մասին։

— Հաա՞... Լա՛վ,— մածնոտ բեղերի տակ փնթփնթաց ծերունին։ Բայց շարունակում էր գլուխը կախ ուտել։

— Է՛, չեղավ,— ձեռքը հուսահատ թափ տվեց Խեչանը,— էլ դու մեզ հետ ո՞նց ես լուծ քաշելու, արդեն կշտացար։

Ծերունին բեղերի տակ ժպտաց.

— Խամ-խամ բաներ ես ասում, Խեչա՛ն, մածնից էլ մարդ կկշտանա՞...

Ու թավ բեղերը սրբելով վեր կացավ։

— Լա՛վ, դու գնա գյուղամեջ, ես մի Արամին դիպչեմ։

Պապոանց Արամը հաղթանդամ, փղի ծանր շարժվածքով, պղնձագույն գանգուր մազերով մարդ էր։ Հիշում եմ, սարում խոտ հնձելիս ամեն առավոտ այնքան էր հնձում, որ թաց-թաց մի բլրակ անի՝ նրա հովում պառկելու համար։

Հենց արևը մի քիչ բարձրանում էր, Արամը պառկում էր այդ շվաքում ու քնում։ Հենց արևն ընկնում էր վրան, Արամը շուռ էր գալիս ու բնազդով սողում դեպի հովը և նորից լսվում էր նրա ահարկու խռմփոցը։ Արևը նորից էր հասնում նրան, նորից Արամը սողում էր դեպի ստվերը ու այսպիսով, մինչև արևի մայր մտնելը, ստվերի հետ երեք քառորդ շրջան էր կատարում բլրակի շուրջը։

Եվ երբ արևը դադարում էր նրան հետապնդելուց, Արամը քնի մեջ բնազդով զգում էր, որ օրը վերջանում է, և իսկույն արթնանում էր։ Արթնանում էր, հսկայի նման ծույլ-ծույլ հորանջում, ապա գերանդին սրում էր, ձեռքերի մեջ թքում, «հոպ» անում ու սկսում էր, ո՞նց էր սկսում... Փնչացնելով՝ մինչև մութն ընկնելը մեր մեկ օրվա չափ խոտ էր հնձում ու հսկայի նման լնգլնգալեն գնում էր տուն։

Այդ հաշվով էլ ուտում էր Պապոանց Արամը...

Մի անգամ կինը սարից լուր է ուղարկում գյուղ՝ ամուսնուն, թե՝ «Հացը վերջացել է, հաց բե՛ր»։ Արամը մի շորի մեջ տասնը-

www.a-pdf.com

շորս հաց է կապում, կապոցն անց է կացնում մահակին, դնում է ուսին ու ճամփա ընկնում դեպի սար։

Ճանապարհին իր մտքերով տարված՝ մեկ-մեկ մահակը առաջ է քաշում, կապոցը մոտեցնում է, ձեռքը խոթում նրա մեջ, հաց հանում ու ծամելով գնում։ Այդ բանն Արամը անում է առանց հասկանալու, նույն բնազդով, ինչ բնազդով, որ քնի մեջ արևից սողում էր դեպի շվաքը։

Որ հասնում է սարահարթի պռնկին, ձեռքը մեկ էլ է մեկնում, որ հաց հանի, զարմացած տեսնում է, որ դատարկ շորը մահակի ծայրին քամուց տարուբերվում է...

Նստում է Արամը վրանների դիմաց ու ինքն իրեն զարմացած հարց է տալիս.

— Ա՛յ տղա, էս ե՞րբ կերա...

Ու չի կարողանում հիշել, թե երբ կերավ այդքան հացը։ Ծարահատյալ որոշում է վերադառնալ գյուղ, նորից հաց բերելու։ Մեկ էլ մտածում է՝ «Մեկ է, ես տեղ հասցնողը չեմ, ավելի լավ է գնամ սարը, կնկանս ասեմ, թող ինքը գնա բերի...»։

Երբ խեչանը մտավ Արամի բակը, սա անտառից նոր բերած մի ահագին գերան էր ճեղքում սեպերով։

— Հո դեռ հաց չե՞ս կերել,— հարցրեց խեչանը երկյուղով։

— Ի՞նչ կա որ։

Խեչանը բացատրեց։

— Է, հիմի էլ կերած լինեմ, ի՞նչ կա որ,— հեգնեց Արամը ու կրկնեց իր սիրած խոսքը.— Մարդ որ կշտանալուց հետո մի ամսան սառած ղավուրմա չուտի, նա ի՞նչ տղամարդ է...

Նրա այդ խոսքից խեչանը սրտապնդվեց։

— Դե դու գնա Աթոյին կանչիր, ես Համբարձումի կողմն եմ գնում,— շտապ պատվիրեց նա և քայլեց դեպի գյուղի վերին թաղը։

Ջաղցածանց Համբարձումը միշտ քաղցած մարդու տպավորություն էր թողնում, թեև վատ չէր ապրում։ Հավանաբար, նրա հոգում դեռևս մնացել էր նախորդ տարիների սովի ահը։ Նիհար, քիթը մեծ, երկար հասակով, փորը միշտ մեջքին կպած, կարծես քաղցն ինքն էր՝ մարդու կերպարանք առած։ Նրա դեմքին միշտ հուսահատություն էր դրոշմված, գյուղացիք ասում էին՝ «կշտանում չի՝ դրանից է...»։

Մի աշնան Համբարձումը յուղ ու պանիր է տանում Թիֆլիս,

www.a-pdf.com

որ ծախի, տնեցոց համար չիթ, սատին, հարսի համար դեյրացու և մանրուք գնի։

Քաղաքում որ սովում է, մի հայի հարցնում է.

— Ախպե՛ր, էստեղ մարդիկ ոչ սովում են՝ որտե՞ղ են հաց ուտում։

Թիֆլիզեցին տեսնում է, որ սա բռի սարեցի է, դիտմամբ ցույց է տալիս «Գրանդ-օթել» հյուրանոցի շքեղ ռեստորանը։

Համբարձումը, որ կյանքում ճաշարան մտած չկար, շփոթվում է։ Նստում է մի սեղանի մոտ ու զարմանքով տեսնում, որ մատուցողներն ամեն ամանի մեջ հազիվ մի երկու կտոր միս կամ մի քանի գդալ ուտելիք են բերում։ Զարմանում է, թե էս ի՞նչ բանի են էս մարդիկ՝ «ուտո՞ւմ են, թե՞ չարաղ են անում...»։

Մոտենում է մի մատուցող հայ աղջիկ ու հարցնում.

— Ի՞նչ բերեմ,— ու ճաշացուցակը դնում է Համբարձումի առաջ։

— Բա էս թուղթն ի՞նչ է, աղջիկ ջան,— հարցնում է Համբարձումը։

— Ճաշերի անուններն են։

Համբարձումը գրի սևն ու սպիտակը ջոկում էր։ Տեսնում է, որ ճաշացուցակում 23 տեսակ ուտելիքի անուն կա և դրանից գլխի է ընկնում, թե ինչու են մատուցողներն այդքան փոքր-փոքր բաժիններ բերում։ «Դե որ ամեն տեսակից ուտեն, կարող է կշտանան, էլի՛...», մտածում է նա և կոշտ մատը ճաշացուցակի վերևից մինչև տակը քաշելով, ասում է.

—Բե՛ր... բոլորից էլ բեր...

Աղջիկը բերում է, իսկ Համբարձումը ուտում է սարեցու ախորժակով և սպասում հաջորդին։ Ու ինքն իրեն սրտնեղում է քաղաքի կարգերի վրա, թե ինչու բոլոր տեսակները կարգին մի կավե ամանի մեջ չեն լցնում, առաջը դնում, որ աչքը լիանա։

Տասներկուերորդ բաժինը բերելուց հետո մատուցողը հարցնում է.

— Էլի՞ բերեմ...

— Հա՛, բե՛ր... եկել ենք ուտելու, հո փոր խաբելու չենք եկել,— պատասխանում է Համբարձումը նեղացած։

Մի քանի բաժին էլ է ուտում։ Որ մատուցողը գնում է նոր բաժին բերելու, Համբարձումը ձայն է տալիս.

— Ետ արի, աղջիկ ջան։

Մատուցողը վերադառնում է։

www.a-pdf.com

— Էլ մի՛ բերի, աղջիկ ջան,— ասում է Համբարձումը ու դառնացած ավելացնում է.— Զուր ես բերում, աղջիկ ջան... մեկ է, ես կշտացողը չեմ, զուր նեղություն մի քաշիլ...

Համբարձումը, միշտ փոքը մեջքին կպած, գանգատվում էր գյուղամիջում թե՝

— Ժողովո՛ւրդ, որ դուք կշտանալու մասին խոսում եք, իմ գլխի որթերը ժաժ են գալիս... Կշտանալս ո՞րն է, էնա մարդ ենք, ուտում ենք, էլի՛...

Մի անգամ կատարածու Արշակը նրան հարցրեց.

— Բա դու կյանքումդ իսկի կշտացած չկա՞ս...

— Ճիշտն ասած, միտս չի,— անկեղծորեն խոստովանեց Համբարձումը։ Ու սկսեց զոռ տալ իր հիշողությանը, թե ե՞րբ է կշտացել, բայց արդյունքի չհասնելով՝ գնաց տուն, կնկանը հարցնելու։

Առհասարակ նա կշտանալու մասին պատկերացում չուներ։ Ու մի անգամ գյուտ արած մարդու նման շտապում է գյուղամեջ ու հարցնում.

— Տղե՛րք, էսօր էնքան կերա, որ ուսերս դմբրեցին... երևի է՛դ է կշտանալը, հը՞...

Ահա ինչպիսի ուտողի էր կանչելու գնում խեչանը։

Իսկ Մելոնց Աթո՞ն։ Սրան որ հարցնեիր, կասեր.

— Տղամարդը ուտելիքի աչքը միշտ վախեցած պետք է պահի...

Իսկ հարսանիքում նայում էր տեսակ-տեսակ կերակուրներին ու դառնությամբ մտածում. «Դե որ ասում եմ աստած սխալ է ստեղծել մարդուն, մեր տերտերը նեղանում է։ Ասա, տնաշե՛ն, զոնե մի շորս-հինգ փոր տայիր, որ հետը հարսանիք տաներ։ Բա մարդ էլ մի փորով ուրիշի տանը հացի կնստի՞...»։

Աթոն մի անգամ սայլով տախտակ է տանելիս լինում Սևանի կողմերը։ Քարավանի հետ լինում են ասածս Համբարձումը և ուրիշները։

Սեմյոնովկայի կեռմաններում որ մթնում է, սայլերն արձակում են ու հանգստացող ոչխարի հոտի մոտ կրակ անում, գիշերում։

Համբարձումի աչքն ընկնում է որոճող ոչխարների դմակներին ու հարցնում է.

— Աթո՛, կարա՞նք երկուսով էն թուխ զոչն ուտենք։

Աթոն զարմանում է Համբարձումի միամիտ հարցի վրա։

www.a-pdf.com

— Խի՞ չենք ուտիլ, հո հիվանդ չենք...

Հովիվները ծիծաղում են սրանց մեծախոսության վրա։ Նրանցից մեկը հեգնանքով ասում է.

— Էն ղոչը ձեր ամբողջ գյուղին կկշտացնի։

Աթոն վիրավորվում է. ուրեմն մեր գյուղացիք էդքան քչակեր, անպետք մարդի՞կ են։ Վիճում են ու վերջը գրազ բռնում հովիվների հետ, որ երկուսով «թուխ ղոչն» ուտեն ու փրկեն իրենց գյուղի պատիվը։

Կրակը թեժացնում են, մասրի ճիպոտներից շամփուրներ շինում, խոյը մորթում են, մաշկում ու սկսում...

Որ կենդանու կեսն ուտում են, Աթոն մի բան է հիշում, կանգնեցնում է իր «ջրաղացն» ու հարցնում ընկերոջը.

— Ա՛յ տղա, Համբարձո՛ւմ, չլինի՞ թե առանց աղի ենք ուտում...

— Հա՛, Աթո՛, կարծես աղանի ենք ուտում,— գլխի է ընկնում Համբարձումը։

Այդտեղ հովիվն ասում է.

— Ախպե՛ր, ինչքան կերաք՝ ձեզ հալալ։ Մենք տանուլ տվինք, թողեք մենք էլ ուտենք... Ձեր տունը շինվի, առանց աղի որ էդքան կերա՞ք, բա աղով ինչքա՞ն կուտեք...

Առհասարակ Մելոնց Աթոն ուտելու և ուտելիքի մասին Տորք-Անգեղի մասշտաբներով էր խոսում.

— Ախպե՛ր, էսպես էլ անարդար աշխա՞րհք կըլի. թվանքը երկու արշին են շինում, կանֆետը՝ մատիս չափ...

Ու հետն էլ ավելացնում էր.

— Իմ կարճ խելքովը, կատլետը կամի մեծության պիտի լինի, տոլմեն դդումի չափ, որ մարդիս փորը նյութ ընկնի...

Զորսի մասին ասացինք, մնաց ինքը՝ Խեչանը։ Թե ինչ ուտող էր Խեչանը, մենք հիմա կհասկանանք Աթոյի մի խոսքից։

Ինչպես գիտենք, Պապոանց Արամը, Խեչանի հանձնարարությամբ, այդ երեկո գնաց Աթոյին խոզ ուտելու հրավիրի։

Աթոն, հանդից նոր եկած, հոգնած մա՛րդ, պառկել էր թախտին ու խկույն քնել։

Արամը ձայն է տալիս.

— Աթո ամի՛...

— Հը՞, էն ո՞վ է...

— Վե՛ր կաց, ես եմ, խոզ ուտելու ենք գնում, վե՛ր կաց։

www.a-pdf.com

Խոզի անունը լսելուն պես Աթոն շապկահանց գալիս է դռան մոտ ու քնաթաթախ հարցնում.

— Ադա քանի՞սն է...

— Մինն է, մենք էլ հինգ հոգով ենք։

— Է՜, է՜... բա էդ մի թիքի համար մարդի քունը կհարամե՞ն,— դժգոհում է Աթոն, բայց և մոթմոթալով գնում է շորերը հագնելու։ Ապա կիսահագնվել ետ է դառնում ու հարցնում.

— Ադա, հինգը ովքե՞ր են։

— Ես է՜մ, դու է՜ս, Համբարձումն է՜ Բարդան ապերն է՜, Խեչանն է՜...

Խեչանի անունը լսելուն պես Աթոն նոր հագած արխալուղը հանում է, դեն շպրտում ու վիրավորված ասում.

— Բա որ Խեչանը կա, էլ ե՞ս ինչացու եմ...

Ու կողքը քորելով, խռոված գնում է նորից քնելու։

— Ա՜յ մարդ, երեք փթանոց խոզից վախում ես քեզ փայ չհասնի՞,— սկսում է համոզել Արամը։

Ա՜յ թե ի՜նչ ուտող էր Խեչանը։

Ահա այդ մարդկանցով պետք է Խեչանն ուտեր չարչի Փիլոյի խոզը։

Այժմ, ընթերցող, պատկերացրու աշնանամուտի մեղմ երեկո։ Գյուղամիջի հրապարակում չոր գերանների ծայրերն իրար վրա դրված վառվում են։ Չորս կանթանի մի ահագին կաթսա դրված է կրակին, իսկ հինգ ուտողները շրջապատել են կաթսան, արջերի նման պպզել են նրա շուրջը ու աչքերը հառած կաթսայի բաց բերանին՝ սպասում են։

Գյուղը հավաքվել է թամաշի, ամբոխը շրջապատել է հրապարակը, շատերը մոտիկ կտուրներն են բարձրացել։ Մարդիկ սրամտություններ են անում՝ մերթ խանութպան Փիլոյի, մերթ՝ մեր շատակերների հասցեին։ Իսկ խանութպանը կրակից քիչ հեռու՝ ժողովրդի և «ուտողների» մեջտեղը հպարտ կանգնած, բութ մատը արծաթե գոտին խրած՝ «հոգեբանական գրոհ» է սկսել.

— Ադա, Խեչա՞ն, ուտելը կուտես, կհավատամ, համա դրան խոզի եղ կասեն, հա՜, խելքդ ձեր մոզու լղար մսի վրա չգնա...

Ինչ կուզեն, թող խոսեն, ո՜չ Խեչանը, ո՜չ էլ ընկերները իրենց աչքը չեն կտրում կաթսայից։ Շրջապատը, աշխարհը կարծես չկա նրանց համար, ջրի եռալուն են սպասում։

www.a-pdf.com

— Տղե՛րք, վախենում եմ փորհարինք ընկնեն, գյուղում խաղք ու խայտառակ լինեն,— շարունակում է խանութպանը։

Խեչանը չէր լսում, ջրի մեջ պղպջակներ էին երևում, կլանված նայում էր այդ նշանին և ուրախ մտածում՝ «որ ուր որ է հիմի կեռա...»։

Ջմռռանամ ասել, որ կաթսայի մեջ երկու կիլոյից պակաս կտոր չկար. «էնպես ըլի, որ բռնելու հարմարություն ունենա»,— միսը կոտորելիս ընկերներին հրահանգել էր Խեչանը։

Դեռ եռը չեկած, նա այլևս չհամբերեց ու իր կոշտ թաթը խոթեց կաթսայի մեջ, խոզի թիակը դուրս հանեց, դեմ արավ մազոտ թշին ու կեղծ խուճապով գոռաց.

— Պա՜հ, ձեր տունը չքանդվի, ժամանակն անց կացավ, թուշս վառվում է...

Այս ազդանշանը տրվելուն պես հինգ թաթ միաժամանակ մտան կաթսայի մեջ։ Ու էլ աղ ու հաց բերելու ժամանակ չտվին, սկսեցի՜ն, ո՜նց սկսեցին... Դե, աշխատավոր մարդի՜կ, էն էլ ջահել խոզի ձրի միս, ձե՛զ եմ հարցնում՝ ո՞նց կուտեն։ Կատակով ժնգժնգացնում էին իրար վրա, իրար խեթում, լավ կտորներն իրար ձեռքից խլում։

Խանութպանը Փիլոն սկզբում ինքն իրեն քմծիծաղ էր տալիս ու ասում.

— Կուտեք, հա՜, ղալաթ կանեք, որ կուտեք...

Քիչ անց սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ, քանի որ ուտողների թափից լավ բան չէր երևում։

— Ջլինի՞ թե էս բալեն մեռածները բոլորն ուտելու են,— փնթփնթաց նա ահով։— Հում-հում ես ուտո՞ւմ, Ջփլախանց Խեչան, թե փորհարինք կընկնե՞ս, էն ժամանակ քեզ հետ կխոսեմ,— ասաց նա այնպիսի անբնական ծիծաղով, որից հեռու կանգնածներն անգամ հասկացան, թե ինչ է կատարվում հրապարակի մեջտեղը։

Իսկ Խեչանն ու իր ընկերները դիտմամբ՝ հանդիսականներին զարմացնելու համար, մսի ահագին կտորները մի քիչ կծում էին, հարամում ու դնում իրենց կողքին, կանալի վրա, որ հետո, երբ կաթսայի միջինը վերջանա, նորից վերադառնան այդ կտորներին։

Քիչ անց ամեն մեկի կողքին կիսակերած կտորների մի-մի կույտ գոյացավ։ Խանութպանն այդ որ տեսավ, գույնը գցեց ու աղիողորմ գոչեց.

www.a-pdf.com

— Տո՛, անխիղճնե՛ր, գոնե մի-երկու կտոր թողեք երեխեքիս համար։

Ժողովուրդը հռհռաց։ Լսվեցին սրախոսություններ.

— Փիլո՛, խոզդ պոչը ցից գնաց...

— Էդ չէ՞ր քո խանութը...

— Իսկի կմարսե՞ն որ...

Իսկ մեր շատակերները, երբ կաթսայում այլևս ոչ մի կտոր միս չմնաց, ետ դարձան ու սկսեցին այս անգամ արդեն հիմնովին ուտել իրենց կողքերին կույտ կազմած կիսակերած կտորները։ Երբ այդ էլ վերջացավ, սկսեցին ոսկորները խլխլել իրար ձեռքից։ Մելոնց Աթոն, որին ոսկոր չէր հասել, խոռված մի կողմ կանգնեց ու դժգոհ փնթփնթաց.

— Բա որ ասում էի՝ խեչանը որ կա, էլ ես ինչացո՞ւ եմ...

Դժգոհ էր ձևանում և Պապոանց Արամը։ Սգվորի նման կանգնել էր ոսկորների կույտի մոտ ու մտածում էր, ինչպես սարը հաց տանելիս. «Այ մարդ, էս ե՞րբ վերջացավ...»։

Տխուր էր նաև Համբարձումը։ Նրա տեսքն էլի սովյալի էր, փորը՝ մեջքին կպած։

— Հը՞, չկշտացա՞ր, Համբարձո՛ւմ,— հարցրեց կատարածու Արշակը։

— Է՛է՛, խոսացնիլ միք, ձեր հորն ողորմի, ես ե՞րբ էի կշտացած, որ հիմի կշտանամ... Փորիս մտիկ եմ անում, գլխիս կրակ է վառվում... Անտերը հենց նոր էր ախորժակս բացվում, վերջացա՛վ,— դառնությամբ պատասխանեց Համբարձումն ու սկսեց խոզի պինդ, կիսահում գլուխը կրծել։

— Տո՛, գոնե գլուխը տվեք տանեմ երեխեքիս, այ անխիղճնե՛ր,— ողբաձայն դիմեց խանութպանը։

Գլուխը որտեղի՞ց. քիչ անց, հրապարակից ներքև՝ ձորակում, մեր շատակերները հռհռալով գզում էին իրար, խոզի գլուխն էին խլխլում իրար ձեռքից...

Վերջապես ձորից դուրս եկան, և խեչանը դիմեց չարչի Փիլոյին.

— Պայմանիդ հաստա՞տ ես մնում, թե՞ չէ։

Չարչին հասկացավ, որ խոսքը ապառիկների մատյանի մասին է, ու նրա դեմքը գաջի գույն ստացավ։ Բայց ինչ աներ, գրաղին ամբողջ գյուղն էր վկա եղել։ Անխոս, արնակալած աչքերով նայում էր խեչանին ու տեղից չէր շարժվում։

www.a-pdf.com

Այն ժամանակ խեչանը բարձրացավ մի ցածր կտուր ու իր հզոր ձայնով կանչեց.

— Այ գեղացի՜ք, ով խանութում պարտք ունի՝ մանիֆեստի տակ ընկավ գնա՜ց... Ջտա՜ք, չտաք հա՜...

Փիլոն լսեց՝ վզի երակներն ուռան։ Ապա իրեն զսպելով՝ խեղճացած ու թույլ-թույլ գնաց խանութ, բերեց հնամաշ, հաստափոր մատյանը, այն մատյանը, որին միշտ ահով էինք նայում մենք և որի մեջ չտեսնված արագությամբ ճուտեր էին հանում մեր գյուղի աղքատ մարդկանց պարտքերը։

Խեչանը վերցրեց մատյանը, թքեց վրան ու գցեց կրակը։ Մի թեժ բոց բարձրացավ, և նրա ծիրանագույն ցոլքերը ընկան մեր գյուղացիների գոհ դեմքերին։

Այսպիսի խաղ խաղացին մեր գյուղի շատակերները չարչի Փիլոյի գլխին։ Բայց այդ օրից մինչև օրս Մելոնց Աթոն Արամից նեղացած է, ու պատահելիս նախատում է.

— Աղա՜, աննամո՜ւս, բա էն մի թիքի համար մարդի քուն կհարամե՞ն...

1941

ՄՈՐՍ ԱԿԱՆՋԸ ԴԵՂ ԵՆՔ ԼՑՆՈՒՄ...

Մորս ականջը ցավում էր։ Խեղճ կինը քանի գիշեր էր քուն չուներ։ Իմ Սոնա ձալոն ձեթ տաքացրեց, կաթեցրեց ականջի մեջ՝ չոգնեց։ Տոպրակով տաքացրած աղ դրեց վրան՝ ցավն ավելի սաստկացավ։

Հայրս գնաց Դիլիջան, կոզակական գնդի բժիշկ Սոկոլովին դրեց ձիու վրա, առաջն ընկավ ու սանձը քաշելով բերեց կանգնեցրեց մեր փայտաշեն խրճիթի առաջ։ Ձիուց իջավ փորը պարարտ կոզակը, փնչոցով մտավ տուն, քննեց հիվանդին և դեղ նշանակելով, նորից փնչոցով դուրս եկավ։

Ձի նստելուց առաջ, թարգման Արշավիրի միջոցով պատվիրեց.

— Դեղը չափով կկաթեցնեք, շատ ուժեղ դեղ է... Երեք կաթիլ, ոչ ավելի... հասկացա՞ր...

— Հրամանքդ, հասկացա,— պատասխանեց հայրս՝ փափախը գլխից վերցնելով։ Ապա ձեռքը տարավ արխալուղի գըր-

www.a-pdf.com

պանը, որ դրամ հանի, բժիշկը հասկացավ, ձեռքը թափ տվեց ու բարի ժպիտ երևաց նրա լայն դեմքին.

— Նե նադո...

Այն ժամանակ հայրս անհարմարությունից իրար անցավ, պատից խուրջինն իջեցրեց, նրա թայում դրեց մեր նահապետական տնտեսության բարիքներից՝ մի կծիկ ճիլ պանիր, մի փոքրիկ պուլիկով «արդար եղ», լոբի, մի «կյալ» ավելուկ։ Այդ էլ բավական չհամարելով, տագնապահար պատվիրեց ինձ.

— Ադա, էն որձակը բռնի...

Իսկ պարարտ Սոկոլովը ձիու վրայից ժպտում էր իր մեծահոգի, բարի ժպիտով։

— Նե նադո, գոլուբչիկ,— կրկին ասաց նա և ձիու գլուխը թեքեց դեպի Դիլիջան։ Հայրս մնաց խուրջինը ձեռքին մոլորված, ամոթահար։

... Երեկո է, ճրագի լույսով դեղ ենք կաթեցնում մորս ցավող ականջի մեջ։ Հարևանի երեխաները հավերի նման շեմքից երկարել են վզները, հետաքրքրվում են, թե այդ ի՞նչ բան է դեղը։ Մանավանդ այն պսպղան զարմանալի սրվակը քաշում էր նրանց։ Սոնա ձալոն շեմքից քշում է.

— Վա՜, մեյմուն են պար ածո՞ւմ...

Հայրս փոքրիկ սրվակն առել է ահագին մատների մեջ ու մնացել մոլորված. ո՞նց կաթեցնի դեղը, որ չափից ավելի չգնա։ Մորս ցավող ականջը բացել են, ցուրտ է, իսկ հայրս դեռ մոլորված է։ Սրվակը թեքում է ականջի վրա, բայց անսովոր գործից ձեռքը դողում է, սրվակի բերանը տմբտմբում է։ Ետ է քաշվում, շունչ առնում ու գոռում վրաս.

— Ադա, էդ ճրագը մոտիկ պահի...

Ներքում է ճրագի աղոտ լույսը մորս ականջի ծալքերում, դե եկ, հաշվիր, թե քանի կաթիլ գնաց։

— Ապի, ինձ տուր, ես լցնեմ։

Իմը գրիչ բռնող երեխայի բարակ մատնե՞ր, նրանը՝ քարտաշի կոպիտ, ճաքճքված, դե իհարկե ավելի հարմար է, որ ես դեղ լցնեմ։

Ամբողջ կես դար պատ էր շարում իմ հայրը, ամբողջ կես դար մաճ բռնում, ծառ կտրում, հունձ անում, դրանից էլ մատները իր ձեռքի գործիքների նման անտաշ էին ու ամուր։ Մի ժամանակ բութը քարի տակ էր մնացել, սևացած եղունգը ընկել

www.a-pdf.com

էր ու տեղը դուրս էր եկել կոպալ, ծուռումուռ մի բան, որ ավելի շուտ սմբակի էր նման։ Ցուցամատը գերանի ճեղքում էր մնացել, ճխլվել ու առողջանալուց հետո խլխլոտ էր՝ կաղնու վնասված ճյուղի նման։ Այդ երկու այլանդակների միջև կուչ է եկել այն գեղիրան, փոքրիկ սրվակն ու ինձ թվում է ահից է, որ դողդողում է ճրագի երերող լույսի տակ..

— Ադա, քիթդ սրբելու վախտ գտա՞ր, ճրագը դեսը պահի... Հենց պահի, որ անգաճի փոսը երևա,— նորից որոտաց հայրս։

Ճրագը կռացրի ականջի վրա, նրանից մրի մի «ճպուռ» ցած ընկավ ու անհետացավ ականջի փոսում։

— Վա՜յ, մեռա՜, ձեզ մատա՜ղ, էս ինչ են անում էս անասուածները,— խուլ բողոքում է մայրս։

— Մեռնիլ չես, կաց մի տենանք ինչ ենք անում էս զարհումարը... Ասա՝ տո դուռումսաղներ, մի քիչ մեծ շինեցեք, էլի՞։ Բա սա բռնիլ կլի՞... Ո՞չ կոթ ունի, ո՞չ ունգը... Թուհ։

Դժգոհում ու հետն էլ դանդաղ թեքում է սրվակը։ Վերջապես նրա միջի դարչնագույն հեղուկը հասավ պռնկին ու այնտեղից փոխանակ կաթիլ առ կաթիլ ցած ընկնելու, ինչպես բժիշկն էր պատվիրել, միանգամից շռռաց ականջի փոսի մեջ։

— Հո՜, հո... խարաբ արինք,— հայտարարեց հայրս։

Այդպես նա գութանն էր կանգնեցնում, երբ խոփը դեմ էր առնում արմատի կամ քարի։ Ականջի փոսը մինչև եզրերը լցված էր դարչնագույն հեղուկով, իսկ ավելացածը մորս դեմքով դանդաղ հոսում էր դեպի ծնոտը։

— Վա՜յ, մեռա՜, Սոնա ջան, էս ի՞նչ են անում էս անասուածները...

— Վի՜ի՜, ըրմանաս ոչ, դեղ են ածում, ինչ են անում։ Վախիլ մի, Կատին ջան, լիքը-լիքն են արել, որ շուտ լավանաս...

— Ապի, ախր շատ լցրիր,— անհամարձակ բողոքեցի ես։

— Վա՜, հիմի էլ շատ ըլի... Շատ ա, հո քիչ չի...

Սխալը կատարել էր, չէր ուզում մեջքը գետնովը տա։

— Դե, փթաթեցեք...

Սոնա ձալոն մորս գլուխը փաթաթեց և հուսադրական խոսքեր ասելուց հետո գնաց իրենց տուն։

Մյուս օրը՝ դարձյալ նույնը։ Էլի չկարողացավ չափով լցնել, էլի դեղի ավելցուկը մորս այտով ցած հոսեց։

— Շատը միշտ էլ քչից լավ ա, դու բանիդ կաց,— իր վարմունքն արդարացնում էր հայրս։— Կնիկ ջա՞ն, ոնց ես, ո՞նց...

www.a-pdf.com

էս ա անգաճդ ռեմոնտ եմ անում, որ գնաս Դիլիջանի ռոտոնդումը դաշնիկների հետ պար գաս...

— Ի՜հ՜, պակսես դու...

Ու մայրս բարեկամաբար չանչում էր իր անտաշ «կավալերին»։ Նա էլ էր հավատացել, որ «շատը միշտ էլ քչից լավ ա», հիմա անհամբեր սպասում էր, որ շուտ առողջանա, սար գնա։

— Յարաբ էն գոմշաձին բան տալի՞ս են... Յարաբ իմ նախշուն կովերը ո՞ր անօրենի ձեռքն են ընկել... Վա՜յ, էս անտեր ցավը կտրում չի... Բա էդքան լցնում ես, խի՞ չի լավանում...

— Կլավանա, վռազիլ մի,— հուսադրում էր հայրս ու գործիքները խուրջնի թայերի մեջ դնելով, գնում էր իր գործին։

Վերջապես հորս բժշկությունը տվեց իր արդյունքը. մորս դեմքն էլ ծռվեց, աչքն էլ։

Սոկոլովին նորից բերին։

— Հո դեղը չափից ավելի չե՞ք լցրել,— հարցրեց նա «պիսար» Արշավիրի միջոցով։

— Ասա՝ հա, պատահում ա ավել ա գնում...

Բժիշկը գլուխն օրորեց, նոր դեղեր նշանակեց ու գնաց։

Իսկ հայրս, իր խիղճը հանգստացնելու համար, զոռզոռում էր հարևանների մոտ.

— Վա՜, ուրեմն ինչ արավ՝ էն մի մատնոց դեղն արա՞վ։ Դե նա հիմքը խախուտ էր՝ ծռվեց, էլի...

«ՀՆԻ ՄՆԱՑՈՒԿԸ»

Ի՜նչ կոնծողներ ուներ հին գյո՜ղը... Ակումբներ չկային, թատրոն չկար, կուլտուրական կյանք չկար, մարդիկ իրենց բավականությունը գտնում էին կերուխումի մեջ։ Ի՜հարկե, ունեցողները։

Հնի, տգեղի հետ այդ էլ անցավ։ Բայց «մնացուկները» դեռ կան։ Դրանցից մեկին ես հանդիպեցի Օշականում։

Թավ բեղերով, խոշոր աչք-ունքով, հսկայամարմին ու առնական մի տղամարդ է նա՝ Մնացական Աբելյանը։ Ութ տասնամյակներ են անցել գլխի վրայով, բայց դե «քամին քարից ի՞նչ կտանի...»։ Մի ոտքը անցյալ դարի յոթանասունական թվականներում, մյուսը՝ մեր օրերում, կանգնած է այդ վիթխարին՝

www.a-pdf.com

դարավոր կաղնու նման։ Կրծքի վանդակը այն կողովների նման, որ օշականցիք գործում են խաղող տեղափոխելու համար։

Թիկունքը լայն, «պորտը յուղոտ» այդ ծերունին հիմի էլ խմում է այնպես, ինչպես խմում էր անցյալ դարում։ Թե առաջ դաղված հոգին «հովացնելու» համար էր խմում, հիմա պատճառ է բռնում, թե՝ «Ապրուստս տե՞ղը, քեֆս տեղը, ժառանգներս բոլորն էլ կրթված, ի՞նչս է պակաս, որ չխմեմ...»։

Մարդ կա, որ խմելիս սրտի խորքում թաքնված մաղձն է «ջրի երեսը դուրս տալիս», մարդ էլ կա, որ դառնում է երեխայի նման բարի ու զգայուն։ Մնացական բիձեն բնությունից բարի է ու խմելիս է՛լ ավելի բարի է դառնում։

Բայց դե արի տես, որ մի մե՞ծ խոշրնդոտ կա նրա առաջ. ձեռքը բաժակին մեկնեց՝ կինն է հայացքով սաստում։ Ի՞նչ անի Մնացական բիձեն, չխմի՞ «մարդկության շարքից ետ է մնում». ինչպես ինքն է սիրում ասել, խմի՞, «տան դատախազն» է աչքերը ոլորում վրան։ Ա՞խ, այդ կանայք, որ իրենք խմել իմանային՝ կյանքը շատ կքաղցրանար...

Բայց դե Մնացական բիձեն երբեմն գալիս է իր «դատախազի» հախիցը։

Օշականի կոլտնտեսությունը բավական խաղող էր բաժանել իր անդամներին։ Տնամերձն էլ իր մասն էր բերել։ Հնձանը լցվել էր, գինին պճպճում էր, «չանչը» եռում կարասների մեջ։ Օղին քաշեցին ու մնացին մոլորված։

— Մարդ էլ խմիչքը կծախի՞ որ...— այսպես է դատում Մնացական Աբելյանը ու մինչև գարուն խմում է ու խմեցնում։ Բայց դե այսքանը խմելով կվերջանա՞։ Մանավանդ որ կինը ամեն օր նախատում է.

— Ա՛յ մարդ, հերիք է սրան-նրան խմեցնես, խելք ունես, արի տանենք, Սևանա կողմերում ծախենք, շնորհքով տան մեջ առնենք մեր ժառանգների համար։

«Տան մեջի» անուն որ տալիս են, Մնացական բիձու «գլխի որդերը ժաժ են գալիս»։

— Ա՛յ կնիկ, Երևանի գուբերնատորի տանը ռադիո կա՞ր, թե կինո։ Գուբերնատորը «Մոսկվիչ» մեքենա ունե՞ր։ Ախր էդ բոլորից էլ ունեն մեր թոռները, մեր ի՞նչն է պակաս, որ արաղի պես գյոզալ ապրանքը ծախենք։ Թե ուզում ես իմանալ, խմիչքն ստեղծված է, որ մարդիկ նրա միջոցով իրար առաջ սրտները բաց անեն։ Եվ նմանապես իմացիր, որ մարդիս ջանը ժամանակի

www.a-pdf.com

ընթացքում քայքայվում է. սպիրտով պիտի ամրացնես, որ չփչանա... Իսկ դու ուզում ես, որ... վա՛յ, վա՛յ, մեջքդ չկոտրի աստած, յանի կնգանն էլ խմող ստեղծեիր, էլի՛, քեզանից ինչ կգնար...

— Իմ բաժինը տանենք, բա ես բաժին չունե՞մ էս տանը։

— Ունե՛ս, պառավ ջան, ոնց չունես...

Ու Մնացական բիձեն ճարահատյալ տկերը լցնում է օղին ու կնոջ հետ տանում Մարտունի։ Բայց դե, Մարտունիում էլ իշխանություն կա, կարգ կա, միլիցիա կա, հո ամեն մարդ չի կարող առանց թույլտվության օղի վաճառել։ Դրանք էլ, հակառակի նման, մոռացած են լինում տեղեկանք վերցնել իրենց գյուղսովետից։ Մարտունիում միլիցիոները բռնում է, տիկը ծերունու շալակը տալիս ու առաջ ընկնում դեպի քաղաքամաս։

Հիմա ո՞նց վարվի Մնացական բիձեն. թե տկի բերանը բաց անի թաքուն, շոռալեն թափի օղի՞ն, մեկ է՝ հոտը կբռնի փողոցը, գործն ավելի կծանրանա։ «Չէ՛, ավելի հիմնավոր բան պիտի մտածենք։ Էնպես ամանի մեջ լցնենք, որ համ լրիվ տեղավորվի, համ չփչանա, համ էլ հոտ չգա»,— մտածում է Մնացական բիձեն ու տեղն ու տեղը որոշում է, որ այդպիսի հարմար ամանի փորն է, որ կա... Ու մինչ միլիցիոները առաջն ընկած գնում էր, նա ուսին դրած տիկի բերանը մտցնում է իր բերանի մեջ ու... Այնպես, որ տասը քայլ չանցած, օղին քչքչալով գնում տեղավորվում է Մնացական պապի ասած «ամենաապահով ամանում», ու տիկը կովի դատարկ կրծքի նման կախ է ընկնում վզից։

Հասնում են քաղաքամաս, միլիցիոները պատվի է առնում, կրունկներն իրար խփում ու զեկուցում.

— Ընկեր պետ, քաղաքացին առանց թույլտվության օղի է վաճառում։

Ծերունին առաջ է գալիս ու նեղացած ասում է.

— Ձեր միլիցեն բարեխիղճ չի, ընկեր պետ, առ տես սրա բռնած տկի մեջ արաղ կա՞...

Տիկը շուռ են տալիս՝ կաթիլ էլ չի կաթում։

Միլիցիոները մնում է շշմած։

— Համարյա լիքն էր, ընկեր պետ, էդ ո՞նց ցնդեց։

Իսկ «կատարը տաքացած» Մնացական բիձեն քահ-քահ խնդում էր հսկայի նման, ու նրա թավ բեղերը տմբտմբում էին ճարպոտ պորտի հետ միասին։

www.a-pdf.com

Այդ դեպքից դաղված միլիցիոնները հատուկ հետևում է Մնացական Աբելյանին ու մի օր էլ նրան «բռնեցնում է» դույլը լիքը օղիով։ Շտապ գնում բերում է քաղմասի պետին։

— Հը, ընկա՞ր,— հարցնում է քմծիծաղով։

— Ի՞նչ է պատահել, որ,— չքմեղանում է Մնացականը։

— Տեսնո՞ւմ ես, ընկեր պետ, բռնել ենք, էլի վիզը չի վերցնում, որ արաղի առևտուր է անում։

— Ինչ արաղ, ա՛յ մարդ, շատ ե՞ս, տո՞,— զայրանում է Մնացականը ու հարևանից մի կավե աման խլելով՝ դույլի «տակն է տալիս»՝ խմում, լցնում-խմում ջրի նման ու հետն էլ փընչացնում նեղացած.

— Բա էս արաղ ա՞, բա էս արաղ ա՞...

Մոտը կանգնած մարդիկ մի պահ կարծում են, թե իսկապես դույլինը ջուր է,— դե այդպես հեշտ միայն ջուրը կխմվի,— բայց միլպետը տեսնում է, թե ինչպես ամեն անգամ ամանը դատարկելուց հետո բոցավառվում են Մնացական պապի առողջ թշերը, զարմացած ասում է.

— Հավատում եմ, հավատում, էլ մի խմիր, հավատում եմ, որ ջուր է...

Ու թողնում է հեռանում։

Եթե միլպետը օշականցի լիներ և մոտիկից ճանաչեր Մնացական Աբելյանին, կիմանար, որ այդ մարդը ոչ օղի վաճառող է, ոչ էլ իր կաշին փրկելու համար է այդպիսի արտառոց բաներ անում։ Կհասկանար, որ այդպես հսկաներն են միայն զվարճանում...

Ասենք, հաջորդ օրը միլպետը առիթ ունեցավ ծանոթանալու այդ ուրախ մարդու կատակասեր բնավորությանը։

Լուսադեմին Մնացականն ասում է.

— Կնիկ ջան, իշտահս բացելու համար շատ չեմ ուզում, գոնե մի կռոյի «քյասա» արաղ պիտի տաս, որ խմեմ։

— Այ սևավոր, ախր ամեն մահանով խմում ես վերջացնում, տակին բան չի մնում,— դժգոհում է կինը։

Վիճում են՝ բան չի դուրս գալիս։ Դե էս լուսավոր դարում կնոջ հետ վիճե՞լ կլինի... Մնացականն սպառնում է.

— Կմատնեմ, ա՞յ։ Դու քանի՞ գլխանի ես, որ առանց պատենտի արաղի առուտուր ես անում...

Որ տեսնում է այդ սպառնալիքն էլ չազդեց, տնից դուրս է

www.a-pdf.com

գալիս, գնում քաղմաս և դիմում է հերթապահին, թե օշականցի մի պառավ կին արաղ է ծախում։

«Լա՜վ, որսն իր ոտով եկավ»,— մտածում է հերթապահն ու հարցնում.

— Ո՞ւմ տանն է... ինչքա՞ն օղի է բերել...

— Ի՞նչ կտաս, որ ասեմ։

— Ի՞նչ ես ուզում։

— Բռնածդ արաղից երկու լիտր տուր խմեմ, մնացածը բռնագրավի...

Պայմանավորվում են ու գնում։

Հասնում են տուն, մինչ կինը ապշահար մեկ ամուսնուն է նայում, մեկ միլիցիայի սերժանտին, Մնացականն ասում է.

— Խոստացածդ երկու լիտրը էս գլխից վերցրու ինձ տուր, խմեմ, հետո սկսիր քննությունդ։

Կնոջից երկու լիտր օղի են «բռնագրավում», տալիս իրեն, գլխին է քաշում ու բեղերը սղալելով ասում.

— Հը՛, կնի՞կ, տվի՞ր, թե չէ։ Ախր քեզ զգուշացրի, չէ՞, որ մատնելու եմ... դե գնա կառավարության առաջ պատասխան տուր, թաքուն օղի ես ծախում, հա՞...

Սերժանտը նոր միայն գլխի է ընկնում ու ծիծաղում։

— Էս երեկվա մարդը չի՞,— հարցնում է նա ահից գունատված տանտիրոջը։— Մախի՛ր, ոնց կուզես ծախիր, պետը կարգադրել է, որ քեզ ձեռք չտանք... քու մասին հեռախոսով հարցրել է ձեր շրջանից։

Ու գլուխն օրորելով գնում է։

Ահա այսպիսի մարդ է օշականցի Մնացական Աբելյանը։

Է՛հ, ինչ արած «հնի մնացուկ է», պիտի յոլա տանեն։

Արդեն այդպիսի մարդիկ հատուկենտ են մնացել...

1958

ՊԱՐԾԵՆԿՈՏԸ

1

Սև ջրի ափին թաքնված սպասում եմ բադերի երամներին։ Դիմացիս եղեգները շարժվեցին, և ցեղական մի շուն իր սուր դունչը հանեց նրանց միջից։

www.a-pdf.com

— Ասյա՛, ա՛յս կողմ,— լսվեց տիրոջ ձայնը և այդ ձայնից երկու խումբ թռչուններ աղմուկով օդ բարձրացան՝ մի խումբը բադեր, մյուսը՝ մրտիմներ։ Նրանց ետևից միաժամանակ որոտացին երկու հրացան. իմը՝ բադերի վրա, շան տիրոջը՝ մրտիմների։ Բադերից ցած ընկան, իսկ մրտիմներն անվնաս թևածեցին դեպի Այդը լիճ։

Ես քայլում եմ դեպի իմ որսը, անծանոթ շան տերը եղեգնուտում կանգնած ծխում է. անհաջող կրակոցից աղդված է երևում։

Մոտեցա։ Իմ դեմքին, բնականաբար, պետք է փայլեր հաղթական մի ժպիտ, որ իսկույն խոցեց անծանոթին։ Նա խեթ-խեթ նայեց կողքիցս կախած բադերին։ Բարևեցի։

— Խնդրեմ ծանոթանանք, ես իրավաբան Արամ Եսայանն եմ,— դիմեցի ես նրան։

— Աա՜ա... շատ ուրախ եմ... Ես ձեր մասին վաղուց եմ լսել... Հաճելի է ծանոթանալ ձեզ հետ...— բացականչեց անծանոթը՝ հանկարծ ուրախանալով և իսկույն մոռանալով այն վիրավորանքը, որ ակամայից ես հասցրել էի նրան իմ հաջող կրակոցով, վիրավորանք, որ միայն որսորդ մարդը կզգա։

— Ես Կորյուն Կորյունովն եմ... ինստիտուտի դասախոս և, դժբախտաբար, մոլի որսորդ...

— Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալուս համար, ես ձեր մասին լսել էի, առանձնապես ձեր շան վարքն ինձ շատ է հետաքրքրում։ Ասում են, իբր ձեր շունը թարս բնավորություն ունի. գետի այս ափին խփված բադը տանում է դնում մյուս ափին ու վերադառնում, ճի՞շտ է...

— Իսկի խփված բադ է տեսե՞լ խեղճ անասունը, որ տանի,— իմ ետևից լսվեց որսորդ Ավագի ձայնը։— Ա՜, Կորյունո՜վ, հարգանքներս, այ տղա, ինչի՞ բադերը թողած մրտիմների վրա կրակեցիր, այ, այ, այ, բա էդպես սխալ կանե՞ն,— տնավարի նախատեց որսկան Ավագը. ըստ երևույթին նա վաղուց մտերիմ էր Կորյունի հետ։

— Իսկի հիշո՞ւմ եմ, թե ո՛ր խմբի վրա կրակեցի...,— կըմկըմաց մարդը ու կարմրեց իր խոստովանությունից։

Ես նայեցի նրա հաղթ լանջին, սլացիկ հասակին, հերկուլեսյան կազմվածքին, որսորդական ընտիր հագուստին և իսկույն եզրակացրի, որ իմ դեմ կանգնած է արտաքին փայլի սիրահար մի մարդ։

www.a-pdf.com

2

Մենք որսով առաջ էինք գնում գետի հոսանքն ի վեր։

Կորյունովը, որ խոցվել էր որսորդ Ավագի անխոհեմ դիտողությունից, առանձին էր քայլում, երևի նեղացել էր։

— Ինչպիսի՞ որսորդ է,— հարցրի Ավագին։

— Լոր փախցնող է,— պատասխանեց նա կարճ՝ ուշքը շնից չկտրելով։— Այստեղ կտցարներ են լինում, հրացանդ պատրաստ պահիր...

— Որքան էլ որ արհամարհես այդ մարդուն, այնուհանդերձ նա մեզանից հաջող է խփում... տե՞ս, ամեն կրակոցից հետո վազում է, վերցնում,— նկատեցի ես։

Հասանք խճուղուն, որտը վերջացավ։ Իր գեղեցիկ հասակով մեկ մեր առաջ կանգնած է Կորյունովը և ժպտում է ինքնաբավականությամբ։ Նրա գոտուն ամրացված փոկերից կախված են ագռավներ, կաչաղակներ, մեղվակերներ և մի նիհար սարեկ։

— Դրանո՞վ ես կնոջդ զարմացնելու, Կորյուն...

Իրոք, մեր Ավագը նրբանկատ մարդ չէ և ուրիշի անհարմար վիճակը մեղմացնել չգիտե։

— Սրանք... просто, գիտական նպատակներով... ուսումնասիրության համար...

3

Մենք ծանոթացանք որսորդներից մեկի հետ։ Բայց, խղճով ասած, Կորյունովը միշտ չէ, որ միայն ագռավներ է որսում։ Բախտը երբեմն ժպտում է և անշնորհք որսորդին։ Մեկ անգամ նրան հաջողվեց կաքավներ խփել՝ հինգ կաքավ, պատկերացնո՞ւմ եք...

Թալինի քարքարոտ լեռնալանջերին շրջում էի, հանկարծ մոտիկից ծխի ամպիկ բարձրացավ և կրակոց լսվեց։ Մեկը ցած վազեց և վերցրեց թպրտացող կաքավը։ Նորից կրակեց, նորից մի կաքավ մտավ պայուսակը։ Նորից ու նորից կրակոցներ։

Ո՞վ կարող է լինել։

Եվ խանդով համակված մոտեցա նրան։

Ո՞վ զարմանք. նա ինքը Կորյուն Կորյունովն է... Հրաշք էր կատարվել. նրա կողքից հինգ կաքավ է կախված։

Ինձ տեսնելով՝ նա խիստ ուրախացավ։

www.a-pdf.com

— Այն դեպքից հետո ես անհարմար վիճակում էի և շատ կուզեի, որ դուք, որպես մեր որսորդական կազմակերպության հեղինակավոր հիմնադիր, իմ մասին թյուր կարծիքի չլինեիք,— դիմեց ինձ նա գորովանքով։

— Ես հետևում էի ձեր կրակոցներին և...

— Դուք անձամբ տեսա՞ք,— խոսքս կտրեց նա,— որքա՜ն ուրախ եմ, որ ձեզ նման վկա ունեմ... Դուք, իհարկե, քաղաքում կհաստատեք ձեր տեսածը... Նույնիսկ Ավագի մոտ։

— Ամենայն սիրով, նույնիսկ Ավագի մոտ...

Նա թափով սեղմեց ձեռքս, հայացքը երախտագիտություն էր արտահայտում։

Այդ օրվանից ես դարձա Կորյուն Կորյունովի «հաստիքային վկան»։ Իմ վկայություններն սկսվեցին քաղաք մտնելուն պես։

— Հապա ի՜նչ էիք կարծում։ Հարցրեք Արամ Միխայլովիչին...

— Այո՛, Արամ Միխայլովիչն անձամբ տեսավ, իրե՛ն հարցրեք...

Ես գլխի դրական շարժումով հաստատում էի մեզ հանդիպող ընկերներին ուղղված այս խոսքերը և, որպես փոխհատուցում, շնորհակալությամբ լի հայացքներ էի ստանում Կորյունովից։

Բաժանվելիս խնդրեց.

— Վաղը բարեհաճեցեք ճաշին լինել մեզ մոտ։ Դուք այնտեղ ինձ շատ եք հարկավոր, կգա՞ք անպայման։

Չկարողացա հրաժարվել։

Մյուս օրը զանգահարեց.

— Արամ Միխայլովիչ, հո չե՞ք մոռացել ձեր խոստումը...

Ճաշին գնացի «ցուցմունքներ» տալու։ Ճոխ սեղան էր բացված, շատ հյուրեր կային։ Այնտեղ էր և Կորյունի հայրը՝ իր նման վայելչակազմ մի մարդ, գիտնականի խոհուն դեմքով։

Ներս մտնելուն պես հայրը դարձավ ինձ հետևյալ հարցով.

— Ասացեք ինձ ճշմարտությունը. կաքավները, որ այժմ տապակվում են կաթսայում, իրո՞ք իմ որդի Կորյունն է խփել...

Ես հանդիսավոր կերպով հաստատեցի։

Նույն ուժով ես ջախջախեցի Կորյունի տիկնոջ կասկածները. իրավաբան լինելս շատ էր օգնում իմ դերին...

Բայց դա «սկիզբն էր երկանց»։

www.a-pdf.com

Ինձնից հրապարակային վկայություն ստանալու նպատակով Կորյուն Կորյունովն այդ տարի վեց անգամ խնջույք կազմակերպեց իր տանը։ Ու ամեն խնջույքի նա ոգևորված պատմում էր Թալինում կատարած իր սխրագործության մասին և, հարկավ, չափի զգացումը կորցնելով, իր համար ևս աննկատելի կերպով սրոշ դոզայով սուտ էր խառնում ինձ հայտնի ճշմարտությանը, և ես ստիպված հաստատում էի իրականության ու ցնորքի այդ խառնուրդը։ Հետագայում ստի այդ դոզան գնալով աճեց-մեծացավ և կլանեց-պարտակեց իր մեջ բուն ճշմարտությունը։ Սակայն նրա թախանձանքներին տեղի տալով, ես շարունակում էի վկայի իմ դերը։

Կորյուն Կորյունովը տեղափոխվեց Թբիլիսի և ես, վերջապես, ազատվեցի անախորժ այն դերից, որ կատարում էի այդ մարդու համար։

4

Ես պատրաստ էի վկայի իմ դերը շարունակել հետագայում ևս, եթե մի անսպասելի դիպված չգար խզելու մեր այնքան լավ հարաբերությունները։

Իմ բարեկամ Կորյուն Կորյունովը Թբիլիսիից եկավ Երևան, գտավ ինձ և խնդրեց հետը որսի գնալ։ Խմբով մեկնեցինք Արտաշատ՝ նապաստակի։

Այգեկութը վերջացել էր, մարդիկ հանդերից քաշվել էին շենները, ուստի և նապաստակները դաշտերից ու բլուրներից եկել էին այգիներում դեղնած տերևներ ուտելու և թփերի տակից խաղողի մնացորդներ ճարելու։ Մենք ցրիվ եկած, իրարից բավական հեռու, խուզարկում էինք թփերը։

Որսն սկսվելուն պես մի խոշոր նապաստակ խփեցի, որ և՛ բարեբախտություն է որսորդի համար, և՛ ձախորդություն այն իմաստով, որ ամբողջ օրը պետք է կողքիցդ կախած, հագուստներդ արյունոտելով հետդ ման ածես։

Նապաստակը թաքցրի քարերի տակ, բայց երկյուղ ունեի, որ կարող են ուրիշները գտնել, մանավանդ շնով շրջող որսորդները։ Հանկարծ մի հնար ծագեց գլխումս, մի թղթի կտորի վրա գրեցի հետևյալ բառերը.

— Խե՛ղճ նապաստակ, ասա՛, ո՞վ սպանեց քեզ։

— Ինձ սպանեց որսորդ Արամ Եսայանը։

Այդ թուղթը ծալեցի, դրի նապաստակի լեզվի տակ, իրեն ծածկեցի քարերով ու բախտի կամքին հանձնելով, առաջ գնացի։

Երեկոյան դեմ վերադարձա՝ նապաստակը չկա, գտել-տարել են։ Ուրիշ ոչինչ չէի խփել, ուստի շատ կոտրված սրտով գնացի կայարան։

Այդտեղ հավաքվել էին իմ որսորդ ընկերները՝ բոլորն էլ դատարկաձեռն։ Այդտեղ էր նաև Կորյուն Կորյունովը... կողքից մի խոշոր նապաստակ կախած, ճանաչեցի, իմ խփածն էր։ Չէր կարծում, որ իմ պահածն է գտել, ուստի ուրախ-ուրախ ընդառաջ եկավ ինձ և կողքը դեմ անելով՝ այնպիսի դիրք ընդունեց, որ տեսնեմ իր որսը։

Չտեսնելու դրի, հոգնած էի և տխուր։

— Այդ ինչպե՞ս, Արամ Միխայլովիչ, ոչինչ չե՞ք խփել,— հարցրեց նա։— Ես նույնպես քիչ էր մնում դատարկ վերադառնայի...

Ու նորից ցույցեր է անում։ Դիտմամբ անտարբեր եմ։

Զգում եմ, որ տեղում եփվում է, ուզում է հարցեր տամ, սիրտը պատմել է ուզում. որսորդի մի՞կ բավականություն...

Լուռ եմ։

— Բայց գիտե՞ք, եթե շունս չլիներ, այս անպիտանը թաքնված էր մնալու։

Ու կողը դեմ է անում։

Լռում եմ։

— Շատ անհաջող եղավ։ Թբիլիսիից գաս հատկապես որսի և ընդամենը մեկ նապաստա՞կ...

Չարձագանքեցի։

... Վագոն մտանք։

Չտեսնելի մի բազմություն հավաքվեց նապաստակի շուրջը։ Հետաքրքրվողների մեջ կային և՛ դեռատի աղջիկներ, և՛ գյուղական հարսներ, և՛ կիրթ ու դուրեկան դեմքով մի տիկին։

Վերջինս դեպի որսորդն ավելի ուշադիր դուրս եկավ, քան դեպի նրա որսը։

— Հավանաբար, վազքի ժամանակ խփեցիք, այնպես չէ՞,— հարցրեց տիկինը՝ երիտասարդ որսորդի հաղթ հասակը զննելով։ Գգվանք կար նրա շարաճճի աչքերում։ Դա բորբոքեց Կորյունովի առանց այն էլ դյուրաբորբոք երևակայությունը։

— Դե, իհարկե, վազքի պահին... Եվ այն էլ ինչպե՞ս էր վազում. ես հույս չունեի, թե կոտորակը կհասնի ետևից...

www.a-pdf.com

— Եվ մե՞կ կրակոցով,— իր հետաքրքրությունը չէր թաքցնում տիկինը։

— Այո՛, ըստ իմ վաղեմի սովորության...

Ես լռում էի, բայց շար մի դիտավորություն ծնվում էր իմ մեջ, և ես չէի կարողանում արգելել նրա աճումը։

— Այո՛, նրանք այս անգամ էլ են դատարկ վերադառնում,— քիչ անց ժխորի մեջ լսեցի նրա զգուշավոր ձայնը։

Տիկինը և իր կամպանիան հեգնական հայացքներ ձգեցին մեր կողմը։ Միայն որսորդը կհասկանա այդ հայացքների ծանրությունը, որսից դատարկաձեռն վերադարձող որսորդը։

— Բայց մի՞թե նրանց որս չի պատահել,— հարցրեց տիկինը։

— Պատահել է, ինչպես չէ... Բայց դե, ամեն պատահած հո չի խփվում...

Երբ չափն անցկացրեց և ակնարկներով չխնայեց անգամ մեզ, ես կանգնեցի տեղիցս, մոտ գնացի և առաջ թեքվելով՝ շարությամբ ասացի.

— Այս նապաստակը դուք չեք խփել։

Մի՛ դատապարտեք ինձ, վեց տարի էր այդ մարդը վառել էր ինձ իր պարծենկոտությամբ, իսկ հիմա էլ, մեր այս սրտնեղած պահին, չի խնայում մեզ։

Արհամարհանքի մի ժպիտ խաղացնելով հարցրեց.

— Գուցե կբարեհաճեի՞ք ասել, թե ո՞վ է ինձ համար սպանել այս նապաստակը։

— Ո՛չ, ես այդ չեմ ասի։ Ավելի լավ է ձայնը տանք իրեն՝ զոհվածին։

— Այդ ինչպե՞ս։

— Այնպես, էլի, խնդրեք, որ ինքը պատմի, թե ո՞վ է սպանել իրեն։

Ոմանք ծիծաղեցին, տիկինը հեգնանքով ու հետաքրքրությամբ լի հայացքն ուղղեց իմ կողմը։

— Ահա ես հեռու կանգնած եմ ձեզանից վեր, բաց արեք բերանը,— ձայնս բարձրացրի ես։

Մի պատանի բաց արեց նապաստակի բերանը։

— Սպանվածը ի վիճակի չէ խոսելու... քննեցե՛ք լեզվի տակը։

Թուղթը դուրս բերին. ընդհանուր զարմանք վազեցնում։

— Կարդացե՛ք։

www.a-pdf.com

Պատանին բաց արեց թուղթը և բարձրաձայն կարդաց.

— Խե՛ղճ նապաստակ, ասա՛, ո՞վ սպանեց քեզ։
— Ինձ սպանեց որսորդ Արամ Եսայանը...

Պարծենկոտը գաջի գույն ստացավ։
— Արամ Եսայանը ե՛ս եմ։ Ահա, կարող եք ստուգել։
Եվ տիկնոջը մեկնեցի իմ անձնագիրը...

1946

ԵՐԳԻԾԱԲԱՆՆ ՈՒ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ

1

Լավ որսորդ է քանդակագործ Արա Սարգսյանը և հյուրասեր է բոլոր լավ որսորդների նման։ Առանձին հաճույք է զգում, երբ վայելում են իր բերած որսը, գովում ու հետո էլ հետաքրքրվում, թե՝ «Արա Միհրանովիչ, մի պատմիր, ինչպե՞ս խփեցիր...»

Այն ժամանակ ծեր պրոֆեսորը կերպարանափոխվում է, գունատ դեմքին կարմրություն է գալիս, խորշոմները հարթվում են և երիտասարդական կրակ է ցոլում աչքերում։ Այդպես ենք մենք բոլոր որսորդներս էլ, երբ պատմում ենք մեր գործած սխրագործությունների մասին...

Երգիծաբան Խոճիկը քանդակագործի հենց այդ թույլ երակից է բռնել։ Մեկ էլ տեսար զանգ տվեց.

— Արա Մինայի՛չ, չեմ կարծում, թե որևէ թռչուն նեղացած լինի քո կրակոցից...

— Ի՞նչ ես խոսում, Խոճի՛կ, բերել եմ, շա՛տ եմ բերել...

— «Բերել եմ»-ը դեռ ապացույց չի...

— Եկ աչքովդ տես...

Ու գալիս է Խոճիկը, վայելում տապակած լորերը (եթե ամռանն է) կամ՝ կաքավները (եթե աշնանն է) ու հումորը խած աչքերում՝ հարցնում է ցածր ձայնով, խորհրդավոր.

— Ճիշտն ասա, Արա Մինայի՛չ, հո շուկայից չե՞ս գնել...

Ու ժպտում է խորամանկորեն, աչքերը կկոցած, որ նշանակում է. «Դե լա՛վ, խոստովանի՛ր, մարդու բան չեմ ասի...»։

Այդ ժամանակ քանդակագործը շառագունում է զայրույթից.

www.a-pdf.com

ավելի լավ չէ՞, որ ապտակեն, քան կասկածի տակ դնեն իր որ-սորդական շնորհքը...

— Դե լա՜վ, մի նեղանա, գիտենք...

Ու գնում է երգիծաբանը՝ գոհ իր հումորից։ Գնում է ու առաջին հանդիպող ընկերոջը ասում անփույթ.

— Որտեղի՞ց... Արա Սարգսյանի տնից... Այս անգամ էլ է որսից դատարկ վերադարձել։ Լավ է, շուկայում մի քանի լոր է ճարել...

Տարիներ շարունակ այդ խաղը խաղում էր էդվարդ խոճիկը մեր որսորդ ընկեր Արա Սարգսյանի գլխին և շարունակում էր հանգիստ խղճով վայելել նրա բերած որսը։

Պատկերացնո՞ւմ եք պրոֆեսորի վիճակը։ Ավելի լավ չի՞ նրան վատ քանդակագործ հայտարարեն, քան՝ վատ որսորդ...

— Եղբա՛յր, համ ուտի, համ ինձ վարկաբեկի՞... Այսպես էլ տմարդությո՞ւն,— ասում էր նա վրդովված։— Վե՛րջ, ես նրա ոտքը կկտրեմ իմ տնից...

Բայց խոճիկից ազատվել կլինի՞։ Հեռախոսը վերցնում է ու մեղմությամբ հարցնում.

— Արա Մինայի՛չ, էլի՞ դատարկ ես վերադարձել։ Է՛հ, ծերացել ես, Արա Մինայի՛չ...

— Ո՞վ է ծերացել,— գոռում է պրոֆեսորը հեռախոսափողի մեջ,— ե՛կ, աչքովդ տես, սա ծերունու կատարա՞ծ գործ է...

Գնում է խոճիկը Արա Սարգսյանի տուն, տեսնում կաքավները խոհանոցում կախված, նապաստակը մեկնված պատշգամբում, գովում է, լավ ամրացնում իր «գոտու տակը» և շրթունքները սրբելով հարցնում.

— Ճիշտն ասա, Արա՛, հո՞ ես ու դու ենք, ուրիշ մարդ չկա...

2

Մի անգամ ես հանդիպեցի Արա Սարգսյանին։ Գունատ շրթունքները դողդողում էին, մտքում ինչ-որ բան էր մտմտում։

— Ես դրան լեշ կերած ագռավի միս պիտի ուտեցնեմ, որ սիրտս հովանա,— ինձ տեսնելուն պես գոչեց նա։

— Ո՞ւմ... Ինչ է պատահել, Արա Մինայիչ...

— Ո՞ւմ... Քո սիրելի էդվարդ խոճիկին... Անամո՛թը...

Ու գնաց զայրացած։

www.a-pdf.com

Հասկացա։ Է՛հ, թե կարող է, թող ուտեցնի, ի՞նձ ինչ։ Ասենք, լավ էլ կանի, հերիք է, որ այդ խոճիկը խաղա իմ որսորդ ընկերների պատվի հետ։

Հաջորդ օրը Արա Սարգսյանը հրապարակով խոճիկին սպառնում է սատկած ագռավի միս ուտեցնել։

— Է՛, փչացրի՛ր, Արա Մինայիչ, գոնե չզգուշացնեիր,— դիտում է ընկերներից մեկը։

— Լավ որսորդը որսին իմաց է տալիս՝ հետո կրակում,— մեր պապերի խոսքով պատասխանում է քանդակագործը։— Հիմի տեսեք, թե ինչպես կուտեցնեմ։ Այնպես կուտի ագռավի միսը, ինչպես բերածս կաքավներն է կերել։

Դե, այսպիսի զգուշացումից հետո խոճիկն այլևս նրա որսին ձե՞ռք կտար։ Բայց Արա Սարգսյանը այնքան էր դաղված այդ մարդուց, որ մի շաբաթ միայն իր գործողության պլանն էր մշակում։

Հաջորդ անգամ հանդում լեշի վրա հավաքված ագռավներ են հանդիպում։ Խփում է դրանցից երեքին, ընտրում ամենից նիհարն ու պառավը և ընկերներին բացատրում, թե ինչ խորամանկությամբ պիտի խոճիկին թակարդի մեջ գցի։

Հաջորդ օրը խոճիկը նորից զանգ է տալիս.

— Արա Մինայի՛չ, էլի՞ դատարկ ես եկել որսից...

— Այո՛, դատարկ եմ եկել։

— Է՛, շուկայում բան չգտա՞ր...

— Չգտա՛,— հանգիստ ձևանալով պատասխանում է քանդակագործը։

— Ցավալի է...

Ու հեռախոսափողը կախ է անում և քիչ անց զանգահարում Արա Սարգսյանի որսորդ ընկերոջը.

— Խաչի՛կ, Արան էլի՞ դատարկ է եկել որսից։

— Ո՞վ ասաց։

— Ինքը։

— Քեզ խաբել է, որ մենակ ուտի... Լավ աղավնիներ է բերել, գնա՛։

— Վայրի աղավնի՞։ Հետաքրքիր է ճաշակել...

Զանգահարում է Միքայել Բաղրամյանին.

— Մի՛շա, Արայի հետ որսի՞ էիր գնացել։ Այո՞, էլի՞ դատարկ է եկել։ Ո՞չ։ Աղավնինե՞ր...

«Հը՛մ, նեղացած է, գնամ հաշտվեմ հետը...»։

www.a-pdf.com

Ու գնում է քանդակագործի մոտ, թե.

— Լա՜վ, Արա Մինայի՛չ, վե՛րջ, եկ հաշտվենք... Աղավնիները...

— Ի՞նչ աղավնի...

— Խփածդ աղավնիները... Դե լա՜վ, մի թաքցնի, ընկերներդ մատնել են արդեն։

— Չէ՛, ոչինչ չեմ խփել, արդեն ծերացել եմ...

— Դե լա՜վ, մի նեղանա, որսորդին ի՞նչ ծերանալ։ Ժենյային ասա՝ բերածդ աղավնիները տապակի...

Արա Սարգսյանը ստիպված համաձայնում է ու քիչ հետո աղավնիների հետ միասին հրապարակ է դալիս սկուտեղի վրա բազմած ագռավը։

Բայց դե գրա հնարքն էլ էր մտածված. «Արարատի» կոնյակի ու տիկին Ժենյայի բռնած թթվի հետ ագռավ չէ, ինչ էլ որ լիներ՝ կուտվեր։ Սկսվում է ընթրիքը, քանդակագործը աղավնի է վայելում, իսկ երգիծաբանը՝ ագռավ...

Երբ ընթրիքն ավարտվում է, քանդակագործը խորին բավականությամբ հայտարարում է.

— Խոճի՛կ, հո՞ ագռավ ուտեցրի քեզ...

Այդ էր ու այդ, խոճիկն այլևս կհամարձակվե՞ր որևէ որսորդի ծաղրել։

1956

ԵՐԵՍ ԵՆ ՏՎԵԼ

Հոգնած վերադարձանք որսից և հյուր մնացինք Հոկտեմբերյանի Ս. գյուղում, կոլտնտեսության նախագահի տանը։

Մինչ տանտիկինը խոհանոցում ուտելիք էր պատրաստում մեզ համար, նախագահը շարժում էր օրորոցը և հետն էլ մեզ հետ զրուցում։ Օրորոցում շղարշով պատած երեխա էր պառկած։

Զանգահարեցին։ Նախագահը, առանց տեղից վեր կենալու, մի ձեռքը մեկնեց հեռախոսին, մյուսով շարունակեց օրորել։ Դրանից մենք հասկացանք, թե ինչու հեռախոսն օրորոցի մոտ է դրված. փոքրիկ բռնակալը համաձայն չի, որ իրեն թողնեն, գնան հեռախոսի մոտ։ Թող բերեն իր մոտ, որ համ խոսեն, համ օրորեն...

www.a-pdf.com

— Լա՛վ, հիմի կգամ,— ասաց նախագահը փողի մեջ ու դարձավ ընկերոջս.— Ներողությո՛ւն, մի քիչ օրորեցեք երեխային, ես գրասենյակ վազեմ-ետ գամ, շտապ գործ կա...

Ի՞նչ արած, պիտի օրորենք. դե տանտիկինը խոհանոցում մեզ համար գործ է անում, ո՞նց չզբաղեցնենք նրա երեխային...

Հենց հայրը ոտքը շեմքից դուրս դրեց, երեխան սկսեց մի լաց, մի լաց, որ նկարագրել չեմ կարող։ Եռանդուն օրորում ենք երկուսով, քաղցր խոսքեր ենք ասում, նապաստակ ու կաքավ ենք խոստանում, չի լռում։

— Սա նախագահի երես առած զավակ է, սրա հետ գլուխ դնելը դժվար է,— հուսահատված ասաց ընկերս և օրորոցի ճաղը բաց թողեց։

Լացը սաստկացավ, երեխայի ձայնը երկինք է հասնում։ Մայրն էլ հակառակի նման, գնացել է հավանոցը... Հանկարծ երեխայի լացը շլսի՞ ու ա՞ռանց հավի վերադառնա...

— Կաց մի երեսը բացենք, տեսնենք էս ինչ անդաստիարակ տղա է։

Քողը վերցրի երեխայի երեսից ու մնացի ապշած. օրորոցում մեկնված է չորս-հինգ տարեկան մի տղա...

— Բա չես ամաչո՞ւմ, որ լաց ես լինում,— նախատեցի ես։ «Երեխան» լալով պատասխանեց.

— Քո գործը չի՞... Դու օրորի՞...

1956

ՀՆԻ ՎԵՐԱԳՐՈՒԿԸ

Այսպես անվանենք հագուստին հարգանք մատուցելը Ես, քանի որ դեռ շատ դարեր առաջ Խիկար իմաստունն է ծաղրել մարդկային այդ թուլությունը։

... Վերադարձել եմ որսից, հանել ճմրթված ու ցեխոտ հագուստներս ու նորն եմ հագել, այնպես նորն ու թանկարժեքը, որ քսան տարի հետս «դու»-ով խոսող որսորդ ընկերս մի տեսակ ակնածանքով է նայում վրաս ու անցել է «դուք»-ի...

Ո՞ւր էիր երեկ, անիրա՛վ, վրաս լինեիր՝ մարտունեցի Աղաբեկը այնպես արհամարհական տոնով չէր խոսի հետս։

www.a-pdf.com

Ասենք, Աղաբեկն իրավունք ուներ. լճափից վերադարձել էի հյուրանոց՝ ձկնոտ հին Գագուստով և 46 համարի ռեզինե սապոգներով, այն, որ հանքախորշում են հագնում։ Մարտունու հյուրանոցի ճաշարանը իր օրում երևի այդպիսի անհաջող արտաքինով հաճախորդ չէր ունեցել։

Շատ սպասեցինք ես և ձկնորս ընկերներս, մինչև որ «բուֆետչիկ Աղաբեկը»՝ ճերմակ դեմքով բարալիկ մի երիտասարդ՝ «դախլի» հետևից մատով կանչեց ինձ ու հեգնախառն հարցրեց.

— Դո՞ւ ինչ ես ուզում...

Համեստորեն ուտելիք պատվիրեցի, բայց հույս չունեի, թե իրե՛նք կմատուցեն, քանի որ ճաշարանի կազմը զբաղված էր վերադասին սպասարկելով։ Երբ «վերադասը» (կարծեմ՝ Հայկոոպից) իր շքախմբով վեր կացավ, նոր միայն հիշեցին մեզ՝ անշուք որսորդներիս։

Լուռ կերանք, քանի որ հոգնած էինք ու քաղցած։ Այդ ժամանակ Աղաբեկը իր գահից դարձյալ մատով հրավիրեց ինձ։

— Դու էս կողմերում ի՞նչ բանի ես,— հարցրեց նա։

— Ձուկ եմ բռնում,— համեստորեն պատասխանեցի ես։

— Ձուկ բռնելը քո խելքի բանը չի,— արհամարհանքով շպրտեց նա ու շեմքին նայելով, հանկարծ կերպարանափոխվեց, հեզացավ, սիրալիր ժպիտ խաղաց դեմքին. ներս էր մտնում կոմունալ բաժնի վարիչը...

Հաջորդ օրը ձախորդության հանդիպեցի. Ն. Ադյամանի խորդուբորդ փողոցներով անցնելիս իմ «Վոլգա» մեքենան ամբողջ թափով քարին զարնվեց։ Գլխով խփեցի դիմացիս ապակուն, կայծակներ խաղացին աչքիս առաջ...

Գիշեր, սառնամանիք, լճից այնպիսի ցուրտ քամի է փչում, որ չենք կարողանում մեքենայից դուրս գալ։

Մի ավտովարորդ պատահեց, որ թեև շատ բարի դեմք ուներ, բայց միջնադարյան ավազակապետի անուն ուներ՝ Արաբխան...

Այդ բարի մարդը մեզ խրախուսեց, սրտապնդեց, մեր մեքենան իր բեռնատարով քաշեց մոտիկ բակը, մեզ տեղավորեց ֆերմայի բրիգադիրի տանը, ուր սրտաբաց հյուրասիրեցին մեզ։ Ընկերներիս համար փափուկ անկողիններ պատրաստել տալուց հետո, Արաբխանն ինձ նստեցրեց կողքին ու քարքարոտ ճամփով քշեց դեպի իրենց գյուղը։

Այնպես էր թխկթխկում բեռնատարը, որ աղիքներս շուռ

www.a-pdf.com

էին գալիս։ Հիշեցի տասնամյակներ առաջ «Մաճկալ»-ում խնկոՍպոր հրապարակած ոտանավորն այս գյուղի մասին.

Ամա՜ն, Ադյամա՜ն[1],
Ճամփաներդ ինչի՞ նման...

— Մի քիչ էլ դիմացիր, հիմի կհասնենք իմ եղբայր Միսակի տունը։ Որ իմացավ դո՛ւ ես, սաղ գեղը քեֆի կհրավիրի, էնքան որ կուրախանա...

Միսակը քնած էր Մսրա Մելիքի քնով. երեկոյան լավ հոգնել էր ու հիմա խոմփոցը երկինք էր հասնում։ Կինը, բազմաթիվ երեխաների հոգսից հյուծված մի հեզ արարած, անկյունի թախտին ինձ համար անկողին բացեց, իսկ Արաբխանը ինչ-որ բան փսփսաց նրա ականջին ու գնաց։

Ի՞նչ քնել. այս ու այնտեղ պառկած երեխաներից անուշ գոլ էր բարձրանում ու ընդարձակ օդան հագեցված էր ֆսսոցով, փսսոցով, խռռոցով...

Մեքենայի վթարից դեռ շշմած՝ մղձավանջի մեջ էի, երբ, լուսադեմին, վրա նստեց տան տերը, նայեց իմ կողմը, աչքերին չհավատաց, որ օտար մարդ է պառկած, տրորեց աչքերն ու նշանով կնոջը կանչեց մոտը։

Իմ մութ անկյունից նայում եմ «աչքի պոչով»։ Տան տերը աչքով-ունքով իմ կողմն է ակնարկում, ձեռքով հարցական շարժում է անում, թե՝ «կնի՛կ, էս ինչ մարդ-մարդահոտ է գալիս...»։

— Գիշերն Արաբխանը բերեց... Ասաց՝ բանաստեղծ է... — շշնջոցով արդարացավ կինը։

Միսակը կասկածանքով նայեց ռեզինե սապոգներիս, նայեց մահճակալի ճաղից կախված ձկնոտ «տելեգրեյկա»-իս ու բեղի տակ քմծիծաղ տվեց.

— Խելքդ չափել են, կնի՛կ, դա բանաստեղծը չի, նրա շոֆերը կեղի...

Լուսացավ, բոլորն էլ հագնվեցին, հագնվեցի և ես։ Եվ երբ հագնվեցի, բոլորի համար էլ անվիճելի դարձավ, որ ես «բանաստեղծ» Վախթանգ Անանյանի շոֆերն եմ։

— Ումո՛ւդ, մուղայիթ քշեիր... Վնասը շա՞տ է... Հիմի ի՞նչ կասի խազեինդ,— կաբեկցաբար թոնթորում էր Միսակի պառավ մայրը։

— Բա ի՞նքն ուր է,— հարցրեց Միսակը։

---

[1] Ադյաման Գետաշենի հին անունն է։

www.a-pdf.com

— Ինքն ո՞վ է...

Մոռացել էի, որ ինձ շոֆերի տեղ են դրել։

— Վախթանգ Անանյանը... Ա՜խ մի պատահե՜ր, կիմանայիր, թե ինչ մարդ է մարտունեցի Միսակը։ Ախր նա մեր Սևանի անունը մինչև Չինաստան է հասցրել... Հիմի որտե՞ղ է, գոնե գնանք երեսը տեսնենք։

— Շրջանի ղեկավարները հյուր տարան,— պատասխանեցի ես։

— Կտանեն բա՞, նա հիմի հյուրանոցի լյուքս համարում քեֆ անելիս կլինի, բա հո բեռնատարով Միսակի տունը չի գնա,— ասաց տանտերը, և ես նրա խոսքի մեջ զգում էի դառը հիասթափություն...

Հրավիրեց նախաճաշի, մտամոլոր ծխեց, գլուխն օրորեց.

— Բանա՞ստեղծ է բերել...

Ու մեկ էլ արհամարհանքով նայեց ռեզինե սապոգներիս ու ձկնոտ «տելեգրեյկայիս»։ Չհասկանալս եմ դնում։ Ուտում եմ անտրամադիր, ցրված։ Մեքենան ջհաննամը, ո՞րսը խափանվեց... Սրանք էլ մի կողմից... Տո՜, շորս լավը պիտի լինի որ հավատա՞ք...

Լավ էր, էլի իմ «կադրերը» օգնության հասան ինձ՝ Միսակի դպրոցական երեխաները։ Գրադարանից հանել են գրքերիցս մեկը, նրանում տպագրված դիմանկարիս են նայում ու հայացքով գաղտագողի համեմատում քամուց խաշված դեմքիս հետ։ Վերջապես գլխի ընկա. երևի ահագին քիթս էր մատնել ինձ։ Փսփսուկ տարածվեց տանը և այդ փսփսոցի արդյունքն այն եղավ, որ տանտերը ուրախացած վեր թռավ ու գոչեց.

— Կոնյակ բեր, կնի՜կ։ Այ տղա, գնա դպրոցի դիրեկտորին կանչիր... Կանչի՜ր՝ ով պատահի...— Այնպե՞ս էր ուրախացել, այնպես էր իրար խառնվել։— Կնի՞կ ինչ բանի ես,— որոտում էր Միսակն ու հետն էլ գլուխն օրորում։

— Էդ ի՞նչ լավ եղավ, որ մեքենադ ջարդվեց։ Որ չջարդվեր հո՞ քեզ չէի տեսնի իմ հարկի տակ...

... Իսկապես որ իմաստուն մարդ է եղել խիկարը. հիմի ցամաք սև հացի կտորը դեմ չանե՞մ ամեն տեղ ինձ նսեմացնող «տելեգրեյկայիս», թե՝ «կե՜ր, է՜ս է քո պատիվը, սրանից ավելին չարժես...»։

Չարժե՜ս, որովհետև քո պատճառով էր, որ մարտունեցի

www.a-pdf.com

Աղաբեկը ինձ նման անվանի որսորդին հրապարակով նախատեց, թե

— Զուկ բռնելը քո խելքի բանը չի...

1961

ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՓԶՈՑՆԵՐ

ԻՆՉՆ Է ԿԱՐՄՐԻՆ ՏԱԼԻՍ

Գորիսի Բռուն գյուղացի Լղարին Մատուրի կարմիր կովը կորավ։ Մատուրը բարձրացավ իր տան կտուրը, ձեռքը ճակատին հով արած նայեց սարերին ու տեսավ մի բան է կարմրին տալիս Քաշալ-սարի լանջին։ «Էդ կա՞-չկա իմ կարմիր կովն է...»,— վճռեց Մատուրն ու ջորին նստեց գնաց։

Գնա՞ց-գնաց հասավ Քաշալ-սարի լանջին, տեսավ կարմրին տվողը մի ահագին մորի է...

1949

ԼՈՌԵՑՈՒՆԵՑ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՆԵՐԻՑ

Մի ագռավ պտտվում էր Լոռու ձորի վրա, իսկ ժայռերի գլխի տափարակին մատաղ էին մորթել ու քեֆ էին անում մեր պապերը։ Զուռնան փչում էր, ջահելները «ջիրիդ» էին խաղում, իսկ կրակի վրա խլթխլթում էր շորսկանթանի կաթսան՝ մատաղը մեջը։

Պտտվեց-պտտվեց ձորի վրա այն ագռավը ու եկավ ընկավ եռացող կաթսայի մեջ։

— Վո՞ւյ, քոռանաս դու, մեր մատաղը հարամեց,— ճչացին կանայք ու խփեցին իրենց ծնկներին։ Դե հո հարամ մատաղը չէին բաժանելու, կաթսան շուռ տվին տափարակի կանաչի վրա։ Շուռ տվին ու մնացին քարացած, մեջը մի խաշված օձ կար...

— Մի տես աստծու բաներին, է՞,— քրթմնջում էին ծերերը,— կյանքը տվեց, բայց տես քանի՞ կյանք ազատեց...

1956

www.a-pdf.com

Լավ որսորդ էր Գետաթաղ գյուղացի Բաբան, բայց ափսո՛ս, այն հիվանդությունն ուներ, որով տառապում են մեր որսորդներից շատերը։

Հաջող որսից տուն է եկել ու գյուղացիներին գլխին հավաքած պատմում է.

— Տաթևի դիմաց մի քարափի միջից ծուխ էր դուրս գալիս՝ հասկացա, որ արջերի բերանի բուղն[1] է։ Խանչալս հանեցի ու էդ գոլ մառախուղի միջով մտա սարի սիրտը։ Գնա՛ցի-գնացի հասա արջերի բնին. տեսնեմ հրես յոթ արջ իրար կողքի մեկնված ո՞նց են խոմփացնում... Հիմի մոլորվել եմ, թե որի՞ց սկսեմ։ Խանչալս քաշեցի ամենամեծին մորթեցի, մնացածները հանգի՛ստ խոմփացնում են, ո՞նց են խոմփացնում... Էդպես հերթով բոլորին էլ մորթեցի՝ խոմփոցները կտրեց...

— Բաբա՛, բա իսկի ոչ մեկն էլ չզարթնե՞ց,— հարցնում են գյուղացիները։

— Հը՛մ, իմ խանչալի տակ ա՞րջ կզարթնի...

1951

ՊՈՂՈՍ ԱՄՈՒ ԵՎ ՂԱԶԱՐԵՆՑ ԿԱՐՈՅԻ ՎԵՃԸ

Ձմեռանոցում ամեն երեկո մեր գյուղի տավարածները հավաքվում էին Ալխանանց Արթնի խրճիթը ու թեժ բուխարու առաջ լսում Պողոս ամու զրույցները։

Համա փչող էր հա՛ այդ Պողոս ամին...

Բայց ո՞վ կհամարձակվեր նրա սուտը բռնել։

Մեկ-մեկ նրա ստերի վրա ծիծաղում էր Ղազարանց Կարոն, այն էլ, երբ մոտները մարդ չլիներ. ուրիշի մոտ ո՞նց կարելի էր Պողոս ամու պատվին կպչել,— մեծ հեղինակություն էր վայելում նա մեր ձմեռանոցում։

Մի երեկո Պողոս ամին թե՝

— Կա՛րո, գլուխդ տմբտմբացնում ես, վայ թե էն աշխարքը գնալու օրդ մոտեցել է։

Կարոն պատասխանում է.

— Մինչև քեզ չուղարկեմ, ես գնացողը չեմ։

---

[1] Բուղ — գոլորշի։

www.a-pdf.com

— Ախր շուխեդ թազա է, աչքս վրեն է մնացել, դու շուտ գնա, որ շորերդ հագնեմ,— իր առաջարկը հիմնավորում է Պողոս ամին։

Այդպես վիճում են, վիճում ու հրապարակորեն պայման կապում, ո՛ր ով շուտ մեռնի, կենդանի մնացողը նրա շորերը հագնի։

Իրար ձեռք են տալիս, պայմանավորվում ու, բուխարու առաջ նստած, շարունակում են իրենց զրույցը։

Պողոս ամին նորից բաց է անում իր ստերի տոպրակը։

— Երեկ իրիկուն գյոտից գալիս տեսա գելերը Քարկապի մոտ շերեփով իրար ջուր են վրա տալիս։

Ասում է ու հաղթական նայում զարմանքից բերանները բաց տավարածներին։

— Հա՛,— հաստատում է Կարոն,— քեզանից հետո, որ ես անց էի կենում Քարկապով, տեսա շերեփի կտորները ճամփու տակին թափված են...

— Հաա՞, պլտան Կարո, ուրեմն ես սո՞ւտ եմ ասում,— նեղանում է Պողոս ամին։

— Չէ, ի՞նչի ես սուտ ասում, շերեփի կտորները աչքովս եմ տեսել,— քմծիծաղ է տալիս Կարոն։

— Ձեռ ես առնում, հա՞...

Ու այդ օրից մինչև իր մահը Պողոս ամին խռով է մնում իր մանկության ընկեր Կարոյից։

Մահանալիս էլ նրա հետ կապած պայմանը քանդում է ու պատվիրում է իր տնեցոնց.

— Որ մեռնեմ, շորերս Կարոյին չտաք։ Նա քանի՞ գլխանի է, որ իմ սուտը մարդկանց մոտ բռնի...

Այդպես էլ նրա շորերը Կարոյին չտվին։

1951

ԿՈՐԱԾ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Մի տաք աշուն էր։ Շատ ման գալուց հոգնած մի ծառի հաստա, պիջակս էլ հանեցի, գլխարկս էլ, ոտնամաններս էլ, ուզում եմ մի լավ հանգստանամ, բայց էլի ծանրություն եմ զգում։ Մի

www.a-pdf.com

Հին ժամացույց ունեի՝ շղթան հետը։ Դա էլ հանեցի կախեցի ծառից ու թեթևացած մեկնվեցի։ Ասի՝ մի քիչ քնեմ։ Է, հավատարիմ շունս հե՞տս, ինչի չեմ քնի՞ որ...

Վերջապես արթնացա, շորերս հագա, զենքս վերցրի ու շարունակեցի իմ որսը։ Երեկոյան դեմ ձեռքս ծոցագրպանս տարա՝ ժամացույցս չկա։ Հիշեցի, հա՞, էն ծառի ճյուղից կախված մնաց։ Մտա անտառ, շատ մանեկա՝ էն ծառը չգտա։ Էդպես էլ կորավ ժամացույցս։

Տարիներ անց կացան, մի անգամ էդ անտառում որսի մանգալիս շունս մի ծառի տակ կանգ տվեց՝ քարացավ։ Շտապ զենքս մեկնեցի ու հրաման տվի.

— Պի՛լ...

Շունը տեղից չի շարժվում։ Ասի նապաստակ կլինի բնի հետև քնած։ Ոտքով խփեցի ծառին, մոտիկ թուփը շարժեցի հրացանի փողով՝ ոչինչ չկա։ Իսկ շունս շունչը պահած կանգնել, հուզմունքից դողում է ու հայացքով ինձ նախատում է, թե՝ «Շուտ է՞, ինչ բանի ես...»։

Ականջ դրի՝ ծիկ-ծուկ, ծիկ-ծուկ,— ժամացույցի ձայն է գալիս։ Վերև նայեցի. իմ լուսահոգի ժամացույցն է, ճյուղից կախված ուրախ ծիկ է անում ինձ՝ ծիկ-ծուկ, ծիկ-ծուկ...

1961

ԻՄ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

ԱՂԱԲԵԿԸ

— Ընկեր Անանիկյան ջան, ես որ կամ մի անգրագետ, անհասկացող մարդ եմ՝ կարող ա քեզ չօգնեմ։ Համա դու հասկացող գրող մարդ ես, ամե՛ն օր պիտի ինձ օգնես...

* * *

Իմ այդու ցանկապատի անցքերից ներս են խցկվում Աղաբեկի ճուտերը ու կոցահարում ինչ-որ պատահի՝ հաղարջ, լոլիկ, համեմունք։ Իրենց տված վնասը մի բան չի, բայց գրավում են

www.a-pdf.com

ուշադրություն, չեմ կարողանում կենտրոնանալ որևէ մտքի, որևէ նյութի վրա, որ գրեմ։ Զանձրացել եմ ճուտերին դուրս քշելով, ես հավ քշո՞ղ եմ, ինչ է։ Ասում եմ.

— Աղաբե՛կ, ախր խանգարվում եմ...

— Է, ինչ անեմ, ճուտերս մորթե՞մ։ Մի ամիս համբերա, մեծանան, էլ չեն կանա ծակերով ներս մտնել։

Ինչ արած, պիտի համբերեմ։ Ու այդպես, ամեն տարի։ Բայց այս տարի համբերությունս վերջացավ։

Ասի՝

— Աղաբեկ, ճուտերդ ծախիր ինձ։

— Ցա, էն քորփեքին առնես ի՞նչ անես... Չէ՛, ես ճուտ չունեմ ծախելու։ Պիտի մեծանան մորթեմ ուտեմ։

— Արի մեծը տամ... Ամեն ճուտիդ դիմաց մի հավ տամ։ Փոխենք։

Մտածեց-մտածեց, թե՝

— Դու որ օգուտ չունենա՞ս, ճուտի դիմաց ինչի՞ պիտի հավ տաս...

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆՍ «ՄԱՂԱՐԻՉԸ»

Իմ հարևան Մելիքը մի օր թե՝

— Ընկեր Անանյան, կգրե՞ս միջնորդություն, որ իմ տղա Մայիսին տեղավորեն արհեստագործական ուսումնարանում։

— Կգրե՛մ, դա բարի գործ է...

— Դե գրա...

Նամակս վերցրեց գնաց։

Անցավ մի շաբաթ, մի քանի անգամ հանդիպեց՝ բան չի ասում։

— Մելի՞ք, ի՞նչ եղավ, խոսքս բանի տեղ չանցա՞վ։

— Հայ-հա՛յ, քո խոսքն էլ չանցնի՞։ Դո՛ւզ տարա մինիստրի մոտ, դրի սեղանին։ Կարդաց, բաժնի վարիչին կանչեց մոտը և պատվիրեց, որ ընդունեն։ Ախպերս որ դու ես, Մայիսին տեղավորեցին Նորքի չորրորդ զանգվածի ուսումնարանում։ Հենա դերձակություն է սովորում։

www.a-pdf.com

— Տնաշեն, դե ասա ուրախանամ է՞... Երևում է Նրանց էլ շնորհակալություն չես հայտնել։

— Հայ-հա՜յ, Մելիքը լավության տակ մնացո՞ղ մարդ է։ Մինիստրությունում ասացի՝ ավտոբուսը նստեցեք, հյուր եկեք ընկեր Անանյանին։ Լավ այգի ունի, միրգն էլ հասել է... Որ չգաք՝ կնեղանա...

www.a-pdf.com

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ

www.a-pdf.com

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԱՀՃԻՆ

Ռինդ գյուղի մոտ կաքավներ էինք որսում։ Արևը մայր մտավ, հոգնած ու քրտնած ավտոմեքենա նստեցինք, որ տուն վերադառնանք, հանկարծ կաքավի ձայն լսվեց մոտակա արտից։ Մի կաքավ էր երգում մելամաղձոտ. երևի մեր կրակոցներից ցաքուցրիվ եկած ընկերներին էր փնտրում։

Է՛հ, փորձենք բախտներս վերջին անգամ։ Իջանք մեքենայից և շղթա տված՝ գնացինք երգի ուղղությամբ։ Այդքան զինված մարդիկ տեսնելով՝ երգիչը, իհարկե, ահից խլույն լռեց, բայց անօգուտ, քանի որ երգով արդեն մատնել էր իր տեղը, իր համար արդեն մահվան դատավճիռ էր կարդացել իր իսկ երգով...

Թը՜ռ, սլացավ նա մթնշաղի մեջ, բայց ընկերոջս կրակոցից ներքաց, ապա ուղղաձիգ խոյացավ դեպի երկինք. հասկացանք, որ գլխին է կպել և վերքը մահացու է։ Այսպես, որքան ուժ կար թևերի մեջ պոչի վրա տնկված ուղղահայաց սուրաց դեպի վեր, ապա պտույտ տվեց ու անցավ բլրի հետևը։

— Ափսո՜ս, աղվեսի բաժին կդառնա,— գլուխն օրորեց կրակողը՝ անհետացած թռչունի հետևից նայելով. դե, արդեն մութն ընկնում էր, գնաց-ընկավ ձորը, ո՞նց պիտի գտնես։ Շուտ եկանք, որ վերադառնանք, երբ բլրի կողմից մոտեցող խշշոց լսվեց. վիրավոր կաքավը ետ էր գալիս լրիվ թափով։ Եկավ նետի նման ուղիղ թռիչքով և ընկավ իրեն սպանողի ոտքերի մոտ...

Հենց այդտե՞ղ ուժերն սպառվեցին, թե՞ ուրիշ իմաստ ուներ այդ թռչունի տարօրինակ այցն իր դահճին։

Մենք քարացանք, իսկ ընկերս մեռնող կաքավը վերցնելու փոխարեն, հարցական ինձ է նայում և նրա հայացքը ասում է՝ «Սա ի՞նչ բան է...»։

www.a-pdf.com

Ես այդ դեպքից խիստ ազդված շպրտեցի.

— Չե՞ս հասկանում... ասում է՝ ագա՜հ մարդ, վերցրո՛ւ, տա՛ր թող աչքդ կշտանա...

Ընկերս, իհարկե, վերցրեց և իր պայուսակում տեղավորեց մեռնող թռչունին։ Բայց այդ երեկո նա ոչ մի բառ չարտասանեց։

Շատ էր ազդված իր զոհի այցելությունից...

ԱՆՁԵՆ ՈՐՍՈՐԴԸ

Ինչո՞ւ է որսի եկել այս ծերունին։ Մենք ցրվել ենք ոսկեծուփ արտերում, լոր ենք թռցնում ու կրակում բերկրանքով, իսկ նա՝ քեռի Մուկուչը, նստել է մի ծառի տակ ու նվագում է իր հին սրնգափողը՝ տխուր ու մելամաղձոտ։

Արևը Արագածի թիկունքն անցավ, փչեց իրիկնային հովը, մենք հավաքվեցինք ծառի տակ՝ երջանիկ մեր որսով ու արկածներով։ Իսկ նա կմախքացած մատների դողոցքով դայլայլում է իր սրնգափողը։

Ինչո՞ւ է որսի եկել այս մարդը առանց զենքի և ինչ է նվագում այսպես երկար ու թախծոտ։

— Դարդիման որսորդ էր,— շշնջաց իր հին ընկերը, որ սիրտը լցված բաժակ էր բարձրացրել.— հիվանդ է, ուժ չկա ոտներում, բայց էլի հետներս գալիս է... Սիրտը չի կտրվում բնությունից...

Այո, հիմա պարզ է. իր ջահել օրերի կարոտն է բերել նրան այստեղ։ Կար ժամանակ, երբ նա էլ մեզ նման վազում էր հանդերում և բերկրանքով ճչում ամեն հաջող կրակոցից հետո։ Նամարդ ծերությունը մաշեց-տարավ ուժերը։ Բայց սիրտը մնաց նույնը՝ բնության սիրահար։

Հիմա ամեն հանգստի օր ընկերների հետ տեսության է գնում իր ջահել օրերի ծանոթ վայրերին։

Բայց զենքի տեղ հիմա սրնգափողն է տանում իր հետ...

ԼԵՌՆԱԿԱՆԸ

Վաչագանցի անվանի որսորդ Վաչագը խուստուփի ապառաժոտ լանջին արջի է հանդիպում, մենամարտում հետը և շփոթմունքից գլորվում է ժայռից։

Բժիշկ որտեղի՞ց այն մութ ժամանակները. պառավական

միջոցներով առողջացնում են ջարդվածքները, մնացածն էլ լեռնային օդն է բուժում ու դեռ կարգին չառողջացած՝ նա շարունակում է թափառել խուստուփի արջերի ու քարայծերի հետևից։

Հեղափոխությունից հետո, երբ աշխատում էր Ղափանի հանքերում, Վաշագը հիվանդացավ։ Բժիշկը քննեց ու տվեց իր եզրակացությունը.

— Կողոսկրերից մեկը ջարդվել է ու խրվել թոքի մեջ...

Տնեցիք զարմացան, զարմացավ և ինքը՝ Վաշագը։ Ո՞նց թե կողոսկրը ջարդվել է, ախր նա հանքում վայր ընկած անգամ չկա։

— Գուցե վաղուց է կոտրվել, բժի՛շկ,— հարցրեց նա՝ «այն դեպքը» հիշելով։

— Գուցե... Բայց ինչպե՞ս է կոտրվել, որ չեք իմացել։

Վաշագը գոհ շունչ քաշեց.

— Հա՜, ա՛յ մեր, է՛ն է, հիշո՞ւմ ես, որ խուստուփի քարիցը վեր ընկա... Նոր ենք գլխի, որ ոսկորս կոտրված է եղել... հա՜, հա՜, հա՜...

Եվ հիվանդը խնդաց լեռնցու հաղթ ու լիքը ծիծաղով։

Այդ պահին նա գոհ էր ու հպարտ. կատակ բան չի, է՜, քսան տարի ոսկորը թոքի մեջ խրված շրջել էր սարերում...

ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՆ

Մեր որսորդ Միսաք Իվանիչը Արաքսի ափին մի սագ խփեց։ Թռչունն անցավ գետն ու ընկավ մյուս ափի եղեգնուտը։

Ափսո՜ս, կորավ։ Ո՞նց գնաս, այն ափը արդեն կապիտալիստական աշխարհ է...

Բայց Միսաք Իվանիչի շունը՝ Ներոնը, ոչ կապիտալիզմի մասին գաղափար ունի, ոչ նրան մեզնից բաժանող սահմանի մասին,— առանց վարանելու ջուրը մտավ ու լողում է դեպի մյուս ափը։

— Куда, куда без пропуска?[1],— շան հետևից գոչեց ռուս սահմանապահը. կատա՞կ է անում, թե լուրջ է զգուշացնում։ Ներոնի համար ի՞նչ սահման, ի՞նչ սահմանապահ, համարձակ գնաց մտավ Թուրքիա, սագը վերցրեց բերեց ՍՍՀՄ ու դրեց տիրոջ առաջ։ Ապա իրեն թափ տվեց, ջրի ցայտերը ցրեց

[1] Ո՞ւր ես գնում առանց անցագրի...

www.pdf-pdf.com

շուրջն ու խելոք հայացքով հարցնում է տիրոջը. «Ինչի՞, ինչ է....»։

Այդ օրը թռչուններ շատ խփեց հին որսորդ Միսաք Իվանիչը և Ներոնը մի քանի անգամ «խախտեց սահմանը»։

— Մի տես բուրժուական աշխարհից ինչեր է բերում, է՛,— ժպտալով ասում էր ծեր որսորդը՝ ամեն անգամ շան բերանից որսը առնելիս։

ԱԳԱՀԻ ՎԵՐՋԸ

Մեծամորի ափին մի բադ խփեցի, բայց դեռ չվերցրած՝ եղեգնուտից մի վայրի կատու դուրս եկավ գողեգող և հափշտակեց իմ որսը։

Ա՜յ դու ավազակ...

Մինչ ափսոսանքով գլուխս օրորում էի, կատուն նորից երևաց, այս անգամ ջրի մեջ՝ բադը բերանին. լողալով անցնում է գետը, որ մյուս ափին հանգիստ խժռի իր ավարը։

Կտանե՞ս, ոնց չէ... Մի խումբ կոտորակ ուղարկեցի հետևից՝ փռվեց ջրի երեսին։

Է՛հ, լավ է. համ բադ ունեցանք, համ կատվի մորթի։ Ի՞նչ կատու, մի փոքր լուսանի չափ բան էր, լուսանի նման ականջների ծայրերը փնջավոր։

Ափին մեկնված տրոփում է, իսկ ես նախատում եմ վիրավորին.

— Դե որ ագահությունդ չբռներ՝ ուրիշի որսը չփախցնեիր, Հո՞ այդ օրին չէիր լինի...

ՀՂՈՐԻՑ ՀՂՈՐԸ

Ճնճղուկները սվսվալով քուջուջ էին անում գյուղից դուրս, կալի եզրին։ Մի բազե ցած խոյացավ, խփեց խմբի մեջ և փախցրեց նրանցից մեկին։ Իր զոհին տարավ դիմացի բլուրը, իջավ մի քարի և պատրաստվեց նախաճաշելու։

Բայց նա դեռ մի պատառ բերանը չէր դրել, երբ ամպերից ցած խոյացավ արծիվը և հափշտակեց բազեին՝ իր որսի հետ միասին։

Ծանր-ծանր թևածում էր արծիվը ձորի վրա և նրա ոտքերից կախված էր բազեն, իսկ սրա ճանկերից՝ մեռած ճնճղուկը...

www.epdf.com

Արծիվն իջավ ժայռի բարձր կատարին և սկսեց հոշոտել իր զոհին։ Երբեմն արյունոտ կտուցը քսում էր քարին և իր բարձունքից հպարտ նայում շրջակայքին. անշուշտ գոհ էր իրենից և կարծում էր, որ ինքը հզոր է բոլորից։

Նա այնպես էր տարված իր ավարով, որ չնկատեց, թե ինչպես ես մոտեցա կուզեկուզ և նշան բռնելով՝ կրակեցի վրան։ Թպրտաց ու փռվեց, իսկ բազեն ճնճղուկի հետ միասին ցած գահավիժեց ժայռից։

Եվ եթե խելք ունենար զարնված արծիվը, մեռնելիս կմտածեր. «Չէ՞, իզուր էր հպարտանալս, միշտ կա ուժեղից ուժեղը...»։

ԵՐԲ ՀԱՄԸ ՀԱՆՈՒՄ ԵՆ

Առատաձեռն ու հյուրասեր մարդ էր գարպասցի Համբոն։ Նրա հարևան Մակիչը ճիշտ Համբոյի հակապատկերն էր՝ միշտ աչքը տնկած ուրիշի ունեցվածքին։ Մեկ էլ տեսար պատվիրեց.

—Աղջի, աղջի, մի գնա Համբոյենց տանից մի ման լոբի բեր, խաշու անենք...

— Աղջի, Համբոյենց չորթանը մերիցը լավն է, գնա բեր քալադյոշ եփիր...

Այդ տարին Համբոյի կինը սարում մի մեծ մոթալ ոչխարի անքաշ պանիր էր պատրաստել։ Օր չէր լինի, որ հարևան Մակիչի աղջիկը չգար ամանը ձեռքին, թե՝ «Մի քիչ պանիր տվեք»։

Դե, հո չէի՞ն մերժելու Բայց ամեն բան իր սահմանն ունի։ Որ չափն անց են կացնում, Համբոն որոշում է այդ երեսը պինդ հարևանի ոտքը իր տնից կտրի։ Ու մի օր էլ, երբ Մակիչի աղջիկը ամանը ձեռքին ներս է մտնում, Համբոն ամբողջ մոթալը շալակն է տալիս թե՝

— Տար, աղջիկ ջան, ինչպես երևում է էս պանիրը ձեզ ավելի է հարկավոր, քան մեզ...

Էլ դրանից հետո Մակիչը ղալա՞թ էր արել, որ աղջկանը պանիր ուզելու ուղարկեր...

ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
(Ժողովրդական)

Մի շուն բակից ոսկոր փախցրեց և երբ մոտեցավ գետակին, նրա մեջ տեսավ, ը՞հը՞, հրես մի այլ շուն ոսկորը բերանին նայում է իրեն։ Հասկացավ, որ իր պատկերն է, համփ արավ, որ դի-

www.a-pdf.com

մացինի բաժինը խլի, բայց իր ավարը ընկավ ջուրն ու գնաց խոր հատակը։ Թրջված ու փոշմանած շունը դուրս եկավ ջրից և մոլոր ու քաղցած ոտքերը քարշ տվեց դեպի տուն։

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու ձմեռանոցներից մեկի մոտ փափախը գլխին, մաղոտ ղեմքով մի ծերունու հանդիպեցինք։

— Բարի աջողո՛ւմ, որսի եք գնո՞ւմ,— հարցրեց նա՝ մեր հրացաններին նայելով։

— Հա՛, կխտարի ենք գնում,— հաստատեց ընկերս։

— Բա սելը որդի՞ բերեմ,— հարցրեց ծերունին։

— Հարկավոր չի, բիձա՛, նեղություն մի քաշի,— ղգացված պատասխանեցի ես ու հետն էլ մտածում եմ.

«Տես ի՞նչ ջիգյարով մարդիկ են, է՛, մեր լոռեցիները»։

Ծերունին վեր քաշեց թավ հոնքերը ու զարմացած հարցրեց.

— Բա առանց սելի ո՞նց կլի՛... Բա էնքանը ո՞նց եք բերելու...

Երեկոյան դեմ, երբ լեռներից իջնում էինք հոգնած ու դատարկաձեռն, այն ժամանակ միայն հասկացանք, որ լոռեցին ձեռ է առել մեզ։

«Բա սելը որդի՞ բերե՞մ... Բա առանց սելի ո՞նց կլի՛...»։

ԲԱԽՏԱԿԻՑՆԵՐ

(Որսկան Ավագի պատմություններից)

Արաքսի ափին թաքնված սպասում եմ, թե երբ են երևալու բադերը։

Խիստ ձմեռից հետո միանգամից ձնհալ էր սկսվել և այժմ գետը սառույցի մեծ-մեծ կտորներ է տանում դեպի ցած։

Նայում էի այդ սառույցին ու մտածում, թե որտեղի՞ց են գալիս դրանք, գուցե՞ Ախուրյանից կամ Ղարսաչայից։ Երևի այնտեղ ձմեռն ավելի սաստիկ է եղել։

Հանկարծ իմ ուշադրությունը գրավեցին երկու կենդանի, որ մի դռան չափ սառույցի վրա նստած լուռ ճամփորդում էին։

Մոտեցան ու ես զարմանքով տեսա, որ մեկը աղվես է, մյուսը՝ նապաստակ։ Պպզել են կողք-կողքի և աչքները ջրի ընթացքին՝ սկսվել։ Երևի մտածում են, թե ինչ է լինելու իրենց վերջը։

www.a-pdf.com

Իրենց սառցե «լաստին» նստած, եկան անցան դիմացովս՝ ժամանակավորապես խաղաղ ու հաշտ իրար հետ։ Ընդհանուր աղետը հարկադրել էր առժամանակ մի կողմ դնել «անձնական հաշիվները»։ Այժմ նրանց ընդհանուր թշնամին վարարած ու կատաղի գետն էր...

1951

ԱՂՔԵՐԻ ՈՒԺԸ

Ի՜նչ հզոր է մարդ արարածի հայացքը։ Երևի ամենաուժեղ գազանի համար անգամ մարդու հայացքից ազդու բան չկա աշխարհում։ Այդ բանը ես փորձել եմ որսորդության ժամանակ. իր հայացքով մարդը երբեմն տեղում մեխում է նույնիսկ վիթխարի արջին։

Մի անգամ Մուղանի դաշտում որս անելիս ընթանում էի Սարբսու կոչված գետի ափով։ Իմ մի կողմը գետափնյա եղեգնուտներն էին փռված, մյուս կողմում՝ ուղտափշով ծածկված անապատն էր։

Եղեգնուտում ինչքան ասես վարազներ ու շնագայլեր կան։ Հիմա վարազները թաքնված մրափում են կամ գաղտագողի նայում ինձ։ Բայց հենց մութն ընկնի, դուրս կգան տափաստանը փորելու, իսկ շնագայլերը այնպիսի մի «համերգ» կսկսեն, որ գլուխդ կառնես կկորչես մի տեղի վրա։

Հրացանը ձեռքիս է, բայց մեջը փամփուշտ չկա, գիտեմ, որ ցերեկով եղեգնուտից դուրս ոչ մի կենդանի չկա։ Երբ մտնեմ եղեգնուտը՝ հրացանս կլցնեմ։

Օհո՜, որտեղից որտեղ անապատի փշերի մեջ մի շնագայլ բուսավ։ Ուզում է փախչել դեպի եղեգները, բայց ես իմ հայացքով նրան գամել եմ տեղում։

Մի բոպեի չափ մենք անշարժ ու անթարթ նայում ենք իրար։ Խփե՞մ։ Բայց ոչ միսն է պիտանի, ոչ մորթին։ Չէ՜, պիտի խփեմ. հովիվ Աբասը ինձ գանգատվել էր, որ շնագայլերը եղեգների մեջ թաքնված՝ հետևում են գառներին և նրանցից մեկ-մեկ փախցնում։ Պատահում է, որ ծակում են հոտից ետ մնացած ոչխարի բուկն ու քարշ տալիս դեպի եղեգնուտը։ Չէ, փոքր գազան է, բայց վնասակար, եկ սպանենք։

Աչք-աչքի անթարթ նայում ենք իրար։ Գիտեմ, որ շարժ-

www.a-pdf.com

վեցի՝ կփախչի։ Առայժմ հիպնոսացած է իմ հայացքից ու այնպես է քարացել, որ կարծես չի շնչում։

Ես փամփշտակալից փամփուշտ հանելու համար մի վայրկյան հայացքս իջեցրի ցած։ Այո, ընդամենը մի վայրկյան, և երբ աչքերս վեր բարձրացրի՝ շնագայլը չքացել էր...

Առաջ գնացի. ահա այստեղ էր կանգնած։ Ո՞ւր կորավ, գետնի տա՞կն անցավ թե երկինք թռավ։ Շատ փնտրեցի անապատային փշերի ու նոսր մացառների մեջ՝ չկա ու չկա։

Այդպես, իմ հայացքն էր նրան տեղում մեխած պահում։ Հենց աչքերս խոնարհեցի, վայրկենապես չքացավ։

1951

ՄԻՋՈՐԵՒՆ

Շոգ է, անտանելի շոգ։ Հուլիսի բարկ արևը կրակ է թափում Արարատյան դաշտի վրա։

Մասիսների դիմաց շեկ ժայռերով պատած սարեր կան։ Դեռ արևածագից առաջ ես բարձրացել եմ և թաքնվել ժայռերում. քարայծերի ցերեկային կյանքն եմ ուսումնասիրում։

Կեսօր է, այնպես են տաքացել դեղնագույն ապառաժները, որ ես տեսնում եմ, թե ինչպես ջերմ օդի ալիքներ են ծփում դեպի դաշտ։ Ոչ մի շունչ կենդանի, բոլորն էլ թաքնվել են անձավներում, ճեղքերում, հողի տակ։ Օձերն անգամ գետնի տակ են անցել, այնպես շոգ է բուսականությունից զուրկ այդ վայրերում։

Միայն մի արու արծիվ լուռ ու մռայլ կանգնել է ժայռի ատամներից մեկին։ Իսկ ես ունաբի թոռոմած թփի մեջ թաքնված՝ դիտում եմ այդ արծվին ու մտածում. ինչու արևից չի պաշտպանվում այս թռչունը։ Ժամերով անշարժ նստած է նա իր բարձունքին ու զգոն պահակի նման իմ կողմն է նայում։ Նայում է ուշադիր, կասկածանքով։ Վտա՞նգ է սպասում ինձնից, թևեր ունի, կարող է թռչել, հեռանալ։ Թե՞ պահակ է կանգնած ուրիշների կյանքին, որոնք չեն կարող հեռանալ այստեղից։ Պիտի լուծեմ այդ հանելուկը։

Հայացքով խուզարկեցի ժայռի ծերպերը։ Ահա, արծվի դիմաց, ժայռի անմատչելի բարձունքին չոր ճյուղեր են երևում։

Անցա մի բարձր քարի հետև, նրա թիկունքով գաղտնի վեր

բարձրացա։ Եվ երբ զգուշությամբ գլուխս հանեցի քարի հետևից, տեսա ապառաժի թարեքին, չոր ճյուղերի կույտին կանգնած է մի այլ արծիվ, որ թափահարում էր իր թևերը։ Ի՞նչ բանի է այս թռչունը այրող արևի տակ, ինչո՞ւ չի պատսպարվում անձավի հովում։ Եվ ինչո՞ւ թևերը թափահարում է, բայց չի թռչում։

Զգույշ և աննկատելի վեր ձգվեցի և ուշադիր նայեցի. երկու ձագ կտուցները վեր ցցած՝ հաճույքով վիղները տրամադրել էին այն մեղմ քամուն, որ գալիս էր իրենց մոր թևերից։ Ահա ինչու է անընդհատ թափահարում իր թևերը այս թռչունը. հով է անում ձագերին...

Շոգ է, անտանելի շոգ Արարատյան դաշտի վրա կախված այս ժայռերում։ Բոլոր շնչավորները թաքնվել են շոգից։ Միայն այս փետրավոր ծնողներն են կանգնած միջօրեի արևի տակ. մեկը իր ընտանիքի պահակն է, մյուսը հով է անում սիրասուն ձագերին, սեփական հովհարներով...

1952

ՀՄԱՅԱՆՔ

Գառնիից ոչ հեռու որս էինք անում։ Կրակոցներից սարսափահար կաքավները թափվեցին Ազատ գետի ձորը և ապաստանեցին ժայռերին՝ էլ որս չմնաց։ Ոչինչ, այսպես էլ լավ է. նստել եմ ժայռի գլխին ու ներքևում դեղնող թփերին եմ նայում։

Բայց այս ինչի՞ վրա է այսքան շատ կրակում իմ ընկեր խաչիկը։ Ահա, կուզեկուզ վազում է աշնան նորածիլ արտում, գետնից վերցնում է խփած որսը, նորից կրակում, նորից վազում։ Ո՞ւմ վրա է կրակում, ախր կաքավները լեղապատառ ձորը թափվեցին։

Հետաքրքրությունից բարձրացա շեկ ժայռի գլխին փռված արտը։ Տեղ հասա և զարմացած կանգ առա. կաքավներ կան ընկերոջս գոտուց կախված։ Իսկ նա փայլում է երջանկությունից։

— Հրաշք բան,— գոչեց նա,— կրակում եմ-փախցնում, էլի քիչ հետո գալիս են էս արտը...

Հրաշք չի, բայց հանելուկ է։ Իրոք, ոչ մի կենդանի չի վերադառնում կրակոցի վայրը, այն վայրը, ուր թողել է իր ընկերոջը։

— Էս ժայռի հետևն անցնենք, հիմի էլի կգան...

www.a-pdf.com

Ես լուռ ենթարկվեցի։ Նստած էինք ժայռի ստվերում, ես մտախոհ, նա ալեկոծ ու անհամբեր։ Կաքավները մեզ երկար սպասեցնել չտվին, շուտով թևերի շափշափյուն լսվեց և մեր թաքստոցից տեսանք, թե ինչպես խումբը իջավ արտի ծայրին, մասրենու թփի մոտ։

— Միշտ էնտեղ են իջնում, էն թփի մոտ։ Ի՞նչ բան է, հո մեջը թալիսման չկա՞...

— Ինչի՞ մեջ։

— Թփի...

Լուռ ծիծաղում ենք երկուսս էլ, ապա հրացանները պատրաստելով վեր ենք կենում ու քայլում դեպի կաքավները։

Որսի ներկայությունից ալեկոծված, ընկերս շտապում է, հևում, իսկ ինձ այլ միտք է զբաղեցնում. ի՞նչն է այդ թռչուններին գրավում դեպի մահվան վայրը...

Ընկերս կրակեց և վազեց, իսկ ես լուռ շրջում եմ մասրենու շուրջը, ցորենի կանաչ ծիլերն եմ պոկում և ուշադիր նայում, հոտոտում. ի՞նչ ուժ կա այս կանաչի մեջ, որ դեպի իրեն է քաշում կաքավներին,— ախր սրա նման արտեր շատ կան Գառնու շրջակայքում, ինչո՞ւ են կաքավները կենտրոնանում հատկապես այստեղ։

Միտքս զբաղված էր այդ հարցով, երբ հայացքս կանգ առավ մի կարմիր բանի վրա. մասրենու տակ մի լաթի կտոր կար ընկած։ Ով գիտի երբ մի աղջիկ այս թփից մասուր քաղելիս իր հագուստի կախված ծվենը պոկել-թողել է այստեղ։

Արևն ամպի կտորի տակ էր, երբ նայեցի այդ հին, խունացած ծվենին։ Բայց երբ քիչ հետո իր պայծառ դեմքը դուրս հանեց ամպի տակից և նրա պռնկով իր ճառագայթների շեկ խրձերը ուղղեց այդ կարկատանին, խունացած կտորը շողաց լեռնային կարմիր կակաչի նման։ Այդ պահին նա նման էր և մայիսյան վառ կարմիր վարդի, որ համեստությունից թաքնվել էր թփի տակ։

Միակ կարմիրը շրջապատի աշնանային գորշության մեջ...

Ահա ինչն է գրավում ժայռերի քնքուշ երգիչներին։ Նրանց ևս հմայում է գեղեցիկը։

1954

www.a-pdf.com

Իր նաղանքներով, իր չքնաղ տեսքով, և հեռո՜ւ-հեռո՜ւ երկրներից ժամանած թռչունների երամներով Սևանը քաշում է ինձ դեպի իրեն։

Ես նրան հաճախ եմ այցի գնում, և՛ տարվա այն եղանակին, երբ զմրուխտ են հագնում նրա ափերը, երբ Գեղամա լեռների վեհ գագաթները ցոլանում են նրա վճիտ հայելու մեջ, իսկ ամենից հաճախ այն ժամանակ, երբ մերկանում է նրա շրջապատը, բայց ինքը զարդարվում է Հյուսիսից հյուր եկած թռչունների խայտաբղետ երամներով։

Չքնաղ է Սևանը տարվա բոլոր պահերին, թե՛ գարնան արևոտ օրը, երբ նա մեկնված է լեռների գրկում, թե՛ ամռան աստղազարդ գիշերին, երբ զարդարված է երկնից ցոլացող լուսատուներով, թե՛ աշնան հողմերին, երբ մոնչում է փրփրաբաշ ալիքներն առափնյա ժայռերին զարնվելով։

Հաղա՜ր գեղեցկություն ունի Սևանը. պիտի ապրես նրա ափին և տեսնես, թե ինչպես շարունակ փոխում է իր երանգները, իր տրամադրությունը՝ մերթ հեռում է զայրացած, մերթ ժպտում հեզանազ, մերթ խոժոռում հոնքերը և շանթ ու կրակ արձակում, մերթ այնպես պայծառ ցոլում, որ կարծես ոչ թե արեգակն է ցոլանում իր ջրերում, այլ ինքն արեգակ է՝ իջած երկնից...

Երբ անվրդով նիրհում է իր զմրուխտ ափերի մեջ, չես կարող որոշել երկի՞նքն է ցոլում նրա մեջ, թե՞ ինքը՝ երկինքն է իջել հանգստանալու Գեղամա լեռների շուրջպարի մեջ. կապույտ է նա երկնքի նման, արև ունի իր խորքում, իսկ գիշերները իր ջրերում լողացող անթիվ աստղեր ու լուսին։

Դե ինչպե՞ս նստես Երևանի շոգում, երբ այդպիսի մի գեղեցկուհի է սպասում քեզ լեռներում...

ՎԵՐՋԱՊԵ՞Ս...

Ամառը հանգստանում էի Դեբեդի կանաչ ափին, մեղվաբուծական ֆերմայից ոչ հեռու։ Հաճելի էր այդ ձորում, ուր միայն գետի միալար վշվշոցն էր լսվում, մեկ էլ՝ մեղուների ախորժալուր բզզոցը։ Միայն երբեմն շրջապատի անդորրը խանգարում էր անցնող մի գնացք, որ վիշապի նման փնչալով սո-

www.a-pdf.com

զում-անհետանում էր մոտակա կեռմանի ետևը, որից հետո նորից վերականգնվում էր շրջակայքի անդորրը։

Մեղվանոցի պահակը մի փոքրիկ կարմիր շուն ուներ, փոքրիկ, բայց շատ հպարտ։ Այնպես համարձակ ու արժանապատվությամբ էր նայում բակի կենդանիներին, կարծես նրանց տերը ինքը լիներ։

Ամեն անգամ գնացքը անցնելիս, այս շնիկը բարձր հաչոցով վրա էր հասնում-հարձակվում ու հալածում մինչև կեռմանի ետև անհետանալը։ Եվ, որովհետև ոչ մի գնացք կանգ չէր առնում մեղվանոցի մոտ և իր կյանքում կանգնած գնացք չէր տեսել,— նրանք շարունակ գալիս-անց էին կենում,— ուստի այդ շնիկն իր կարճ խելքով կարծում էր, թե իբր գնացքները հատկապես իրենի՛ց են փախչում այդպես արագ ու խուճապով։

Նման թյուր կարծիք ունենալով իր ուժի մասին, ամեն անգամ գնացքը հալածելուց հետո շնիկը վերադառնում էր հպարտ-հպարտ պոչը ոլորած-մեջքին դրած ու արհամարհանքով նայում էր մեզ, որ կնշանակեր՝ «Իմ առաջ իսկի էն ահագին վիշապը կանգ չի առնում, դուք ի՞նչ եք որ...»։

Դեռ շատ կզոռոզանար այդ մեծամիտը, եթե մի դեպք չգար ասելու, թե որքան չնչին արարած է ինքը։

Մի օր էլ, երբ հարձակվեց շոգեկառքի վրա, չկարողացավ զսպել իր թափը և ընկավ գնացքի առաջ, զույգ գծերի մեջտեղը։ Հիմի էլ հերթը իր հակառակորդինն էր. շոգեքարշը փնչոցով ու սուլոցով վրա հասավ-անցավ շնիկի վրայով։ Կենդանին երկու գծերի մեջտեղ ահից կուչ էր եկել։

Եվ երբ գնացքն անցավ ու ինքը նորից լույս աշխարհ դուրս եկավ, երկյուղով նայեց չորս կողմ ու պոչը ոտքերի արանքը կոխած՝ մինչև իր բույնը մի շնչում փախավ։

Այն էր ու այն, այդ շնիկն այլևս չէր հարձակվում գնացքների վրա։ Երևի նոր միայն իր կաշվի վրա զգացել էր նրանց ահռելի ուժը։

Այդ դեպքից հետո միանգամայն կոտրվեց շնիկի զոռոզությունը. մարդկանց ու կենդանիներին նա այլևս չէր նայում արհամարհանքով, վերևից։

Վերջապես հասկացել էր, թե ով է ինքը...

1957

www.a-pdf.com

ԵՐԵՎԱԿԱՅՈՒՄ Է...

Մեր գյուղի հանդերում մի շատ փոքր թռչուն կա, որին տեղացիները թիշ են անվանում։ Փոքր ընկույզի մեծությամբ, կարճ պոչով մի կլորիկ արարած է դա, որ լոբու հատիկների չափ մանր ձվեր է ածում, իսկ ձայնն այնքան նվազ է, որ ճչոցը տասը քայլի վրա հազիվ է լսվում։

Կովարար, աքլորացող մարդու ծաղրելիս, մեր գյուղում ասում էին.

— Մարդ հո չի, թշի որձակ է...

Այո՛, «թշի որձակը» չնայած իր մատնոցաչափ մարմնին, այնպես է աքլորանում, որ կարծես արծիվ լինի հաղար անգամ փոքրացած։

Ճիշտն ասած, այդ թռչնիկը հենց արծիվ էլ երևակայում է իրեն։

Մի անգամ հորս հետ սարից իջնելիս պատահեցինք այդպիսի աքլորներից մեկին, անհանգիստ թփից թուփ թռչելիս։ Անհանգստանալու իրավունք ուներ այդ փոքրիկ արարածը, որովհետև ամպերը կուտակվել էին և տեղատարափ անձրև էր սպասվում։ Երկնքում հրեղեն լախտեր երևացին, ձորը դղրդաց ամպի գոռոցից, բայց թիշը թփերում թաքնվելու փոխարեն, շուռ եկավ պառկեց մեջքի վրա և մանրիկ ոտքերը ցցեց վեր...

Հայրս նայում է ու բեղի տակ ծիծաղում։

— Հասկացա՞ր ինչ է անում,— հարցրեց ինձ։— Ոտքերը դեմ է անում, որ երկինքը փուլ չգա...

Տարիներ անց, մի անձրևոտ օր ես նորից տեսա, թե ինչպես թիշը մեջքով հենվել է գետնին, իսկ ոտքերը «դեմ է տվել ամպին»։

Իսկապես, այդ չնչին արարածը երևի կարծում է, որ եթե ինքը ոտքերը դեմ չտա ամպերին, երկինքը փուլ կգա աշխարհի վրա։

Մարդիկ կան, որ խղճուկ են այդ թռչնակի նման, բայց երևակայում են, որ իրենց դերը մեծ է, այնքան մեծ, որ եթե իրենք չլինեն, երկիրը փուլ կգա...

1957

www.a-pdf.com

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Մայրաքաղաքի կենտրոնով անցնում է խաղաղ ու լայնահուն Վլտավա գետը։ Նրա վրա փառահեղ կամուրջներ կան, որոնցով գիշեր-ցերեկ աղմուկով ու զրնգոցով անցնում են մեքենաներն ու էլեկտրաքարշը։ Բայց դա չի վախեցնում վայրի բադերին, նրանք նույնիսկ բույն են շինում գետափի թփուտներում։ Իսկ երբ ձագերը մեծանում են, նրանց զբոսանքի են տանում ափին զուգահեռ մեկնված բլուրները։

Մի անգամ, երբ բլրից նայում էի այդ հրաշք քաղաքին, նկատեցի, որ գետի ափին հանկարծ կանգ առավ երթևեկությունը։ Մի քանի րոպեում տրամվայները պոչ կազմեցին իրար հետևից, ավտոմեքենաները կուտակվեցին, կանգ առած բազմությունը սկսեց աճել։ Ցաց իջա։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում էին մարդիկ իրար։

Եվ, որպես պատասխան, «պոլիսմենը» մատով ցույց էր տալիս ճամփի մեջտեղով դանդաղ քայլող մի թռչունի։ Դա մի վայրի բադ էր, որ իր ձագերին թփուտներից հանել դեպի ջուրն էր տանում։ Բայց որովհետև ջրի և թփուտի միջև բանուկ ճամփան էր ընկած, ստիպված էր լայնքով կտրել-անցնել այդ ահավոր խոչընդոտը։ Պիտի անցներ երկյուղով, սարսափով. չէ՞ որ մեքենաներն են սլանում այդ ճամփով։

Դանդաղ էր գնում այդ թռչունը. ճուտերը դեռ փոքր էին։ Ահով նայում էր ամեհի մեքենաներին, մարդկանց բազմությանը և շտապեցնում իր ձագերին։ Իսկ սրանք՝ հե՛չ, դանդա՛ղ, հանգի՛ստ, օրորվելով՝ տոտիկ-տոտիկ...

Գալիս էին նորանոր մարդիկ ու հարցնում էին անհամբեր.

— Ի՞նչ է պատահել։

— Բա՛դն անցնում է իր ճուտերով...

Եվ այդ պատասխանը պատվարի նման կանգնեցնում էր մեքենաներին ու մարդկանց։

Վայրի բա՛դ է անցնում իր ճուտերով, ինչպե՞ս կարելի է ճամփա չտալ նրան...

1958

www.a-pdf.com

Ասում են՝ «Դունչդ ամեն տեղ մի մեկնիր»։ Իսկ գայլի մասին կարելի է ավելացնել. «Ամեն ծակից պոչդ մի կախիր»։

Բայց դե ո՞նց չկախի. փարախ մտնելուց առաջ կտուրի անցքից պիտի պոչը կախի, որ իմանա հատակը հո շատ հեռու չի՞։ Խորությունը պիտի չափի պոչով. չէ՞ որ իր թալանն անելուց հետո փարախից դուրս պիտի գա։

Այդ «մեթոդով» խորությունը չափող մի գայլի ես հանդիպել եմ փոքր ժամանակս։

Մեր Ջեյրան կովը ծնել էր։ Ես ու հայրս ճրագով մտանք գոմը, հորթին գցեցինք մոր տակը, սկսեց մշմշալով ծծել։ Ճրագը ձեռքիս սյունն ի վեր կանգնած նայում էի, Ջեյրանը պոչով տվեց ճրագը ձեռքիցս ցած գցեց։ Ինչո՞վ վառենք, դե այն տարիներին լուցկին որտեղի՞ց։ Մնացինք խավարի մեջ, միայն երդիկից լուսնի աղոտ շողի մի շերտ ընկել էր հատակին։ Հանկարծ այդ շերտն էլ չքացավ. ո՞վ փակեց անցքը... Հայրս մութի միջով առաջ գնաց ու կանգնեց երդիկի տակի սյունն ի վեր։ Մեկ էլ, օհո՞, հրեա սյան լանջով մի բրդոտ պոչ ցած կախվեց։ Հայրս բռնեց պոչից։ Հիմի նա ցած է քաշում, կենդանին՝ լեղապատառ դեպի վեր։

— Ադա էս անտերն ինձ զոռում է, հիմի պոչը կպոկվի կփախչի, հորթի թոկը դեսը բեր...

— Ապի՛, էդ ինչի՞ց ես բռնել,— հետաքրքրվեցի ես։

— Ջահրումարից եմ բռնել... էն թոկը դեսը տուր։

Հորթի պարանը տվի իրեն, սկսեց բանակցություններ վարել կտերը շարշարվող շորքոտանի ավազակի հետ.

— Հիմի վեր շես գալիս, էլի՛...

Սարսափած կենդանին վեր-վեր է թափահարում, որ գերի ընկած պոչն ազատի։

— Դե լա՛վ, որ գալիս չես, կաց ոտդ սնիցը կապեմ...

Գայլի հետևի մի ոտքը պարանով կապեց սյունից ու հանգիստ ասաց.

— Մնա՛, առավոտը կգամ...

Ու դուրս ելանք գոմից։

Տեսա՞ք ուր է տանում պոչն ամեն տեղ մեկնելը...

1958

www.a-pdf.com

Ապրիլի մի արևոտ օր, երբ լռահավի որս էի անում Ռեհանլվի ճահիճներում, ուշադրություն գրավեց եղեգնուտի ափին կանգնած մի բադ։ Վիզը երկարած ինձ էր նայում։ Նրա փետուրներից ճանաչեցի, որ մարի է։ «Երևի բույնը այստեղ է»,— մտածեցի ես և հրացանս ուսս գցելով, շուռ եկա։ Բայց ո՞ւր է դրա «ամուսինը», ախր տարվա այս եղանակին պիտի որ հետը լինի... Ետ նայեցի՝ բադն օդ բարձրացավ, հետևից էլ ամուսինը։ Ա՜յ քեզ բան, թաքնվա՞ծ էր, «կի՞նն» էր ուրեմն պահակություն անում... Ա՜յ քեզ ամուսի՜ն, ամո՜թ, ամո՜թ...

Զույգը պտույտ տվեց և իջավ մի այլ եղեգնուտում։ Չհետապնդեցի. բադի գարնանային որսն արգելված էր։ Քիչ անց, ձին հեծած մոտեցավ ճահճում արածող նախրի պահապանը՝ ադրբեջանցի մի պատանի։

— Գնանք ցույց տամ, էնտեղ իջան, ա՛յ,— հայերեն դիմեց ինձ։

Չեմ խփի, իհարկե, բայց պիտի մի բան պարզեմ, հո սխա՞լ չտեսա, ախր բնության մեջ սովորաբար արուն է պահակ կանգնում։ Նա ավելի ուժեղ է, անվախ... Երևի տեսողության սխալմունք էր, գնամ նորից ստուգեմ։

Ձիու ետև թաքնվելով, առաջ գնացի և ահա, կարճ ու նոսր եղեգների մեջ մի բադ ամբողջ հասակով մեկ կանգնած ու վիզը երկարած՝ հսկում է։ Միայնակ է, ուրեմն ո՞ւմ է պահակ կանգնել, ինչո՞ւ չի թռչում ազատում իր կյանքը։ Եթե ձագ ունենար, հասկանալի կլիներ այս մայր թռչունի արարքը։

— Աքլորին տեսնո՞ւմ ես,— հարցրեց տղան՝ մատը մեկնելով։

— Ա՜ա,— ժպտացի ես,— տես ո՞ւմ է պահակ կանգնել հիմարը...

Մինչ «կինը» վիզը երկարած հսկում էր, «ամուսինը» ահից հպվել էր գետնին և հուրհրատին տվող իր շքեղ փետուրներն աշխատում էր թաքցնել գորշ եղեգների ու չորացած խոտերի մեջ։ Վախկո՜տ... փոխանակ ինքը հսկելու ընկերուհուն, գլուխը խոթել է խոտերի մեջ ու սսկվել։ Իսկ «ընկերուհին» անվա՜խ, հպա՜րտ, զգաստ նայում է մեզ և չի էլ մտածում ընկերոջը թողնել ու հեռանալ վտանգից։

— Վախկո՜տ...

www.a-pdf.com

Խոսքս խլացավ որոտի մեջ։ Շուռ եկա։ Կրակողը ընկերս էր։ Մայր բաղը լեղապատառ թռավ, իսկ ես նախատում եմ ընկերոջս։

— Ինչո՞ւ ես կրակում, ախր արգելված է։

Ու ծաղրեցի.

— Համա թե սպանեցիր, հա՞...

Նա ծայր աստիճան շփոթված էր։

— Ափսո՞ս...

«Բայց ո՞ւր մնաց այն «Քաջ Նազարը», ինչո՞ւ չթռավ,— մտածեցի ես, առաջ գնացի և ի՞նչ տեսա. ահա «Նազարս» հենց իր թաքստոցում էլ փչել է հոգին։

Վեր բարձրացրի՝ ընկերս զարմանքից քարացավ։

— Էդ ի՞նչ բան է...

Ախր այն բաղը, որի վրա կրակել էր, ողջ ու առողջ թռավ, իսկ սա՞ որտեղից...

Նայում էի ընկերոջս ապշահար դեմքին ու անձայն ծիծաղում։

— Սա Նազարն է, թռչունների մեջ էլ նազարներ կան,— դանդաղ սկսեցի իմ բացատրությունը,— էն էլ, որ թռավ Ուստիանն էր։ Նազարը կուչ էր եկել խոտերի մեջ, իսկ կինը պահակություն էր անում։ Բայց ի՞նչ արդար կրակոց է՞ր... Զարմանում եմ, թե գնդակն ո՞նց գտավ գլուխ պահող վախկոտին...

1959

ՊԱԿԱՍՈՒՄ ԷՐ ՄԻ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՆ...

Սևանի ա՞րևը.... Այսքան ցուրտ երկիրն այսքան էլ թեժ ա՞րև կունենա։ Պատահում է, որ հուլիսին անգամ դողդողում ենք իմ ձկնորսական նավակում։ Բայց հենց դադարում է փոթորիկը և արևը դուրս է նայում ամպերի տակից, գոլորշին բարձրանում է մեր վրայից, արագ չորանում են մեր թրջված հագուստներն ու թիկունքներս այրում է, ո՞նց է այրում. որքան որ բաց տեղ գտավ «կաշվահան» է անում։

Այդ դեռ ոչինչ, կարևորը որսն է. որտե՞ղ թաքցնենք մեր որսած իշխանները, որ չփչանան։

Ընկերս լավ միջոց գտավ։ Կարթից հանում է բռնված ձուկը, գցում ցանցատոպրակի մեջ ու կախում նավակի կողից.

— Դե հիմի գնացեք լողացեք...

Այս լավ եղավ. ջրի մեջ կենդանի կմնան ու երեկոյան թարմ

www.a-pdf.com

ձուկ կտանենք Երևան, բոլորովին թարմ, անգամ առավոտվա բռնածները։

Վերջապես ձուկը փչանալուց փրկելու միջոցը գտնված է, դե հիմի եռանդով շարժիր փայլախայծդ, իսկ բռնվածները թող շարունակեն ապրել ցանցի մեջ, նրանց համար մեկ չէ՞, հո ջրից դուրս չեն։

Մի ժամանակ կռացա ցած նայեցի տեսնեմ ինչ վիճակում են իմ գերիները։ Այ քեզ բա՜ն, անշարժ մեկնվել են՝ ճերմակ փորները դեպի երկինք։ Սատկել ե՞ն... Ինչո՞ւ։ Ախր իրենց հարազատ տարերքի մեջ են, ի՞նչն է պակասում այդ արարածներին։

Իհարկե ջրի մեջ ամեն բան կար նրանց կյանքի համար։ Բայց մոռացել էի, որ պակասում է մի շատ կարևոր բան՝ ազատությունը...

1961

«ԱՐԵԳՆԱՂ...»

Մեր հարևան Մուկուչը հովիվ էր հարուստ Ենոքի տանը։ Մի տուն լիքը մանուկներ ուներ Մուկուչը, որոնց եթե թոնիրը լցնեիր՝ շորահոտ չէր գա... Բոբիկ, տկլոր, կիսաքաղց...

Նրանց մայրը, որ սկզբում սև աչք-ունքով, լիքը թշերով հարս էր, երեխաների հոգսից տարեցտարի հալվեց, «չուփ դառավ»։ Վեց երեխա՜... Շորը հո չկար ու չկար, բա այդքանի ուտելի՞քը ոնց հասցներ խեղճ Արեգնաղը։ Հասկ էր հավաքում հնձած արտերից, բրիչով փորփորում պալարներ էր գտնում «կարտոլատեղերից», անտառից վայրի պտուղներ էր բերում։ Այնքան կռացած գործ էր արել, որ խեղճի ողնաշարը ծռվել էր և նա ինքն ամբողջովին ժամանակից շուտ ծերացել էր, թեև երեսունհինգը նոր էր բոլորել։

Տեսնելով, որ ծայրը ծայրին չի հասցնում, դիմում էր միամիտ խորամանկության.

— Քնեցե՛ք, բալեք ջան, իրիկվա կերածը կորած ա...

Ու հեքիաթներ էր պատմում, վերացնում այս աշխարհից, որ քնեն։

— Իսկ երեխաների հա՞յրը,— կհարցնեք դուք։ Նրա «պաշտոնն» այնպիսին էր, որ, իր ասելով, տուն չպիտի գար ո՛չ ամառը, ո՛չ ձմեռը, ո՛չ ցերեկը և ո՛չ էլ գիշերը. հոտը եթե մոտը շա-

www.a-pdf.com

բունակ աթթուն պահապան չունեցավ՝ գայլերի բաժին կդառնա։ Նա նույնիսկ հագուստը ամիսներով չպիտի հաներ՝ այդպես էր շոբանը հին գյուղում։

Ասենք, սիրտ էլ չուներ տուն գալու։ Հենց ոտը շեմքին էր դնում, երեխաները փաթաթվում էին ծնկներին, թե՝

— Ապի՛, ի՞նչ ես բերե՛լ...

Արեգնազն էլ առաջվա նման սիրալիր չէր, միշտ իր բախտից էր գանգատվում ու նախատում էր, որ Մուկուչը սարերում ապրում է իր համար, անդարդ ու անհոգ։

Ու Մուկուչը նեղվում էր տանը, շատ էր նեղվում։ Մի քանի մխիթարական խոսք էր ասում կնոջը, դրպանից վայրի միրգ էր հանում բաժանում երեխաներին ու շտապում էր վերադառնալ իր հոտի մոտ։

Այնտեղ լավ էր, ազա՛տ, օդը շնկշնկա՛ն... Գայլի կերածի մի մասը տեղն ու տեղը խորովում էր ուտում, մնացածը տանում տիրոջը, թե՝ «էս ա թողել անիրավը»։ Կամ տոպրակից հանում էր պղնձե թասը, փչում-մաքրում էր հացի փշրանքից, մեջը փշշալով կթում էր թուխ ոչխարներից երկուսին-երեքին ու գլխին էր քաշում։

Դրանից էլ Մուկուչի վիզն էլ էր կարմիր, դեմքն էլ, իսկ ձայնը այնպես զորեղ էր, որ դմբդմբացնում էր սար ու ձոր։

Կուշտ ուտելուց հետո, սղալում էր շեկ բեղերը, հոտը փռում էր գյուղի դիմացի լանջին ու այնտեղից ձայն էր տալիս.

— Արեքնա՛զ, ես հլա լավ եմ, դո՞ւք ոնց եք...

— Ա՛յ մարդ,— ասում էին,— ախր էն երեխեքը...

— Երեխեքին ի՞նչ կա որ, հավերի հետ քուջուջ անելով կմեծանան,— հանգիստ պատասխանում էր Մուկուչն ու կուշտ մարդու հզոր ձայնով կրկնում իր հարցը հեռու լանջերից.

— Արեքնա՛զ, ես լավ եմ, լա՛վ... Դո՞ւք ոնց ե՛ք...

1961

ՀԻՄՆ ԱՐԵՎ ԱՍՏՎԱԾՆ

Լույսը նոր էր բացվել, երբ նավակս փչեցի-ուղղի և հրեցի ջուրը։

Լճի մռայլությունը հետզհետե մեղմանում է, լույսն առատանալու հետ բացվում է Սևանի «ունքամեջը» և անուշ քնից

www.apdf.com

արթնացողի ծույլ ու անհոգ ժպիտ է նշմարվում դեմքին։ Իսկ երբ արեգակը լեռան թիկունքից դուրս է ելնում և իր հզորագոր շեկ ճառագայթներով ողողում է լիճը ծայրեծայր, մի տեսնեք, թե ի՞նչ նազանքներով է շարժվում, խայտում Սևանը՝ առավոտյան հարդարանքով զբաղված դշխուհու նման։

Ապա վրա է նստում ու ակնածանքով ու խնդագին ողջունում Արև աստծուն՝ մեր հեթանոս նախնիներին նման։ Իսկ նա՝ աստվածների աստվածը, երկնի անհունից ողջունում է Սևան գեղեցկուհուն, և նրա ողջույնից անորսալի խնդությամբ է լցվում լեռների շուրջպարի մեջ պարփակված երբեմնի հովիտը։ Սևանն ափից ափ լցվում է արթնացած բնության զրնգոցով. ջրի ոգիները կարծես միաբերան հիմն են երգում տիեզերական լուսատուին...

Ի՞նչ փառահեղ է արևածագը Սևանի վրա... Եվ ինչ զարմանք, որ դիմացիս ավանդական կզզու կատարից քրմերի բազմությունը փառաբանել է Արև աստծուն, ամեն արևածագի ծունր է իջել ու երկրպագել բնության մեծ արարչին և բոլոր կյանքերին կյանք պարգևողին։

Այսպիսի փառահեղ պատվածը իրոք որ արժանի է ամեն մեծարանքի...

Ու այդ աստվածը, երբ իր բեհեզյա ծիրանին ուսին Այծեմնասարի ուսից բարձրացավ դեպի վեր, Սևանա բնությունը լրիվ արթնացած էր արդեն և սկսվել էր նրա բոլոր շնչավոր բնակիչների առօրյան։ Որորները հրճվալից ճչում էին օդի անտեսանելի հոսանքներում անճիգ լողալով, կոնչում էին բադերը բերկրանքից, լճից դուրս էին ցայտում իշխան ձկներն ու՝ շլոփ-շլոփ՝ ցած ընկնում, շոգենավերը՝ բը՛րթ,-փը՛րթ, բը՛րթ-փը՛րթ՝ ակոսում էին խաղաղ ջրերը՝ ճերմակ փրփուրե լայն ժապավեններ թողնելով իրենց ետևից։ Իսկ հանդիպակաց սարից լսվում էր հին ուռկանավարի հատ-հատ հրահանգը.

— Յավա՜շ, յավաշ քաշեցեք, ձուկը չխրտնի։ Քար թալ, քար թալ, թող ձուկը դեպի խաղինեն փախնի...

Մանկուց ինձ ծանոթ այդ ձայներով այնպես եմ տարվել, որ մոռացել եմ թիակներս, կարթս, մտադրությունս։ Եվ քսմու ուժով այնքան եմ հեռացել ափից, որ հազիվ է նշմարվում ավազներին մեկնված մուշտակե «գլդորանը»։

www.a-pdf.com

Խավարից ոճիր է ծնվում, խավար է սիրում և՛ գազանը, և՛ չարագործը։

... Մթնեց։ Սրթսրթալով տեղավորվեցինք մի փոքր անձավում։ Շրջակայքում փայտ չկար, որ խարույկ վառեինք։ Երկու մոմ ունեինք, վառեցինք, դողալով հաց կերանք և իրար հպվելով, կուչ եկանք քարե հատակին։

Դրսում քամին դադարեց և սկսեց ձյուն տեղալ. խավարի սև վարագույրի վրա, մոմերի լույսի տակ ճերմակին էին տալիս ցած իջնող փաթիլները։ Է՛հ, որ սկսեց ձյուն գալ, սառնամանիքը կկոտրվի, կդիմանանք մինչև լույս և լուսադեմին կշարունակենք մեր որսը։

Շատ էինք հոգնած ու այնպես շուտ թմրեցինք, որ ծուլացանք վեր կենալ ու հանգցնել մոմերը։ Միայն մեր ընկերներից մեկը, կիսաքուն ու ծուլ-ծուլ՝ հենց պառկած տեղից սկսեց փչել։ Մոմերից մեկը հանգավ, իսկ մյուսի բոցը կռանում էր, բայց չէր հանգչում։ Այդպես էլ քուն մտանք առանց մոմը հանգցնելու։ Առավոտյան, երբ դուրս եկանք մեր պատսպարանից, շրջակայքը ճերմակ սավանով էր պատած։ Նայեցինք ձյունին ու սարսռացինք. հովազը մեր մարդկային հոտից գայթակղված, գիշերը եկել է կանգնել այրի շեմքին, հոտոտել է, զրգռված ախորժակով նայել քնած մարդկանց, բայց չի համարձակվել մտնել այն լուսավոր այրը։ Եվ մենք մտածեցինք. ի՞նչ լավ էր, որ լույսը չհանգավ։ Այո՛, մեր կյանքը փրկել էր այն աղոտ լույսը...

ԲՆՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԸ

Այդպիսի բարձր կոչում շնչավորներից միայն մարդն ունի։ Գրողները, գիտնականները, մամուլը, բոլո՛ր միահամուռ կերպով պնդում են, որ մարդն է բնության թագավորը։ Իսկապես, իրեն արժանի անուն։ Բա որ թագավոր չլինի, այսքան կռիվներ կսարքի՞, այսքան մարդ կկոտորի՞։

«Էլ ինչ թագավոր, որ կռիվ չանի...»։ Այո, ա՛յդ իմաստով մարդը, իրոք, բնության ինքնիշխան թագավորն է...

Եվ իր իշխանությունը չի կիսում ոչ մի այլ արարածի հետ, քանի որ բոլոր արարածներին իրենից շատ ցածր է դասում,

www.a-pdf.com

այնքան ցածր, որ նրանցից ոչ մեկին, նույնիսկ ամենից խելացիին իր արքայական պալատում ամենացածր պաշտոնն անգամ չի տալիս։ Կարծես թե վիրավորված այն անհերքելի իրողությունից, որ ինքն առաջ է եկել կենդանիներից, հիմա էլ զանազան տեսություններ է հորինում ինքն իր արմատից՝ կենդանական աշխարհից պատնեշելու համար։ Այդ տեսություններից ամենից մոդայիկն այն է, որ ինքն օժտված է գիտակցությամբ, իսկ կենդանին զուրկ է գիտակցությունից։ Դե գիտակցությունից զուրկ արարածին ինչպե՞ս մասնակից անի իր թագավորությանը։

Իրավունք ունի կենդանուն անգիտակից համարելու։ Ինքը այնքան հզոր ու գիտակից է, որ բռունցքաչափ մի ռումբով կարող է մի մայրաքաղաք վերացնել երկրի երեսից՝ իր միլիոնանոց բնակիչներով։ Իսկ ամենախելացի կենդանին հազիվ սպանի մի քանի իր նմաններին։

Դե մա՛րդ, եկ այդպիսի անճարակ արարածների թագավորը մի՛ համարիր քեզ..

ՀՊԱՐՏ ԴՇԽՈՒՀԻՆ

Մանուկ ժամանակս, երբ ապրում էի Սևանի մերձափնյա գյուղերից մեկում՝ մեր խնամոնց տանը, այսպիսի դեպք պատահեց։ Լիճը սառավ ծայրեծայր և նրա վրայով սկսեցին երթևեկել եռաձի թեթև սահնակները, նույնիսկ ծանր բեռնած ֆուրգոնները։ Այն ժամանակ լիճը հազվադեպ էր սառչում, որովհետև ավելի խորն էր, ավելի շատ ջուր ուներ, հետևապես և ավելի շատ արևի էներգիա էր կուտակում իր մեջ։ Բայց այդ ձմեռ խիստ սառնամանիք էր։ Այդ էլ ոչինչ, երբ ալեկոծվում է լիճը, երբ շարժման մեջ է, ոչ մի սառնամանիք նրան տեղում քարացնել չի կարող, որովհետև շարժումն էներգիա է ծնում։ Սակայն մի գիշեր լիճը հանդարտվեց, նրա շնչին երերումներն անգամ կանգ առան և հենց որ կանգ առան՝ բաց տիեզերքի սառնամանիքն անմիջապես քարացրեց նրան։ Այդպիսով լիճը սառավ ծայրեծայր և նրա վրայով սկսեցին երթևեկել սահնակները և ֆուրգոնները, որոնք գնում էին Բայազետ, Փաշաքենդ, Բասարգեչար ու այնտեղից վերադառնում էին դարձյալ լիքը բեռներով։ Իսկ ճանապարհը հա՛րթ, ո՛չ ձոր, ո՛չ քար, ո՛չ դարիվեր ու վայրէջք։

Բարկացավ Սևանը այդ երթևեկությունից անհանգստացած ու, հիշում եմ, մի քանի շաբաթվա ընթացքում մի երկար սառցե

www.a-pdf.com

պատնեշ քաշեց ճամփորդների առաջ։ Ինչպե՞ս։ Ճեղքվեց սառույցը լճի ամբողջ լայնքով մեկ և սառույցի տակից դուրս հորդած ջուրը սառնամանիքից քարացավ։ Ստեղծվեց մի երկար սառցե պատ, վեր ծառացած ու անմիջապես քարացած մի վիթխարի ալիք, որ փակում էր սահնակների ճամփան։ Դա լճի զգուշացումն էր իր ափերի բնակիչներին։ Բայց ագահ փոդրաթշիներն ու առևտրականները իրենց բեռները տեղ պիտի հասցնեին, որ դրամ աշխատեն, ուստի արհամարհեցին Սևանի այդ զգուշացումը. քշեցին իրենց ֆուրգոնները սառցե պարսպի երկարությամբ, հասան ծայրին, շրջանցեցին նրան ու շարունակեցին իրենց ճանապարհը։

Այն ժամանակ նորից է արթնանում սառույցների տակ ննջող Սևանը սմբակների դոփյուններից, ուշքի է գալիս և գայրանում մարդ արարածի ստորացուցիչ արարքի համար. ուրեմն իմ մեջքը ջաղացի ճամփա՞ ես դարձրել քեզ համար... Ուրեմն այնքան մեռած լինեմ ես, որ իմ վրայով բեռնե՞ր փոխադրեք... Ուրեմն ձեզ մոտ այդպե՞ս են վարվում շղթայակապ բարեկամի հետ։ Ախր ես կերակրում եմ ձեզ, կերակրել եմ ձեր ապ ու պապերին, կերակրելու եմ ձեր զավակներին և նրանց զավակներին, դուք այդ ինչպե՞ս եք պահում ձեզ կերակրողի պատիվը...

Ու ճայթում է Սևանը, ճեղք է տալիս ծայրեծայր ու այդ ճեղքի մեջ կուլ են գնում իր արժանապատվությունը կոխկրտող մարդ, ձի, սահնակ ու ֆուրգոն...

Այդպես է, վրիժառու է Սևանը երես առած ու ամբարտավան գեղեցկուհու նման։

Բայց չկարծեք, թե միշտ այդպես զոռոզ է այդ իշխանուհին։ Ես նրան լավ գիտեմ։ Սահման չունի նրա մեղմ նազանքը, երբ պառկած հանգստանում է Գեղամա լեռների շուրջպարի մեջ։ Շատ եմ տեսել, թե ցերեկվա փոթորկից հետո, ամռան խաղաղ իրիկնամուտին ինչպես է մեջքը դեմ անում շոյանք ազերսող կատվիկի նման. «Փաղաքշիր-հանգստացրու ինձ, սիրելի՛ս, այսօր շատ եմ հուզվել...»։

www.a-pdf.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անլեզու ընկերներ

Բռղարի, Զալանկի ու «ասեղ մաշկող» Եղոյի մասին . . . 6
Տիրոջ հիշատակը 10
Դաղարի ժամին 16
Ընկերության մասին 21
Հավատարիմ պահապանը 23
Որսը 25
Հացադուլ 30
Անլեզու պահակը 32
Ավելորդը 34
Բարի դրացիներ 36
Ազատարարը 38
Մեղվի պահակները 41
Իմ հավատարիմ ընկերները 43
Ներոնի մահը 45
Արծիվները 46
Կենդանի սավառնակներ 48
Զավակները 52
Ոխերիմ թշնամիներ 54
Խուստուի սարի արջերը 56
Թռչնային բարքեր 61
Պոլսեցի Ահարոնի բակում
Զալոն 63
Զագերի համար 65
Փիսիկի զարմանքը 64
Մայր ծիծեռնակը 66
Մուշկա 68
Արարատյան դաշտի արագիլները 77

Մարտի դաշտերում

Անձնուրաց մարդիկ 88
Շառատը 93
Աժդահան 96
Որսորդի դատաստանը 107
Գզվանքի կարոտ 112
Հայրենի թուփը 115
Մելիք Ադամյանի դեղատոմսը ռազմաճակատում 129

www.a-pdf.com

Անցած գնացած բաներից

Մանր ձմեռ 130
Հովվական սեր 143
Մանկապարտեզի դաստիարակչուհին 170
Հին նշանդրեք 185
Ճակատագիրը 187
Առաջին հայելին 191
Զատնի թաղումը 194
Սալդաթ Նիկալը 196
Բինգյոլում 197
Արծվաքար 198
Անլեզու եղբայրը 201
Փախստականներ 207
Մեր հին տանձուտում 210
Երկու շաբաթ սատանաների մեջ 229
Տիգրանակերտի սեխն ու ձմերուկը 234
Ոսկեհատը 243
Ճամփորդություն դեպի Արզական . . . . .

Ինչպես որ կան

Թորոսենց Աթոն 260
Գյուղի հին մարդիկ 268
Մելոնց ամին 268
Ասատուրանց Դանելը 270
Ղազար քեռին 271
Դարբնանց Մինասը 272
Մինդին 273
Փափախչի Ասատուրը 275
Համբոն 275
Անտառապահ Սարգիսը 278
Տեր-Կարապետը 280
Ըմբոստ եղբայրները 283
Պապանը 284
Քեռի Մուկուլը 285
Խև Արտեմը 287
Պրիստավը 289
Դարբնանց Ակոբը 291
Շատախցի Գելոն 292
«Ապա կալբաստ...» 296
Մացակ պապը 299
Մի դեպք որսկան Շաքարի կյանքից 303
Հպարտ պատասխան 305

www.a-pdf.com

Միստր Յարոն, իր կինը և շնիկը 318
Կոնչոլ 330

Ուրախ պատմություններ

Ինչպես հյուր գնացի Արութին Զիմզիմովին 338
Շատակերներ 346
Մորս ականջը դեղ ենք լցնում 359
«Հնի մնացուկը» 362
Պարծենկոտը 366
Երգիծաբանն ու քանդակագործը 373
Երես են տվել 376
Հնի վերապրուկը 377
Որսորդական փշոցներ
Ինչն է կարմրին տալիս 381
Լոռեցոնց հնարած բաներից 381
Խոմփոցը քարայրում 382
Պողոս ամու և Ղազարանց Կարոյի վեճը 382
Կորած ժամացույցը 382
Իմ հարևանները
Աղաբեկը 384
Մրջնորդությանս «մաղարիչը» 385

Մանրապատում

Այցելություն դահճին 388
Անզեն որսորդը 389
Լեռնականը 389
Սահմանազլխին 390
Ագահի վերջը 391
Հզորից հզորը 391
Երբ համը հանում են 392
Ագահություն 392
Հոգատարություն 393
Բախտակիցներ 393
Աչքերի ուժը 394
Միջօրեին 395
Հմայանք 396
Սևանի շուրջը 398
Վերջապես 398
Երևակայում է 400
Արտակարգ դեպք Պրագայում 401
«Ամեն ծակից պոչդ մի կախիր» 402
Փետրավոր Նազարը 403

www.a-pdf.com

Պակասում էր մի շատ կարևոր բան 404
«Արևգնազան...» 405
Հիմի արև աստծուն 406
Լույսը 408
Բնության թագավորը 408
Հպարտ դշխուհին 409

www.a-pdf.com

Անանյան Վախթանգ Ստեփանի

ԵՐԿԵՐ ՀՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

Հատոր 2

Պատմվածքներ

Դպրոցական բարձր տարիքի համար

Ананян Вахтанг Степанович

Сочинения в четырех томах,

том II

Рассказы

Для старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Советакан грох»
Ереван — 1984

Խմբագիր՝ Լ. Տ. Սարգսյան
Նկարիչ՝ Ա. Ս. Թադևոսյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

www.a-pdf.com

ИБ № 4761

Հանձնված է շարվածքի 04. 07. 83։

Ստորագրված է տպագրության 02. 01. 84։

Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 2։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 21,84 պայմ. տպ. մամ., 22,68 պայմ. ներկ. թերթ., 19,9 հրատ. մամ.։ Պատվեր 1270։ Տպաքանակ 50 000։ Գինը՝ 90 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

www.a-pdf.com

ИБ № 4761

Հանձնված է շարվածքի 04. 07. 83։

Ստորագրված է տպագրության 02. 01. 84։

Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 2։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 21,84 պայմ. տպ. մամ., 22,68 պայմ. ներկ. թերթ., 19,9 հրատ. մամ.։ Պատվեր 1270։ Տպաքանակ 50 000։ Գինը՝ 90 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

www.a-pdf.com